1280

NOUVELLE BIBLIOGRAPHIE ARMÉNIENNE ET ENCYCLOPÉDIE DE LA VIE ARMÉNIENNE

1512-1905

ՀԱՅԿԱԿԱՆ
ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ
ՀԱՅ ԿԵԱՆՔԻ

ԿԱԶՄԵՑ

Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԱՐՈՍ ՂԱԶԻԿԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Յ — Ն

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1905-1912

016
Ղ-17

016
Ղ-17

ՀԱՅԿԱԿԱՆ

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔԻ

Յ

Յ. (Գ. Թ.) *թարգմ.* — *Տես* ԿԱՍՓԷ (Թ.):

Յ. (Գ. Մ.) — *Տես* ՄԸՐՄԸՐԵԱՆ (Յ. Գ.):

Յ. (Կ. Ա.) — Յ. Մ. — *Տես Առաջնորդ գրուցատրութեան անգղ. լեզուի:*

Յ. Յ. Գ. — *Տես Կայծակ ճշմարտութեան լապտերին:*

Յ. (Ս.) — «*Եղիշէի և Մակաբայեցւոց գրքերի յարաբերութեան խնդիրը*». *Արարատ* 1896, *էջ* 553. – «*Մարգարէից գրքերի հետքերը Եղիշէի պատմութեան մէջ*». *Անդ* 1897, *էջ* 211.

Յ. Վ. Հ. — *Տես* ՀՈԼԱՍ (Յ. Վ.):

Յ. (Փ.) — «*Աղբիւր ազգային արդեան պատմութեան. ժամանակագրութիւն Պետրոս Դի Սարգիս Գիլանէնցի Ջուղայեցւոյ բարբառով գրած*». *Կռունկ* 1863, *էջ* 81, 181, 278, 662.

ՅԱԿՈԲ, ՅԱԿՈԲՈՍ, ՅԱԿՈՎԲ, ՅԱԿՈՎԲՈՍ. — ՅԱԿՈԲ ԱՌԱՔԵԱԼ, Եղբայր Տեառն. — *Տես կտակգիրք:* – *Դարձեալ Տաշեան*, «*Մայր ցուցակ*» *էջ* 1121, *եւն:*

ՅԱԿՈԲ *արքեպիսկոպոս Պատրիարք* Կ. Պոլսի. — *Թուղթ խրատական բանից առ ամենայն հոգեւոր առաջնորդս և ժողովրդապետս, ամենապատիւ տեառն Յակոբոս Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ:* Կ. *Պօլիս*, 1850?

= Բ *տիպ. Թուղթ խրատական բանից առ ամենայն հոգեւոր առաջնորդս և առ համայն եկեղեցական դասս կարգաւորաց, հովուաց եկեղեցւոյ և առ աշխարհիկ իշխանս և առ հասարակ բոլոր ժողովուրդս, հաւաքեալ ի սուրբ գրոց աշխատասիրութեամբ Տ. Յակոբայ արքեպիսկոպոսի և պատրիարքի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ:* (*Խառն ընդ գրաբառ և ընդ աշխարհաբառ*): *Յամի Տեառն* 1851, *յունվար, ի պատրիարքարանի ամենայն Հայոց ի Կոստանդնուպօլիս, ի Խումխափու: Տպեալ վերստին ի տպարանի Յովհաննու Միւհէնտիսեան.* 8°, 44 *էջ:*

Քննադ. Տես Բան ուղղափառական ընդդէմ Բանն խրատականի, որոնց մասին տես Հայաստան 1851, թ. 20–72, 23–75: – *Տես դարձեալ* Ս. (Մ. Տ.):

— *Կոնդակ ժխնդու դէմ:* Կ. *Պոլիս* 1851, *հոկտ.* 15:

«*Յիսուսի Քրիստոսի ծառայ... յայտարարութիւն եղիցի բոլոր հոգեւորական դասուց կարգաւորացդ՝ վարդապետաց և քահանայից... չուպուխս՝ նարկիլէ՝ և սիկարս չքարշել ամենեւին ոչ յայտնի և ոչ գաղտնի... նոյնպէս ի գինետուն և ի խօլթուխ մէխանայ չմտանել և չնստիլ, և կամ ոտքի վրայ չխմել...*», *եւն, տես Լումայ* 1899, Ա. *գիրք, էջ* 219.

ՅԱԿՈԲ ԴՊԻՐ, *Ճամճու որդի.* — *Տես Խրատ հոգեկան:*

ՅԱԿՈԲ ԵՒԴՈԿԻԱՑԻ *կամ* ԹՈԽԱԹԵՑԻ. – «*Տաղ վասն կենաց մարդկան*». *Բազմավէպ* 1865, *էջ* 208–211.

ՅԱԿՈԲ ՋԻՄԱՌԱՑԻ. – *Տես* ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ:

Յակոբ Էրզիկ, վէպ. — *Տես* ՀՈՖՄԱՆ (Ֆ.):

Յակոբ ծանծաղոս. տես Յոյս 1869, *էջ* 232, 278.

ՅԱԿՈԲ ԿԱՐՆԵՑԻ. — *Տեղագիր Վերին Հայոց: Յիշատակարան ԺԷ. դարու:* (*Հրատ.*) Կ. *Կոստանեանց: Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի*, 1903. 8°, 3–8 *նախաբան.* 9-61 *բնագիր.* 62–68 *ծանօթ.* 69–75 *ցուցակ յատուկ անուանց:*

Հրատարակիչը կ'ըսէ. «*Գործիս հեղինակը՝ տէր Գէորգի որդի տէր Յակոբը ըլլի Կարնեցի՝ Ար-*

գրում քաղաքի Հայոց Միքարան Ս. Աստուածածին եկեղեցու 15 քահանաներից մէկն է. ապրել է ԺԷ. դարում և նկարագրել է դէպքեր, որոնց ժամանակն ընկնում է 1622–1662 թուերի մէջ. Թէև նորա գործը Բարձր Հայքի տեղագրութիւն է, բայց Արզրումի մէջ պատահած նշանաւոր անցքերի նկարագրութիւնն էլ չի մոռանում։

Նա յիշում է Օսմանցոց և Պարսից պատերազմների մասին, որոնք տեղի ունեցան 1586-ից մինչև 1640 թուականը. նորան զբաղեցնում են և այնպիսի խնդութիւնները, որոնք Արզրումի Հայոց կեանքի մէջ նշանակութիւն ունին. առաջին տեղը գրաւում է եկեղեցիների խնդիրը. նա պատմում է, որ 1629 թուին Արզրում եկաւ Հալապցի Աննա Չէլէպին, որ արքունի մաքսապետ էր, ինքը շատ հարուստ և բարեպաշտ մարդ. եկեղեցու տէրութիւնների պատերազմի ժամանակ նա իր կարողութեամբ մինչև հազար գերի ազատեց։ Թէև Արզրումու բերդի մէջ Հայոց շատ եկեղեցիներ են եղել, բայց բոլորն էլ անցել էին տաճիկների ձեռքը, «զո՛րն արարեալ են ամբարանոցք և զո՛ր քակեալ և քայքայեալ են», նոցանից մէկն էր և մի աղաչէն գեղեցիկ եկեղեցի. որը մի տաճիկ «տուն և սարայ էր». Աննա Չէլէպին այդ տունը գնեց և 1637 թուին վերակառուցեց եկեղեցին, առաջին մասը քանդելով և տեղը մի փայտեայ ժամատուն կառուցանելով. քահանաներն և ժողովուրդը սիրով միաբանեցան և օգնեցին գործին. «բազում դրամս ծախեցին ի գործս փայտանիրացն». եկեղեցին էր յանուն Ս. Ստեփաննոսի. նորա մէջ ժամերգութիւնը շարունակուեցաւ մինչև 1662 թուականը, երբ Կ. Պոլսից առանձին հրաման եկաւ քրիստոնեաների դէմ։

Տէր Յակոբը պատմում է, որ 1651 թուին Արզրում եկաւ Վանեցի մի մոլլայ Վանի անունով, որը մի ժամանակ այնտեղ Յակոբեանց յետոյ գնաց Կ. Պոլիս. մոլեռանդ կրօնաւորի մեծ համբաւ ունենալով, Վանին այնտեղ մեծ ազդեցութիւն ձեռք բերեց Բարձր Դրան վերայ. նորա թելադրութեամբ 1662 թուին հրաման եկաւ, որ Կ. Պոլսոյ մէջ «մինչև տասն եկեղեցի Հոռոմոց և Հայոց քանդեալ աւերեցին, և ի գլուխս ամենայն քրիստոնէից՝ Աստամբօլայ մինչև ի Թոխաթ և ի Սեբաստիոյ վիճակն՝ ևս զառն հաղուեցին և զփակեցին եասախ տուրքն»։

Նոյն այդ մոլլայի ազդեցութեամբ հրաման եկաւ Արզրում, որ բերդի Ս. Ստեփաննոսի եկեղեցին տուն և մզկիթ արին։ Այնուհետև Արզրումի Հայոց ձեռքը, որոնք այն ժամանակ մօտ երկուհազար տուն էին, մնաց միայն մի եկեղեցի բերդի պարսպից դուրս, այն է Միքարան Ս. Աստուածածին եկեղեցին. որի մէջ 1653 թուին կար 15 քահանայ և 10 սարկաւագ։ Յառաջ, երբ եկեղեցիների թիւն երկուս էր, քահանաների թիւն էր 30. թէ ե՞րբ և ինչպէս եղաւ, որ նոցա թիւը կիսով չափ պակասեցաւ, տէր Յակոբը չի բացատրում։

Արզրումի Հայոց վիճակին է վերաբերում տէր Յակոբի նկարագրութիւնը, թէ ինչպէս 1653 թուին գողերը կողոպտել են Միքարան Ս. Աստուածածնի զարդերն ու անօթները, ինչ իրարանցում եղել է ծերունի տէր Գէորգ աւագ քահանայի, բոլոր եկեղեցական ուխտի և ժողովրդի մէջ, և թէ ինչպէս Աստուած օգնել է, որ փաշան գողերին բռնել է տուել և գողօնը գանելուց յետոյ նոցա բոլորին խիստ պատժել է բազմութեան առաջ։

Արզրումի գաւառի պատմական դէպքերից տէր Յակոբը շատ քիչ բան է հանդէս բերում. մի անգամ միայն, երբ իր սրտի ուրախութիւնն է յայտնում, որ Հայերը, չնայելով ծանր ճնշումներին, իրենց հաւատն հաստատ են պահում, նկարագրում է գաւառի ժողովրդի ընդհանուր վիճակը։ Նա ասում է, որ 1643 թուին Կ. Պոլսից ուղարկուեցաւ Արզրում Ջաֆար անունով «ժանտաբարոյ և քրիստոնէից թշնամի» մի մոլլայ, որին յանձնուեցաւ Արզրումի բոլոր շրջակայ երկիրների աշխարհագիր անել։ Ջաֆարն «արար զաւտոր և կապեաց ծանր խարաճ, և եկից մեծ և փոքր ի թշուառական զաւտորն». այդ պատուհասից ազատուելու համար Թորթումի կողմերի Վրացիք, ասում է տէր Յակոբ, «յերկուցեալք ի յահէ խարաճին, դարձան յօրէնս Մահմէտի»։ Թէև կրօնափոխութեան երևոյթներն Օսմանեան տէրութեան մէջ կրկնուել են շատ անգամ և ոչ միայն Վրացի, այլև միւս քրիստոնեայ ժողովրդի մէջ, սակայն տէր Յակոբի պատմութեան մէջ նորը այն է, որ կրօնափոխութիւնը զգալի թեթևութիւն է պատճառում հարկերին կամ նոյն իսկ ազատում է խարաճից։

Տէր Յակոբի տեղագրութեան շատ մասերը գեղեցիկ պատկերացնում են զանազան կենցաղական պայմանները թէ Արզրում քաղաքի և թէ նորա շրջակայ գաւառների մէջ, մահմեդական և քրիստոնեայ ժողովրդի համերաշխ և հանգիստ կեանքը խաղաղութեան ժամանակ, երկրի լքութիւնն ու աղքատութիւնը, փախստականութեան յաջորդ պայմաններն և հարստութեան պատկերը, փաշաների իշխանութեան և զօրականութեան չափը, կեդրոնական և տեղական վարչութիւնների յարաբերութիւնը, դատաւորութիւնն և պատուհասներն, ևն։

Տեղագրութեանս նախապատճառն եղել է հեղինակի հարազատ եղբայրը Մաղաքիա, որին ձայնակցել են և Արզրումի քահանաներն ու սարկաւագները, որոնք, ասում է, «յոյժ թախանձեցին և ես զխնդիրս նոցա կատարեցի»։

Յայտնի չէ թէ տէր Յակոբ ո՛վ և ո՛ւր է աշակերտել. ինքն ասում է, որ տեսել է Արզրում քաղաքի մէջ Սուրբ Մինաս կաթուղիկոսին, որի մականունն էր Փայտախ, և «լուաք զդասս և զքարոզութիւն նորա». այդ եղել է 1632 թուականից ոչ շատ յառաջ, որովհետև տէր Յակոբի ասելով այդ տարին է տեղի ունեցել Մինաս կաթուղիկոսի մահը Երուսաղէմում։ Նորա գրութիւնից երևում է, որ բացի Ս. Գրքից նորան մօտիկ ծանօթ են Հայոց նախնի մատենագրութիւններն և Հայաստանի աշխարհագրութիւնը։

Տէր Յակոբի նկարագրած երկիրը՝ Վերին Հայք՝ ԺԷ. դարում իբրև Արզրումի կուսակալութեան աշխարհ ունէր 23 գաւառ, որոնք են՝ 1, Լակլի ձոր, 2, Խորձունեաց երկիր, 3, Դրզըջան, 4, Դերջան, 5, Եկեղեաց երկիր, 6, Դարանաղեաց երկիր, 7, Գայլ գետոյ երկիր, 8, Շէխանու երկիր, 9, Կուկլանցու ձոր, 10, Ծանախոյ ձոր, 11, Խախտեաց երկիր, 12, Ըղերու ձոր, 13, Իշխանախոս ձոր, 14, Մամրվան, 15, Վերին Բասեն, 16, Ներքին Բասեն, 17, Վարա Եայլի, 18, Խալի Եազի, 19, Ալաշկերտ, 20, Մանազկերտ, 21, Ապահունեաց երկիր, 22, Վարդոյ և 23 Թադամն»։

Քննադ. Բազմավէպ 1904, Թ. 2։ – Լումայ 1904, Թ. 1։ – Մուրճ 1903, Թ. 12 (Ա. Վ. Դ.)։

ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՑ ՀԱՅՐԱՊԵՏ. — *Opera Sancti Jacabi Episcopi Nisibeni.*

Այս ճակատէն վերջ՝ ուրիշ ճակատ՝ կրկնալեզու, կարմրաներկ ու սևագիր.

«Սրբոյ Հօրն Մերոյ Յակոբայ Մծբնայ Եպիսկոպոսի Ճառք. Sancti Patris Nostri Jacobi Episcopi Nisibeni Sermones Cum praefatione, Notis, et Dissertatione de Ascetis Quae Omnia Nunc Primum In Lucem Prodeunt. Romae MDCCLVI (1756). Typis Sacrae Con-

53403-шл
Պետ. Գր. Գրադարան Гос Библиотека ՀՍՍՀ-Арм ССР Ալ. Մյասնիկյանի անվ. им. А. Мясникяна
40325-68

gregationis de Propaganda Fide. Superiorum Facultate ».

Այս հատուածն վերջ յէջն 3 յառաջաբանէն ընծայագրութիւն առ Բենեդիկտոս ԺԴ. քահանայապետ Անտոնէլլի կարդինալէն՝ որ է հրատարակիչը. և ապա երկու վկայագիր լատիներէն, ինչպէս և կրկին հրամանագիր տպագրութեան. ապա յէջն 9՝ ցանկք գլխոց, երկու էջ. մինչև հոս՝ որ է բովլ 6 թուղթ՝ էջերը թղթահամար չունին։ Ապա հոմիլեայքն թուանշաններով թղթահամարներ, և կը սկսի լատին. յառաջաբանը, երկինեան գիրքով, յէջն 32։ Յէջն 33 սուրբ Յակոբայ վարքը հայերէն և լատիներէն, քաղուած յայսմաւուրքներէն, Մովսէս Խորենացւոյ խօսքերէն և Նարեկացիէն, յէջն 42։ Յէջն 43՝ սուրբ Յակոբայ չարականը հայ. և լատ. յէջն 46։ Ապա նոր ճակատ լատին գրով այսպէս. «Sancti Jacobi Episcopi Nisibeni Sermones»։ Այս հատուածն վերջ յէջն 1 առաջաբան թիւերով կը սկսի գիրքը, դնելով նախ սուրբ Վրթանէսի թուղթը առ սուրբ Յակոբ, զոր վրիպակաւ կը դրէ սորոյն Գրիգորի Լուսաւորչի. և ապա Ս. Յակոբայ ճառերը լատ. և հայ. յէջն 106, որ է վերջ հինգերորդ ճառին։ Յէջն 107 դրուած են միայն լատիներէն ծանօթութիւններ կամ քննութիւններ վեցերորդ ճառին վրայ, որ է Յաղագս ախտաւորաց, յէջն 202։ Յէջն 203՝ կը սկսի վեցերորդ ճառը, որուն կը յաջորդեն հետզհետէ ուրիշ ճառեր յէջն 399, ընդ ամէն տասնեւութ ճառ։ Այս բոլորէն վերջ ճառ Յաղագս հակառակութեան և հերձուածոց, որք լինին ընդ զատուոր. յէջն 452։ Ապա կրկին ցանկեր, ուղղագրութիւն վրիպակաց, յէջն 488, որ է վերջ։

Գիրքը միահատուած կրկնաթերթ, անհարթ միջակագիր Հռովմայ. հասարակ տպագրութիւն։ Հայ բնագրին օրինակը առուած է սուրբ Ղազարու վանքէն. Մխիթ. Աբբան ինք անձամբ նուիրած է զայն Պապին. իսկ լատին թարգմ.ը կատարուած է Աստուածատրեան Անտոնիոս հայազգի քահանայէն։

— Գիրք Որ կոչի Զգօն արարեալ Սրբոյն Յակոբայ երիցս երանեալ Հայրապետին Մծբնին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորայս սփռմի։ Որ ի Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի Տեառն Եփրեմի Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց։ Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի Տն. Գաբրիէլի գերերջանիկ Արք Եպիսկոպոսի։ Նաեւ ի պատրիարգութեան մեծի Մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տեառն Կարապետի Երանաշնորհ Արհի Եպիսկոպոսի։ Որոյ վեհափառ Հրամանաւ ի տիպ արձանացեալ Արդեամբք և ծախիւք առն ազգասիրի և բարեպաշտի ակնեցի մահտեսի Յօհաննեան մահտեսի Աբրահամ ամիրայի։ Յիրում իսկ սեփական գործարանի։ Յամի Տեառն 1824. հոկտեմ" 22. Ի Հասանփաշայ խանն։ Ի Կոստանդնուպօլիս. 8°, 430 էջ։

Յառաջաբանէն. «... Այս մատեան՝ որ ամենայն ուղղափառաց յարգութեամբ փափագելի, ի 1755. ամի փրկչին մերոյ տպեցաւ ի հռոմ հանդերձ թարգմանութեամբ և ընդարձակ ծանօթութեամբ ի լատին լեզու. այն այն գիրք մեծագիր՝ որ ցարդ երևի, ո՛չ սակաւ աշխատութեամբ տարեալ յամենեցունց վկայի, այլ ըստ անհարապատութեանն զգուշանալի. վասն զի որ տպագրեցինն զայն ի հռոմ, չունին առ խիւանս զպատճառ ընտիր. այլ մի՛ եւեթ ձեռագիր, որոյ անհարապատութեանն վկայեն աստացօղք այնր ձեռագրին. տես ի նորատիպ վարս սրբոյ. ի ծան. 7, վարուց սրբոյն Յակոբայ։ Թո՛ղ զի այլայլութիւնք ի ձեռագիրս զգօնին, բայց ի յանհամար սխալանաց, ի միումն այս ինչ և ի միւսումն այն ինչ, և գրեթէ՝ հարիւրաւոր տողիւք բանս յայսմիկ կամ յայնմիկ յաւելեալ և պակասեալ, որով սակ՝ թէ վաղագոյն եղեալ իցեն բազումք ապականիչ զգօնին։

Այնպիսի այլայլութիւնք ի մատեանս հոգևոր՝ անտարակոյս զհետս լինել ի թերագրութենէ բանաւորին, որպէս երբեմն և ի բանս այլոց հարց սրբոց ի ձեռն հակառակաւէր արանց։ Բայց անուշութիւն աստուծոյ պահեաց զնոսա որպէս հար տաճարին իւրոյ ի խոր թաղուցեալ. և այն ինչ սկսաւ սէրն ի շինութիւն, ապա և նա զթաղուցեալն ի խորոց անտի ի ձեռն խաղաղասիրաց արծարծել՝ խնամ կալաւ. արդ՝ ո՛վ ոչ հաւանեսցի թերևս և ի սոյն՝ այնպիսի լինել։

Ի ժողովել մեր զձեռագիրս, գտաւ աստանօր ձեռագիր մի ի գրեանց հանդուցեալ յօհաննէս Պատրիարգին կոստանդնուպօլսեցւոյ. որ թէպէտ նո՛ր էր և խառն տկար ի յարմարագրութենէ, բայց օրինակ նորուն՝ ծանուցաւ ընտրելագոյն. և չա՛տ էր մեզ թէ և այն լինէր լրացեալ. որ ի սկզբանէ գործոյս եղև մեզ առաջնորդ յընթացս սրբագրութեան մինչ ի լրումն գրեթէ իններորդ ճառին. ուրանօր սպառմամբ թողեալ զմեզ գնալ ընթանալ ընդ խորագիտ վայրս զժուարին, ընկերելով այլոց ձեռագրաց. և այնպէս կարողութեամբն աստուծոյ հասաք ի յաւարտ՝ որ է ճառ թուով տասնեւութ. բայց և ո՛չ զվերջինն՝ որ է արտաքոյ սորին, անտես արարեալ. այլ ըստ ձեռագրացն և ըստ տպեցելոյն՝ և մեք զայն եդաք ի վերջոյ»։

Վերջաբանէն. «... Նմ՛ սանիկ այն՝ որ աղբիւրն է բարութեանց, ո՛չ կամեցաւ ծածկել ընդ գրուանաւ այսր հրաշի. ուստի շարժեաց զբարի կամս առն բարեպաշտի զերապատիւ մահտեսի Աբրահամ Ամիրայի՝ խրով իւր ծախիւք լինել նորպատ սորին տպագրութեան յիրումն սեպհական տպարանի և դնել ի վերայ աշտանակի։ Այսպէն պա՛րտ է երախտագէտ լինել և յիշել յաղօթս և ի խնդրուածս՝ որ առ Աստուած, զայրն զայն Աստուածասէր. ընդ նմին և զբարեպաշտ հայր նորին Թէրզեանց սարրաֆ հանգուցեալ մահտեսի Յօհան աղայն. և զյարգի եղբայր նորին հանգուցեալ Պազար աղայն. նաև զայնս՝ որք այժմ են կենդանիք, զբարեպաշտուհի մայր նորին մահտեսի Աննա տիկինն. և զեղբայր նորին մահտեսի Երամ աղայն. և զեղբօր որդին՝ Գասպար, Սահակ, մահտեսի Նորուկ, և Գէորգ աղայսն. և զայլ ամենայն կենդանիս և զննջեցեալսն։ Նաև զիս զգրքագրօղ սորին զանձն անարժան Թադէոս աղայեան. և զտպագրիչ տիրացու մանուէլն մարուքեան և զմրահար մարտիրոսն։ Որով և դուք յիշեալ լիջիք ի քրիստոս յիսուս ի յոյսն ընաւից»։

Տես «Գիրք և ճառ հոգեշահ», Գ. ճառը։

Հմմտ. Շրուեմպֆ-Զարդ. «Հայ լեզուի ուսումն», էջ 338–9, և 354 էջերը։ – Բազմավէպ 1888, 8. – Արևելք 1902, թ. 5131–2։ – Բանասէր 1903, էջ 61։ – *Bert*, C. – Aphrahat's des Persischen Weisen Homilien. Aus dem Syrischen übersetzt und erläutert. Leipzig, Heinrichs, 1888. LII, 413 էջ, 8°. Հրահատայ Զգօնի Պարսկի ճառք. թրգմ. ի գերմաներէն հանդերձ մեկնութեամբք։ – Քննադ. Wellhausen, Theol. Litztg. 1889, N. 4. – *Funch Sol.* Die haggadischen Elemente in den Homilien Aphrates des persischen Weisen. Wien 1891 (– 92) 8°, 66 p. (Զգօնի ճառերուն մէջ ագգադեան տարրերը). – *Georg* (der Araberbischof – Ueber die Lebenszeit und Lehrtypus des Aphraates, etc. übersetzt von V. Ryssel: Gedichte und Briefe. Leipzig, 1891, p. 44–54, und 168–176 (Գէորգայ Արաբաց եպիսկոպոսի երեք նամակք Զգօնի

2001

գրոց վրայ, թրգմ. և քննութիւնք Ռիւսէլի)։ — Նոյնին՝ Ueber den Bischof Gregor, der die Armenier zu Jüngern machte, übers. von V. Ryssel. p. 54–59, und 177–179. (Նամակ առ Յեշուա՝ Գրիգոր Լուսաւորչի վրայ, թրգմ. և գիտողութիւնք)։

ՅԱԿՈԲ ՅԻՍՈՒՍԵԱՆ (Վիլլոտ). — *Քրիստոնէական վարդապետութիւն ի պէտս ճշմարտասիրաց հայոց. Շարադրեալ ի Յակոբ Վարդապետէ ի կարգէն Յիսուսեանց. Եւ տպեցեալ խարճիւք և հոգաբարձութեամբ Բարեպաշտի խօջայ Գասպարի որդի խօջայ Սարատին ի մեծ տանէն Շերիմանենց*։ 1710. *Հոկտեմբերի* 18. ի *Վէնէտիկ*։ ի *Տպարանի Անդօնոսի Պօռդօլի. Մեծաւորաց Հրամանաւ*։

Յէջն 3 նախաբան առ ընթերցողն, և ապա յէջն 5 կը սկսի Քրիստոնէականը հարցպատասխանիւ և կը հասնի ցէջն 46 որ է վերջին։ Այս տպագրութեան մէջ հայերէն հարցական պարոյկին կամ որոքակին տեղ գործածուած է եւրոպական հարցական նշանը։

47–72 «Լուցկիք Հոգևորք կամ Աղօթք ձգականք. Որովք ի սիրտս մեր գիրառ վառի հուրն սիրոյն Աստուծոյ. Վերանայ միտք նկատել զմեծավայելչութիւն Աստուծոյ»։

Գիրքը փոքր 8⁰, անհարթ տպագրութիւն։

— *Մեկնութիւն դաւանութեան հաւատոյ. կրկնաճակատ, հայ–լատ*. Explanatio Professionis Fidei Orthodoxæ Jvssv SS. D. N. Urbani P. P, VIII. editæ. Avthore P. I. Villotte Soc. Jesv. Romæ, Typis Sacræ Cong. de Propag. Fide. Anno M.DCC.XI. Svperiorvm Permissv. – *Մեկնութիւն Դաւանութեան Ուղղափառի հաւատոյ: շարադրեալ ի Յակոբ վարդապետէ ի կարգէն Յիսուսեանց. Յամի Տեառն* 1711։

Այս ճակատէն վերջ ընծայագրութիւն մը կայ հեղինակէն սուրբ ժողովի կարդինալներուն, և ապա էջ մը բան «Առ Հայ ընթերցօղ», և յետոյ ցանկ գրոց. այս ամէնը առանց թուահամարի է. ապա յէջն 1 կը սկսի մեկնութիւնն Ուրբանեան դաւանութեան, և կը հասնի ցէջն 125։ Յէջսն 126–166, «Ցանցն Ամենայն ընդհանրական ժողովոց. Որք ի սկզբանէ անտի եկեղեցւոյ ի վեր, գումարեցան, մինչև ցաւուրս մեր»։ Յետոյ մասնական մը «Յաղագս քննութեան սրտի». 167–173, որ է վերջին էջ։

Գիրքը 8⁰, թանձր և սեւաթուղթ, միջակագիր անհարթ. հասարակ տպագրութիւն։

— *Պատմագրութիւն կաթուղիկոսաց, Եւ թագաւորաց հայոց. Շարադրեցեալ ի Յակոբ Վարդապետէ ի կարգէն Յիսուսեանց։ Եւ տպեցեալ խարճիւք, և հոգաբարձութեամբ Տեառն Առութենի Արհիեպիսկոպոսի Կոստանդինուպօլսեցւոյ*. 1713. *Սեպտեմբերի* 30. ի *Վէնէտիկ*. ի *տպարանի Անտոնիոսի Պօրթօլի։ Մեծաւորաց Հրամանաւ*։

Յէջն 3՝ «Հայաստան Քրիստոնեայ. կամ Ցանկ հայոց Կաթուղիկոսաց և Թագաւորաց ի Քրիստոսէ ի վեր մինչև ցայսօր»։ 3–30 ցանկ կաթուղիկոսաց. 31–47 ցանկ թագաւորաց։ 48–52, «Բանք արժանագոյնք յիշատակի». 53–54, հետևեալ յիշատակարանը.

«Շնորհօք ամենազօրին Աստուծոյ միոյ և երրեակի, ծնողի հօր, և ծնեցելոյ որդւոյ փրկչին մերոյ, և բղխեցելոյ ի նոյնմէ հոգւոյն սրբոյ. և բարեխօսութեամբ ամէնօրհնեցելոյ սրբուհւոյ Մարիամու Աստուածածնին, և ամենից սրբոց. աւարտ եղև Թղթիկս պատմութեան հայոց կաթուղիկոսաց և թագաւորաց, որ հայոց կոչի Գաւազանագիրք։ Բազում աշխատանս կրեալ հաւաքեցի աստի և անտի, ի մի տուփ չարայարեցի, առ ի զբօսանս եղբարց մերոց հայոց Ճշմարտասիրաց։ Արդ որք հանդիպիք սմա, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր, զ'ի լոյս ածօղ սորին Տէր Յակոբ Վարդապետն ի կարգէն Յիսուսեանց. և ընդ նմին սատարողին Տէր Յարութիւն եպիսկոպոս պատճառ տպագրութեան սորին. և տպաւորութեան հոգաբարձու պատուաբերագործ Տէր Խաչատուրն, որ և դուք յիշեալ լիջիք ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. Ամէն»։

Գիրքը միջակ 8⁰, անհարթ միջակագիր Պօրթօլեան տպարանի, առանց նոր գրի. հասարակ տպագրութիւն։ Այն գործը տպագրուած է նաև իր բառարանին վերջը լատ. և հայ.։

— *Dictionarium novum. Latino-Armenum.* Ex praecipuis Armeniae linguae. Scriptoribus concinnatum. In quo, praeter adjunctos singularum vocum sensus multiplices, multa etiam Theologica. Physica. Moralia. Historica. Mathematica. Geographica. Chronologica. Suis quaeque locis passim explicantur. Accessit tabula Chronologica regum et patriarcharum utriusque Armeniae. Auctore. P. Jacobo. Villotte Soc. Jesu. Apud Armenios per annos. XXV. Missionario. *Բառգիրք. Հայկական լեզուի շարադրեալ յԱկօբ վարդապետէ ի կարգէն Յիսուսեանց*։ Romae, Typis Sac. Congreg. de Propaganda Fide. Anno MDCCXIV (1714). Superiorum Permissu.

Գիրքը 4⁰ մեծ, իրր երկծալ, երկկիջեան, միջակագիր, սպիտակաթուղթ. հասարակ տպագրութիւն. 743 էջ։ Որմէ վերջ «Ցանկ կաթողիկոսաց և թագաւորաց հայոց», նոյնպէս լատին և հայ. ցէջն 772, որ է վերջին։

— *Commentarius in Evangelia.* Auctore. P. Jacobo Villotte Societatis Jesu. *Մեկնիչ Սրբոյ Աւետարանին. Շարադրեալ ի Յակոբ վարդապետէ ի կարգէն Յիսուսեանց*։ Romae, Typis Sacrae Congreg. de Propag. Fide. Anno M.DCC.XIV. Superiorum Permissu.

Այս ճակատէն վերջ լատիներէն ընծայագրութիւն մը հեղինակէն առ Կղեմէս ԺԱ., երեք թուղթ. յետոյ նախաբան «Առ Հայ Ընթերցօղն», յետ որոյ երեք վկայագիր հայերէն երեք հայ եպիսկոպոսներու՝ լատին թարգմանութեամբ, 4 թուղթ։ Ապա հրամանագիր տպագրութեան լատիներէն, մէկ թուղթ, յետոյ ցանկ մատենական, հինգ թուղթ։ Մինչև հոս թուահամար չկայ։ 1 էջէն կը սկսի գիրքը և կը հասնի ցէջն 614. 615–16 քանի մը աղօթքներ, թուղթ մըն ալ տպագրութեան սխալներ։

Գիրքը 4⁰, անհարթ միջակագիր. անպիտան թուղթ և անհարթ տպագրութիւն։ Մեկնութիւն աւետարանի բառած է, բայց չորս աւետարաններու միանգամայն է։

— *Չորք խոկմունք.* — *Quattro Massime della Christiana Filosofia* del P. Gio. Battista Manni della Compag. di Giesu Tradotte

dalla lingua Italiana nella Armena Per il P. Giacomo Villotti della medesima Compag. In Roma nella Stamparia della Sac. Congreg. di Propag. Fede. 1714. Con licenza de' Superiori. – *Չորք խոկմունք Յաղագս յաւիտենականութեան. Շարադրեալ ի Յակոբ Վարդապետէ ի կարգէն Յիսուսեանց. Ի Հռոմ ի տպարանին սուրբ ժողովոյն. Յամի Տեառն Ռ. ԷՃ. ԺԴ. Հրամանաւ վերակացուաց։*

Ճակատէն վերջ յէջսն 5–8 *նախաբան առ ընթերցողն.* 9 *էջէն կը սկսին մտածականներն ու կ'աւարտին յէջն* 55, *չորս գլուխներով.* 57–71 *յաւելուած մը որ գրուած է վերջին օծման խորհրդոյ մատակարարութիւնը.* 73–80 *խրատներ յաղագս քննութեան սրտի։*

Գիրքը միջակ 8°, *սեւաթուղթ. անհարթ միջակագիր. անհարթ տպագրութիւն։*

— *Պատմութիւն գժտութեան եղելոյ ընդ մէջ Ստեփաննոսի Առաջնորդին Նոր Ջուղայի?*

Այս գրութիւնն և իր բուն մակագիրը մեզի ծանօթ չէ. կը տեղեկանանք Տէր–Յովհանեանցի Նոր Ջուղայի պատմութեան գրքէն. (*Հատ. Ա. էջ* 2. *և Հատ. Բ. էջ* 48), *որ ի մէջ կը բերէ նաև իր ձեռքն ունեցած ձեռագիր օրինակին յիշատակարանը, որ է այս.* «*Յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զ'ի լոյս ածօղ սորին Տէր Յակոբ Վարդապետն ի կարգէ Յիսուսեանց. և ընդ նմին Ստամպօլցի Տէր Յարութիւն եպիսկոպոս պատճառ տպագրութեան սորին, և տղաւորութեամբ հոգաբարձու զառաքելագործ Տէր Խաչատուրն*»։

Վիլլոտի կենսագրութիւնը, ևն, տես Շրուշմփֆ–Զարբ. «*Հայ Ճիզուիթ ուսումն*», *էջ* 27–33։

ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ *կամ* ՆԱԼ ՕՂԼՈՒ, *զմմառացի, պատրիարք կոստանդնուպոլսի.* – ԳԻՐՔ *կոչեցեալ* ՎԷՄ ՀԱՒԱՏՈՅ։ *Վեհափառ Հրամանաւ Երից Սրբազնից, Սուրբ Էջմիածնի Ընդհանրական Կաթողիկոսի Տեառն Աբրահամու Քրիստոսապսակ Սրբոյ Քահանայապետի Հայոց։ Եւ Սուրբ Երուսաղէմայ Սրբակենցաղ Պատրիարգի Տեառն Գրիգորի Ամենիմաստ և Աստուածաբան Մեծի Վարդապետի։ Եւ Կոստանդնուպօլսոյ Գերահռչակ Պատրիարգի Տեառն Յովհաննիսի Գերազանց Աստուածաբանութեան Վարդապետի և սուրբ Տեղեացն այցելուի։ Շարադրեցեալ յումեմնէ ակնցւոյ, գիւղի զմմառացւոյ Յակոբ անուն եւեթ վարդապետէ. տեառն Յովհաննիսի ձեռնասուն աշակերտէ։ Եւ տպեցեալ արդեամբք հոգեւոր հարց իւրոց երկուց բարեբջանիկ Պատրիարգաց սուրբ Երուսաղէմի և կոստանդնուպօլսոյ։ Ի Տպարանի մահտեսի աստուածատրոյ։ Սրբագրութեամբ Նոյնոյ Հեղինակի Գրքոյս Շարադրողի։ Ի թուին Քրիստոսի ՌԷՃԼԳ. և Հայոց ՌՃՁԲ* (= 1733)։ *փետրվարի ԺԴ։ Որ անկցի ի վերայ վիմիս այսորիկ փշրեսցի։ մատ՟* 21. 44։

Ճակատին չորսկէն կը սկսի Յառաջաբանը և կ'աւարտի յէջն 12. *յէջն* 13 *ստանաւոր մը հեղինակէն. յէջն* 14 *Նարեկացւոյն պատկերը՝ չորս տող ոտանաւորով.* 15 *էջէն կը սկսի գիրքը և կը հասնի* 656 *էջը։ Ապա ցանկ բանից և յիշատակարան ցէջն* 670, *որ է վերջ գրոցն։*

«*Յիշատակարան Տպագրողի Սրբոյ Մատենիս։ Փառք Պաշտօն և Գոհութիւն Ամենասուրբ Երրորդութեանն և միոյ Աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, Ամէն։ Որ և բարեխօսութեամբ և մաղթանօք արդարոց և երջանիկ վըկային իւրոյ Մինասայ զօրավարին, ետ կարողութիւն մեզ նուաստիցս տպել և ի կատարն հասուցանել զգիրքս զայս որ կոչի վէմ հաւատոյ։ Ի Տպարանի տրուղ Աստուածատրի։ Ի թուականիս մերում, ՌՃՁԲ։ յՕգոստոսի ԻԵ։*

Եւ արդ՝ երեւս ի հող մածեալ և տաւթուր առաջի զարչապարաց համայնից եղբայրութեանդ ձերում անկեալ, կողկողագին դիմօք աղաչեմ զպատահեալսդ. որք յզբօսնուլն ձեր ճեմիւ ընթերցման և սիրով ուղղափառութեան ի սոյն նորատունկ բուրաստանիս՝ յիշեցէք ի քրիստոս ի մաքրափայլ աղօթս ձեր զիս զբազմամեղ աստուածատուրս զտպագրող սորին. և զհանգուցեալ ծնօղսն իմ զկարապետն և զմարիամ։ Նաև, զցանկալի որդեակն իմ զնեցուկն ծերութեան իմոյ զտիրացու յօհաննէսն. անխոնջ աշխատանօք տքնօղն ի վերայ բոլոր գժուարակիր գործառնութեան տպագրատանս։ Այսոքիկ՝ թէ ի չարեաց զկապարեայն և թէ ի ցրուեալն. և թէ յայլ ինչ վերակացութիւնս. որ է պատրաստական ծառայ ձեր ամենեցուն։ Այլ և յիշեսջիք զքրմանաջան զաշխատաւոր մշակն գործառանիս, զեւթնկիտացի տէր մակարի որդի զտիրացու զաքարիան. և զվանեցի տէր աստուածատուրի որդի զասրուխանն։ Որ յիշողացդ և յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի քրիստոս ի գալստեանն իւրում. ամէն»։

Գիրք տպագրութեան հասարակ քառածալ, միջակագիր, զարդափակ երեսներով. անհարթ տպագրութիւն։

— *Գիրք կոչեցեալ Քրիստոնէական Ոսանելի. և կամ Քրիստոնէից վարժիչ։ Տպեցեալ ի Պատրիարգութեան սուրբ Երուսաղէմի և Բիւզանդիոյ՝ տեառն Գրիգորի և տեառն Յօհաննիսի Աստուածաբան Վարդապետաց։ Շարադրեալ աշխարհաբառ ոճիւ ի Յակոբ Վարդապետէ զմմառացւոյ։ Ի Հայրապետութեան տեառն Աբրահամու Սրբազնակատար Կաթողիկոսի թրակացւոյ հանգուցելոյ առ քրիստոս։ Թվին քրիստոսի,* 1737. *և Հայոց* 1186։ *յԱմսեանն Մարտի։*

Ճակատին չորսկէն յառաջաբան ցէջն 5. *յէջն* 6 *խաչելութեան պատկեր* 4 *տող ոտանաւորով.* 7 *էջէն կը սկսի բուն գիրքը և կը հասնի ցէջն* 416. 417–420 *աղօթք մը* (*ուրիշէ*). 421–427 *ցանկ գլոց,* 428–29 *հետեւեալ յիշատակարանը.*

«*Փառք և Երկրպագութիւն ամենասրբոյ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ տուողին շնորհաց և կարողութեան։ Որ ետ կարողութիւն ինձ անարժանիս հասանիլ ի յաւարտ փոքրիկ պարտիզիս և ծաղկալէտ բուրաստանիս. որոյ ոչ են թէպէտ փոքրիկ, այլ պարունակեալքն մեծամեծք և ստանելոյ հարկաւորք են։ Զոր շարադրեաց աշխարհաբառ ոճիւ* (*հոգեւոր թոռն մեծի և քաջ Րաբունապետին* [illegible] *Վարդանայ մեծի Վարդապետին։ Եւ ի սրբոյ Երուսաղէմի Գերերջանիկ Պատրիարգէ և աստուածաբան մեծ Վարդապետէ և ազգիս մերոյ երկրորդ լուսաւորչէ՝ կոչեցեալն աստուածաբան և կարգեցեալն փոխանորդ*) *Յակոբ վարդապետն. և հոգեւոր որդեակն տեառն Յօհաննիսի աստուածաբան Պատրիարքի բաղիշեցւոյ։ Որ առ ի յօգուտ ազգիս մերոյ շարադրեաց սակս զամ աշխարհաբառ ոճիւ հրամանաւ հոգեւոր Հօր իւրոյ. և ետ ինձ ի տպել մեղապարտ մահտեսի աստուածատրիս՝ որդոյ հանգուցեալ կարապետի։ Արդեամբք և հրամանաւ հոգեւոր ծընողաց իւրոց վերագրեցելոց։ Որ եղեւ աւարտն տպագրութեան ՌՃՁԶ թուին ի մարտի սկսեալ. և ի նոյեմբերի Ժ. աւարտեալ։*

Արդ որք առնոյք զսա ստանալով և վայելէք՝

յիշեցէք զանարժանս ի մաքուր մաղթանս ձեր առ Քրիստոս. և զորդեակն զախրացու յօհաննէսն զպատրաստական ծառայն ձեր կամեցողացդ ամենեցուն. և զաշխատաւոր մշակն տպարանիս զվանեցի սարուխանն. և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Ամէն »։

Գիրքը հատորակ 8°, միջակագիր, նորաձոյլ զարդափակ էջերով. հասարակ տպագրութիւն։

= Բ տիպ. ԳԻՐՔ ԿՈՉԵՑԵԱԼ ՔՐԻՍտոնէական Ուսանելի. Շարադրեալ աշխարհաբառ ոճիւ ի Յակոբ վարդապետէ, Նարդենիս Պատրիարքէ կոստանդնուպօլսոյ։ Եւ տպեցեալ երկրորդապէս։ ի Հայրապետութեան տեառն Ղազարու սրբոյ Էջմիածնի սրբազնակատար կաթուղիկոսի ամենայն հայոց։ և ի Պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի Տեառն Գրիգորի, Սրբօէակենցաղ մեծի Վարդապետի յԱմի Տեառն. 1747։ և Հայոց ՌՃՂՁ, Մարտի Ա և Աւարտեալ յուլիսի Բ։ ի Տպարանի սարգիս և միքայէլ սեբաստեան դպրաց ի կոստանդնուպօլիս։

Յէջն 2 յառաջաբան ցէջն 5. յէջն 6 վարդապետի պատկեր մը. 7 էջէն կը սկսի և կը հասնի ցէջն 416. 417–420 նոյն տօթքը. 421–27 ցանկ, 428–429 Յիշատակարան.

« փառք և երկրպագութիւն ամենասրբոյ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, տուողին շնորհաց և կարողութեան։ Որ եւ կարողութիւն յաւարտ հասանել փոքր և մեծ պարտիզիս, և ծաղկաւէտ բուրաստանիս որոյ պարունակեալքն հարկաւորք են ուսման առ ի փրկութիւն։ Զոր շարադրեալ էր զաս Յակոբ Արք եպիսկոպոսն. Նարդենիս Պատրիարք Յակոբ Աստուածաբան վարդապետն, հոգեւոր թոռն տեառն Վարդանայ մեծի Վարժապետին ամրոցու Երկրորդին Մեսրոպայ հոգեծնկալ վարդապետի, և փոխանորդն սրբոյ երուսաղէմի երեք երանեան Պատրիարքի. Տեառն Գրիգորի Հրեշտակակրօն մեծի վարդապետին և անմիջապէս կաթնասուն աշակերտն Տեառն Յօհաննիսի որոտ ընդոստ Աստուածաբանութեան իշխանի, և Պատրիարքի կոստանդնուպօլսոյ հանգուցելոյ առ Քրիստոս։ Որ առ ի յօգուտ ազգիս մերոյ շարադրեաց զաս աշխարհաբառ ոճիւ. և եւ մեզ հրաման ի տպել միապարտ զարբէլ սարգիս և միքայէլ դպրաց սեբաստեանց, հարկեցմամբ երկրորդի տպեցմանս. Տեառն Գրիգորի սրբոյ և մեծի Պատրիարքին սրբոյ երուսաղէմի. որոյ և արդեամբքն երկրորդապէս տպեցաւ։ ի խնդրոյ տեառն Յարութեան Արք եպիսկոպոսի. շարադրողի համանուն (համանունդ!) և համշիրակ հոգեկից եղբօրն շարադրողի գրքոյս։

Արդ որք առնուք զսա ստանալով և վայելէք, յիշեցէք զամենայն վերոգրեալսն և զմեզ ծնողօքս հանդերձ. Նաեւ զգործունեայս գործարանիս մերոյ զախրացու յօհաննէսն որ զկազմաբեալսն շարէ և ցրէ, և զաշակերտացի տիրացու սէֆէրն մրահար և տպագարկ։ և դուք յիշեալք լիջիք ի Քրիստոսէ։ Ամէն »։

Գիրքը հատորակ 8°, միջակագիր, զարդափակ երեսներով, անհարթ տպագրութիւն։ Առաջինին ընտրելագոյն է։

— Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետին.

Բ Ճակատ. Մեկնութիւն. Աղօթից և Ներբողինաց Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետի ի Հայրապետութեան գերապատիւ Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Տեառն Ղազարու ամենից Հայոց գերընտիր և վեհափառ կաթուղիկոսի. Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղիմի Տեառն Գրիգորի ճգնազգեաց մեծի և Աստուածաբանութեան Վարդապետի. Իբր ի հիմանէ նոր նորոգողի Առաքելական Աթոռոյն Սրբոց Յակոբեանց։ Շարադրեալ և մեկնեալ մեծաւ զգուշութեամբ և շրջահայեցութեամբ ի Յակոբայ Արք Եպիսկոպոսէ և Պատրիարքէ կոստանդնու Պօլսոյ Աստուածաբան կոչեցելոյ և Սրբագրութեամբ Նոյնոյ Հեղինակի Տպագրեցեալ արդեամբք Տեառն Յարութեան Արք Եպիսկոպոսի և Աստուածաբան Վարդապետի։ յԱմի Տեառն 1745 Դեկտեմբերի ԻԲ. Եւ Հայոց. ՌՃՂԴ. ի կոստանդնուպօլիս քաղաքի ի Նորակազմ Տպարանի Տիրացու Գաբրիէլին որ ի լոյս ածեալ։

Այս կրկին ճակատներէն վերջ յէջսն 1–16 Նախադրութիւն մեկնութեան. յէջն 17 «Յայտարարութիւն նախերգանի բոլորի սուրբ գրքոյս», յէջն 18 ըղնձափոր պատկեր մը Նարեկացւոյ հրաշքներուն ու տեսիլքին։ 19 էջէն կը սկսի մեկնութիւնը և կ'աւարտի յէջն 1051։ Յէջն 1052–3 «Բանալի Այբ Բենական Ցանկի Գրքոյս և ազդեցութիւն առ ընթերցօղս». 1054–1134 «Ցանկ և Ցուցակ Այբբենական Նշանաւոր բառց». և յէջսն 1135–1136 որ է վերջին՝ հետեւեալ Յիշատակարանը.

«փառք Պատւի և Երկրպագութիւն, անճառելւոյ, անստհմանելւոյ, անըմբռնելւոյ, անպարագրելւոյ։ անեղի՝ անմահի, ամենակարողի, ամենաբարւոյ, ամէնիմաստի։ յանգոյից ստեղծողի, պահպանողի և ի կայի զամենայն պահողի։ սրբոյ և միանականի համագոյ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ. յառաջ քան զամենայն յաւիտեանս, ի ներկայս և յանդրու յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից Ամէն։ Որ ի չարժոն՝ գեղոն և ի թաթախուն աստ բարութենէն յաղթեալ, եւ կարողութիւն և զօրութիւն հասանել յաւարտ և ի նուահանդիստ, երկար տագարիցի. լայնագոյն տապխոնի ընդարձակ և կապուտակ իբր ովկիանու նաւագնացութեանս բառ խմաստնոյն մեծի, թէ եւուր և ի ծովու ճանապարհ. և ի վերայ ալեաց չաւիղ զգուշաւոր. ցուցեալ՝ եթէ յամենայնի կարող էիր փրկել, թէ և առանց պատրաստութեան ոք ելանիցէ ի վերայ ալեաց և մկանացն անդնդախորս ովկիանու։ Արդ մեծ զո՞ր օրհնութիւն և զո՞ր գոհութիւն մատուսցուք անպատմելի բարերարութեան նորին. եթէ ոչ՝ զի ափերեան լեալ, ընկալսի միով ծանուցուք և ծանիցուք, թէ ի վեր քան զմեզս խմանի օրհնութիւն և գոհութիւն նորա։ Որոյ բարերարութեանն փոխարէն, զայս և եթ բառ մանէ հրախտահատոյց եւոյ հնար խմացաք, և ըղձացաք, թէ միշտ ծառայելոյ, պատուելոյ՝ երկրպագելոյ, և գեանամածեալ ծնրադրութեամբ, և անլռելի բարբառով բանի. ի սրտէ յիշողութենէ, և ի կամաց, սիրելոյ միայնակ՝ արժանի էր՝ և է՝ և եղիցի։ զի անբովանդակելոյն՝ և բարերարին է անճառելի։

Արդ՝ ի յաւարտման սոյն տաժանելի և ի վեր քան զկար մեր իբր նոյեանս տապանի հանրապարփակի. խնդրեմք՝ յամենայն բարեխիրաց. յամենայն աննախանձից. և ամենայն առատաձայ սիրելեաց, յիշման արժանի առնել զամենայն երկասիրութեր աշխատօղս ի սմա։ զմեղանեհրկ հոգի, ի վեր քան զկարն ձգօող. զՅակոբ և եթ անուամբ Պատրիարքս. և զԱրք Եպիսկոպոս կոստանդնուպօլսոյ. զգրադմամբ չիտարեալ, և հոգօք տառապեալ անձնս բազմամեղ։ Եւ զերեքերանեան, Սրբօէակենցաղ, մաքուր տաղանակ Աստուածութեանն կամաց, զգերապատիւ Վեհ Պատրիարքն Սրբոյ Երուսաղէմի. զՏէրն իմ և զՀայր. զյարթուն ա-

նան հոգօղն յօրէնս Աստուծոյ, զԳրիգորիոս անդրանիկ շառաւիղն Աշրտօլու շնորհափիւս և լուսաւորած Գալրատան. և զԱստուածաբանութեան մեծ Բարունակեան: Որ հանապազատարած աղօթանուէր հայցմամբն, մեծապէս բարերար և երախտաւոր մեզ եղեւ ցաւարտումն Գրքոյս. և երբ է յար՝ և առ այլ գործառութիւնս մեր՝ զորս երկասիրեցոյն եմք ի պատիւ եռամիոյն Աստուծոյ. և ի պարծանս Լուսաւորչի հաւոյն մերոյ Տեառն Վարդանայ մեծի Վարժապետին Գալրատանն:

Յիշեսջի՛ք և զանմիջապէս հոգեւոր ծնօղն իմ և Վարժապետ՝ զառ ի Քրիստոս ննջեցեալ, զորտաընդոտ իշխանն Աստուածաբանից, և մանաւանդ զԱստուածաբանութիւնն ի լոյս ածօղ և բանիւ սրբազրիչ յիրում ժամանակի, զՏէր Յօհաննէս Աբբ Եպիսկոպոսն, և զգերամբարձր Պատրիարքն Կոստանդնուպօլսոյ: յորոյ մաքուր սեռանցն մաքուր կաթանէ՝ ջամբեալ մեր ի մանկութենէ, ըստ որակութեանն կաթին եղաք սորաքոյս: և յաղթերէ նորին վարդապետութեանն, զայս փոքր խաղացուցաք յարբումն Աստուածաբանից: որ պատճառ սոյն երկօք լիարուն գրքոյս (եթէ չիցէ յանդգնութիւն ասել) կարէն իմանալ ամենայն Աստուածասէր անձինք. ի պարզոյն գծառս. և աշակերտիս զվարդապետին իմոյ անհատութիւն իմաստիցն: զի թէ աղբիւրն քաղցր է, ամն եւս քաղցրացոյն պարզ և վճիտ:

Յիշեսջի՛ք և զմեծապատիւ եղբայր մեր ի Քրիստոս, զափոփիչն ցաւալի և վշտալից կենաց իմոց, զՁմիռնոյ քաջ գիտակն և զԱբբ Եպիսկոպոսն, զՏէր Աղէքսանդրոս պաշտօնակիցն մեր ի Քրիստոս և զԱստուածաբան Վարդապետն: որ յԵպիսկոպոսութեան մերում ի ժամանակս եկեղեցական առն աստուծոյ Լուսաւորչի կարապետ Սրբազան կաթողիկոսին զօրով Աթոռակալ ի սուրբ Էջմիածին, եղեւ խարտաւիրանկ և աջակից ի պաշտօն Աւագերական առաքճանի Եպիսկոպոսութեան մերում. ընդ Տեառն Խաչատուրայ Աստուածաբանութեան խորախոր և փողաբարբառ քարոզչի. և ընդ Տեառն Մինասայ հեզահոգի և քաղցրաբարբառ Աստուածահաճոյ Վարդապետի. նորին Աբբ Եպիսկոպոսի և վերատեսչի Տարօնոյ օրհնեալ և շնորհալի Գանձի. չիմի սրբոյ Կարապետի Տեառն մերոյ. աշակերտի Լուսաւորչի առաջնոյ Աբրահամու Քրիստոսատիպ Քահանայապետի և ընդհանրական Կաթողիկոսի. զորս և յիշել աղաչեմ ի մաքուր աղօթս ձեր: Յիշեսջի՛ք և զհոգեկից և համշիրակ եղբայրն իմ ի Քրիստոս, զՅարութիւն Աստուածաբան Վարդապետն. նորին զփոխանորդն իմ և զցաւակարծ. որոյ երկանցն արդեամբ ի լոյս ածեցեալ տպեցաւ հոգեւոր բուրաստանս՝ ամենայն ծաղկօք և հոգեւոր մրգօք լի: Նաև զԱպուշեխցի խոստովանահայրն սուրբ Երուսաղէմի, զխաղաղութեան որդի, և զմխիթարիչն իմում սրտի, զՅօհաննէս ճգնազգեաց և հեզահոգի Վարդապետն: և զամենայն միաբանսն և զաշակերտսն վեհափառ Աթոռոյն Տեառն Գրիգորի սրբոյ Երուսաղէմի վեհ Պատրիարքի: Նաև զազգիս մերոյ օրհնեալ և բարեպաշտօն Աստուածասէր և զխասնոր իշխանսն, զցանկան և զպարխալն յամենայն մերոյ ձախորդութեան, զմեծ Մահտեսի Սեդրեատրոս. զՀոլուեան շառաւիղ զմեծ Մահտեսի Յարութիւն Աղային մեր. և զամենայն նոցունց օրհնեալ և երկիւղածորդ իշխանսն, և զբարեպաշտ օրհնեալ Նազրենեան ալթի ճէմայէթի. և զամենայն սրտացաւ և հարազատ բարեկամս մեր զմայրաքաղաքացին քաղաքիս: զԱկնցիս. և զԿեսարացիս. և զարեւելեան պարզ և յատակ սիրով զբարիս մեր կամեցօղն և զանխարդախ սիրելին մեր: Նաև զբոլոր երախտաւորս մեր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ:

Նաև՝ զգառափառ և զմանկամարդն լուսահոգւոյ Հօր մերոյ Գալրատան, նրբանկատ զհայրապետին ծերունի, զՏիրացու Գասպար Մահտեսի մեծ Ամուճայ կոչեցեալն Սեբաստացի. որ բազում երախտիս ունի ի վերայ մեր և այլոց աշակերտաց լուսահոգւոյն: յորոյ վարդապետութեանն ժամանակի՝ լեալ էր սաղմոսական և պատուապարան. և փոխարերաբար կաթնատու իմաստից՝ և մատակարար առ այլս: Նաև զմարմնաւոր ծնօղս մեր, զՆալօղլի կոչեցեալ Մահտեսի Պօղոս, և զՄահտեսի Թամամն ննջեցեալսն առ Քրիստոս. և զամենայն արեան առու մերձաւորսն մեր. և զմայրախնամ քոյրն իմ համահայր և համամայր զՄահտեսի Տիրուհին: Նաև զհոգեւոր որդեակն մեր ի Քրիստոս, զանդրանիկ աշակերտսն մեր, զեկեղեցի Պետրոս Դէրան Երազօլսոյ. և զԱթանաս խոհեմ Վարդապետն զԴէրան Եւդոկիոյ: Եւ զաշխատաւոր հոգեծին որդեակն իմ զՊօղոս Վարդապետն, որ բազում աշխատանս և երկս կրեաց մինչեւ ցաւարտումն գրքոյս յամենայն. թէ ի շարմանն և յերկրորդական սրբագրութեան ի տպեցեալսն, թէ ծաղկանց և պղնձեայ պատկերաց քանդակեցման վերակացութեանն. ի յօգնութեան ցանկին և ի ժողովման տետրակացն և ամենայն կարգադրելեաց ի վեր քան զկարն աշխատեցաւ: Նաև զԿարապետ վարդապետն, որ սակաւ ինչ աշխատեցաւ ի սկզբանն: Եւ զձեռնասուն աշակերտսն իմ զՅովսէփ հեզահոգի վարդապետն. և ընդ նմին կարգառու զՊետրոս վարդապետն: Եւ զնորդինիս նորաբողբոջ ձեռնասուն աշակերտսն իմ զՍտեփաննոս. զԻսահակ. և զԿարապետ բանի ուսեալն և սրբոյ Աւետարանին ծառայն: և զՄարկոսպօղոսս մեր: Նաև զծերունի նոտար Մահտեսի Պետրոս սրտացան մեր. և զաշխատաւոր Մահտեսի Աւետիքն: Նաև զազգարատան գործաւորսն, զազարրիչ կոչեցեալ հանգուցեալ Տիրացու Բարսղի որդի Տիրացու Գաբրիէլն, և զեղբայրս նորա զԱւետիքն, և զփոքրիկ Միքայէլն: Նաև սոյնն հօր եղբայր հանգուցեալ շնորհալի Տիրացու Յակոբն: Նաև զԿեսարացի հանգուցեալ Գրիգորի որդի զՏիրացու Անտօնն. որ ի տուէ և ի գիշերի, քան զերկու ամս աւելի՝ յերկս աշխատանաց մեծագոյն ջանիւք, թէ ի շարելն զկապարեայ գիրսն եթէ ի ցրուելն, աշխատեալ վաստակեցաւ մինչեւ ցաւարտն սորոյ Մատենիս: Նաև զմրադարիկ և տպօղ Սպարտակերցի Մահտեսացու Յօհաննէսն. և կարճեցի Տիրացու Յակոբն: որ զառ ի բարին՝ զյիշօղքդ ամենայն, յիշեսցէ Աստուած ի բարին, Ամէն»:

Գիրքը կրկնածալ՝ երկսիւնեան, միջակադիր, սպիտակաթուղթ, բայց անհարթ տպագրութիւն:

— Գրքոյս կոչեցեալ Հոգեշահ, յերկուց ճառից Սրբոյն Յօհաննու Ոսկեբերանին յԱնդրիանդեայ գրքոյ յերրորդ, և ի չորրորդ ճառիցն ստանուորեալ ի Յակոբ Պատրիարքէ կոստանդնուպօլսոյ. ի չահ և յօգուտ կատարելութեան կենաց ցանկացողաց: տպեցեալ արդեամբք հայրապատիւ Տիրացու Գասպար սեբաստեան դպրի մեծ Ամուճայ կոչեցելոյ: ի Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի Տեառն Ղազարու մեծի կաթուղիկոսի. և ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի, Տեառն Գրիգորի Աստուածազարդ Պատրիարքի: Ի թուին Հայոց ՌՃՂԵ (= 1746). Դեկտեմբերի (Ժ.Բ): Ի տպարանի չնչին յովհաննիսի:

Այն չորեքկարգեան զարդափակ ճակատին չալակը Ոսկեբերանի փայտափոր պատկերը՝ սորեւ 6 տող տամանւորով, և զխօսքը. յէջն 3 Նալեանի յառաջաբանը, որ կ'ըսէ թէ յորդորուելով Ոս-

կերերանի խմատանայից խօսքերէն, հաւաքեր է քանի մը խօսքեր ի յօրդոր մանկանց եկեղեցւոյ, ուր ի վերջն՝ յէջն 6, գրուած է. «... Յիշեցէք յաղօթս զանարգիս Յակոբ Պատրիարքս Կոստանդնուպոլսոյ. որ ի ՌՃԴԵ, նոյեմբերի ԺԱ ի տօնի սրբոյն Յօհաննու Ոսկեբերանին զաս ի պատիւ նորա հիւսեցի»: 7 էջէն կը սկսին Ոսկեբերանին խօսքերը՝ անհարթ տառատուով, և առաջին ճառը կը հասնի մինչև 22, (ՂԷ (97) տուն), և յէջն 23՝ նոր խորագրով կը սկսի երկրորդ ճառը, որ կ'աւարտի յէջն 37 (ՂԳ տուն):

Այս երկու ճառերուն տպագրութիւնը կը տարբերի հետեւեալներէն. զի առանց էջերը մէկ կարգ զարդանախշ էին, մինչ յաջորդները կրկնակարգ: Յէջն 38 նոր յառաջաբան նոյն Պատրիարքէն, ուր և կ'ըսուի. «... կատարեցաւ գրանս Ոսկեբերանին եւու վարժից կրթութեան բարուց, և զայս մանկանց ձերոց. և ձեզ մանկաբար չարժողացդ: զոր անմեղագիր ամենայն զմերս համարձակութիւն՝ ո՜չ լերո՛ւք ի տէր: Շարադրեցաւ Արդեամբ յորդորողի տորին, հայրապատիւ Գասպար սեղանատան ցաւագար Դպրի: (ՌՃԴԶ) փետրվարի (ա) ի Սուրբ Աստուածածին, ի Պատրիարքարանի մերում»:

Յառաջաբանէն վերջ 41 էջէն կը սկսի ութատնեան խրատական տառատուրները (նախընթացներն էին 4-4-3), և կը հասնի յէջն 76՝ որ է վերջին:

Գիրքը փոքր 4°, անհարթ միջակագիր, թանձր սեւաթուղթ. անհարթ տպագրութիւն: Գինը 16 բարայ:

= Բ տիպ, ի Ն. Նախիջեւան, 1794?

— Գիրք կոչեցեալ Ջէն Հոգեւոր. Որ ունի զերիս մասունս: Առաջին մասն է լուծումն առարկութեանց հրէից և համաձայնութիւն Աւետարանչաց: Երկրորդ մասն է Քրիստոնէական վարդապետութիւն տաճկավար: Եւ երրորդ մասն է հաւաքումն չքնաղագոյն պատմութեանց եկեղեցականաց՝ Թուրքի բառիւ: Շարադրեալ ի Յակոբ Պատրիարքէ Կոստանդնուպոլսոյ. որեւ երբեմն Պատրիարք սրբոյ Երուսաղէմի: Հարկաւոր ուսման ամենից մանկանց եկեղեցւոյ: Տպեցեալ Նորին Հրամանաւ ի նոյն վերագրեցեալ Քաղաքի: ի Հայրապետութեան սրբոյ Էջմիածնի Գերագահ Աթոռոյ՝ Տեառն Խոսհակայ երից երանեալ սրբազնակատար ամենից Հայոց կաթողիկոսի: Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի՝ Տեառն Թէոդորոսի առաքինազարդ Արք եպիսկոպոսի: Յամի Տեառն 1757. և Հայոց՝ ՌԲՃԶ: Յունիսի Ժ:

Գիրքը 4°, միջակագիր, դեղնաթուղթ, զարդափակ երեսներով, ընդ ամէնը 368 ցանկով միասին. յետոյ բառարան ի տաճկէ ի հայ, մինչև 418: 419-423, «Բան առ Նորանկատ Ընթերցօղս» գրութիւն մը, որ հեղինակէն չէ, թէև գիրքն իր օրով է տպուած, և վերջին 424 էջէն մէջ հետեւեալ Յիշատակարանը.

«Շնորհիւ և Ողորմութեամբ Ամենակարողին Աստուծոյ՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և բարեխօսական մաղթանօք արագահաս վկային սրբոյն Մինասայ՝ յանկ եղեալ աւարտեցաւ տպումն նորաշար գրքոյս այսորիկ ցանկալւոյ՝ Ջէն հոգեւոր կոչեցելոյ: Ի վայելումն ընդհանուր ազգիս հայկազնոյ: Ի տպարանի տառատառի որդւոյ յօհաննիսի՝ ըստ անուան գայրի. ամենեցունց պատրաստական ծառայի:

Արդ՝ որք հանդիպիք սմա, և հաստատով հըրճուիք ճեմիւ ընթերցման՝ զնորաբոյս ծաղիկս բաղբոջեցեալ ի պարտիզի Հայաստանեայց Եկեղեցւոյ, առ հաճեալ յիշեսջիք յարժանաւոր աղօթս ձեր ի Քրիստոս՝ զիս զվերագրեցեալ տպօղս անարժան՝ ընդ որդեկի իմում կարապետի՝ զգիրս կազմեալս չարօղի: Յիշեսջիք և զմրահար միչակին գործարանիս՝ զուէր սիմէօնի որդի՝ զախրացու զրիգորն վանցի. և ըղհամայն աշխատօղս սորին: Եւ աղերսեմ հետեւապէս, զի եթէ ուրէք ուրեք գտանիցի ի սմին սխալումն գրոց ի բառս՝ (առհեալ յաչաց մերոց ի սրբագրութեան) ներեսջիք վասն աստուծոյ զայնս. գոլով աղգակից՝ սխալոտ բնութեան: Եւ ինքն տէրն մեր Քրիստոս՝ բստ յուսոյն և վաստակոց խրաքանչիւրոցն՝ հատուսցէ զվարձս բարեաց ի յայտնութեան և յարքայութեանն իւրում. Ամէն»:

= Բ տիպ, ի Կ. Պօլիս, 1787?

Գիրք կոչեցեալ Ջէն Հոգեւոր: Որ ունի զերիս մասունս: Առաջին մասն է լուծումն առարկութեանց հրէից և համաձայնութիւն Աւետարանչաց: Երկրորդ մասն է Քրիստոնէական Վարդապետութիւն տաճկավար: Եւ երրորդ մասն է հաւաքումն չքնաղագոյն պատմութեանց եկեղեցականաց՝ Թուրքի բառիւ: Շարադրեալ ի Յակոբ Պատրիարքէ Կոստանդնուպոլսոյ, որ և երբեմն Պատրիարք Սրբոյ Երուսաղէմի: Հարկաւոր ուսման ամենից մանկանց եկեղեցւոյ: Ի Հայրապետութեան սրբոյ Էջմիածնի Գերագահ Աթոռոյ՝ Տեառն Ղուկասու զերերջանիկ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ ի Պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի՝ Տեառն Յովակիմայ ճգնազգեաց վարդապետի: Իսկ վերստին տպեցեալ եղեւ՝ վեհափառ հրամանաւ մեծի արքայնիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսոյ Տեառն Զաքարիա... և Աստուածաբան Պատրիարգի և Արք Եպիսկոպոսի: Ի թուին հայոց ՌՄԼԶ (= 1787), Մայիսի ԻԲ: Ի տպարանի Յօհաննեսի և Պօղոսի:

Յիշատակարան. «Շնորհիւ... յանկ եղեալ աւարտեցաւ երկրորդ տպումն նորաշար գրքոյս այսորիկ ցանկալւոյ՝ Ջէն Հոգեւոր կոչեցելոյ. որ է պարտէզ համատառ լցեալ ծաղկամբ անուշիւք: Ի վայելումն ընդհանուր ազգիս Հաբեթեան: Ի տպարանի Յօհաննեսի և Պօղոսի բազմաշխատ դպրաց, որք եմք ծառայ պատրաստական ամենիցդ: Արդ՝... յիշեսջիք... անարժան տպօղքս գրքոյս: Նաև յիշեսջիք որդւոյ Յօհաննեսի և եղբօր Պօղոսի զախրացու Յարութիւն զգիրս կազմեալ չարօղի: Յիշեսջիք և զմրահար միչակին գործարանիս՝ Բարսեղի Տիրատուրի որդի զախրացու Զաքարին, և զՄելքոնի որդի ախրացու Յովհաննէսն...»:

Գիրքը 4°, միջին տպագրութիւն. 424 էջ:

Այս տպագր.ը կը պակսի մեր գրացանկ մէջ, կ'արտատպեմ Տ. Վ. Պ(ալեանի) գրութենէն. Արեւ. Մամուլ 1896, էջ 590:

= Գ տիպ. Գիրք կոչեցեալ Ջէն Հոգեւոր... Տպագրեալ ի Հայրապետութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի Տեառն և Տեառն Եփրեմի աստուածընտիր կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի Տեառն Գաբրիէլի սրբակրօն արք Եպիսկոպոսի: Իսկ ի Պատրիարգութեան մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսոյ Տեառն Պօղոսի աստուածաբան արք Եպիսկոպոսի: Յամի Տեառն 1820, և ի թուին Հայոց ՌՄԿԹ. և ի յՕգոստոսի Լ: ի Տպարանի Պօղոսի արապեան ապուչեխցւոյ. 4°, 141 + 312 էջ:

— Դ. տխլ. Ջեռ հոգեւոր ... Տպագրեալ ի Հայրապետութեան Տ. Տ. Մատթէոսի ազգասէր և Աստուածընտիր կաթուղիկոսի ամենայն Հայոց: Եւ ի Պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի Տ. Յովհաննու վեհափառ Արքեպիսկոպոսի: Եւ ի Պատրիարքութեան կոստանդնուպօլսոյ Տեառն Գէորգայ Սրբազան Արքեպիսկոպոսի: Ի Ղալաթա Կ. Պօլսոյ, ի Տպարանի Յովհաննու Միւհէնտիսեան, 1859. 8°, 488 էջ:

Ծանօթ. ը կ'ըսէ. «Արդէն Ջէռ հոգեւոր կոչուած օգտակար գիրքը իր սրբազան հեղինակին անունովը ազգիս ընդունելի և ծանուցեալ ըլլալուն տարակոյս չկայ. և զի այս գիրքը՝ ժամանակէ մը ի վեր բոլորովին սպառած ըլլալով՝ խնդրողներն ալ շատ էին, Ամենապատիւ սրբազան Պատրիարքի հրամանագրով և Հոգեւոր ժողովոյ հաւանութեամբն ալ առաջին մասին տաճկերէն բառերը միայն հայերէնի փոխուելով՝ այս անգամ նոր տպագրեցաւ նոյնութեամբ, և քանի մը տեղ համառօտ ծանօթութիւններ աւելցնելով՝ հեղինակին մէկ քանի տաճկերէն տաղաւորներն ալ ծանօթութեան կարգը գրուեցան. ընթերցողք ներողամիտ պիտի ըլլան անշուշտ՝ սրբազան հեղինակին յառաջաբանութեան մէջ գրածին նայելով՝ որ ինքն ալ ակամայ այն տաճկերէն բառերը գործածեր է հայերէնին մէջ, իսկ Յիսուսեալ երկրորդ և երրորդ մասերը նոյնպէս տաճկերէն թողուած են հեղինակին դիտաւորութեանը համեմատ»:

Այս տպագրութիւնը ծանօթ չէ Տ. Ե. Պալեանին:

— Գիրք կոչեցեալ Գանձարան Ծանուցմանց. Որ Պարունակէ զչորեսին Հատորս զայսոսիկ: Յառաջնումն՝ ուսուցանէ զաւագ խրխցունս և զամենայն քրիստոնեայս և գքարոզիչս զոչ կըրթեալսն ի դպրատան: յորում գտանին հարկաւոր ուսանելիք և առնելիք բարոյականք: Յերկրորդումն՝ ուսուցանէ զհամեստ գիտելիս իբրեւ զհրճուելիս. արգելիչ ծուլութեան, բամբասանաց, և դատարկաբանութեան: Յերրորդումն՝ ուսուցանէ զոմանց աշխարհաց պատմութիւնս. իբր հեռացոյց տխրալինիւ հայելապէս ներկայացուցանելով: ի Չորրորդումն՝ պատմէ զհանգամանս ոմանց գլխաւոր քաղաքացն հայոց: Շարադրեալ գրաբառ և աշխարհաբառ ոճիւ ի Յակոբ մեղապարտ երբեմն սրբոյ Երուսաղէմի, և նարդենիս Պատրիարքէ կոստանդնուպօլսոյ: ի Հայրապետութեան Գերագահ Աթոռոյ սրբոյ Էջմիածնի՝ Տեառն Իսահակայ սրբազնակատար ամենից Հայոց վեհափառ կաթողիկոսի և Ծայրագոյն Քահանայապետի և ի Պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի, Տեառն Թէոդորոսի խոբենացւոյ՝ Մաքրակենցաղ և Աստուածիմաստ Արք եպիսկոպոսի: Յամի Մարդեղութեան Տեառն, 1758: և Հայոց ՌՄԷ: Յամսեանն մայիսի սկսեալ, և ի հոկտեմբերի աւարտեալ և ի տպիլ սկսեալ: Օգնեա՛ Ամենակարօ՛ղ Տէր:

Ճակատին շալակէն՝ ցէջն 2 «Նախերգութիւն առ Աստուածասէր Ընթերցօղն», ցէջն 6, յէջն 7 տաղաւոր մը հեղինակէն, և յէջն 8 եպիսկոպոսի փայտափոր պատկեր մը: Այս նոր թուահամարով կը սկսի բուն գիրքը և կը հասնի յէջն 504. յետոյ նոր թուահամարով «Յաղագս Համառօտ Պատմութեան Մասանց Աշխարհի, և Նշանաւոր կղզեաց», ցէջն 320. 321–335 Յանկ և ցուցակ. և յէջն 336, որ է վերջին, հետեւեալ յիշատակարանը.

«Շնորհիւ Ամենասուրբ Երրորդութեան և միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սըրբոյ՝ յանկ ելեալ աւարտեցաւ տպումն նորաշար գրքոյս՝ կոչեցելոյ Գանձարան Ծանուցմանց: Որ շարադրեալ արարաւ երկասիրութեամբ աշխատանաց ի Վեհագոյն Աստուածաբան Վարդապետէ Տեառն Յակոբայ՝ մեծի Պատրիարգի Կոստանդնուպօլսոյ: Զորոյ ազնուութեան ճաշակն՝ ընթերցօղն միա՛յն կարէ առնուլ. զի եթէ հազարիցս զովիցի համ ճաշակելւոյ իմիք, ո՛չ այնպէս կարէ իմանալ լսօղն, որպէս զճաշակմամբ փորձառօղն: Այսպէս և զաս՝ ո՛չ արտաքուստ և եթ տեսանօղն, այլ ի ներքս ընթացօղն ընթերցմամբ և որճալով ծաւքօղն ի քիմս մտաց՝ կարէ ճանաչել զքաղցրութիւն սորին: Ուրեմն որք հանդիպեալ ճաշակէքդ ի բարեկի երախանէս յայսմանէ, և շահիք զշահ հոգեւորական, յիշեսջի՛ք առ յոյսն բնաւից Քրիստոս՝ զհամայն աշխատօղսն գրքոյս: Յորոց մի է և քրտնաջան մշակն գործարանիս յորում տպեցաւ՝ Տէր Սիմէօնի որդի՝ տիրացու գրիգորն վանցի: Եւ ինքն Քրիստոս տէրն մեր որ առատն է ի տուրս պարգեւաց՝ ի միւսանգամ գալստեան և յարքայութեանն իւրում, հատուցէ առհասարակ վարձս բարեաց խրաքանչիւրոց՝ յիշողաց և յիշեցելոց. Ամէն»:

Գիրքը մեծ 8°, միջակագիր, ծաղկափակ երեսներով. հատարակ տպագրութիւն:

— Գիրք Աղօթից Ամենայն Անձանց Հարկաւոր: Շարադրեալ ի Յակոբ Պատրիարքէ: ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ Սրբազնակատար վեհափառ կաթողիկոսի սրբոյ Էջմիածնի: Եւ ի Պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի՝ տեառն Թէոդորոսի ճգնազգեաց և աստուածիմաստ վարդապետի: Արդեամբք հոգեւոր որդւոյ մերոյ տիրացու կարապետ խոհեմագոյն բժշկի: յԱմի Տեառն. 1760: և Հայոց՝ ՌՄԹ: Յունվ՛ 4: ի Տպարանի Աստուածատուրի:

Յէջն 2–5 «Նախերգան», յէջն 6 Երրորդութեան փայտափոր պատկեր մը, և 7 էջէն կը սկսի աղօթագիրքը, և կը հասնի յէջն 189. 190–192 հետեւեալ Յիշատակարանը.

«Շնորհիւ ամենասուրբ Երրորդութեան և միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սըրբոյ, Յանկ ելեալ աւարտեցաւ տպումն նորաշար գրքկանս աղօթից և ժամամուտից ի փառս աստուծոյ: Որ յօրինեալ արարաւ երկասիրութեամբ աշխատանաց Տեառն Յակոբայ Աստուածաբան Վարդապետի՝ մեծի Պատրիարգի Կոստանդնուպօլսոյ՝ ի յօգուտ հասարակաց մանկանց եկեղեցւոյ: Արդ՝ ո՛վ սրբասնեալ մանկունք սրբոյ սիօնի. ճանաչելով զվաստակաւորն ձեր՝ (զվերոգրեցեալ զվեհն տեառն զերյարգելի) մի՛ մոռանայք զերախտիս նորա. յիշելով զինքն և զնուրայինան ամենայն, զմարմնաւոր և զհոգեւոր ծնօղսն առ Քրիստոս ի մաքուր մաղթանս ձեր:

Յիշեսջի՛ք եւս՝ զմիջկ տիրացու կարապետն խոհեմագոյն. զխնդրօղ սորին ի վեհէն պանծալւոյ. որ սիրահարեալ աղերսանօք՝ ետ յօրինել զսա. տալով և զծախսն տպեցման. առ ի լինել յիշատակ հոգւոյ իւրում և ծնողացն իւրոց: Համդուցեալ հօրն տխթէր ովանէսին, և կենդանի մօրն հիւրխին. և նորաբողբոջ որդւոյն՝ պօղոսին, պետրոսին, և յօհաննիսին: Որ եթէ այս գրքոյկ՝ սիրով ընկալեալ լիցի և փութով վերջասցի, (որպէս և յուսամ) ունի ի մօտ և զա՛յլ ինչ գիրք ի շարադրեալ գրեանց մեծի Վարդապետին՝ տալ տպել ի փառս աստուծոյ. և ի պայծառութիւն սիօնի և մանկանց նորին բանասիրաց: զորոյ զմեան բարի՝ ամենեցուն շնորհեսցէ տէր: Բանդի՝ սոյն սա ո՛չ

ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

միայն գըրոց եկեղեցւոյ է պիտանի, այլ գրեթէ ամենից անձանց հաւատացելոց ի քրիստոս է պիտանացու. մինչ սերտել հարկաւորին զյօրինեցեալ աղօթս իւրաքանչիւր՝ առ ի համաձայնել Աղօթից եկեղեցւոյ։ Յիշեսջիք և զայլ պատճառն տպագրութեան սորին ընդ որս և զաշխատաւորն զործարանիս՝ զտէր Սիմէօնի որդի՝ զանիրայու դրիգորն վանցի։ Վասն զի աշխատօղք հոգևորացն՝ ոչ միայն ի մարմնաւոր արդիւնս հային, այլ հոգևորին ակնունին։ զի եթէ այդպէս իցէր, այն իսկ լինելով վարձ նոցա, ի հոգևոր վարձուցն անմասն եղանէին։ այլ այն է իբրու ապրելիք ինչ քան մարմնոյ. որով կազդուրեալ մարմինն՝ հանգոյն գեղօք վարողաց՝ կարողանայ զհոգևոր գործոյ զպաշտօնն առեցրել. որպէս երանելին պօղոս ապգ. առնէ ի գիրս կորնթացւոց և յայլ թուղթս իւր։ Զոր Աստուածն ամենայնի՝ որ յաջողէ զամենայն հոգևորս յամենայնի՝ շնորհեսցէ միշտ ըղնոյնս խորհիլ. խօսիլ և գործել։ և նմա փառք յաւիտեանս ամէն»։

Գիրքը 8°, տասդափակ երեսներ, միջակ գիր, հասարակ տպագրութիւն։

— *Գրքուկս կոչեցեալ ճրագ ճշմարտութեան։ Շարադրեալ ի Յակոբոս Պատրիարքէ երբեմն սրբոյ Երուսաղէմի, և նարդենիս Կոստանդնուպօլսոյ։ Որ իբրու ճրագ ընդառաջ ընթացեալ ուղղագնացից, յայտնէ զվիհս և զխորխորատս ընդդէմ ճշմարտութեան մաքառողաց։ Եւ զանզգոյշ պարզամիտսն՝ ազատէ ի յորոգայթից մոլորութեանց ստապատիր նոցին առարկութեանց։ Տպեցեալ հարկադրութեամբ Տեառն խոհականյ երկրորդ պարթեւի՝ Ծայրագոյն Պատրիարքի և Հայրապետի ամենայն Հայոց. և կաթողիկոսի սրբոյ մօրն եկեղեցեաց հայաստանեայց Աստուածաէջ գահին Սրբոյ Էջմիածնի։ Ի փառս մեծին Աստուծոյ, և ի յօգուտ մանկանց սրբոյ Եկեղեցւոյ։ ի թւին Հայոց՝ ՌՃԾԵ (= 1706)։ մայիսի Է։*

Յէջն 2 «Ազգարարութիւն ինչ Առ ընթերցողն», որուն մէջ կը յայտնէ պատճառն իր հակառակաւէր ոգւոյն Մխիթար Աբբայի և Մօնֆօոլթ յիսուսեան կրօնաւորին դէմ, յէջն 5. յէջն 6՝ պատկեր խաչելութեան երկաթէ տառնատորով, և 7 էջէն կը սկսի խնդրին առաջին մասը Մխիթար Աբբայի դէմ՝ յէջն 103. ուր անընդմիջապէս կը սկսի երկրորդ մասը, կամ ինչպէս ինք կը գրէ՝ երկրորդ գլուխը, որ Մօնֆօոլթին դէմ է, յէջն 252։ Որմէ վերջ, յէջն 253 կը սկսին հարցումները՝ ընդդէմ Մօնֆօոլթի յէջն 285. յէջն 286՝ ընդդէմ Յովէա Բառրիի՝ յէջն 309։ Ապա յէջն 310 լուծմունք առարկութեանց՝ դարձեալ Մօնֆօոլթին դէմ՝ յէջն 359, ուր կ'ըսէ. «... զայսքանս եւս ի խնդրոյ զմիոնոյ Արհի եղխոլոպոսին՝ եղբօր մերոյ Աբրահամու Աստուածխմաստ Վարդապետին՝ չարադրեցաք ի լուծումն փառամոլական առարկութեանց մօնֆօրթ պատրւոյն և այլոց»։ Ապա ցանկ բանից յէջն 366. 366–8 հետևեալ յիշատակարանը.

«փառք, Պատիւ, և Երկրպագութիւն. համդերձ չնորհակալու պաշտօնիւ և օրհնութեք գոհութեամբ՝ ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն։ Որ իւրով յառաջատես ախնարկութեամբ և ամենաբաշխ կամեցողութեամբ՝ շնորհեաց մեզ նուաստիցս զյաջողուած կարողութեան՝ տպել և ի լոյս ածել՝ զնոր լուսաւոր. Ճրագ ճշմարտութեան անուանեալ Գիրքս՝ առ ի վայելումն ամենայն ճշմարտասէնչ ուղղամիտ մանկանց եկեղեցւոյ։ ի Ծայրագոյն Քահանայապետութեան սրբոյ Գահին Էջմիածնի՝ երկրորդ Պարթևի՝ Տեառն Խոհակայ Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց։

Արդ՝ որք հանդիպիք սմա, և մինչ ի ձեռն ընթերցման ծանուցեալ զճշմարտութիւնն՝ ընկալնոյք զմխիթարութիւն սրտից երկրայական տարակուսանաց՝ անյայթելի լուծմամբ՝ բազմադիմի առարկութեանց ներհակացն, Յիշեսջիք ի հաճոյական աղօթս ձեր առ Քրիստոս՝ զարհի Բարունապետն՝ և զԱստուածաբանութեան Հեղինակն այսորիկ գրքիան՝ զՏէր Յակոբոս Պատրիարգն՝ մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Զի տացէ նմա Տէր զկեանս երկարս՝ անդորրական ամանակօք, առ ի բեղմնաւորել զարդիւնս աշխատանաց իւրոց՝ ի պայծառութիւն սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց։ Յիշեսջիք եւս՝ զցանկացօղ լուսոյ ճրագի ճշմարտութեանս այսորիկ և զապել տուօղն արդեամբ՝ զարժանապատիւ Աստուածիմաստ Աբրահամ Վարդապետն տատապատեցի. և զնորդենիս արք եղխոլոպան զմիոնոյ։ Որ սիրահարեալ առ գիրանօք և խնդրեալ ի վերադրեալ գերյարգելի Պատրիարգէն մեծէ՝ ետ տպել զսա. առ ի յիշատակ իւրն հոգւոյ, և ծնողացն իւրոց։ Յիշեսջիք և զտպագրօղս սորին անարժան՝ զորդի հանգուցեալ աստուածատուրի՝ զյօհաննէս դպիրս՝ լոկ անուամբ. և զորդի իմ զկարապետն աւելածու. համդերձ մշակաւ մերով կազզուանցի ինկիտանիւ. և այլ բարեջան աշխատակցօք մերովք։ Եւ դուք լինիջիք յիշեցեալք ի քրիստոսէ յաւուր յայտնութեան նորին. ամէն»։

Գիրքը փոքր 8°, սեւաթուղթ, միջակագիր, զարդափակ էջերով. ընդամէնը 368 էջ։ Անհարթ տպագրութիւն։

— *Տետրակ զունայնութենէ կենցաղոյս. ստանուորեալ ի հոգելոյս Յակոբ աստուածաբան պատրիարգէ Կոստանդնուպօլսոյ։ Այլ և ի վերայ առհասարակ բարուց զարուս մարդկանց՝ յայլմէ ասացեալ զանկատաբանութիւն ինչ. և յայլմէ ումեմնէ եւս թարգմանեալ ի զարթուցումն իւրաքանչիւրոց. և զովեստք զումերք, և այլ։ Որոց՝ վաղ ուրեմն սիրահարեալ եղբօրորդի Տէր Պօղոս Քահանայն, ետ տպել իւրով իսկ արդեամբ՝ ի յիշատակ իւր. ի 1805 ամի Տեառն. ի Կոստանդնուպօլիս, ի մայր Գալաթան, ի ձեռն տպագրիչ Մարտիրոսի։*

Յէջն 2–12՝ տաղաւոր Նալեանին։ Ապա ուրիշ տաղաւոր մը նոյն խորագրով. «Յումեմնէ ասացեալ առ անձն իւր», յէջն 24։ Այս տաղաւորները սկիզբէն մինչեւ վերջը տաճկական թարգմանութիւն ալ ունին, դիմացէ դիմաց։ Յէջն 26՝ տաղաւոր զովեստ Կաղզուանցի Տէր Պօղոսէն ի վերայ Սուլթան Սէլիմ արքային, և ի վերայ մահտեսի Տատ անուանեալ Աղաքել ամիրային, յէջն 34։ Ապա նոյն էջին մէջ տաճկերէն տաղաւոր մը ի տաճիկ էֆէնտիէ ումեմնէ ի վերայ մահտեսի Տատին, յէջն 38, ուր կայ և ուրիշ ողբական տաղաւոր մը Վրաստանի վրայ, յէջն 43։ Ապա յէջն 45 խրատ մը առ ժողովուրդն, և յէջն 47 և 48, որ է վերջին, տպեղուած մը Շնորհալիէն, համդերձ տաճկերէն թարգմանութեամբ։

Գիրքը միջակ 8°, միջակագիր՝ մաշած. անհարթ տպագրութիւն։

Գրուածներ Նալեանի վրայ. Արեւելք 1893, թ. 2964, 68, 2971, 73–74. – 1894, թ. 2976, 78, 80։ – Նալեան Պատրիարքի կեանքէն (Ա. Յ. Այվազ.), Արեւ. Մամուլ 1894, թ. 15։ – Մասիս 1903, թ. 4։ – «Նալեան և Նարեկացի». Լոյս 1906. տես ցանկը։

ՅԱԿՈԲ ՇԱՄԱԽԵՑԻ. — Գիրք Աղօթից: Որ կոչի Հաց Նեղելոց: Շարադրեցեալ ի Յակոբայ Արհի Եպիսկոպոսէ Շամախեցւոյ. ի փառս մեծին Աստուծոյ՝ քաւչին մեղաւորաց և փրկչին նեղաւորաց: Առ ի յագեցումն քաղցեալ հոգւոց, և ի փրկութիւն նեղսակիր մարմնոց: Ի կալանաւորութեան իւրում, ի ՌՃԴԷ թուականիս հայոց: Եւ տպեցեալ ի Հայրապետութեանն Աստուածախիջի սրբոյ և մեծի Աթոռոյն Էջմիածնի՝ Տեառն Յակոբայ սրբազնակատար Կաթողիկոսին ամենայն հայոց՝ չարահիւսողի գրքոյս: Եւ ի Պատրիարգութեանն սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Թէոդորոսի և Տեառն Յակոբայ ձգնազգեաց և Աստուածաբան Վարդապետացն: Յամի Տեառն, 1760. և հայոց՝ 1209: Մայիսի եօթն: Ի Տպարանի Աստուածատուրի:

Յէջն 2 «Առաջաբանութիւն Հեղինակի Գրոցս Առ ընթերցօղ Հարս և Եղբարս» յէջն 31. Ապա ցանկ Ա. և Բ. հատորներուն՝ 32–39. 39–40 աղօթքներ. 42 Երրորդութեան պատկեր մը՝ չորս տող ոտանաւորով. 43 էջէն կը սկսի գիրքը և կ՚աւարտի յէջն 340: Ապա Ցանկ Երկրորդ մասանց թէ Երրորդ գրոց՝ որ կոչի Գոհարան, յէջն 347: Յէջն 348 նոր ճակատ.

Գիրք երկրորդ Որ կոչի Գոհարան: Յորում գոն բանք գոհաբանականք և շնորհակալականք՝ մատուցանելիք աստուծոյ բարերարին յամենից անձանց. և մանաւանդ յազատեցելոց ի նեղութեանց: Շարադրեցեալք ի նոյնոյ Յակոբայ շնորհափայլ վարդապետէ և յարհւոյ Եպիսկոպոսէ շամախեցւոյ: Ի փառս աստուծոյ և ի յօգուտ անձանց հաւատացելոց. եւս առաւել ազատեցելոց ի նեղութեանց: Ի ՌՃԴԸ թուոյս մերում հայկականի: Եւ տպեցեալ ի Հայրապետութեանն Աստուածախիջի սրբոյ և մեծի Աթոռոյն Էջմիածնի Տեառն Յակոբայ սրբազնակատար կաթողիկոսին ամենայն հայոց չարահիւսողի գրքոյս: Եւ ի Պատրիարգութեանն սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Թէոդորոսի և Տեառն Յակոբայ ձգնազգեաց և Աստուածաբան Վարդապետացն: Զորս ընդ երկայնաւորս արասցէ տէր՝ ուղիղ վարդապետութեամբ ամէն:

Այս ճակատէն ու առ սուրբ Երրորդութիւն մաղթանքէ մը վերջ՝ յէջն 350 Երրորդութեան նոյն պատկերը ուրիշ չորս տող ոտանաւորով. և 351 էջէն կը սկսի գիրքը, և կ՚աւարտի յէջն 497. որմէ վերջ 498–504 կրկին Յիշատակարաններ կան. 504–512 որ է վերջին էջ՝ Նարեկացւոյ «Բարեբանեալ Աստուած երկնաւոր» աղօթքը «առ ի լցուցանել զպարապ երես թղթոյն»:

«Աղերս յիշատակի գծագրողացն Գրքոյս: Յիշեցէք ի տէր ի յաղօթս ձեր. ով ընթերցօղք հարք և եղբարքդ մեր: զՅակոբ վարդապետն հայրն մեր ըստ հոգւոյ. և բազմաշնորհափայլ պետն ազգիս մերոյ: Որ ի կալանի խաւարի տէրունական. արար զխորհուրդս ի հնար փրկութեան: Որով և զերծեալ հարկեցաւ առ յայն. զի և մատուսցէ ըզբանս գոհութեան: Առ յայս մեր գրոցս անուանք կոչեցան. հաց նեղաւորաց և գոհացարան: Այլ և աղաչեմք յիշել վերջարար. զերկուսին եղբարս՝ զնօտարս անկատար: Ըզերեմիաս և զղունկիանոս. ընդ նախագրիչս տառիս փրկարար: Զի զմեզ յիշելով և դուք յիշիջիք. յամենատեսանէն և զվարձս ընկալջիք: Որք մէն մի զրեցաք ի հեղինակէն ընդդէմ թշնամւոյն զօլ երկայրի զէն: Եւ ձեզ սիրելեացդ անտ մատուցաք. իւր աւանդ սիրոյ անշիջին յիշատակ: Իսկ թիւրն մեր յոր այսք աւարտեցան. հազար երկերիւր և մի եօթնական: Տրողին կենաց և յաջողութեան. փառք և գոհութիւնք այժմ և յաւիտեան»:

«Յիշատակարան Տպեցման. Օրհնութիւն, Գոհութիւն, և Պաշտօն՝ հանդերձ շնորհակալու երկրպագութեամբ ամենասուրբ Երրորդութեան և միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Որ խրով բարեյաջող և քաղցր կամեցողութեամբ՝ ետ մեզ տկարացս զկարողութիւն՝ ապել և ի կատարումն ածել՝ զնորոգ շարադրեցեալ Գիրքս Աղօթից ի նորապսակ Հայրապետէն մերմէ Տեառն Յակոբայ՝ Ծայրագոյն Քահանայապետի և Սրբազնակատար Կաթողիկոսի ամենայն Հայոց: Իբրու ընծայ նոր՝ հօտին իւրում հայկական. կոչեալ զանուն սորին՝ Հաց Նեղելոց և Գոհարան: Եւ այս վասն այնորիկ՝ զի մինչ անկանիցին ի նեղութիւնս հոգեկանս և մարմնականս՝ սակս յանցանաց իւրեք առ ի խրատել, սովաւ կարդասցեն առ աստուած յաղագս ազատելոյ ի նեղութենէ իւրեանց: ըստ մարգարէին թէ, զնեղութիւն և զանձկութիւն գտի, և զանուն տեառն կարդացի: Եւ մինչ ի ձեռն օգնականութեան աղօթիցն ազատիցին, գոհասցեն զնմանէ: ըստ այնմ թէ՝ գոհացօղք լինիջիք զաստուծոյ և զհօրէ նորա: Քանզի զի՞նչ թէ՝ ինքնին Սրբազան Հայրապետն ճանաչեալ փորձիւ զնպաստութիւն աղօթիցն ի նեղութեան իւրում, և զազատութիւն զանել՝ (որպէս թէ փորձառուացն օգնական լինելով) հարկեցաւ շարադրել զԳիրքս. առ ի լինել ի պատրաստի և առ այլ նեղեցեալ անձինս. զի սովաւ աղօթեսցեն առ աստուծոյ ընդ այլոց աղօթից ի յաւուրս նեղութեան իւրեանց:

Եւ արդ՝ զգովութենէ աղօթիցն համառօտ ասելով, եթէ բոլոր գիրք մի շարադրիցի, տակաւին նուազ է. և թէ որքան իրք մեծամեծք անհնարինք՝ թէ ի հին և թէ ի նորս՝ ի ձեռն աղօթից ի բարին առ եղերեալք են, այն է յայտնի ամենեցուն գիտութեան: Յաղագս որոյ՝ ցանկացեալ սմա բարեպաշտից Իշխանացս այսոցիկ՝ ծախիւք Աւետանի որդի Պետրոսի. արդիւնանենց ծախիւք Յարութիւնի որդի Վալէրի. և զուլէյխանց ծախիւք Պետրոսի որդի Աբրահամի՝ եառին տպագրել զատ. տալով գծագրի տպեցման ի յարդեանց իւրեանց. առ ի լինել յիշատակ հոգւոց իւրեանց և ծնողացն: և կամեցան զի ձրի բաշխեսցի սիրողաց գրքոյս:

Արդ՝ որք ընթեռնուլով մինչ ազատիցիք ի նեղութեանց ձերոց, փոխան որոյ յիշեսջիք և դուք առ յոյսն ընտիր Քրիստոս զվերոգրեցեալ Իշխանսն բարեպաշտօնս. առ ի ազատիլ և նոցա ի հոգևոր և ի մարմնաւոր նեղութենէ: որ զայս հաց հոգևոր՝ ձրի բաշխեալ՝ ձեզ ջամբեցին: Խնդրելով՝ ննջեցեալ ծնողացն և ազգայնոցն արժանանալ արքայութեանն աստուծոյ, և կենդանեացն՝ այսինքն որդւոցն և ընտանեացն մնալ առաքինական և երկար կենօք ի խոր խաղաղութեան. փրկիլով յերևելի և յաներևոյթ փորձանաց: Մաղթել եւս՝ առ ի լինել նոցա պատճառ և այլոց բարեաց յիշատակաց: Եւ աստուած բան բարին՝ զկամեցօղն բարւոյ՝ բարեօք բարգաւաճեալ զարգարեսցէ. թէ հոգեկանօք և թէ մարմնականօք. ամէն:

Յիշեսջիք և զերկուսին համապատիւ և համաջան՝ զաստուածասէր և զաստուածաբան Վարդապետսն՝ զհարազատ որդիսն սրբոյ Լուսաւորչահիմն Աթոռոյն հայկականի: այսինքն՝ զԱբրահամ Վարդապետն զվերատեսուչն Զմիւռնոյ. և զՍիմէոն Վարդապետն զծայրագոյն Նուիրակն Սրբոյ Գահին Էջմիածնի: որք զոլով հաւատարիմք վեհափառ Հայրապետին, նոցա էր յանձնեցեալ գիրքս. լինել տպագրութեանն հոգածուք:

Յիշեսջի՛ք և զապագրող ծառայս ձեր. և զաշխատաւորն գործարանիս՝ զտէր Սիմէօնի որդի՝ զտիրացու գրիգորն վանցի, և զկազզուանցի իկխանն և զծնօղսն նորին. և զայլ երախտաւորսն մեր։ Յորմէ և դուք լինիջիք յիշեցեալք ի բարին յաւուր յայտնութեան և ի միւսանգամ գալստեանն նորին ամէն»։

Գիրքը 8°, միջակագիր, ապխաակաթութ, ատագափակ երեսներով։ Հասարակ տպագրութիւն։ Այն ապօթագիրքը շատ տեղ ռամկաւորակերպ է, և տեղ տեղ ալ արձակ շարադրութիւն, բայց անհարթ ոճով։

ՅԱԿՈԲ ՃԱՀԱՆ ՋՐՊԵՏ. — Տես ՋՐՊԵՏԵԱՆ (Յ. Ճ.)։

ՅԱԿՈԲ ՃԱՄԻՐԵԱՆ. – Տես ՃԱՀԱՄԻՐԵԱՆՑ (Յ.)։

ՅԱԿՈԲ ՍՐՃԵՑԻ. — Տես *Գիրք և ճառ հոգեշահ*, Գ. Զ. Թ. Ժ. ԺԲ. ԺԳ. ԺԵ. ԺԶ. ԺԸ ճառերը։

Գարեգին Արարատ 1888, 271, «Սրբոյն Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսին՝ ասացեալ բան ներբողական Ս. Կարապետին և Մկրտչին Յովհաննու»։ – Տես եւ՝ Զարպ. «Մատենադարան», 572–575։ – Արճեցւոյ վարուց և գրութեանց մասին՝ *J. B. Abeloos*, De vita et scriptis s. J. Batnarum Sarugi, եւն, Լովէն 1867. – *P. Martin*, Un évêque-poète ou Jacques de Saroug, եւն, ի Revue des Sciences Eccl. IV. Sér., t. III 1876 Oct. – Nov. վեց տաղ, թրգմ. P. Zingerle, Պոնն 1867, ուրիշներ՝ ZDMG, 1858, p. 117–31. – 1859, 44–58. – 1860, 679–91. – 1861, 584–626, և նմաններ։

ՅԱԿՈԲ ՎԻԼԼՈՏ. — Տես ՅԱԿՈԲ ՅԻՍՈՒՍԵԱՆ։

Յակոբ Տաղասաց. – Յակոբ անունով Տաղասացներ մէկէ աւելի են. տես Կոստանեան, «Ժողովածու Բ», էջ 1–19. 19–22։ – Արարատ 1895, էջ 127։ – Բազմավէպ 1864, էջ 42, 44, 107։ – Երկրագունտ 1884, 424։ – Ճռաքաղ 1859, Գ, 77, եւն։ – Տես եւս Տաշեան, «Մայր Ցուցակ» էջ 1122 բ.։

ՅԱԿՈԲ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ ԱՊՏՈՒԼԼԱՀԵԱՆ. — «Պատմութիւն մեծի սովոյն Տիգրանակերտի յամի 1759», Բազմավէպ 1883, էջ 25–28։

Ծան.ը կ'ըսէ. «... Գրողն է Յակոբ Տիգրանակերցի (Տիարպէքիրցի) Ապտուլլահեան մականունաւ, և դպիր ըլլալն ալ (կը յայտնուի) շարադրութենէն. զոր ամենեւին անփոփոխ կը հրատարակենք։ Սա իր կրսեր եղբօրը (Յովհան) վաճառականութեան պատճառաւ ի Վենետիկ եկած և հաստատուած էր, ուր և վախճանեցաւ 84 տարուան, յամի 1836. նոյնպէս եղբայրն ալ 90 տարուան, յամի 1848. հոն վախճանած է և քոյրերնին Եղիսաբեթ (1832) կին Քոսվալիկեան Ստեփանոսի Ջուղայեցւոյ»։

Յակոբ փաշա Գազազեան, Ելեւմտից պաշտօնեայ Օսմանեան պետութեան (կենսագր.) Հանդէս Ամսօրեայ 1890, էջ 12։ – Մահուան առթիւ՝ Արեւ. Մամուլ 1891, էջ 424։

ՅԱԿՈԲԵԱՆՑ (Գաբրիէլ Վ.) — «Սեպուհ լերան սրբավայրերը». Արարատ 1901, էջ 362։ 1. Ինն սրբոց գերեզմանք ի Թորդան. 2. Սերովբէ և Բերովբէ. 3. Մեծ Լուսաւորիչ. 4. Աւազ վանք. 5. Կայծիփոր Ս. Յակոբ։

Յակոբեան (Կ. Էֆ.) — Տես Արարատ 1870, էջ 79։

ՅԱԿՈԲԵԱՆ (Մ. Մահտ.) *թարգմ.* — Տես ԳՈԳՈԼ։

ՅԱԿՈԲԵԱՆ (Յակոբ). — *Բանաստեղծութիւններ (Արտատպուած Մուրճ ամսագրից յաւելուածներով)*։ Թիֆլիս, տպ. Վր. Հրատ. Ընկ., 1899. 8°, 80 էջ։

Թարգմ. — Տես ԱՆԴՐԷԵՒ (Լ.) — ՆԵԳՐԻ (Ադա)։

Տես եւ՝ Մուրճ 1893, Թ. 10, 11. – 1894, Թ. 1, 3, 4–10. – 1896, Թ. 12։

ՅԱԿՈԲԵԱՆ (Յ. Վ.) — «Հայկական ամիսները». Բանասէր 1900, էջ 33. – «Քեսարիա կամ մոռցուած կայսրութեան մը պատմութիւնը», էջ 181։

ՅԱԿՈԲԵԱՆՑ (Յակոբ քահ.) — «Ուղեւորութիւնք». Արարատ 1885, էջ 28, 73։

ՅԱԿՈԲԵԱՆ (Յովհաննէս). — Տես ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈԼՈՎ ՅԱԿՈԲԵԱՆ։

ՅԱԿՈԲԵԱՆ (Յովհան). — *The relations of the Armenians and the Francs during the reign of Léon II*, 1186–1219. « Armenia » 1905, Febr. and March. (39 p.).

Հմմտ. Արմենիա 1905, Թ. 45։ – Քննադ. Շիրակ (Թէքէեան) 1905, 461։

ՅԱԿՈԲԵԱՆ (Յովսէփ և Անտոն). — *Տարերք մարդակազմութեան, ամէն անձանց կարեւոր։ Աշխատասիրութեամբ երկուց հարազատաց Յովսէփայ և Անտոնի Յ.*։ Կ. Պոլիս, տպագր. Յ. Գավաֆեան, 1890. 8°, 102 էջ։

Քննադ. Հանդէս Ամսօրեայ 1890, Թ. 11։

ՅԱԿՈԲԵԱՆ (Պ. Կ.) *թարգմ.* — Տես ԻՒԹԻՒՃԵԱՆ, «Մատենադարան», Հատ. Ե.։

ՅԱԿՈԲԵԱՆ (Վ. Յ.) — *Բառարան Անգղիերէն ի Հայ, հետեւողութեամբ Ուէպըսդրի և Ուսդըրի հոյակապ բառագրոց. առաւել քան 45000 բառ, ոճ, և այլն, և այլն, հայատառ հնչմամբ*։ Կ. Պոլիս, 1894?

Քննադ. Արեւելք 1893, Թ. 2895. – 1895, Թ. 3309։ – Հայք 1895, էջ 184։

ՅԱԿՈԲԵԱՆ (Վահան Վ.) — *Նոր բուսագիտութիւն. աշխատասիրեաց Վ. Վարդապետ Յ. յառաքելական Ուխտէ Ս. Յակոբեանց*։ Հատոր Ա. Երուսաղէմ, ի տպ. ի Սրբոց Յակոբեանց, 1880. 8°, 179 էջ։

«Այս երկը բաժնուած է 13 հատորներու, որոնց առաջինը այս անգամ հրատարակուած է...». Մասիս 1880, Թ. 2606։

= Բ տիպ, անդ, 1884. 8°, 176 էջ։

— Հատոր Բ. անդ, 1881. 8°, 172 էջ։

ՅԱԿՈԲԵԱՆ (Տքր. Ս. Յ.) — *Նախնական գիտելիք առողջապահութեան, յատկապէս ժողովրդեան համար գրուած. տպագրեալ ծախիւք Կեդրոնական Յանձնաժողովոյ Սովելոց*։ Կ. Պոլիս, տպագր. Զարդարեան, 1882. 8°, 68 էջ։

Սոյն երկը տաճկերէն ալ թարգմանուած է ի Կ. Պոլիս, 1891։

— *Հիւանդին բարեկամը. առաջնորդ հիւանդաց դարմանման*։ Կ. Պոլիս, տպ. Գ. Պաղտատլեան (Արամեան), 1885. 8°, ԺԿ + 416 էջ։

«Այն գործոյն մէջ հեղինակն ամփոփած է այն ամէն ծանօթութիւնները, հրահանգները ու պատուէրները, որք հարկաւոր են հիւանդաց պէտք եղած ընտանեկան խնամքները տալու, բժշկական զանազան դեղօրայքն պատշաճապէս գործածելու և մանաւանդ յանկարծական պատահարաց միջոցին հարկ եղած անմիջական դարմանները տանելու...». Մասիս 1885, թ. 3781։

Քննադ. Արեւելք 1885, թ. 466։

Տես Երկրագունտ 1883, էջ 60, 76, 321. – 1884, 205, 263, 419, 338, 375։

«Յակոբի վախճանի կարգը» (Մշեցոց բարբառով). Բիւրակն 1899, էջ 329։

Յաղագս բարեխօսութեան սրբոց. – Տես ՍԱՀԱԿԵԱՆ (Հ. Գ. Ձ.)։

— *բնութեան մարդոյ.* — Տես ՆԵՄԵՍԻՈՍ։

— *երից ուխտից.* — Տես ՌՈՏՐԻԿՎԷՑ։

— *ծանօթութեան Աստուծոյ.* — Տես ՊՈՍԻԷ։

— *համակերպութեան ընդ կամացն Աստուծոյ.* — Տես ՌՈՏՐԻԿՎԷՑ։

— *համաձայնեցման Քրիստոսի.* – Տես ԹՈՎՄԱՍ ԳԵՄԲԱՑԻ։

— *մատուցման պսակի (Տեառն).* — Տես ՄԵԼՔՈՒՄԵԱՆ (Թ.)։

— *մարդկային խրատուց և պարտուց.* — Տես ԹԷՈԴՈՐԵԱՆ (Ս. Վ.) — ՓԷԼԼԻԲՈՑ (Ս.)։

— *նմանող լինելոյ Քրիստոսի.* – Տես ԹՈՎՄԱՍ ԳԵՄԲԱՑԻ։

— *ուսումնարանին Հայոց որ ի Մոսկով, եւն.* — Տես Լազարեան ճեմարան։

— *պատճառութեան ծխից եկեղեցւոյն Յունաց և այլոց արեւելեայց.* — Տես ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԴ.։

— *պատշաճից.* — Տես ԿԻԿԵՐՈՆ (Մ. Տ.)։

— *վարդապետական սահմանի Անարատ Յղութեան, եւն.* — Տես ՊԻՈՍ Թ.։

— *փորձառական Հոգեբանութեան.* — Տես ՆԱԶԱՐԵԱՆՑ (Ս.)։

— *քաղաքին Աստուծոյ.* — Տես ԱՒԳՈՍՏԻՆՈՍ (Ս.)։

Յաղթական սիրոյ երգը. — Տես ՏՈՒՐԳԵՆԵՒ (Ի. Ս.)։

Յաճախապատում. — Տես ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ։

Յայսմաւուրք հայոց. Ա. տիպ։ Կ. Պոլիս, յամի 1706.

Ճառք Սրբոց Վկայիցն ճշմարտին Աստուծոյ, Ազգաց և ազանց՝ համօրէն քրիստոնէից։ Որոց բազումք կատարեցան ի քրիստոս. և գրեցին զանուանս նոցա ի գիրս՝ որ կոչի Յայսմաւուր. ըստ պատշաճ աւուր խրում կարգի ընթեռնուն։ Զմատեանս ներ պարունակող չարչարութեամբ նախնեացն մերոց՝ և ճշմարտասիրաց թարգմանչաց։ Եւ վեհափառ Հայրապետութեան համօրէն Հայկազնեաց՝ Տեառն սրբազան կաթողիկոսի. ի Քրիստոսէ հիմնեցեալ՝ և տիեզերական սրբոյ Աթոռոյն Էջմիածնի։ Եւ առաջնորդութեամբ սրբոյ քաղաքին Յերուսաղէմայ. և Կոստանդինուպօլսի Պատրիարգ՝ տէր Աւետիք արհի Եպիսկոպոսին։ Եւ ի թուականի փրկչին, ՌՉԶ (= 1706). *իսկ Հայոց, ՌՃԾԵ. Եւ ի ամսեանն Յուլիսի մեռասանի՝ յառաջին, և յետինն ի միում ամսեանն տպեցաւ, ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլիս։ Ներ տպարանումն գրիգորի դպրի. որդոյ մկրտչի։*

Սխնազարդ և արձանանկար այն ճակատին շալակը կայ «Ցանկք Յայսմաւուրաց Գրոց», ցէջն 8, և ապա կրկին փայտափոր պատկերներ դէմ դէմի Ս. Գրիգոր Լուսաւորչի, որոնց մին իր չարչարանքներուն է, միւսը հայրապետական հանդիսաւոր զգեստներով. և յէջն 11, որ է երկրորդ պատկերին թիկունքը, ուրիշ փայտափոր պատկեր մը Ս. Էջմիածնի, և զինուցէն՝ նոր թուահամարով կը սկսի Յայսմաւուրքը, Նաւասարդի Ա., և կ'աւարտի յէջն ջլբ (= 932). ջլգ–ջլէ Յիշատակարան, ուր ի վերջոյ երկու փայտափոր պատկերներ կան՝ Սուրբ Սարգսի և Ս. Գէորգի։

Յիշատակարանին գաւառական մասը զանց կ'ընենք արտատպելէ, որուն խորագիրն է.

«Եւ ես այսպէս խոստովանիմ և դաւանիմ, որպէս և սուրբ հարքն մեր աւանդեցին զուղիղ դաւանութիւնս եկեղեցւոյ հայաստանեայց։ Որոյ եղաք զյիշատակարան սուրբ մատենիս։ փառք... Քանզի ընական մօտոյ խնոց անհնարինէր. մինչև ցայս վայր՝ եթէ ոչ յառաջնորդէր զեկավարն ճարտար՝ և ընածին բարերարութեամբն հայեաց ի տգնութիւն՝ և ի հառաչանս եղկելոյս, որ վաղեմի ցանկացեալ եսայր խորհուրդս իմ, վասն սուրբ մատենիս՝ անթիւ վկայիցն որդւոյն աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, արտահանել տպագրութեամբ։ Սակս յոլով գիւղ և գաւառս։ Անտղստու. և ի վանս՝ ոչ գոյր՝ զի ընթեռնուին յերեկոյ՝ և կամ յառաւօտեան ըստ պատշաճաւոր տեղւոյն ի ժամն։ Գոյ և տեղիք՝ միայն լուեալն յանուանէ զմատեանս այսմաւուր, բայց ոչ են տեսեալ. վասն որոյ՝ լի են կարօտեալք ի սմա։ Եւ իմ վասնթար՝ և անպիտան եղկելի գրիգոր ծառայ ծառայից աստուծոյ՝ առանձնացեալ յինքեան՝ խոյ անձին, եդի զմտաւ իմ բոլորովիմբ ի մէջ սննկիս խորհրդեամբ՝ յաւանելով առ տուիչն ամենայն բարեաց, դրուածոց՝ բարերարին աստուած։ Եւ իմ ներ մըտածման բանիս՝ սկիզբն եդի արհեստ կաղապարաց տպարանիս։ Ոչ ումեմնէ տեսանելովիմ. և ոչ ի հասմ զնալով. և ոչ ի յայլմէ արհեստաւորաց տեսեալ՝ և կամ ի նմանէ ուսեալ։ Վասն որոյ՝ իբրև զմըթացեալ ամզ ընկալայ զիս՝ առ ուղ ապրտամութեան, և տարակուսանք վհատեցայ։ Մինչ այց արար անմահին զօրութեամբն. որ առէ ի սուրբ փրկական աւետարանին խրում։ Եւ որ հայցէ գըտանէ. և որ բախէ՝ բացցի. և որ խնդրէ՝ տացի նմա։ Գործեալ ի մէջ վհատզոյն ներ մտածական կրթութեամբ ընկալելով զօրակցութիւն իւրայն. եկն օրհնեալ հոգի քեօմիրճի զատէ հեհոսր և փիլիսոփայ իմաստասէրն երեմիա չէլէպին։ Զի և նա յառաջագոյն բազում ջանս՝ և աշխատանս կրեցեալէր վասն գործարանիս՝ և յառաջ ածեալ։ Եւ տպագրեալ վասն փորձարանաց զրոյն՝ փոքրիկ զրկուքս երկուս, այս ինչ՝ զվկայաբանութիւն իւրոյ յարմարեալ ի սուրբ անօրինականացն քրիստոսի։ Եւ միասն տուս գեղեցիկս։ Սակայն զգիր նորին՝ էր նուազ և նիհար։ Որոյ կաղապարացն տեսեալ վեր ծանուցի. և նոր ինն սկիզբն եդի։ Զկաղապարան հարդարեալ նկարեցի զգիրս. այբէն մինչ ի ֆէն՝ հայրն կաղապարան՝ և գիր ի գլուխն, որ գրատպոլի ի վերայ պղնծի՝ և լինի գեղեցիկ կաղապար՝ մինչ այբէն ֆէն, զխաղրումը, որ նոյն պղինձն առի մայր։ Եւ ի սմանէ ցուլացմամբ ծնցի

որդիք բազումք արձձեալ սնոտադոյնս։ Որով չարաբաղդի գիրք՝ զինչ և կամիս, և հանգեա ի Ներքոյ թմբրագրեալ տպարանի՝ տպել ի միում աւուր որ քան որ կամք մեր ողորմութեամբ ամենակարողին Աստուծոյ։ Յորժամ զայս ամենայն կարգադրելս բազում աշխատանօք չինեալ հաստատեաց ձեռք իմ, և զոր հանապազ փոյթ և զգուշութիւն մատուցանեմ առ բարերարն Աստուած։ Եւ ի սամանէ ողւոյն գաւառացելոյ՝ պատահեաց ինձ երկուց ամանց բազում վխտա՝ զոր ոչ գրեցից զանուանէ նոցին. զի մի յամօթ կրեսցեն ի լսողաց ի սադէն. և կամ վասն անուն ընկալցին ի մէջ ազգացս. զի յաղագս բազում աղահութեանց իւրեանց՝ յափշտակեալ գարանագործութեամբ ի ձեռաց իմոց զամենայն տպագրեանսիմ ծախկապրով և այլն ամենայն, և ոչ մի ինչ մասն բնաւ ոչ ընկալայ։ Բայց զոր ինչ արարին ընդ իս՝ դատ արասցէ Աստուած ի մէջիմ. և ի մէջ նոցա։ Վասն որոյ և իմ մնացեալ խեղճ և ողորմելի՝ զի հատաւ սէրիմ. և մնացի անյոյս՝ և յամենայն ի ընչից և դրամից։ Եւ դարձեալ կրկին և ես յուսադրեցի զիս առ Աստուած՝ յանձնիմ անդրէն ի նոյն դառնալ։ Ատանօր սկիզբն արարի՝ նորադրել արհեստ տպարանիս, որպէս և ի վերոյ գրեցաւն ըստ տեառն բանի։ Եթէ ոք հայցէ գտանէ. և որ բախէ բացցի. և որ խնդրէ տացի նմա։ Ահա տէր յիսուս բան հօր. և փառակից սուրբ հոգւոյդ։ Հայցեցի ի քէն և գտի։ Բախեցի առ քեզ՝ և դու եկեալ բացեր զդուռն և մտի։ Խնդրեցի ի բարերարութենէդ՝ և ոչ ունայն արձակեցեր զիս։ Այլ և ետուր ինձ որպէս և կամս իմ, արարեր։ Նոյնպէս և հաստատեցեր կրկնապատիկ տպարանս քո առաւել քան զյափշտակեալն ի ձեռաց ստամբակելոյս։ Թէպէտ երկոտասան ամ աշխատեալիմ, զի չարացեալ ի չքաւորութենէ զոյից ըստ մխոյից մարմնոյ։ Եւ եղեւ որպէս խեցի. և կամ ճնճղուկ միայն ի տանիս՝ որդովք իմովք։ Տեսցեն ամենայն ոք ի զիտողաց զէութիւն բանին վասն անկարութեան իմ։ Զի անհնարին գործ է առանց դրամի յառաջացուցանել զայս։ Քանզի նախատիպն մեր, և շնորհազարդ՝ բարուն և երջանիկ լուսաւորեալ հոգի սական վարդապետն, գնացեալ ի հռոմ, առեալ ի նոցանէ զարհեստ տպարանիս։ Եւ բազում վիշտս և նեղութիւնս. ի բանս, և ի ստասպանս կրեալ ի մերայնոց ախթարմա հերձուածողացն. մինչ զի հալով աւզանաց հարեալ՝ հալի կարաց զերծանել ի ձեռաց այլասեռ քրիստոնէից, առեւ տպարանս մահ անցուցեալ զանձն իւր։ Եւ հալով զանձս տալով սմա. լուսաւորեաց զաշխարհս հայաստանեայց աստուածաշունչ գրով։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Լուսաւորք տանս հայաստանեաց հայ կաղուն սեռիցն՝ օրհնեալ զաւակ մօրս լուսոյ սուրբ էջմիածնի, և որդիք փոխանորդի զահոյից՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։ Եւ իմ հոգևոր հայրք և եղբայրք, զի անհնարին ի մարդկանէ՝ և հնարաւորէ առաջի Աստուծոյ ամենայն բանք. և որ կամի՝ ում տացէ նմա. և զխորացուցէ զգործս արմաքերելն։ Վասն զի ամենայն ժամու բարեխօս գոջէի զսուրբ Հայրն մեր Գրիգորիոս Լուսաւորիչն։ Եւ զքաջամարտիկ զօրականն Քրիստոսի զմեծ վկայն զեւորքիոս։ Եւ զսուրբ ոհան ոսկի բերան ապաշխարութեան վարդապետն մեր. և ամենայն սուրբք զասս մարտիրոսացն բարեխօս և երաշխաւոր լեալ՝ առ ան մահնելին եղականացս, և ան տեսանելին ի հրեշտակացն. թեւաքօղեալ՝ և ծածկեալ զերեսօքն զսէրովբէսն և զքէրովբէսն՝ և ի անհեղ փառացն երրորդութեան, և միապետ աստուածութեանն. որոյ յանդիման՝ և մերձ յաթոռոյ որդոյ իւրում կա ամէն օրհնեալ Թագուհին և երանուհու մարիամու։ Եւ նա յիշեսցէ որդւոյ իւրում զխնդրուածս սիրելեաց իւրոց. որով կատարումն եհաս գործս ի ձեռաց եղկելի անարժան գրիգոր դպրիս։ Եւ ամենայն զանազան ծաղագրերով փառքերով. և գեղեցիկ կանոներով. և մեծամեծ խորանիւք փառաւոր զարդարանօք զարդարեցի. և պատկերս ըստ իւրոյ պխոյից՝ նկարեալ իմով և քանդակեալ փորուածով։ Երբեմն և երբեմն նուաղէր սիրտիմ. և ցնդէր միտքիմ. նկղանայր սիրտիմ. ցամաքէր զօրութիւն իմ։ Եւ ըստ աչացս երբեմն նուաղիր՝ և յուշաղանայր ի բարակս հայեցողութեանցս փորուածոյ պատկերաց։ Եւ երբեմն լեալիմ իբր զհողեւորի՝ զի նեղացուցանէին զիս ի տան տեղի՝ ամանք զնեհիկ. և մինչ ողորմութիւնն Աստուծոյ այց արար զամենայնի՝ եհաս կատարումն տպարանիս նեթականգնեալ վերջ տպագրատունս ողորմութեամբն Աստուծոյ։ Յետ որոյ զիզ ցանկութեան սրտի իմոյ՝ որոյ անուանն սկիզբն առեալ հաստատեցի զկազապար տպարանիս։ Զնոյն ընկալեալ ամեն բարերարոյ անուանեալ ատաֆ մահտեսի զաղար՝ ընկերացեալ իմ նորին. ընկերօքն իւրովք՝ որք են ի քաղաքէն ակնա և ի գիւղէն եղուշեղու և կարուչլացի։ Որ և իսկ սա խնդրեաց տպագրել յայսմաւուր մատեանս, որպէս և իմ զոյգ փափակեալ եաամեծար սրտիս՝ զնոյն տպել յայսմաւուր մատեանս. ընդ որոյ անուանն աշխատեցա երկոտասան ամ։ Վասն որոյ երեւեցոյց տէր զաշխատանս իմ, և ոչ արար ունայն։ Արդ և այս հոգեւոր եղբայրք իմ ընկերացեալ նոր իմն ընդ յիս՝ սաէպ սաէպ խնդրէին և ի հոգս տարեալ վասն թխոյ՝ և այլ ինչ պխոյից. և ի դարմանս բանճկացն. և մշակացն՝ և զամենայն յանձն առեալ նոցա։ Եւ իմ միայն արհեստաւորութեամբ ըստ միջի սեաւ զրոյն յամենայն զարդարանօք. խառնեալ միմեամբք ընկեալ ողորմութեամբն Աստուծոյ տպագրել սուրբ մատեանս վկայից ճշմարտին Աստուծոյ։ Անհաս և անպատմելի զօրութեանց՝ հաճեցաւ հեղուլ ի վերա իմ, զխնամս մարդասիրութեան իւրոյ. և կալեալ ի ձեռանէ իմմէ՝ և անցոյց ընդ ատապարս դժուարութեանց մատենիս՝ և հասոյց ի նաւահանգիստն իմ ցանկալի. և ընդհանուր զուարճութիւն ազգիս հայկազնոյ։ Առ որ ժամանեալն մերով կարողութեամբ, և կամ յաւով նպաստութեան բնականի իմոյ հանճարոյս անհնարին էր։ Քանզի երկարացիզ տարածումն մեծի մատենիս՝ նուաստացեալս տհաբեկէր։ Եւ բազմահայլ ծախս տպագրատանս անձն իմ տակնապէր։ Անհազութիւն գործավարացն լեարդի մաշէր. և ան ըղձուշութիւն նոցին սիրտիմ տառապիր։ Յաճախութիւն փորձիցն զիս լեալ լուծանէր։ Եւ այսպէս ցաւօք և վշտալից խանձմամբ՝ և ան պատմելի նեղութեամբ կոչկոճեալ պարապէր անձնանձիր ի հոգս սրբագրութեան՝ միով փորձիւ՝ կամ երկիւք՝ ոչ բաւականացեալ։ Այլ երիւք և չորիւք՝ դեռ ես զտանիր սղալ ինչ։ Ով սիրելի հոգեւոր հայրք և եղբայրքիմ. խնդրեմ ի ձէնջ՝ լինել անմեղադիր տկարութեանսիմ, եթէ գտանիցի սրուք սղալն քերեալ ուղղեսցես՝ զի ան սղալ միայն Աստուած է՝ և դու վարձատրեսջիս ի քրիստոսէ։ Արդ մինչեւ այց արար մեզ արեգակն ի բարձանց. և ետ զնըպաստութիւն ի ձեռն շնորհաց որդւոյն իւրոյ միածնի՝ ի ըյս ածել զգեղեցկատիպ, և զփափկատար մատեանս եկեղեցւոյ՝ զզարդափարեցեալս ի յնախր օրինակէ վաղեմից թագաւորացն հայոց։ Վասն որոյ ադէրսիմ միահաղոյն՝ զընաւ ուխտս եկեղեցւոյ։ Զեպիսկոպոսունս. և զվարդապետս և ըղքահանայս. և զկրօնաւորս։ Զսարկաւագունս։ Եւ զժողովրդականս։ Ո՛րք ըստանայք զսա ի վայելումն անձանց ձերոց. ներել իմում տկարութեան, և մի՛ իբրեւ զթեթեւ ինչ իրակութիւն արհամարհելով անգոսնել զեւամեա երկոտն բազմ աշխա-

տութեանց և զհոսումն քրտանց՝ զոր ոչ ոք բաւականապէս իմանալ կարէ, եթէ ոչ ինքնին փորձ առեալ նեղ հմտանայցէ։ Զի ես ըստ կարի խոում ջանացի ի փառս, և ի պատիւ ամենասուրբ երրորդութեանն. և ի պարծանս ընդ հանուր ազգին մերոյ յօրինել զամ համայնիւք իւօք. պիտանաւորօք. և զարդարել գեղեցկա յարմար փնջիւք. և պատկերօք և որ քան մարթէր տկարի իմացողութեան իմոյ զգուշացայ ի սխալանացս։ Ուստի հեզութեամբ մաղթեմ աղերսանօք՝ յիշել յաղօթս ձեր սրբանուէրս, զընկերակցեալքնիմ էպուչեխցի մահտեսի պազարօսն, և իւր եղբայր տիրատուրն. և զծնօղ սոցին՝ զմահտեսի կարապետն. և զմայրն մարիամն։ Եւ կարուշլացի մահտեսի ղուքարիայն. և զծնօղս սմին։ Եւ մահտեսի ղուկասն՝ և զհանգուցեալ ծնօղքն սմին։ Եւ ալքսանոսն՝ և իւր ծնօղսն։ Եւ երաշխաւոր պայլին, և զսմին հանգուցեալ ծնօղացն մահտեսի պուրթէլին և զմայր նմին մահտեսի հրաքրին։ Եւ պարոն յակոբն՝ և զծնօղ սմին զոր հանգուցեալ են։ Այլ և զօրացեալ շնորհիւ տեառն. և զնախախնամեցեալ պահպանութեամբ հոգոյն սրբոյ՝ զնորաքողբոջ՝ և զգեղաքոյս որդիս նոցին. և զրնաւս հաւատարիմս լուսաւորչածին. և քրիստոսադաւան. և զմրաման ընկերս առ հասարակ սիրելեօք՝ և բարեկամօք ի քրիստոս յանձն առնել ամէն։ Դարձեալ յուսկ յետոյ և զիս յետնեալ ծառայ ձեր՝ վաթար՝ և նիհար, եղկելի գրիգոր դպիր տպագրող սմին սուրբ մատենիս։ Մեծակական ձայնիւ զոչեմ առ ձերս աստուածասիրութեանցդ՝ որ ասէ՝ Ողորմեցարուք ողորմեցարուք, միով հայր մեղայիւ յիշել զանարժանս՝ առ ձերոյ մաքրափայլ յաղօթս՝ յորժամ ընթեռնուք սուրբ մատեանս, և գյիշատակարանս այս։ Դարձեալ յիշեցէք զհանգուցեալ առ քրիստոս զհայրն մկրտիչն. և զմայրնիմ թուրվանտէն, և զպապնիմ զաբրահամն և զեսայեայն և զմամն մարթան։ Եւ զեղբայրքնիմ զքրիստոսատուրն և զմելքայէլն. և զեսային. և զի քոյրքնիմ խանըմըն. և այլքն որ հանգուցեալեն առ քրիստոս. և եդեալեն ի չիփխս հարցն մերոց ի քաղաքն մարզուան՝ որ և իսկ ծնեալ և սնեալ ի նոյն. և յետոյ յարեցեալիմ ի կոստանդնու պօլիս. ի թվականութեանս մերոյ. ՌՃ. ԻԳ.ումն։ Եւ դարձեալ աղաչեմ յիշել նորաքոյս՝ և մանկաբարոյ զորդեակնիմ ըստ մարմնոյ զծառայն ձեր՝ ներսէսն՝ որ և սա՛ բազում աշխատեալ սրբագրութեանն. և զամենայն ազգականսիմ հանդերձ ննջեցելովք ամէն։ Դարձեալ յիշեցէք ըստ սմին թափագարկ տպարանիս իմոյ աշխատաւոր սիրապետն էպուչեցցի և սմին ծնօղացն հանգուցեալ վարդերեսին. Եւ զմրազարկ սեաւ ի վերա՛ տպարանիս՝ զմշակն իմ զեսայիան աղուաշն։ Եւ աճամ միրզան ընդ սմին։ Եւ չարաքարդողքս այս զպօղոսն և զմահտեսի խաչատուրն։ Եւ ես յիշեալ լիջի զբարերարո՛յ իշխանն սահապիար՝ մահտեսի խաչուկն. որ և իսկ նա՛ շնորհեաց ինձ յիշատակ ըրախայն թափազարկի ուժ և ճիգեանս յոյժ գեղեցիկ՝ որով տպագրէ զամենայն գի՛րս որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. հանդերձ հարքն իւրով ամէն։ Ով սիրելիք իմ հայրք և եղբայրք՝ բազում անգամ, սա՛էպ սաէպ աղերսեմ յիշել յաղօթս ձեր հոգենուագս ընդդէմ կենարար սուրբ պատարագին մարմնոյ և արեան որդոյն աստուծոյ ընդ որս և դուք յիշեալ լիջիք առաջի անմահ գառին աստուծոյ՝ և ի մէջ համայնից վկայիցն տեառն Յիսուսի Քրիստոսի։ Ուք են գրեալ ի չարս յայսմաւուրս սուրբ մատենիս՝ Այժ(մ) և ի միասնգամ գալստեան նորին ամէն։

Նուաստ ծառայ ծառայից աստուծոյ, գրիգոր դպիր մէրճան զատէ՝ մարզուանցի տպագրող սուրբ մատենիս։

Աւարտեցաւ սուրբ մատեանս ի թվին հայոց· ՌՃՇԵ։ Եւ յուլիսի· ԺԸ։ Եւ ի թվին փրկչին. ՌԷՃԶ· ի մայրաքաղաքն կոստանդինու պօլիս։ Եւ ի թագաւորութեանն ինքնակալ և խրոխտ մերոյ Սուլթան Ահմէտին՝ որոյ երկայն աւուրս արասցէ տէր. զի քաղցր է թագաւորն՝ եւս քաղցրասցի սիրտ նորին ի վերայ քրիստոնէիցս. զոր և աղաչեմք առ բարերարն աստուած, որ և զթշնամիս իւրոյ թագաւորութեան՝ ընդդէմ խրոխտ աճարկու տեսլեանն՝ եղիցին նկունքք՝ և հաշտեալք սէր և միաբանութիւն. զի բարիոք պահեսցեն զքաղաքավարութիւն ժողովրդեանս անդորրութեամբ, և ան ա՛հ ի յամէքէ. Ամէն»։

Այս տպագրութեան մէջ կաթողիկոսի անունը կը պակսի, զի տպագրուած է Ստեփաննոս հակաթոռ կաթողիկոսի օրով՝ Նահապետ Կաթողիկոսի դէմ։

Գիրքը միահատուած կրկնաթերթ մեծ. երկիջեան, խոշորագիր. թանձր սեւաթուղթ, զարդափակ էջերով. հատարակ տպագրութիւն։ Տպագրական վրիպակները շատ են, թող տառասխալան յաւելուածները. և դարձեալ իւրաքանչիւր հատուածի մէջ տպագրողը դրած է իր անունը և քանի մը տող ալ պարապ ձգած՝ ուր ստացողն իր անունը գրէ։ Լաւագոյն պիտի ըլլար՝ եթէ՝ ինչպէս կ'ըսէ Յիշատակարանին մէջ՝ իր ունեցած ձեռագիր օրինակին ձեւք դպցուցած չըլլար, զոր կը կոչէ հնոց թագաւորացն Հայոց։

= Բ տիպ, նոյն տպագրիչէն, ի Կ. Պոլիս, 1730։

Ճակատին զարդերը նոյն են, բայց ինքը ճակատը տարբեր է առաջինէն.

Գիրք որ կոչի Այսմաւուրք։ Որ պարունակէ յինքեան զճառս վարուց սրբոց, և զնահատակութիւնս երանելի մարտիրոսացն, և վկայիցն Քրիստոսի աստուծոյ մերոյ։ Զոր կարգեցին նախնի հարքն մեր՝ ընթեռնուլ յամենում աւուր ի մէջ սուրբ եկեղեցւոյս հայաստանեայց ըստ պատշաճի աւուրց իւրաքանչիւր ամսոյ ի բոլոր տարին. ի յիշատակ սրբոցն և ի յօգուտ՝ վարուց ջերմեռանդ լսողացն. և ամենայնն ի փառս աստուծոյ։ Սկսեցեալ ի տպագրիլ ի Հայրապետութեան սրբոյն Էջմիածնի լուսակառոյց աթոռոյն տեառն Աբրահամու սրբազան Կաթողիկոսի ամենայն հայոց։ Եւ ի պատրիարգութեան սըրբոյն Երուսաղէմի և կոստանդնուպօլսի, տեառն Գրիգորի և Յօհաննու Աստուածաբան վարդապետաց. աշակերտաց Վարդանայ Տաճարաշէն սուրբ վարդապետի բաղիշեցւոյ։ Ի թըւին Հայոց. ՌՃՀԹ. Մարտի Բ։ Ի տպարանի գրիգոր դպրի մարսըւանեցւոյ։

Ճակատին թիկունքը և յաջորդ երկու էջերը նոյն փայտափոր պատկերները կան միեւնոյն կարգով. ապա յէջն և կը սկսի Յայսմաւուրքը և կը հասնի յէջն էճը (= 708), և ապա յէջմն էճթ–էճժը Յիշատակարաններ. յէջմն էճժգ–էճիգ Ցանկ, ուր վերջին էջին պարապ մնացը լեցնելու համար դրուած են քանի մը խրատական խօսքեր մանկանց՝ գեղջուկ բառի։

« Յիշատակարան Պատմաբանական. փառք Ամենասուրբ Երրորդութեան, Հօր և որդւոյ՝ և հոգւոյն սրբոյ. պաշտեցելոյն յամենայն սրբոց. և կատարողին զհայցուածս նոցա. որ արարն զնոսա երանելիս միջնորդութեամբ յօժարական նոցին քրտնաջան և արիանահեղ նահատակութեան. որ և զմեզս զօրացոյց նահանջեալ զակարութիւն մարմնոյ տալով կարողութիւն ամենայն սրբոց իւրոց բարեխօսութեամբն հասանել յաւարտ նոցին բաղ-

ձայն մրցականութեան նմա միայնոյ աստուծոյն և պաշտելի սուրբ Երրորդութեանն. Հօր ծնողի. և Որդւոյն ի Հօրէ ծնելելոյ. և Հոգւոյն սրբոյ ի Հայրական խնամութեամբն և երկրպագութիւն յամենայն եղականաց յաւիտեանս յաւիտենից ամէն։

Որովհետև գիրքս որոց յիշատակաց է բացայայտիչ. և անցելոց ներկայացուցիչ. յաղագս որոյ ոչ կամեցայ զանց առնել զմերում ժամանակաւ պատահեալ զյիշեցման արժանաւոր եղելի իրս զայս կարճ ի կարճոյ առ այս գիրք յօդել։ Քանզի յորժամ ազգս մեր ի մէջ խղճութեան տապէր՝ և յերուսաղէմ աթոռս մեր սեպհական սուրբն յակոբ ի ներքոյ բազմակուսակ պարտուց հեծէր մինչ զի պարտատեարք նոյնոյ աթոռոյն զհրաման հանեալ յարքունուստ առ ի վաճառել զբովանդակ վիճակեցեալ տեղիքս մեր սրբազանս՝ և զսուրբ աթոռն և խրախճանքիւր առնուլ զպարտսն իւրեանց։ Բայց որովհետև գթածն աստուած ոչ իսպառ մոռանայ զաղքատս՝ այլ երբեմն ներեալ զանցուածս մեղուցելոց այցելութեամբ այց առնէ. ամին իրի և պատահեցաւ ի մերում ժամանակի. զոր յարոյց աստուած զերկուսին լծակքս տապանակի աւետարանին քրիստոսի. զբաղիշեցի Վարդան վարդապետի աշակերտքն՝ զտէր Գրիգոր և զտէր Յոհաննէս բանին կենաց պաշտօնեայքս. և Աստուածաբան վարդապետքս. որք ի քաղաքս առ ի ժողովել զորդիսն ողորմութեամբ սակս սրբոյ Կարապետի աթոռոյն որ ի տարօն. ուստի տեսեալ ազգ խոհեմաբարոյք ազգիս՝ զարանցս զգօնութիւն. ժողովեալ խորհրդակցութեամբ համայնք գլխաւոր ի միասին՝ յակամայ կամաւ զյովհաննէս վարդապետն երուսաղէմայ վէքիլ կարգեալ. զկնի բազում քարոզութեան. յորդորման զամենեսեան. ժողովեալ զբազում արդիւնս՝ բազում արդեամբք յղեցաւ յերուսաղէմ։ Եւ տեսեալ պարտատիրաց զա՛մ. որ ջանայ ոգւով չափ զօգուտ աթոռոյն սրբոյ և մանաւանդ միաբանիցն, ալերանն զատ թէ էկ՝ և պարտույն երաշխաւոր լե՛ր. զի մի՛ սուրբ աթոռն. և միւլքերն վաճառիցի՝ և սա՛ յօժար կամաւ անձնամատոյց լինի իբրև ԵՃ. քէսէ փող պարտուցն. մինչև ի Գ. ամին հատուցանելոյ պայմանաւ, և տայ զձեռնագիր պարտատիրացն։ Եւ զկնիքն այն. որով նախկին վէքիլքն զմուրհակ պարտուցն կնքէն. և ընդ վայր մնեն զառեցեալ դրամն պարտօք. կատարեալ էառ ընդ իւրն և ճանապարհեաց ի քաղաքս. և միշտ քարոզելով. և յորդորելով զժողովուրդն ասէր թէ, մարդիկ ճար տեսէք ձեզ. զի ազգս գնաց ի ձեռաց. և սուրբ աթոռն. և մեք եղաք ծանակ ի մէջ ազգաց ընաւից։ Յաղագս որոյ և ազգս մեր առացին թէ՝ դու զպատրիարգութիւնն պօլսոյս թէ յանձն առնուս տիրել. և մեք լուեալ քեզ միաբանիմք՝ և զոր ինչ պարտն է ի մէնջ պահանջման. ընչիւք և ապրանօք կանգնիմք. զկնի սորին որպէս և իցէ յանձն առեալ եղև պատրիարգ. և ի նոյն ժամանակին բաժանեաց զպատրիարգութիւնն կոստանդնուպօլսոյ և ասաց՝ եթէ զգրիգոր վարդապետն հայրն իմ ո՛չ բերեալ յղիցէք ի սաղիմ սուրբ, ո՛չ լինի ինև միայնակ այցելութիւն. որպէս սողոմոն զրէ՝ վա՜յ միոյն ի ճանապարհի՝ եթէ գլորիցի ո՞վ կանգնիցէ։ Ուստի լուեալ զայս ազգիս մերոյ. համակայօժարութեամբ մահզարական զրիւ բազմակնքաւ և բազում աղերսանօք զարքունական պէրաթն արարեալ ի վերայ նորին, և յղեալ բերին ի քաղաքս։ Եւ սոքա երկոքին արքս սրբասէրք համակամ և միախորհուրդ քարոզելով և յորդորելով միաբանեցուցին զժողովուրդն ի մի սիրտ. և ի մի հոգի։ Եւ ժողովեցին զբազում արդիւնս ի բարեպաշտ ազգէս մերմէ. և մինչ աստ էր այրն աստուծոյ և սրբազան պատրիարգն երուսաղէմայ գրիգոր ճգնազգեաց վարդապետն. առին աստ բազում միւլքեր և տարաթնէր ի եաֆայ սակս սրբոյ աթոռոյն։ Եւ ի նոյն ժամանակին ի հրակիզութենէ այրեցաւ սուրբ աստուածածնի եկեղեցին ի քաղաքս. որ և սոյն եկեղեցիս վերակացութեամբն վերստին շինեալ պայծառացաւ։ Եւ յորժամ գրիգոր վարդապետն ի սաղիմ գնալոյ եղև. յովհաննէս վարդապետն կրկին ֆէրման էհան թէ՝ որքանի գրիգոր վարդապետն կենդանի կայ՝ պատրիարգութիւնն յուրիշ մարդոյ չի տրվի։ Եւ ի նոյն ժամանակին ֆռանգքն՝ և յոյնք առին զհրաման ի սուրբ յարութիւն եղեալ զանգսն իւրեանց նորոգել. որև սոքա կուռն ջանիւ առին հրաման՝ և նորոգեալ պայծառացուցին և զմեր բաժին։ Եւ գնացեալ ի տեղոյս գրիգոր վարդապետին ի սուրբ երուսաղէմ, և յովհաննէս վարդապետն կալով ի քաղաքս և յորդորելով զժողովուրդն գնալ ի յուխտ և յերկրպագութիւն. և յամենայն ամի յոլով յուխտաւորօք և բազում յիշատակաւ, և արդեամբք վարձեալ գնաւս յղէր ի սուրբ քաղաքն երուսաղէմ։ Եւ սրբազան վարդապետն գրիգոր, ընդ իւրով երջանիկ քաղցրականութեամբն յորդորմամբ. և քարոզիւ զայնպիսի լինայեալ զպարտսն, իբրև զձիւն ի գարնանային եղանակին հալեցուցեալ չքացոյց։ Եւ յետ այսորի՛կ նա անդ. և սա աստ ի գրունս գեղեցեալ արքունեաց իբրև զբաջազոյն հովիւք զբանաւոր հօտին արթնական ակամբք ի խոր խաղաղութեան ածեցին։ Եւ ի սոյն ժամանակին համայն եկեղեցիք ի քաղաքս, և ի շրջակայ գիւղորայքս՝ նորոգեալ պայծառացան։ Ուստի և գրիգոր վարդապետն խնդրեալ զհրաման յարքունուստ՝ առ ի նորոգել զսուրբն յակոբ։ Եւ յովհաննէս վարդապետն աստի ջանիւ. և խորհրդակցութեամբ բարեպաշտօն և երկիւղած իշխանաց թէ ամիրայց. թէ կեսարացւոց՝ և թէ արևելեան վաճառականաց՝ և թէ տեղացւոց. էառ զհրամանն, որ և նորոգեալ պայծառացաւ. հանդերձ բազում շինութեամբ՝ զոր գրեթէ զկնի այնքան պարտուց վճարեցման և շինուածոյ. բարեօք լի արարեալ յղփացուցին զաթոռն մեր սուրբ։ Եւ աստ յովհաննէս վարդապետն ժողովեալ զաշակերտս բազումս ստացաւ ի պարծանս մերոյ ազգիս աստուածաբան վարդապետս և գքարոզիչս. զի մի յառաջին խղճութիւնն անկցի ազգս մեր. այլ տեսեալ աշակերտք սոցա՝ զվարս զկրօնս և զգնացս վարդապետացն այնոցիկ նմանօղք եղիցին գործոց հոգևոր հարցն իւրեանց. որև կան այժմ, և ածեն զազգս մեր ի խոր խաղաղութեան, մինչ յերուսաղէմ. և միան աստ՝ զոր տէր աստուած հաստատուն. և անշարժ պահեսցէ ի վերայ զաւազան իշխանութեան իւրեանց։ Այս ի մէջ ի տարեկան միջոց եղեալ իրքն են. որք ի հազարաց մինն գրեցան և թէ առ սոյս այլ ինչ պատահիցի, Թողցէ արանց հանճարեղինաց արձանացուցանել. և զմեզ անմեղադիր պահել բաւէ։

Յիշատակարան Տպողի Գրքոյս։ Ամենազօր կարողութեամբ հօրն ամենակալի. և ձեռնտուութեամբ որդւոյն միածնի՝ և շնորհիւ սրբոյ հոգւոյն ճշմարտի։ Ես նուաստ ամենեցունց՝ մարզուանցի մկրոչի որդի տպագրիչ մահտեսի գրիգոր դպիրս՝ որ եմ ձեռնասուն աշակերտ տիգրանակերտցի ծաղիկ երաժիշտ սարգիս գիտնական վարդապետին որ ի յամրդոլ դաստատունն էր վարժեալ հմուտ աստուածային գրոց։ Եւ ես նուաստ աշակերտ զորով նմին. բառ խնում կարողութեամբս ուսայ ի նմանէ զընթերցողութիւնն՝ և զծաղկարարութիւնն։ Եւ զկնի ժամանակաց եկեալ ի կոստանդնուպօլիս հանդերձ վարդապետիւս որ էր թվականն հայոց, ՌՃԼԳ։ Եւ ինքն յետ բազում քարոզութեանն՝ էլ գնաց ի վանքն իւր սրբոյն կոմոնոսի։ Եւ ես մնացի ի կոստանդնուպօլիս. և մտի յաշխարհականաց կարգի։ Բայց որովհետև խրախճանքիւր տեսակ ծառոց բա խրոյ բնաւորելոյն ընծայէ պտուղ զարդիւս եկե-

գեղոյն տառածոյ։ Եւ ես տեսեալ զայգս որ ի գրոց սրբոց առերջ և սակաւուկ զատնիւր գրչաքր գրեանք. Թէպէտ երանելի Ոսկան վարդապետն հրամանաւ տեառն Յակոբ սրբազան կաթողիկոսին ՌՃԺ. թվին տպեալ ի Ամստերտամ քաղաք զրամով վասն ազարանի. և զանեալ անդ չինօղ գրերաց գեղեցիկ յո՛յժ՝ որպէս և տեսանէքդ զաստուածաշունչ և պշտական զայլսն։ Սակայն յետ վախճանի նորա եղեւ խափանումն. մինչ եկն հասս առ մեղաւոր գրիգոր դպիրս։ Եւ ես ի մեծի վարանեալ կայի՝ որ ոչ գոյր տպագրատուն ի ձեռս լուսաւորչածին ազգաւիառացս։ Վասն որոյ յուսալով յողորմութիւնն աստուծոյ միայն, Թարց օգնականութեան մարդկան. մինչ ԺԲ ամ բազում աշխատանօք զոչ եղեալ տպագրարանն ի մէնջ՝ աստուծով բերի յառաջ։ Ո՛չ արդեամբք զոլով վարժամ. այլ աղքատ և տառապեալ. ո՛չ ի ձեռնտուութենէ այլոց ումեք. այլ միայն յուսացեալ յաստուածային ամէնատառ կարողութիւնն։ Զպատկերաց զխորանաց զծաղկաց և ձաղաղրաց. զգլխագրաց. բոլոր և նոտրագրաց և զանազան կաղպարաց. և զձուլածումն արճիճ գրերացս մինչ իբրեւ Զ հազարաց։ Որեւ ամէն հատ գրերացն Ե Ե անգամ ձեռացս անցանէր այսինքն յետ Թափածոյն այսքան գրերաց, զարձեալ մի մի հատանելով զկնճիռն զատան և զարածայրսն զուրելով ի քարն քսելով և միմեանց համահաւասարելով։ Եւ այլ բազում աշխատութեամբ զոր ոչ գրեցի։ Եւ ապա չարագրի և դնի ի ներքոյ տպագրիլի. որով տպեցեալ լինիցին գրեանք սուքան որ կամիմք։ Անկարելի մտաց մարդկան խմանալ Թարց տեսանելոյ զաշացեալսս։ Եւ ի ՌՃԾԵ Թվին կարողութեամբն աստուծոյ՝ նախ տպեցի ԶԿ սաղմոսարս. զորս յետոյ ապաշեցան ընկերացեալքն իմ. և ոչ կացին յառաջին պայմանին և գրեցին զիս անխնայ. և զիմ բաժինս ափչատկեցին յինէն. զոր ի չինելն և ի Թափելն զզաղափար արճճէ գրերացն մինչ ԺԲ ամ աշխատեցայ, զոր մաշեցաւ կեանք իմ և զաղափարքն իմ. որ զգատաստանն իմ ընդ նոսա՝ քրիստոս առնելոց է անաչառ առենին իւրոյ. և հատուցէ նոցա ըստ արարմանց իւրեանց զոր ինձ արարին յայսմ կենցաղոյս՝ և Թողլն զիս Թափուր ի ընչից։ Այն որ տատան է ի բարիս և զրԹայ ի յարարածս իւր՝ փառք անճառ ողորմութեանն իւրոյ. զոր կրկին արժանի արար տպեցման և ապարաման սուրբ մատենիս. որ ի Հայրապետութեան սրբոյ Էջմիածնի լուսակառոյց Աթոռոյն Տեառն Աբրահամու սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց։ Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսի, Տեառն Գրիգորի և Յօհաննու Աստուածարան վարդապետաց. աշակերտաց Վարդանայ Տաճարաշէն սուրբ վարդապետի բաղէշեցւոյ։ Այլ և յաւուր միում զրուցատրութիւնս առնէաք ակնաւորեաց աղուչէպցի լուսահոգի հոլիենց մահտեսի մարտիրոսի որդի մահտեսի յարութիւն աղային հետ, վասն այսմաւուրաց կողմանէն. հասեր է ընաւ ամեններին չէ ԹԹացեր տուեալ. տատուած իւրն կենդանութիւն տայ՝ զինքն և զիւր որդիքն անփորձս պահեսցէ և երկարակեացս արասցէ. և որպէս ձիԹենի պտղալից պահեսցէ ի տանն աստուծոյ. որ եղեւ պատճառ կրկնակի տպեցման, այլեւ՝ եղեւ ձեռնտու մինչեւ ի Զ դուռուչ. զոր միջի եղեալ արեամբ ներկեալ նահատակացս բարեխօսութեամբն երկնային լուսոյն և երանական ձայնին արժանի լիցի ամէն. որեւ պարտիմք յիշել կրկնակի զվերոգրեալ մահտեսի յարութիւն աղան և զմայրն իւր զմահտեսի մարգարիտ խաթունն. և աննման խոհեմ որդիքն իւր՝ զմարտիրոս աղան. զկարապետ աղան՝ և ըզհաճի ակոբն. զհանգուցեալ մայր սոցին զմահտեսի նազլուխաթունն. և այժմու կենակիցն մահտեսի յարութիւն աղայիս զմահտեսի տիրուհի խաթունն և զնորաբողբոջ զաւակն իւր զմարիամ խաթունն. զոր տէր աստուած երկար կենօք և ուրախ գիմօք պահեսցէ զտուն՝ հանդերձ ծնողովքն իւրեանց ամէն։ Այլեւ յիշեցէք ի տէր՝ զմահտեսի ստեփաննոսն զկրտսեր եղբայր մահտեսի յարութիւնին. որ ի ՌՃՀԳ Թվին՝ գնաց ի սուրբ երուսաղէմ հանդերձ կողակցաւն և այլովք ուխտաւորօք, վասն սիրոյ և տեսութեան սրբոյ գերեզմանին բանին աստուծոյ. նահատակեալ ի ծովին ընկղմեցան ի խորս վա՜յ ինձ. և եղեն արժանի հոգւով տեսանել զաննման տեղին. զոր տէր աստուած մարդասէր աչօք տեսանել արժանաւորս արասցէ զամենայն հաւատացեալքս ամէն։ Այլեւ պարտիմք յիշել և ոչ մոռանալ զերախտիս բարեկամին մերոյ զարմանալի ուկենց զխոհեմամիտ զերաշխին մեր զմկրտիչ աղան որ առ ես կամեցաւ տալ յայսմ սուրբ մատենիս և խնդրեաց բարեխօսութիւն. և խոհեմամիտ մահտեսի յարութիւն աղայէն օգնել մեզ ձեռնտուութեամբ. և մահտեսի յարութիւն աղան գնացեալ էր յերկիրն իւր ի պակասիլ վերջին Թղթերացն այս մկրտիչ աղան լցոյց զպակասութիւն գործոյս. զորս յիշել պարտիմք զինքն և զծնողսն իւր զասարգիսն և զմահտեսի զար խաթունն. և զկենակիցն իւր զբերսաբէն. և որդիքն իւր կարապետ և զյարութիւնն զոր տէր աստուած երկար կեանս պարգեւեսցէ ամէն. որ յիշէք յիշեալ լինիք ի քրիստոսէ։ Այլեւ յիշել պարտիմք զողոլեցի զմահտեսի սարուխանն. զոր և յորդորմամբ եղօլիայցի զանԹարի որդի տէր պօղոսին, օգնեաց մեզ ձեռնտուութեամբ և տալ աստուծոյ փոխ զճ. ղուռուշ. զոր և յիշել մաղԹեմ զծնողսն զպարոն նիկողոսն և զմարիամ խաթունն. և զհանգուցեալ կողակիցն իւր ոսկի խաթունն. և մեծ եղբայրն իւր զմահտեսի ճանիկէլն. և զհամայն կենդանիս և զննջեցեալսն ամենեցունցն յիշել աղաչեմ։

Այլեւ՝ յիշել աղերսեմ ի ձէնջ որ սիրելիք և իմ ազնեայ.ք. լուսածնունդ որդիք սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչին տիեզերաց. և ի պարծանս զաւանութեամբն կառուցեալ եկեղեցւոյս հայաստանեայցս երամից. ոչ այլ ինչ խնդրեմ ի բարեսէր եղբարցդ այլ միայն համդիպօղքդ սոյնոյ յիշատակարանիս ընթեռնուլ զրովանդակն և չերմեռանդ սրտիւ յիշել զմահտեսի զրիգոր դպիրս ըստ աշխատանացս իմ։ Այլեւ՝ յիշեցէք զծնողքս իմ զմկրտիչն և զթուրվանդան. և զպապերքս իմ աբրահամն և զեղայրն. և զմամերքս իմ մարթան. և եղբարքս իմ զքրիստոստուրն. զմէրայէլն. և զփոքրիկ եղայրն. և զքորքն իմ. և զամենայն ազգայինքս իմ. որ են հանգուցեալ ի չիրմս ի մարզուան քաղաքի։ Այլեւ՝ յիշեցէք զկողակիցն իմ զմայրն որդւոցս զկատարինէ խաթունն. և զծնողսն սորին զվարդան աստուածեռն և ողորմածն առ ի յոգքատս և ի տնանկս. և կողակիցն իւր հեղինան սոյն զունակ. որ են հանգուցեալ հանդերձ իւրայնովքն և կարօտին յիշել ի տէր. աստուած ողորմի։ Այլեւ յիշեսջիք ի Տէր՝ զորբացող օրինակի սուրբ մատենիս զյողնիմաստ և զխոհեմամիտ զկոստանդնուպօլսեցի զպաղտասար դպիրն. և զհանգուցեալ ծնողսն իւր հանդերձ ննջեցելովքն. և զկենդանիսն իւրայնօքն բարերարն աստուած՝ երկար կենօք պահեսցէ։ Այլեւ յիշեցէք զաւագ որդին իմ ըղներսէսն ըստ մարմնոյ զծառայն ձեր՝ որ էր սրբագրող ի վերայ արճճէ զաղափարացն և յարմարող օրինակացն. և վերակացու գործատանութեանս յամենայն կողմանէ՝ և զկենակիցն իւր. և զաւակքն իւր որ են Թոռունքն իմ. և զկրտսեր եղբայր սորին զախրացու Թադէոս որդեակն իմ որ է չարօղ և ցրող արճճէ զաղափարացն. և սոսուցիչն ընթերցողութեան տիրացու Թադէոսին զհան-

զուցեալ տիրացու մելքսեդն. այլեւ՝ որդւքս իմ որ են ցուռ ծերութեանս իմոյ. զոր տէր աստուած զաստ անփորձ և երկար կենօք պահեսցէ ամէն. այլ և յիշեցէք ի տէր զհանգուցեալ մրահար զբազմաչխատ մշակն իմ եղբայրն որ հանգեաւ ի քրիստոս. ՌՃՀԹ թվին. և յոյժ կսկծեցոյց զսիրտ իմ. զի լ ամ էր որ առ իս էր բնակեալ. և էր հաւատարիմ բարեկամ իմ. աստուած լուսաւորէ զհոգին՝ և զծնօղսն իւր։ Այլեւ յիշեցէք զաղուլեցի ովանէսի որդի զալարսն զալուստն՝ զոր առ եւս երախտիս ունի ի վերայ մեր։ Այլեւս յիշեցէք երևանադիւղէն հայոց թաղցի մինասի որդի զբազմաչխատ և զքրտնաջան զմրահար և զապաշխարհ տիրացու աստուածատուրն. և զուստրն սիրեղուխան. որ էր գերեցեալ կինն և ա ամեայ օհաննէս որդին. զորս եկն որոնելով ի բաստամիոլ և ոչ եգիտ զգերիսն իւր. զոր տէր աստուած հոգւով մխիթարէ զհոգին. ամէն։ Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ եղի՛ ։

Եւ ի ՌՃՀԲ թվին հայոց՝ թագաւորն օսմանցւոց սուլթան ահմէտն եառ զթիֆլիզ։ Եւ ի ՌՃՀԳ թվին հայոց՝ օսմանցին սրով էառ զերեւան. և գերեաց զբովանդակ գիւղորայսն գաւառս հայոց. որ էր յոյժ աղէտ անասզայն և լալ գերեայն. և բաժանելն իրերաց՝ զոր տէր աստուածն ամենայնի այսպիսի անտանելի և անսաւելի փորձանացն ազատ պահեսցէ ամէն։ Եւ ի ՌՃՀԳ թվին սովն զկէնձէ սրով. և գերեցին զկանայս և զմանկունս. և եկեալ այլազգի թուրք մի, որ ի յայնմ գաւն ժամանակին անդ էր պատահեալ. սաստ թէ՝ կէս մղոնի չափ անդ քառակուսի տեսի որ ի զրկաց մարդն ձգել ավեր էին, մանր երախայք նոր ծնածէն մինչ զզ տարեկանն. որ չի էր գաշտն ամենայն. մանուք լայլին՝ և մանուք լալով մեռեալ էին. որ եղեն նման կատարածոյն ընթացանէմի. զոր պարտիմք զայսպիսի աղէտս և խղճութիւնս՝ լալով երես ի գետին զնելով զեանախչաութեամբ աղաչել և արտասուալից դիմօք լալ և խնդրել յամենազօր բարերար մարդասիրէն աստուծոյ. զի փրկեսցէ զամենայն հաւատացեալքս յայսպիսի փորձութենէ. և տացէ աշխարհիս խաղաղութիւն. թագաւորաց հաշտութիւն. և քաղաքաց անդորրութիւն լիութիւն և առատութիւն ամէն։

Եւ ի ՌՃՁ թվին՝ գալթիւ սուրբ Լուսաւորչի եկեղեցին այրեցաւ. և ի ՌՃՁԲ թւին նոր ի հիմանէ շինեցաւ. զոր տէր աստուած հաստատուն պահեսցէ. հրամանաւ նորընծայ սուլթան մահմուտ թագաւորին. զոր տէր աստուած քաղցր պահեսցէ զսիրտ թագաւորին ի վերայ քրիստոնէից ազգաց ամէն. զոր ի ՌՃՀԹ՝ թվին սուրբ խաչի ընդ երրորդ աւուրն թախտն անցաւ. զոր տէր աստուած երկար կենօք պահեսցէ ամէն։

Յաւուրն աստուծոյ. և սիրով սրբոց նորա. ես նաստ ոգի միքայէլ վարդապետս արեւլցի. ի գաւառէն գողթնեաց. և ի գերադով վանից սրբոյն Թովմայի Առաքելոյն՝ որ յագուլիս։ Աշխատեցայ ի վերայ յայսմաւուրքիս. և հաւաքեցի զանուանս սրբոցն աստուծոյ՝ ըստ այբուբենից զատուրութեանց։ Եւ եդի ընդ նմին զամիսն և զթղթահամարսն, վասն դիւրաւ զանոնայ զճառս Տէրունականս և զպատմութիւնս սրբոցն։ Իսկ յերես անկեալ աղաչեմ զամենեսին՝ և զհանգիստս սրբոցս՝ զի յիշեսջիք ի սրբամաքուր աղօթս ձեր առ տէր, զյոգնամեղս՝ և համայն ազգայինքն իմ։ Եւ դուք՝ յիշեալք լիջիք ի խնամս քրիստոսի յասա՝ և ի հանդերձեալն՝ ամէն »։

Գիրքս երկաթալ, առաջինէն աւելի մեծ և լայն Յանկէն վերջ. « Այլ և յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զհողեւոր որդեակն իմ զմխուացի տէր յակոբ սրբասնունդ քահանայն. զոր տէր աստուած ի վերայ կարգին հաստատուն պահեսցէ ամէն ».

երես. երկիջեան, զարդափակ էջերով. խաչորագիր, թանձր և սեւաթուղթ։ Հատարակ աղաւրութիւն. նախընթացը լաւագոյն է քան զայս՝ իբր աղագրութիւն։

= Գ. տիպ, ի Կ. Պոլիս, 1834.

Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի։ Յորում պարունակին երկնակրօն վարք և ճգնութիւնք աստուածահաճոյ սրբոց ի հին և ի նոր օրէնս հանդիսացելոց, ընտրելոց ի սկզբանէ աշխարհի ի զանազան ազգաց և լեզուաց. և վկայաբանութիւնք չարչարանաց և մահու յաղթօղ նահատակաց տօնելեաց և յիշատակելեաց յեկեղեցիս հայաստանեայց, ըստ բարեկարգ սահմանադրութեան սուրբ և երանեալ հայրապետացն մերոց. բաժանեալ ի վերայ աւուրց իւրաքանչիւր ամսոյ։ Կամօք և հաւանութեամբ ազգային ժողովոյ նորոգ սրբագրեալ, և զգուշաւոր տպագրութեամբ ի լոյս ընծայեալ։ Հրամանաւ ամենապատիւ և վեհափառ Պատրիարգի Տեառն Ստեփաննոսի Արքակրօն Արքեպիսկոպոսի։ Ի Կոստանդնուպօլիս, յՕրթագիւղ ի Տպարանի Պօղոսի Արապեան Ապուչեխցւոյ, 1834–ՌՄՁԳ։

Հրատարակիչն է Գրիգոր դպիր փէշտըմալճեան, որուն Յառաջաբանին հետեւեալ շահեկան կտորը յառաջ կը բերեմ. «... Սուրբ և հոգելից թարգմանիչք մեր ի հինգերորդ դարու՝ ընդ այլոց բազմաց ազգօգուտ գործոց, որովք բարգաւաճեալ ցուցան ազգս մեր ամենայն հոգեւոր իմաստութեամբ և գիտութեամբ, թարգմանեցին և զվարս ինչ սըրբոց, որպէս երեւի ի վանական ոճոյ կազմութեան բանից նոցա։ Ապա Գագիկ վարդապետ աստմայ վանաց յիններորդ դարու՝ ոչ սակաւս ի վարուց սրբոց թարգմանեաց ի յունականէն, որոյ մատեանն կոչեցաւ Աստմագիր։

Հուսկ ապա սուրբ և երանելի հայրապետն մեր Գրիգոր վկայասէր՝ որ յառաջն վահրամ կոչէր, որդի իմաստնոյն և մեծ իշխանին գրիգորի մագիստրոսի՝ ի զարմէ սուրբ լուսաւորչին՝ ի մետասաներորդ դարու, շրջեալ յարեւելս և յարեւմուտս ի վանորայս և յանապատս՝ յուզախնդիր եղեւ վկայաբանութեանց և վարուց սրբոց. և զոր միանգամ եգիտ ի յունական ընտիր մատեանս՝ թարգմանեաց զնոսին ի հայ բարբառ։ Ժողովեաց և զբազում ճառս սրբոց. և եդեալ զամենեսին ի կարգի՝ արար մատեան մեծ, որ յետոյ կոչեցաւ Ճառընտիր. և սահմանեաց ընթեռնուլ յեկեղեցիս և ի վանորայս ըստ պատշաճի իւրաքանչիւր աւուր։

Յետ որոյ Տէր Իսրայէլ այր բանիբուն՝ որ ծաղկեցաւ յաւուրս վանական վարդապետի ի սկիզբն երեքտասաներորդ դարուն, զվարս սրբոց և զվկայաբանութիւնս և զճառս ինչ՝ որ լինելոցն կային ի Ճառընտիրն՝ համառօտիւ քաղեալ բաժանեաց ի վերայ աւուրց իւրաքանչիւր ամսոյ. և որպէս ի դէպ գոյ ասել՝ յարեալ յարմարեաց ընդ նմին յաստուածաշունչ գրոց և ի վաղեմի աւանդութեանց զվարս նահապետաց սրբոց և մարգարէից և առաքելոց. և այս գիրք նորա կոչեցաւ Յայսմաւուրք։ Եւ արար սկիզբն մատենին յառաջներորդ օրէ սեպտեմբեր ամսոյ. «Վասն համարելոյ՝ ասէ՝ հռոմայեցւոցն իմաստնոց սկիզբն լինել տարւոյ։

Ապա Կիրակոս վարդապետ արեւելցի ի հնգետասաներորդ դարու՝ առաջնորդ ունելով զՏէր Իսրայէլ՝ նորոգ յօրինեաց զգիրս Յայսմաւուրաց։ Յետ այնորիկ Գրիգոր վարդապետ խլաթեցի՝ ծերենց կոչեցեալ՝ ի նմին ի հնգետասաներորդ դարու՝ հաւաքեալ Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի և

Կիրակոս վարդապետի, յաւել ի նոսին անընտրողաբար և ինչ ինչ յանհաւաստի և յանօգուտ զրուցաց, և արար նոր գիրք Յայսմաւուրաց. յոր հետզհետէ մուծին օրինակօղք և զայլ ևս անպատշաճս ըստ իւրաքանչիւր ախորժակաց, և խանգարեցին զպատուական մատեանն, զոր Տէր Իսրայէլ հաւատարմութեամբ համառօտեալ էր ի Ճառընտիր գրոց։

Եւ այս պատճառ օրինակ Յայսմաւուրաց խոտորեցոյն, յետ ժամանակաց տպագրեցաւ միանգամ և երկիցս ի Կոստանդնուպօլիս յաւելմամբ վրիպակաց ի տպագրողաց. և փոխանակ ընտիր Յայսմաւուրացն Տէր Իսրայէլի, և կամ Կիրակոս վարդապետի՝ մուծաւ յեկեղեցիս մեր անզգուշութեամբ. և այն էր որ ընթերցեալ լինէր մինչև ցայսօր։ Բայց վասն բազմապատիկ այլայլութեանցն որ ի նմա, խոտան համարեալ էր ոչ միայն յաչս իմաստուն քննողաց՝ այլ և բազմաց հասարակութեան։

Եւ վասն զի ի վաղուց անտի յերանելի նախնեաց մերոց սովորութիւն է յամենայն եկեղեցիս հայաստանեայց՝ նախ քան զերեկոյեան ժամերգութիւնն ընթեռնուլ զգիրս Յայսմաւուրաց մինչև ցհաւաքումն ժողովրդեան ի ժամ աղօթից. և ապա ասել զՀայրմեր, և սկսանել զժամերգութիւնն. քանզի ամենայն ժամերգութիւնք եկեղեցւոյս մերոյ և պաշտամունք ըստ սահմանելոյ սուրբ հայրապետաց՝ Հայրմերիւ սկսանին, և Հայրմերիւ աւարտին։ Վասն որոյ խոհականագոյնքն և երևելիքն ազգիս ի բազմաց հետէ փափագէին ի ձեռս բերել զօրինակ Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի, և տպագրութեամբ ի լոյս ընծայել, գիտելով քաջ թէ յատակ է ջուր յոլն քան ի վաղուն. ամէն իրի յառաջ քան զամս ինչ գրեցին առ բազում քաղաքս և ի հռչակաւոր վանորայս, և ոչ կարացին գտանել։

Արդ յորժամ արքունի հրամանաւ եկն այսր Տէր Կիրակոս Կաթողիկոս տանն Կիլիկիոյ, լուեալ ի նմանէ թէ գտանի ընտիր օրինակ Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի ի կաթողիկոսարանն Սսոյ, բարեմիտ կամօք խնդրեցին զայն առ ի տպագրել. և նա ի դարձի իւրում ի հայրապետական աթոռն՝ առաքեաց անյապաղաբար։ Եւ էր մատեանն գրեալ ի մագաղաթի բոլորգիր՝ յաւուրս բարեպաշտ Թագաւորին Հայոց Օշնի և Կոստանդին կաթողիկոսի. և զի թուղթք ինչ անկեալ էին յառաջոյ և ի վերջոյ՝ ոչ գոյր ի նմա յառաջաբանութիւն ամբողջ և վերջաբանութիւն, վասն որոյ և ոչ որոշակի թուականն։ Բայց քանզի Օշին օծաւ թագաւոր յամի տեառն 1308, և թագաւորեաց զամս երկոտասան. և յիշատակարանքն որք կան եղեալ ի վախճան իւրաքանչիւր վկայաբանութեանց՝ ցուցանեն թէ նորոգ օծեալ էր թագաւոր, և անդրանիկ որդի իւր Լևոն դեռ ի տղայական հասակի էր. ապա հաւանելի է ասել՝ թէ յառաջին կամ յերկրորդ ամի թագաւորութեան նորա էր գրեալ, այսինքն յամի 1309։

Քանզի ի սեպտեմբերի, գ, գնի յիշատակարան այսպէս. «Սոցին բարեխօսութեամբ քրիստոս աստուած պահեսցէ անսասան զբերս բարեպաշտ թագաւորիս մերոյ աւշնի, և զեռաբոյս մանկանն իւրոյ լևոնի, և ծնողաց իւրոց, և բազմամեղ գրչիս գրիգորի դպրի, և պատուական քահանայի և աւագերիցու թագաւորին թորոսի»։ Ի սեպ''. ը. «Քրիստոս զօրացո՛ զնորոգ օծեալ բարեպաշտ թագաւորս մեր աւշին, և զզեռաբոյս մանուկն իւր զլևոն»։ Ըստ այսոցիկ են և յայլ տեղիս։

Յաղագս որոյ զգուշաւոր քննութեամբ՝ և համակամ հաւանութեամբ ազգային ժողովոյ եկեղեցականաց և քաղաքայնոց, գերապատիւ և շնորհազարդ Եպիսկոպոսաց, իմաստուն Վարդապետաց, և պատուական Քահանայից, ևս և ազնուամեծար և ազգասէր Ամիրայից, և գլխաւոր անձանց Արհեստաւորաց՝ համաձայնեալ հաստատեցաւ, զի ապաւինեալ ընթերցուած Յայսմաւուրաց խոտորեցոյն ապաւագեալն բազմօք՝ բարձցի խափան յամենայն եկեղեցեաց և ի վանորէից ազգիս. և առ հաստատուն պահելոյ զբարեկարգ սովորութիւն երանելի նախնեաց մերոց՝ փոխանակ նորա ընթերցեալ լիցի Յայսմաւուրս այս։

Ի սոյն ազգային ժողովոյ յանձն եղև մերումս նուաստութեան սրբագրել զմատեանն զայն օժանդակութեամբ տեառն Մատթէոսի շնորհափայլ Վարդապետի չուխաճեան. և զվարս ինչ և զվկայաբանութիւնս սրբոց որք յետոյ էին քան զժամանակ կենաց հեղինակին՝ յաւելուլ ըստ արժանւոյ։ Ուր և մեք յընթացս սրբագրութեան այսր մատենի, կամակար մտօք զհետ գնացաք այնմ հնագոյն և ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրացն Կիլիկիոյ, անփոփոխ պահելով զգոյացութիւն պատմական. և որք յետոյ եղեալ էին ժամանակաւ՝ ի վարուց սրբոց և ի պատմութեանց հայոց քաղեալ պարապով առ ամբողջութիւն գործոյս, ի նշանակեալ աւուրս ամսոց եդաք ըստ պատշաճի։

Ի ներքս ի կարգ ընթերցուածոյն ածեալ մուծաք և զյիշատակ մահու ոմանց ի թագաւորաց և թագադարմից ռուբինեաց, որք յօրինակի մերում տառադարձանաւ գրոշմեալ կային ի ստորև։ Յաւելաք և զերկուս վկայաբանութիւնս, երանելոյն Նիկողայոսի սրբաւացւոյ, և սրբուհւոյն Վառվառեայ կարճեցեալ հանդերձ իւրովքն վկայակցօք, զորս գրով աւանդեալ գտաք յակնատեսից։ Իսկ զկետադրութիւնն և զանջատումն և զփոխագրութիւն Աւ ձայնին ի տառն Օ, է որ ըստ հնոց թողաք, և է որ ըստ այժմեան սովորութեան կարգեցաք։ Զընթերցուածս հին զաղափարին պահեցաք յանունս սրբոց, որ զնոյն և զմի անուն տարբեր օրինակաւ գրէր. որպէս գունդկինոս և գունդկիանոս. անտոնինոս և անտոնիոս. նունէ և նունեա, և այլն։

Եդաք ի վախճան մատենիս և զճառս ինչ, որոց կէաք կային յօրինակի մերում, և կէաք ի հնագոյն Ճառընտիրն՝ զոր նա ինքն Տէր Կիրակոս Կաթողիկոսն առաքեաց ի Կիլիկիոյ ընդ այնմ Յայսմաւուրաց։ Եւ ահա այժմ հարկադրութեամբ ազգային ժողովոյ եկեղեցականաց և աշխարհականաց, և հրամանաւ ամենապատիւ և վեհափառ Պատրիարգին՝ յաշխատասիրութենէ քաջահմուտ տպագրիչ պարոն Պօղոսի արապեան՝ գործակցութեամբ եղբարց իւրոց հարազատաց՝ պարոն Աստուածատրոյ և պարոն Գէորգի՝ գեղեցիկ և վայելուչ տպագրութեամբ ի լոյս ընծայեցաւ ի փառս քրիստոսի պարագլխոյն մարտիրոսաց, և ի լրումն բաղձանաց համօրէն ազգիս...

Նուաստ ծառայ անպիտան
գրիգոր դպիր փէշտըմալճեան»։

Գիրքը մեծ. երկածալ, երկիջեան, գծափակ երեսներով. Ա. հատ. 285 էջ. 286-291 ցանկ վերնագրաց. — Բ հատ. 319. 320-332 կրկին ցանկեր. յետոյ նոր թուահամարով հետեւեալ ճառերը. Ճառ Ա. Երանելոյն Գրիգորի նիւսայ եպիսկոպոսի ասացեալ ի մանկանցն բեթղեհէմի։ — Բ. Տեառն Յովհաննու ոսկեբերանի ի կինն մեղաւոր, որ օծ զտէրն տեառն իւղով։ — Գ. Նորին ասացեալ ի փարիսեցին և ի մաքսաւորն։ — Նորին ի նոյն խորհուրդ։ — Դ. Նորին ասացեալ ի զաքէոս մաքսաւորն։ — Ե. Նորին ասացեալ ի վճիռ կնոջն քանանացւոյ։ — Զ. Նորին ի ծննդութիւնն Պետրոսի։ — Երանելոյն Հիպողիտեայ բոստրացւոյ ի մեկնութենէ աւետարանին որ ըստ յովհաննու ի յարութիւնն Ղազարու։ — Ը. Ի մեծի աւուր Գալստեան տեառն մերոյ յիսուսի քրիստոսի յերու-

հետ ունեցած յարաբերութիւնը. գրի զօրութիւնը և ազդեցութիւնը վայրենիների վերայ. գրի նշանակութիւնը և նորա քաղաքակրթութեան մատուցած ծառայութիւնը։ — Բ. Նշանացի խօսակցութիւն. Արտայայտիչ շարժողութիւն. նշանացի խօսակցութիւնն իբրև միջոց հաղորդակցութեան՝ սկզբնական մարդու համար. նշանացի խօսակցութիւնն իբրև արուեստ. նշ. խօսակցութեան ծագումը. նշ. խօսակ. վայրենի Հնդիկների մէջ. Անդերսոնի պատմած արկածը. նշ. խօսակ. էութիւնը. նկարագրող և մատնանիշ նշ. խօսակ. նշ. խօսակ. իբրև ընդհանուր մարդկութեան սեպհականութիւն. նշ. խօսակ. երաժշտական գործիքների միջնորդութեամբ. նշ. խօսակ. հայ ժողովրդի մէջ։ — Գ. Լեզու. Լեզուի և հոգու մէջ տեղի ունեցած յարաբերութիւնը. հնչիւնի և մտքի մէջ տեղի ունեցած յարաբերութիւնը. բառերի ծագումը. մանկական լեզու. լեզուի ծագումը յունաց փիլիսոփայութեան մէջ. լեզուի ծագման խնդիրը պատմական և հոգեբանական տեսակէտից. լեզուի ծագման չորս տեսութիւնները – թէօրիաները – ա) վերացական կամ հրաշքի տեսութիւն. բ) գիւտի. գ) դիպուածի և դ) աստիճանաբար զարգացման տեսութիւնները. նշանացի շարժողութեան, մանկական և խակական լեզուի մէջ տեղի ունեցած յարաբերութիւնը. եզրակացութիւն։ — Դ. Հայոց լեզու. Հայոց լեզուի ծագումը հնդկա-գերմանականից. հին և նոր կարծիքներ այդ մասին. «զուտ հայկական» լեզու. դորա ծագումը. ազգային լեզու. լեզուն իբր ազգերի ստեղծագործութիւն, ինչպէս են յառաջացել հայոց լեզուի բառերը. հայր Ինճիճեանի բացատրութիւնը. բառերի համեմատութիւններ. հայոց լեզուի աստիճանաբար զարգացումը. օտար ազդեցութիւններ։ — Ե. Գիր. Գրի տեսակները. բերանացի աւանդութիւն. պատկերագիր. դորա ծագումը. եգիպտական «հիէրօգլիֆներ», «քրմական» և «ժողովրդական» գիր. գաղափարագրի և նկարի մէջ եղած տարբերութիւնը. պատկերագրի հոգեբանական կողմը. նշանագիր. պատկերագրի և նշանագրի գործածութիւնը հայոց մէջ. պրոֆ. Էմինի կարծիքը. ցուցակ հայոց նշանագրերի։ — Զ. Հնչիւնագիր. Սեպագիր. դորա գիւտն և ընթերցումը. Ֆրդ. Գրօտեֆէնդ. պարսկական և ասորա-բաբելական սեպագիր. հայկական սեպագիր. դ-ր. Մօրդմանի ընթերցումն. այդ ընթերցման արժէքը. թէ ինչո՞ւ մենք այս սեպագիրը հայոց գրի շարքն ենք դասում. հայոց սեպագիր արձանագրութեանց բովանդակութիւնը. «Նայիրի» երկրի իշխանները. հատուածներ Մասպերօից և Լընօրմանից. արձանագրութեան օրինակներ. սեպագրի էութիւնը. սեպագրի ծագումը։ — Է. Տառագիր. Խրատական գիր. սեմիտական այբուբեն. փիւնիկեան այբուբեն. տառագրի ծագումը. տարբեր տեսութիւններ. Ֆաուլմանի տեսութիւնը. ուղղութիւն. հայոց այբուբեն։ — Ը. Ներմուծումն. Գրի ծագումը. զանազան ազգերի աւանդութիւններն այդ մասին և դոցա նշանակութիւնը. հայոց գիրը. ասորոց և յունաց գիրը Հայաստանում. Սր. Սահակ և Մեսրոպ. Սր. Մեսրոպ իբրև քարոզիչ քրիստոնէական գաղափարի. Ս. Մեսրոպի դեսպանութեան յաջողութիւնը. հայոց լեզուի և գրականութեան ծաղկելը. համեմատութիւն V-րդ դարու հայոց ուսումնասիրութեան և եւրոպական դասական ուղղութեան. Սր. գիրքն իբրև գլխաւոր շարժառիթ հայոց լեզուի և գրականութեան զարգացման։ — Թ. Կորիւն սքանչելու պատմածը «Գրի գիւտ»ի մասին։ — Ժ. Մ. Խորենացու պատմածը գրի «Գիւտ»ի մասին։ — ԺԱ. Ղազար Փարպեցու պատմածը «Գրի գիւտ»ի հանգամանքների մասին։ — ԺԲ. Կորիւնի, Խորենացու եւ Փարպեցու Միմեանց հետ ունեցած Յարաբերութիւնը. Խորենացու հեղինակութիւնը. թէ ինչո՞ւ Փարպեցին տարբեր կերպիւ է պատմում քան Խորենացին և Կորիւն. Գ. Խալաթեանցի աշխատութիւնը. Փարպեցու վկայութեանց նշանակութիւնը. Սր. Սահակի և Մեսրոպի գործունէութեան տարբերութիւնը. թէ ինչո՞ւ Խորենացին տարբեր է պատմում քան Կորիւն։ — ԺԳ. Հայոց հին եւ «Դանիէլեան» կոչուած գիրը։ — ԺԴ. Թէ ինչ տառերից էր բաղկացած հայոց հին Այբուբենը. Հայոց հին այբուբենի կատարելագործութիւնը. մի քանի ձայնաւորների պակասութիւնը. մեր հին պատմագրաց վկայութիւնն այդ մասին. եօթը ձայնաւոր տառերի ներմուծումն արտագրողներից. քանի տառից էր բաղկացած հայոց հին այբուբենը. մեր հին պատմագրաց վկայութիւնը. «Ոսկեփորիկ». Ո՞րոնք էին այդ այբուբենի տառերը. Ինճիճեանի, պրոֆ. Էմինի, պրոֆ. Պատկանեանի, Հիւբշմանի կարծիքները. մեր տեսութիւնը։ — ԺԵ. Եւրոպական գիտնականների կարծիքները հայոց Գրի մասին. Զամչեանի, Ինճիճեանի, Էմինի, Պատկանեանի, Պետերմանի, Վինդիշմանի, Լանգլուայի, Սէն-Մարտէնի, Բրօսէի, Ֆրդ. Միւլլերի, Հիւբշմանի, Գարդհաուզենի, Վալի, Լենորմանի և այլ 30 գիտնականների կարծիքները։ — ԺԶ. Հայոց Գրի ծագումը, կամ թէ ո՞րտեղից են յառաջացել հայոց հին տառերը. Եւրոպական գիտնականների այդ մասին յայտնած տարբեր կարծիքների պատճառները. հայոց գիրը պատկանում է սեմիտական ընտանիքին. գիրն ենթարկւում է փոփոխութեանց. հայոց սահմանակից ազգերի գիրը. սեմիտական ո՞ր գրից է ծագում հայոց այբուբենը. համեմատութիւն հայոց այբուբենի՝ փիւնիկեան, հին եբրայական, արամայական և պալմիրական տառերի հետ. Մեսրոպեան 14 տառերի ծագումը. հայոց յարաբերութիւնը փիւնիկեցիների և ասորա-բաբելացիների հետ. կրօնը, լեզուն, վաճառականութիւնը և քաղաքական դրութիւնն իբրև միջոց այդ հաղորդակցութեան. հայոց հին այբուբենի տառերը վերցուած են փիւնիկեան այբուբենից։ — Յաւելուած. Ա. Թէ ո՞ր թուին տեղի ունեցաւ հայոց «Գրի գիւտ»ն։ — Բ. Թէ ո՞րտեղ տեղի ունեցաւ «Գրի գիւտ»ը։ — Գ. Հայոց գիրը և Պրոֆ. Ֆրիդ. Միւլլեր։ — Դ. Հայր Բ. Սարգսեանը և Հայոց գիրը։ — Ե. Մի քանի խօսք Վրաց և Աղուանից Այբուբենի մասին։ — Զ. Թէ ինչ պաշտօններ վարեց սուրբ Մեսրոպը։ — Է. Հայոց Այբուբենի տեսակները։

Քննադ. Հանդէս Ամսօրեայ 1893, էջ 88, 266, 338։ – Մուրճ 1892, թ. 12։ – Տարազ 1892, թ. 48, և 1893, թ. 1–5։

— Գերմանիայի մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնների գործունէութիւնը և հայ ուսանողները։ Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի, 1893. 8°, 120 էջ։

Քննադ. Արձագանք 1893, թ. 139։

— Ներսիսեան Հոգեւոր Դպրոցի սաների առաջին դպրոցական ճանապարհորդութիւնը յաւելուածով։ Տփխիս, տպ. Մ. Շարաձէի, 1894. 8°, 128 էջ։

Քննադ. Տարազ 1894, էջ 330։ – Նոր-Դար, թ. 96։

— Երկրորդ դպրոց. ճանապարհորդութիւնը։ Արտատպած «Գրականական և պատմական Հանդիսից»։ Մոսկւա, տպ. Ք. Բարխուդարեանի, 1895. 8°, 41 էջ։

Քննադ. Մուրճ 1895, թ. 1 (Յ. Տ. Միրաք.)։

— Համառօտ տրամաբանութիւն. ձեռնարկ

հայ ուսուցիչների և թեմական դպրանոցների վերջին դասարանի աշակերտների համար։ Տփխիս, տպ. Մ. Շարաձէի, 1895. 8°, 244 էջ։

— Սանփանինու Պալաստնեան (մի քանի խօսք նրա կեանքի և գրականական ուղղութեան մասին). (Լումայէն)։ Թիֆլիզ, տպ. Մ. Շարաձէի և ընկ., 1896. 8°, 33 էջ։

— Աշակերտի յուշատետրը. հատուած առաջին։ Թիֆլիս, Արագ. տպ. Մն. Մարտիրոսեանցի, 1897. 8°, 57 էջ։

— Սանահին. (արտատպ. «Լումայ» հանդիսից)։ Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի, 1901. 8°, 48 էջ։

— Զգացմունքների աշխարհ (Խ. Աբովեանի երկերի առթիւ)։ Արտատպած Լումայ հանդիսից։ Տփխիս, տպ. Մ. Շարաձէի և ընկ., 1898. մեծ 8°, 46 էջ։

Քննադ. Հանդէս Ամսօրեայ 1898, թ. 7։

— Իմ օրագիրը. (արտատպ. «Լումայ» հանդիսից)։ Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի, 1901. 8°, 48 էջ։

— Ծաղկոց (մանկական պարտէզ)։ Թիֆլիս, նոյն տպագր. 8°, 23 էջ։

— Կին վիպագիր Ե. Սպիրի. (Արտատպ. Լումայ հանդիսից)։ Թիֆլիս, տպ. Տ. Ռօտինեանցի, 1901. 8°, 23 էջ։

— 1500 տարի առաջ (404-1904) Հայոց տառերի գիւտը։ Տփխիս, Արագատիպ Ա. Քուլթաթելաձէի, 1904. 16°, 64 էջ։

Յառաջաբանը կ'ըսէ. «Հայոց այբուբենի գիւտը, որ տեղի ունեցաւ հինգերորդ դարի հէնց սկզբին, մեր պատմագիրների և բանասէրների ուշադրութեան առարկայ է եղել միշտ, սակայն երկար ժամանակ անորոշ էր մնացել տառերի գիւտի խնդրական տարեթիւը։

Անցեալ դարում առհասարակ ամէնքն ընդունում էին, հետեւելով Չամչեանին, որ տառերի գիւտը տեղի է ունեցել 406 թուին։

1892 թ. տպագրուած մեր ընդարձակ աշխատութեան մէջ – «Հայոց գիրը» – պատմական փաստերով մանրամասն ապացուցեցինք, որ հայոց այբուբենի գիւտը տեղի պէտք է ունեցած լինի 404 թուին։ Հայ բանասիրութիւնը համոզեցուցիչ համարելով մեր ապացոյցները, ընդունեց, որ ս. Մեսրոպը մեր այբուբենը կազմել է 404 թ. և այդ հիման վրայ ներկայ 1904 թ. համարւում է հայոց տառերի գիւտի հազար հինգհարիւրամեայ տարեդարձը։

Այս, հայ գրականութեան համար նշանաւոր, տարեդարձի առթիւ հրատարակում ենք այս գրքոյկը, որ պարունակում է մի համառօտ ակնարկ գրի ու գրի տեսակների մասին ընդհանրապէս և հայոց այբուբենի գիւտի պատմութիւնը՝ հիւսուած մեր պատմագիրների տուածներից։

Բանասիրութեանը սրանով մենք ոչինչ նոր բան չենք տալիս, որովհետեւ այս բոլորը պարունակւում է արդէն մեր «Հայոց գիրը» աշխատութեան մէջ. մեր նպատակն է ընդհանրութեանը մատչելի անել նիւթը, որովհետեւ «Հայոց գիրը» իբրեւ գիտական մեթօդով մշակուած մի մենագրութիւն, մատչելի չէ ժողովրդին»։

Քննադ. Բազմավէպ 1904, թ. 6։

— «Գողթայ վանք կամ Նոր Գետիկ» (Մխիթ. Գոշի կենսագրութեամբ). Ազգագր. Հանդէս 1903, Ժ գիրք, 5-38։

— «Ժան-Ժակ Ռուսսօ և իւր էմիլը». Լումայ 1903, թ. 1, էջ 102–122։

— «Կրօնի ուսուցումն». Արարատ 1889, 335, 405։

— «Գէորգ Բարխուդարեան». Լումայ 1901, թ. 1, 2, 3, 5։

Թարգմ. ԵՕԿԱՅԻ (Մ.) — ԹԱՐԽԱՆՈՎ (Ի. Ր.) — ՀՈՒՔՍԼԷՅ. — ՆԱՈՒՄԱՆ (Դր.) — ՊԵՍՏԱԼՈՑՑԻ. — ՌՈՒՍՕ (Ժ. Ժ.) — ՍՊԻՐԻ (Ե.) — ՐԱՏՑԷԼ (Պ.)։

Ի՞նչն է արդեօք Լօրդը։

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (Մաղ.) թարգմ. — Տես փայտեայ խաչը։

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (Մկրտիչ). — «Շարականախօսութիւն». Լոյս 1906, էջ 37, 236։

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (Յ. = Թլկատինցի). — «Գեղի նամակներս». Բիւրակն 1899, էջ 1։ – Թղթակից Արեւ. Մամուլի 1901։ – «Պատկերն տղան», անդ, 1905, էջ 34, եւն։

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (Նունէ = Մելեան) թարգմ. — Տես ԱԻԵՆԱՐԻՈՍ. — ՎԱՐՍԵՆԻԿ։

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ (Ս.) — Հատտրակուրեան դատաստանին. (Պետերբուրգից ուղարկուած երկու թղթակցութիւնների առիթով ստիպողական բացատրութիւններ)։ Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1887. 4°, 63 էջ։

— Նուէր հայ գինուորներին, բանաստեղծութիւն։ Տփխիս, տպ. Մ. Մարտիրոսեանց, 1888?

Թարգմ. — Տես ԳԱՐՇԻՆ (Վ. Մ.)։

Յաւելուած և քննութիւն ցուցակի տուպականն... արձանագրութեանց, եւն. — Տես ԲԱՍՄԱՋԵԱՆ (Կ. Յ.)։

Յաւելուած ի «Մեղու» թիւ 234 մարտ 7։ Կ. Պոլիս, 1864. 156 էջ?

Յաւելուած ի պատմութիւն վերադարձի, եւն. — Տես Վերադարձ։

Յաւերժահարսը. — Տես ՊՈՒՇԿԻՆ։

Յաւիտենական առածք. — Տես ԼԻԳՈՒՈՐԻ (Ս. Ա.)։

Յաւիտենական գրոյց. — Տես ԱՂԱՆՈՒՐ (Վ.) Յաւելուած։

Յաւիտենական կեանք. — Տես ՆԱՎԻԼ (Ե.)։

Յաւիտենական հանգիստ սրբոց։ Կ. Պոլիս, ի տպ. ի Յ. Փափազեան, 1859. 6°, 467 էջ։

Յաւիտենական ճշմարտութիւնք. – Տես Ճշմարիտ դարձ։

Յափշտակութիւն հանդէպ Մօտա-Պուշնուշի. — Տես ՍԱՐԳԻՍԵԱՆ (Հ. Բ.)։

Յեղափոխական կեանքից։ Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան, 1893. 21 էջ։

Յեղափոխականներ. կենսագրութիւն Վ. Գօլօշեանի և Յ. Ագրիպասեանի։ Հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1905?

Յետին ժամք կայսերն Նիկողայոսի. — Տես ՄՍԵՐԵԱՆՑ (Մ. Գ.)։

Յետին վճռին. — Տես ՍԱՆՏՈՅ (Ժ.)։

Յետս կոչումն Հ. Եղիշէ Այտնեանեան հայ քահանայի. տուեալ ի Հռոմ յ9 մայիսի, 1873։ Կ. Պօլիս, 1873?

Յերկրէ ի յուսին. — Տես ՎԷՌՆԷ (Ժ.)։

Յետնի ընկերները. 8°, 791 էջ։

1850ի տասնները՝ լրագրի մը թերթօն կը թուի եղած ըլլալ. կը պակսի ամէն ինչ։

Յիմար յիմնապետը. — Տես ԼԻՄՈՆՃԵԱՆ (Ք.)։

Յիշատակագիրներ արեւելեան. — Տես Արեւելեան — ։

Յիշատակագիրք եկեղեցւոյ. — Տես ԳԱԲՐԻԷԼ ԴՊԻՐ. Յաւելուած։

Յիշատակ Եր. Տեառն Կոմիտասայ. — Տես ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆՑ (Եր. Կ.)։

Յիշատակ Միք. փոքր. փաշայի. - Տես ԹՈՐՈՍԵԱՆ (Հ. Յ.)։

Յիշատակ... Ջուլեդ աստեղտուհւոյ. — Տես ՋՈԽՆԳ (Ա.)։

Յիշատակարան. — Տես Ս.։

Յիշատակարան աղետից. — Տես ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑԻ։

Յիշատակարան բազմերախտ հոգաբարձու Լազ. ճեմ.ի. — Տես Լազարեան ճեմարան։

— Թովման Մեծոփեցւ. — Տես ԹՈՎՄԱՍ ՄԵԾՈՓԵՑԻ։

— կենաց և գործոց Լազարեան Տոհմի. — Տես ՄՍԵՐԵԱՆՑ (Մ.)։

— մեռեալ տանից. - Տես ԴՕՍՏՕԵՒՍԿԻ (Ֆ.)։

— Մխիթ. Միաբ. երկհարիւրամեակին. — Տես Մխիթարեանք Վենետիկոյ, էջ 2025։

Յիշատակարան քահանայական վարուց, կամ մեծի հովուապետի Յիսուսի Քրիստոսի խրատք ոգեշահք առ հովիւս եկեղեցւոյ իւրոյ և առ այլ քահանայս. Թարգմանեաց Հ. Սրապիոն Էմինեան ի Մխիթ. ուխտէն։ Ի Վիէննա, ի վանս Պաշտպան Ս. Աստուածածնի, 1852. 6°, 358 էջ։

Յիշատակարանք ազգային արդեան պատմութեան. — Տես ՈՍԿԵՐՉԵԱՆՑ (Յ. Մ.)։

— Գալլիական պատերազմին. — Տես ԿԵՍԱՐ (Յ.)։

Յիշատակարանք հայկ. հին ձեռագրաց. — Տես Հայաստան 1847, թ. 12-65. - 1848, թ. 27-80. - 1851, թ. 51, 3-55, 5-57, 8-60, 21-73, 34-86, 41-93. - 1852, թ. 46-98, 48-100, 49-101։ - Արարատ, Յիշատակարան թագաւորական ճաշոցին. 1870, 353։ - Յիշատակ. Աւետարանի եղելոյ ի վանս Թովմայի Առաքելոյ յԱգուլիս ՌՃԺ (1661). 1876, էջ 14։ - Յիշատակ. Սահփանոսի վերնագիր ընդօրինակութեան վասն վարուց եր. Մաշտոցի. 17։ - Յիշատակ. Սարգսի. հանգիստի թագ. մահ հանգ. Ներսէս Է. Աշտարակեցւոյ. 206։ - Յիշատ. (ՉԽԱ 1292). 412։ - Յիշատ. ՋԾԳ (1504) Աւետարանի ի Կաղկեթա. 410։ - Յիշատ. Սաղմոսարանի վանից Աւետարանի (1449 թուին). Արձուի Վասպուրական 1859, էջ 180։ - Յիշատ. (1296 թուին Քրիստոսի) Եսայեայ մեկնութեան. էջ 123։ - Յիշատ. Վարագայ վանից Հարանց վարուց. 126։ - Յիշատ. Աւետարանին Կարմրաւորաց վանից (1302). 154։ - Յիշատ. Շուշանայ գեղի Աւետարանի (1560). 155։ - Յիշատ. Շահպաղի գեղ Մաշտոցի (1697). 213։ - Յիշատակարան Յուն հարիւր հայոց թուականն. Արձագանք 1884, էջ 177։ - Յիշատ. Աւետարանի գրեալ յամի Տեառն 1393. Անդ. 1885, էջ 42, եւն, եւն։ - Տես եւս՝ Ճաշոց, Մաշտոց, եւն։ - Եւս՝ Ցուցակ հայերէն ձեռագրաց։

Յիշատակարանք վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և այլ տաղք յունարէն և հայերէն, հրտ. հանդերձ ներածութեամբ Ա. Փափադոպուլոս-Կերամևս. Թարգմ. ի ռուսերէն Գեսունի և Ն. Մառ. 1892, XII + 298 էջ?

Յիշատակաց ժողիկներ. — Տես ՈՐԲԵՐԵԱՆ (Ռ.)։

Յիշատակներ. Գ. Ն.: Կ. Պոլիս, 1883?

Յիշատակք... ի վերայ կայսրուհեան Չինաց. — Տես ՔՕՄԹԵԱՆ (Հ. Լ.)։

Յիշատակք Սիպերիականի մը. - Տես ԿԼԱՍՔՕ (Ժ.)։

Յիշողութիւններ Վարդանանց տօնի առթիւ. — Տես ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ (Ս.)։

Յիմնակ առակ. — Տես ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ (Վ. Վ.)։

« Յիմնակաց պանք ». Ճռաքաղ 1860, էջ 101։

Յիսուս որդի. — Տես ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ։

Յիսուս Քրիստոսի մկրտութիւնը. — Տես ՆԱԶԱՐԵԱՆ (Յ.)։

Յիսուսեան գալլերիէ. ժողովածոյ 10 փոքր պատկերներու։ Տփխիս, տպ. « Արօր », (ընծայ Աղբիւրի)?

Յիսուսեանք. « Գաղտնի հրահանգ Յիսուսեանց » (Մօնիքա Սէքրէտա Սօսիէտատիս Յէսու). Թարգմ. Ֆրանս. Խ. Յ. Կիմիշեան. Մեղու 1861, թ. 144-46։

Յիսուսի նայիր: Կ. Պոլիս, ի տպ. ի Ա. Յակոբ Պօյաճեան, 1892. 13 էջ։

Յիսուսի սիրոյն համար: Կ. Պոլիս, տպագր. Ա. Յ. Պօյաճեան, 1894. 14 էջ։

Յիսուսի վարուցը համառօտ պատմութիւնը, գաղղիերէնէն թարգմանեալ (ի Ն. Մ. Զօրաեան): Ի Կ. Պոլիս, ի տպ. Յովհաննու Միւհէնտիսեան, 1849. 8°, 70 էջ։

Յիսուսի Քրիստոսի կեանքը. — Տես ՖԱՐՐԱՐ. — Եւս՝ Վարք, պատմութիւն Յիսուսի։

Յիսուսի վերջին շաբաթ. — Տես ԽՐԻՄԵԱՆ (Մ. Կաթ.)։

Յղի ու ծննդական կնոջ առողջապահութիւնը. — Տես ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ (Բժ. Գ.)։

Յո՞ երթաս. — Տես ՍԵՆԿԵՒԻՉ (Հ.)։

Յորայ գիրք տաղաչափեալ. — Տես ՀԻՒՐՄԻՒԶ (Ե. Արք.)։

Յոբի գիրքը. Մանզումէ 1904, թ. 992։ – Բիւրակն 1890, էջ 323, 354. – 1891, էջ 35. – 1904, թ. 37, 39, 40։ – Յոյս 1874, էջ 329։ – Բազմավէպ 1874, էջ 29։ – Յոբ երանելին. (Աստուածաշնչական լեգէնտա). Թրգմ. Գ. Բարսեղեան. Աղբիւր 1899, էջ 126–134։

Յոբայ արդարոյն (գեղերական արկածից). – Տես ԱՐԱՐԱՏԵԱՆ (Ա. Վ.)։

Յոբելեան. — Տես ՅՈՎՆԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈԽԱԹԵՑԻ. — ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ։

Յոբելեանի տարեդարձ. — Տես ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ (Մ.)։

«Յոբինեանս պատնդապես». Երեւակ 1864, 177, 193, 201։

Յոգնադիմի Աստուածաբանական, բարոյական, և Քաղաքական իրողութեանց սահմանք։ Երկասիրութեամբ մեղուաջան արանց ի մի վայր՝ ըստ կարգի Այբուբենիցն, հաւաքեցեալք։ Ի լոյս ածեալ Տպիւք, և Արդեամբք Առաքելաշաւիղ Թօմայ Նահմեդ վարդապետի Վանանդեցւոյ։ Որ հրահանգից վարժարանի. – չէ տակաւին ներկուռ բանի։ – կամ՝ ի հանդէս փիլոսոփի. – զանձն իմաստիւք կըրթեալ չունի։ – Ձայս սահմանաց թէ միտս ունի. – մեծի ուսման ժառանգ լինի։ Յ'ամի Տեառն. 1704։ Յ'Ամստէլդամ։

Ճակատէն վերջ երկրորդ թղթին մէջ «Նախատեղեկութիւն առ Սահմանս», ցէջն 5, ապա պատկեր մը երեք առաքինութեանց իբր օրինակ, և դիմացէն էջ 1 (նախընթացները առանց թուահամարի էին) կը սկսի գիրքը, և կը հասնի յէջն 58, որ է վերջ գրոցն, ուր գրուած է հայագիր. «Ֆինիս կորօնատ օպուս». (փոխանակ պսակէ զգործն)։

Գիրքը միջակ 8°, սեւաթուղթ, բաց մեծի մասին միջակագիր. սկիզբը խոշորագիր, աւարտը մանրագիր, հասարակ տպագրութիւն։

«Յոյս յարութեան» ոտն. Հայրենիք 1892, թ. 177։

«Յոնիա կամ Որդի» վիպ. Արձագանք 1885, էջ 40։

«Յոպպէ». — Սիոն 1866, էջ 158. – 1869, էջ 19, 160։

ՅՈՎԱԿԻՄ ԱՐԱՅԻՈՅ. — «Նուաբեկութեան». (քերթ.) Թարգմ. Հ. Ա. Ղազիկեան. Բազմավէպ 1896, էջ 527։

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ (Գ. Քահանայ). — Պարտաճանաչութիւն կամ Ճանաչումն Պարտուց. հանդերձ Ս. Գրոց վկայութեամբ։ Երկասիրեաց Գ. Քհ. Յ. Յ. Սեբաստացի։ Կ. Պոլիս, տպագր. Մարգարեան, 1887. 8°, 55 էջ։

— (Գ. Մ.) Թարգմ. — Տես Փերտինանդոս և Վալերիա։

— (Ղ.) – Թալերան։ Կ. Պոլիս, տպագր. Ա. Ն. Շահնազարեան, 1870. 8°, 93 էջ։

«Գաղղիացի նշանաւոր դեսպանագիտին վարուց վրայ տեսութիւն մ'է, միանգամայն քաղաքական և վարչական խնդրոց վրայ խորհրդածութիւններ պարունակող գործ մը, որոյ ընթերցումն բաւ մեզ անհրաժեշտ է լրագիր կարդացողներու, ինչպէս նաև քաղաքականութեան հետամուտ եղողներու». Մասիս 1871, թ. 1038։

— Մէթթէրնիխ, (մեծանուն քաղաքագէտ Աւստրիոյ)։ Կ. Պոլիս, տպ. Արամեան, 1871. 8°, 86 էջ։

— Քավուր։ Կ. Պոլիս, տպագր. Յ. Գավաֆեան, 1872. 8°, 93 էջ։

«Իտալիոյ միութեան հիմնադիր Քավուր կոմսին քաղաքականութեանը վրայ տեսութիւն մ'է ընտիր ոճով և նուրբ խորհրդածութիւններով գրուած։ Հեղինակին այս երրորդ գործը որ ամեն նկատմամբ առաջիններէն վար չ'մնար, պատմութեան հետամուտ անձանց գրասեղաններուն զարդարելու արժանի է». Մասիս 1872, թ. 1217։

Քննադ. Մասիս 1872, թ. 1228։

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ (Մ. Խ.) — Արկածք տեառն Յովհաննու Խաչիկեան, խաչակիր աւագ քահանայի և ասպետի։ Կալկաթա, 1863?

Հմմտ. Արշալոյս Արարատեան 1863, թ. 693։

— (Մ. Ս. Մ.) Յոյսի մէջ յօդուածներ ունի. 1865, էջ 209. – 1866, 521, 567։

— (Մկրտ. Եպիսկ.) Արարատ 1869 (70), էջ 230։

— (Յ.) Թարգմ. — Տես ԺԻԼՊԷՐ։

ՅՈՎԱՍԱՓԵԱՆՑ (Ե.) — «Դարատաղ». Լումայ 1904, թ. 5։

Յովասափու տաղ. — Տես Տօնար։

Յովասափու, եւն. — Տես ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆՑ (Մ. Վ.)։

ՅՈՎԲ. — Տես ՅՈԲ։

ՅՈՎՀԱՆԵԵԱՆ (Զ. Յ.) — Տես Հարիւր բարոյական առածներ։

Յովհաննա Բաբուշկինի. – Տես ՌՕՒՏԷՍ (Է.)։

Յովհաննա Տ'Արք. — Տես ՇԻԼԼԷՐ. – ՏԷՐ-ՏԷՐԵԱՆ (Հ. Ղ.)։

ՅՈՎՀԱՆ. ՅՈՀԱՆ. ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՅՈՀԱՆ.։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ. Սիոն 1869, էջ 212, 251. – 1870, 17, 36, 266։

Յովհաննէս Ամիրայ Գէորգեան. Ազգասէր 1846, Գ., էջ 32։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆԵՑԻ. — Տես ԳՈՎՐԻԿԵԱՆ (Հ. Գ.)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆԿԻՒՐԱՑԻ = Ճիվանի Մօլինոյ. – Հրատ. տես ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, «Յիսուս Որդի», Ա. տիպ. (կարդա Յիշատակարանը). — Սաղմոս. ՌՂԱ (= 1642)։

Ալիշան Հայբուսակին մէջ՝ (էջ 416) կը խօսի իր մասին՝ մայծ բանին տակ, ուր կ'ըսէ թէ թարգմանած ըլլայ Որտելիոսի աշխարհագրական մէկ գիրքը։ – Տես եւս «Մատենագրութեան» էջ 236-7։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՇՈՒԿ. Ազգասէր 1847, էջ 230։

Յովհաննէս Աստուծոյ. — Տես ՅՈՎՆԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԶՐՈՒՄՑԻ. — Տես ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐՆԵՑԻ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՃԻՇԵՑԻ տպնակեր. – Մեկնութիւն պատարագի. Ա. տիպ, ի Կ. Պոլիս 1717։ Ճակատն է. Մաղթանք Ջեռնուրբեան Առ Կոյսն Երանուհի։

Իսկականի լուսոյն ծընօղ.
Միոյ փըրկչին և տեառն բարձօղ:
Արարածոց խնամչին տածօղ:
Բամից էից տեառն յանձանձօղ:
Տեսեալ մարմնով էին գըրկօղ:
Իմաստութեան վերնոյն տարօղ:
Րենի որդւոյն սընուցանօղ:
Ուրախութեամբ վեր ընդունօղ:
Սրբուհի կոյս օգնեա մեզ:
Է՛ տիրուհի լե՛ր ընդ մեզ:

Յէջն 2 «Բան հաւատոյ, առ Աստուածածնէր ընթերձօղս» Մարտիրոս տաղագրողէն, ուր ի վերջոյ կ'ըսուի. «... ի փայելումն Աստուածածնէր Անձանցդ ձերոց՝ կամեցայ ի գործ Տրպագրութեան ածել զսա. ի Հայրապետութեան տեառն՝ Աստուածատուրոյ Աստուածաբան Կաթուղիկոսի ամենայն հայոց, և նորին խոկ հրամանաւն. զոր տէրն ամենայնի՝ ամենազօր աջովն իւրով հովանացեալ, ի հաստատութեան, և յաւուրս երկարաւուրս պահեսցէ Ամէն։ Եւ ի Պատրիարքութեան Աստուածակոխ և Լուսազարդ քաղաքի Լուսաւորչաշնորհ մեծի աթոռոյ Յակոբայ եպոր տեառն երանելւոյ, Գրիգորի քաղցրաբարոյ Վարդապետի և արհի Եպիսկոպոսի բաղձելւոյ։ Եւ յառաջնորդութեան Կոստանդնուպօլսոյ արքայանիստ քաղաքիս, Ովհաննէսի իմաստնագոյն Վարդապետի բաղձելւոյ տեառն մեծի Գաւազանի։ Զորս միշտ ի պարծանս մեր՝ ի հաստատութեան պահեսցէ Աստուածն ամենայնի. Որում փառք յաւի»։

Նոյն յառաջաբանէն վերջ «Աղերս մաղթանաց առ խաչեալն աստուած» նոյն Մարտիրոս դպրէն, որ գիրքը տաղագրողին որդին է. յէջն 14, գրած է թուականը խրթին ոտանաւորով, ուր ի վերջոյ կ'ըսէ. «Եւ պարզապէս ՌՃԿԶ» (= 1166-1717)։ Ապա յէջն 15 «Խրատ Սրբոյ Խորհրդոյս... առ Քահանայս» Արճիշեցիէն՝ յէջն 19։ Յէջն 20 պատկեր մը ձայնաւոր պատարագի՝ չորս տող ոտանաւորով նոյն Մարտիրոսէն, և դիմացէն յէջն 21 կը սկսի բուն գիրքը և կը հասնի յէջն 274, որ է վերջ մեկնութեան. 275-280 հետևեալ յիշատակարանը.

«Յիշատակարան և Եղերաութին կարճառօտ մեկնութեանս, Աստուածաղէն տաղին Մատենիս, ի չարաբարդողէ առ Ընթացօղս Սորին։ Շնորհի և Ողորմութեամբ ամենատուրբ Երրորդութեանն և Միոյ աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ և Աստուածընկալ աղօթիւք սրբոցն ամենեցուն, Եղև գրաւ Մատենիս տպեցման. այսինքն, մեկնութեանս, Այսմ հաւատոյ. Զհնման կըսակի. Աստուածոյն փրկչի. և Կենարարի։ Յորում արդարև. Դատայքս բաստրև. Եղաք ո՛չ թեթև. Աշխատ մինչ յայս ձեւ։ Քանզի միշտ ի բարւոքն նկատեալ սորին կատարելութիւն ատուածով, այսքան հազիւ կարողացաք տեսակաւորել։ Եւ այս՝ վասն ո՛չ ուրեք գտանելոյ մեր միւս այլ կատարելագոյն օրինակ։ Բայց թէպէտ լուաք եթէ ի Սուրբ-գէորգայ եկեղեցւոջ լեալ առ հեղահողի տէր Մովսէս քահանայն զսանի մեկնութիւն իմն յաճախ Սրբոյ խորհրդոյս, խնդրեցաք աղերսանօք տալ մեզ առ ի գրակատութեանն սորա լինել ըդթերութիւն։ Իսկ նորա ոչ ինչ զմտարեալ ի խնդիրն, այլ և սիրով առ այն յօժ բախացեալ, շնորհեաց մեզ։ Զորոյ երախտեացն զփոխարէն բատ արժանւոյն հատուցանել՝ միայն առ աստուած ապաւինեալ լեւմք. Եւ մեր առեալ զայն և որոնեալ, գտաք ի տեղիս տեղիս մեկնութիւն ինչ քարոզից. և քահանայական աղօթից Սրբոյ խորհրդոյս՝ որք ո՛չ գոյին ի մերս օրինակ։ Զի էր որ ի Ներսիսէ Լամբրոնացւոյ էր արարեալ. և էր որ ի Խոսրովու անձևանձու Եպիսկոպոսէ. զորս հանեալ եդաք ի մէջ սորբ ի պատշաճաւոր տեղւ։ Բայց զմեկնութիւն զայս ինչ աղօթից. այսինքն, Ըղհայր սուրբոյն։ և Զավկիարանի ատացեալ զգոհանալին։ և Զայլ երից համառօտ զոհանալիցն որք առ գէմս երից անձանց սուրբ Երրորդութեանն, ո՛չ գտաք։ Ո՛չ գիտելով եթէ որոց ի ընէ ո՛չ է արարեալ մեկնութիւն իւր սակս պարզելոյ բանին, թէ ի գտեցեալ օրինակն ևս ո՛չ գոյին գրեցեալք։ Արդ՝ վասն որոյ՝ աղաչեմք աղերսանօք զձերդ միահամուռ եղբայրասիրութիւն, առ ի ներել մերս տկարութեան. և սիրով ընդունել զայն Մատենան՝ զառիթ՝ համայնից փրկութեան։ Զի Սա է մեզ զուռն երկնից, և ճանապարհ անկէան երանութեան։ Սա զանձ անգին. Սա խմատ հոգևոր. Սա բերկրութիւն անբաւ։

Եւ որք առհանդիպիքդ սոյն քրիստոսաւանդման ծաղկոցիս բառանալով և օրինակելով, զՍուրբ քաղցրահոտ ծաղիկս յիմանալի քիմս ձեր հոտոտեցեալ, յիշեցէք նախ զ'ի վերոյ յիշեցեալ զպատուաւոր քահանայն զտէր Մովսէսն. որ եղև արդարև ձեռնտու մեզ. և առիթ լինելոյ Սորայն թերութեան։ Ընդ նմին յիշեցէ՛ք և զանպիտան՝ զչնչին և զբազմամեղ Սարգիս գաղօղ Մատենիս. և զառ հասարակ գհանգուցեալս ի քրիստոս, որ բաղձամամբ և յո՛գն ջանիւ կամեցայ զսա՛ ածել և ի լոյս ածել։ Այլ և յիշեցէ՛ք զմըրապարկ և զցըրւօղ զրոյս և զբազմաչխատ մշակն իմ զՏէվլէթն։ Ընդ նմա՛ և զկեսարացի Տիրացու զՊետրոսն՝ զԵրախտաւորն զործարանիս։

Նաև յաղագ վերջացէս յիշեցէ՛ք և զչարաբարդող զրոյս և ըղըրբաղրօղ Մատենիս անհանգիստ աշխատանօք զործեալն իմ զՄարտիրոսն՝ զանպիտան ծառայն քրիստոսի. և զհօղն նէր նէրբանում ընտրիցն հաւայնից։ Եւ զնորին աշխատակիցն՝ ըղ-Հայրն իմ բաս հոգւոյ զկողոնիայցի տիրացու ըղ-Յակոբն։ Եւ դուք՝ որք Յիշէքդ զմեզ միով Հայր մերիւ, Յիշեալ լիջիք Յաստուծոյ Բարձրելոյն Ամէն։

Արդ՝ եղերեցաւ տպումն գրքոյս. ի թւականի. հազարերորդի. հարիւրերորդի. վեշտասներորդի. կոյս թիւերորդի։ Իսկ եթէ ծածկի. ո՛յապէս ծանիցի. և գիր իմացի. այսինքն, որ յայտնի. եօթնեակ առ ձայնի։ Իսկ թէ օր խնդրի. ամսոյն թէ քանի. բառ հայոց յաշկի. ի տառն և հընգի։ Եւ բառ ամսարի. հօմեանն սեսի. յամսոյն յաւելի. յօր քառերորդի։ Այլ և ի տրէի. յօր վեցերորդի. այս բառ ամսարի. բառեփաննոսի»։

Գիրքը 8^0 հատորակ, միջակագիր առանց նօտրի, բայց բոլոր խորագիրները աւելի մանր են քան միւսները. երեսները չակերտափակ, սևաթուղթ. ապաւաղ և անղիտան տպագրութիւն։

= Բ տիպ, ի Կ. Պոլիս, 1799.

Մեկնութիւն աղօթից խորհրդոյ Սրբոյ Պատարագին. Արտահանեալ ի մեկնութեանց խոսրվու անձևացեաց եպիսկոպոսի և Ներսիսի Լամբրոնացւոյ վերատեսչին տարսոնի, կարճելով և պարզաբանելով. ի Յօհաննու Արճիշեցւոյ։ Տպագրեցեալ ի Հայրապետութեան Լուսակառոյց Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Եւ սրբոյ Երուսաղէմի Տեառն Պետրոսի Շնորհափայլ Պատրիարգի։ Եւ Կոստանդնուպօլսոյ Տեառն Դանիէլի աստուածաբան Վարդապետի և արժանաժառանգ Պատրիարգի։ Որոյ Հրամանաւն իսկ ի Կոստանդնուպօլիս։ Յամի Տեառն 1799։ Արդեամբք ի յանդրիանուպօլիս բնակեալ արեւելցի որ և ընիկ տեղեաւ բասմեցի իշխան-

ազնեայ մահտեսի բինիաթի որդի մահտեսի Գէորգ բարեպաշտօն Ամիրային. ի յիշատակ իւրն և իւրայնոցն. Նախնեացն և որդւոցն և թոռանցն. կենդանեացն և ննջեցելոցն և ամենայն զարմից արեանառու մերձաւորաց իւրոց։

Այն տպագրութեան ընագիրը օրինակուած է նախընթացէն. ի բաց թողլով Մարտիրոս դպրէն եղած առաջին ու վերջին յաւելուածները։ Որով յէջն 3 գրուած է Արճիշեցւոյն յառաջաբանը ցէջն 7. յէջն 8 Էջմիածնի փայտափոր պատկերը, և յէջն 9 կը սկսի մեկնութիւնը, ցէջն 214. 215–216՝

« Յիշատակարան տպագրչի. առնի Զրի բաշխեցեալ սուրբ Մատենիս։ Շնորհիւ և ողորմութեամբ ամենասուրբ երրորդութեանն և միոյ աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յանկ եղեալ աւարտեցաւ տպումն սորոյ մեկնութեանս։ Յամի տեառն 1799. յօգոստոսի 18։ Ի հայրապետութեան աստուածակառոյց և Հիաճրաշ Աթոռոյ սրբոյ Էջմիածնի՝ Տեառն Ղուկասու սրբազան Կաթուղիկոսի և միապետական Քահանայապետի ամենայն հայոց։ Եւ սրբոյ Երուսաղեմի՝ Տեառն Պետրոսի Շնորհաբաշխ Պատրիարգի։ Եւ Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Դանիէլի աստուածաբան Վարդապետի և արժանաժառանգ Պատրիարգի։ Որոյ Հրամանաւն իսկ։ Ի Կոստանդնուպօլիս։ Ընդ հովանեաւ սուրբ Հրեշտակապետ Եկեղեցւոյ. ի թաղն Այվանսէրայ։

Արդեամբք և ծախիւք. Արեւելցի որ և զիւղի բնակեցի Մահտեսի Պինեաթի որդի Մահտեսի Գէորգին և Կողակցւոյն իւրոյ կին խաթունին. Սակս Զրի բաշխելոյ ի յիշատակ հոգւոց հնոց և նորոց ննջեցելոց իւրեանց. այսինքն, մեծ Պապերացն իւրեանց, Եղիկիէլին, կիրակոսին, Մինասին, Յօհաննին։ և սորա եղբարցն՝ Հայրապետին և մելքիսեթին։ Մահտեսի Պինեաթին. հօր եղբարցն՝ մահտեսի կիրակոսին, Առելին և կարապետին։ Քերցն՝ մահտեսի խաթունին, Նուրխաթունին և Մարիամին։ Եղբարցն իւրոց՝ Յակոբին, Սարգսին, Քէրոսին և Հայրապետին. մահտեսի Նազարին մահտեսի Թումանին և մահտեսի Պօղոսին։ իւրն աներ Յովսէփին և զօքանչ աննային։ որդւոյն իւրոյ Յօհաննէսին, աղջկանն իւրոյ Մարգարտին և Թոռինն իւրոյ Համբարձումին։ և կենդանեացն. նախագրեցեալ մահտեսի Գէորգին և կողակցւոյն իւրոյ կին խաթունին Որդւոյ իւրոյ մահտեսի Աւէտիսին. և փեսային իւրոյ Աւրահամին, և աղջկանն իւրոյ Հռիփսիմէ խաթունին։ հօր եղբօր որդւոյն իւրոյ մահտեսի Յարութիւնին և Գալուստին և Զաքարին։ և Թոռանցն՝ մահտեսի խաչատուրին մահտեսի Յովակիմին, Յովսէփին, Մկրտումին Յօհաննէսին և ամենայն ընտանեաց և բարեկամաց ի ոգւոյ և ի յաւուրն երկնահրաւէր Քահանայից. համեստաբարոյ սարկաւագաց և իմաստախոհ Դպրաց։ Արդ՝ ո՜վ մեղաքաւիչ քահանայք և սրբասնունդ մանկունք եկեղեցւոյ մինչ հանդիպիք Այն աստուածահաճոյ մեկնութեանս՝ յիշեցէք ի մաքուր յաղօթս ձեր զնախագրեցեալ մահտեսի գէորգն և զկին խաթունն. հանդերձ կենդանեօք և ննջեցելովք և ամենայն արեանառու զարմօք իւրեանց. որպէս զի Աղօթիւք ձերովք տացէ տէր աստուած ննջեցելոցն հանգիստ և արքայութիւն և կենդանեացն արեւշատութիւն. և որք յիշէքդ յիշեալ լիջիք ի Յիսուսէ Քրիստոսէ փրկչէն մերմէ Ամէն։

Վերջապէս պաղատիմք առ որս զՄատթէոս նըւաստ մանկավարժս ընդ քեան խմոյ Բրաբիոն նոտարի և ընդ ձեռնատուն աշակերտի մերոյ զրաչար և մելանահար Մանուէլի հանդերձ հօգեւոր և մարմնաւոր ծնողովք մերովք ի Յիսուս Քրիստոս յիշել աղաչեմք »։

Գիրքը 8° հատորակ, միջակագիր բաց ի խորագիրներէն և յիշատակարանին վերջին խօսքերէն, որոնք մանր բոլորգիր են. էջերը զարդափակ, տըպագրութիւնը անհարթ, բայց ընթեռնլագոյն ու մաքուր քան զառաջինն։

= Գ. տիպ, ի կալկաթա, 1830.

Մեկնութիւն աղօթից խորհրդոյ սրբոյ պատարագին Արտահանեալ ի մեկնութեանց խոսրովու՝ Անձեւացեաց եպիսկոպոսի և Ներսեսի Լամբրոնացւոյ՝ վերատեսչին Տարսոնի՝ կարճելով և պարզաբանելով Յովհաննու Արճիշեցւոյ։ Ի լոյս ընծայեաց Պարոն Յովհաննէս Աւդալեանց՝ Անդամ Ասիական Միաբանութեանն Բանգալայ, և զասաուց ի Մարդասիրական ճեմարանին։ Ի Հայրապետութեան Տեառն Տեառն Եփրեմայ՝ Ամենայն Հայոց կաթուղիկոսի։ Ի Գործարանի նորին իսկ ճեմարանին։ Ի կալկաթա, 1830. 8°, 156 էջ։

Ակիզբը հրատարակչէն ուղերձ մը կայ առ Գրիգոր ծայրագոյն վարդապետ Ջուղայու, և յէջն 5 կը սկսի մեկնութիւնը և կ'աւարտի յէջն 156, ուր ի վերջոյ կը ծանուցանէ Աւդալեանց. « Զայս մի ինչ հարկաւոր համարիմ յիշատակել զի ի տպագրութեան մատենիս փոյթ յանձին կալայ բատ ճիշդ կանոնաց յարմարագրութեան զկետադրութիւնն կարգել, ստափ թափո՛ւր էր օրինակն տըպագրեալ ի Կոստանդնուպօլիս յութեւտասներորդում Օգոստոսի յամի տեառն 1799, յորմէ և ի լոյս հանի զայս տպագրութիւն՝ ափսոսալով զի չունէի ի ձեռին զգրչագիր օրինակ ինչ՝ որոյ ընդ տպագրելոյն համեմատութեամբ հնար լինէր զամենայնն ուղիղ տրամադրել. և եթէ պատահէր վրիպակ ինչ գրչի՝ զնոյնն ուղղել։

Երեք հարիւր օրինակք այսր մատենի տպագրեցան, զի նոքօք հնա՛ր լիցի չինջուցանել զծարաւ հոգւոց որոց ի հնդիկս կան միրազնեայք, և որոց ի Ջուղայ բնակին որդիք նորայս Սփիւնի »։

Աղա նոր թուահամարով « Համառօտ պատմութիւն պատճառի ազեցման մատենիս ի Յովհաննէսէ Աւդալեանց », որուն մէջ պատմութիւնը կ'ընէ Մերջան տիկնոջ Սահփաննոսեան՝ տպագրութեան ստատարողին. 1–8 էջ։

Գրուածներ. Ալիշան, « Հայապ. » 298։ – Զարբ. « Հին Դպր. » 767։ – Զամչեան, « Պատ. Հայոց », Գ. 274–5։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԻՋՆԵՑԻ (*Իմաստասէր*). — *Յովհաննու Իմաստասիրի և կաթողիկոսի Հայոց Օձնեցւոյ ճառ Ընդդէմ Երեւութականաց։* Նախ զառաջինն ի լոյս ընծայեալ սովին տպագրութեամբ՝ ըստ հին օրինակին եղելոյ ի մեծ գրատան փարեզու։ Հանդերձ յառաջաբան և հետեւորդ ծանօթութեամբք Հ. Մկրտիչ Վարդապետի Աւգերեան, ի միաբանութենէ ամենապատիւ Տեառն Մխիթարայ մեծի Աբբայի։ Հրամանաւ Գերյարգոյ Տեառն Ստեփաննոսի Աբբայի և Աստուածապատիւ Արհիեպիսկոպոսի։ Ի Հայրապետութեան Տեառն Դաւթի Հայոց կաթողիկոսի։ 1807. ՌՄԾԶ։ Ի Վենէտիկ ի Վանս սրբոյն Ղազարու։

Հրատարակիչը կ'ըսէ ի Յառաջաբանին. «... Այս ճառ ուղղափառական աստուածիմաստ հայրապետիս՝ որում և վկայեն նախնիք մեր, ո՛չ միայն ջադիկէ է զխնահար անդրուխ աղանդաւորաց՝ թըշնամեաց սահմ ժողովոյն քաղկեդոնի, և պրանչելի ապացոյց ողջմտութեան և ուղղափառութեան հեղինակի նորա, այլ և է վերջին ապացոյց և պատ-

կէտ հատուածիւն ցուցակութեանց արդիւնաւորս Տեառն Հ. Միքայէլ վարդապետի Չամչեանց ի կարգի պատմութեան հայոց (հատ. Բ. եր. 387–398, և 571–672). ի քննութիւն անձին և վարդապետութեան առնս մեծի։ Այժմ ծաղկեալ և պտղաբեր եղեւ աշխատասիրութիւն նորա. և որչափ զօրացաւ՝ զոր նա կալաւ՝ կողմն ճշմարտութեան, նոյնչափ և թշնամւոյն պակասեաց գէն խօսպատ։ Մինչ զի առաւելորդ է այլ եւս առել ինչ, բայց միայն տալ զայս գործ ի ձեռս ճշմարտասիրաց, զի վերծանեսցեն և տեսցեն զկայութիւն ճշմարտութեան...

Ի տպագրութեանս զամենայն զգուշութիւն ի գործ արկաք զոյգ ընդ հաւատարմութեան, մինչեւ և զայսպիսի վրիպակս ինչ գրչի (յորոց չէ մարթ զխուսափել զերծ լինել զինչ և իցէ գրչագիր մատեանի՛) ի ծանօթութիւնս անդ նշանակեցաք, զուգիւն եդեալ ի կարգին բառ պահանջելոյ իմաստից։ Այլ ո՛չինչ փոփոխութիւն եղեւ առ ի մէնջ՝ բայց բառ այժմու սովորութեան դնել զատոն օ փոխանակ աւ մասնկան, որով վարին ամենայն հին գրչագիրք, որպէս և օրինակագիրն այսր ճառի. եւս և զթաւանշանան ւ, զոր ո՛չ ի գործ ածեն գրչագիրք։ Զայլ նշանակս հնագրութեան՝ բառ որում և էին, անփոփոխս պահեցաք՝ մինչեւ ցչեչտս անգամ։

Իսկ օրինակ ճառիս առաւ ի մեծ գրատանէ փարիզու՝ յնտիր և ի վաւերական օրինակէ զորգայ, որ զաղափարեալ է զատ ի սկեւռայ անապատն՝ այն է վանք լամբրոնացւոյն, ի մատենէ անտի՝ զոր ի ձեռին ունէին, և յարգեալ զորս խրխանց պահէին սուրբն գրիգոր վկայասէր՝ մեծն և փոքրն, սուրբն ներսէս կլայեցի, սուրբն ներսէս լամբրոնացի, և գրիգոր կաթողիկոս մականուն տղայ, զորոց զվկայութիւնս դիցուք առաջնոր»։

Գիրքը 8°, զ-ե Յառաջաբան, ի-ժ վկայութիւնք նախնեաց, 1-71 ճառը. 71-85 կրկին ցուցակներ։ Ընտիր տպագրութիւն.

Տես ԲԱԲԻԿԵԱՆ (Գէր. Ա.)։

= Բ տիպ, լատիներէն թարգմանութեամբ. — Յովհաննու իմաստասիրի հայոց Կաթողիկոսի Օձնեցւոյ ճառ ընդդէմ երեւութականաց. Թարգմանեալ ի Լատին բարբառ, և Ծանօթութեամբք երկոցունց լեզուաց ի լոյս ընծայեալ՝ աշխատասիրութեամբ Տեառն Հ. Մկրտիչ Վարդապետի Աւգերեան. ՌՄԿԵ։ Ի Վենէտիկ, ի վանս սրբոյն Ղազարու։ – Joannis philosophi Catholici Armenorum Ozniensis Oratio contra Phantansticos Quam ex Armena Originali in latinum sermonem vertit atque adnotationibus illustravit P. I. Baptista Aucher Mechitarista, 1816. Venetiis In Monasterio S. Lazari. Approbatione Superiorum.

Յառաջաբանէն. «Բազմաց խուզեալ զխնդականաց եղեւ յօժարութիւն ընթեռնուլ յիւրեանց լեզու զճառ Յովհաննու իմաստասիրի Օձնեցւոյ ընդդէմ եւտիքեան Երեւութականաց, որպէս երբեմն նոքին յօժարութեամբ փոյթ կալաւ Թէոփիլոս փիլիսոփոս ունել զայն ի յունական բարբառ։ Սորին վասն զաշխատութիւն յանձն առեալ փոխադրեցաք զճառս ի բարբառ լատինական՝ իբրեւ հասարակաբար իմանալի առ համօրէն եւրոպացիս, և ի նիւթ աստուածաբանական առաւել պատկանաւոր, մանաւանդ ի գրուածս նախնի մատենագրաց։

Ի ցոյց հարազատ թարգմանութեանն՝ արժան դատեցաք մերձ դնել և զհայկական բնագիրն. այնչափ եւս յօժարեալք ի սոյն, որչափ զի յառաջնում հայերէն տպագրութեան երեւէին վրիպակք գրչագիր զաղափարին. զորս ուղղել հոգացաք երկրորդ անգամ զգուշագոյն զաղափարաւ առելով ի բուն օրինակէն՝ որ կայ ի փարիզեան արքունի գրատանն։ Ուստի տարբերութիւնք՝ որք տեսանիցին ընդ այս և ընդ առաջին տպագրութիւնն, ո՛չ ի մէնջ են՝ այլ ի հարազատ օրինակէն հաւաստեալք»։

Սկիզբը կայ Ա. տպագրութեան յառաջաբանը, և նոյնին լատիներէնը Ե-ԺԲ, I-XVII, և ապա նոր թուահամարով կը սկսի ճառը՝ դիմացն ունենալով լատին. թարգմ.ը, և կը հասնի յէջն 115 որ է վերջին։ Ցանկերը կը պակսին։ Գիրքը 8°։

— *Suffragia* Virorum in Theologica facultate Clarissimorum de Joannis Philosophi Ozniensis Armenorum Patriarchae Oratione contra Phantasticos ex Armeno Latine reddita, typisque mandata Venetiis in Monasterio S. Lazari Anno 1816, 1817, Venetiis in Monasterio S. Lazari. – Ընտրութիւնք, Երեւելի երեւելի Աստուածաբանից յաղագս Ճառին Յովհաննու Իմաստասիրի Օձնեցւոյ Հայոց Կաթողիկոսի՝ ընդդէմ Երեւութականաց, որ ի Հայ բնագրէ թարգմանեալ ի Լատին լեզու, և տպագրեալ ի Վենէտիկ ի Վանս Սրբոյն Ղազարու, Յամի Տեառն 1816. հայ-լատին. 8°, 64 էջ։

— Յովհաննու իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք։ Ի Վենետիկ, ի տպ. Սրբոյն Ղազարու, յամի 1833 ՌՄՁԲ. 8°, 8 (Յառաջաբան, Ցանկ) + 1–144։

145–193 Քոթենաւորի երեք և Սահակ կաթողիկոսի մէկ ճառը տպուած է, զորս տես իրենց անուան տակ։

Յառաջաբանէն. «Աստուածաբանութեան երանելւոյ հօրս, և ճառիցն ընդդէմ Պաւղիկեանց և Երեւութականաց, միակ գտանի օրինակ՝ այլ ընտիր յոյժ ի բանիբուն գրչէ երկասիրեալ։ Ըստ յեղակարծ իմն դիպուածոյ զարմանագործ ժամանակին՝ գրչագիրս այս օրինակ բաժանեալ յերկուս, մինչեւ ի ճառն ընդդէմ Երեւութականաց այսր ի ձեռս մեր եհաս, իսկ ճառն այն ի նորին գրչէ, ի նոյն գիր, ի նոյն ձեւ և յորակ թղթոյ նմանագիր գրեալ, և նովին ոճով մակագրեալ չարայարելով զհետ մերոյս հատուածոյ. Նորին ընդդէմ Երեւութականաց. յածեալ առ օտար ազգս, և ի մայրաքաղաքին զաղղիացւոց ի Լուտետիա քաղաքի յարքունական մատենադարանին պահի։ Յորմէ ամենայն զգուշութեամբ, և երրակի բաղդատութեամբ յայլեւայլ անձանց առեալ զաղափարն, ընդ նմին օրինակի զտպագրութիւնս զայս արարաք։ Դարձեալ և զկանոնսն և զայլն ամենայն նովին զգուշութեամբ ի վաւերական գրչագրաց մատենադարանիս ածաք ի տիպ ի վայելումն հանդիսողաց մատենիս»։ Իսկ երկբայական ճառերու մասին կ'ըսէ. «Զայսոսիկ կրկին ճառս ի միում ուրեք ի հնագիր մատենից գտաք առանց անուան մատենագրի. այլ տիպք բանիցն և դարձուածք, ոչ օտարք ի բանից Յովհաննու իմաստասիրին, նորին զոլ հաւանեցուցին մեզ. և առա իբրեւ երկբայականս յաւելաք զկնի այլոց մատենագրութեանց նորին հայրապետի, մինչեւ ժամանակն բազմիմաստ ստուգագոյն ինչ ուսուցէ»։

Բովանդակութիւն. Յառաջին կենցաղն իւր և ի գալն յաթոռ Հայրապետութեան և հաստատել բազմապատիկ և զանազան կարգս և կրօնս եկեղեցւոյ. – Կանոնք. – Ընդդէմ Պաւղիկեանց. – Ընդդէմ Երեւութականաց. – Յաղագս կարգաց եկեղեցւոյ. – Դարձեալ յաղագս կարգաց եկեղեցւոյ. – Վասն մեծի աւուր միաշաբաթին. – Սակս գիշերային ժամու. – Յիշատակարան. – Հիմար-

կէք եկեղեցւոյ. — Օրհնութիւն նորաշէն եկեղեցւոյ. — Ճառ յեկեղեցին։

— Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Աստուածաբանութիւնք և ճառ ընդդէմ Պաւղիկեանց. Beati Johannis Ozniensis, Sermones duo, quos per P. Joh. Bapt. Aucher Vic. Gen. Congreg. Mechit. nunc primum ex Armenio in Latinum translatos Emin. ac Rev. Jacobo Card. Monico Venetiarum Patriarchæ S. Purpuram solemniter induenti Mechitaristica Armeniorum Societas gratulationis devotionisque ergo D.D.D. Venetiis, in Insula S. Lazari, XVII. Kal. Octobr. MDCCCXXXIII. 8°, հայ-լատ. 107 էջ։

— Տեառն Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք. Թարգմանեալ ի Լատին Բարբառ Երկասիրութեամբ Տն. Հ. Մկրտչի Վարդապետի Աւգերեան Աթոռակալի Ուխտի Մխիթարեանց։ Ի Վենետիկ, ի տպ. սրբոյն Ղազարու յամի 1834. ՌՄՁԳ։ Domini Johannis Philosophi Ozniensis Armeniorum Catholici Opera per R. P. Johannem Bapt. Aucher Vic. Gen. ac Doct. Congreg. Mechit. Ex Armenio Latine Reddita. Venetiis, Typis PP. Mechitaristarum in Insula S. Lazari MDCCCXXXIV. 8°, 12 (լատ. Յառաջ.) + 7 (Ցանկ հայ-լատ.) 8–313 (բնագիր և թարգմ.) 314–317 Ցուցակ և Ցանկ վրիպակաց։

— Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի և Ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս։ Արտատպած 1896 թ. Ապրիլ ամսի Արարատ ամսագրից։ Հրատարակեց Կարապետ վարդապետ, տպ. Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի, 1896. 8°, V (յառաջաբան) + 1-30 (բնագիր)։

Տես Մշակ 1897, թ. 32, Նորայրի նամակը, նոյնը տպուած նաև ի Հանդ. Ամսօրեայ 1897, էջ 157 (4)։ Նորայր Յովհան կաթող. Դրասխանակերտցին (պատմագիրն) կու տայ այդ ճառը։ Տես եւ Բազմավէպ' «Յովհան օձնեցւոյ նորագիւտ թղթի մ'առթիւ», հին, յօդուածը, 1896, (Յաւելուած)։

Օձնեցւոյ վրայ գրուածներ. Զարբ. «Հին դպր.» էջ 477–488։ — Արեւելք 1896, թ. 3617, 19։ — Արծուի Վասպուրականի 1859, 219։ — Լոյս 1905, թ. 20, հին. (Զաւէն վարդապետ)։ — Հայրենիք 1893, թ. 402։ — Տես եւ Խոսրով Անձեւացի, «Մեկն. ժամակարգ.» Ա. տիպ։ — Չամչեան։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԱՅԵՂԲԱՅՐ. — «Մեղեդի ապաշխարութեան». Բազմավէպ 1864, էջ 74։

Տես Զարբ. «Հին դպր.» էջ 711-12։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ. — Տօնապատճառ։ Կ. Պօլիս, 1727?

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՑԻ. — Տես Լումայ 1900 Ա, էջ 264։ — Զարբ. «Հին դպր.» 800։ — Չամչեան. — Եւս' Աղօթագիրք. — Անանձին տպուածը տես Յաւելուած։

Յովհաննէս Գուտտենբերգ. — Տես ԿՈՍՏԱՆԵԱՆ (Տիր.)։

«Յովհաննէս Գամառակացի և հայ եկեղեցի». — Լոյս 1905, էջ 1065, 1112. – 1906, էջ 45, 116, 213, 355, 474, 589, 810։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՐԴԵԼ. - Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց. Ի Հայրապետութեան Տ. Տ. Մակարայ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց։ (Հրատ. Թիֆլ. Ընկ. հայ. գրքերի)։ Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխոդովի, 1891. 8°, ԶԴ (Յառաջաբան) + 1–197 (բնագիր), 199–204 (Ցանկ յատուկ անուանց)։

Յառաջաբանը Կ. Եզեանցինն է ձա (81) էջ, «Մեր կողմից հարկաւոր համարեցինք, կ'ըսէ, ներկայ յառաջաբանով ցոյց տալ Կիլիկիոյ հայ թագաւորութեան ծագման և կործանման պատճառները»։ Թարգմանութիւնը կատարուած է Խ. Նար–Պէյի ձեռքով և վերաքննուած Նորայրէ։ Եզեանց Դարդելի և իր ժամանակագրութեան մասին կը գրէ. «Այժմ անցնենք այն խնդրին թէ ո՞վ էր Դարդելը և ի՞նչ նպատակով է գրուած նորա ժամանակագրութիւնը։

Շատ ուխտաւորներ, որոնք ս. վայրերին երկրպագելու համար անցնում էին Քահիրէից, այցելում էին նաև հայոց գերի թագաւորին իրենց յարգանքը մատուցանելու համար (Գլ. ՂՁ.)։ 1377 թուին էլ այցելեցին նորան մի խումբ ուխտաւորներ, որոց մէջ գտնւում էին նաև երկու եկեղեցականներ. այդ եկեղեցականներից մէկն էր ներկայ ժամանակագրութեան հեղինակը – ֆրանսիացի Յովհաննէս Դարդելը։ Թագաւորը թախանձանօք խնդրեց նորան մնալ իր մօտ իբր խոստովանահայր և խորհրդական, որոնցից նա զուրկ էր մինչև այդ օրը։ Դարդելը խոստացաւ ուխտագնացութիւնից յետոյ վերադառնալ Լևոնի մօտ, իր մեծաւորների թոյլտուութեամբ։ Այդպէս էլ եղաւ. Դարդելը վերադարձաւ և մնաց թագաւորի մօտ իբրև խոստովանահայր, կատարելով միևնոյն ժամանակ այլևայլ յանձնարարութիւններ և քարտուղարի պաշտօն։ Երկու տարի անցած Լևոնը ուղարկեց Դարդելին Արագոնի և Կաստիլիոյ թագաւորների մօտ խնդրել որ նոքա միջնորդեն Եգիպտոսի սուլթանի առաջ իր ազատութեան համար։ Թագաւորի յանձնարարութիւնը յաջողութեամբ կատար ածելուց յետոյ, պապը 1383 թուին ձեռնադրեց Դարդելին եպիսկոպոս ի վարձատրութիւն այն դժուարութիւնների և աշխատութեան, որ նա գործ էր դրել Լևոնի փրկութեան համար (Գլ. ՃԼԲ. ՃԽԱ.)։

Դարդելի ժամանակագրութիւնը հաւանականաբար գրուած է այն նպատակով՝ որպէս զի շարժի եւրոպական տէրութիւնների կարեկցութիւնը դէպի Լևոնը։ Մենք տեսնումենք (Գլ. ՃԽԱ.) որ Լևոնը Կաստիլիոյ Սեգովիա քաղաքում թագաւորի և նորա բազմաթիւ պալատական պաշտօնեաների առաջ նկարագրում է իր արկածները ճիշտ այն կարգով ինչ կարգով որ հաղորդուած է Դարդելի ժամանակագրութեան մէջ (Գլ. ՃԼԲ.)։ Նոյնը արաւ նա և Փարիզում Կարոլոս Զ-ի նորա ժողովականների առաջ։ Պրոֆ. Կարրիէրը մի քանի բառերի ուղղագրութեան հիման վերայ ենթադրում է որ Դարդելը գրել է նոյն իսկ Լևոնի թելադրութեամբ և նորա խօսքերով։

Չնայելով որ Կիլիկիոյ հայ թագաւորութիւնը գտնւում էր հին Մեծ և փոքր Հայքի սահմաններից դուրս, այսու ամենայնիւ Դարդելը յոյն և արաբացի պատմիչների նման Կիլիկիան անուանում է Հայաստան, փոքր Հայք։ Հարկաւոր է նոյնպէս ի նկատի ունենալ որ քրիստոնեայ և քրիստոնէութեան բառերով Դարդելը հասկանում է միմիայն լատինացիներին։

Այդ ժամանակագրութիւնը առաջին անգամ գըտաւ Իւլիս Ռոբէրը (Ulysse Robert) Պօլէի մատենադարանում և այդ մասին հաղորդեց Լատինական Արեւելքի Արխիւի Բ. հատորում (Archives de l'Orient latin t. II), որը հրատարակում էր կոմս Ռիանը (comte Riant)։ Աչքի առաջ ունենալով այդ աշխատութեան կարեւորութիւնը մեր պատմութեան համար, մենք դիմեցինք կոմս Ռիանին խնդրելով ուղարկել մեզ ձեռագրի օրինակը։ Նա ուղարկեց սրբագրական թերթերը, որովհետեւ գիրքը այդ ժամանակ արդէն տպւում էր խաչակրութեան պատմագիրների ժողովածուի երկրորդ հատորի համար, հայ պատմիչների շարքում (Recueil des Historiens des Croisades, documents armeniens, t. II)։ Այդ սրբագրական թերթերը 1886 թուին ուղարկեցինք Կ. Պօլիս Խորէն արքեպիսկոպոս Նար-Պէյին, որը յանձնառու եղաւ թարգմանել նորան հայերէն։ Ամբողջ տարի հարկաւոր եղաւ գործ դնել ազատելու համար այդ թերթերը տաճկական գրաքննութեան ձեռքից, որը դատապարտել էր նորան այրելու։ Տաճկական գրաքննիչները գտել էին որ Դարդելի ժամանակագրութիւնը մեծ վտանգ է սպառնում օսմանեան մեծազօր պետութեան...

Այդ թարգմանութիւնը ներկայացնում էր մեծամեծ դժուարութիւններ նախ այն պատճառով որ Դարդելի աշխատութիւնը գրուած է հին ֆրանսիական լեզուով, որը տարբերւում է նորից թէ բառերով և թէ քերականական ձեւերով և դարձուածներով, և երկրորդ որ թարգմանչի ձեռքի տակ գտնւում էին միայն սրբագրական թերթերը՝ լի տպագրական սխալներով։ Մի կողմից ահա այդ պատճառները, միւս կողմից էլ գերապատիւ Նար-Պէյ սրբազանի վերահաս տկարութիւնը առիթ եղան թարգմանութեան ուշանալուն, որը մեր ձեռքը հասաւ միայն 1888 թուականին։ Գերապատիւ թարգմանիչը աչքի առաջ ունենալով յիշեալ դժուարութիւնները, որոնք չէին կարող երաշխաւոր լինել թարգմանութեան ճշգութեան և հաւատարմութեան՝ խնդրում էր մեզ համեմատել և վերստուգել նորա թարգմանածը զաղղիական բնագրի հետ։ Ստանալով պրոֆ. Կարրիէրից ժամանակագրութեան արդէն տպագրուած թերթերը հանդերձ նոյն իսկ Կարրիէրի հմտալից ծանօթութիւններով, և օգուտ քաղելով մեր Ստոկհոլմ գտնուելուց, որ ներկայ էինք արեւելագէտների ժողովին, խնդրեցինք մեր բարեկամ Նորայր Բիւզանդացուն համեմատել թարգմանութիւնը բնագրի հետ։ Պ. Բիւզանդացին մեծ ուշադրութեամբ և իրեն յատուկ սրամտութեամբ և ընդարձակ հմտութեամբ վերստուգեց նոյն իսկ բնագրի շատ տեղերը և ցոյց տուաւ թարգմանութեան անճշգութիւնները, որոնք մեծ մասամբ հետեւանք էին Խորէն սրբազանի ձեռքի տակ գտնուած բնագրի պակասաւորութեան։

Չնայելով սորան մեզ հարկաւոր եղաւ նոյն իսկ մեծ. Ն. Բիւզանդացու խորհրդով բնագրի մի քանի տեղերը ճիշտ հասկանալու համար դիմել հին ֆրանսիական լեզուի մասնագէտների օգնութեան։ Մեր պարտք ենք համարում, յայտնելով մեր յիշեալ երկու գիտնական բարեկամների գործ դրած ջանքը և աշխատութիւնը, հրապարակաւ մատուցանել նոցա և մեր խորին շնորհակալութիւնը»։

Քննադ. Արեւ. Մամուլ 1891, թ. 3։ – Արձագանք 1891, թ. 93։ – Մշակ 1890, թ. 137։ – Մուրճ 1891, թ. 1. (Ս. Սարգսեանց)։ – Նոր-Դար 1891, թ. 187։

Տես եւս Robert, Ulysse. — *La chronique d'Arménie de Jean Dardel*, évêque de Tortiboli: Archives de l'orient latin. t. 2, 1884, d. 1–15. Թարգմ.ը Բազմավէպ 1882, էջ 105-116. «Յովհաննու Տարտէլի, Տորտիպօլսոյ եպիսկոպոսի ժամանակագրութիւն Հայոց. Ուսումնասիրութիւն Ողիսէս Ռոպէրի»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԶՆԿԱՑԻ կամ ԵՐԶՆԿԱՑԻ, և ԾՈՐԾՈՐԵՑԻ որ և ՊԼՈՒԶ. — Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ, զլուսաւորացն՝ որ ի նմա, և զհաստատութենէ երկրի։ Զքեզ աղաչեմ ով տէր Յիսուս. լեր ձեռնտու ինձ լքելոյս։

Այս իբր նախադրութ. ճակատն է.

Տետրակ համառօտ և զի իմաստնախոհ բանիւք։ Արարեալ Հոգելից և իմաստուն Վարդապետին Յօհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի. սակս սքանչելարուեստ արարչագործութեանցն Աստուծոյ, և յաղագս թուոյ երկնից, շարժման լուսաւորաց, կարգի տարերաց եղանակաց տարւոյ, և այլոց իրաց բնականաց. ի խնդրոյ զուարթամիտ պատանւոյն Վաղթանկայ կրտսեր որդւոյ Հոչակաւոր Իշխանին Հայոց՝ Ումէկայ։ Յամի տեառն 1284։ Եւ ի թուականութեան Հայոց, ՉԼԳ։ Տպագրեալ ի Հայրապետութեան՝ Լուսանկար Մօրն մերոյ՝ Սրբոյ Գահոյն Էջմիածնի՝ Տեառն Ղուկասու Սրբազնասուրբ կաթողիկոսի Ամենայն Հայոց։ Հրամանաւ՝ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Ծայրագոյն Նուիրակի և Հիւսիսային կողմանս եղեալ ազգիս Հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնորդի Սանահնեցի Երկայնաբազուկ Արղութեանց՝ Իշխանազնեայ Տեառն Յովսէփայ Սրբազան Արք Եպիսկոպոսի, և Հիմնադրի նոր Նախիջեւանու և Գրիգորուպօլու Քաղաքացն Հայոց։ Արդեամբք և ծախիւք՝ ի Հնդիկս ի Մադրաս բնակեալ Մեծահաւատ և Բարեպաշտ Հայկազնէից հասարակութեանն։ Յամի Տեառն 1792։ Դեկտեմբերի 17։ Ի տպարանի նորին Բարձր Սրբազնութեանն։ Ընդ Հովանեաւ Երկնահանգէտ Սուրբ Խաչ Վանիցն, որ ի Նորն Նախիջեւան։

Այս կրկին ճակատներէն վերջ յէջն ե Յառաջաբան ի Յովսէփայ Արղութեանց, և յէջն ը Յառաջաբան Յովհաննու Երզնկացւոյ. յէջն ժ պղնձափոր պատկեր երկրաւոր կենդանակերպից, չորս կող տոմանաւորով, և դիմացէն նոր թուահամարով կը սկսի գիրքը, և կը հասնի յէջն 19, ուր գրուած է «վերջ Առաջնոյ մասին տետրակիս», թէեւ ըսկիզբը յիշատակութիւն չկայ առաջին մասին։ Յէջն 20 կը սկսի Մասն երկրորդ՝ առանձին յառաջաբանով մը, և ապա «Նորին՝ Սուրբ և Իմաստուն Վարդապետին Յօհաննիսի երզնկայեցւոյ բան՝ յաղագս երկնային զարդուց՝ չափաբերմամբ ի խընդրոյ Բարեպաշտ Իշխանին Այլոցի. ըստ նախադիծ տառի տանց». ինչպէս որ երկրորդ տոմանաւորին սկզբնագրերը կը կազմեն. «Յօհաննիսի բան յաղագս երկնի ի խնդրոյ իշխանի հայոց այլոց անուն». ցէջն 25. յետոյ ուրիշ տոմանաւոր. «Նորին դարձեալ՝ յաղագս երկնի» ցէջն 56։ Սոյն էջին մէջ ուրիշ տոմանաւոր մը կայ հետեւեալ խորագրով. «Վասն երկրաւոր կենդանակերպին, երկրաւոր ազգաց, և երկրաւոր անդամոց, ասացեալ ի Յառաքել Վարդապետէ։ Աշխարհս՝ ունի ըղձեւ մարդոյ, և կենդանակերպքն ըստ այսմ խորհրդոյ բաժանեալ ի վերայ երկրաւոր անդամոց մարմնոյ և աշխարհի», ցէջն 66։ Յէջմն 67–68 հետեւեալ Յիշատակարանը.

«Վերջաբանութիւն համառօտ, և յիշատակարան Տեղեկացուցանողաց տառիս։ Փառք՝ պատիւ և երկրպագութիւն գոհութենական անըեղին փառատրութեամբ, երրեակ և մի անբաժանելի Աստուա-

ծութեանն՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որ արժանացոյց՝ զօրացուցանելով զմեզ տկարութիւն, հասանել ի յաւարտ՝ տպագրութեամբ ի լոյս ընծայեցման ուղղավէպ՝ ճշմարտասոյց և գեղեցկաբան տետրակիս. որ ըստ երևմանն՝ փոքր քանակութեամբ՝ ընդ հատին մանանխոյ՝ ի փրկչէն վարդապետեցելոյ, բայց զօրութեամբ՝ ունի մեծանալ՝ լուսաւորելով զմիտս՝ անխափան տքնեցմամբ ընթերցասիրացն, մինչև բարձրաթռիչ իմաստասիրացն պարուց՝ ըստ թռչնոց երկնից՝ գալ և հանգչել ի ճշմարտափակ եղբայրութիւնս՝ և ի յանյեղլի վճիռս մշտականաչ ոստոց սորա:

Ուստի ընթերցօղք և վայելօղք զսոյն՝ պարտաւոր զձեզ համարեսջիք՝ ի մաքուր և ի յաղօթս ձեր՝ յիշատակելոյ զարժանիսն յիշման՝ և զնպաստակին ազգասիրական կատարելութեան, զ՚ի Հնդիկս ի Մատրաս բնակեալ Մեծահաւատ և Բարեացապարտ Հայկազնէից Հասարակութենն. որք արդար և տիրապարգև վաստակօք՝ արդեամբք և ղոյիւք իւրեանց, նեւ Հիւսիսական Տէրութեանն՝ ի Նոր Նախիջևան քաղաքի, ի Սուրաթ բնակեալ Ջուղայեցի Պայծառ իշխան՝ Գէորգեան յԱգայ Յօհանջանէ կառուցեալ՝ բարեկարգ Դպրոցացն և Ուսումնարանացն, ըստ ամենայնի՝ ինքնայօժար կամօք և սիրով մատուցին զնպաստ և ի վերայ այնր ամենայնի ընուիւ ցանկալի Տպարանիս մերոյ՝ արփիանման պայծառացեալ փայլելոյն՝ եղեն բարեաւիթ պատճառք:

Վասն որոյ՝ և Ուսումնարանքն մեր՝ (որ ի Նորն Նախիջևան). ինքնակամ նախայօժարութեամբ՝ ըղձալով բարձրացուցանել զբարի յիշատակս բարերարացն իւրեանց՝ ի յաշտանակ երախտագիտութեան իւրեանց, (զի որք մի անգամ կամին տեղեկանալ զպատճառս պայծառանալոյն իւրեանց, և ինքեանք եւս մանաւանդ զանոն, զսոյս տեսցեն, և այնու լուսով ազատաքայլ ճանապարհ՝ առ այսպիսի ազգաօգուտ գործս՝ ինքեանց յորդեսցեն). տպագրութեամբ ի լոյս ընծայեցին, թուով վեց հարիւր, զիմաստնալից զայս Տետրակ որ էր չարադրեալ սքանչելի բանահիւսութեամբ ի Մեծ Րաբունապետէ Յօհաննու Երզնկայեցւոյ. յանուանն արդեամբք և ծախիւք՝ ի Հնդիկս ի Մատրաս բնակեալ՝ Մեծափառհարգ և Աստուածասէր Հայկազնէից Հասարակութեանն:

Որոց զատուցն՝ ամենամեծն տառուած՝ ընդ այլոց զուարթամիտ առատաձեռնութեամբ՝ յայս գործ ազգաօգուտ՝ ինքնակամ օժնդացն՝ անձանց բարեսիրաց՝ բնակելոց ի զանազան գաւառս՝ ի կողմն Հնդկաց՝ յարեթառհմ և հայազարմ լուսաւորչադաւանից՝ առատաբաշխ արոյն ի փառս և ի պատիւ իւր վերընկալցի, զբարեգթական նպաստին՝ յուսոյ և ակնկալութեան ընուիւն՝ անվրէպ պահմամբ՝ ի յանկ հանցէ. և զբարի յիշատակս իւրաքանչիւրոցն՝ ի յանջնջելի երանական մատենի խրուա արձանացուսցէ: Եւ ձեզ՝ ընդ մեզ բարեմոութեամբ աղօթողացդ՝ մասն բարեաց պարգևեսցէ. ամէն »:

Գիրքը մեծ 8º, կաշեպատ թուղթ, մաշած միջակագիր, գծափակ երեսներով. անհարթ տպագրութիւն:

= Բ *տպ. Յովհաննու Վարդապետի Երզնկացւոյ Ջարդք երկնից առ Այգոց իշխան:* Ի Կալկաթա, *ի տպ. ի Արարատեան Ընկերութեան,* 1846. *փոքր* 12º, 102 *էջ:*

Արձան – յաւէրժական յիշատակի – մեծանուն ազգասէրի – Գէորգայ Մանուկեան – Աղեքոբ – որ կատակեաց մեծագումար – Օժանդակութիւն – ի հաստատութիւն Մագրասայ – Հայոց դպրատան. – Մարդասիրական Ճեմարանի, – Աթոռոց, Վանորէից, և եկեղեցեաց. – ազգային զգացմամբ – յարուցանէ զայս – Արարատեան Ընկերութիւն:

Սոյն տպագրութեան մէջ Ա. տիպին Ա. մասը կը պակսի. նոյնպէս Աւաքել Վ.ի յառաջաբանը:

Համռ. Ազգասէր 1846, *էջ* 217:

— *Մեկնութիւն Մատթէի.* — *Տես* ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ:

— *Ներբողեան ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ.* – *Տես* ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ, «*Յաճախապատում*», *Ա. տիպ:* – *Սոփերք Հայկականք. հատոր* Ե.:

«*Խրատ ծնողաց*». *Բազմավէպ* 1847, *էջ* 211:

Երզնկացւոյ վրայ ուսումնասիրութիւններ. Բազմավէպ 1851, *էջ* 213: – *Բիւրակն* 1903, *թ.* 14: – *Զարբ.* «*Հին դպր.*» *էջ* 754-767: – *Ալիշան,* «*Հայապատ.*» *էջ* 300: – *Զամչեան:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ. – *Երուսաղեմի Յովհաննես եպիսկոպոսի թուղթը առ Արաս Աղուանից* Կաթողիկոս: *Հրատարակեց* Կարապետ Վարդապետ: *Արտատպած Արարատ ամսագրից:* Վաղարշապատ, *տպ.* Մայր *Աթոռոյ սրբոյ Էջմիածնի,* 1896. 8º, X + 19 *էջ:*

Տես Արարատ, 1896, 214 *էջ, Տէր-Մկրտչեանի գրութիւնը:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿ. ՆԻԿԻՈՅ? — *Chronique de Jean, évêque de Nikiou.* Texte éthiopien publié et traduit par H. Zotenberg. 4º. Paris, 1883. Maison neuve. (Extrait du Tome 24 des Notices et extraits des manuscrits de la Bibliothèque nationale et autres bibliothèques)?

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒԼԳՈՒՐԱՆՑԻ *կամ* ԹԼԿՈՒՐԱՆՑԻ. — *Գրկուշկս այս որ կոչի Արարածք:* Ես *յովանէս նուաստ ոգի. որ մակ անուն թուլգուրանցի. կամաւ իմ ի հոգ մտի. զբանս ժողովել ինձ յիշելի: Ասա կարճաբան հաւաքեցի. յարարածոցն մովսէսի. մեկնեալ վարդան վարդապետի. քաղեալ ի հարցն հոգելի:*

Ճակատին չափակը երրորդութեան փայտափոր պատկեր մը. 3 *էջէն կը սկսի Արարածքը և կ'աւարտի յէջն* 83, *ուր ի ներքոյ գրուած է.* «*Զպատճառ տպեցման սորին, զմանեցի եարըչի ավէտի որդի տիրացու միխթարն յիշեցէք ի քրիստոս. և դուք յիշեալ լինիք ի նմանէ ամէն*»: – *Յէջն* 84-96 «*Տաղ տառուածածնին ի յառաքել վարդապետէ. Արքային փակեալ պարտէզ*», *ևն.* – *Յետոյ* «*Այլ տաղ աղօթից ի յառաք. վ.է ասացեալ. Որհնեալ անուն անմահ սուրբ թագաւորին*», *ևն:* – «*Տաղ ի սուքիաս վարդապետէ ասացեալ. Ի ժամ զարթնմանյին մուտ մարտի ամսոյն*», *ևն: Վերջին* 94 *էջին ստորոտը սոյն փոքրիկ յիշատակարանը կայ.* «*Աւարտեցաւ փոքրիկ տետրակս արարածոց. ի թուիս* ՌՃՀԳ (= 1173 = 1724) *Նոյեմբերի ա:*

Գիրքը փոքր 8º, *միջակագիր, ստուգափակ երեսներով. Պոլսոյ տպագրութիւն կը թուի:*

— *Յովհաննէս Թլկուրանցին և իւր տաղերը.* (*Հրատ.*) Կ. *Կոստանեանց:* Թիփլիս, *տպ.* Յ. *Մարտիրոսեանցի,* 1892. 8º, 1-24 (*Յառաջաբան* Կ.*ի*) 25-59 (*բնագիր*):

Բովանդակութիւն. 1. *Յովհաննէս Թլկուրանցի.* – 2. «*Գէնայ բահար, այլի բահար*». – 3. «*Արևնման չողչող կլորս*». – 4. «*Աչի սիրէ զիս, ծով աչեր*». – 5. «*Լոյս երևացդ է խիստ փափուկ*». – 6. «*Սիրով մի ապանանէր*». – 7. «*Ահա եղև*

պայծառ գարուն» (առաջ գարնան). — 8. «Ես զձեզ տեսայ սիրով նստած». — 9. «Աչերդ է թուխ ու պէտ». — 10. Տաղ վասն արբեցութեան. — 11. Վասն սուտ սիրելեաց. — 12. Ի վերայ մահուան. — 13. «Է՜ մահ, քանի զքեզ յիշեմ». — 14. «Հա՜յր մեղայ ասեմ յերկինս». — 15. «Թէ մահն չէր ու կամ մեռնիլ». — 16. «Յամենայն մեղաց, ասէ, ի դատ». — 17. Տաղ քաջի Լիպարտին։

Քննադ. Արձագանք 1892, թ. 25. — 1893, թ. 2, 3։ — Հանդ. Ամսօր. 1893, թ. 9։

Բազմավէպի մէջ ունի. «Հառաչանք մը առ մահ». 1859, էջ 375։ — «Տաղ ի վերայ արբեցութեան. Քեզ հոգեւոր խրատ մի տամ». Կռունկ 1863, էջ 66։ — «Գովք Ս. Նարեկացւոյն», Լոյս 1906, էջ 1071, եւն, եւն։ — Տես Տաշեան, «Մայր ցուցակ», 1126։ — Երեւակ 1858, 232։ — Երկրագունտ 1884, 317։ — Պոտուրեան (Հ. Մ.)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼԱԶԱՐԵԱՆ. — Տես ԼԱԶԱՐԵԱՆ —։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾԱՐԵՑԻ. — Տես Առաքել Դաւրիժեցւոյ պատմութեան ԾԴ (54) գլուխը։ — Տես և Պրոսէ, գործս 364 էջը։ — Ալիշան, «Հայապատում», 326։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ. — Պատմագրութիւն Յովհաննու կաթողիկոսի ամենայն Հայոց։ Տպագրեալ 1843-ի Սուրբ Երուսաղէմ ի Պատրիարքութեան Տեառն Զաքարիայի Արք Եպիսկոպոսի։ Ի Տպարանի Սրբոց Յակոբեանց Առաքելոց։ 4°, 1–266 (բնագիր), 267–272 (ցանկ)։

= Բ տիպ. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին. Տեսուչ Լազարեանց Ճեմարանի Արեւելեան Լեզուաց։ Մոսկվա, ի տպ. ի Վլադիմիրայ Գոթիէ, 1853. 8°, ա–ժե (Յառաջաբան Էմինի), 1–197 (Պատմ.) 198–219 (զանազան ընթերցուածք)։

Յառաջաբանէն. «... Որպէս քաջածանօթ իսկ է ուսումնասէր ընթերցողաց՝ Յովհաննու կաթողիկոսի Պատմութիւն զառաջինն երեւեցաւ ի գաղղիացի թարգմանութեան յամին 1841, զոր արարեալ էր հռչակաւոր հայերէնագէտն Սէն-Մարտէն։ Թարգմանութիւնդ այդ ի լոյս ընծայեցաւ զկնի մահուան յեռնոյս հրամանաւ և ծախիւք լուսաւորեալ կառավարութեան Գաղղիոյ։

Զկնի այսորիկ յամին 1843 զառաջինն յԵրուսաղէմ տպագրեցաւ հայերէն բնագիրն յիշեալ Պատմութեան՝ հրամանաւ տեառն Զաքարիայի Պատրիարքին Երուսաղեմայ։

Առաջիկայ մերս տպագիր արարաւ ի գրչագիր անթուական օրինակէ արգոյ և գիտնական բարեկամի մերոյ՝ Մսերայ մագիստրոսի Զմիւռնացւոյ։ Զօրինակէս զայսմանէ լիագոյն տեղեկութիւն կարէ գտանել ընթերցողն ի թղթի նորա, զոր ի խնդրոյ մերոյ գրել հաճեցաւ այրն իմաստուն։ Որ և այս է պատճէն թղթոյն...

«Մատեանս այս հոծ և հարուստ բազմազարեան անցից յիշատակօք մերոց Հայրենեաց, և վայելչական յօրինուածովն՝ սքանչելի, տուաւ ինձ ի Ս. Էջմիածին յամի 1828, յարկեղէ գրոց Սանահնոյ արքեպիսկոպոսի Էնովքեան, որ ամօք յառաջ զհոգեւոր տեսչութեան ունէր զաթոռ ի Զմիւռնիա։

«Թէպէտեւ չէ յայտ՝ ո՛յր ուրուք երկասէր ձեռին վաստակ իցէ գրչութիւն մատենիս (զի և ոչ իսկ յիշատակարան գոյ նորա ի վերջէ՝ ըստ օրինակարգաց սովորութեան), սակայն ի նոտրագիր կամ ի չղագիրն անուանեալ ձեւոյ գրերոյն՝ որ միատարրաբար ի բովանդակ մատենին տեսանի, թուի ինձ գործ լինել միոյ ուրումն ի յաջողաձեռն գրչաց Հայրապետանոցին՝ եղելոց յաւուրս Սիմէոնի կաթողիկոսի, կամ Ղուկայ կամ նորուն յաջորդի։

«Ընտրութիւն և վաւերականութիւն օրինակիս՝ եթէ ուղղագրութեանն մասամբ, եթէ հարազատութեամբն ի բնաւ իսկ ընթերցուածսն, և եթէ անթերի լրութեամբ յառաջաբանին և վերջաբանին, զեր ի վերոյ քան զայլոցն ցուցաւ՝ ի բաղդատելն իմ զայն ընդ այլոց եւս կրկին օրինակաց. յորոց զմին ունէի ես յառաջնմէ իմով գրչութեամբ գաղափարեալ ի Զմիւռնիա յամին 1824, յանթուական և յաղաւաղ օրինակէ՝ առանց իրիք փոփոխութեան. և զմիւսն բերեալ էր ի Կոստանդնուպօլսէ հոգեւորդն Հ. Յովհաննէս վարդապետ Գէորգեան Շահխաթունեանց, այն՝ որ ապա յեպիսկոպոսութեան ամբարձաւ յաստիճան։

«Օրինակն իմ թէեւ պակասաւոր էր բազմօք՝ ոչ ի սկզբանն միայն և ի կատարածին, այլ և ի տեղիս տեղիս ի միջոցին՝ յոր և նման նախագաղափարին, բայց ոչ ի սպառ և ամենայն մասամբք անպէտ ինչ էր կամ անօգուտ, զի ուրեք երբէք ուր յայլ օրինակս խանգարանաց կարծիք էին կամ բանից մթութիւնք, աստ լոյս տայր զխարդ և է՝ յիմաստիցն բացայայտութիւն։ Եւ որ Շահխաթունեանց հօրն էր՝ թէեւ կարեւորագունեան պանծայր էր կատարելութեամբ՝ ըստ ամբողջութեանն և ըստ քերականական ուղղութեանցն ի փոփոխմունս բանից կամ ի բանից կարգութեան, և ընտրելագոյն համարէր օրինակ (իբրու զի կանխագոյն եւս սրբեալ էր ի վրիպակաց ի Թագաւորական Փարիզին յամենայն ի մերոց բանասիրաց՝ երկոտասան գրչագրաց համեմատութեամբ), այլ այնու ամենայնիւ ինքնին միայնակ չունէր զանվթար տալ մեզ զօրինակ մատենիս, բաւեալ ոչ՝ լի և ճշգրիտ ըղբան կերպարանան յանդիման առնել զարուեստաւոր զգեղեցիկ ոճոյն և զյօրդառատ բանիցն դարձուածոց՝ որ հեղինակին սեպհական են ախորժակաց. այնպէս ուրեք երբէք և կարգի չարագրածոյն խախտումն երեւէր ի նմա. որով և բանին իսկ մնայր առեալ՝ կամ միայն ընդ երկբայութեամբ, կամ այլազգ ինչ և տարաբանագոյն տայր իմաստ։

«Զայս ամենայն և զայլ սոյնոսակի հանդարտանս զմիոյ միոյ յօրինակացս յիշատակելոց յանձն արկեալ իմ և հանդուցելոյն ի Տէր՝ Հօրն Շահխաթունեանց, խնամով իմն ջան յանձին կալաք ի բաղդատութիւն առնել զնոսին՝ ոչ միանգամ կամ երկիցս, այլ յոլովակի ծայր ի ծայր վերծանութեամբ բովանդակ մատենին ի բազում աւուրս։ Եւ այնպէս իսկ յետ զգուշաւոր զննութեանց՝ զուղղագրութիւնն արարաք զմատենիս, ի գրչացն վրիպակաց զնոյն մաքրեալ, ի մթութեանցն պարզեալ, զթերին լցուցեալ, զաւելորդն յապաւեալ և զգլխաւորագոյնն ի տարբեր ընթերցուածոց կամ յերկբայելեաց ընտրանօք ի ներքոյ դրոշմեալ։

«Այսպիսաւ ահա համաձայնական երկասիրութեամբ յաջողեցաւ մեզ երկոցունցս նմանօրինակ զհաւատարիմ առնել մատենիս պատուականի՝ եթէ ոչ անվթար ամենայնիւ, գէթ ընտրելագոյն և հարազատագոյն քան զայնս ի գրչագրաց, զորս և յայլոց ումանց ձեռս դէպ եղեւ ինձ տեսանել յետ մերոյս աշխատութեան, և որոց շատ կամ սակաւ սփռեալ կան հատուածքն ի տպագիր չարագրածս նորոց մատենագրաց։ Իսկ թէեւ քան զՍադիմեանն տպագրութիւն որ ի վերջին աւուրս երեւեցաւ՝ գերազանցէ իմն օրինակս մեր, կամ թէ ո՞րչափ գերազանցէ, այն արդէն իսկ յայտնի է Ձեզ՝ բաղդատութեամբն, զոր արարիք Դուք ի նորումս յօգուտ ազգին մերոյ վաստակել»։ — Ահա զայն

զայս գրչագիր օրինակ կարաք մեզ գաղափար յառաջիկայ տպագրութեանս։ Ոչ աւելորդ դատեցաք բաղդատել զայն նաեւ ընդ յԵրուսաղէմ տպագրելոյն, զորոյ և զտարբեր ընթերցուածս ի վերջ մատենիս զգուշութեամբ եդաք։ Ցանկալի էր մեզ ցուցանել նաեւ զզանազան ընթերցուածս և Մոսկուեան օրինակին, այլ՝ որպէս ինքն խոստովան լինի, որովհետեւ յայլեւ այլ տեղիս և ի ժամանակս բաղդատեցաւ այն ընդ զանազան օրինակաց, յոյր սակս և չեղեւ նմա հնար որոշաբար և առանձինն ցուցանելոյ զտարբերութիւն միոյ միոյ ի գրչագիր օրինակաց։ — Այլ որպէս և իցէ՝ ու ժամն որ ինչ ի ձեռս մեր էր՝ արարաք, այլում ժամանակի և այլոց բարեյաջող հանգամանաց թողլով լցուցանել զայս թերութիւն, եթէ թերութիւն մարթ իցէ զայդ անուանել»։

— Գ. տիպ. *Պատմութիւն Յովհաննու Կաթողիկոսի. Ի Հայրապետութեան Տ. Տ. Գէորգայ Նորընտիր Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց Հրամանաւ Տ. Տ. Եսայեայ Սրբազան Արքեպիսկոպոսի և Պատրիարքի Ս. Երուսաղէմայ և ի Պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ Տ. Տ. Պօղոսի Սրբազան Արքեպիսկոպոսի։ Ի Տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակովբեանց Երուսաղէմ*, 1867. 8°, էջք 457. 458–464 (Ցանկ գլխոց)։

Համառօտ Ազդը կ'ըսէ. «Երկրորդս այս տպագրութիւն պատմութեան Յովհաննու Կաթողիկոսի եղեւ ի վերայ վեց գրչագիր օրինակաց, յորոց երկուքն համաձայնէին իբր ի միոյ բնագրէ առեալ, իսկ միւս չորեքին օրինակք, որոց այլ և այլ էին նախագաղափարք, թէպէտ և նորագիրք ամենայն և ոչ հնագոյնք ժամանակաւ, այլ յընտիր օրինակաց գաղափարեալք էին, որոց և մեք հետեւեցաք յերկրորդումս յայս տպագրութեան ի սորին լուսանցսն նշանակելով զտարբերութիւնս։ Երկուք եւեթ յայսոցիկ ունէին բաժանմունս գլխոց, այլ տարբերք ի միմեանց. իսկ զվերագիրս գլխոցն ունէր միայն օրինակ, յորմէ առեալ և մեք եդաք»։

Ֆրանսերէն թարգմանութիւն.

— *Histoire d'Arménie*, par le Patriarche Jean VI, dit Jean Catholicos, traduite de l'arménien en français par M. J. Saint-Martin. Ouvrage posthume, publié sous les auspices du ministère de l'Instruction publique, par Félix Lajard. Paris, 1841. Imp. royale.

— *Examen* de l'histoire de Jean VI le patriarche, traduite de l'arménien par Saint-Martin, par Félix Nève. Louvain, 1843. (Extrait du N. 96 de l'*Univers Catholique*. Décembre).

Ֆ. Նեւ իր «L'Arménie chrétienne et sa littérature» գործին մէջ յէջսն 317–40 ունի հետեւեալ յօդուածները. «Jean VI Catholicos, et son histoire d'Arménie. Յովհ. Զ կաթողիկոս, և իր Հայոց պատմութիւնը. – Ա. Epoque de Jean VI; style de son ouvrage – Ժամանակ Յովհաննու Զ. ոճ գրութեան. Բ. Sources de Jean VI sur l'histoire ancienne de l'Arménie. Histoire détaillé de l'élévation des Pagratides et du règne des princes dont il fut contemporain. – Աղբերք Յովհաննու Զ. ի վերայ հին պատմութեան Հայաստանի։ Մանրամասն պատմութիւն ամբարձման Բագրատունեաց և իր ժամանակակից իշխանաց։ – Գ. Jean VI, historien du Christianisme en Arménie. – Յովհ. Զ. պատմիչ քրիստոնէութեան ի Հայաստան»։

Տես և ՊՈՐԷ (Է.) — Զարպ. «Հին Դպր.» 511–17։ – Չամչեան, «Պատմ. Հայոց» Ա. 14 բ. 717, 725, 731, 733, 741, 2, 5, 63, 78, 80, 81, 85–88, 807–810, 815, 16. Ծանօթ. 1014–1016։ – Ալիշան, «Հայապ.» 193։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐՆԵՑԻ. — «Յաղագս մեծի սովոյն և սղութեան, որ եղեւ ի քաղաքս Կարին և ի շրջակայն նորին, ի թագաւորութեան ամենաբարի կամացն Աստուծոյ, ի խրատ և ի զգաստութիւն ներկայ ժամանակիս ամպարշտեցելոյն. շարադրեալ հոմերական ոտաչափութեամբ յամենանուաստ մանկավարժ նոտարէ Մահտեսի Յովհաննիսէ ի սոյն քաղաքէ. յամի Տեառն 1813, ի մերս թուոջ ՌՄԿԲ». Բազմավէպ 1884, էջ 118–122։ – «Պատմութիւն Գրիգորիսի նահատակաց». Յաւելուած Արարատի 1895. Նոյեմբեր։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱՐԲԵՑԻ. – Տես Արարատ, «Կոնդակ Յովհաննէս կաթողիկոսի, ուղղած Դորպատի Պրոֆեսորին». (Մեսրոպ վարդ.) 1901, էջ 393։ – Փարոս 1874, էջ 4, «Ընտրել Յովհաննու ի կաթողիկոսութիւն», եւն։ – Մասիս 1872, էջ 64։

Յովհաննէս Կարապետ (Ս.) ընկերութիւն. Ազգասէր 1846, գ. 122, 125։

Յովհաննէս Կոզեռն. — Տես Զարպ. «Հին դպր.» էջ 570։ – «Յովհ. Կոզեռնի աւանդութիւնը». Արարատ 1896, Թ. 2։ – Հանդ. Ամսօրեայ 1896, էջ 121 (66)։ – Չամչեան, «Պատմ. Հայոց», Բ. 906–7։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈՂՈՏ. — Տես ԿՈՂՈՏ։

Յովհաննէս Կրօնաւոր. — Տես ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ (Մ. Վ.)։

Յովհաննէս Ճշուզ. – Տես Զարպ. «Հին դպր.» էջ 714։ – Բազմավէպ 1848, էջ 195։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՆՆԱ. — Տես ՀԱՆՆԱ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈԼՈՎ ՅԱԿՈԲԵԱՆ. — *Զտութիւն Հայկաբանութեան կամ Քերականութիւն հայկական։ Շարագրեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ, ի փառս Մեծազօրին Աստուծոյ, և ի յօգուտ Հայկազունեաց*։ Pvritas Lingvae Armenicæ. A Ioanne Agop Sacerdote Armeno Composita. *Որ ոչ մտանէ ընդ դուռն ի փարախն ոչխարաց, այլ ընդ այլ ելանէ, նա գող է և աւազակ։ Յոհաննու, ի գլուխն* 10. *ի թիւն*. 1։ Qui non intrat per ostium in ouile ouium, sed ascendit aliundè, ille fur est, & latro, Ioannis c. 10. num. 1. Romæ, Ex Typographia Sacræ Congreg. de Propaganda Fide. M.DC.LXXIV. Svperiorvm Permissv.

Յէջն 2 մաղթանք առ Յիսուս մանուկ, և 3 էջէն կը սկսի և կը հասնի յէջն 200. 201–212, «Աստղագիտութիւնք Ոմանք Հռետորականք». 213–215 Ցանկ. 216՝ որ է վերջին՝ լատիներէն հրամանագիր։

Գիրքը 4° հատորակ, անհարթ միջակագիր, ուսանց նոտրի. անսխալ տպագրութիւն։

Քննադ. Պատկեր 1892–93, էջ 110, «Հնագոյն հայերէն քերականութիւն յԺԷ. դարու» (Յ. Վ. Մ.)։

— Նոյնը լատ. և հայ. *Pvritas Haygica* sev *Grammatica Armenica*. A Ioanne Agop Sacerdote Armeno composita, Ad maiorem

Dei gloriam, Et ad honorem Beatissimæ Virginis Dei Genitricis Mariæ. *Աղաչեցէք ուրեմն զտէր հնձոյն, զի առաքիցէ զմշակս ի հունձս իւր: Մատթէի ի գլուխն 9. ի թիւն 38:* Rogate ergo Dominum messis, & mittat operarios in messem suam. Matth. c. 9. v. 38. Romæ, Typis Sac. Congr. de Prop. Fide, Anno MDC LXXV. Svperiorvm Permissv.

Յէջն 2 նուէր « Առ Սուրբն Ֆրանչիսկոս Քսաւէրեան », և յաջորդ էջին մէջ նոյնին լատիներէնը. և դիմացի էջին մէջ լատ. համառօտ հրամանագիր տպագրութեան: Այս երեք թուղթերէն վերջ՝ նոր թուահամարով կը սկսի Քերականութիւնը և կը հասնի յէջն 249, ցանկով միասին:

Գիրքը հաստարակ 4°, անհարթ միջակագիր, անպիտան թուղթ և անհարթ տպագրութիւն:

— *Քերականութիւն Լատինական Հայերէն Շարագրեցեալ ի Յոհաննիսէ Վարդապետէ Կոստանդինուպօլսեցւոյ ի Զուարճութիւն Հայկազունեաց:* Grammatica Latina Armenice explicata: A Ioanne Agop Sacerdote Armeno Constantinopolitano. Et vocem meam audient, & fiet vnum ouile & vnus Pastor. Ioannis. c. 10. n. 16. *Եւ ձայնի իմում լսիցեն, և եղիցի մի փարախ, և մի հովիւ. Յոհաննու, ի գլուխն 10. և թիւն 16.* Romæ, Typis Sacræ Congregationis de Propaganda Fide Anno M DC LXXV. Svperiorvm Permissv.

Ճակատին չալակը լատ. համառօտ հրամանագիր տպագրութեան, և դիմացէն՝ էջ 3՝ կը սկսի Քերականութիւնը և կը հասնի յէջն 214. յէջն 215, « Աղիւսակ, Կաղանդաց, Նոնայից, և Իդոսաց », և ապա ցանկ, մէկ թուղթ՝ առանց թուահամարի:

Գիրքը, գիրը, են, նման վերնոյն,

— *Համառօտութիւն: Ճարտասանականի արհեստի: Շարագրեցեալ ի Յօհաննիսէ վարդապետէ կոստանդինուպօլսեցւոյ: Ի փառս մեծագոյն Աստուծոյ: Եւ ի զբօսանս հայկազունեաց ճշմարտասիրաց: Տպագրեցեալ ըն գործարանում սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրավարին: Ի Մարսիլիայ: Յամի ներմարմնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.* 1674. *Նաւուր առաջնում Յունիսի ամսոյն:*

Ճակատին չալակը Տիրամօր փայտատիպ պատկերը, և դիմացը « Նախերգութիւն Առ Ընթերցօղս Ուսումնասէրս » հեղինակէն՝ երկու թուղթ, առանց թիւի, և ապա նոր թուահամարով կը սկսի գիրքը և կը հասնի յէջն 141. 142–150 Ցանկ գլոց. 150–154 երկու երգ. « Կայր առ խաչին », և « Եկ սուրբ Հոգի » տարբեր թարգմանութեամբ. ուր ի վերջոյ.

« Եւ (Ես) մատթէոս Յօհաննիսեան.
որ ի գեղջէ եմ վանանդեան.
եղէ բարդօղ փոքրիս գրքկան »:

Գիրքը ամենափոքր 8°, մանրագիր, սեւաթուղթ. գործն անպիտան՝ տպագրութիւնն ընտիր:

— *Specvlvm veritatis* Continens particularem quamdam instructionem fidei Catholicæ Apostolicæ ac Romanæ, Compositum à D. Ioanne Agaup Missionario Apostolico. *Հայելի ճշմարտութեան. Պարունակօղ Մասնաւորի Ուրուք Ներկրթութեան Ուղղափառի Հաւատոյ ի պէտս Հայոց Ճշմարտասիրաց. Շարագրեցեալ ի Յոհաննիսէ Վարդապետէ Կոստանդինուպօլսեցւոյ ի փառս մեծագոյն աստուծոյ. Եւ տպագրեցեալ ի տպարանի Միքայէլի Պառպօնի յամի տեառն,* 1680. *ի վէնէտիկ քաղաքի:*

Սկիզբն ընծայագրութիւն մը կայ « Առ Յակոբոս Արքաղան Կաթուղիկոսն Հայկազունեաց », յետոյ « Տրակ առ ընթերցօղս Հայկազինս », ուր կը կարդանք. «... զգրգուկս զայս կարճառօտ խորհեցայ խոհեմագէս շարագրել և ի լոյս ածել զի ռամիկ ամենայն որք կարիցեն ներհմտանալ ըղձացելոյն յինքեանք ճշմարտութեան. Ուրեմն եթէ ոք ի բարեսիրաց ընթերցմամբ սորին զգայցէ ինչ վերաշահիցի, համարիցի զայն ի փառս աստուծոյ, իսկ եթէ ոչ, աղերսեմ ներիցէ ինձ դարձեալ ի փառս աստուծոյ քանզի եւ ամենեցուն եմ ծառայ անպիտան. Յոհաննէս Հոլով:

Աղաչեմ յիշել ի քրիստոս միով հայրմերիւ զուշիմագունեղ պատանին զկէրէք ազայն, զորդի Պարոն Գրիգորի Կէրէքեան ճուղայեցւոյ ընտանեօք և ազգակցօքն համդերձ, որ զիս խրախեղքայր սիրեկի յորդորեաց առ այս գործ բարի, տալս տեղեկանալոյ մանկանցն հաւատոյ կաթուղիկէի եկեղեցւոյն քրիստոսի հաւատական, և ճանաչելոյ զխոկութին նոցին, և դուք յիշեցեալք լիջիք ի քրիստոսէ ի միւսանգամ գալստեան նորին. Ամէն »:

Գիրքը փոքր 8°, անհարթ միջակագիր, առանց նարի. 200 էջ՝ ցանկով միասին. անպիտան տպագրութիւն:

— *Յովհաննիսի Վարդապետի Կոստանդնուպօլսեցւոյ Պատասխանատուութիւնք Թղթոյ ուրումն ընդիմագրականի գրեցելոյ յեղբարց ումանց հայկազունեաց: Յամի տեառն* 1687. *ի վէնէտիկ քաղաքի առ Նաքօմ Մօրէթթի:*

Յէջն 3 դրուած է Օրինակ Թղթոյն ցէջն 8, և 9 էջէն կը սկսի պատասխանն և կ՚աւարտի յէջն 47, ուր ի վերջոյ կ՚ըսէ. « Զայսուիկ գրեցի առ եղբարդ իմ խնդրելով գներումն յանդգնութեան իմոյ. զի եմ ձեր ամենեցուն ծառայ նուաստ Յոհաննէս Հոլով: ողջ լերուք »:

Գիրքը փոքր 8°, միջակագիր, զարդափակ երեսներով. նոտր գիր չունի, այլ միօրինակ բոլորգիր. և Թադէոս երէցի տառերով կը թուի տպագրուած ըլլալ:

— *Պարզաբանութիւն Հոգևորաց Սաղմոսացն Դաւթի Մարգարէին. Ժողովեցեալ ի զանազանից Մատենից Վարդապետաց Եկեղեցւոյ, Եւ Թարգմանեցեալ ի հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Եղիազարու Արքազան Կաթուղիկոսին. ի նուաստ Յոհաննիսէ վարդապետէ կոստանդնուպօլսեցւոյ ի փառս Մեծագոյն Աստուծոյ: Եւ Տպագրեցեալ Արդեամբք Եւ Գայիւք Ագուլեցի խօճայ Գուլնազարի Որդի խօճայ Նահապետին ի սեփհականի Տան իւրում: ի Թուականութեան Մերում ՌՃԼԶ. ի Վէնէտիկ Քաղաքի:* In Venetia, Per Naabiet de Gulnasar. 1687. Con licenza de' Superiori, e Privilegio.

Յէջն 2 Ագուլեցի Նահապետի փայտատիպ պատկերը կայ արեւելեան զգեստով, և չուրջի բոլորակին մէջ տպուածին առ խօսքը. « Այլ ես որպէս ձիթենի պտղալից ի տանն Աստուծոյ յուսացայ (յ)ողորմութիւնն Աստուծոյ », և տակը՝ « ի թուին հայոց ՌՃԼԶ »: Յէջն 3 հետեւեալ ոտանաւորը Նահապետէն գրուած.

« Ի թուին հազար հարիւրեկի.
երից տասանց և հնգեկի.

ի ժամանակս հայրապետի.
էջմիածնայ սուրբ աթոռի։
Եղիազար կաթուղիկոսի։
ընտիր և քաջ առաջնորդի.
լուսաւորչին փոխանորդի.
հայաստանեայց հովուապետի։
Յորդորանօք բարեսիրի.
յովսեփայ մեր վարդապետի.
զմիւռնոյ գաւռին առաջնորդի.
ճշմարտութեան քարոզողի։
Ես նահապետ նուաստ հոգի.
որ եմ որդի զուլնազարի։
գեղջիւ ընտիր ազուլեցի.
զոտանաւորս չարադրեցի։
Ի նախերգան ըս մեկնչի.
բուն սաղմոսին մեծի դաւթի.
զոր փափաքմամբ յոյժ խնդրեցի
և օգնութեամբ տեառըն գտի։
Տեսանելով ի յայլ լեզուի.
յօժարեցայ յայսմ բանի։
ի փառս փրկչին մեր յիսուսի.
և ի յօգուտ հայոց ազգի.
Ի յիշատակ անքակտելի.
և ի սփոփանս ընթերցողի։
զի գանձէ սա անպատմելի.
ուղիղ սրտիւ սաղմոսողի։
Աշխատանօք յոհաննիսի։
սատամպօլցի վարդապետի.
զոր մաղթանօք աղաչեցի։
ձեռն արկանել այսմ գործի։
Ակնարկելով օրինակի.
հրէից ազգաց ըն թարգմանչի.
այլ և յունաց գաղափարի.
և լաթինաց չարադրողի։
Որ հաւանեալ խնամ բանի.
արար զկիրքն այժմիկ տառի.
և աշխատամամբ իւրոյ ջանի։
հասոյց ի վերջ զիղձն իմ բարի։
Որով քաղցեալ ըն կերակրի.
և ծարաւին արբուցանի։
մեղաւորաց յոյս պատրաստի։
արտմեցելոց սփոփ ըն բերկրի։
Քանզի պարզ է և հեշտալի.
և դիւրապէս հասկանալի։
իւրաքանչիւր ցանկացողի.
լուծէ զկապ տարակուսի։
Զի այս էր իղձ իմոյ սրտի։
և կատարումն իմոյ ուխտի.
բարեսիրաց մերոյ ազգի.
թողուլ զսա յիշման տեղի։
Բազում գրամ ըս վատնեցի.
ի նեղութեան ժամանակի.
մինչև ըզ սա տպագրեցի.
և ի վախճան իւր հասուցի։
Շնորհօք հոգւոյն պարգևողի
և աղօթիւք աստուածածնի.
անարժանիս նպաստողի.
և արկարիս ձեռն տուողի։
Զուարթ սրտիւ հանդէս մտի
ըղծանրութինս ի յանձն առի.
վասն յուսոյն պարգևողի։
զվարձս յերկնային ստացողի։
Արդ եթէ ոք տուաւ զմայլի։
և հոգեպէս մխիթարի։
յիշման առցէ զիս արժանի։
ի ժամու սուրբ պատարագի։
Եւ թէ գտցի սխալ լեզուի։
չարադրութեանս անարհեստի։
խնդրեմ ներել վասն յիսուսի։
անվարժութեան ձեր ծառայի»։

Յէջն 5 Յառաջաբան թարգմանչին ցէջն 7, ուր կ'ըսէ. «Ի վաղուց հետէ ցանկանալով ազուլեցի խօճայ զուլնազարի որդի խօճայ նահապետին մեկնութեանց սաղմոսացն դաւթի մարգարէին, խնդրեալ էր բազմիցս զնոյնն ի կոստանդնուպօլիս ի փարատումն տխրութեանց իւրոց. և ի սփոփանս հոգւոյ իւրոյ։ Եւ ի չկարելն գտանել զպարզախօսումն հեղինակ, կամ զլիակատար զնա, ուխտեալ էր յանձին իւրում տալ չարադրել զնա երբեմն ի դիպակում ժամու ի լրումն ըղձի և զխաղաղութեան իւրոյ. Ուստի ի գտանալն իւր վերստին առողջութեամբ շնորհօք տեառն ի քաղաքս այս վէնէտիկ. թախանձանօք խնդրեաց ի հերոյս պարզաբանել զնոյնն։ Ո՛չ վասն մարմնաւոր օգտի և չահասիրութեան իւրոյ, այլ վասն հոգեկան մխիթարութեան ազգին հայկազունեաց. և ի յիշատակ անջնջելի ինքեան և ծնողաց իւրոց հանգուցելոց ի քրիստոս։ Բայց ո՛չ իւրթին չարադրութեամբ, այլ աշխարհական լեզուաւ. ըստ որում տեսեալ էր սա խա-լացիս. զի ամենեքեան միահաղոյն դիւրապէս հասկանալով, վայելիցեն զնոյնն…»։ Յէջն 8-9 «Խըրատ Առ ընթերցողս»։ և յէջն 10 փայտափոր պատկեր Դաւթի հարուածներուն, և դիմացէն կը սկսի մեկնութիւնը և կը հասնի յէջն 768։ Յէջն 771–837 մեկնութիւնք Օրհնութեան Երից մանկանց, մեծացուցէի, օրհնութեան Զաքարիայի, աղօթից Սիմէոնի և Նարեկացւոյ «ընկալ քաղցրութեամբ» և «Որդի Աստուծոյ կենդանւոյ» աղօթքներուն, ապա և Մանասէի «Տէր ամենակալ» աղօթքին։ Ասոնցմէ վերջ կայ Շնորհալւոյ «Հաւատով խոստովանիմ» աղօթքը. և յէջն 838–840, հետևեալ կրկին յիշատակարանները, մէկը Նահապետէն, և միւսը հաւանօրէն թարգմանչէն։

«Ես նահապետ զայս ստացեալ։
սա է որ զայս տպագրեալ։
Որպէս և է նախ գուշակեալ։
բուն ըսկզբումն չարադրեալ։
Բազում պիտոյ զայս համարեալ։
եւս ըզ վերջ ըն զոհացեալ։
Փափաք սրտիս տուաւ անցեալ։
աստուածաբան բանք հաստատեալ։
Տարակուսանք բանն բարձեալ։
և յիմարաց աչք ըն բացեալ։
Դաւթի սաղմոս ըն թարգմանեալ։
մարգարականք հետ ընթացեալ։
Յաստուածակոյս կոչմէ եղեալ։
ոչ ի մտաց զայս արարեալ։
Եւ ո՛չ արժան զիս համարեալ։
անարժանիս արժան տուեալ։
Բազում զրոց զայս ժողովեալ։
թարգմանութիւն տուաւ լցեալ։
Աշխատանօք տպագրեալ։
զինչ պիտոյ էր ո՛չ խնայեալ։
Պայծառութիւն ազգի եղեալ։
մեկնիչ զսա մեք անուանեալ։
Ուրախութեամբ զբօսնարկեալ։
մինչև ի վերջըն հասուցեալ։
Քանիցս անգամ գանդագունեալ։
բան գծուարին ի սմա գտեալ։
Կիսակատար ըզ սա թողեալ։
զաշխատաւորս ըն արձակեալ։
Զափով զիրգս յոյժ ձիգացեալ։
զի աւելի ծաղիկ չինեալ։
Մինչև ի վերջըն կատարեալ։
ի ժամանակ գառ ըն գտեալ։
Ի յօգնութիւն տեառնէ խնդրեալ։
ի չորս լեզուացս թարգմանեալ։
Յունաց հրէից համաձայնեալ։
և լաթինաց ըն չարադրեալ։
Հայոց լեզուաւ տպագրեալ։
աշխարհաբար զայս ծանուցեալ.

Ըղձիցատակ բարի թողեալ.
ընթերցողաց ըն աղաչեալ.
Որք հանդիպիք և զիս յիշեալ.
յաղօթս ըս ձեր սուրբ և մաքրեալ.
Յոհաննէս վարդապետ խնդրեալ
և զկամս խոյ ի տեղ կատարեալ»:

«Օրհնութիւն աստուծոյ հօր ամենակարողի, գոհութիւն որդւոյ նորա միածնի, և փառաբանութիւն հոգւոյն սրբոյ փառակցի պատւոյ և շնորհակալութիւն հանդերձ երկրպագութեամբ եռանձնեայ մէութեանն, և միոյ աստուածութեանն այժմ և անզրաւ յաւիտենից ամէն։ Որ բարեխօսութեամբ և աղօթիւք սրբուհւոյ աստուածածնին և միշտ կուսին Մարիամու, և մաղթանօք և միջնորդութեամբ ամենայն սրբոց, եւ զկարօղութիւն նուաստացելոյս պաշտօնէիցս ի բազմամեղիցս և ի յոգնավաստ ժամանակիս հասուցանել ի կատար և ի վախճան զ.բաղցրանուագ և զհոգեյորդոր պարզաբանութիւնս սաղմոսացն դաւթի մարգարէին ի փառս ամենամեծի անուան իւրոյ, և ի պարծանս սրբոյ եկեղեցւոյ, ի թուականութեան մերում. ՌՃԼԶ. սեպտեմբերի ամսոյ. Ժ. ի վէնէտիկ քաղաքի։ Արդ որք վայելէք զսա առողջութեամբ ի շնորհս տեառն, յիշեցէք ի սրբազան աղօթս ձեր զաղաւեցի խօճայ զունապարի որդի զխօճայ նահապետն, ընդ բնաւից ծնողաց և ազգականաց նորին հանգուցելոց ի քրիստոս, որ աշխատութեամբ հոգւոյն սրբոյ, և յորդորմամբ բարեպաշտից ոմանց մերայնեաց եմուտ ի զործ զործառնութիւնս այս, և մեծաւ հոգաբարձութեամբ յառաջացոյց զթարգմանութիւն և զապագրութիւն սորին, վասնորոյ զգոյս և զինչս բազումս ի ձեռնամբ զեղեցիկ տառից, ի չքնաղ նորակերտ տպարանիս, ի գունամբ պատուական թղթոյս, և ի յօրինուամբ ամենայն իրաց պիտանաւորաց, յայսմիկ նուաղեցելում ամի, յորում համայնք առեւտրութիւնք զոն խանգարեցեալք, առ ի թողուլ զյիշատակ իւր անջնջելի զկնի իւրեան ի խորախոյս հանուրց հայկազնեաց ուսումնասիրաց և ճշմարտասիրաց, և ի ցնծութիւն ամենայն սիրելեաց և բարեկամաց իւրոց։ Յիշեցէք եւս միով հայր մերիւ զաղաւեցի մղասի աստուածատրի որդի զապատաւորն իմ զթօմայն, որ ամենայն ջանիւ անձանձիր աշխատեցաւ ի տպագրատանն և օգնեաց սրբագրութեան սորին, և ձեռնտու եղեւ միշտ յոհաննէս վարդապետին, յիշեցէք եւս և զայլս փոքրաւորս որք աշխատեցան ի պիտոյս տպագրատանն, ընդորս և զուք յիշեալք լիջիք ի քրիստոսէ յաւուրն մեծէ ի միւս անգամ գալստեան նորին. ամէն»։

Գիրքը 4º հատորակ, երկսիւնեան, մին նեղ բնագրին համար, միւսը լայն՝ մեկնութեան. թուղթը ընտիր, տպագրութիւնը մաքուր. լեզուն՝ ժամանակին աշխարհաբարը, ուր տաճկերէն բառեր ալ չեն պակսիր երբեմն։

Թարգմ. – Տես Արիստոտ ճառնտրողութեան. –
ԹՈՎՄԱՍ ԳԵՄԲԱՑԻ. — Խոկումն քրիստոնէական. — Խոստովանութեան. — Խորհրդատետր. — Ծաղիկ (նորագոյն). — Նուագարան կուսին Մարիամու. — Պարտեզ հոգեւոր:

Գրուածներ. Հանդէս Ամսօրեայ 1893, էջ 369–70 (Տքթ. Վ. Յ. Թորգոմեան)։ – Զարբ. «Նոր Բիբլ.» 348։ – Զամչեան, «Պատմ. Հայոց» Գ. 662, 682։

Յովհաննէս Հուս. — Տես ԷՐԼԷՆՎԷՅՆ (Ս.):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ. — Պատմութիւն Տարօնոյ. Ա. տպագր. ի Կ. Պոլիս, 1719:

Զենոբ Գլակի պատմութեան հետ միասին տպուած է, յէջսն զդ–ճձր (94–182)։ Տպագրութեան, եւն, համգամանքները տես Զենոբ անուան տակ։

= Բ տիպ. Յովհաննու Մամիկոնենի եպիսկոպոսի պատմութիւն Տարօնոյ։ Ի Վենետիկ, ի տպ. ի սրբոյն Ղազարու, յամի 1832 ՌՄՁԱ. 8º, 60 էջ։

Տպուած է վերինին նման Զենոբի հետ։

«Յառաջաբանութիւն»ը կ'ըսէ. «Յովհան Մամիկոնեան եպիսկոպոս յաւուրս Ներսեսի հայրապետի Շինողին կացեալ, հրամանաւ նորա գրեաց զգիրս զայս։ Յորում պատմէ զպատերազմունս տանն Մամիկոնենից ընդ Պարսս, և զՄուշեղայ և զԳայլ Վահանայ, այլովքն հանդերձ. որ ինչ յաւուրս Խոսրովու երկրորդի Պարսից արքայի յերկրին Տարօնոյ գործեցան։ Այլ որ ինչ իրք ի Տրդատայ մինչեւ ցԽոսրով լեալ են, զոր մատենագիրս ի յիշատակարանին իւրում ասանդէ գտեալ ի կողմանս Եդեսիայ և թարգմանեալ, չերեւին ի միջի։

Անդստին ի նոցունց օրինակաց զորոյն Զենոբայ և տպագիրս այս արարաւ. առ որ ցանկալի էր մեզ ընտրելագոյն օրինակս ի ձեռին ունել։ Զի առաւել եւս ի սմա գտանին փոփոխմունք և յաւելուածք. որք եթէ ոչ ի գրչագրաց իցեն յաւոյ կրճատեալ, ինքն իսկ արդեւք մատենագիրն, կամ յետ նորա Գլակայ վանիցն առաջնորդք յաւելին զայնս ըստ նորին յորդորանացն՝ զոր ի յիշատակարանին իւրում ասէ։ Զի «որք զկնի գոցա, ասէ, այլք նախին վանականք, զոր ինչ գործի յաւուրս նոցա ի սմա յայսմիկ՝ դիցէ ի նոյն մատեանս»։ Արդ մեր հնգեցունց օրինակաց բաղդատութեամբ՝ անթերի զբնագիրս յերիւրեալ, թողումք այլում ուրուք քննել որ ինչ ի սմա ըստ ժամանակագրութեան մասին գտանին անտեղութիւնք, և զպատճառս նոցին հետազօտել հոլանել»։

= Գ տիպ, անդ յամի 1889 ՌՅԼԸ։

Նոյնպէս Զենոբի հետ տպուած, նոյն Յառաջաբանութեամբ. 8º, 63 էջ։

Ֆրանսերէն թարգմանութիւն.

— *Jean Mamigonien*, continuation de l'histoire de Daron, traduite pour la première fois de l'Arménien par Jean-Raphaël Emine. (Collection des historiens anciens et modernes de l'Arménie, publiés en français par Victor Langlois). Paris, librairie de Firmin-Didot frères, fils et Compagnie. MDCCC LXIX.

Տես Ալիշան, «Հայապ.» էջ 161–64։ – Զարբ. «Հին դպր.» 431–34։ – Զամչեան, «Պատմ.» Ա. 14. Բ. 339. ծանօթ. 544–5։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ. — Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք։ Ի Վենետիկ, ի տպ. ի սրբոյն Ղազարու, յամի 1836 ՌՄՁԵ. 8º, 1–2 յառաջաբան. 3–7 նախադրութիւն. բնագիր 1–210. 211–13, ցանկ, վրիպակ։

Յառաջաբանէն. «... Ի քսան և վեց ճառից աստի Հայրապետիս առաջինքն մեծաւ մասամբ յանուն Եփրեմի մակագրեալ են ի ճառընտրի ուրեք. որպէս և ի փարիզացւոց քաղաքին կայ այլ օրինակ մի ամբողջ բոլորագիր անթուական նովին մակագրով։ Այլ առ մեզ նոյն ճառք ի նորագիր մատենի միոջ ամենայնին յանուն Մանդակունւոյ մակագրին։ Իսկ ի հնագոյն պատուական օրինակն երկաթագիր զոր ունիմք և զոր կալաք մեզ առաջնորդ ի տպագրութեան, խանգարեալ էր անուն

մատենագրին առ հնութեանն. Էն ի ճառից աստի և ոմանք յայլ և այլ գրչագիրս միոյն անուամբ վարեցեալ և այլոց յայլում. յորմէ և ոչ վայրապար երկբայեցի հնախոյզ ուսումնասէրն եթէ զոր ի նոցանէ որոյ մատենագրի սեփականել արժան իցէ. զայս եւեթ յայտնի գիտեմք, զի ի յոյն և յասորի բնագիրս մատենագրութեանցն Եփրեմի չիք և ոչ մի ի ճառից աստի։ Այլ թէ նորին Մանդակունւոյ իցեն թարգմանութիւնք յԵփրեմայ որոց բնագիրն կորուսեալ իցէ, կամ թէ ի բանից նորին Եփրեմի և Ոսկեբերանի ծաղկաքաղ արարեալ և յանձնէ յայլ կերպարան ածեալ իցէ զնոսին լաւ ժամուն պիտոյից ի բնմբռնացութիւն ժողովրդեան, յորմէ յումանս ի նոցանէ երևի անուն Եփրեմի և ուրեք եւս Ոսկեբերանի, չիշխեմք առ ժամս զատատան առնել համարձակ։ Այլ եթէ այսպէս և եթէ այն, կարծեմք եթէ չիցեմք վրիպակ ինչ գործեալ եթէ Մանդակունւոյ զնոսին ընծայեցաք յօրչափ օրինակ յանուն նորին ի ձեռին ունիմք, և ի հակառակէն ոչ զօրաւոր ինչ հաւաստիք»։

Բովանդակութիւն. Վասն խոստովանութեան փարուց յանցանաց. — Վասն ապաշխարութեան. — Վասն պահոց սրբութեան. — Վասն ընդունելի և անընդունելի պօթից. — Յաղագս պարտութեան անանկաց. — Յաղագս պտղոց և պատարագաց. — Վասն փոխոց և վաշխից. — Յաղագս միաբանութեան աղքատաց. — Վասն քահանայից սեղանատեսութեան. — Յաղագս բամբասողաց. — Վասն սիրոյ և մախանաց և նախանձու. — Վասն բարկացողաց բարուց. — Վասն ոխացողաց և քինահանաց. — Վասն սակաւ զգուշութեան որ ոչ ապաշխարեն. — Վասն չար սովորութեան երդմանց. — Վասն արբեցողաց անօրէնութեանց. — Վասն անօրէն թատերաց գիտակաց. — Վասն կնաթողաց. — Վասն անասնամոլաց. — Վասն չարերոյ զթշնամիս առատածոյ. — Վասն անհեղ հարուածոց կարկտի. — Վասն զգուշութեամբ ի խորհրդոյն մերձենալոյ. — Վասն միաբանութեան վախճանելոյ. — Ողբք. — Աղօթք. — Յաղագս պէսպէս տառապանութեան խրատու. — Յաղագս պէսպէս ախտից. — Վասն հմայից գիտակաց. — Կանոնք. — Յաղագս քառասնորդական պահոց. — Ի սուրբ Երրորդութիւնն. — Վասն սիրոյ։

= Բ տիպ, անդ 1860. նոյն յառաջաբանով 8°, 1–11, ճակատ, Յառաջաբան, Նախադրութիւն. 13–219 բնագիր. և էջ մի ցանկ։

Նոյն տպագրութեան մէջ նորագիւտ ճառ մըն ալ կայ՝ մակագրեալ. «Բան խրատու առ ճգնաւորսն»։

Քննադատութիւն Յովհան Մանդակունեան եւ իւր երկասիրութեանց վրայ. — Տես ՍԱՐԳՍԵԱՆ (Հ. Բ.)

«Մասեան Յովհաննու Մանդակունւոյ Յաղագս սիրոյ և սրբութեան որով պաղպաերին արարածք». Արարատ 1903, թ. 6, 7։

Տես եւս Մաշտոցի մէջ ժԱ կանոնները, որոնք իրեն կը վերագրուին։

Բրոֆ. Տեղա Մանդակունւոյ մէկ ճառը թարգմանած ու տպագրած է. Una lettera di Giovanni Mandacuniese – Atti e Memorie della R. Accademia di scienze, Lettere ed Arte di Padova 1889–90, հատ. Զ։

Գերմ. թարգմ. J. M. Schmid, Hl. Reden des Joh. Mandakuni. Ռէկէնսպուրկ 1871։ – Կանոնք Մանդակունւոյ. «Բան կանոնական», երկու կտոր. «Վասն պասեքին» և «բան երկրորդ», առաջինը առ Աբէլ եպ. Միխիթարեանց, Պատմ. ժողովոց, էջ 73–76. լատ. թրգմ. Անճարակեան ի գիրս A. Mai, Script. vet. nova coll. X. 1. p. 296–98. երկրորդը՝ տպ. Վենետիկ 1860, էջ 207–208. թրգմ. Շմիտ 243–44. լատ. թրգմ. առ Mai, p. 298–99։ – Իբր թրգմ. պատարագաց տես Գաթրճեան, «Պատարագամատոյցք», էջ 319–40, եւն։

Գրուածներ Մանդակունւոյ մասին. Արծուի Վասպուրականի 1859, էջ 23։ – Լումայ 1903, թ. 6, էջ 213։ – Զարբ. «Հին Դպր.» 327–333։ – Զամչեան, «Պատմ.» Ա. 536. Բ. 159, 166, 169, 172, 175, 187, 211, 213-217, 218։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ԴՕՐՍԻՉԻԱՑԻ. Հմմտ. Գործը մէջ ԼՈՒՈՏԷ անունը, յէջն 1093–94։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՐԳՈՒԶ, որ է Յովհաննէս վարդապետ Ջուղայեցի կամ Սպահանցի. — Դաւանութիւն կամ Կրթութիւն հաւատոյ. Ա տիպ, ի Ջուղա, 1688։

Ճակատէն առաջ՝ «Պատճառ և նախերգանք գրոցս» խորագրով յայտարարութիւն մը կայ. «Վանմախոնհից անձանց. և ճշմարտասիրաց ողոց. ի քրիստոս աստուած հաւատացելոց. լուսաւորչածնելոց. մանկանց սուրբ կաթուղիկէ եկեղեցւոյ հայաստանեայց ուղղափառաց բարեբատից։ Նուաստ յուսեմ Սահփաննոսէ բանի պաշտօնէէ. և վերադիտողէ մասին հայոց որք ի կողմանս պարսից։ Գիտութիւն լիցի ձեզ սիրելեացդ. զի զպատճառ տպագրութեանս մեր է՛ այս. հեռագօտ եղաք ներկայս զի յոլովք գիրք գոյր յանյայտ յամէքէ ի մերայնոց նախնեաց սրբոց վարդապետաց։ մանաւանդ պիտանիք հարկաւորք և լուսաւորօղք. և թէ ուրեք ուրեք առ այս. և այն զատնի. զի՞նչ շահ և օգուտ հասարակին։ վասն որոյ աղաւնեալ ի յոյժ ամենից սուրբ հօգին. սկսաք ի լուսածել զաղագրատունս. առ ի տպել զմագեմի սուրբ գրեանքս. զոր յետ սուղ ժամանակի տպեալ առաքեցից եմք առ ձեզ։ այլ ներկայս և թուղթք որ և գիրք եւս. վասն ընդդիմութեան երկաբնակաց. թէ ո՞ և ո՞վ ոք. աչխատասիրութեամբ ճնչեալ ադնութեամբ ժողովեալ և մեկնեալ հօգւով սրբով աստուածաշունչ գրոց։

Նախ զմաթէոսայի սիննեաց. եպիսկոպոսի. թուղթն որ առ կայսրն հերակլ գրեաց։ Երկրորդ. սահփաննոսի սինեաց. եպիսկոպոսի, թուղթն որ առ գերմանոս պատրիարքն կոստանդնու պօլսի գրեաց։ Երրորդ միւս սահփաննոսի սինեաց եպիսկոպոսի որդոյ տարաաթց իշխանի որ առ գրիգոր կաթողիկոսն գրեաց։ Չորրորդ պօղոսի տարօնացոյն. որ առ թէոփեստէ գրեաց։ Հինգերորդ վարդանայ մեծին հաւասրի ընդդիմութիւն. որ առ հասարակ երկաբնակսն գրեաց. ի սուրբ գրոց աստուածաբանից։ Վեցերորդ. հր. բանք միխայէլի վասն ժողովոյն քաղկեդոնի գրեաց որ և ինքն էր ազգաւ ասորի. վարդապետ և պատրիարք նմին ազգի։

Արդ որովհետև ոչ գոյր յազգին մերոյ տպագրատուն. եթէ ազեալ յոլովեցուցեալ սփռեալ էին ի տունս հայոց. և ձեռագրով հազիւ այսպէս. և այսքան լինի որպէս տեսանէքդ. և յղել տալ ազել յերկիրն ֆռանկաց. անմարթ է՛ր և անկար։ Չի մեզ գիրք ինքեանց գրոցն է ներհակ. վասն որոյ ոչ կամին. և ոչ թոյլ տան առ ի բազմանալ. մերայնոց սրբոց վարդապետաց գրեցելոցն։ Այժմ որով հետև. պատրաստեալ եղև ի միջի մերում գործարան տպագրութեան. այսու հետև անհն. և անկասկած ազելոց եմք զամենայն զգրեանս սրբոց վարդապետաց որ առ մեզ գոյ։ Բայց այժմ զկրկնակի փոքր գրեանն որ և զրու և կատարումն խաղ եղև. հինգ հինգ հարիւրով. սփռեցաք առ ամենայն լուսաւորչածնունդ և ուղղափառ հասարակ

հայոց․ զի են ոսքս փոքր գործարանիս և գրչութեան. իբր առ հաւատչեա ի խոստովանութիւն քրիստոնէութեանց։ Քանզի պատշաճ տեսեալ մեր ներկայս զասա. հարկեալ ի վերայ սիրելի. և յարադատ եղբարց Յոհաննէս և Աղէքսանդր վարդապետացս: որ և խնդրեն թարց տարակուսի հոգացեալ. տալք և ակեցաք զհայցելին մեր․ որոց քրիստոս լիցի վարձահատոյց։ Զենի որոյ զմեծամեծան և կատարեալն եմք ավելոց։ Բարեխօսութեամբ և անդաանալի հայցուածովք բազմաչարչար նահատակին քրիստոսի և բազում երախտի. Հօրն մերոյ սրբոյն. Գրիգորի լուսաւորչին և հոգէկիր սուրբ հարցն. և ձեռովք աղօթիւք։ Եղև սկիզբն և կատարումն սորին ի վանս սուրբ ամենափրկչի նոր Ջուղայու. ձեռամբ և հոգաբարձութեամբ Տեառն Ստեփաննոսի նորին այցելուի ի փառս քրիստոսի աստուծոյ։ որ է օրհնեալ յաւիտեանս ամէն»։

Վերև յիշուած կրկնակի փոքր գրքերէն մին այս է, միւսը Աղեքսանդր Ջուղայեցւոյ «Գիրք տօնական»ը։

Այս նախերգանքէն վերջ գրքին տառը գլուխներուն ցանկը. մինչև հոս ութ թուղթ՝ առանց թուահամարի է, և ապա յէջն 1 ճակատ.

Գիրք համառօտ վասն խակացեալ և ճշմարիտ հաւատոյ. և դաւանութեան ուղղափառ կաթողիկէ. ընթանուր հայեաստանեաց եկեղեցւոյ: զորս առաք և ունեմք այժմ. ի Գրիգորէ սուրբ լուսաւորչէն: և Երից սուրբ ժողովոցն և ի Սրբոց. հոգի ընկալ. երկոտասան վարդապետացն: և եւս վասն ընդ դիմութեան երկաբնակաց. որք հեռեւին ըստ մտացածին բանից իւրեանց. և ոչ ըստ աւանդութեան սրբոց հոգի ընկալ հարցն. զոր ստացեալ ուսան ի քաղկեդոնական ժողովյն. և ի տումարէն լևոնի. որ յայտնի ընդդէմ է երից սուրբ ժողովոյն. և աստուած ընկալ սուրբ հարցն:

Եղև տպագրութիւնս ի թագաւորութեան արքային արքայ. Շահսուլէման. թագաւորին: ի Հայրապետութեան Տեառն Եղիազարու կաթողիկոսի ամենայն Հայոց: ի Ջուղայ. ի վանս Սուրբ ամենափրկչի Ձեռամբ նորին առաջնորդի Ստեփաննոսի Արհի Եպիսկոպոսի. ի քալանթարութեան պայազատ Պարոն Աւետին: աշխատօղք տպարանումս զսարգիս և զաստուածատուր իրիցունքս եւս յիշել աղաչեմք:

Դաւանութիւն հայոց և ներածութիւն անուղղիզ: Smbolvm Armeniorvm et introdvctio de didiregtam. ի Թուոյ փրկչին Ռ. ՉԾ. ՁԸ: և ըստ Հայոց. ՌՃԼ և Զ: Օգնեա Հոգի սուրբ աստուած և հաս ի թիկունս տկարութեանս մերոյ:

4 էջէն կը սկսի գիրքը հարցուպատասխանիով, լուանցքին վրայ նշանակելով Հրց. Պխ. և միակորդ կը հասնի յէջն 361, ուր կ'ըսուի ի վերջոյ. «Այս քանս բաւականացի խմաստայեղց հանձարեղագունիցն. զոր արարաւ և յօրինեցաւ ի ձեռն ամենաթշուառ անձին Յոհաննէս վարդապետիս յիսպահանցոյ ի փառս ամենասուրբ երրորդութեան որ է օրհնեալ յաւիտեանս ամէն»: Եւ ապա հետեւեալ յիշատակարանը. «Այլ և խնդրեմ ի ձէնջ յիշել ի քրիստոս զսրբոյ մեծարանի ատտ զամարեցելոց. յաւուցչապետէ հոգի ընկալ հօրս մերոյ. Տեառն Պօղոսի վարդապետի. որք միշտ ի պատում կան և կատարեն զպաշտօն սրբոյ եկեղեցւոյս. որ և կամակցութեամբ միմեանց ջան եդեալ և զոն գործեալ. ի վերայ գործարանի տպագրութեանս այսմիկ. զՄելքայէլ վարդապետն. զՅօհաննէս վարդապետն զշարադրող գրոյս. զԱղեքսանդր միշտաքարոզ վարդապետն. զՆսայի վարդապետն. զԱհարոն վարդապետն. զհոգեբարձու վանաց և տպագրութեանս զՏէր Անդրէասն. զՏէր Թովմասն. զՏէր Յոհանն:

Եւ այլ գործակալք տպագրութեանս. և միշտ աշխատօղք զՏէր Սարգիսն. և զՏէր Աստուածատուրն ի սրբոյ յակոբայ: մահդասի Կոստանդ. դպրապետն. զաւաք սարկաւագունն. զմէթն. զմիմէոնն. զմիքայէլն զներսէսեանքն. զյոհաննէսն. զաստուածատուրն. զաստուրն յոհաննէսն. ռէրոնն. թորոսն. փիլիպպոս. պետրոսն. զյոհանն. զանդոնն. զհայրապետն. զալավէրանն. զյարութիւնն. զաւեփանոսն. և զմանուկ գիր թափօղն. և զստեփաննոսն. զպետրոսն. մայրաքաղէն: որք այժմ կան. ի վերայ խրախանջիր գործոց. զոր ոէր աստուած զամենեսեան վարձատրեսցէ ամէն: Հայր մեր որ յերկինս».

Ընդ ամէնը 364 էջ: Գիրքը փոքր 8°. անպիտան թուղթ, անհարթ միջակագիր. թէպէտ Ջուղայու նախկին տպագրութիւններէն քիչ մը բարեձև. նոտրերն ալ անհարթ են և անյարիր, ինչպէս և լաւին գրերը: Անհարթ և անպիտան տպագրութիւն և սխալաշատ. սխալը բուն ճակատին թուականէն կը սկսի. ուր գրուած է ՌՃԼԶ, փոխանակ ՌՃԼԷ-ի:

= Բ տիպ, ի Կ. Պոլիս, յամի 1713.

Նախադուռն է. Կրթութիւն հաւատոյ. Տպագրեցեալ ի թվին հայոց. ՌՃԿԲ ի Հայրապետութեան Տեառն Աղէքսանդրի:

Եւ ապա նոր ճակատ.

Գիրք համառօտ՝ վասն ճշմարտութեան հաւատոյս քրիստոնէականի. և ուղղափառ դաւանութեան ընդհանուր կաթողիկէի հայաստանեայցս եկեղեցւոյ. զոր առաք և ուսաք ի սրբոյն գրիգորէ երկրորդ լուսաւորչէն մերմէ. և յերից ժողովոցն սրբոց. և ի սրբոց հոգի ընկալ վարդապետացն երկոտասանից. զոր և ունիմք այժմ հաստատապէս: Եւ վասն ընդդիմութեան բանիցն երկաբնակաց. որք ոչ հետեւին աւանդութեան հոգիազգեաց հարցն՝ սրբոց. այլ՝ մըտացածին բանից իւրեանց. զոր ուսան ի քաղկեդոնականէ ժողովոյն. և ի տումարէն լեւոնի. որք յայտնապէս ընդդէմ են երից ժողովոցն սրբոց. և հարցն հոգիացելոց: Կրթութիւն հաւատոյս քրիստոնէականի, ի վարժումն մանկանց կաթուղիկէի Եկեղեցւոյս Հայաստանեայց. Շարադրեցեալ աշխատութեամբ Յօհաննիսի աստուածաբան վարդապետի Ջուղայեցւոյ: Տպեցեալ թուին փրկչին՝ ՌՉԺԳ. իսկ ըստ թվոյս հայկազնականի. ՌՃԿԲ: ի հայրապետութեան Աստուածընկալ աթոռոյն սրբոյ Էջմիածնի և երիցս երանելոյ և ծայրագոյն քահանայապետին աստուծոյ. և արիական հովուապետին՝ Ջուղայեցի տեառն Աղէքսանդրի՝ պանծալի և սըրբազան Կաթողիկոսին ամենայն Հայոց: Եւ ի պատրիարգութեան սրբոց աթոռոցն՝ երուսաղէմի, և կոստանդինուպօլսի խոհական Աստուածաբանութեան վարդապետին: ի տպագրատանի գրիգոր դպրի մարզուանեցւոյ: Նպաստութեամբ սրբոյն Էջմիածնայ, մօրն լուսոյ: Եւ ընդ հովանեաւ սուրբ եկեղեցւոյն աստուածածնի: ի մայրաքաղաքն կոստանդինուպօլսի: ի փառս քրիստոսի և ի յօգուտ եղբարց բանասիրաց:

Այս ճակատներէն վերջ՝ ըստ կարգի յէջն 4՝ վարդապետի պատկեր մը՝ չորս տող ոտանաւորով,

և դիմացէն ա թուահամարով կը սկսի և կ՚աւարտի յէջն ըճխզ (243), վերև յիշուած «Այսքանս բաւականասցի», եւն, տողերով, բայց հոս տպագրողէն տասը տողով տառնաւոր մը ալ աւելցուած է, որուն նախադասութը «Օգնեա» կը կարդին։ Յէջն ըճխգ–ըճխզ ցանկ. յէջն ըճխէ–ըճծա (251) հետևեալ յիշատակարանը.

«Ձեռնտուութեամբ աստուծոյ հոգւոյն ճշմարտի. և պարգևօք նորին ամենատատ շնորհողի. եղերեցեալ յաւարտումն հրաս տպագրումն գրգոյս չահաւէտի։ Եւ քանզի՝ ի վաղուց հետէ ածեալ իմ զմտաւ՝ տապեցեալ խորովեցի ի սրտի, թէ որքան գրեանք աստուածայինք, և մատեանք օգտակարք, յարանց աստուածաբանից՝ և յուսուցչաց սրբոց արտադրեցեալք գոն ի մեզ, և անմ ո՛չ երևելին ներկայանալ. մինչ զի մոռացումն անուանց նոցա հարկեցաւ լինել. ո՛չ առ ամենեսեան, այլ առ սմանս անծանօթս ի նոցանէ։ Եւ այս՝ ո՛չ վասն այլոյ ինչ ո՛չ սփիւռ և անիշխան լինելոյ ազգիս և ո՛չ կուսակ և իշխանունակ։ Մանաւանդ՝ հարկապահանջ բռան և կեղեքման այլասեռից և տարակրօնից նշդեհարար եղոյ ի նեղքոյ։ Եւ զանցեալն ուրեք՝ զո՛չ ինչ խրախուսանս վայելման հեռեալ և տարակայից լիապէս և բաւականաբար ընձեռել զօրէ։ Եւ զայլս սոցին նմանս յիշելով՝ աղետաչար և լերդակէզ եղեալ՝ համապազօր զանձն իմ խարշատեալ յաւէտ ցաւէի։ Եւ մինչ յայսց վարանեցմանց և հոգոց էի գերեցեալ, տեսի զդրդուկս զայս՝ ի ձեռն ջուղայեցի պարոն ապա վէլին. հայեցայ և աչա բան զօրաւոր էր ի միջի. և խոկոյն սատորկ ըղձիւ հարայ ի սէր սորա։ Եւ անդ ի տեղին էին ազուլեցի մուրատի որդի պարոն յարութիւնն. և ջուղայեցի տէր աստուածատուրի որդի պարոն պետրոսն. որոց ջերմեռանդ սիրով յանձին կալեալ զբաւական ծախս տպագրատան՝ մեծաւ ջանիւ և յօժարութեամբ սրտի սոփոլեցին զիս զանարժանս ի գործ ապելոյ։ Եւ իմ վստահացեալ յամենասուրբ հոգին աստուած՝ սկսայ ի գործ ածել. որոյ և զկատարումն ընկալայ կարողութեամբ քրիստոսի աստուծոյն մերոյ։ Ա՛րդ՝ որք ատգիտկցէք այսորիկ աստուածային գարատոմնիս, զսորին յոգներանդ և զանուչահոտ ծաղկեան վայելելով. և հաշակմամբ ըղձի ի քիմս խմնալիս մերձեցուցանիցէք դքաղցրութիւն խորտակահաւաք սեղանոյս՝ ապաշեմ և աղաղակեմ, յիշեցէք զայսոսիկ գնախայիշեցեալ պարոնայքս. որք ի վեր քան զչափն ջան եդեալ հետևեցան այսմիկ։ Վասն որոյ կրկին աղաչեմ զձեզ սիրելիք իմ միով հայր մերիւ յիշել զսոսա և զընտանիս սոցա մի՛ գանդաղէք. որք ոչ միայն յիշելոյ են արժանիք, այլ և գովութեան։ Եւ եւս յիշեսջիք և զսոյն ազուլեցի մուրատի որդի զհանգուցեալն ի քրիստոս զպարոն զալուստն. որ և ջան խսկ ունէր և կամ, զհարցմանցն և զպարապմանցն. և զայլ գրեանս երկոտասան սուրբ վարդապետացն աստուածաբանից, տպելոյ ի տպարանիս մերում. սակայն կուչօղն վերին փոխեաց զնա յաստի կենացս։ Ընդ որս և զիս զչնչին և զմեղաւոր զգրիգոր գտապագրօղ գրգոյս, և զհանգուցեալ ծնօղն իմ զմկրտիչն, և եւս՝ զդեռաբոյս որդեակն իմ զներսէս ծառայ ձեր և չարօղ գրոց գրգոյս, որ բազում աշխատանս ունի ի վերայ սորա։ Յիշել մաղթեմ յաղօթս ձեր, և զնորջեցեալս իմ։ Այլ և զզանջացի զյովհաննէս վարդապետն. որ ի յառ ի տուր թղթոյ՝ աշխատանս ինչ կրեաց։ Նաև զմիրզաջանն զաղաւաչ եսային, և զբաղդասարն մշակն մեր։ Եւ որք յիշէքդ՝ յիշեցեալք լինիջիք ի Քրիստոսէ յսոյն մերմէ. հանդերձ նորջեցելովք ձերովք յաւուրն այցելութեան. Հայր մեր"»։

= Այլ տիպ ի Կ. Պոլիս նոյն 1713 տարին, բայց ուրիշ տպարանի մէջ և տարբեր ճակատով.

Դաւանութիւն հաւատոյ, և նկարագրութիւն անուղղից. տպեցեալ ի տպարանում սրբոյն Մինասայ զօրավարին և վկային Քրիստոսի։ Ի ընթըւում հայկականիս ՌՃԿԲ. և ի հայրապետութեան տեառն Աղէքսանդրի կաթողիկոսի ամենայն հայոց։

Այս ևս նախադասուն. առա նոր ճակատ.

Գիրք հաւատոյ վասն ճշմարիտ և ուղղափառ դաւանութեան կաթողիկէ եկեղեցւոյս հայաստանեաց. զոր ընկալաք ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէն մերմէ, և յերից սուրբ ժողովոցն. և եւս ի սրբոց երկոտասանից հոգի ընկալ վարդապետաց։ Իսկ և վասն ընդդիմութեան բանիցն երկաբնակաց. հարցմամբ և պատասխանելով հանդերձ։ Ի զուարճութիւն մանկանց եկեղեցւոյ ի յօգուտ եղբարց բարեբաստից լուսաւորչածին երամոց. և ի փառս Քրիստոսի յուսոյն մերոյ։

Գիմացը՝ յէջն 3, «զսն ինչ աղերս տխուր չափեցեալ», երեք տուն տառնաւոր՝ կ՚երևի տպագրողէն, և յէջն 4 վարդապետի պատկեր մը՝ տարբեր երկրորդ տիպին մէջ եղածէն, սա երկտողով. «Գիրք յոհաննէս վարդապետի ջուղայեցւոյն հայատանի»։ 5 էջէն կը սկսի և կ՚աւարտի յէջն 263, ուր կը պակսին հեղինակին «Այսքանս», եւն, խօսքերը. այլ կրկնուած է նախադրան «Դաւանութիւն... անուղղից» խօսքերը։ Ապա յէջն 264 Երրորդութեան փայտափոր պատկեր մը. և յետոյ Տաթևացւոյն գործերէն հետևեալները. Գլ. ԺԱ. «Աստուածութիւն ինչ ընդդէմ այնոցիկ որք ասեն զՀոգին սուրբ բղխումն ի Հօրէ և յՈրդւոյ։ ի հարցմանց գրոց Սրբոյն Գրիգորի Եռամեծի և տիեզերալոյս Վարդապետի Ակնեն արփիափայլի Տաթևեանն վիճակի». – ԺԲ. «Նորին... տասցեալ վասն ծննդեանն Քրիստոսի». – ԺԳ. «Նորին... յաղագս վերջին օծման». – ԺԴ. «Նորին... հարցմունք երկար(ն)ակաց առ մեզ՝ և մեր պատասխանիք առ նոսա». – ԺԵ. «Նորին Գրիգորի տաթևացւոյն քաջ հռետորի, և հմտավար Փիլիսոփայի Վասն մեծի չարաթուն». 265–333. յէջն 334–6՝ հետևեալ յիշատակարանը.

«Փառք պատիւ, գոհութիւն և երկրպագութիւն ամենասրբոյ երրորդութեանն, և միոյ Աստուածութեանն. Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից Ամէն։ Օժանդակութեամբ և օգնութեամբ ամենահասան թևոց Աստուծոյ Հոգւոյն ճշմարտի յԱւարտ և ի կատարէհաս, և ի գրումն ժամանեաց Տպագրումն գրքուկիս այսորիկ. Զոր տեսեալ ի ձեռն Մեծին յոհաննիսի եղբօր որդի պարոն Տիմօթէոսին, Ըստամպօլցի աուլկեսջի զանեկի որդի Մովսէսն և իւր ընկեր յարութիւնի որդի Փիլիպպոսն, յօժ և կարի տենչացան սորա և ջան եդեալ մեծաւ յօժարութեամբ այսորիկ վերոյիշեալքս, այսինքն Տիրացու Փիլիպպոսն, և Տիրացու Մովսէսն ի տպագրումն տալ զսա կամեցան Զոր և զկատարեալս արժանացան շնորհօք տեառն մերոյ։ Ի թուականութեան հայկականս Տումարի, ՌՃԿԳ։ Ամենանն Յունվարի. Ա. ի հայրապետութեան Հայաստանեայցս վիճակի. Ան փոխմադունի, և ծայրագոյն քահանայապետին Աստուծոյ. բազմերջանիկ հօրն հատարակաց ջուղայեցւոյ Տեառն Աղէքսանդրի Սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց։ Եւ ի Տէրութեան Սրբոյն երուսաղէմի և կոստանդինուպօլսի տեառն ի Սահակ Աստուածաբան Վարդապետին։ Եւ հաւանութեամբ Սրբոյ Կարապետին Քրիստոսի Տանն վերատեսող Գրիգոր Աստուածաբանութեան Վարդապետին։ Ի տպարանի նուաստ և ամենեցուն ծառայ Աստուածատուր դպրի։ Ըն-

պատուիրանաց Սրբոյն Մինասայ զօրաւորի։ ընդ հովանեաւ եկեղեցւոյն հռչակաւորի Սրբուհւոյ կուսին Մարիամու Աստուածածնին. ի Կոստանդնուպակերան քաղաքի։ Եւ արդ որք վայելէք ի ծաղկածին լեռնէս, ի մրգաբեր այգւոյս և ի զմայլեցուցչաբուրիկ ծրարէս գվերոյ յիշեցեալքս յանուանէ զամենեսեան. և զնուաստս զոյին միով հայր մերիւ յիշատակել յաղօթս ձեր մի խնայէք. և դուք յիշեցեալք լինիջիք ի Քրիստոսէ յաւուրն մեծի հանդերձ ննջեցելովք ձերովք. Ամէն։ Այլ և յիշեսջիք զաշխատող զործարանիս զմինասն և ամուր կուն միով տառուած ողորմեալ»։

ԺԳ գլխէն վերջ՝ ինչ պատճառաւ գրուած է արդեօք Ա–ԺԳ գլուխներուն ցանկը, ուր կայ առ «Յիշատակարան, և զրուցապատում մատենիս Աստուածայնոյ. որ առի կրթութիւն Հաւատոյ», ուր էջերու այլայլութիւն ալ կայ, և ապա ուրիշ գլուխ մը՝ ԺԵ։

Գիրքը միջակ 8°, միջակագիր, զարդափակ էջերով. անհարթ տպագրութիւն. Նախընթացը լաւագոյն է ասկէ։ Այս տպագրութեան մէջ մէկէ աւելի փայտափոր պատկերներ կան։ Սոյն երկու տպագրութիւնները կատարուած են նոյն տարին ի Կ. Պոլիս, զուցէ առանց մէկ մէկէ լուր ունենալու. բայց այս վերջինին մէջ՝ ինչպէս տեսանք՝ Տաթևացին ալ մտեր է։

— *Համառօտ Քերականութիւն և Տրամաբանութիւն*։ որ է Քերթութիւն բառի, և կրթութիւն բանի։ Արարեալ երկասիրութեամբ Յօհաննիսի վարդապետի Ջուղայեցւոյ։ Յ'Աթոռակալութեանն Էջմիածնայ Տեառն Աղեքսանդրի ամենից Հայոց կաթուղիկոսի։ Տպագրեալ Յ'Ամի Փրկչին 1711. և Հայոց 1160։ ՅԱմստրդամ. փոքր 8°, 78 էջ։

— Գիրք որ կոչի *Սրբազնագործութիւն*։ Ժողովեալ ի գրոց Աստուածայնոց՝ և ի լուսաւոր բանից Սուրբ Վարդապետաց. Աշխատասիրութեամբ Նոր Ջուղայու Սուրբ Ամենափրկչի գերահռչակ վանից միաբան՝ Յովհաննէս մեծիմաստ քաջ հռետորի և բանիբուն Աստուածաբան Վարդապետի։ Ի փառս Աստուծոյ և ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ։ Ի Հայրապետութեան լուսակառոյց և Քրիստոսահիմն Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ Տեառն Եփրեմ Սրբազնակատար և Աստուածարեալ կաթուղիկոսին ամենայն Հայոց։ Յամի կենարարին մերոյ 1812. Եւ ի թուին Հայոց 1261. Արդեամբ և Ծախիւք Պարոն Սարգիս Ծատուր Ագայվալեն կոչեցելոյ. և ի նորին իսկ նորահաստատ։ Տպարանի որ ի Մադրաս. 4°, 415 էջ։

Սկիզբը «Առ վերծանող մատենիս» խորագրով նախաբան մը կայ հրատարակչէն, որ կ'ըսէ. «... Յորոց մինի և ո՛չ նուազ տեսանի յիմաստութեան մատեանս անուանեալ ճաշակեցէք. զոր շարադրեալ է Ջուղայեցի գերիմաստ Յովհաննէս Վարդապետն Յամի փրկչին 1696։ Եւ այս մատեանս պատուականութեան անունն միայն դեգերէր առ մեզ առ ժամանակ մի, մինչև տեսչութեամբն Աստուծոյ յանկարծակի ինձ տեսաւ առ մեզ Յամի փրկչին 1788։ Եւ փոյթ մեծ էր առ մեզ ի լոյս ընծայել զայս պատուական մատեան տպագրութեամբ։ Եւ որովհետև Ազնուազարմ Պարոն Սարգիս Ծատուրն Ագավալեան զնորոգ տպարան յօրինել տուեալ էր ի քաղաքիս Յամի փրկչին 1809։ և ցանկայր իսկ ամենայն յօժարութեամբ սրտի, հանդերձ ծախիւք իւրովք, զի իւրում տպարանի տպագրեսցին ամենայն նորաստեղծ մատեանք առ ի հոգևոր վայելումն ամենայն հայկազեանս ազգի։ Նմին իրի և ես Տէր Յարութիւնս Շմաւոնեան Աւագ Քահանայս եկեղեցւոյն հայոց որ ի Մադրաս, տեսեալ զամենաբարի փափագ սոյն Ազնուազարմ Պարոնիս, փութացայ յառաջ մատուցանել զսոյն մատեան առ ի լոյս ընծայել տպագրութեամբ։

Եւ սոյն Ազնուազարմ Պարոնս ամենայն յօժարական կամօք ընկալեալ փութովին ետ տպագրել զայս քաղցրաճաշակ մատեանս, որով յիրաւի կարեմք ասել թէ պատճառ եղև զհարիւրամեայ կորուսեալ անունն քաջիմաստ րաբունապետիս շարադրողի մատենիս, անդրէն յաշխարհ վերանորոգել, որ զվարձս իւր հազարապատիկ ունի գտանել ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ»։

— *Կրթութիւն մանկանց*. փոքրիկ գիրք զոր յօրինեալ է Ջուղայեցի Յովհաննէս վարդապետն կոչեցեալն Տիեզերալոյս, որ տպագրեալ է ի Պոլիս, ի տպ. ի Գրիգորի դպրի Մարզուանցւոյ, յամի 1713? (Պատմ. Նոր Ջուղայի, Հատ. Բ. 32)։

Ջուղայեցւոյ մասին տես Ազգասէր 1845, թ. 12, էջ 94։ – Խաչիկեան, «Գաւազանագիրք», յէջսն 3, 5, ևն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԻՍՈՒՍԵԱՆ. — *Դժոխք բացեալ*. Այս է. մտածութիւն ի վերայ տանջանացն դժոխոց։ Արարեալ ի պատուական հօրէն յովհաննէ ի յիսուսեան կարգէ։ Թարգմանեալ յիտալականէն ի հայս՝ ըստ իմացուածոյ բանին՝ յաշակերտաց Մխիթարայ աբբայի մեծի։ Եւ տպագրեալ ծախիւք զափանեցի Պարոն Նահապետի շահումեանց որդւոյ մարութի։ Ի փառս ամենափրկչին, և ի յօգուտ արամեան ազգիս։ Ի հայրապետութեան Տեառն Մինասայ՝ հայոց կաթուղիկոսի։ Ի թուականութեան տն., 1753։ Ի Մարտի, 20։ Ի վենէտիկ ի տպարանի Անտոննոսի որլանտեան։ Հրամանաւ մեծաւորաց։

Թարգմ. ը կատարուած է Թիֆլիզեցի Պետրոս Վ.էն, զոր յետոյ սրբագրեր են Մխիթարայ աշակերտները։ Սկիզբը և վերջը Շահումեանէ գրուած ոտանաւորներ կան։ Գիրքը 12°, 260 էջ։ Դժոխքի եօթը պատկերներով։

ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ. — *Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին՝ որ ըստ Յօհաննու*։ Տպագրեցեալ ի Հովուապետութեան Տեառն Աստուածատրոյ Սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց։ Եւ ի Պատրիարգութեան Սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ՝ Յօհաննիսի Արհի Եպիսկոպոսին։ Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի բազմահաւաք Եկեղեցւոյն։ ի Կոստանդնուպօլիս քաղաքի. ի Տպարանի գրիգոր դպրի մարսըւանեցւոյ։

Ճակատին շալակէն յէջսն բ–ժա յառաջաբան մեկնութեան. ապա հայրապետի պատկեր մը փայտափոր, և ժզ էջէն կը սկսի մեկնութիւնը, և կ'աւարտի յէջն թճծզ (956), որ է վերջ ճառերուն։ Յէջն թճծէ «Յիշատակարան Սրբոյն ըստ պատշաճի յանկման ի Կիրակոսէ մեծէ». ուր կ'ըսէ ի վերջոյ. «... յիշեցէք զամենատրուպ և զբազմամեղս զԿիրակոս որ բազում աշխատեցայ ի սմա, սակս անյարմար և խրթնի թարգմանութեան հնեարին յունականի. որ և ջանացի յերիւրել միայն ո՛չ յաւելուլ և ո՛չ պակասեցուցանել յաստուածաշունչ բանիցն։... Այլ և զանգիտ հայկազանցս զրուատոր մարգարտիս զպատճառն գեբանելի լուսաւորչին մերոյ զփոխանորդ զգրիգո-

րիս՝ զհոգեւոր հայրն մեր և զխնամածու՝ յիշեցէք ի տէր, վասն զի նա եղեւ սկիզբն զսուրբ ուսուցա-րանիս մեկնութեան գրոց ի գիրս յայս ի ձեռն բազում աղաչանաց խնդրոյ զինքն զերանելին։ Որ և լսեալ ինձ ըստ աստուածատուր և պատուիրանատուր հոգւոյ իւրոյ, սկիզբն եր առնել թարգմանութեան նախ յասորւոյն լեզուէ։ Եւ քանզի չափաւոր այ-լատարազ գայ լեզուն ասորի ի մեր հայկազանցս արամեանս ազգ և լեզու, ըստ որում վերաբին իմ աղաչանս ի ձեռն առնել վկայաւէր ոգւոյն ի յու-նականէն առնել զթարգմանութիւն գերահրաշ ճա-ռից և աստուածախօս բանից։... Արդ՝ անկնդիր եղեալ ինձ թողեալ զանդրէաս երէց ասորի զթարգ-մանիչ՝ յղէ ի միջապօտամի գաւառ առ յունա-կանն հռետոր թէօփիլէ կոչեցեալ. որ էր քար-տուղար և պիտոյ նոտար իշխանին տոհմն կոչեցե-լոյ. և բազում ծախիւք առատատուր պարգեւօք նմա ետ թարգմանել զսուրբ գիրս։ Եւ արդ՝ նա՝ ի քրիստոս փոխեալ յերանելի կեանսն՝ բազում ճառք մնացին անթարգմանք։ Յոր ես ձեռնարկեալ նոյնպէս առատատուր ծրիւք զմնացեալսն ետու ա-ւարտել նմին տոն։ Եւ է ճառից թիւ զոր նորա ի յայս ածաք յիսուն և հինգ ճառ. քանզի զերե-սուն և զերիսն բազում յուզիւք յառաջին մեր թարգմանչացն գտաք թարգմանեալ։ Ի սկզբանն տասն և երեք ճառ յասորի լեզուէ. բանքն իսկ յու-ցանեն. իսկ զքանն ի յունականէն. որք լինին երեսուն և երեք ճառք։ Բովանդակն էր գիրքն լեալ թարգմանած ի հայս, և ի ծնուլթենէ և յան-փոյթ առնելոյ այլքն կորուսեալ և եղծեալ էին յօրինակս հինս ուր և կայր։ Եւ զայս զոր գտաք՝ ի յախմար և ի տղէտ խաւարած գրագրաց այլայ-լած և թիւրած էին բանքն և տունքն. և աւելի և պակաս, անօգուտ ի կարդալոյ և յիմանալոյ։ Զոր իմ կիւրակոսի տրպի և անարժանի ի ձեռն առեալ ուղիղ յօրինեցի ըստ կարի. ո՛չ ըստ մնաց բա-նիցն և ո՛չ ի կրկին օրինակաց. և ըստ այսմ զնո-րոգ թարգմանեալս բազում ջանիւ և աշխատու-թեամբ յերիւրեցաք յուզիցն բառ և բանս ըստ մերումս զհասարակոր զիրթին բանին. և ըստ վերագոյն գրելոյն ո՛չ աւելի և ո՛չ պակաս։ Արդ՝ այսպէս գրեցաք և տուաք վերջին աւուրց վերջին դարուս։... Ընդ որս և զսուրբ վարդապետն մեր զգէորգ յիշեսջիք, զգիտնական հայոց զհովիւն բարի և զգաստ, և զմարգարէր հոգին. որ վերաբին ծնաւ զմեզ ի տէր բանիւն կենաց։ և զերէց սուրբք և խոհականութեամբ զեղբայրն մեր և զանդրանիկ մերոյն կրթակարդ և հրահանգաւորձ աշակերտու-թեան՝ զքրիստոսազգեացն զգէորգ մակ անուն մեղր կոչեցեալ յիշեսջիք ի քրիստոս։ և ետ և զծնօղսն իմ հանգուցեալս ի քրիստոս յիշեսջիք աղօթիւք։... Էր թիւ ի սկզբանցն արարչութեանց ի մեզ. ՑՇԼՉ՝ ամ։ Իսկ ի կենարար գալստենէն քրիստոսի՝ ՌՃԺԲ՝ ամ։ Իսկ ի խոսրովայն պարսից սկսեալ մերս թիւ ըստ ամաց՝ ՌՃԿԶ։ Իսկ ըստ աւարտման առաջին շրջանին, ՌՃԼԲ։ Նորս սկսեալ չար ամաց, ԼԴ՝ ամ»։

Սոյն յիշատակարանէն վերջ յէջս թճկզ–թճհր համառօտ ցանկ ճառից, և ապա վերջաբանութիւն որբագրողի սրբոյ մատենիս, որ այնինքն է Պաղ-տասար դպիր, և այս.

«Յիշատակարան ողեցման աստուածախօս մա-տենիս. Յանուն ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ և զերակարօղ զօրու-թեամբ նոյնոյ ամենախնամ արարչին աստուծոյ, էհաս ի կատար ողեցման հոգեւորդ գիրքս մեկ-նութեան սրբոյ Աւետարանին որ ըստ Յօհաննու։ Ի հազարերորդի հարիւրորդի վաթսներորդի և վեց երորդի հայկազնական տումարի (= 1717)։ Ի Հովուապետութեան տիրակառոյց արփիացնցող և երկնահանգոյն Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Արհիա-կան գլխոյն և Սրբազան Հայրապետին, Երիցս երանելւոյ Տեառն Աստուածատրոյ Գեհերջանիկ Կաթողիկոսին ամենայն Հայոց։ Եւ ի Պատրիար-գական տեսչութեան Քրիստոսաշրջիկ և լուսահա-ման քաղաքին Երուսաղէմի, և Քրիստոսահիմն Ա-թոռոյ Սրբոյն Յակոբայ Տեառն Եղբօրն, վեհմա-կան գիտապետի տեառն Գրիգորի սրբազան և բանիբուն վարդապետի՝ բաղիշեցւոյ։ Իսկ և յԱ-ռաջնորդական գիտողութեան Կոստանդինուպօլսոյ մեծ անուն քաղաքի, և Աթոռոյ սրբոյն Ոսկիա-բանի, տեառն Յօհաննիսի քաջ իմաստ և լիաշնորհ վարդապետի բաղիշեցւոյ։ Ի տպարանի մկրտչի որդի մահտեսի զրիգոր դպրի մարզուանեցւոյ։ Ի Կոստանդինուպօլիս քաղաքի։ Արդեամբ և ծախիւք համազումար եղբարց Լուսաւորչածին երամոց ի Քրիստոս։

Յիշատակարան ի տպողէ սրբոյ մատենիս։ Այլ արդ՝ երես ի հող մածեալ և առաթուր անկեալ առաջի համայնիցդ եղբայրութեան թախանձագին ձայնիւ աղաչեմ, որք վայելէք ի հոգեւոր և ըղձալի բուրաստանէս՝ յիշեցէք ի Քրիստոս Յիսուս ի մաքրական աղօթս ձեր, զտպագրօղ սորին զվերա-յիշեցեալ զանպիտան և ամենեցուն ծառայ զբազ-մամեղ զրիգոր դպիրս. յիշեցէք ի Քրիստոս և զծնօղսն իմ զմկրտիչն և զթուրվանդէն՝ և զհան-գուցեալ եղբարսն իմ։ Նաեւ զորդեակն իմ զներ-սէսն. որ բազում աշխատանս կրեաց ընդ իս ի տպ-պագրատանս ի չարեքն և ի ցրեքն զգիրսն։ Այլ և զդեսարոյս զփոքրիկ եղբայր սորին հինգամեայ զթագւորն։ Իսկ և զաշխատակիր մշակսն տպա-գրատանս զկեսարացի յակոբ դպիրն. և զմրզացի եսայեն, և զնեհացի զրիգորն։ Ընդ որս և զսուս-ցիչն իմ բազմերախտս, և զհամայն ննջեցեալսն ի Քրիստոս Յիսուս. յորմէ և դուք յիշիջիք ա-ւուր գալստեան նորին։ Ամէն։ Հայց յետոյ քան զամենեսին զբազմաշխատ որբագրօղ սրբոյ մատե-նիս՝ զյոգնամեղ պաղտասար չնչին դպիրս միով և եթ հայր մերիւ յիշատակել առ Քրիստոս մի դանդաղէք»։

Եւ ապա «Երգ ներբողական առ սուրբն Յօհան Ոսկիբերան ի պաղտասար չնչին դպրէ», և յետոյ. «Յիշեսջիք դարձեալ միով և եթ նըւաղիւ ի քրիս-տոս յիսուս զխոնհմամիտ և զգերապատիւ ըղՆեր-սէս Եղիսկոպոսն Եփեսոսի. որ ըստ բարեհաճ կամաց իւրոց ետ մեզ օրինակ մի ընտիր վասն ողեցման սոյն սրբոյ մեկնութեանս. որ էր գրե-ցեալ ի վաղուց հետէ ի լաւ և ընտիր օրինակէ, ի ձեռն արհեստաղէտ և ուղղագիր նօտարի սրբոյն երեմիա վարդապետի ի տէր հանգուցելոյ։ Որ և մեք ի նոյն ուղիղ և գեղեցիկ օրինակէն, և յայլ ևս ընտիր և որբագրեցեալ համանման և միատիպ օրինակէ՝ որոց ո՛չ աւելի և ո՛չ պակաս էր տեսու-թիւնն. և էր գրեցեալ յերկիրն կիլիկոյ ի սահմանս տանն սըսոյ ձեռամբ տէր ղազար քահանայի ար-հեստաւոր գրչի՝ որդւոյ տէր կիրակոս քահանայի։ ողեցաք զսա բազում զգուշական քննութեամբ և որբագրական աշխատութեամբ ի փառս մեծին ա-ստուծոյ։ ուստի պարտիք յիշել զարդիւնական երախ-տիս սոյն վերոյիշեցելոյ քաջախօս վարդապետին Ներսէսի, և վարձս բարեաց հայցել նմա ի տեառ-նէ։ Իսկ և պարտիք յիշել և զեղբայր սորին զհե-զամիտ զախրացի յօհաննէսն. որոյ միջնորդու-թեամբն և ջանիւն տուաւ մեզ օրինակն այն զոր յիշեցաք ի վերոյ։ Յիշեսջիք միանգամայն և զհա-մօրէն երախտաւորս սոյն սրբոյ տառիս ողեցման և ի լոյս ածման, ի քրիստոս յիսուս՝ յորմէ և դուք յիշիջիք յաւուր արդար դատաստանութեան նորին։ Ամէն»։

Գիրքը 4° միջակ, երկիւսեան, միջակագիր, զար-դափակ երեսներով. մաքուր տպագրութիւն. էջք թճձր (= 982)։

— Ներբողեանք Ասացեալ այրն աստուծոյ Ոհան ոսկէբերան Ապաշխարութեան Վարդապետն, ի վերայ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. Տպագրեցեալ՝ ի հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի տեառն աբրահամու սրբազան կաթողիկոսին. Եւ ի պատրիարգութեան Սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնու. Գրիգորի և Ոհաննու աստուածաբան Վարդապետացս ՌՃՁԳ (= 1734), թվին:

Ճակատին եռեկը հայրապետի պատկեր մը՝ փայտատիպ, և դիմացէն էջ ա կը սկսի առաջին ճառը և կ'աւարտի յէջն հ (70), ուր կայ հետեւեալ յիշատակարանը. « Ի Թվականիս. ՌՃ. Թարգմանեցաւ ճառս ի յունականէն ի մերս, ի ձեռն աբրահամու զաւմատիկոսի. ի հին և յեղծ օրինակաց՝ եւկ յարմարեցաւ ըստ բանից դրութեան և բառի յիմոյ նրբատառութեան Ներսէսի. հրամանաւ տեառն իմոյ և հարազատի Գրիգորիսի հայոց կաթողիկոսի: Արդ որք ընթերնուք. կամ ընդ օրինակէք՝ յիշեսջիք զվերոյգրեալ աշխատաւորսդ ի սմա՝ ըստ խրաքանչիւր անուան ի քրիստոս յիսուս. և զաւ կուս զայս յիշատակի բան գրեսջիք յիւրաքանչիւր փոխարկութեան. զի և զուք գրեալ լիջիք ի կենդանի մատեանն քրիստոսի անջնջելի յիշատակաւ: Բարեխօսութեամբ սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ՝ և բազմաչարչար նահատակին, տէր յիսուս ողորմեա ընտացողի ամին. և տպագրչին անարժան գրիգոր դպրիս՝ ամէն »:

Հա էջէն կը սկսի երկրորդ ճառը և կ'աւարտի յէջն ճժզ. որմէ վերջ Ս. Լուսաւորչի պատմութեան համառօտը՝ ինչպէս կը թուի՝ տպագրողէն ցէջն ճխզ. յէջան ճխէ–ճլ հետեւեալ յիշատակարանը.

« Փառք և պատիւ ամենասրբոյ երրորդութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. որ ետ կարողութիւն նուաստիս ի լոյս ածել զայս փոքրիկ զրգուկս ըստ համարոյ թղթոյ. և մեծս ըստ իմացման արդեանց՝ առ ի կատարեալ տեղեկութիւն զոկատանութեան առն աստուծոյ սրբոյն գրիգորի մերս լուսաւորչի. և զինի պօղոսի՝ չորեքատասան առաքելոյ: Որովք կարող լինիցի ճանաչել ազգն մեր սիրելի՝ թէ որպիսի առն սրբոյ երանելւոյ իցեն աշակերտեալք. և մի ի դերեւս հանիցեն զերախտիս սրբազանի հօր իւրեանց՝ հետեւել ի ճգամբք նորին կատուցեալ եկեղեցւոյ սրբոյ: Որ ոչ միայն մերս ազգի ծանուցաւ զերազանց սրբութիւնն. անհամեմատ առաքինութիւնն. և չքնաղատիպ լուսաւորութիւնն. այլ և ընդհանրատարած նշոյլ պայծառութեանն էհաս մինչև յոլորտս տիեզերաց. և թափանցեալ ի միտ սրբոյն յոհաննու ոսկեբերանի և ապաշխարութեան սրբոյ վարդապետի աղբերն եկեղեցւոյ. և կարի հիացուցեալ զնա. յորդորեաց ի ներբողել զսքանչան հայր մեր՝ հրաշալի բանիւք: Որ և ես թէպէտ միանգամ հանդիպեցայ անհամեմատ զոկատանութեան ներբողենի սրբոյն յոհաննու ոսկեբերանի ի վերայ սրբոյ հօր մերոյ ի թվին ՌՃԽԵ ամին սակայն ստացօղն ոչ ետ թոյլ օրինակելոյ և մնաց բաղձանքն իմ առ նմա:

Իսկ ի ժամանել թուին ՌՃՁԳ ամին. աշակերտ մեծի վարժապետին տեառն յոհաննու. մեծի քաղաքիս պատրիարգին. յակոբ վարդապետն կոչեցեալ աստուածաբան ի մեծ հայրապետէն սուրբ երուսաղեմի. ետ ինձ զճառս զայս. բայց այնմ որ ցանկայի ԼԵ ամաւ առաջ՝ զոր մերձ տիրացու պաղատաւր չնորհալի դպրին, որ և բերկրեցաւ սիրտ իմ: Զի թէպէտ գոյին ստացեալ ներբողեանք յաստուածաբան վարդապետաց մերոց. այլ առաւել գեղեցկայարմար չարադրութեամբ, սակայն ոչ է զարմանալի իմն զծնօղս իւր գովաբանել: Բայց գովասանութիւն յոհաննու ոսկիաբանին՝ որ յամենից քրիստոնէից ընդունելին է. և ի թիւս երկոտասան վարդապետաց. այլ առաւել ախորժելի թուեցաւ ինձ: Որոյ բարձր պատիւ փառացն և հրեշտակն վկայեաց թէ. ապաշխարութեան վարդապետն՝ ընդ սերոբէսն կայ դասուորեալ: Ահա տեսցեն սիրելի ազգն մեր թէ՝ այնպիսի առն սրբոյ աշակերտեալք են. որ ի յոհաննու ոսկիաբանէն ներբողեցեալ է: Որ ի թուին փրկչական ՌՉԼԴ՝ և ի մերումս թուականի ՌՃՁԳ. ՝ ազեցի զայս ներբողենի զրգուկս. ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի աստուածաճարտար աթոռոյն՝ տեառն աբրահամու՝ ամենից հայոց սրբազան կաթողիկոսի, և ի պատրիարգութեան սրբոյ երուսաղէմի աստուածազարդ քաղաքի. տեառն գրիգորի՝ հրեշտակակենցաղ սրբոյ և մեծի վարդապետի ամըրտոլացւոյ. և ի պատրիարգութեան կոստանդնուպօլսոյ. տեառն յոհաննիսի քաջիմաստ և աստուածաբան վարդապետի բաղիշեցւոյ: զոր զրէ՝ թէ. երկուքին սրբազան վարդապետքս՝ եղեն ամօլք հաւատոյ. և անշէջ ճրագունք հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ. որք էին ի փառաւոր և ի մեծահռչակ ամրոցս սուրբ դպրատանէն որ ի բաղէշ. որ նոյն դպրատունն եղև զաման պատճառ արտաքին զրոց փիլիսոփայութեան. իմաստասիրութեան, և դաւն աստուածաբանական զիտութեան ի մէջ ամենայն ազգիս հայոց. որք էին աշակերտք բարեհամբաւեալ առն աստուծոյ. տեառն վարդանայ սրբոյ վարդապետի: Որք զինի յոլովերախտ բարերարութեանցն զոր արարին աստ ի մեծ քաղաքս. և ի սուրբ երուսաղէմ. ազատելով յանտանելի վշտաց եկեղցյ, ի ներքնոց և արտաքնոց. զցանկալին սերոբէից. զառաքելական և ըղքրիստոսանիստ աթոռն ամենից հայոց զսուրբն Յակոբ յաւելին ի գեղս նորին. և զարքունական վրճռահատ հրամանագիրն՝ զորեալս ի հնազոյն թագաւորացն ակի օսմանցոց. և զթագուցեալ թակարթս հակազէն ազգին ի դերեւս հանին: Որ զամենայն բարեպատեհ արարս սրբազանից մերոց վարդապետաց՝ ընդ գրով արկանելն անկարելի է: Որոց հրամանաւ ուրեմն ազեցի զսուրբ ներբողենիս. Այլ և յիշել աղաչեմ ի քրիստոս. զկամիկցի նազարի որդի մահտեսի մոկացն. և զեղբայր իւր մահտեսի առաքելն. և զհանգուցեալ եղբայր իւր ըղմահտեսի մարտիրոսն. որք ջերմեռանդ սիրով ետուն զգին թղթոց ազեցեալ զրգոյս. որոց նուէրքն ընդունելի լիցի առաջի լուսաւորչին մերոյ սրբոյն գրիգորի: և ես աղաչեմ յիշել ի քրիստոս զաղօղ զրգոյս զմահտեսի գրիգորս հանդերձ ծնողովքս ամէն »:

Գիրքը փոքր 4°, խոշորագիր, գծափակ երեսներով. թանձրաթուղթ. անհարթ և սխալագիր տպագրութիւն:

= Բ տիպ, տես Սոփերք Հայկականք, հատ. Գ:

= Գ տիպ Ճռաքաղ 1861–62, հատ. երրորդ (Յաւելուած), 1–33 էջ. Ա ճառը միայն:

Մ. Մսերեանց կը գրէ. «... Գտանի և լատիներէն ճառս այսորիկ՝ յեղեալ ի Հայկականէ երկասիրութեամբ Տէ Վիլէֆրօայ քահանայի՝ ծանօթի արեւելեան լեզուաց. զոր և այլ ոք՝ Մոնդֆաւգոն (Մոնֆօգոն) անուն՝ ի լոյս ածեալ է ի Հաւաքոյթս գործոց Ոսկեբերանին (ի հատ. ժբ.)»:

= Դ տիպ, Պօղոսի թղթոց մեկնութեան հետ. հատ. Բ. 792–826, Ա ճառը աւելի ընդարձակ է հոս:

= Ե տիպ, հայ–լատ. Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսապետի Ներբողեան. ասացեալ յաղագս փառաց և նահատակութեան Սրբոյն Գրիգորի հա-

յոց մեծաց հայրապետի հրատարակեալ հանդերձ լատին թարգմանութեամբ ի Մխիթարեանց Վենետկոյ, 1878. ի Ս. Ղազար: – Beati Johannis Chrysostomi Oratio Panegyrica de vita et laboribus Sancti Gregorii Illuminatoris Patriarchæ Armeniæ cujus originalis textus desideratur ex antiqua armeniaca versione Mechitaristicæ Congregationis Opera in latinam linguam translata. Venetiis in Sancti Lazari Insula anno MDCCCLXXVIII 8°, VIII + 76 էջ:

Լաւ. Յառաջաբանին թրգմ.ը տես Բազմավէպ 1887, 291:

— Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսոյ Արքեպիսկոպոսի Հատընտիր գիրք և Ճառք և Ներբողեանք: Թարգմանեալ ի յոյն բնագրէ երկասիրութեամբ Տեառն Հ. Եղիայ վարդապետի Թովմաճանեան կոստանդնուպօլսեցւոյ, ի Մխիթարեան միաբանութենէ: Տպագրեալ արդեամբք Աստուածասէր Մանուկ Աղայի կարնեցւոյ Մահտէսի Աստուածատրեան: Հրամանաւ Տեառն Տեառն Ստեփանոսի Վարդապետի Ագոնց, Արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի Մխիթարեան Ուխտին: Ի Վէնէտիկ, ի վանս սրբոյն Ղազարու, ՌՄԿԷ. 1818. Հատ. Ա. 4°, 408 էջ: – Հատ. Բ. 339. 335-362 կրկին ցանկեր:

Բովանդակութիւն Ա և Բ. հատորներուն: Հատ. Ա. Առ անկեալն Թէոդորոս գիրք Ա. – Առ նոյն Թէոդորոս գիրք Բ. – Յաղագս կուսութեան. – Յաղագս քահանայութեան գիրք վեց. – Յերանելին Բաբելաս և ընդդէմ Յուլիանոսի և Հելլենացւոց: — Հատ. Բ. Առաջին ճառ, յորժամ ձեռնադրեցաւ քահանայ. – Ներբողեան ի սուրբ Մարտիրոսն. – Ներբողեան ի սուրբն Պեղագիա. – Ներբողեան ի սուրբն Իգնատիոս. – Ի սուրբ Մակաբայեցիսն ճառ Ա. – Ի սուրբ Մակաբայեցիսն ճառ Բ. – Ի սուրբ Մարտիրոսն. – Թէ չէ պարտ քարոզել ի շնորհս ունկնդրաց. – Ի սուրբն Բաբելաս. – Ներբողեան ի սուրբ վկայն Ղուկիանոս. – Անդրիական Բ. – Անդրիական Գ. – Անդրիական Ե. – Անդրիական Է. – Անդրիական Ժ. – Անդրիական ԺԵ. – Անդրիական ԻԱ. – Ընդդէմ որոց ի մեծի ուրբաթուն գինեցին ի թատերս. – Յեւտրոպիոս ներքինի պատրիկ և հիւպատոս. – Ի փոխադրութիւն նշխարաց և յԵւդոքսիա դշխոյն. – Ճառ նախ քան զաքսորանս իւր. – Ի դարձն յաքսորանաց իւրոց ճառ Ա. – Ի նոյն, ճառ Բ. – Բան եթէ որ անձին իւրում չվնասէ՝ զնա ո՛չ ոք կարէ վնասել:

— Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս: Գիրք կրկին: Ի Վենետիկ, ի տպ. ի սրբոյն Ղազարու, յամի 1826 ՌՄՀԵ. Գիրք. Ա. 8°, 16 + 1-400:

Հրատարակիչն է Հ. Արսէն Կ. Բագրատունի, որ կ՚ըսէ նախաբանին մէջ. «... Մեզ ո՛չինչ ընդհատ զօրութեան և զարմանաց է հրաշալի ոճ հայկազն թարգմանչին, իբրև զբիչ ոսկի ոսկերողի բերանոյ ի ճահ եկեալ: Զի զհոգի և զխմաստ բնագրին յամենայնի անվրէպ պահեալ քան թէ զխորանս բառից, այնպէս կենդանագրէ զնոսա ի հայ բան, մինչև ի բնէ հայերէն զատ կարծել շարադրեալ, քան թարգմանածոյ ստացուած. կրկին բախտի յաջողուած յօրինեալ զատ իւրոյն բազմեբան թարգմանչին, զի ընդ այնպիսի աստուածային ճարտարաբանութեան և զայսպիսի զանձ ունիցին և օրինակ հարազատ հայկաբանութեան:

Բնագիր մատենիս յիննուն ճառս բովանդակի. զորս և համարին քննիչք խօսեալ Ոսկեբերանի ընդ ամսն 390 = 398 յԱնտիոք քաղաքի, որպէս և յայտնի իսկ առէ ինքն ի յորդորակի եւթն ճառին...

Հայ թարգմանն, որ անյուշ մի ի գլխաւոր աշակերտաց սրբոյն է Սահակայ և Մեսրոպայ, թուի ինքն բաժանեալ զմատեանն յերիս գիրս կամ հատորս, և եդեալ առ իւրաքանչիւրոյն զցանկ ճառից, որ չերեւի ի յոյնն: Առաջին գիրքն, ճառք քսան և հինգ, կոչումն առեալ է Ծննդոց, վասն զծնունդս Նախահարցն և զՏեառնն սկիզբն ունելոյ. երկրորդն՝ ճառք քսան և ութ, Կափառնաում գիրք, զի սկիզբն առնէ ի բանն «Եւ մտեալ ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի». երրորդն՝ Կեսարացւոց կամ Փարիսեցւոց գիրք, վասն անուան սկսանելոյն, թէ «Եկեալ ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն հարցանէր զաշակերտսն». և սորա էին արդեւք ճառք երեսուն և եւթն, եթէ չգոյր և այլ հատոր չորրորդ. քանզի երեւի ուրեք և յորջորջումն Խաչելոցեան գրոց:

Առաջիկայ մատեանս ունի տալ անթերի զառաջին և զերկրորդ գիրսն. զի զայսուհետ միայն յաջողեաց մեզ գտանել և թարգմանել յամենածախ ժամանակին. մինչև ազդեցէր փոյթ հայկազանց կամ տուրք ժամանակաց յայտնեցեն զցանկալին զայն զերրորդ մասն: Միայն զհատակոտս սորա ունիմք ի մերի առ ժամս տալ ի լոյս յայլ հատոր, զի մի՛ բնաւ անճաշակ մնասցեն փափաքօղք:

Զհայ թարգմանութեանս օրինակ համեմատեցաք ընդ յունին և ընդ այլ գաղափարս, և ընդ Շնորհալին մեր, ի որբել զնա յաններելի եւեթ վրիպանաց գրչին: Այլ ո՛չ յոյժ ընդարձակեալ զայդոցիկ դատաստան. զի, որպէս յայտնի վկայէ յԻշատակարան գրչին, ի չորից ընտիր և ստոյգ օրինակաց ընդօրինակեալ էր մերս, ի թուականութեան հայոց ՉՀԸ, ըստ կարի կարեւոր զգուշութեամբ, զայլ և զայլ ընթերցուածն ի լուսանցս գրոշմելով: Մեք առավարար զլուսանցիցն ի ծանօթութիւնն նշանակեալ, զմիջինն պահեցաք. իսկ ուր անդէպն թուէր կամ անկիրթ, զլուսանցիցն առաք ի ներքս, և զօրինակին նշանակեցաք ի ներքոյ. ուրեք և ի յունէն ուղղեցաք ի կարգի անդ, զմերն ի սորա միջոց գրոշմեալ. իսկ ուր արդարանայր իւք մերս, առանց փոխելոյ զայն՝ զյոյնն ստորադրեցաք. և այն ի կարեւորս ինչ եւեթ: Զայն կալաք ոճ և ի բաղդատութիւն այլոց օրինակաց. նշանագրել զգլխաւոր զանազանութիւնն, և հազիւ երբեք ըստ նոյն զմերն ուղղել. զոր թէ և արարաք ուրեք, որպէս և յուղղելն զերկբայելի վրիպակս ինչ գրչին, անպակաս զմերոյն ընթերցուած ցուցաք ի ներքոյ արձանագրեալ...

Եր և թուղթ մի ի գաղափարէ մերմէ անկեալ ի ճառն ԺԲ. երկրորդ գրոցն, զոր համարձակեցաք մուծանել նորոգ թարգմանութեամբ ի յունէն. և ոչ չատ համարեալ ծանուցանել առ տեղւոյն, առանց եւս յայտնի առնեմք ամենեցուն...»:

— Գիրք Բ. 403-763:

«Լեզուն զագել» Մատթէի Մեկնութենէն. (թրգմ. Բարգէն Վ. Կիւլէսէրեան). Լոյս 1905, էջ 1045:

«... մարք ի տայգերաց ցասն իցեն» ընթերցուածին նկատմամբ տես Բազմավէպ 1875, էջ 352:

— Յովհաննու... Եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս. Գիրք երրորդ թերի և ի թուղթսն Պաւղոսի հատուածք: Ի Վենե-

տիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու յամի 1826 ՌՄՀԵ. 8°, 12 + 448 էջ։

Յայտարարութիւնը կ'ըսէ. «Զհատակոտորս երրորդ գրոց Մատթէի մեկնութեանն որպէս ի յառաջաբանին խոստացաք, ահա ժողովեմք այսր. որպէս զի մի՛ և նշխարք հրաշալւոյ մատենին կորիցեն։ Ա՜ւաղ զի գրչագիրք ընտիրք չեն մեզ, զի զեթ անեղծ զնշխարսն ունէաք. այլ ո՞ գիտէ, տացէ ժամանակն և հայրենասէր խուզարկուաց փոյթ և զսոցայս հատուածոյն օրինակ, և զթերւոյն լրումն։

Զհետ երրորդ գրոցս յաւելումք և զհատուածս մեկնութեանց սորին սրբոյ ի Թուղթսն Պաւղոսի, յերից օրինակաց գրեթէ զայս ամենայն ժողովեալ. ի կրկին ճառընտրաց՝ որ յԵրուսաղէմ քաղաքի և ի կողմանս Կիլիկեայ գրեալ են, և ի նոտրգիր օրինակէն՝ որ կայ ի մատենադարանն արքունի ի Փարիզ, ծաղկաքաղ յորդորակաց յամենայն մեկնութեանցն։ Եւ է ընտրելագոյն ի սոսա փարիզեանն, թէպէտ և անզերծ ի բազմավրէպ գրչին սխալանաց, այլ և ոչ սա առաջնում ընտիր օրինակիս հաւասարէ՝ երկուց գրոց մատթէոսեան մեկնութեանն. և ոչ ճառընտիրքն, որք և ուրեք ուրեք քաղուածոյ ունին զճառսն, և կամաւոր գրչացն փոփոխմունք ի նոսա զուշակին. նմին իրի և ոչ նովին երկիւղածութեամբ ճշգեցաք՝ յորս ինչ յայտնի վրիպակ թուէր մեզ»։

— Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի Եպիսկոպոսապետի Ճառք։ Ի Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու, յամի 1861 ՌՅԺ. 8°, 916 էջ։

Յառաջաբանը կ'ըսէ. «Զճառս Ոսկեբերանի զոր յայլեւայլ դէպս խօսեցեալ է նորա, պատեհաւ այսու տամք ի լոյս ի վայելս հասարակաց, թէպէտ և յոյժ նուազունս թուով քան որչափ ինչ կան ի յոյն բնագրին. և զայն յերկուս կարգս բաժանեցաք ըստ յոյն տպագրին՝ հետեւեալ հմուտ քննաբանութեան Մոնֆոքոնի, յառաջնումն զհարազատսն և զաներկբայելին դասեալ ըստ նորա, և յերկրորդումն զերկբայականսն. յաւելաք զկնի և զորս յազգի մերում եւեթ գտանէին յանուն սորա վարդապետին, յունականին նոցա ցարդ չերեւեալ ուրեք և կամ կորուսեալ և թերեւս ի բացառ ընդ անհարազատս գրեալ ի գիտնոց. դէպք ժամանակաց և հայրենասիրացն խղճք տացեն լրումն ամենայն թերութեանց ի ճոխութիւն և ի ճշդութիւն ազգային ցանկալի մատենագրութեանց։

Ի ստորեւ ճառից իւրաքանչիւր գտցեն խնդրողք զթիւ օրինակաց նոցա, և զմեր ընտրութիւն ի նոսա ի բաղդատութենէ յունականին։

Բովանդակութիւն. Յորժամ ձեռնադրեցաւ քահանայ, եւն, կամ վասն արդարապէս աղօթելոյ. — Առ Թէոդորոս անկեալ. — Յաղագս պահոցն և ի Յովնան. — Յաղագս ապաշխարութեան. — ՅԱբրահամ ճառ Ա–Ը. — Ի Սաղմոսն ՃԽԵ. — Ընդդէմ արբեցութեան. — Առ հանդերձեալսն լուսաւորիլ և չերդնուլ. — Յաղագս չերդնլոյ ընաւ և վասն յարութեան Քրիստոսի. — Յաղագս մկրտելոց և վասն զարդուց կանանց. — Ընդէր ոչ ի միջոյ ի բաց եղեւ սատանայ. — Եթէ ի ծուլութենէ է չարութիւն. — Յաղագս քնարանին և ի խաչն. — Ի խաչելութիւն Տեառն. — Յաղագս յարութեան մեռելոց. — Ի Սուրբն Մելիտոս. — Ի սուրբն Իգնատիոս. — Ի Պետրոս և ի Հեղիաս. — ՅԱբրահամ և ի պատարագն. — Յաղագս որք թողին զժողովն. — Ի վերնագիր Գործոց առաքելոցն. — Ի սակաւութիւն ժողովելոցն և յամրութիւն Պաւղոսի. — Յաղագս խոնարհութեան. — Զանձնել հրապարակագոյժ զմեղանս եղբարց. — ՅԵւտրոպիոս ներքինին. — Նախ քան զաքսորն. — Ի դարձ յաքսորանացն. — Ի կինն Քանանացի. — Ի բանն Եսայեայ տեսի զՏէր նստեալ. — Ի բան Մնացորդացն բարձրացաւ սիրտն Ոզիայ. — Ի բորոտութիւնն Ոզիայ. — Ի տեսիլ Սերովբէիցն. — Յանյայտութիւն հին կտակին. — Ի Ղազարոս ճառ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ. — Ընդդէմ Անոմեանց ճառք Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ. — Անդրիական ճառք Ա–ԻԱ։

— Յովհաննու... Եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի. Հատոր Առաջին. Մեկնութիւն Տիմ. Տիտ. Կողոս. Փիլիպ. Եփես.: Ի Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու, յամի 1862 ՌՅԺԱ. 8°, 942 էջ։

Յառաջաբանէն. «... Մատենագրութիւնք (Յովհաննու Ոսկեբերան հայրապետի) ճոխագոյնն յաւելեան Հարս եկեղեցւոյ՝ ի Հելլէն բնագրին յերեքտասան հատորս բովանդակին, և ըստ նմանէ յետ դարուց բազմաց լատին թարգմանութիւնն. երանի թէ կիսով չափ կային և առ մեզ, այլ պատառիկքն եւեթ մնացեալք առ վանականս պահին անկորուստ, որպէս նուիրական նշխարք հնութեանց ազգիս։ Մի էր յայնցանէ և չորեքտասան Թղթոցն Պօղոսի մեկնութիւնն, հրաշալւոյն ի գրուածս՝ մատթէոսեան մեկնութեանն համապատիւ։ Որ ազգաւ աշխատութիւն յանձն առեալ տարագնաց ուղեւորութեամբ յաշխարհ հեռաւոր, և ի ձեռն հմուտ գրագրաց ի պարսկաստանէ, և ի գրատանց Եւրոպայ ուր պատառիկ մի ի ցանկալի նշխարացդ գտանէր ընդ ժամանակս ժամանակս՝ և այժմ ի նորոյ՝ հաւաքեցաք խնամով առ ողջ ամբողջ չորեքտասաներեցունց Թղթոցն անթերի։ Այլ զի անհնար եղեւ բարեբաղդութեանդ հանդիպելոյ լիովին, նախախնամութեանն այլում թերեւս պահեալ զնոյն ժամանակի, զոր գտաքն յերկուս հատորս ամփոփեցաք. յառաջնումն զվեցեցուն Թղթոցն զանթերի բովանդակութիւն, և յերկրորդումն զթերին հանդերձ հատուածովք այլոց Թղթոցն, յաւելեալ և հատուածս ինչ մեկնութեանց այլոց գրոց՝ այն է Գործոց, և հին թարգմանութեանն Յոհաննու աւետարանին, մերձ դնելով վերջնոյս մանրագիր ի ստորեւ՝ և զնոր թարգմանութիւն նորին որ առ կիլիկեցւովք, առ ի տալ պատճառս հայրենասէր խնամոց փոյթ ունելոյ ի գիւտ այլոցն եւս մնացորդաց թէ գուցեն՝ ի լրումն բովանդակութեան գործոյն։ Ի կատարած մատենիս թողաք և զերկբայական ճառս, ըստ հմուտ քննաբանութեան մեծի առն Մոնֆոքոնի զատուցեալ յայլոցն. որոց թէպէտ անկորուստ կան յոյն բնագիրք, այլ ըստ ոճոյն զանազանութեան ոչ հարազատ դասեալ ի նմանէ։ Զհետ նոցա յաջորդեն և սակաւք ումանք ի ճառից որք ի յոյնն խաղաղ պակասեալ՝ առ մեզ միայն գտանին, զորոց զգիտնոց թողումք դատաստան առնել։ Ի բաց թողաք ի տպագրէս և զայլ ճառս յոյժ սակաւս, որ ոչ միայն անյիշատակ են ի յոյն բնագրին, այլ և ինքնին ակներեւ տեսանի ամենեցուն անհարազատութիւն նոցա՝ անհմտից ումանց լինել գործ և ոչ ոսկեբան գրչին։

Իսկ զհարազատ ճառս զոր Ոսկեբերան յայլ և այլ դէպս խօսեցեալ է յԱնտիոք և ի Բիւզանդիոն ի սկզբանէ անտի քահանայութեան իւրոյ մինչեւ ցվախճան, ամփոփեցաք յառանձին հատորի, սակաւս գտեալ ի նոցանէ քան զոր ի յոյնն, որ ճոխ է յոյժ յոյժ քան զմերն. և չէք ասել թարգմանչին ըստ կամի հատընտիր արարեալ զայնոսիկ, եթէ այնքան միայն հասին ի մեր ձեռս: թէպէտ և կարծիք գիտնոց են զամենայն մատեան սրբոյ հօրն անթերի դարձուցեալ ի հայ մերոց թարգմանչաց. այս եւեթ յայտնի տեսանի ոչ ի միոյ գրչէ թարգմանեալ և ոչ զամենայն ճառ անթերի աւարտեալ, այլ ուրեք ուրեք զեղչեալ ի հատուա-

ծոց, մանաւանդ յԱնդրիականն, զոր ոչ ի բուն թարգմանչէն կարծեմ, այլ ի յետին օրինակողացն. որոց և շնորհ եւս ունիմք զի զկատարեալ գրչութեանն յանդէպս խնայեալ՝ սակայն խոհեմութեամբ թերեւս ի բաց թողեալ է զհատուածն, զի ցնցեալ մասամբքն անայլայլակ կան իմաստք կապակցութեանն, որպէս ակներեւ տեսանի ի բաղդատութենէ ընդ յունականին։ Գիտացէ հայրենասէրն զի ի թերակատար մատենից նորին սրբոյ վարդապետին՝ կան և մեկնութիւնքն Եսայեայ և Եզեկիէլի թերի յոյժ և երկրքեան, զորս անթերի օրինակաց անկարելեալ թողումք առ ժամս... Թէպէտ ըստ ատտիկեան յունաբանութեանն սորին քան զնազիանզացին Գրիգոր և քան զԲարսեղ, այլ մեք երախտագէտ սրտիւ զաջ աստուածարեալ մերոյ հայ թարգմանչին համբուրեմք, որ զխոնարհ ոճ շարադրածոյ յունականին զեր ի վերոյ ամբարձ ի հայումս յոճ սքանչելի, պերճ, վսեմ և քաղցրաբուր. որով սուրբ հայրապետն հայրաբար յորդորեալ և առաջնորդէ հովուապէս. և գթածաբար դաստիարակէ զամենայն հասակ՝ յանձն իւր փայլեցուցանելով զաստուածավայելուչ ձիրս սան սրբոյ հովուապետի։

— *Հատոր երկրորդ. Մեկնութիւն Հռովմայեցւոց, Հատուածք, Ճառք երկբայականք*։ Անդ, 567 էջ։ 569–921 հետեւեալ ճառերը։

Հատուածք ի Գործոց մեկնութենէ. — Հատուածք Յոհաննու մեկնութեան. — Խօսք վասն Հերովդիադայ. — Ի ձկնորսութիւնն Պետրոսի. — Ի սուրբ Աստուածածինն. — Ի Յովսէփ. — Ի Շուշան. — Ի Սաղմոսն յիսներորդ. — Գանձէ և ոչ գիտէ ում ժողովէ. — Կոչեցաւ Յիսուս ի հարսանիսն. — Յանառակ որդին. — Ի Քանանացին և ի Փարաւոն. — Ի Հարիւրապետն. — ՅԱրարածոյ. — Ի Զաքէոս մաքսաւոր. — Կինն մեղաւոր և ի գալուստն Քրիստոսի յԵրուսաղէմ. — Ի տասն կուսանսն. — Ի թերահաւատութիւն Թովմայի. — Ի վերացումն Տեառն. — Ի սուրբ Խաչն Քրիստոսի. — Յաղագս չզգալոյ զվախճանեալսն. — Յաղագս հաւատոյ. — Ներբողեան ի Սուրբն Լուսաւորիչ Ճառ Ա, Բ. — Առ լուսաւորեալսն լուացմամբ Մարխմայ. — Յանդամալոյծն. — Ի կինն մեղաւոր. — Յաղագս ապաշխարութեան. — Յաղագս ողջախոհութեան. — Մարմինք ձեր անդամք Քրիստոսի. — Վասն ողորմութեան և անոխակալութեան. — Ի սուրբն Ստեփաննոս. — ՅԱդամ և ի մահուանութիւնն. — Ի Լուացումն ոտից աշակերտաց. — Ի յարութիւնն Քրիստոսի. — Ի փորձանս օրինականին. — Յաղագս Նեռինն. — Վասն միաանգամ գալստեանն Քրիստոսի։

— *Երանելւոյն Յոհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի*։ Վենետիկ, ի տպ. ի սրբոյն Ղազարու, 1880–ՌՅԻԹ. 8°, ԺԶ + 1-472։ 473–526 Այլեւայլ ընթերցուածք, Բնաբանք Ս. Գրոց, ցուցակ կարեւոր իրաց։

Յառաջաբանէն. «Ի բազում ժամանակաց հետէ իղձ լեալ մեզ հրատարակութեամբ մատենիս ի լոյս ածել և զկարեւոր զայս մասն թարգմանութեան մատենագրութեանց Սրբոյ Ոսկեբերան հայրապետին, և վասն բազում պատճառաց յերկարեալ ձգեցաւ ցայսօր ժամանակի։ Գլուխ պատճառաց յապաղելոյ տպագրութեանս, որպէս և ակնարկեալ է ի յառաջաբանի Մեկնութեան Թղթոցն Պօղոսի, եղեն հանգամանք ձեռագիր օրինակի սորին, որոյ մի եւեթ գոյով, և այն լի վրիպակօք և ի տեղիս տեղիս պակասաւոր, տայր ակնկալել մեզ նորոց օրինակաց, որովք մարթ լինէր լրացեալ և ուղղագիր ընծայել զայն ի լոյս. մանաւանդ զի լուեալ իսկ է մեր եթէ գտանին առ ոմանս յազգայնոց ի պակասեալ կատարակաց օրինակիս մերոյ. այլ քանզի ցարդ չեղեն մեզ դէպք ի ձեռս բերելոյ զնոսին, վասն որոյ լաւ վարկանիմք ընծայել յօգուտ Եկեղեցւոյ և ուսումնասէր աշխարհի զչքնաղ զայս գանձ ամբարեալ յերանաշնորհ նախնեաց մերոց ի գանձատան մատենագրութեանց Սրբոյ Հայրապետին, հանդերձ թերութեամբքն, քան թէ սպասել մնալ այլ եւս՝ անստոյգ օրինակաց, որք եթէ հրատարակեսցին ի հայրենասէր խնամոց՝ բազում յոյժ գործեն օգուտ, լրացուցանելով զպակասաւոր մասունս սորին, և զանստոյգսն և զապականեալսն բացայայտելով... Մի միայն օրինակ էր առ մեզ գրոցս, և այն անթուական՝ առանց ինչ յիշատակարանաց, ի սկզբանէ, ի միջի և ի վերջոյ թերի, որպէս նշանակեալ է ի տպագրին յիւրաքանչիւր տեղւոջ։ Եղանակ գրութեանն՝ որ է միջին անուանեալ երկաթագիր, և արտաքին երեւոյթ մատենին, յօրինեալ ի բամբակեայ թղթոյ՝ տան մեզ գուշակել յերկոտասաներորդ դարու գաղափարեալ լինելոյ...

Ուր ուրեք կարեւոր պէտք էին՝ ուղղեցաք ըղձայանի վրիպակս օրինակին, ի սակաւ տեղիս միայն նշանակելով զվրիպեալսն ի ստորեւ... Մարթ էր և ի բազում տեղիս գուշակօրէն սրբագրել ըզվրիպակ թուեցեալս օրինակին և զպարականական իմաստս, այլ կամու զանց արարաք զայսու առաւելութեամբ, ընտրելով յաւէտ զհետ գնալ մերոյս վկայեալ հաւատարմութեան ի տպագրութիւնս նախնեաց, մանաւանդ մի միայն ունելով օրինակ ի ձեռին և այն ոչ սակաւ սխալագիր։ Իսկ ի սակաւ տեղիս նորօրինակ հոլովմունք ինչ բառից և խոնարհմունք ժամանակաց բայից ոմանց՝ երեւելոց ի մեկնութեան աստ, թուին մեզ առաւել ի գաղափարողաց մուծեալ, քան թէ ի թարգմանչէ ոսկեղինիկ դարուն։

Յայսօր ժամանակի առ բանասէրս Եւրոպիոյ անծանօթ եկաց մատենագրութիւնս այս Սրբոյ Հայրապետին, բայց միայն յեօթանեցունց առաջին գլխոյն և յութերորդէն մինչեւ ցհամար մետասաներորդ. որոց յոյն բնագիրն երեւի նոյն լինել, զորոյ զխուն ծանուցանէ և օրինակս մեր յէջ 102, եթէ «Մինչեւ ցայսվայր գտաւ խրով ձեռովք գրեալ երանելոյն Յոհաննու յունարէն». որով և յայտնապէս տայ մեզ գիտել եթէ ամբողջութիւն գործոյս կորուսեալ էր և առ նախնեօք, և զի հայկական թարգմանութիւն սորին եղեալ էր յառաջ քան զկորուստ բնագրին, ընդ այլ թարգմանութիւնս մատենագրութեանց Ս. Հայրապետին, որպէս և հաւանական յոյժ երեւի ի սեպհ և ի հայկաբան ոճոյ գրութեանն, որ բազում ուրեք յիշեցուցանէ մեզ զոսկիս կերպարանաց բանից թարգմանչի մեկնութեանն Մատթէի...

Բազում ներքին ընծայութեամբք մարթի հաւաստի ցուցանել զհարազատութիւն հայերէն շարայարութեանս, այլ առ այս ոչ պակասեն մեզ և արտաքին աւանդութիւնք և վկայութիւնք ի նախնեաց մերոց։ Որպէս Դաւիթ ոմն վարդապետ յերկոտասաներորդ դարու, որ ի յորդորանաց Պետրոսի վարդապետի իւրոյ գրեաց զծաղկաքաղ մեկնութիւն իւր Եսայեայ, յորում ուրեք ի կարգի բանից Ս. Եփրեմի և Ս. Կիւրղի Աղեքսանդրացւոյ և այլոց Սրբոց Հարց, ի մէջ բերէ բառ բառից անգամ և զբանս Ոսկեբերանի ի մեկնութենէ աստի Եսայեայ։ Սոյնպէս և Գէորգ վարդապետ Սկեւռացի, ի վերջ կոյս ԺԳ. դարու, ի խմբագիր մեկնութեան իւրում Եսայեայ, գրելոյ յաւուրս «արքային Հայոց Հեթմոյ միակեացն կոչեցելոյ» (1289–1305) որպէս աւանդեալ է ի յիշատակարանին, բազում ուրեք փոքու իւք փոփոխութեամբ յառաջ բերէ և զբանս ի մեկնութենէ աստի Ե-

սայեայ՝ յանուն Ոսկեբերանի։ Դարձեալ և ի փոքրիկ ծաղկաքաղ մեկնութեան Եսայեայ՝ Գրիգորի Տաթևացւոյ, ի վախճան ԺԴ. դարու, զոր ժողովեալ է ի բանից վարդապետին իւրոյ Յովհաննու Որոտնեցւոյ՝ կախիկ մականուանեալ վարդապետի, նոյնպէս ի ԺԴ. դարու, բազում ուրեք բառ մեկնութեանն Ոսկեբերանի ունի զիմաստն, թէպէտ և շարադրութիւնն օտար իցէ ի վերջնոյս և ոչ յիշատակիցէ զանուն Ոսկեբերանի։ Թող զայսոսիկ, և ի զանազան ճառընտիրս որ առ մեզ, գտանին այլ և այլ ընտիր հատուածք քաղեալք ի մեկնութենէ աստի յանուն Ոսկեբերանի. զորոց զտարբերութիւնն յօրինակէս մերմէ՝ տեսցես ի վերջ կոյս մատենիս, յէջսն 473-487»։

Վերջաբանական յիշատակարան Վարագայ վանից ընտիր գրչագիր Եսայեայ մեկնութեան. Արծուի Վասպուրականի 1859, թ. 5։

Լատ. թարգմ.

— *In Isaiam prophetam Interpretatio* Sancti Joannis Chrysostomi, Archiepiscopi Constantinopolitani nunc primum ex Armenio in Latinum sermonem a Patribus Mekitharistis translata. Venetiis, ex typographia Sancti Lazari, MDCCCLXXXVII (= 1887). 4°, XX + 468 էջ։

Հրատարակիչն է Հ. Ա. Վ. Տիրոյեան։

— Երանելւոյն Յովհ. Ոսկեբերանի Կոստանդինուպոլսոյ եպիսկոպոսապետի յԱռ Եբրայեցիս թղթըն Պաւղոսի Ճառ ԼԴ. ի բանն որ ասէ. Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա. այլովքն համդերձ. ԺԳ. 17։ Ի Վիէննա, ի վանս Պաշտպան Ս. Աստուածածնի, 1855. ՌՅԴ. 8°, 16 էջ։

Ոսկեբերանի երեք ճառերն ու մէկ աղօթքը տես Կիւրեղ Աղեքսանդրիոյ, «Ճառ վասն եկման», եւն, գիրքը, գործիս 1314 էջը։ – Իր ինչ ինչ ճառերը տես Յայսմաւուրքը Գ. տիպ, եւն, եւն։

— Պատմութիւն վարուց Յոհաննու Ոսկեբերանի։

Այս իբր նախադասն, որուն չալակը. «Ինձ յոյժ մեծարուք եղեն բարեկամք քո Աստուած. և յոյժ զօրացան իշխանք նոցա։ Սաղմ. 138. համար։ 17»։ Իսկ բուն ճակատն է.

Պատմութիւն Վարուց. Աքանչելեաց. և Գիւտի նշխարաց՝ Սրբոյն Յօհաննու Ոսկեբերան Հայրապետին Կոստանդնուպոլսոյ։ Թարգմանեցեալ ի Յունականէ ի Հայս՝ ի Գրիգորէ Կաթուղիկոսէ Վկայասէր կոչեցելոյ. չուրջ զԹուականութեամբն Հայոց. ԵՃ։ Տպագրեցեալ աշխատասիրութեամբ Սարգսի Արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլսեցւոյ։ Խնդրանօք, և արդեամբ՝ կաթուղիկոսի նորին Պօղոսին, որ արար յիշատակ վասն հոգւոյ հանգուցեալ կողակցի իւրոյ Տէվլէթին, և որդւոյն Յակօբ խոճեմ դպրի։ Ի հայրապետութեան սրբոյ Էջմիածնի՝ տեառն Մինասայ ակնեցւոյ։ Յամի Տեառն 1751։ Ի Յունիսի. Ա։ Ի Վէնէտիկ։ Ի Տպարանի Անտոնի Պօրթոլի։ Հրամանաւ Մեծաւորաց։

Այս ճակատէն վերջ յէջն IV «Նախաբան առ Բարեմիտ ընթերցօղս», ցէջն XI, ուր հրատարակիչն Սարգիս Վ. և Արքեպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի կ'ըսէ. «... Իսկ որքան առ բուն տպագրութեան սորին՝ գիտել պարտիս. զի ունելով իմ առ ձեռն միայն հնագոյն օրինակ ձեռագիր, որոյ տառքն ի բազում ուրեք եղծեալք էին, և բառքն գրեթէ անհետացեալք. և ոմանք տեղիք եւս այնպէս չփոթական սխալանօք լցեալք էին, որք իբր թէ՝ կարօտանային մարգարէանալոյ՝ թէ զինչ արդեօք կամիցին ասել, և կամ զ'որպիսի իմացումն պարունակեն յինքեանս։ Եւ այս պակասութիւնս՝ վշտալի առնէր ինձ զաշխատութիւնն իմ առ գործն տպագրութեան։ Վասն որոյ ուրեմն՝ որքան կարելի էր միով օրինակաւ, ջանացի ուղղագրել բառ ակարիմաց ենթադատման իմոյ՝ առանց այլայլելոյ զբանն. որպէս յայտնի երեւի այնոցիկ, որք ունին առ ինքեանս գրչագիր օրինակս, թէ և սակաւ ուրեք գտանիլ կարեն։

Բայց թէ՝ արդեամբ և խնդրանօք ո՛րոյ, և կամ ո՛րով առթիւ տպագրեցեալ իցէ սոյն Գրքուկ, յայտ է համառօտաբար ի ճակատն նախկին։ Քանզի նոյն նախասացեալ նորին Պօղոսն՝ վասն յաւէտ ջերմեռանդ սիրոյն, որով կաթողնիւր առ Ոսկեբերանն, ոչ խնայեաց ծախել զդրամս իւր յաղագս ծախուց տպագրութեան սորին. հաւատալով թէ՝ այս է արկանել զարծաթ Տեառն ի սեղանաւորս, և զանձել զգանձս յերկինս, անկապուտ ի գողոց, և անվնաս ի ցեցոյ։ Արդ թէպէտ խնդրօղն էր վերոյիշեցեալն. բայց միջնորդն խնդրոյն, որոյ անուսցօղ եղէ ես, էր Հարազատ սիրելի ոմն ինձ ի մանկական տիոց հետէ, և մանաւանդ երախտաւոր, որ կոչի իսկ՝ Տիրացու Յօհաննէս Իգնատիոսեան. որոյ երկարանչիւրոց Տէր լիցի վարձահատոյց՝ աղօթիւք Սրբոյն Յօհաննու Ոսկեբերանի։

Վերջապէս, և ինձ բազմամեղ ծառայի ձերոյ առ հոգևորս, որ մեծաւ աշխատութեամբ աքնիմ վասն օգտի ձերոյ՝ Պանդխտակոչկոճ լեալ ի նշդեհութեանս վայրի, Տէր այցելութիւն արասցէ բարեխօսութեամբ Սրբոյս, պաշտպանելով ի հոգևոր և ի մարմնաւոր դարանակալաց, նաև յաղուէսաբարոյ մարդկեղաց, և խորամանկաց, յորոց ոչ զանկաւ մնաս կրեցաք, և կրեմք տակաւին»։ Եւ ապա Ոսկեբերանի պատկերը, և դիմացէն՝ նոր թուահամարով կը սկսի գիրքը և կ'աւարտի յէջն 318, ցանկով միասին։

Գիրքը 8° հաստափակ, անհարթ մանրագիր, զարդարեալ երեսներով. հաստափակ տպագրութիւն։

Տես ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ, «Գրքոյս կոչեցեալ հողեշահ»։

Ոսկեբերանի հայ. Պատարագի մասին տես Գաթրըճեան, «Պարգմոյցք» յէջսն 342-84։ Յունարէնը A. Daniel, Cod. lit. IV, 327-72. J. Goar Euchologion, Փարիզ 1647, p. 58-86 և շարունակ. F. E. Brightman, Liturgies, եւն. Օքսֆորդ 1896, p. 200-344 Բարբերինեանն, 353-99 առվորականն. ասորի երկու բնագիրք թրգմ. Renaudot, Liturg. orient. coll. Ֆրանքֆուրդ 1847, Բ. 242-54, 255-59, եւն։

Ոսկեբերանի վրայ գրուածներ. Ալիշան, «Յուշիկք» Բ. ԺԸ։ – Զարպ. «Մատդրն.» 581-616։ – ՍԷԲԼԷՄԵԱՆ (Ա. Կ.) – Տաշեան, «Մայր ցուցակ» 1127-1129։ – Լոյս 1895, էջ 6, 23։ – Լումայ 1896 Ա, 305։ – Երևակ 1864, 149, 164։ – «Ոսկեբերան ի Պիզէրի», Բիւզանդիոն 1902, թ. 1802։ – Ճռաքաղ 1861, էջ 41-49։ – Պատկեր 1891-92, էջ 411, «Հայրախօսական տեսութիւն մի. Ս. Յովհան Ոսկեբերան» (Յ. Յ. Ալեան)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԵՐՉԵԱՆՑ. — Տես ՈՍԿԵՐՉԵԱՆՑ —։

Յովհաննէս Որոտնեցի Կախիկ. — Տես Զարպ. «Նոր Գպր.» էջ 176։ – Եկեղեցի Հայաստանեայց 1888, էջ 152։ – «Որոտնեցու շիրմի գիւտը». Արևելք 1901, թ. 4741։ – Ալիշան, «Սիսական», էջ 23, 134, 217-20, 236-7, 378։ – Չամչեան, «Պատմ. Հայոց» Գ. 446-450։

Յովհաննէս Ձմշկիկ. — Տես Չամչեան, «Պատմ. Հայոց», Բ. 843-847: - Լումայ 1899 Բ. էջ 55, կամ Բարամեան. — Տէր-Սահակեան, «Հայ կայսերք»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՈՆԱ. — Տես ՊՈՆԱ (Յ.):

Յովհաննէս Պոնացի, եպիսկ. — Տես Ծաղիկ 1904, թ. 5:

ՅՈՎՀԱՆՆԷՍ (Ս. Պ.) *խմբագ.* — Տես *Բանասէր (Հնդկաստանի)*:

Յովհաննէս Սարկաւագ Բերիացի. — Տես Ազգասէր 1846 Գ. էջ 16:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ. — *Յաղագս քահանայութեան և քահանայից և գըլխոյ նոցին.* — *Բանք խրատու ուսումնասիրաց.* — Տես Սոփերք հայկականք, հատ. Գ:

— *Ներբողեան ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչ.* — Տես Սոփերք, հատ. Ե:

— *Աղօթամատոյց Յովհաննու Սարկաւագ վարդապետի.* — Տես Սոփերք, հատ. ԺԵ:

Ալիշան Բազմավէպի մէջ (1847, էջ 214-225) Յովհաննէս Սարկաւագի վրայ շահեկան յօդուած մ'ունի, ուր իր գրուածոց մասին կը գրէ. «... Հոս յիշենք ինչուան հիմայ անոր մեզի ծանօթ եղած գրաւոր աշխատութիւնները, որոնք ամէնն ալ ընտիր գրուածոց կարգն են:

Ա. Սուրբ Լուսաւորչայ վրայ ներբողական ճառ մը, որ բաւական է Սարկաւագ վարդապետին ոճը և ճարտարութիւնը ճանչնալու, լեցուն իմաստներով և կարճ խօսքերով՝ ինչպէս իրեն եղական ձիրքն է: Լուսաւորչայ վրայ գրուած ճառերուն մէջ ասիկայ ամենէն կարճն է, բայց ամենէն ալ գերազանց. սա ճառիս սկիզբն է, «Զնահատակն սըրբոյն տօնէ եկեղեցի» և այլն:

Բ. Գ. Դ. Սրբոյն Սահակայ, Մեսրովպայ և մեծին Ներսէսի վրայ ալ ճառեր գրած է կ'ըսեն, բայց դեռ չենք տեսած, և թէպէտ կան մէկ երկու ընտիր գրուածքներ ասոնց վրայ՝ որ Սարկաւագին կ'ընծայուին, այլ իր ոճէն հեռու են:

Ե. Վասն մասանց պատուոյ եւ պատկերաց ընդունելութեան, արժանի իմաստասէր անուանը գըրուած, թէ խելքը և թէ ոճը, և փոքր գրուածքը. սոր մէջ կը ցուցնէ թէ ինչ պատճառաւ պատիւ տալու է պատկերաց. և սկիզբն է «Յանտեղին ճարտարապետոյնք և հանճարեղք յանբանութեանս» և այլն:

Զ. Վասն շարժման երկրի համառօտ գրուած մը, կամ գրուածի մը կտոր, ուր հովերը երկրիս տակի սասանութեանց պատճառ կը կարծէ, և քանի մը բնական երեւոյթներու վրայ կը խօսի:

Է. Մեկնութիւն տօմարի, և Յաղագս անկիւնաւոր թուոց, որուն ինչպէս յիշեցինք՝ միայն քանի մը հատուածը ունինք:

Ը. Բան խրատու, իմաստութեան վրայ վարդապետութիւն մըն է, մէկ երեսիկ մը բան, բայց պզտիկութեան մէջն ալ այնչափ ընտիր՝ որչափ են պզտիկ գոհարները:

Թ. Աղօթագիրք, զանազան վերնագրով. մենք քանի հատ մը ճանչցեր ենք, ամէնն ալ ընտիր փոքր սրտաշարժ, որ և ամէն մեր նախնի աղօթագիրներէն գերազանց, և կերպով մը Նարեկացիէն աւելի բնական և կատարեալ, թէպէտ Նարեկն ալ անհաւասարելի է իր կարգին մէջ:

Ժ. Աստուածաբանական բանք, քանի կամ քանի ու հինգ գլուխ բան, որոնց մէջ միայն ինչպէս վերը ըսինք՝ աւելի հատորիկ զուրցուածք կամ անհարազատ ոճ կ'երեւնայ:

ԺԱ. Սրբոց Ղեւոնդեանց վրայ Համբարձիին չարականը՝ Պայծառացիր, որուն ամէն բանասէրք ծանօթ պիտի ըլլան:

ԺԲ. Անշուշտ իր ամէն գործքերուն մէջ գլուխ գործոց սեպուելու է իր Պատմութիւնը, որ հիմա կորսուածներուն կարգն է մեզի, բայց Վարդան, Կիրակոս, Մխիթար Այրիվանեցի, Սամուէլ Անեցի կը յիշեն զայն, և կը վկայեն անոր ընտիր հնուտ և սքանչելի գրուածքին: Աս եղքի պատմագրիս երախտագէտ պէտք է ըլլանք որ իր ժամանակագրական պատմութեանը մէջ երկու իրեք հատուած կը բերէ աս ցանկալի պատմութենէն, որ ո՛րչափ ուրախութեան պատճառ է մեզի զանէ ան մէկ թղթի պատառիկը ունենալնուս և անով ամբողջ գըրքին փափաքութիւնը և ազնուութիւնը ճանչնալնուս, այնչափ ալ ցաւ կուտայ անոր կորսուելը վրայ. վասն զի այն հատուածները՝ նման վերոգրեալ գըրուածոց փոխմութեան՝ անխարբելի փաստ մը կրնան ըլլալ թէ այն պատմութիւնը մեր գրականութեան ընտիր գրուածքներէն մէկն էր, և իրեն ցեղին մէջ թերեւս ամենէն ընտիրը: Աս պատմութիւնը կ'երեւնայ թէ երկու գլխաւոր մաս էր, մէկ մը ընդհանուր Սկիւթական ազգաց ծագմանը և արշաւանացը վրայ որ ԺԱ. դարէն սկսան գալ Հայաստան, Սելճուկեանց և Տուղրիլեանց վրայ, Ալփասլանին և անոր նախորդացը գործքերը. մէկ մ'ալ Ալփասլանի որդւոյն Մելիքշահին գործքերը՝ որուն մահուամբը կը դադրեցնէ Սարկաւագ իր պատմութիւնը: Զկնար մէկը անոր ճաշակը առնելէն վերջը՝ մեզի հետ չփափաքիլ ամբողջ պատմութիւնը տեսնելու, և յորդորելու աղաչելու ուրիշ բանասէրներն ալ որ ուր որ գրոց ծանօթութիւն ունին քննեն, և թէ յաջողի մէկը գտնելու և մեզի փափաքողացս ալ հաղորդելու, մեր երախտագիտութիւնը բոլոր ազգին երախտագիտութեանը հաւասար սեպէ: Նոյնպէս թէ որ ուրիշ գրուածք ալ գտնուի նոյն հեղինակին, որ անշուշտ ենք թէ պիտի ըլլայ զանազան կողմեր. և ահա աս բաներս վկայ ըլլայ Սարկաւագին

ԺԳ. Վերջին գրուածքը, որ է հոս գրուած կարճ ու իմաստալից բանաստեղծութիւնը Սարեկին վրայ: Ասիկայ ատենաւոր գրուածք մըն է, և բոլորովին նոր գաղափար մը կ'ընծայէ մեր ազգին հին գրուածքներուն մէջ: Աս երգը Մարտունի ազգային դպրոցին մէջ հին աղօթագրքի մը մէջ գրած էր Սարկաւագին ուրիշ գործքերուն հետ մէկտեղ, որ դպրոցին մեծերը հաճեցան անցած տարիները մեզի համար օրինակել տալու. և ահա այս երգը՝ որ թէ մեր երախտագիտութիւնը և թէ իրեն նորութիւնը մեզի հրատարակել կուտան օրագրիս մէջ՝ յորդորելով զմեզ աս տեղեկութիւնս ալ տալու իր հեղինակին վրայ, որ կարդացողը ճանչցած ըլլայ թէ որպիսի մարդու գործ կը կարդայ»: Դրած է նաև տաղը (յէջսն 221-5), «Յովհաննու Սարկաւագի իմաստասիրի և Վարդապետի ասացեալ բան իմաստութեան ի պատճառս զբօսանաց առ ձագն որ զաղօթանոցաւ նորա ճռուողէր քաղցրաձայն որ կոչի Սարիկ»: Տաշեան կը յիշէ սոյն երգին տպագր.ը «Մայր ցուցակ»ին մէջ, բայց տարին 1850 դրուած է, փոխանակ 1847ի:

Սարկաւագի «Վասն պատկերաց ընդունելութեան» գրուածքը տպուած է Հ. Զարբ.ի «Յաղագս բարեխօսութեան սրբոց» գրքին Յաւելուածին մէջ էջ 343-59:

Ուրիշ գրուածներ Սարկաւագայ մասին. Ալիշան, «Շնորհալի և Պրգ. իւր», գլ. Ժ: - Զարբ. «Հին Դպր.» 606-616: - Չամչեան, «Պատմ. Հայոց» Գ., 40-41:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵՂԲՈՍԵԱՆ = GIOVANNI DE SERPOS. — *Dissertazione polemico-critica* sopra due dubbj di coscienza concer-

nenti gli Armeni Cattolici sudditi dell'Impero Ottomano presentata alla Sacra Congregazione Di Propaganda dal Marchese Giovanni de Serpos. In Venezia nella stamperia di Carlo Palese con Pubblica Approvazione MDCCLXXXIII (= 1783), p. 4°, 256.

Բովանդակութիւն. I. La Comunicazione in Divinis cogli Eretici e cogli Scismatici è proibita dal Diritto Ecclesiastico, e non dal Divino. - II. L'Ecclesiastica Legge proibitiva della comunicazione in Divinis cogli Eretici e cogli Scismatici non obbliga gli Armeni Cattolici sudditi Ottomani, I. per la morale impossibilità in cui essi sono di osservarla, II. per le calamità estreme, a cui si espongono volendola osservare. - III. Questa Legge è notabilmente moderata dall'Estravagante Ad evitanda, in vigor di cui i Cattolici non sono obbligati ad evitare anche nelle cose Divine, che solamente gli Eretici e gli Scismatici nominatamente denunziati. - IV. Senso vero e naturale della Estravagante Ad evitanda, e suo ampliamento. - V. Differenza notabile tra chi è nominitamente scomunicato, e tra colui ch'è denunziato nominatamente per tale. - VI. Riflessioni sul Sinodo Trullano, e su ciò, che ne' suoi Atti si legge rapporto alla Nazione Armena. - VII. Non è permesso di comunicare in Divinis indistintamente con qualsisia Eretico o Scismatico, tuttochè non denunziato, ma in certe circostanze. - VIII. Motivi e fini pe' quali da' Prelati Scismatici Armeni si esigge l'accesso de' Nazionali Cattolici alle lor Chiesa; e si mostra essere fondati in riguardi precisamente politici. - IX. Rivalità di comando, che stimola i Prelati Scismatici a voler vedere gli Armeni Cattolici alle Chiese Nazionali. - X. Interesse, che ha in vista le limosine dei Cattolici Armeni. - XI. Circonstanze negative, che sempre debbono esser lontane per Divino Diritto, onde poter lecitamente comunicare in Divinis cogli Eretici e cogli Scismatici, ancorchè non denunziati, e se ne assegna la prima. - XII. Seconda circostanza negativa. - XIII. Terza circostanza negativa. - XIV. Si risponde a tre obbjezioni, e nominatamente alla prima desunta da' Brevi di Paolo V. rapporto a' Cattolici Inglesi. - XV. Si risponde alla seconda obbjezione tratta dall'espressioni di Benedetto XIV. - XVI. Si risponde alla terza obbjezione fondata sulle Istruzioni per l'Oriente formate dalle S. Congregazioni del S. Uffizio, e di Propaganda sopra la comunicazione de' Cattolici cogli Eretici e Scismatici. - XVII. Riflessioni sopra l'Istruzione Cum sæpe, ac diu &c. - XVIII. Cause della varianza nelle Decisioni di Roma, e modo d'intenderle. - XIX. Ragioni, par le quali sembra, che non si possa dire nè Eretica, ne Scismatica formalmente la Chiesa Armena. - XX. Conclusione del primo punto. - XXI. Si prova l'antichità della consuetudine di celebrare la Festa del Santo Natale insieme coll'Epifania; e si ragiona sul Calendario Armeno. - XXII. Niun Diritto nè naturale, nè divino, nè ecclesiastico inibisce agli Armeni di conformarsi all'antico loro Calendario. - XXIII. Spirito di prudentissima, evangelica tolleranza, esclusivamente proprio della sola Chiesa di Gesù Cristo. - XXIV. Conclusione del secondo punto, e di tutta l'Opera.

— *Compendio storico* di Memorie cronologiche concernenti la religione e la morale della nazione Armena suddita dell'Impero Ottomano. Opera divisa in sei Libri e presentata alla Sacra Congregazione di propaganda dal Marchese Giovanni de Serpos. Tomo primo. In Venezia nella stamperia di Carlo Palese MDCCLXXXVI (= 1786). Con pubblica approvazione. 8°, p. XX + 508.

— Volume secondo, p. 493.

— Volume terzo, p. 628.

Բովանդակութիւն. Ա. հատ. Ա. գիրք. Dedicatoria alla S. Congregazione di Propaganda. *Descrizione Corografico-fisica dell'Armenia.* I. Pregi dell'Armenia tratti dalla S. Scrittura. - II. L'origine, e la esemplare idea delle fabbricate navi; l'uso del vino, e dell'olio primitivo ec. provengono dall'Armenia. - III. L'arcobaleno germe di giusto encomio per l'Armenia. - IV. Culto esterno di vera religione, ridotto in sistema di coordinata armonia, viene ristabilito per la prima volta solennemente nell'Armenia subito dopo il diluvio. - V. Se Noè sia morto nell'Armenia, ed ivi sepolto. - VI. Notizie e tradizioni circa le reliquie dell'arca di Noè; e se possa sostenersi, che vi esistano sul monte Ararat dell'Armenia. - VII. Descrizione corografica dell'Armenia, e numero delle sue provincie. - VIII. Mosè Corenense scrittore Armeno si accorda con Plinio, e con altri classici autori nella corografica descrizione dell'Armenia. - IX. Rivoluzioni, a cui è stata di secolo in secolo soggetta l'Armenia. - X. Necessità di rettificare i mappamondi rispetto alla corografica posizione dell'Armenia. - XI. Qualità fisiche del territorio Armeno, e suoi prodotti. - XII. Se l'albero frumentario dell'Armeno scrittore Mosè Corenense sia analogo al Sagou delle Molucche; e se alcune droghe Armene si avvicinino alle Indiane. - XIII. Descrizione del garofano, e della nocemoscada. - XIV. Indagazione da farsi dagli Armeni circa i loro prodotti concernenti la storia naturale, e massimamente circa le cocinilglia; e descrizione di questa. - XV. Clima, fertilità naturale, e fiumi maggiori dell'Armenia. - XVI. Quistione intorno alla località del paradiso terrestre, e se probabilmente possa credersi collocato nell'Armenia. - XVII. Sistemi di varie località, che si escludono. - XVIII. Ragioni, che persuadono, che il terrestre paradiso fosse locato nell'Armenia maggiore. - XIX. Laghi dell'Armenia, ed alcune considerazioni filosofiche sulla qualità delle loro acque, e prodotti. - XX. Monti dell'Armenia, e idea d'un viaggio fisico-matematico per essi. - XXI. Mari limitrofi all'Armenia, e loro conducibilità alla universal navigazione, ed al più esteso commercio con tutte le quattro parti del globo. — Գիրք Բ. *Stato politico antico e moderno dell'Armenia.* I. Idea del primitivo

governo patriarcale antediluviano, ed applicazione di esso a' popoli abitatori dell'Armenia nella prima età del mondo. - II. Se durante il primo secolo dopo il diluvio tutti gli uomini il tal periodo nati raccolti si tenessero nell'Armenia; e se il loro governo fosse patriarchico. - III. Perchè gli Armeni furono da prima chiamati Haici; poscia Arameni; e finalmente Armeni: e da chi furono governati fino a' tempi di Semiramide. - IV. Magnifica città fabbricata da Semiramide nell'Armenia; e serie di capi di famiglia, da cui furono governati gli Armeni fino all'anno del mondo 3252. secondo la Volgata. - V. Epoca del governo degli Armeni divenuto monarchico; e carattere di Parero primo Re, e di altri. - VI. Estinzione del principato Haicano fra gli Armeni; ed epoca dell'impero Parto-Armeno. - VII. Notizie di alcune celebri statue commemorate da Plinio, che capitarono nell'Armenia; e distinzione troppo necessaria di Tigrane I. Haicano, e di Tigrane II. Arsacida. - VIII. Carattere di Tigrane II. Arsacida; e sue imprese massimamente co' Romani per causa di Mitridate Eupatore Re di Ponto. - IX. Qualità morali e politiche di Artavasde I. e sua tragica morte per opera di M. Ant. Triumviro Romano, e di Cleopatra. - X. Arsamo succede ad Artavasde I. e si fanno alcune osservazioni critiche sulla storia Augusta de' Romani. - XI. Memorie di Abgaro di Edessa Re degli Armeni succeduto ad Arsamo suo padre. - XII. Lettere, che diconsi scritte da Abgaro di Edessa a Gesù Nazareno, e di Gesù Nazareno ad Abgaro. - XIII. Esame critico sopra l'autenticità delle Lettere di Abgaro, e di Gesù Nazareno; e ragioni della loro supposizione. - XIV. Ragioni, che ne sostengono l'autenticità. - XV. Osservazioni sulla critica di Giuseppe Simonio Assemani, che dalla serie de' Re Armeni esclude Abgaro di Edessa. - XVI. Ananeo, Sanatruce, Ervando II. Artase II. Re Armeni, e loro carattere. - XVII. Storia Armena in accordo colla Storia Romana; Mosè Corenense in concordia con Tacito; e memorie del Cartaginese Annibale stato nell'Armenia. - XVIII. Artavasde II. Tiranno I. Tigrane III. Valarse I. Cosroe I. Re degli Armeni. Romani eserciti stati nell'Armenia; e medaglie battute in Roma in memoria delle ottenute vittorie, - XIX. Tratti di storia Romana illustranti l'Armena; ed alcune difettuosità, che si notano nel Corenense. - XX. Anarchia Armena conseguente alla oppressione cagionata da' Persiani; e regno di Tiridate figlio dell'Armeno Re Cosroe I. - XXI. Se in buona critica possa ammettersi il viaggio di Tiridate a Roma; ed il patto di scambievole alleanza, che dicesi stipulato tra Lui, e Costantino il Grande. - XXII. Zelo del Re Tiridate per la propagazione della cristiana religione fra gli Armeni; sua morte, e Re successori fino ad Arsace II. - XXIII. Prigionia di Arsace II. nel castello della Oblivione; sua morte, e quella pure di Pabo suo figlio. - XXIV. Geste di parecchi Re Armeni da Pabo fino a Cosroe III. - XXV. A Cosroe III. Re degli Armeni degradato succede il Re Veramsapore; poi di nuovo regna detto Cosroe; poi Sapore figlio d'Isdegerde II. Re de' Persiani; finalmente Artasire, o Artaserse, figlio di Veramsapore, sotto cui il governo Armeno diviene anarchico. - XXVI. Principi Armeni saliti sul Trono imperiale de' Greci. - XXVII. Risorgimento della monarchia Armena per opera de' Principi Bagratidi; serie di questi Principi; e nuovo stato di anarchia. - XXVIII. Nuovo risorgimento della monarchia Armena pel valore de' Principi Rubeniti; serie, ed imprese di questi. - XXIX. Principi Latini, che governarono gli Armeni, e fine della loro monarchia. - XXX. Anarchia generale degli Armeni; e quadro cronologico dei Sovrani, da cui sono stati di tempo in tempo dominati. — Գիրք Գ. *Principj, progressi, stabilimento della società Cristiana fra gli Armeni.* I. Primitivi germi di cristiana religione fra gli Armeni. - II. Sviluppo de' primitivi germi di società cristiana fra gli Armeni; e persecuzioni mosse da Ananeo, e Sanatruce. - III. Memorie di S. Bartolommeo Appostolo, primo padre, e fondatore della chiesa Armena; suo carattere, sua missione, suo martirio. - IV. Se la cristiana religione, predicata, e propagata nell'Armenia maggiore da S. Bartolommeo Appostolo si sia conservata fino all'età di S. Gregorio Illuminatore, ovvero si sia a poco a poco smarrita. - V. Nascita, educazione, religione, pietà, pene sofferte, prodigj operati, predicazione, sacerdozio, ed altre imprese di S. Gregorio Illuminatore. - VI. Viaggio di S. Gregorio Illuminatore a Roma in compagnia del Re Tiridate; sua instituzione in patriarca di tutta l'Armenia; sua vita solitaria; sua morte; suo culto. - VII. Difficoltà, che negli atti di S. Gregorio Illuminatore promuovono i Bollandisti; e risposta alla prima, che riguarda la siagria di Tiridate. - VIII. Risposta alla seconda difficoltà, toccante il viaggio di Tiridate a Roma in compagnia di S. Gregorio. - IX. Risposta alla terza difficoltà, spettante alla instituzione del Patriarcato Armeno per opera di S. Silvestro. - X. Ragioni, che si allegano dagli Armeni circa l'originalità del loro Patriarcato. - XI. Paragrafo della pistola di concordia, che dicesi stipulata tra Costantino Magno, e Tiridate; tra S. Silvestro Papa, e S. Gregorio Illuminatore; ed alcune critiche riflessioni sulle conseguenze, che ne derivano. - XII. Quistione teologico-canonica, se consti legalmente, e giuridicamente, che sieno indubitati, veri, e vitandi scismatici quegli Armeni sudditi Ottomani, che hanno tal nome? - XIII. Regole di condotta prescritta da Benedetto XIV. rapporto agli Appellanti di Francia; ed applicazione di esse al caso degli Armeni. - XIV. Accuse date agli Armeni comprovanti lo scisma; e loro dileguamento. - XV. Considerazioni sopra la necessaria comunione colla Chiesa Romana. - XVI. Risposta contro l'accusa, che gli Armeni non abbiano nemeno l'indiretta, e la mediata comunione colla S. Sede Appostolica. - XVII. Tendenze mediate, ed indirette de' patriarchi Armeni verso il centro della cattolica unità; e quelle del centro

verso loro. - XVIII. Se consti alla S. Sede la vera, ed indubitata cattolicità degli Armeni, detti scismatici. - XIX. Conclusione dell'introdotto episodio; e corollarj, che se ne deducono. - XX. Si dimostra accettato dalla Chiesa Armena il concilio di Calcedonia ec. - XXI. Esempj di tolleranza ecclesiastica, che si potrebbono imitare nella supposizione, che il concilio di Calcedonia non fosse stato accettato dagli Armeni. - XXII. La comunicazione in divinis fra gli Armeni sudditi Ottomani, è appoggiata al Decreto del 1719. di Clemente XI. - XXIII. Si esamina la natura del Decreto emanato da Clemente XI. nel 1719. rapporto alla comunicazione in divinis degli Armeni Cattolici sudditi Ottomani. - XXIV. Analisi del Decreto del 1719. di Clemente XI. e dichiarazione del vero suo spirito. - XXV. In quale senso possa dirsi il Decreto di Clemente XI. fin'ora analizzato, Decreto di connivenza, o, come altri dicono, di tolleranza. - XXVI. Globo d'imputazioni, o date, o possibili a darsi a' difensori della causa Armena; e dimostrata loro assurdità. - XXVII. Confutamento di alcune arbitrarie obbjezioni. - XXVIII. Riflessioni sopra le informazioni contrarie alla causa degli Armeni, che possono essere giunte in Propaganda; e diritto che si ha di protestare contro esse.

Հատ. Բ. Գիրք Դ. *Serie Cronologica de' Patriarchi Armeni*. I. S. Gregorio Illuminatore primo patriarca della Chiesa Armena. - II. A S. Gregorio Illuminatore succede il suo figlio Aristace; poi l'altro figlio Vertane; poi Jusico o sia Hesichio, figlio di Vertane; poi Farnerse. Si dà l'idea di questi patriarchi. - III. Nierse I. soprannomato il Grande, succede al patriarca Farnerse; altri patriarchi venuti dopo fino ad Isacco II. figlio di detto Nierse I. Specificato carattere d'Isacco, e de' due suoi immediati successori Mesropo, e Giuseppe I. - IV. Patriarchi succedutisi di mano in mano da Giuseppe I. fino a Pabgeno, e loro geste. - V. Ragioni, che dimostrano l'ortodossia del patriarca Pabgeno; e cenno di alcune difettuosità di Clemente Galano. - VI. Elezione di Nierse II. Astaracense; e serie d'altri patriarchi, che gli vennero appresso fino al patriarca Jezr; ed alcune riflessioni dell'Era Armena. - VII. Carattere del patriarca Jezr, e sue imprese. A lui succede Nierse III. detto Scinol. Serie di altri patriarchi fino a Giovanni IV. denominato l'Ozniese. - VIII. Spirito di religione, che animò i patriarchi, ed il popolo Armeno, dall'epoca di S. Gregorio Illuminatore fino a quella di Giovanni Ozniese. - IX. Quadro orribile fatto di Giovanni Ozniese da' primi suoi accusatori, che hanno servito di modello a' susseguenti scrittori innocentemente ingannati. Successione di dodici patriarchi, che immediatamente lo susseguirono. - X. Memorie del patriarca Zaccaria I. e sue lodevoli geste. - XI. Serie de' patriarchi succeduti a Zaccaria I. meriti insigni di alcuni; e traslazioni della cattedra Armena. - XII. Impedimenti recati da' Greci alla elezione canonica de' patriarchi Armeni; ripristinata loro successione; e carattere di Gregorio II. detto Vecajaser, e di Gregorio III. suo affine, e discepolo. - XIII. Elezione di S. Nierse IV. detto il Ghelajense; sue virtù; sua dottrina; suo valore incomparabile nella sacra poesia; sue dispute col greco Teologo Teoriano; sua morte; ed abbagli di Clemente Galano intorno a questo santo, ed insigne patriarca. - XIV. Notizie concernenti l'insigne merito del cattolicissimo patriarca Gregorio IV. detto Deghà, e di Gregorio VI. cognominato Abirad. - XV. Lettera comunicatoria scritta dal patriarca Gregorio VI. Abirad al Papa Innocenzo III. Breve Pontifizio avutone in risposta; ed alcune osservazioni critiche, e cronologiche. - XVI. Controversie di giurisdizione tra l'Armeno patriarca Constantino I. ed il patriarca Latino d'Antiochia; ricorso fattone a Papa Grogorio IX. raccomandazione presso lui interposte da detto Costantino I. per la riconciliazione di Federico II. Imperatore. - XVII. Qualità, e geste de' patriarchi Jacopo I. Costantino II. Stefano IV. e Gregorio VII. detto l'Anaverzese. - XVIII. Nomi, ed azioni de' patriarchi seduti nella cattedra Armena da Gregorio VII. Anaverzese fino a Costantino VI. e Pontefici Romani ad essi patriarchi contemporanei. - XIX. Vera idea di Giovanni Orodniese, e di Gregorio Datavense autore del libro delle Interrogazioni: e distinzione tra Gregorio Datavense martire, ed il suddetto scrittore delle Interrogazioni. - XX. Legazione degli Armeni al concilio ecumenico di Firenze. Esultanza di Eugenio IV. nell'accoglierli; decreto d'istruzione loro dato; ritorno de' medesimi nell'Armenia; divisone del nazionale Catholicato; e serie dei patriarchi Sisensi, succedutisi dopo tal divisione. - XXI. Cronologica successione de' patriarchi Eczmiazinensi dall'epoca della divisione del Catholicato Armeno fino a questi tempi, e loro autorità. - XXII. Nozioni spettanti al patriarcato Armeno di Costantinopoli. - XXIII. Copia di Berato, o sia imperiale Diploma, con cui il Gran Signore accorda l'esercizio della loro autorità a' patriarchi Armeni di Costantinopoli. - XXIV. Spiegazione di alcuni termini, e formole del Berato, che si concede ai patriarchi Armeni di Costantinopoli dalla Sublime Porta. - XXV. Chiese Armene del Monte Libano; ed istituzione moderna di quel patriarcato. - XXVI. Allocuzione di Benedetto XIV. in proposito dell'Armeno patriarcato del Libano. - XXVII. Della Chiesa, che gli Armeni cattolici hanno nella città di Merdin. - XXVIII. Storia delle chiese Armene di Ancira, o sia Angora. - XXIX. Se gli atti giurisdizionali de' patriarchi, e vescovi Armeni detti Scismatici, sieno validi, o nò? - XXX. Motivi, e qualità delle persecuzioni Armene. - XXXI. Trasporti furibondi del patriarca Giovanni da Smirne; e riflessioni sulla morte del sacerdote Armeno D. Comidas. - XXXII. Continua il ragguaglio delle persecuzioni Armene. Pacifiche maniere adoperate ad ovviarle dal patriarca Giovanni Golot; e maneggi a tal uopo usati dal Sig. Marchese di Villanova Ambasciatore di Francia presso la Porta. - XXXIII. Condotta usata da' patriarchi Jacopo Nal, e Gregorio Diodati. -

XXXIV. Governo dell'attuale patriarca Zaccaria; e suo allontanamento in Bursa. – XXXV. Violenze esercitate dal patriarca Giovanni di Hamadan; e sua deposizione. – XXXVI. Ritorno del patriarca Zaccaria dalla città di Bursa in Costantinopoli, e suo zelo per la pace. – XXXVII. Articoli della Istruzione Relatis &c. fatta dalla S. Congregazione di Propaganda nell'anno 1783. – Գիրք Ե. *Concilj celebrati nell'Armenia concernenti la Religione, e la Disciplina.* I. Primi concilj Armeni, ragunati nella regale città di Valarsapat, e loro sanzioni. – II. Sinodi celebrati nella città di Hasdisad a preservare gli Armeni dalla eresia di Nestorio; e zelo dimostrato dal Clero Armeno a precluderne la propagazione per l'Asia. – III. Sinodi tenuti in Sahapivan, in Artaxata, ed in Valarsapat. – IV. Sinodo I. tenuto nella città di Tevin nel 551, da Moisè II. patriarca; ed epoca dell'Era Armena. – V. Sinodo II. ragunato nella città di Tevin nell'anno di Cristo 596. da Abramo I. patriarca. Osservazioni critiche concernenti le sanzioni di questo sinodo; e sana intelligenza di alcuni passi di Clemente Galano. – VI. Discussione apologetica delle sanzioni del sinodo Tevinense II. circa l'espressione d'una natura in Cristo. – VII. Riflessioni sopra l'addizione fatta al Trisagio. – VIII. Motivi, pe' quali fu vietato dal sinodo Tevinense II. che dagli Armeni si facesse memoria del concilio di Calcedonia; si dividesse la Festa del S. Natale dalla Epifania: e ragioni, per le quali sembra, che possano scusarsi i vescovi Tevinensi dalla formale eresia e scisma. – IX. Primo plenario concilio nazionale Armeno celebrato dal patriarca Jezr, nella città di Carin, e suoi statuti. – X. Sinodo III. convocato nella città di Tevin dal patriarca Nierse Scinol nell'anno di Cristo 645. Altro Sinodo Tevinense IV. tenuto dallo stesso Scinol nell'anno di Cristo 648. – XI. Conciliabolo scismatico tenuto nella città di Manazcerta nell'anno di Cristo 650. Ragioni per le quali si dimostra falsamente attribuirsene la convocazione a Giovanni Ozniese; e piena giustificazione di questo patriarca. – XII. Motivi, pe' quali è stato creduto, che il conciliabolo di Manazcerta sia stato convocato dall'Ozniese. Vero carattere di questo patriarca; e Sinodo V. di Tevin da lui raunato nell'anno di Cristo 719. – XIII. Chi sia quel Barsuma, che si commemora dagli Armeni nelle ecclesiastiche loro funzioni? – XIV. Se gli Armeni chiamati scismatici possano dirsi Semieutichiani; e se ammettano la natura composta in Cristo nel senso erroneo del famoso Xenaja? — XV. Sinodo VI. di Tevin tenuto da Giovanni Ozniese nel 726. ed un altro tenuto dal patriarca Sionne in Partav nel 768. Secondo plenario sinodo convocato in Sciracavan da Zaccaria I. nell'anno di Cristo 862. – XVI. Sinodo tenuto nella Città di Anì dal patriarca Vahano nell'anno di Cristo 970. Sinodo tenuto nella città di Harchia dal patriarca Pietro Kiedatarz nell'anno di Cristo 1050. Sinodo tenuto in Sicav-learn dal patriarca Gregorio III. nell'anno di Cristo 1114. – XVII. Terzo plenario concilio nazionale Armeno tenuto in Romcla della Cilicia nell'anno di Cristo 1179. – XVIII. Notizie di parecchi sinodi celebrati nell'Armenia dall'anno di Cristo 1204. fino all'anno 1307. in cui fu convocato il quarto plenario concilio nazionale Armeno nella città di Sis. Statuti di questo concilio. – XIX. Disgusti cagionati nel corpo della nazione Armena da alcune sanzioni del quarto plenario concilio nazionale celebrato in Sis. Convocazione del quinto plenario concilio nazionale tenuto in Adana nell'anno di Cristo 1316. e sue determinazioni. – XX. Congrega di vescovi raccolti in Sis nell'anno di Cristo 1342. per esaminare il famoso catalogo degli errori attribuiti agli Armeni, spedito loro dal Papa Benedetto XII. – XXI. Industrie usate da' patriarchi Armeni, perchè il Decreto di Eugenio IV. avesse pieno vigore in ogni suo apice; e successo infelice de' loro tentativi. Notizie di alcune posteriori sinodali adunanze. – XXIII. Verità, che risultano dall'esame seguente, e metodico de' concilj Armeni.

Հատ. Գ. Գիրք Զ. *Costumanze generali degli Armeni.* I. Indole, spirito, cuore degli Armeni. – II. Disciplina degli Armeni massime circa i digiuni. Decisioni di Benedetto XIV. su tale articolo; ed accuse date agli Armeni di Giudaismo. – III. Morale degli Armeni, e culto religioso. – IV. Della Liturgia Armena, e suo merito. – V. Idea della Liturgia Armena circa il sacro vestiario del celebrante, ed altri ecclesiastici arredi; e circa il canto, ed alcuni stromenti di suono. – VI. Principio della Liturgia; preparazione de' doni; incensatura; canto del Trisagio. – VII. Preghiere comuni annunziate dal diacono; orazioni del celebrante; lettura del vangelo; recita del simbolo, ed alcune osservazioni sovra esso. – VIII. Preci della oblazione; lincenziamento de' catecumeni; processione de' mistici doni, ed apologia di questa cirimonia. – IX. Lavanda delle mani del celebrante; bacio di pace; avviso per assicurare le porte; il prefazio; il canone fino alla consacrazione; le parole consecrative, ed alcune riflessioni. – X. Preghiere del celebrante subito dopo la consecrazione; sue misteriose cirimonie; sua invocazione dello Spirito S. per la mutazione del pane e del vino in Corpo, e Sangue di Gesù Cristo. Teologica discussione del merito di tal invocazione. – XI. Suppliche e commemorazioni, susseguenti alla preghiera della Invocazione. – XII. Esame delle commemorazioni liturgiche de' patriarchi Armeni. Allegasi una dotta scrittura di persona anonima concernente la commemorazione de' patriarchi Greci. – XIII. Annotazioni, che si fanno, alla scrittura dell'Anonimo. – XIV. Continuanza della scrittura. – XV. Obbjezioni, che si fa l'Anonimo; e sue risposte. – XVI. Altre obbjezioni; e loro risposte. – XVII. Obbjezioni promosse dall'Arcudio; e loro scioglimento. – XVIII. Riflessioni dell'Anomino sull'obbligo di commemorare il Papa. – XIX. Applicazione delle ragioni dell'Anonimo al caso degli Armeni rapporto alle commemorazioni liturgiche de' loro pa-

triarchi. - XX. Continuazione della Liturgia Armena fino alla comunione. - XXI. Comunione del celebrante, degli assistenti, e del popolo. Ringraziamento, e fine della Liturgia; e sentimenti del P. Le-Brun sulla sua pregiabilità. - XXII. Discorso esortatorio agli Armeni circa l'uso dell'acqua nel calice. - XXIII. Se il Papa per gravi, ed urgenti motivi possa dispensare dal mescere l'acqua nel calice del sacrifizio. - XXIV. Delle usanze Armene concernenti la distribuzione de' Mesi ordinati nel Calendario nazionale; e della maniera di raccogliere le limosine nel tempo delle funzioni ecclesiastiche. - XXV. Si parla del matrimonio degli Armeni, e delle particolari loro usanze nel contrario. - XXVI. Battesimo degli Armeni, e cirimonie, che lo accompagnano. - XXVII. Cresima degli Armeni. - XXVIII. Reità imputate da Clemente Galano alla chiesa Armena rapporto al sagramento del matrimonio; e dimostrata insussistenza della prima di tali reità. - XXIX. Insussistenza della seconda, e terza delle reità imputate dal Galano. - XXX. Ragioni prodotte dal Galano a pruova del non esservi mai stata fra gli Armeni consuetudine di dispensare negl'impedimenti di matrimonio; e loro confutamento. - XXXI. Esame teologico-canonico del potere de' vescovi circa le dispense matrimoniali; e titoli de' prelati Armeni, su' quali essi fondano la validità di tali loro dispense. - XXXII. Accuse, che dà il Galano alla chiesa Armena rapporto alla ommissione dell'olio de' catecumeni nelle cirimonie battesimali. Trattazione, e sviluppo di tal controversia. - XXXIII. Errori, che attribuisce il Galano agli Armeni intorno al dogma della necessità del battesimo, ed intorno al ministro, ed alla forma di questo sacramento. Risposta circa il primo di sì fatti errori. - XXXIV. Risposta circa l'errore secondo, attribuito agli Armeni rapporto al ministro del battesimo. - XXXV. Risposta al terzo errore addossato agli Armeni riguardante la formola del battesimo. - XXXVI. Avvertimenti del Galano intorno al santo Crisma degli Armeni; e discussione della loro solidità. - XXXVII. Giustificazione degli Armeni rapporto ad alcune accuse, che dà loro il Galano circa il sacramento dell'Eucaristia. - XXXVIII. Del modo, onde amministrasi il sacramento della penitenza fra gli Armeni; e delle ragioni, con cui si confutano alcune accuse del Galano. - XXXIX. Si ragiona del sagramento dell'Estrema Unzione; e si esortano gli Armeni a ristabilirne la pratica. - XL. Definizioni dommatiche del concilio di Trento circa l'estrema Unzione; e dottrinali passi di Benedetto XIV. intorno a questo sacramento. - XLI. Delle unzioni de' cadaveri de' sacerdoti, che praticano gli Armeni. - XLII. Funerali cirimonie con persone non sacre, che sono in uso presso gli Armeni. - XLIII. Cirimonie funerali degli Armeni con persone sacre. - XLIV. Delle sacre Ordinazioni degli Armeni. Si espone il rito, con cui si conferisce la tonsura, e gli ordini minori. - XLV. Ordinazione del Suddiacono, e del Diacono. - XLVI. Rito del Presbiterato. Si parla del cerimoniale preparatorio alla ordinazione de' preti Armeni; e si fanno alcune osservazioni critiche, ed apologetiche. - XLVII. Continua il cirimoniale preparatorio per la ordinazione de' sacerdoti; e riflessioni sulla professione di fede, che si esige in tal occasione. - XLVIII. Atti sostanziali alla ordinazione de' sacerdoti. - XLIX. Due dubbj promossi dal Galano sulla validità della ordinazione de' sacerdoti Armeni, e dal medesimo Galano disciolti. Passo decisivo di Benedetto XIV. - L. Maniera pratica degli Armeni nel provvedere le chiese vacanti di nuovi pastori. Elezione, esame, confermazione de' vescovi. - LI. Consecrazione de' vescovi; e serie degli atti cirimoniali. - LII. Elezione, ed innalzamento de' Catholicòs degli Armeni. - LIII. Si parla de' vartabieti Armeni, e delle loro diverse classi, e della maniera di promuoverli. - LIV. Sentimenti del celebre letterato Ab. Villefroy sul merito delle Lettere Armene. - LV. Intenzioni, e disegni dell'Ab. Villefroy rispetto alla Letteratura Armena. - LVI. Tracce da seguirsi nel compilare insieme una Biblioteca Armena; e serie di parecchi scrittori nazionali. - LVII. Metodo, che dovrebbe seguire un giudizioso Critico nell'esame de' libri Armeni, e degli errori attribuiti alla nazione. - LVIII. Avvertimenti critici in prò degli Armeni circa le Opere di Clemente Galano; e proposizione d'un mezzo di pace. - LIX. Bolla di Gregorio XIII. sommamente gloriosa per gli Armeni: e riflessioni su essa. - LX. Digressione sul merito d'un libro intitolato: Principj Teologici ec. stampato ultimamente in Siena contro gli Armeni, ed i loro ortodossi difensori. - LXI. Continuazione della Bolla di Gregorio XIII. e delle osservazioni sulla medesima. - LXII. Volgarizzamento della Bolla di Gregorio XIII. e fine di tutta l'Opera.

Գրուածներ Սեղբոսեանի մասին. Շրուշմըփ — Զարբ. «Հայ լեզուի ուսումն.» էջ 362։ — Ալիշան, «Հայ-Վենետ», 495–6, 502, 505, 510։

ՅՈՎՀԱՆՆԻՍ ՍԵՂԲՈՍԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ. — «Թուղթ ազգային ճանապարհորդի մը»։ Բազմավէպ 1884, էջ 116։

Յովհաննէս Սուշրենեան. — Տես Ազգասէր 1849, էջ 148։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԱՒՈՒՇԵՑԻ. — «Յովհաննու Վ. Վ.ի Տաւուշեցւոյ Բացատրութիւն աղօթից Ամբակումայ մարգարէի». Ճռաքաղ 1859, էջ 147–151, 195-199, 227-230։ — Տես եւս Կիրակոս Գանձակեցի, «Պատմ. Հայոց», Գլ. ԻԲ. «Վասն գերութեան վարդապետին Վանականայ». — ԻԹ. «Խոստովանութիւն հաւատոյ ուղղափառաց». — Ծ. «Խրատ դաւանութեան Վանական վարդապետին». — ԾԱ. «Վասն վախճանի սուրբ վարդապետին Վանականին»։ Աստից թրգմ.ը *Petermann*, «Confessio Wanacani doctoris», եւն, եւն, եւ *Brosset*, «Deux hist. arm.» I, 195–205, եւն, տես Գործիս մէջ Կիրակոս անուան տակ։

Գրուածներ Վանականի մասին. Զարբ. «Հին Դպր.» էջ 800։ — Չամչեան, «Պատմ. Հայոց», Ա. 19. Գ. 187, 210, 230, 233, 237–239, 240։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ. — Տես ՄԻՐԶԱՅԵԱՆ (Յով. Քահ. Վան.)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ. — «Արկածք Յովհաննու վարդապետի» (Յամի Տեառն 1762). Բազմավէպ 1883, էջ 341–45։

Ազգը կ'ըսէ. «... Յովհաննէս ոմն վարդապետ՝ Նախիջեւան աթոռոյն Էջմիածնի, ծանօթս տայ զանցից ուղեւորութեան իւրոյ ի Հնդիկս և զնուաբեկութենէն՝ առ Յակոբ Ե կաթողիկոս (1759–1763)։ Գտաք զսա ի նօտրգիր օրինակի՝ լի վրիպանօք, զորս զոն ուրեք ուղղեմք ըստ բանիցն և իմացուածոց. այլ զուղղագոյն գիրսն իցէ գտանել անշուշտ ի դիւանս Էջմիածնի. որպէս և այլ բազումս ամին, որոց հրատարակութիւն՝ ոչ սակաւ արդեօք օգուտ ունիցի բերել ազգային պատմութեան»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԱՂԱՍԱՑ. — «Տաղ թաւթանի» տպ. Կ. Կոստանեան, «Ժողովածու», Ա, 65–67, եւն։ – Հմմտ. Յովհ. Եպ. Տաղ «վասն թռչնոց», Մասիս 1879, Նոյ. 28–29. Դեկտ. 2, 19. Կ. Կոստ. «Ժողովածու» Ա. 43–45։ – ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԱՐԲԵՐՈՒՆԻ ՎՐԴՊՏ. – «Տաղ դաւանութեան», Ճռաքաղ 1860-61, Դ. 221–27։ – ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ. – «Տաղ վասն սուրբ Էջմիածնայ նուիրակներուն գլխաւորման». Արարատ 1869, էջ 223-25. – «Տաղ Յովհաննու վասն սիրոյ». – «Տաղ մեռելի սաացեալ». – «Տաղ սիրոյ». Անահիտ 1903, էջ 152։

Յովհաննէս Քռնեցի. — Տես Ալիշան, «Սիսական», 374, 5, 384, 6, 7, 479։ – Զարբ. «Նոր Դպր.» էջ 164, եւն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՐԲԵԼԵԱՆ. — «Նամակ Յովհաննու Օրպէլի և այլոց եպիսկոպոսաց և Վարդապետաց Սիւնեաց ի Պատասխանի թղթոյ Կոստանդնի Բ. կաթողիկոսի Հայոց». Ճռաքաղ 1860, էջ 39–43, տես և կարգս Մ. Մ.ի ծանօթութիւնները։ – «Թուղթ Յովհաննու Օրպէլի Արքեպիսկոպոսի Սիւնեաց առ Զաքարիա Ծործորեցի՝ Արքեպիսկոպոս Արտազու և Աւաչնորդ Ուխտին Թադէոսի Առաքելոյ». անդ, էջ 55–57։

Օրբելեանի մասին գրուածներ. Ալիշան, «Սիսական», 96, 181, 185, 194, 198։ – «Սիսուան», 224։ – Չամչեան, «Պատմ. Հայոց», Գ. 292, 304–308։

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ (Աբգար). — *Հայք և Հայաստանը օտարների աչքում։ Հրապարակական դասախօսութիւն, ընթերցուած Թիֆլիսի ժողովարանում մայիսի 17-ին 1879 թ.։ Թիֆլիս, Յ. Մարտիրոսեանցի տպարան*, 1881. 8°, 96 էջ։

— *Ազգի կատաղի թշնամին։ Թիֆլիս, տպ. Վարդանեանի*, 1889 ?

«Դա Աբգ. Յովհաննիսեանի այն յօդուածների ժողովածուն է, որոնք կրում են «Ազգի կատաղի թշնամի» վերնագիրը, և որոնք ուղղված են ամբողջ Հայոց վաճառական դասակարգի դէմ։ Բրօշիւրի սկզբում մի փոքրիկ առաջաբան կայ, որը գրված է Թիֆլիսի «փոխադարձ կրէտիտի ընկերութեան» առաջիկայ ընտրութիւնների առիթով». Մշակ 1889, թ. 27։

Խմբագ. — Տես փորձ. — Արձագանք։

Թարգմ. — Տես ԲԵՐՍԻԷ. — ԷՆՆԷՍ (Ա.)։

Իր ձեռագրաց ցուցակը տես ՑԻՆՔ։

Իր Armenische Bibliothek-ի մասին կը գրէ Շրուռմփ. «Մեր գրուածքին ամբողջութեան համար՝ կարեւոր կը համարինք տեղեկութիւն մը ընծայել ընթերցողաց Հայ մատենադարանին (Armenische Bibliothek), զոր Յովհաննիսեան Աբգարու անուշութեամբ՝ Սաքսոնիոյ արքունեաց տպագրական, Վիլհէլմ Ֆրիտրիխ, կը հրատարակէ ի Լայպցիկ։ Մատենադարանս ձեւացած է հայ աշխարհիկ լեզուով գրուած և չատ յաջողակ կերպով ի գերման թարգմանեալ այլ և այլ երկասիրութիւններէ։ Ինչուան հիմայ լոյս ընծայած են հետեւեալ հատորները. Ա. Երեք վէպք Րաֆայէլի Պատկանեան, թարգմանուած յԱրթուրայ Լայսթ. Դրացին. – Քանդած օճախ. – Նշանած։ – Բ. Մատենագրական նախագիծք (esquisses) Ա. Լայսթի։ – Գ. Պարսկաստանի եւ Թուրքահայերի կեանքից պատմուածներ. երկասիրութիւն Րաֆֆիի, և թարգմանութիւն Լեւոնի Ռուբէնյի (կեղծանուն Աբգար Յովհաննիսեանի՝ իր երկու որդւոց անուամբ)։ – Դ. Վէպք եւ Զրոյցք, երեսուներեօթն էջ նախադրութեամբ, ի Գրիգորէ Խալաթեանց ուսուցչէ Լազարեան ուսումնարանի, հանդերձ յաւելուածով ժողովրդական առածից Հայոց յԱբգարէ Յովհաննիսեան։ Այս հատորին քննադատութիւնն ըրաւ Հ. Կախտող ի Մեյուշսին օրագրի։ – Ե. և Զ. Պերճ Պռօշեանցի Սաքոյ վիպասանութիւնն. թարգմանութեամբ Յովհաննու Լալայեան։ – Է. Քանդած օճախ, Գաբրիէլի Սունդուկեանց, կատակերգութիւն յերիս արարուածս, թարգմանութիւն Լեւոնի Ռուբէնյի։ – Ը. և Թ. Երկամեայ պանդխտութիւն ի Հայաստան ի Տիմոթեայ վարդապետէ, պատրաստուրէ պարբերաքին Երուսաղեմի առ Թէոդորոս թագաւոր Հաբէշից։ — Վախճանեալ Քերովբէ Պատկանեան խոստացեր էր օժանդակել հրատարակութեանս՝ հատոր մը գրելով Հայաստանի պատմական մատենագրութեան վրայ։ Արդէն հրատարակուած հատորոց վրայ քիչ ատենէն պիտի աւելնայ ծաղկաքաղ մը, Քաջբերունեայ Ճանապարհորդական նկատողութիւնք ի Հայաստան, և Շիշմանեանի (Ծերենց) վիպասանականքն)»։

Լայստի «Մատենագրական նախագիծք»ի մասին տես իր անուան տակ։

Մահուան առթիւ Ազգագրական հանդէս 1905, գիրք ԺԲ։ – Անահիտ 1904, թ. 4–5։ – Արմենիա, թ. 41։ – *L'Arménie*, թ. 188։ – Բիւզանդիոն, թ. 2315, 2319։ – Լումայ, թ. 2, 3, 4 (186)։ – Ծաղիկ, թ. 18։ – Հանդէս Ամսօրեայ, թ. 6։ – Մշակ, թ. 77. – Թաղուամը, անդ՝ թ. 80։ – Մուրճ, թ. 4. – այս առթիւ Մշակ, թ. 88։ – Շարժում, թ. 621։ – Տարազ, թ. 14-22,

— (Աբիսողոմ). — *Բառգիրք ռուսերէնից հայերէն։ Հատոր Ա. A-H. Տփխիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի*, 1888. 8°, 591 էջ ?

Քննադ. Արաքս Բ տարի, Ա գիրք, 137–160։ – Արձագանք 1888, թ. 39, 41, 42։ – Մշակ, թ. 100, 102։ – Նոր-Դար, թ. 170, 172։

— *Հատոր Բ. անդ, նոյն տպագր.* 1893. 8°, 667 էջ ?

— (Անդրանիկ). – *Հայ գրականութեան զարգացման համար կարեւոր դիտողութիւն մը։ Կ. Պոլիս, ի տպ.ի Յ. Միւհէնտիսեան*, 1862. 12 էջ։

— *Ռուսերէնից գաղղիերէն-հայերէն գրուցատրութեան ?*

— (Աւետիս Վարդ.) — *Քրիստոսի Չարչարանաց վրայ խորհրդածութիւններ։ Կ. Պոլիս, տպագր. Նշան Կ. Պէրպէրեան*, 1893 ?

— (Գաբրիէլ) = *բուն անուն Քաջբերունիի. տես վերջինս։*

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ (*Զապէլ*). — «*Երդ առ գիշեր*». Ծաղիկ 1895, էջ 17: – «*Կոյրը*» (*գիւղական յիշատակներ*). անդ, էջ 93:

— (*Խաչատուր*) *տես* ՇՈՎՐԵԱՆ (Մ.):

— (Հ.) — *Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան. մասն* Ա. *Առաջին տարի*: *Թիֆլիս*, *տպ*. *Եղբ*. *Թաւարտկիլաձէ*, 1903. 8°, 107 *էջ*:

Քննադ. Մուրճ 1904, թ. 2 (Յակ. Յովհ.):

— (*Մատթէոս վանանդեցի*). — *Տես* ՆՈՒՐԻՋԱՆԵԱՆ (Դ. Վ.):

— (*Միհրան*). — *Սփոփանք ռամկին*: Կ. *Պոլիս*, *տպագր*. *Արեւելք և Մասիս լրագրոյ*, 1888. 8°, 70 *էջ*:

«*Հաւաքածոյ քերթուածոց յորում հեղինակը կը ներկայէ հայ աշխատաւորաց զանազան դասերն և կը խրախուսէ աշխատութիւնը*». Արեւելք 1888, թ. 1384:

Քննադ. Արեւելք 1888, թ. 1389, 1459, 69. – 1889, թ. 1646: – Տես և Երկրագունտ 1888, էջ 404, 468:

— *Իրական կեանքի նուագներ*: Կ. *Պոլիս*, *տպագր*. *Սերվիչէն*, 1892. 8°, 52 *էջ*:

Քննադ. Արաքս 1892 գիրք Ա, էջ 125: – Արեւելք 1892, թ. 2488, 2497, 2522, 2616: – Հայրենիք 1892, թ. 209: – Մասիս 1892, թ. 3965: – Ճերիտէի Շարգ. թ. 2104:

= Բ *տիպ*, *անդ*, *տպ*. *Նշան* Կ. *Պէրպէրեան*, 1893. 8°, 58 *էջ*:

Քննադ. Հայրենիք 1893, թ. 471: – Մասիս 1893, թ. 3991:

— *Քնարիկ*, *ժողովրդական երգեր*: Կ. *Պոլիս*, *տպագր*. Յ. *Ասատուրեան*, 1895. 8°, 16 *էջ*:

Քննադ. Ծաղիկ 1895, թ. 6: – Հայրենիք, թ. 1152: – Հանդ. Ամս. էջ 222:

— *Քննական պատմութիւն ԺԹրդ դարու Հայ Գրականութեան*: *Փարիզ*, *տպագրութիւն* «*Բանասէր*»*ի*, 1901. 8°, 124 *էջ*:

«1701-1901. Յանմոռաց յիշատակ Մխիթար Աբբահօր ձօնէ Միհրան Յովհաննիսեան զայս դուզնաքեայ Քննական պատմութիւն ԺԹրդ դարու Հայ Գրութեան, զոր պատրաստեց մանաւոր յանձնարարութեամբ Բանասէր Հանդէսի խմբագրութեան»:

Բովանդակութիւն. 1. Ընդհանուր տեսութիւն. – 2. Արձակումն մամլոյ. – 3. Գրական զեղծումն. – 4. Լեզուաբանական պայքար. – 5. Լեզու. – 6. Նկարագիր ԺԹ. դարու հայ գրութեան. – 7. Տաղաչափութիւն: – 8. Արձակ. – 9. Հանդէս գրագիտաց ԺԹ. դարու. – 10. Ապագայ գրագիտութիւն:

Քննադ. Բիւզանդիոն 1902, թ. 1596–1600. – Լումայ 1901, Գիրք Բ (Սկայ): – Մուրճ 1901, թ. 10 (Ստ. Մ.): – Տես և Հանդ. Ամս. 1902, թ. 3, էջ 73՝ «Գրական թղթակցութիւնը»:

— *Հնագոյն հայ գրչագիրն*. *Բանասէր*. 1900, *էջ* 117. (*Յաւելուած*, *էջ* 1-16):

Գրուածներ Յովհաննէսեանի մասին. Ծաղիկ 1901, թ. 223: – Ինքնակենսագրութիւնը. «Ծնած եմ Կ. Պոլիս 11 Մայիս 1855ին: – Հայերէնի ուսուցիչս եղաւ մայրս: – 1867ին Մէքթէպը Սուլթանի գրուեցայ: – 1870ին Դպրոցասիրաց Ընկերութեան կողմանէ պանդուխտ գաւառացւոց կիրակնօրեայ դաստիարակութեան կոչուեցայ: – 1875ին վկայագիրս առնելով Կաթողիկեայց Ս. Յակոբայ վարժարանին տեսչութեան կոչուեցայ և հետզհետէ կաթողիկեայց Միջագիւղի և Համազգեաց վարժարանի մէջ դասեր յանձնուեցան ինձ: – 1882ին Դպրոցասէր Տիկնանց վարժարանին մէջ դասախօսելու կանչուեցայ: – 1884ին Պայպլ. Հաուզի բողոքականաց վարժարանին մէջ դասախօսելու կանչուեցայ: – 1885ին միացնելով Նարեկեան վարժարանի տեսչութիւնը պահ մը ինձ յանձնուեցաւ և յետոյ կրօնական նկատումներով պաշտօնանկ եղայ: – 1888ին Սփոփանք ռամկինը հրատարակեցի: – 1891ին Կեդրոնական վարժարան մտայ: – 1892ին Իրական կեանքի նուագներս հրատարակեցի: – 1895ին Քնարիկը հրատարակեցի: – Յրիւ յօդուածներ լրագրաց մէջ: – «Անհարակին հարսանեորները» և «Հին օրինաց աղջիկներ մը՝» վէպերը Ծաղիկ հանդէսին մէջ: – 1901ին «Քննական պատմութիւն 19րդ դարու հայ դպրութեան»: – 1909ին «Գրական համբաւներ և անոնց քննական արժէքը»: Նաեւ մանր մունր դասագրքեր»: Թէոդիկ, «Ամենուն տարեցոյցը», 1910, էջ 251–2:

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ (*Յակոբ*). — Die Ueberführung der sek. sym. Brobmenzoylhydazide in Derivate des Furo(bb')diazols und Thio(bb')-diazols. Heidelberg, 1902 ?

— (Միքայէլ). — Տես Ազգասէր 1847, էջ 134:

— (Միքայէլ). — «Կապիտալիզմի զարգացումը». Մուրճ 1894, թ. 10. – «Խոշոր ինդուստրիայի զարգացումը», 1895, թ. 1, 6, 11. – «Էւոլիւցիայի գաղափարը», 1897, թ. 4, 5, 7–8, 9, 11–12. – 1898, թ. 1, 2–3, 4, 5, 10–11, «Սոցիալական էւոլիւցիան». – 1899, թ. 1, 2–3, 4–5, 6, կրօնը, «Անիմիզմ–Բազմաստուածութիւն. – Միաստուածութիւն», 7–8, 11–12, «Սոցիալական յարաբերութիւնները». – 1900, թ. 2, 3. – «Ազգաբնակչական կրիզիսը Ֆրանսիայում». 1902, թ. 6. – «Փիլիսոփայական մաքի ընդհանուր էւոլիւցիայի ուրուագիծը». 1904, թ. 9. – «Փիլիսոփայ սոցիոլոգ». 1905, թ. 1, 5, 8, 11–12:

— (*Յովհաննէս*). — *Բանաստեղծութիւններ*: *Մոսկուա*, *ձուլարան և տպարան* Օ. Օ. *Հերբէկ*, 1887. 8°, 117 *էջ*:

Քննադ. Արեւելք (Լ. Բաշալեան) 1887, թ. 1154: – Երկրագունտ 1887, էջ 472 (Արեւելք-էն): – Մշակ, թ. 64. – Աղբիւր, թ. 10, Բ. բաժին (Դ. Աղայեանց). – Արձագանք, թ. 45: Ասոր դէմ Աղբիւր, թ. 12, Բ. բաժ. (Դ. Աղ.) – Տես անդ և 1888, թ. 1 Բ. բաժին՝ «Հ. Դ. Ալիշանի նամակի պատճէնը Պ. Յ. Յովհաննիսեանին»: Եւ յաջորդ «Նոր բանաստեղծ» յօդուածը, որ քննադատութիւն մըն է նոյն գործին, և թ. 2, Բ. բաժին: – Մուրճ 1889, թ. 7 (Ա. Քալ.):

Արարատի մէջ ունի. «Քանի մը խօսք մեր աշխարհաբառի տաղաչափութեան մասին», 1895, էջ 84:

Թարգմ. — *Տես* ՊՈՒՇԿԻՆ:

Գրուածներ Յովհաննիսեանի մասին. Գեղունի Բ տարի 1903, թ. 1–10: – Նոր-Դար 1902, թ. 15.

— (*Յովհաննէս եպիսկ.*) — *Քրիստոնէին միակ յոյսն և միակ մխիթարութիւնն կամ խորհուրդ ապաշխարութեան և Գանձարան ներողութեանց*: *Աշխատասիրութեամբ Յովհ. Վրդ. Յովհաննէսեան եպիսկոպոսի Տարօնոյ*. 1887. (*տպ. չէ նշանակուած*). *փոքր* 8°, 223 *էջ*:

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ (*Ոսկան Տէր-Գէորգեան, երեւանցի*). — *Տես Նոր քնար Հայաստանի. – Ամբաւ պատմիչ. – Սանփանիա Որբելեան։*

Եւս՝ Մասեաց Աղաւնի 1856, էջ 248։

— (*Ռուբէն*). – Լումայ (1802, թ. 5, էջ 253) կը գրէ. «Аргонавтъ» լրագիրը պ. Խաչատրեանից անցել է պ. Ռուբէն Յովհաննիսեանին, «Արձագանքի» խմբագրի որդուն և նոյեմբերից պիտի հրատարակուի իբրև շաբաթաթերթ «Кавказская жизнь» վերնագրով։ Պ. Ռուբէն Յովհաննիսեան վերջին 3–4 տարի աշխատակցելով տեղական ռուս մամուլին, ցոյց տուեց բարեխիղճ հրապարակախօսի և շիտակ մտածողի ընդունակութիւն–արժանաւորութիւններ, որ ճրագով պիտի փնտռել հայերի մէջ։ Պէտք է յուսալ, որ իբրև անկախ տէր մի օրգանի պ. Յովհաննիսեանը, հաւատարիմ կենայ իւր դաւանանքին և ընդհակառակը կաշխատի աւելի եռանդով ծառայել անկաշառ հրապարակախօսութեան սուրբ դրօշին»։

Տես և Թատրոն 1901, թ. 2։

— (*Սրբուհի*). — «Օսմանցի կիներու կրօնական սովորութիւնները և Նախապաշարումները». Բիւրակն 1899, էջ 347։

— (*Տէր Սեղբեստրոս քահանայ, Նոր Ջուղայեցի*). — *Հաւաքումն քրիստոնէական պարտուց սրբոց խորհրդոց, և պատուիրանաց եկեղեցւոյ։ Աշխատասիրութեամբ Տէր Սեղբեստրոս քահանայի Յովհաննիսեան Նոր Ջուղայեցւոյ։ Ի տպարանի Ամենափրկչեան սրբոյ վանաց ի Նոր Ջուղա*, 1880։ *Հրամանաւ Տէր Գրիգորիս սրբազան արքեպիսկոպոսի և առաջնորդի սրբոյ Ամենափրկչեան վանաց*. 29 էջ։

— *Ապացոյցք քրիստոնէական հաւատոյ։ Նոր Ջուղա, տպ. Ամենափրկչեան վանուց*, 1886?

— (*Տիգրան*) *թարգմ.* — *Տես* ԲՐԱՆԴԷՍ (Գ.) — ԴՕԴԷ (Ա.) — ՏՈԼՍՏՈՅ (Լ.)։

Մուրճի մէջ ունի. «Նամակներ Ռուսաստանից», 1890, թ. 11. 12. – 1891, թ. 1. – «Գէորգ Բրանդէս». (Նրա գրականական գործունէութեան քսանհինգամեակի առիթով). 1892, թ. 4. – «Գրականութիւնը Ռուսահայերի մէջ 1900 թուին». 1901, թ. 1, 5։

ՅՈՎՀԱՆՆԻՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ. – «Յ. Վ.ի համառօտ պատմութիւն անցից անցելոց ի վերին կողմանս Հայաստանի յառ կարգի ժամանակագրութեան». Ճռաքաղ 1859, էջ 69–76, 105–113։

«Գլխաւոր դիպուած պատմութեանն է Օսմանեանց, Լալա փաշայի առաջնորդութեամբ, և Պարսից Խուտապէնտ չահի պատերազմներն ի Հայս, ի Վիրս և յԱղուանս, սովք և սրածութիւնք. Օսմանեանց անունն Գավրէժ (զոր և Ազարանեցին յիշէ), և վրայ Սիմոն խանի կամ թագաւորի բռնութիւն և յուղարկումն ի Կ. Պօլիս»։ Ալիշան, «Հայապատ.» էջ 327։

ՅՈՎՀԱՆՆԻՍՈՎ (*Յովսէփ = Աւագ Սարկաւագ Յովհաննիսեան*) *թարգմ.* – *Տես* ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ։

Պատմութիւնն ու Աշխարհագրութիւնը ռուսերէն է թարգմանած, և նուիրած Աղեքսանդր Ա. կայսեր Ռուսիոյ. երկու մաս է գրուածքը. առաջինն Ժ + 356 + ԺԶ էջ, երկրորդը՝ Զ + 242 + Ը էջ։

ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆ (Ռ.) *թարգմ.* — *Տես* ԲՕԿԼ (Գ. Տ.) — ԼԵԲԵԴԻՆՍԿԻՅ (Պ. Տ.)։

ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆՑ (*Կարապետ*). — *Ճանապարհորդական նկատողութիւններ Աղեքսանդրապօլից մինչեւ ի Մրեն, լուսանկար պատկերօք (Բազմավէպէն հանուած)։ Վենետիկ, ի տպ. ի սրբոյն Ղազարու*, 1885. 8°, 25 էջ։

— *Անիս, թատերգութիւն չորս արարուածով։ Վենետիկ, նոյն*, 1888. 8°, 64 էջ։

Քննադ. Նոր-Դար 1888, թ. 207։

— *Տեսարանք Բագրատունեաց կիսակործան մայրաքաղաքին Անւոյ. նկար Կ. Յովհանջանեանց*, 1889?

«Այսպիսի վերնագրով հրատարակուեցաւ նորերումս մի գեղեցիկ վիմատիպ՝ երկու գոյնով տըպուած՝ պատկեր, որ ներկայացնում է մեր առաջեւ Անւոյ աւերակները». Փարոս Հայաստանի 1880, Բ, էջ 87։

Ունի հետեւեալ քերթուածները. «Տարօնցի հայի արտասուքը». Փարոս Հայաստանի 1880, Բ, էջ 59. – «Տարօնցի կնոջ օր-օրը», էջ 74. – «Շիրակի մի քանի հնութիւնները. – Խնծկօնից մենաստանները. Ս. Սարգիս. – Քանդակագործ խաչարձանը. – Սուրբ Աստուածածին. – Փոքրիկ նըկուղը». Փարոս Հայաստանի 1881, Գ. էջ 7. – «Ս. Կարապետի վանքը և զանգակատան մնացորդը. – Ս. Ստեփաննոս Նախավկայն. – Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին. – Խնծկօնից ուխտի ներկայ դրութիւնը». Գ. էջ 3. – «Արգակու վանքը. – Նշխարատան մնացորդը. – Տեկոռու սուրբ Երրորդութեան վանքը». – «Դամուր–Ղալայ». Ե. 3. – «Ակէմու վանքը». – «Բագնայրի Ուխտը». Զ. 4։

Նոյն Փարոսը կ'իմացնէ թէ «վիմագրութեամբ լոյս տեսաւ Կ. Յ.ի աշխատասիրած երկրորդ նկարը, որ պարունակում է Խնծկօնից մենաստանների հետ Շիրակի մի քանի նշանաւոր Հնութեանց տեսարանները, որոնք հրատարակուած չեն ո՛չ լուսանըկարով և ո՛չ եւս տպագրութեամբ»։

ՅՈՎՆԱԹԱՆ. *թարգմ.* — *Տես Աւատաճեան փերեզակը։*

ՅՈՎՆԱԹԱՆ ՆԱՂԱՇ. — *Տես Գործիս Յաւելուածը։*

ՅՈՎՆԱՆ (*կամ Յօհան*) = *Թոխաթեցի, եպիսկոպոս Սեբաստիոյ, թարգմ.* — *Պատմագիրք, Հոգւոյ հաւատացեալ Նննջեցելոց։ Եւ Հրաշալեացն սրբազնութեան։ Արտահանեցեալ ի հոգեւոր գրեանց, և յեկեղեցական պատմութեանց ի տալիականաց, և ժողովալէս ի Հայկական բարբառն շարադրեցեալ, աշխատութեամբ Տեառն Յօհաննու Եպիսկոպոսին Թօխաթեցւոյ։ Տպագրեցեալ, և ի լոյս ածեցեալ հոգաբարձութեամբ և սրբագրութեամբ նոյնոյ Եպիսկոպոսին, ի փառս Աստուծոյ, ի շահ կենդանեաց, և ի օգուտ ննջեցելոց։ Ի հայրապետութեան Տեառն Աստուածատրոյ, ամենից հայոց կաթողիկոսի։ Յամի Տեառն* 1724։ *ի Մարտի Ը։ Ի Վէնէտիկ։ Ի Տպարանի Անթօնի Պօրթօլի։ Հրամանաւ Մեծաւորաց. և փոխվիլեճիով Գերազանցագունեղի Ծերակուտի։*

Ճակատին չափակը սուրբ Նիկողայոս հայրապետի փայտափոր պատկերը կայ, և դիմացէն էջ 3՝ մաղթանք առ Ս. Լուսաւորիչն. յէջն 6՝ «Առ ջերմեռանդ ընթերցօղս բանք և աղերսմունք շարժողականք» ցէջն 18. 19 էջէն կը սկսի այլեայլ պատմութիւններ հոգւոց ցէջն 396, որմէ վերջ Հաղորդութեան գործած հրաշքներու պատմութիւններ

ցէջն 563։ Ապա ցանկ գլխոց ցէջն 576, որ է վերջ գրքին։

Գիրքս 18°, գլխէն մինչեւ վերջ միօրինակ մանրագիր Պոլոնեան տպարանի, առանց նօտրի. համառակ տպագրութիւն։

— Վարք երանելւոյն սրբոյ Յովհաննիսին Աստուծոյ. Հօրն աղքատաց. եւ հիմնողին սրբազանի կարգին հիւրանոցաց եւ հիւանդանոցաց. բարի եղբարք կոչեցելոց։ Գրեցեալ յումեմնէ կրօնաւորէ Յիսուսեան կարգէ, կարգաւ վայելչագունիւ եւ պարզ շարադրութեամբ։ Արտահանեցեալ ի լեզուէ իտալիականէ, եւ ի հայկական բարբառն շարադրեցեալ աշխատութեամբ Յովնանու Եպիսկոպոսին Սեբաստիոյ։ Յամի Տեառն 1724. ի փառս Աստուծոյ. ի պատիւ մօր Տեառն, եւ Յօհաննիսին աստուծոյ։ Ի Վէնէտիկ։ Ի Տպարանի Անթօնի Պօռթօլի։ Հրամանաւ Մեծաւորաց. եւ փոխվիլեճիով Գերազանցագունեղի Ծերակուտի։

Յէջն 3 Յառաջաբան՝ ի թարգմանչէն ցէջն 8. 9 էջէն կը սկսի պատմութիւնը եւ կ'աւարտի յէջն 178. ապա յէջն 179 նոր գլխով կը սկսի. «Եղանակ մխիթարելոյ զհիւանդս եւ օգնելոյ. զի բարեպէս մեռանիցին», եւ կ'աւարտի յէջն 298. 299–312 Եօթն Սաղմոսք Ապաշխարութեան. 313–320 Ցանկ գլխոց, երկու էջ ալ վրիպակաց։

Գիրքս 18°, նման վերինին՝ ըստ ամենայնի։

— Նորագոյն ուղղեկցուրիւն. իտալ. եւ հայ. ճակատներով.

Nuova Guida Angelica perpetua Romana Per visitare le Chiese dentro, e fuori di Roma ove si celebrano le Feste, e Stazioni. Con le notizie delle Reliquie, che in esse vi sono. Aggiuntavi la visita delle quattro Basiliche per conseguire il Giubileo dell'Anno Santo. Tradotta Dall'idioma Italiano in Armeno da Monsignor Giona D'Elia vescovo di Sebaste; mediante la fatica, e l'ajuto di D. Giovanni suo fratello. In Roma 1725. Nella Stamparia della Sagra Congregazione de Propaganda Fide. Con licenza de' Superiori. - Նորագոյն ուղղեկցութիւն Հրեշտակային հռոմէական եւ մշտատեւ, սակս այցատնելոյ զեկեղեցիս ի ներքս եւ ի արտաքս հռոմայ, ուր հռչակին ուխտք, եւ տօնախմբութիւնք։ Հանդերձ տեղեկութեամբ մասանց սրբոց, որք ի նոսա գոն։ Այլ եւ զաղաղակն ցաւագնական հոգեաց քառարանին. եւ զտեարակն որբեւանի տարւոյն սրբոյ եւ թողութեան, գտեալ եղեւ հոգաբարձութեամբ, եւ եդաւ ի վերջն գրգոյս, սակս օգտի մեծագունի, կենդանեաց եւ մեռելոց։ Եւ ի լեզուէ ի տալիականէ ածանցեցեալ, եւ շարադրեցեալ ի հայկական բարբառն, աշխատութեամբ թօխաթեցւոյ տեառն Յօնանու վարդապետին, եւ եպիսկոպոսին։ Ի փառս աստուծոյ, ի պատիւ սրբուհւոյ աստուածածնին, եւ համայնից սրբոց. առիթ ջերմեռանդութեան, ուխտաւորացն մերազնեաց, եւ փրկութեանն յաւիտենականի։

Այս ճակատներէն վերջ լատ. վկայագիր եւ հրամանագիր տպագրութեան, եւ ապա 1 էջէն կը սկսի եւ կը հասնի յէջն 245. 246–48՝ որ է վերջին ցանկ վրիպակաց։

Գիրքս միջակ 8°, անհարթ միջակագիր սկիզբէն վերջը՝ միօրինակ, առանց նօտրի. անհարթ տպագրութիւն։

— Յոբելեան Սուրբ տարի թողութեան հռչակեցեալ, ի Հայրապետէն սրբազանէ Բենէտիկտոսէ երեքտասան երորդէ. եւ ի խնդրոյ բարեպէր ուխտաւորացն, ի լեզուն հայոց եղեւ շարադրեցեալ աշխատութեամբ Յօնանու եպիսկոպոսին. եւ ապա ծախիւք եւ սրբագրութեամբ եղբօր նորին Օհաննու Քահանային, տպագրեցեալ ի լոյս ածեցաւ։ – Il Giubileo dell'Anno Santo publicato dal Sommo Pontefice Benedetto XIII. per la petizione dei Cattolici Armeni peregrini interpretato dall'idioma Latino in Armeno da Monsignor Giona Vescovo di Sebaste, mediante la fatica, e l'ajuto di Don Giovanni suo fratello. Յամի տեառն ՌՃԿԴ. ի Հռոմ։ Հրամանաւ մեծաւորաց։ In Roma 1725. Nella Stamparia della Sagra Congregazione de Propaganda Fide. Con licenza de' Superiori.

Այս ճակատէն վերջ լատիներէն վկայագիր եւ հրամանագիր տպագրութեան. ապա յէջն 1 կը սկսի եւ կ'աւարտի յէջն 20 (միայն հայերէն)։

Գիրքս մեծ 12°, լայն երես, անհարթ միջակագիր. ունի հինգ քառակուսի փայտափոր փոքր պատկերներ. անհարթ տպագրութիւն։

— Գաւշտիկ ծաղկաղի. Որոյ սկիզբն է. նախազգուշացումն խոստովանահարց։ Եւ կոչնակին զարթուցողական։ Եւ ապա են վարք եւ օրինակք գերազանցականք։ Հաւաքեցեալք իբր զծաղիկս ամենազեղեցիկս՝ յեկեղեցական պատմութեանցն իտալիականաց. եւ ի մի վայր շարադրեցեալք բառիւն հայկականաւ։ Աշխատութեամբ Տեառն Յօնանու Վարդապետին Թօխաթեցւոյ, եւ Եպիսկոպոսին. ի զբօսանս եւ ի զուարճութիւնս հոգեկանս. եղբարց մերոց հայկազունեացն։ Յաղիթ կեցութեան. եւ պատճառ ջերմեռանդութեան ընթերցողաց նոցին, եւ լսողացն ի փառս աստուծոյ, եւ ի պատիւ Ամէնօրհնեալ կուսին։ Ի հայրապետութեան Տեառն Կարապետի ամենից հայոց կաթուղիկոսի։ Յամի Տեառն 1727. Յուլի 24։ Ի Վէնէտիկ։ Ի Տպարանի Անթօնի Պօռթօլի։ Հրամանաւ Մեծաւորաց, եւ փոխվիլէճիով Գերազանցագունեղի Ծերակուտի։

Գիրքս 12°, 429 էջ ցանկով միասին. անհարթ մանրագիր։ Հասարակ տպագրութիւն։

ՅՈՎՆԱՆԵԱՆ (Հ. Ղեւոնդ). – Նոր քերականութիւն գաղղիարէն լեզուի, զոր յօրինեալ է Հ. Ղեւոնդեայ Վ. Յովնանեանց, յաշակերտաց մեծի հօրն Մխիթարայ։ Վիէննա, ի վանս Պաշտպան Ս. Աստուածածնի, 1844։

Ա. հատոր Քերականութիւն. Բ. Կրթութիւն գաղղիերէն լեզուի. Գ. Կրթութեանց սրբագրուածը։

= Բ տիպ, 1855. 12°, 284 + 367 + 76 էջ։

= Գ տիպ, 1875. 8°, 300 + 401 + 79 էջ։

— Գիտութիւն տէրութեանց Եւրոպայ, այսինքն է նկարագիր արդի համգամանաց եւրոպական տէրութեանց։ Տոմար Ա. Երկիր եւ մարդիկ, եւ հասարակաց պէտք։ Ի Վիէննա, եւն., 1847. 12°, 424 էջ։

— Մարտինոս Լուտերին վարուց եւ նորո-

գուրեան պատմութիւնը։ Վիեննա, եւն., 1850. 8°, 32 + 418 էջ։

Տես Արշալոյս Արարատեան 1853, թ. 434՝ Յաւելուած։ – Աւսր դէմ Եւրոպա 1853, Մայիս 4–16։ Դէմ՝ Արշալոյս, թ. 444՝ Յաւելուած։

— Դաստիարակ մանկանց կամ Բարոյական խորհրդածութիւնք տղոց համար։ Վիեննա, եւն., 1851. 6°, 103 էջ։

— Մեծն Ներսէս և Հայաստանի վրայ ունեցած ազդեցութիւնը։ Անդ, 1851. 6°, 83 էջ։

— Միրզայեան Մանուկ Պէյին փառուց պատմութիւնը (Մանուկ Պէյին կենդանագրովը)։ Անդ, 1852. 6°, 94 էջ։

— Պատմութիւն քաղաքականութեան Եւրոպական տէրութեանց ընդհանրապէս. Հատոր Ա. Նախաշաւիղ և առաջին շրջան, 1856. 12°, 358 էջ։ – Բ. Երկրորդ շրջան, 1856, 334 էջ։ – Գ. Երրորդ շրջան, 1857. 360 էջ։ – Դ. Երրորդ շրջան, երկրորդ մաս, 1860. 445 էջ։

— Ծաղիկ սուրբ գրոց. ընթերցուածք քաղեալ յԱստուածաշունչ գրոց, ի պէտս դպրոցաց։ Անդ, 1863. փոքր 6°, 418 էջ։

= Բ տիպ, 1874. 8°, 255 էջ։

= Գ. տիպ, 1889. 8°, 266 էջ։

— Գործնական հրահանգք գաղղիերէն լեզուի։ Վիեննա, Մխիթարեան տպարան, 1867. 8°, 232 էջ։

= Բ տիպ, 1871. (ուր անուն չէ դրուած, այլ ***). էջք՝ նոյն.

= Գ. տիպ, 1903. 8°, 247 էջ։

Սոյն տպագրութեան Ազդը կ'ըսէ թէ «կարեւոր համարեցանք քերականական ձեւերու անփոփոխ մ'աւելցնել»։

— Աղօթագիրք պաշտօնատիրաց սրբոյն Յովսեփայ Աստուածահօր։ Անդ, 1883. 18°, 528 էջ։

— Ուսումն փիլիսոփայութեան կրօնի, ի պէտս բարձրագոյն դպրոցաց և ուսումնականաց. ազատ թարգմանեալ ի գերմանականէն ի ձեռն Հ. Ղեւոնդեայ Վ. Յովնանեան ի Մխիթ. ուխտէն։ Ի Վիեննա, ի տպ. ի Մխիթարեանց, 1885. 8°, 344 էջ։

Ի Յառաջաբանին... «Ձեռն արկինք հրատարակութեան գրոցս, զոր իբր Յաւելուած իւր երկհատոր լիակատար Փիլիսոփայութեան՝ հրատարակեց յամի 1872 Ամբ. Ստէօքլ Վարդապետ և Ուսուցիչ Փիլիսոփայութեան, և որոյ բազմօք ուղղագրեալ և ընդարձակեալ Բ. տպագրութիւն ի լոյս ել յամի 1879։ Իսկ ի ճակատն գրեալ ազատ թարգմանեալ խօսքէն կ'իմացուի որ զակզբնագիրն ի տեղիս տեղիս փոխած ենք, է ուրեք զի համառօտելով, և է ուրեք զի յաւելլով»։

— Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ. ուսումնասիրութիւնք և քաղուածքներ. գրեց Հ. Ղեւոնդ Վ. Յովնանեան Մխիթ. Ուխտէ. Մասն Առաջին Ռամկօրէն Մատենագրութիւն Տեառն Ա. Ն. Շնորհալի. Մ. Հերացի, Պոնտոս Անատոլիոս, Հայ Բժշկականութիւն և հին Բժշկարանք, Սմբատ Սպարապետ, Ռամկագիր Եկեղեցականք և Դիւանականք. (Ազգ. Մատենադ. ԻԳ.)։ Վիեննա, եւն, 1897. 8°, Ը + 272 էջ։

Բովանդակութիւն. Յառաջաբան. – Նախաշաւիղ. – 1. Ներածութիւն. – 2. Հետք ռամկօրէնի յԵ դարու. – 3. Հետք գաւառաբարբառաց. – 4. Ռամկօրէն և ռամկախառն գրութիւնք՝ քաղուածքներով. – 5. Գրաբարախառն գրութիւնք, ազդեցութիւն հնոյն՝ օրինակներով. – 6. «Գեղջուկ բան» եւն. – 7. Պատճառք ծագման ռամկ. մատենագրութեան. – 8. Յիշատակներ հին ռամկ. մատենագրաց, Շապուհ Բագրատունի։

Ռամկօրէն Մատենագրութեան (Տեառ Ա.) Ընդհանուր Տեսութիւն. 9. Պատրաստութիւն. – 10. Սկիզբը ԺԲ դարէն համարելու են. – 11. Ա. Ներսէս Կրդ. Շնորհալի, Առակք կամ Հանելուկք իւր, 33 կտորով. – 12. Բ. Մխիթար. Հերացի. «Ջերմանց մխիթարութիւն» – տեղեկութիւնք և կենսագրականք. – Ա–Ժ. քաղուածքներ. – ունի՞ ուրիշ գործք, եւն. – 13. Գ. Պոնտոս Անատոլիոս, «Գիրք վաստակոց կամ Երկրագործականք». – Ա–ԺԵ քաղուածքներ. – համեմատութիւնք երկու կերպ ձեռագրաց. – մեկնութիւն առոր եւն. – 14. Դ. Հայ Բժշկականութեան ընդհանրապէս. – համառօտ տեսութիւն արաբական բժշկականութեան, Մասերջուա, Մասուայի որդի, Հոնէյին, Սաբիթ, Սահակ, Իպնի Զաքարիյա, Իպնի Սինայ, Յեսուէ եւն. – հայ բժիշկներ. եւն. – 15. Հնագոյն Բժշկարանք. «Համառօտ տեսութիւն հայ բժշկարանաց վրայ ընդհանրապէս» ձեռագիրք՝ Ս. Ղազարու 1294 թուին, մեր մնացը. 101, Ա և Թ. 11, Ա. – տեղեկութիւնք իւրաքանչիւրի մասին. – Ա–ԺԴ հատուածք հին բժշկարաններէն, եւն. – 16. Ե. Սմբատ Սպարապետ. Ա. Տարեգիրք իւր, տեղեկութիւնք և Ա–ԺՁ հատուածք, շարագրութեան կերպը կամ «թարգմանել», բնագրի որպիսութիւնն եւն. – Բ. Օրինաց մատեանք. 1. Անտիգք Անտիոքայ և Ա–Ժ հատուածք. – 2. Դատաստանագիրք Մխ. Գոշի ռամկօրէն թրգմ., իմբագրութիւն համառօտ, Ա–ԻԳ հատուածք կամ կանոնք, տարբերութիւնք ձեռագրաց եւն. – 17. Զ. Հին Ռամկագիր Եկեղեցականք. Ա. Վարդան Վ. Արեւելցի կամ Մեծն և Ա–Դ հատուածք եւն. – Բ. Մաղաքիա Աբեղայ, «Պատմ. ազգին Նետողաց» և Ա–Զ հատուածք. – Գ. Գրիգոր Ը. Անաւարզեցի, Թուղթ առ Հեթում Բ. Անդրադարձութիւնք եւն. – 18. Է. Դիւանական–Ատենական Գրութիւնք. Դաշնագիր Կոստանդնի և Լեւոնի Գ. – Արտօնագիրք Հեթմոյ և Լեւոնի Ե. – Հատուած Հեթմոյ Կոռիկոսի տեառն. – Լեզուն և օտարաբանութիւնքն դիւանագրաց, եւն։

Քննադ. Արարատ 1897, թ. 2։ – Արձագանք, թ. 15։ – Մուրճ, թ. 6 (Գրիգ. Վանցեան)։

— Տեառ Բ. Առակք, Ամիրտովլաթ Ամասիացի, Ախրապատին, Ասար Սեբաստացի և Նորագոյն բժշկական գրութիւնք։ Վիեննա, եւն, 1897. 8°, Ը + 273–522։

Ազդը կ'ըսէ. «Հետազօտութեանցս Առաջին Մասին առաջին Տետրը քիչ ժամանակ յառաջ հրատարակուեցաւ՝ մեծարգոյ Հեղինակին մահուանէն քանի մ'օր առաջ, (տպ. Վիեննա, 1897, էջք 1–272)։ Երկրորդ Տետրս շարունակութիւն է «Ռամկօրէն Մատենագրութեան» կամ Առաջին Մասին Հետազօտութեանց. երկու Տետրները միասին մէկ ամբողջ կը կազմեն, որով նաեւ երկուքին էջաթիւք շարունակեալ են։ Տետրս կը սկսի բուն այսմ 273 էջով։ Մինչեւ էջ 480 տպագրութիւնն եղած էր Հեղինակին կենդանութեան ատեն և անոր խնամով։ Մնացեալը տպագրուեցաւ այնպէս՝ ինչպէս գտնուեցաւ պատրաստուած Հեղինակին թղթոց մէջ։

Անշուշտ կիսատ և թերակատար է այս վերջին կարգը, մանաւանդ «Նորագոյն Բժշկական Գրութիւնք» հատածին «Այլեւայլք» բաժինը։ Զուգեցինք որեւէ յաւելուած ընել գործքին վրայ՝ այս

թերին լրացնելու համար. վասն զի պակասն աննշան է։ Հեղինակն այնչափ երկար խօսած է ամէն կարգի Բժշկարանոց վրայ, որ քանի մը քաղուածոյ և կարեւորութենէ զուրկ մանր գրութեանց մասին ըսելը մեզ չի բերեր գործքին կատարելութեան։ Աւելցնենք որ նաեւ Բունիաթայ, Ապուսայիդայ և Նորադունից լեզուի մասին Հատածք՝ թէեւ Հեղինակին թղթոց մէջ մ՛յնչափ և մ՛յնպէս կը գտնուէին, ինչպէս տպագրուած են հոս, վերջնական խմբագրութեամբ չեն տակաւին, ուստի համեմատելով Հետազօտութեանց միւս մասերուն՝ նոյնպէս թերակատար։ Հեղինակին սովորութիւնն էր ամէն մէկ Հատած չորս հինգ անգամ գրել ու փոփոխել, մինչեւ որ վերջնական կերպարանք առնուր և արդիւնքը գոհ ընէր զՀեղինակն, պարագայ մ՛որ յաճախ հազիւ չորուածքը քանի մ՛անգամ սրբագրելէն և կրկին փոխելէն ետքը կը հանդիպէր։ Այս ի գիտութիւն Հետազօտութեանց գործածողներուն, և միանգամայն ցուցնելու՝ թէ ո՛րչափ խղճամիտ խնամով աշխատած է Հեղինակն իւր գործքն՝ որոշեալ ծրագրին ու սահմանին մէջ՝ բառ կարգի կատարեալ ընելու։

Երկու Տետրները կը բովանդակեն գրեթէ ամբողջ «Ոսմկօրէն Մատենագրութիւնը»։ Գրեթէ կ՚ըսենք. վասն զի՝ ինչպէս Բանասիրաց անծանօթ չի կրնար մնալ, երկու մեծ Հատածք կը պակսին այս Տետրներուս մէջ, այսինքն Տաղաչափականք և Ոշուշմնականք. երկու նիւթեր՝ որոնք ոսմկօրէն գրականութեան գլխաւոր ճիւղերէն են, մանաւանդ առաջինը։ Հեղինակը մտադիր էր ի սկզբան առնուլ զայն ալ երկրորդ Տետրիս մէջ։ Բայց Տաղաչափութեանց Հատածին չափազանց ընդարձակութիւն՝ այլազգ տրամադրած էր, զայն առանձին գրքուկով ի լոյս հանելով՝ Հետազօտութեանց իբր Գ. Տետր։ Ոսմկօրէն Տաղաչափութեան Հատածն ալ լիակատար գրած էր, և արդէն տպագրութեան սկսած թէ «Հանդիսի» մէջ խորագրով՝ «Միջինդարեան ազգային Տաղաչափութիւն ոսմկախառն» (տես «Հանդէս», 1895, էջ 305-10. անդ, 1896, էջ 52-55, 115-19) և թէ առանձին գրքուկով, որմէ երկու թերթք տպուած էին և երրորդը տպագրութեան պատրաստ էր՝ մինչեւ Հեղինակին մահը։ Ձեռագիրը լիակատար և պատրաստ ըլլալով՝ այժմ ընդ մամլով այս մասն ալ շուտով լոյս կը տեսնէ։ Պակաս կը մնայ միայն մէկ Հատած՝ Ոշուշմնական գրուածոց մասին, որուն մէջ պիտի հետազօտուէին սա նիւթերն, ինչպէս թղթի մը վրայ նշանակուած կը գտնենք. «1. Ձիագարմանութիւն. 2. Քիմիաբանութիւն. 3. Վասն Ականց պատուականաց. 4. Թուաբանական Առածք. 5. Վասն չափուց և կշռոց. 6. Աստուրլապ. 7. Տոմարագիտականք. 8. Երազահան, Ախտարք, Վեցհազարեակ, ևն. 9. Արուեստ Երաժշտութեան»։ Այս հարեւանցի նախագիծն ինքնին կը ցուցնէ թէ Հետազօտութեանց էական և հետաքրքրական Հատածներէն մին էր պակասը։ Հեղինակին թղթոց մէջ քանի մը մանր մունր տեղեկութիւնք գրուած կան առանց ոմանց վրայ, բայց ո՛չ իբրեւ ամբողջական գրութիւն, նաեւ յիշելոց այս կամ այն բաժնին։ Նկատելով նիւթին առաւել կարեւոր և հետաքրքրական ըլլալը, բաղձալի է որ լրացուի այս թերին և գրուի գոնէ իբրեւ յաւելուած Տաղաչափականաց Տետրին վերջը։

Ընդ մամլով եղող յիշեալ Գ. Տետրով բոլորովին պիտի լրանայ «Ոսմկօրէն Մատենագրութիւնն»։ Սակայն Հեղինակին ծրագիրն աւելի մեծ էր։ Ինչպէս Տետրակներուս ճակատն ու Ներածութիւնը, նոյնպէս ամէն էջի վերը տպուած բաժանմունք կը ցուցնեն որ այս ամէնը «Մասն Ա.» միայն է Հետազօտութեանց։ Ասոնց պիտի յաջորդէր Մասն Բ., թէեւ ո՛չ առաջնոյն չափ ըն-

տուար, գոնէ ամբողջին համար նոյնչափ և աւելի եւս կարեւոր։ Առաջինը՝ Մատենագրութեան պատմութիւն է. երկրորդը՝ պիտի ըլլար լեզուի հետազօտութիւն, կամ Քերականութիւն նախնեաց Ոսմկօրէնի։ Այս բուն կարեւոր մասն է, որուն թերի մնացած ըլլալը ցաւալի է։ Առաջն ան նոյն պատրաստած է արդէն Հեղինակն՝ առաջին մասին մէջ յիշուած բոլոր գրութիւններէն քաղելով։ Նոյն քաղուածքներն դասաւորած ալ է՝ բազմաթիւ տետրներու մէջ բաժնելով նիւթերն ու օրինակներն՝ ըստ քերականական կարգի։ Նաեւ կերպարանս յօրինել ձեռնարկած է. և վերջնականապէս աշխատասիրուած կը գտնենք Բ. Մասին ալ սկիզբէն բաւական բան՝ ընդհանուր տեսութիւն, բառակազմութիւն ոսմկօրէնի և Հոլովմունք։ Հանելով գրեթէ մինչեւ Բայ, կը դադրի աշխատութիւնը. Թողլով մնացեալը շարունակելու և լրացնելու քերականագէտ ձեռքերու։ Եւ կը բաղձայինք որ չպակսէր այսպիսի ձեռք մը՝ անգործ տաղձը գործելու և կերպաւորելու։ Ասով ոչ միայն հանգուցեալ Հեղինակին ձեռնարկութիւնը լիակատար աւարտած կ՚ըլլայ, այլ բուն հայ բանասիրութեան մեծ ծառայութիւն մը մատուցած։ Ոսմկօրէն մատենագրութիւնն ու լեզուն անհրաժեշտ միջին օղակն է գրաբարին ու արդի լեզուին և բացարձակապէս կարեւոր հայ լեզուի պատմութեան համար հնէն ցնոր։ Ոսմկօրէնի լաւ Քերականութիւնն հարկաւոր կամուրջն պիտի ըլլայ Գրաբարի և Արդի լեզուի Քերականութեան։ Յուսանք որ թէ՛ առաջնոյն և թէ՛ մանաւանդ վերջնոյն հիմը ձգող Քերականը կանգնէ նաեւ երկուքն իրարու խառնող Միջինը»։

Բովանդակութիւն Բ. Տետրիս. Ազդ Հրատարակչին. — 19. Ը. Առակք. Ազուեսագրոց և Առակաց հրատարակութիւնք. — «Առակք» այլեւայլ խմատով. — Հին առակք՝ Ողոմպիանու, Գոչի. — Առակաց հեղինակք. — Օրինակք Ա-ԺԳ։ — Վարդանայ առակք. — Օրինակք ԺԵ-ԺԹ. — Խորհրդածութիւնք Վարդանայ առակաց մասին. — 20. Թ. Մեր Առակաց Աղբիւրքը. Գալիլա և Դիմնա, Պիտփայ, Փանչաթանթրա ևն, այլեւայլ հրատարակութիւնք. — Մեր առակներն ալ առնցմէ են. «Գալիլա և Դիմնա» չկայ հայերէն թարգմանուած են. — Ա. Առակ, Ճանապարհորդն և Ոսկերիչ. — Բ. Առակ, Կապիկն ու Կրիայն. — Ագուէս, Էշ և Առիւծ. — Խորհրդածութիւնք. — Կաթիլ մի մեղրի պատճառած վնասն. — Հետեւութիւնք. — Առակ անսանց լեզուն հասկցող մարդուն. — Բանք վասն խաբող ադուեսուն և չարութեան, Ագուէս և Գայլ են. — Պատմութիւն Պղնձէ քաղաքին. — Միջին ու նոր բժշկական գրուածք. — 21. Ժ. Ամիրտովլաթ Ամասիացի. Ընդհանուր տեղեկութիւնք, կենսագրականք են. — Ա. Օգուտ Բժշկութեան. Բովանդակութիւն գրութեան. — Երկու խմբագրութեանց օրինակք. — Համեմատական օրինակ Լիակատար և Համառօտեալ խմբագրութեանց, Օրինակք Ա-Զ. — Խորհրդածութիւնք. — Օրինակ Է. — Ծանօթութիւն. — Բ. Բժշկական Բառգիրք. «Անգիտաց Անպէտ». — «Գործածութիւնք Դեղերու». — Օրինակք Ա-Թ. — Հետեւութիւնք. — «Ագիտականերպ» բառգիրքն. — 22. ԺԱ. Ախրապատին (Դեղագործութիւն). Ներածութիւն. — «Ախրապատին». — Ա. Ախրապատին Յովհաննու Բժշկի, յաւուրս Գագկայ. — Բ. Ախրապատին Ամիրտովլաթայ, կրկին խմբագրութեամբ. — Գ. Ախրապատին Հաւաքածոյ, Համեմատութիւնք են (Օրինակք Ա-Զ). — Մանրամասնութիւնք բնագրի և լեզուի Հաւաքածոյ Ախրապատնին. — Համեմատական Օրինակք Է-ԺԳ են. — Ուրիշ Դեղագործութիւնք. — «Երեքմանեայ» կոչուածն են. — Ա. Խումբ Օրինակաց, հայ Բժիշկներ են. — Գե-

դագիրք Սահփանու Բժշկի. – Սարգիս, Գեղին. – Բ. Խումբ Օրինակաց. – Բուսայիդ բժիշկ. – Յեսսէ բժիշկ Գրիգորոյ եւն. – Լեզու Ախրապատնաց. – Գ. Խումբ, Համեմատական Օրինակք. – Անգրադարձութիւնք. – Երկու իրական ապացոյցք գոյութեան հայերէն հին բժշկական գրուածոց. – Հատակոտորք Յեսսէի 39 գեղագրոց. – 23. ԺԲ. Բժշկարանն Ասարայ Սեբաստացւոյ եւ այլ նորագոյն բժշկական գրուածոց. – Ա. Բժշկարան Ասարայ Սեբաստացւոյ. Տեղեկութիւնք. – Յառաջաբան. – Բովանդակութիւն ու Ցանկ կորուսեալ մասին. – Միւս մասերը. – Համեմատեալ Հատուածք Մխիթարայ և Ասարայ. – Համեմատութիւնք Ասարայ և Երեքմանեէին. – Բ. Նորագոյն Բժշկական գրութիւնք. 1. Բժշկարան Գալստի Ամասիացւոյ. – Բովանդակութիւն. – Յիշատակութիւնք Գալստի. – Ուղեւորութիւնք իր եւն. – Երկու խմբագրութիւնք, Օրինակք եւն. – 2. Այլեւայլք. – «Սապապաթք». – Գաստա Պէն Լուգա. – Մեր մատենադարանի ձեռագիրք նորագոյն բժշկարանաց. – 3. Բժշկարան Բունիաթայ Սեբաստացւոյ. – Պունիաթայ Սեբաստացւոյ խրատք ոտանաւոր. – Թարգմանութիւն Ախրապ–Սաֆայ գրոց եւն. – Հատուածք առ Ամիրտովլաթայ. – Հատուած առ Գալստի. – Գիտութիւն Հրատարակչին. – 4. Ապուսայիդայ Յաղագս Կազմութեան մարդոյ. – Ապուսայիդ յԱսարայ առնելոյ. – Ապուսայիդայ ազգայնութիւնք. – Հաղորդակցութիւն Ն. Շնորհալւոյ և Լամբրոնացւոյ. – Գրութեան լեզուն. – Նախաշաւիղն ըստ ձեռագրաց, չորս բաժնով. – Ո՞վ է թարգմանիչը. Լամբրոնացւոյ «Մարդակազմութեան գիրք». – Լամբրոնացի անգեակ տօրերէնի. թարգմանութիւն Օրինագրոց. – Ապուսայիդայ գործը պէսպէս խմբագրութեամբ կը գտնուի. – «Վասն սահմանման աչաց» գլուխը. – Երեք յաւելուածոյ գլուխք Մխիթարայ բժշկի. – Աչաց ստատաց բացատրութիւնք. – Ցանկ Ապուսայիդայ գրութեան. – Գ. Լեզու Ասարայ և Նորագունից. Ընդհանուր տեսութիւն. – Ընտիր համեմատութիւնք Ասարայ. – Օտարախառն օրինակք Ասարայ. – Թրքերէն գեղագիր. – Հատակոտորք Ասարայ ըստ այժմու բարբառոյն. – Խորհրդածութիւնք Ասարայ և այլոց լեզուին վրայ. – Գալուստ, Օրինակք նման այժմու բարբառոյս. – Օտարախառն հատակոտորք Գալստի և այլոց. – Ընտիր բառք և ասացուածք. – Ցատուկ բառք և ասութիւնք հնոց. – Նորագունից լեզուն միակերպ չէ. – Համեմատութիւն Ասարայ և Գեղագրոց Սահփանուի. – Յեսսէի երկու Գեղագիրք առ Ասարայ և Գալստի համեմատուած. – Բովանդակութիւն։

Մահուան առթիւ՝ Հանդ. Ամս. 1897, Յաւելուած փետր. ամսոյ. ուր Հ. Մէնէվիշեան մանրամասն կը խօսի իր տպեալ և անտիպ գրոց, իր վարած պաշտամանց, եւն, մասին։ Իր «Միջինդարեան ազգ. տաղաչափութիւնք» գործը տես գործիս Յաւելուածին մէջ։

ՅՈՎՆԱՆԵԱՆ (Հ. Պօղոս, եղբայր Հ. Ղեւոնդի). — Վարժութիւն մանկանց ի հրահանգս ընթերցասիրութեան և բարեկրթութեան, աշխատասիրեալ ի Հ. Պ. Վ. Յ. ի Միաբանութենէ ամենապատիւ Մխիթարայ մեծի Աբբայի։ Վիէննա, Պաշտպան Ս. Աստուածածնի վանքը, 1826։

= Բ տիպ, 1851–ՌՅ. 8°, 167 էջ։

= Գ տիպ, 1860–ՌՅԹ. 8°, 192 էջ։

— Համառօտ աշխարհագրութիւն ընդհանուր երկրի ըստ նորոգ կարգաց տէրութեանց։ Վիէննա, եւն, 1835-ՌՄՁԴ. 8°, ԺԲ + 398 էջ, գըն-տական տախտակով մը։

— Աղօթագիրք մանկանց։ Վիէննա, եւն. 1837։

= Բ տիպ, 1849. 8°, 145 էջ։

= Գ տիպ, 1860 ?

= Դ տիպ, 1879. 16°, 135 էջ։

= Ե տիպ, 1890. փոքր 8°, 7 + 135 էջ։

— Հրահանգք ստենոգրաֆիական ի վերայ գիւտաւոր ստենոյաց։ Վիէննա, եւն. 1841–ՌՄՂ. 12°, 204 և չորս տախտակ։

Հմմտ. Արշ. Արարատ. 1841, Թ. 48։

— Պատմութիւն Տիեզերական ժողովոց Եկեղեցւոյ, որք յարեւելս գումարեցան, զոր յօրինեալ է Հ. Պ. Վ.ի Յ. ի Մխիթ. Ուխտէն. ի Վիէննա, ՌՄՂԶ 1847. մեծ. 8°, ԽԷ + 596 էջ։

Բովանդակութիւն. Ա. Ժողով Առաքելոց. Գումարեալ յԵրուսաղէմ առ առաջնորդութեամբ սրբոյն Պետրոսի և առ տէրութեամբ Տիբերեայ կայսեր Հռոմայեցւոց առ ի կացուցանել զոք յառաքելութիւն փոխանակ Յուդայի. յամի Տեառն 34. – Բ. Ժողով Առաքելոց. Գումարեալ յԵրուսաղէմ յաւուրս առաջնորդութեան սրբոյն Պետրոսի և առ տէրութեամբ Տիբերեայ կայսեր Հռոմայեցւոց առ ի լսելեացուցանել զարտաքինն Յունաց վՀրէից վասն արհամարհ լինելոյ այրեաց նոցա ի պաշտամանն։ Յամի Տեառն 34. – Գ. Ժողով Առաքելոց. Գումարեալ յԵրուսաղէմ յառաջնորդութեան երանելւոյն Պետրոսի և առ ինքնակալութեամբ Կղաւդեայ կայսեր Հռոմայեցւոց, ի յայտնութիւն ազատ լինելոյ հաւատացելոց Քրիստոսի ի թլփատութենէ և ի մովսիսեան օրինացն խորանաց։ Յամի Տեառն 51. – Առաջին տիեզերական ժողովն գումարեցաւ յամի Տեառն 325, ի Նիկիա քաղաքի Բիւթանացւոց, յորում նզովեցաւ Արիոս որ վարդապետէր՝ թէ Որդին Աստուծոյ ոչ է հաւասար և բնակից Հօր, այլ արարած։ Երկրորդ նզովեալ մերժեցաւ Մելիտոս որ յարուցեալ էր հերձուած։ Երրորդ սահմանեցաւ կատարել զտօն սրբոյ զատկին ի կիւրակէի՝ որ գայ յետ չորեքտասաներորդ աւուր լուսնոյ Մարտի։

Ժողովն Սարդիկեայ գումարեցաւ յամի Տեառն 347, ի Սարդիկէ քաղաքի, ուր նզովեցան դարձեալ Արիանոսք, և միաբանգամ հաստատեցաւ սահման հաւատոյ սրբոյ ժողովոյն Նիկիոյ։

Երկրորդ տիեզերական ժողովն՝ գումարեցաւ ի Թագաւորական քաղաքին Կոստանդնուպոլսի՝ յամի Տեառն 381, յորում նախ նզովեցաւ Մակեդոն Հոգեմարտ, որ զՀոգւոյն սրբոյ զաստուածութիւն ուրանայր։ Երկրորդ Մաքսիմոս Շնական ստանանուն եպիսկոպոս Կոստանդնուպոլսի մերժեալ յաթոռոյն՝ կացուցաւ սուրբն Գրիգոր Նազիանզացի, բայց իբրեւ նա հրաժարեցաւ՝ ընտրեցաւ Նեկտարիոս։ Դարձեալ նզովեցան բազում հերետիկոսք ժամանակին, Արիանոսք, Կէսարիանոսք և Ապողինարիոսք։

Երրորդ տիեզերական ժողովն եղեւ յամի Տեառն 431, յԵփեսոս քաղաքի Ասիացւոց։ Ի սմա դատապարտեցաւ նզովիւք Նեստոր, որ զՅիսուս Քրիստոս յերկուս անձինս և յերկուս որդիս բաժանէր, և զսուրբ կոյսն Աստուածածին՝ ասէր լինել մարդածին կամ քրիստոսածին և ոչ աստուածածին։

Չորրորդ տիեզերական ժողովն եղեւ յամի Տեառն 451, ի Քաղկեդոն քաղաքի, յորում նզովս ընկալաւ Եւտիքէս հերձուածողն, որ խառնակութիւն

և չփոխմամբ յերկուս բնութիւնս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ուսուցանէր։ Ի սմա նզովեցաւ և Դէոսկորոս եպիսկոպոս Աղեքսանդրիայ, որ թիկունք օգնականութեան լինէր Եւտիքեայ։

Հինգերորդ տիեզերական ժողովն գումարեցաւ ի Կոստանդնուպօլիս յամի 553, ի խափանումն յաջորդաց աղանդոյ Որոգինեանց և ի բարձումն հակառակութեանց յարուցելոց ի պատճառս գրոցն Թէոդորոսի Մոպսուեստացւոյ, Իբասայ Եդեսացւոյ և Թէոդորետոսի Կիւրացւոյ։

Վեցերորդ տիեզերական ժողովն գումարեցաւ նոյնպէս ի Կոստանդնուպօլիս յամի 680, և ի գլուխ ել յամի 681, յորում նզովեցան Միակամեայք, որք ուրանային լինել ի Տէր մեր Յիսուս Քրիստոս երկուց կամաց և երկուց գործողութեանց աստուածեղինին և մարդկեղինին։

Եօթներորդ տիեզերական ժողովն եղև ի Նիկիա Բիւթանիացւոց յամի Տեառն 787, առ ի մերժումն աղանդոյ Պատկերամարտից, որք զպատիւ և զպաշտօն պատկերաց սրբոց արհամարհէին։

Ութերորդ տիեզերական ժողովն, որ է յետին համաշխարհական սինհոդոս արևելեան, գումարեցաւ ի Կոստանդնուպօլիս յամի 869, ի մերժումն Փոտիոսի հերձուածողի յաթոռոյ Կոստանդնուպօլսոյ և ի հաստատել զաւուրքն Իգնատիոս բուն հայրապետ տեղւոյն։

Իններորդ տիեզերական ժողովն ժողովեցաւ յամի Տեառն 1123, ի Հռոմ ի մայր եկեղեցւոջ սրբոյն Յովհաննու կոչեցեալ Լատերանեան, յորմէ այս ժողով որպէս և չորս այլ համաշխարհական սինհոդոսք գումարեալք ի սմա՝ անուանեցան ժողովք Լատերանեան։ Երկուց պատճառաց վասն գումարեցաւ այս ժողով. առաջին՝ առ ի բառնալ յաշխարհական իշխանաց զիրաւունս տալոյ զիշխանութիւնս եպիսկոպոսաց և որ ի կարգին։ Երկրորդ՝ առ ի խորհել հնարս ազատելոյ զՊաղեստին և զԱսպանիա ի լծոյ անհաւատից։

Տասներորդ տիեզերական ժողովն գումարեցաւ յամի 1139 ի Հռոմ ի նմին եկեղեցւոջ Լատերանու, նախ՝ առ ի բառնալոյ զհերձուած Պետրոսի Լեւոնի սուտանուն քահանայապետի։ Երկրորդ՝ առ ի դատապարտելոյ զմոլար ուսմունս Պետրոսի Բրուխեան, որոյ աշակերտք կոչեցան Պետրոբրուսեանք, և Առնոլդոսի Բրեսկիացւոյ աշակերտին նորա. որք ուսուցանէին՝ թէ մկրտութիւնն տղայոց անպիտան է, մինչ չեն նոքա ի տիս բանականութեան. թէ ոչ պարտ է եկեղեցիս և զկանթեղս արժան է կործանել և զնշանս խաչի բնաջինջ առնել. թէ ծառայ ինն է առնել եթէ յաւ. մենասուրբ խորհրդեան հաղորդութեան զոյ ճշմարիտ մարմին և արիւն Տեառն մերոյ. թէ աղօթք, պատարագք և ողորմութիւնք չեն ինչ օգուտ ամենևին ննջեցելոց. և որ այլ ևս այնպիսի պիղծ ուսմունս։

Մետասաներորդ տիեզերական ժողովն եղև յամի 1179, ի Հռոմ դարձեալ ի նմին Լատերանեան եկեղեցւոջ։ Նախ՝ առ ի սահմանելոյ կարգս ի պէտս ընտրութեան քահանայապետաց Հռոմայ։ Երկրորդ՝ առ ի մերժումն չար աղանդոյ Վալդացի և Ալբիգացի հերետիկոսաց։ Վալդացիք զամենայն կարգս եկեղեցւոյ, զպահս, զնշան խաչին, զպատկերս սրբոց, և բաց ի տէրունական աղօթից զամենայն մաղթանս անարգէին։ Զերկուս եւեթ խորհուրդս ընդունէին՝ զմկրտութիւն և զհաղորդութիւն։ Զեկեղեցին Հռոմայ առ առաւել կոչէին վարդապետ ամենայն մոլորութեանց։ Իսկ Ալբիգացւոց ընկալեալ զաղտս և զՊետրոբրուսեանց ուսմունս, յաւելուին ի նոսա և զիւրեանց մասն չարափառութեան։ Պնէին երկուս աստուածս՝ զմին բարի և զմեւս չար՝ զհին կտակարանս մերժէին ի բաց. զհարս հնոց օրինաց համարէին զատապարտեալս.

զՅովհաննէ Մկրտչէ ասէին լինել մի ի գլխաւոր այսոց չարաց. հայհոյէին և զՏէր մեր Յիսուս Քրիստոս և զՏիրամայրն պիղծ բանիւք. զամուսնութիւնն պոռնկութիւն համարէին, սակայն ասէին թէ՝ չիք բնաւ մեղք յամենայն գործս՝ զոր գործեմք ի միջոյ և ի վայր։ Թող զայլ ևս բեւր անպատեհ ուսմունս։

Երկոտասաներորդ տիեզերական ժողովն գումարեցաւ յամի Տեառն 1215, ի նմին Լատերանեան եկեղեցւոջ Հռոմայ, առ ի սպառսպուռ քանդումն աղանդոյ Ալբիգեանց, և ի յորդորումն քրիստոնէից զնալ պատերազմաւ յազատութիւն Պաղեստինացւոց աշխարհին կամ երկրին սրբոյ։

Երեքտասաներորդ տիեզերական ժողովն գումարեցաւ յամի Տեառն 1245, ի Լուգդոն (Լիօն) քաղաքի Գաղիայ, որ և է առաջին համաշխարհական սինհոդոսն Լուգդոնեան. նախ՝ վասն օրէնս կարգելոյ յուղղութիւն վարուց առաջնորդաց և պաշտօնէից եկեղեցւոյ։ Երկրորդ առ ի խափանելոյ զհալածանս՝ որով տառապեցուցանէր Փրեդերիկոս Բ. կայսր զեկեղեցի։ Երրորդ ի դտանել հնարս ազատութեան արևելեան քրիստոնէից հարստահարելոց ի Սարակինոսաց, և ընկճելոյ ըզյարձակումն Թաթարաց ի բազում տեղիս Ասիայ և Եւրոպայ։ Չորրորդ առ ի հնարելոյ դարմանս վասն հերձուածոյն Յունաց։

Չորեքտասաներորդ տիեզերական ժողովն, որ է երկրորդ համաշխարհական սինհոդոսն Լուգդոնեան, եղև յամի Տեառն 1264, ի նմին Լուգդոն քաղաքի Գաղիացւոց, առաւել առ ի միաբանել զեկեղեցին Յունաց ընդ արևմտեան եկեղեցւոյ և հաստատել զուղղափառ ուսմունս հակառակ հերձուածոյն Յունաց։ Երկրորդ՝ առ ի հոգալ թիկունս օգնականութեան երկրին սրբոյ։ Եւ երրորդ առ ի սահմանել կանոնս ի կարգաւորութիւն վարուց։

Հնգետասաներորդ տիեզերական ժողովն, որ է համաշխարհական ժողովն Վիէննական, գումարեցաւ յամի 1311, ի Վիէննա քաղաքի Գաղիայ. նախ՝ առ ի քննելոյ զիրս կարգին Տաճարականաց, որ էին կարգ ինչ ասպետաց հաստատելոց ի մուտս ժԲ. դարուն, զորոց բազում ամբաստանութիւնք լինէին վասն անկարգ գործոց։ Երկրորդ՝ առ ի սրբելոյ զեկեղեցի ի մոլորութեանց, զոր յայնմ ժամանակի սփռէին հերետիկոսայք ոմանք, Բեգարդեանք և Բեգինեանք, որք չարաչար յիմարեալ ուսուցանէին, թէ կարողութիւն է մարդոյ ի կեանս յայսմիկ յայնպիսի սրբութիւն ժամանել, մինչև անմեղանչական լինել, և չկարել այլ ևս զարգանալ ի բարութեան, և այնուհետև անկարօտ լինել պահոց, աղօթից և գործոց ողղութեան, և կարել կատարել զամենայն ցանկութիւնս մարմնոյ առանց մեղաց։ Դարձեալ բարբաջէին՝ թէ մարթ է մեզ ի կեանս յայսմիկ ի կատարեալ երջանկութեան վայելել՝ որպէս ի հանդերձելումն։ Ի սոսա յաւելուին և մոլար ուսմունք Պետրոսի Յովհաննու Ոլիբիայ, որ ասէր թէ կող Քրիստոսի խոցեցաւ մինչ դեռ ոգի նորա առ նմա էր. թէ ի մկրտութեան ոչ հեղանի ի մանկունս պարգև հաւատոց և առաքինութեանց։ Երրորդ պատճառ գումարելոյ այսր ժողովոյ էր խորհել ինչ վասն օգնականութեան յազատութիւն Պաղեստինացւոց աշխարհին առաքելոյ։

Վեշտասաներորդ տիեզերական ժողովն գումարեցաւ յամի Տեառն 1409, ի Պիսա քաղաքի Տուսկիացւոց կամ Տոսկանայ, առ կացուցանելոյ զորոշ որ քահանայապետ յաթոռ հռոմէական։

Եւթնևտասներորդ տիեզերական ժողովն, այս ինքն է համաշխարհական սինհոդոսն Կոստանդիայ, գումարեցաւ յամի 1414, և ձգեցաւ ցամն 1419. նախ բուն իսկ առ ի բառնալոյ զխռովութիւնս յաղագս վասն աթոռոյն Հռոմայ. և եր-

կրօրդ՝ առ ի մերժելոյ զուամունս մոլորութեանց Վիկղեփեայ անզգեացւոյ, որ անհամար մոլար կարծեաց լինէր քարոզ, մանաւանդ զխորհրդոյն զօհութեան, զիշխանութենէ հայրապետին Հռոմայ և առաջնորդաց եկեղեցւոյ, զաղօթից, զողորմութենէ աղքատաց, զխոստովանութենէ մեղաց, ըզկարգաց կրօնաւորութեան, և որ ի սոյին սակի։ Զայս ամենայն զմոլութեամբ քարոզէին և Յովհաննէս Հուս և Յերոնիմոս պրագացի, երկոքեան ևս բոհեմիացի յազգէ, որք և դատապարտեցան ի ժողովին յայնմիկ ընդ Վիկղեփեայ։

Ութեւտասներորդ տիեզերական ժողովն եղեւ յամի Տեառն 1423, ի Սիէնա քաղաքի ի հաստատել զմերժումն Վիկղեփեան և Հուսեան հերետիկոսաց, ի յեղուցանել զհերձուածս որ վասն աթոռոյն Հռոմայ, և զատանել հնարս միաբանութեան Յունաց ընդ կաթուղիկէ եկեղեցւոյ։

Իննեւտասներորդ տիեզերական ժողովն, այս ինքն՝ Բազիլեանն, գումարեալ յամի 1431, ի Բազիլիա քաղաքի Հելուետիացւոց։ Սա երկպառակեաց զնզովումն վերադրյնն ճառելոյ հերետիկոսացն և ած ի միութիւն եկեղեցւոյ զոմանս ի Բոհեմիացւոց մոլորելոց։ Այս ժողով՝ միայն ըստ սկզբանն կամ առաջին գումարմանցն՝ համարի համաշխարհական և օրինաւոր, որպէս գրեցաք։

Քսաներորդ տիեզերական ժողովն, որ է համաշխարհական սինհոդոսն Փլորենտեան, եղեւ յամի Տեառն 1438, ի սկզբան անդ ի Ֆերրարա և ապա ի Փլորենտիա, առ ի միաբանելոյ զեկեղեցին արեւելեան ընդ արեւմտեան և կաթուղիկէ եկեղեցւոյ։

Քսաներորդ առաջնորդ տիեզերական ժողովն, այս ինքն հինգերորդ համաշխարհական սինհոդոսն Լատերանեան, գումարեալ յամի 1512, ի Հռոմ ի Լատերանեան եկեղեցւոջ, վասն անհետ առնելոյ զմոլորութիւնս զայրացեալս յայնմ ժամանակի, առ ի բարեկարգութիւն եկեղեցւոյ, առ ի խաղաղական միաբանութիւն քրիստոնեայ իշխանաց, և առ ի յորդորելոյ զքրիստոնեայս գնալ պատերազմաւ ի վերայ Հագարացւոց։

Քսաներորդ երկրորդ և յետին տիեզերական ժողովն, այս ինքն՝ համաշխարհական սինհոդոսն Տրիդենտեան, ժողովեալ ի Տրիդենտ քաղաքի Տիրոլի յամի Տեառն 1545, և ձգեալ զամս իննեւտասն, Պատճառ այսմ ժողովոյ եղեն մոլորութիւնք Լութերի, Կալուինոսի և աշակերտաց նոցա, որք բեր մոլորութիւնս կարկատէին զխորհրդոց եկեղեցւոյ, մանաւանդ զխորհրդոյ հաղորդութեան, զկարգաց քրիստոնէական ուղիղ հաւատոց և զօրինաց բարւոք վարուց. ուսուցանէին՝ թէ մարդիկ յետ պատուիրանազանցութեանն Ադամայ կորուսեալ զազատութիւն կամաց իւրեանց չգործեն ինչ յօգուտ կամ ի վնաս յաւիտենից փրկութեան ոգւոց իւրեանց, և արդարանան միայն հաւատովքն Քրիստոսի առանց գործոց բարեաց. նմին իրի փայրապար են, ասէին, ամենայն գործք բարեք, պահք, կարգք վանականաց, խորհուրդն խոստովանութեան և վերջին օծումն, պաշտօնն սրբոց և պատիւ սրբոց պատկերաց, վարք սուրբք, առաւածանուէր կուսութիւն, խորհուրդն պատարագի, այլովքն հանդերձ։ Նզովիւք մերժեալ սորին տրիդենտեան սուրբ ժողովոյ զայս ամենայն չաղփաղփութիւնս՝ բաղում սահմանս և կանոնս առաւել քան զհամօրէն առաջին տիեզերական ժողովս՝ վասն ուղղութեան վարուց հաւատացելոց եդ։

— Մարդկային լեզուին սկզբան, հանգամանաց, միութեան ու բաժանման և ազգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը։ Վիեննա, եւն, 1857. ՌՅՁ. 6°, 139 էջ։

Ութերորդ՝ վերջին գլուխը «Ազգային լեզուն անկորուստ պահելու և ծաղկեցնելու միջոցները» անի իրեն նիւթ. յէջն 118-138։

— Առաջնորդ դաստիարակութեան առանձինն ծնողաց համար։ Վիեննա, եւն, 1852. 12°, 112 էջ։

— Ուսումն ազգային դաստիարակութեան, որ է ազգային տղոց միտքը, կամքն ու սիրտը կրթելու գիտութիւն, առանձինն դաստիարակաց համար։ Վիեննա, եւն, 1862. 12°, 18 + 340 էջ։

— Պատմութիւն Իտալիայի ի սկզբանէ մինչեւ մեր օրերը։ Վիեննա, եւն, 1864. 6°, 480 էջ։

ՅՈՎՆԱՆԵԱՆ (Սիմոն). — Կրթական գործ. Հատոր Ա. գրեց Ս. Յ.։ Կ. Պոլիս, ի տպ. ի (Ա. Մալեան) Հայ-Գրաշարաց Ընկ., 1887. 8°, 96 էջ։

«Այս երկի մէջ մանուկը կը ներկայացուի շըրջապատեալ իր կենակցութեան հինգ գլխաւոր շըրջանակներէն, – Տուն, Փողոց, Ընկերային շըրջանակ, Եկեղեցի, Ուսումնարան և խնամատուն։ Անդցուցուած են 1. Մանուկին «Ճշմարիտ մարդ» լինելու յայտնի բնածիր առանձնայատկութիւնները. 2. Նորա եկամուտ չար հակումները՝ ձեռք բերած շրջակայների յոռի վարուցականութենէն, և 3. մեր ձեռք առած ուղղութիւնները՝ համաձայն մանկավարժութեան՝ այդ մատաղ սերնդի կրթութեան նկատմամբ». Մասիս 1887, Թ. 3865։

Քննադ. Մշակ 1887, Թ. 37։

Երկրագունտի մէջ անի. «Ճանապարհորդական տպաւորութիւններ Ա.». 1886, էջ 454. – Բ. 1887, էջ 72։

«Յոփպանու գաւենին». Բազմավէպ 1886, էջ 129։

ՅՈՎՍԵՊՈՍ. — Գիրք պատմութեանց Յովսեպոսի Եբրայեցւոյ արարեալ յաղագս Պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցիս, և աւերման Երուսաղէմի։ Թարգմանեալ ի Լատինացւոց բարբառոյ ի Հայոց լեզու, ի ձեռն ուրումն Ելովացւոյ Ստեփաննոսի բանին Աստուծոյ սպասաւորի։ Ի փառս Քրիստոսի Աստուծոյ յուսոյն բընաւից։

Այս իբր նախադրութիւն, և ապա հետեւեալ ճակատը.

Պատմագիրք Արարեալ Յովսեպոսի եբրայեցւոյ յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռոմայեցիս, և աւերմանն Երուսաղէմի և Տաճարին հնոյ։ Թարգմանեալ ի Լատինացւոց բարբառոյ ի մեր լեզու, աշխատասիրութեամբ երջանկակրօն Միաբանի Քրիստոսաէջ սրբոյ Գահիս Տեառն Ստեփաննոսի գերիմաստ Վարդապետի Ելովացւոյ, քաջահմուտ և հարազատ թարգմանչի, ի թուականութեան մերում, ՌՃԺ։ Իսկ նարդենիս տպագրութեամբ ի լոյս ածեցեալ ի սոյն ձեռագրէ նոյնոյ Թարգմանչին ի Լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին, վեհափառ հրամանաւ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի ամենայն Հայոց, ի յեօթներորդում ամի Հայրապետութեան նորին։ Եւ ի Պատրիարգութեան սըրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ, տեառն Յովակիմայ և տեառն Զաքարիայ Աստուածիմաստ Վարդապետաց և Արհի Եպիսկոպոսացն։ Ի Տպարանի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ։ Ի թուոջ փրկչին, 1787. և ի մերում թուականիս, ՌՄԼԶ։

Այս երկու ճակատներէն վերջ՝ յէջսն 5–10 յառաջաբան հեղինակի. յէջն 11՝ ցանկ գլխոց առաջին գրութեան մէկ էջ. յաջորդը պարապ, և 13 էջէն կը սկսի առաջին գրութիւնը, և միակարգ կը հասնի յէջն 488՝ որ է վերջ ութերորդ գրութեան. իւրաքանչիւր գրութիւն իր ցանկն առջևն ունի։ Յէջն 488՝

«Յիշատակարան թարգմանողի՝ պատմութեանս յովսեպոսի եբրայեցւոյ։ Շնորհիւ և գթութեամբ բարերարին աստուծոյ, ես Ստեփաննոս լեհացի, յետին ի մանկանց Եկեղեցւոյ, և կրսեր ի սպասաւորացն բանին Աստուծոյ, բազում անգամ յառաջագոյն հարկեալ ի հրամանէ երկիցս երանեալ Տեառն Փիլիպպոսի Կաթողիկոսի, և ապա աղաչեալ ի թախանձանաց եղբարցն որք կային ի հրահանգս դեգերանաց իմաստից ի սուրբ Աթոռս Էջմիածին, ի թուաբերութեան տումարին հայոց ՌՃԺԹ, և ի Հայրապետութեան սրբազան Տեառն Յակոբայ, զայս պատմութիւն Յովսեպոսի թարգմանեցի ի լատինացւոց բարբառոյ ի հայոց լեզու։ Բայց գիտելի է. զի արտաքոյ այս պատմութեանս՝ զոր գրեաց յաղագս պատերազմի հրէից ընդ հռովմայեցիս, ա՛յլ մատեանս սորա ունիմք որ սակի պատմութիւն առաջնոցն հրէից, ի քան գրութիւնս պարունակեալ, յորս ճառէ սկսեալ յաշխարհաստեղծութենէն մինչև ի վերջին աւերումն երուսաղէմի։ Ե՛ն և այլ խօսք սորին, որ սակի մաքառումն ընդդէմ ապիոնի՝ յերկուս գլուխս բաժանեալ։ Նաև բան գովեստի ի նահատակութիւն եօթն մանկանցն մակաբայեցւոց։ Իսկ ես միայն զա՛յս գիրս ի մեր լեզու փոխադրեցի, զի է յոյժ պիտանի և օգտակար ուսումնասիրացն, մանաւանդ որք ցանկան գիտել զժամանակն անցեալ ի յուդայէ մակաբայեցւոյ մինչև յաւերումն երուսաղէմի, զոր յառաջագոյն կանխաւ գուշակեաց տէրն մեր ի սուրբ աւետարանն ղուկասու։ Արդ՝ աղաչեմ, զի որք օրինակէք զայս ժամանակագրութիւնս, զայս ես գուղնաքեայ յիշատակարանս ընդ սմին գրեսջիք, զի և դուք եղիջիք գրեալ ի մատեանս կենաց վերին գրութեանն։ Եւ եթէ ինչ պակասութիւն գտանիցի ընդդէմ ուղղաչափոյ թարգմանութեան, ինձ թողութիւն շնորհեսջիք, զի այսչափ էր կարողութիւնս։ Քանզի ի յայս ձեռնարկել համարձակեցայ այսու պատճառաւ միայն, զի մի գտայց նման ծառային որ զքանքարն տեառն իւրոյ ի վարշամակի ծրարեաց. և մանաւանդ զի յայսմիկ փառաւորեսցի տէրն ամենայն շնորհաց, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն»։

Այս յիշատակարանէն վերջ «Նորին Ստեփաննոսի վարդապետի Լւովացւոյ ժողովեալ ի յովսեպոսէ յաղագս քահանայապետից ազգին հրէից», յէջն 491, ուր կայ հետևեալ՝ «Յիշատակարան Յոհաննու վարդապետին կարճաւանեցւոյ. որ եղաւ սատ ի վկայութիւն ստուգութեան հեղինակին գրքոյս։ Արդ՝ ես Յոհան զառածեալ մեղօք, անպիտան ի գործ պաշտաման բանին քարոզութեան, եղբայր ըստ մարմնոյ տեառն Նայեայ չինողի սրբոյ Կարապետի Վանիցն ապրակունեաց, բայց քեցեալ և տարակացեալ ի գործոց արիութեանց և քաջասրտութեանց նորին, զասատ ի մեղաց, և գեղջուկ կարճաւանցի. լսէի միշտ ի գիրս ամենայն պատմագրութեանց հայոց յաղագս Յովսեփոսի, և տեսանէի զվկայութիւնս սա ի նմանէ, և ցանկայի բազում տարիանօք, և ո՛չ երբէք տեսանէի ի մէջ ազգիս մերոյ։ Վասն այսորիկ՝ ընդ այլոց սրբազնագոյն եղբարց միշտ թախանձէի գերջանկապատուելի զեղբայրն մեր զտէր Ստեփաննոս վարդապետն լեհացի առ ի թարգմանել։ Որոյ խոնարհեալ յաղաչանս մեր, սիրով թարգմանեաց զսա։ Եւ ես տրուպս ամենայնի, նորին ընչիւքն ընդօրինակել ետու այլոց գրչաց, և զսա որ իւրով ձեռամբ է գրեալ, առեալ վասն իմ պահեցի, զի եղիցի սա յիշատակ յաւիտենական նորին, և ծնողացն բարեպաշտից, և ինձ եղկելի բանասիրիս կարճաւանցւոյ։ Արդ՝ որ ոք կամիցի ի սորանէ ընթերցողաց և յօրինակողաց, զայս ինչ փոքրիկ յիշատակութիւնս գրեսցէ, և կամ յիշատակեսցէ ընդ աշխատողի սորին։ Եւ ինքն յիշեալ լիցի ի բարիս։ Ի թուաբերութեանս մերում, ՌՃԺԹ, ի Հայրապետութեանն տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ»։

Յետոյ յէջն 492 «Բան առ ընթերցօղս. և Յիշատակարան տպեցման գրքոյս», ուր գրքին օգտակարութեան վրայ խօսելէ վերջ՝ կը գրէ. «... Իսկ մեք դարձցուք այսրէն առել և վասն թարգմանութեանց և տպագրութեան գրքոյս։ Է՛ր սա թարգմանեալ ի վաղնջուց ժամանակաց ի նախնի Վարդապետացն մերոց ի մեր լեզու և ի գիր, վասն օգտութեան ինչ իրաց, և վասն գիտութեան լրութեան աստուածային գրոց՝ զորս կանուխն ասացաք. որպէս գրէ գրասէր վարդապետն մեր Յոհան կարճաւանցին յիւրումն յիշատակարանի, և որպէս տեսանեմք մեք զմանս բանս սորա ի վկայութիւն առեալ ի նախնի վարդապետացն մերոց սրբոց. զորօրինակ ի սրբոյն Գրիգորէ տաթևացւոյն և այլոց։ Իսկ ի լինել խառնակութեան աշխարհիս հայոց ի լանկն թամուրայ աշխարհակալէ և յայլոց հինից՝ սպառեալ է և այս գիրք ընդ այլ չահաւէտ և օգտակար գրեանց մերոց. որ և ո՛չ ուրեք երբէք գտանի այսօր յազգս մեր։ Ուստի՝ հարկ է եղեալ կրկին թարգմանել զսոյն ի ժամանակս Տեառն Փիլիպպոսի սրբազան Կաթողիկոսի ի լուսանկար և յերկնահանգէտ Աստուածեան Աթոռոջս սրբոյ Էջմիածնի, ի ձեռն տեառն Ստեփաննոսի ներհուն թարգմանչի և աստուածաբան վարդապետի Լւովացւոյ, որ ի խարդախութենէն նիկողայոսի ամպարշտի եկեալ էր ի սուրբ Աթոռս. որպէս պատմէ մեզ տէր Առաքել վարդապետն թաւրիզեցի յիւրումն պատմագրութեան։ Եւ սոյն այս տէր Ստեփաննոս գերիմաստ վարդապետս ըստ գրելոյն իւրոյ յիւրումն յիշատակարանի սկսեալ է զթարգմանութիւն սոյն պատմագրութեանս ի ժամանակս Տեառն Փիլիպպոսի սրբազան Կաթողիկոսի, և աւարտեալ է յաւուրս Տեառն Յակոբայ ջուղայեցւոյ վշտակիր Կաթողիկոսի ամենայն հայոց՝ հարազատ թարգմանութեամբ։ որոյ զփորձն տեսաք ի պատմագրութեան տեառն Միխայէլի ասորւոյ, ի բանն յորում խօսի յաղագս հերովդէի և այլոց. նաև յայլ տեղիս. յորս ո՛չ ինչ են ընդհատ բանք սորա ի նոցանէ։ Իսկ ի նարդենիս Ջուղայեցի Պօղոսեան բարեսէր մահտեսի պարոն Խաչիկն խնդրեալ էր ի Սրբազան Վեհապետէս մերմէ ի Տէր Ղուկաս Աստուածընտիր Կաթողիկոսէս ամենայն Հայոց, տպեցուցանել զայս ի սուրբ Աթոռոջս, արդեամբք նորին։ Որոյ զխնդիրն ո՛չ անտես առնելով բարեջան Հայրապետիս մերոյ, մանաւանդ՝ տեսանելով ևս թէ հազուագիւտ է այս գիրք յազգս մեր, և եղելոց չարքն ևս բազմապատիկք ի գրչացն անհմտութենէ, վասն որոյ հրամայեաց ի տպագրել։ Եւ մինչ սկսաք տպել զգիրքս, թէպէտ և եկին ի ձեռս մեր օրինակք գրեցեալք յայլ գրչաց, ոմանք ստոյգք և ոմանք սխալք, այլ մեք զայնս հեղինակի գրքոյս միայն համեմատեցաք. և զաղետս որ կայ ի միջի, ի հեղինակէն առաք. այս է ի ձեռագրէն՝ զոր նոյն ինքն Լւովացի տէր Ստեփաննոս վարդապետն իւր ձեռամբն էր գրեալ։ որ և նոյնն եղեալ կայր ի գրատանն սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Յորմէ օրինակեցաք զաղետս՝ ոչ ինչ յաւելեալ կամ պակասեցուցեալ. և ո՛չ փոփոխեալ ինչ, որպէս թէ զայս բառնալով և զայն դնելով, ո՛չ ի բառս և ո՛չ ի բանս. այլ զամենայն զոյգ հեղինակին եդաք աստէն. միայն զմանս լծորդս և զհոլովս անուանց

և բայից և այլոց, նաև զմնացուսն ամենայն զոր արժան էր գնել՝ եդաք. և այն խոսն ինչ՝ և ոչ յաճախ։ Իսկ զայլսն ըստ հեղինակին եդեալ և ըստ հնոյն սովորութեան թողաք այնպէս. որպէս և տեսանին իսկ չարուածք համայն բանիցն և դըրմունք տառիցն և բառիցն։ Եւ այս աւասիկ չատ լիցի տեսողացդ և ընթերցողացդ վասն պատմագրութիւն. Տեսցուք այսուհետև զայնս՝ որք եղեն պատճառք և օժանդակք տպեցման գրքոյս, և են արժանիք յիշման. զորս գրոշմեմք աստէն և խնդրեմք ի ձերդ աստուածասիրութենէ՝ զի որք և ընթեռնուք զգիրս, յիշեսջիք ի Քրիստոս, Նախ՝ զՏէր Սիմէօն վեհաշնորհ Կաթուղիկոսն զհաստատօղն Տպարանիս, զփոխեցեալն առ Քրիստոս. զոր նոյն ինքն Տէր հանգուսցէ յարքայութեանն իւրում։ Ընդ նմին յիշեսջիք և զՅաջորդ Գահակալ նորին զԱրքայազն Հայրապետ ամենայն Հայոց զՏէր Ղուկաս փառամախոհ և բարեջան Կաթուղիկոս, հանդերձ կրկին ծնողօքն. որ ի վերայ այլ բիւրազան հոգոցն ջանայ ևս զօգտաւոր գրեանս ի լոյս ածել, որպէս և զայս էած։ Որում Տէր լիցի օգնական յարաժամ։ Ապա յիշելի է ի բարին և ընիկ միաբանն սրբոյ Աթոռոյս, Մինաս Արք Եպիսկոպոսն, որ հարազատօրէն ընթերցեալ զհեղինակն գրքոյս, զխտան տեղիս գրուածոյն պարզեաց, և ի յերկարութենէ տանջն, զիւրաքանչիւր բանս զլխագրով տնատեաց վերստին առ հարկաւորութեանն։ Ընդ որում և հոգեծին որդին սորբազան Վեհապետին, Թադէոս Նորընծայ վարդապետն, որ սրբագրեաց զփորձն կազմեալ գրոցն չարուածոց։ Յիշեսջի՛ք ևս զտուօղն ծախուց հաստատեցման Տպարանիս, զՋուղայեցի առ Քրիստոս փոխեցեալ խօջաջանեան Զաքիկենց լուսահոգի Գրիգոր Աղային, և զհանգուցեալ ծնօղսն իւր, և զորդին, և զամենայն ազգայինսն, և զկենդանի քոյրն նորա զբարեպաշտուհի Զիւլիսային։ Որոց ամենեցուն ողորմեսցի Տէր։ Եւ մանաւանդ՝ յիշեսջի՛ք զնախագրեալ Ջուղայեցի Քրիստոսասէր և բարեպաշտ մահտեսի Խաչիկ Աղային, և զծնօղսն իւր զՊօղոսն և զՄէհրբանն, և զքոյրն իւր զՀոփփոփմէն, և զկենակիցն իւր զՓէրինազն. և զդուստրն Յօզիտային, և զայլ ամենայն ազգայինս իւր զկենդանիսն և զննջեցեալսն։ Քանզի նոյն օրհնաժառանգ անձն ետ զծախսն տպեցման գրքոյս ի բարի յիշատակ իւր և իւրայնոցն։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և զփոխարէնն սրոց նորին բազմապատկապէս հատուսցէ Քրիստոս նմա և իւրոցն զբարիս աստ և ի հանդերձեալ կեանսն։ Այլև՝ յիշեսջի՛ք զկերտօղն գրոցս և կանոնաց և ծաղկանցիս, զվարպետ Յարութիւնն Վաղարշապատցի, հանդերձ աշակերտին իւրով տիրացու Խաչատուրին։ Եւ զգրաչար Մաղաքիայն, և զտիրացու Աղէքսանդրն, և զայլ աշխատաւորս գործարանիս։

Եւ յիշօղքդ աշխատողացս բարեաց,
յիշեալք լիջիք ի Քրիստոսէ արժանապէս։
Որում ընդ Հօր և սուրբ Հոգւոյն համապատիւ,
ի համայնից մատուսցի միշտ փառք և պատիւ։
Ամէն»։

Գիրքս 4° հատորակ ընդ ամէնը 496 էջ, լայներես, միջակագիր, զարդափակ երեսներով. անհարթ տպագրութիւն։

Հ. Բանասէր Վ. Եսայեան հմուտ պատմութեան՝ հետևեալ ծանօթութիւնը կցուած է իր ձեռագրով մեր օրինակին սկիզբը. «382–84 Լեհացւոյն թարգմանութիւնն գրոց պատերազմացս Հրէից ի յոյլ տեղիս զուգընթանայ ընդ հատուածս պատմութեանն Յովսեպայ որ գտանի յԵւսեբեայ եկեղ. պատմ. տպ. մեր էջ 155–158. գրեթէ նոյնն չարադրութեամբ նախնեաց. այլ ի տեղիս տեղիս և այն դուն ուրեք՝ պարզաբանէ Լեհացին։ Դարձեալ էջ լեհացւոյն թրգմ. 391–393. իսկ մեր 159–160. դարձեալ նոյն, էջ 397. – իսկ մեր 160–161. դարձեալ նոյնն, էջ 418–420. – իսկ մեր 161–165. դարձեալ նոյնն էջ 428–429. – իսկ մեր 169–171. դարձեալ նոյնն էջ 147. – իսկ մեր 88–89. դարձեալ նոյնն էջ 148–149. – իսկ մեր 89–90. դարձեալ նոյնն էջ 160. – իսկ մեր 120. դարձեալ նոյնն էջ 160–161. – իսկ մեր 121–122. (ի սոցունց երևի զի լեհացւոյն ոչ այլ ինչ արարեալ է բայց այլայլել ուրեք ուրեք զչարադրածս նախնեաց՝ զոզցես իմն հանդոյն Կեչառացւոյն, և այս յայտնապէս երևեսցի անշուշտ յորժամ ի վեր երևեսցի գրչ. օրինակ ինչ անձեռնամուխ Յովսեպոսի Պատմութեանս)»։

ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ. — Տես ԱՐՂՈՒԹԵԱՆՑ (Յ. կաթ.)։

Յովսէփ Գնդեցիկ. — Տես ԽՍԱՀԱԿ Վ. ԱՆԿԻՒՐԱՑԻ. — ԹԷՐԶԵԱՆ (Թ.) — ՄԵԹԱՍԹԱՍԻՈՍ (Պ.) — ՆԵՐՇԱՊՈՒՀ (Դ. Վ.) – ՊԻԴՈՊԷ. — ՊՕՂՈՍԵԱՆ (Մ.) — ՎԱՐԴԱՆԵԱՆ (Գ.)։ — Տես և Յովսէփին պատմութիւնը. — Թանգարան հին և նոր նախնեաց, Ա.։

Յովսէփ (Ս.) Հողոցմեցի. — Լումայ 1903, Թ. 1, էջ 208–227. 1. Առաջին ժամանակ. 2. Կաթողիկոսութիւնը. 3. Եպիսկոպոսական ատեանը. 4. Հալածանաց սկզբնաւորութիւն. 5. Նախարարք ի Տիզբոն. 6. Կրօնական դիմադրութիւնք. – Թ. 2, էջ 122–138. 7. Վարդանանց նահատակութիւն. 8. Բանտարկութիւն և աքսոր. 9. Ղեւոնդեանց մարտիրոսութիւնը։ – Աճիչեան, «Սիսական», 177։ – Չամչեան, «Պատմ. Հայոց», Ա. 534, 5. Բ. 15, 50. 27–30. 53, 43, 61, 68, 78, 83, 99, 104–112. Ծանօթ. 465–468։ – Եղիշէ, Ղազար Փարպեցի, ևն։

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ. — Տեղեկագիր աղետալի անցից և անկարգութեանց տանն Աղրամարայ. գրեալ Յ. Վ.ի վանահօր Նարեկայ վանից։ Կ. Պօլիս, ի տպ.ի Ռ. Յ. Քիւրքճեան, 1873. 28 էջ։

ՅՈՎՍԷՓ (Հ.) լատին կրօնաւոր. — Քանանեայ համբակագոյն առ ի յօգուտ մանանողաց։ Կամ համառօտ կերպ. նկատումն. և կրթութիւն առ ի զօրացուցանել զհոգեվարս։ Ի խրատ Նորավարժ Քահանայից։ Արարեալ ի Հայր Յովսէփայ վանական կրօնաւորէ։ Իսկ թարգմանութեամբ ի լոյս ածեալ ի Աթանաս վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ տայի սիմոնեան։ Ծախիւք և արդեամբք ումեմն Աղնուաբարոյ և Բարեպաշտ Ջերմեռանդի ի փառս Աստուծոյ։ Ի Վենետիկ, յամի Տեառն 1748։ Ի տպ.ի Անտոնի Պօրթօլի. Հրամանաւ մեծաւորաց։

Ճակատէն վերջ յէջն 3 Բան առ ընթերցօղս, ցէջն 7. ապա հոգեվարք հիւանդի պղնձափոր պատկեր մը. և զիմացէն էջ 1 կը սկսի գիրքը, և կը հասնի յէջն 113։ Որմէ վերջ ուրիշ պղնձափոր պատկեր մըն ալ՝ վերջին օծման, և զիմացը հիւանդը օծելու կարգը, ցէջն 126, որ է վերջ գրոցն։

Գիրքը փոքր 8°, անհարթ մանրագիր, զարդափակ երեսներով. հասարակ տպագրութիւն։

Յովսէփ Վարդան փաշա. — Կենսագր.ը տես Հանդէս Ամսօրեայ 1890, էջ 62։

ՅՈՎՍԷՓ Վ. ԱՐՑԱԽԵՑԻ. – Համառօտ քառագիրք ի գրաբառէ յաշխարհաբառն, ի պէտս համբակաց. աշխատասիրութեամբ տեառն Յով-

սեփայ Արցախեցւոյ գերիմաստ վարդապետի ի միաբանութենէ վանիցն սրբոյն Յակովբայ ։ Ի հայրապետութեան Տեառն Եփրեմի սրբազնասուրբ կաթուղիկոսի ամենայն հայոց ։ Հրամանաւ Տեառն Ներսիսի Առաքելազործ սրբազան Արհի եպիսկոպոսի և առաջնորդի ամենայն հայոց վիճակի վրաստանի և այլոց ։ 1830 *ի Շուշի* ՈՄՀԹ ։ 8°, *երկսիւն* 398 *էջ ։*

Յառաջաբան չունի ։

ՅՈՎՍԷՓ ՔԱՀԱՆԱՅ *Նոր Ջուղայեցի.* — *Ալիշան կը գրէ «Հայապատում»ին մէջ ։*

«Շատ տարիներ աշխատելով հաւաքեր և գրեր է՝ երեսունեւչորս Պրակներու բաժնելով՝ եկեղեցական Պատմութիւն ի Քրիստոսէ մինչեւ ի կէս ԺԸ. դարու, և անուաներ է Քննիկոն ։ Գործն աւարտեր է ի Բասրայ, ի 1761, *հօթանասնամեայ ըլլալով, որդւոց և թոռանց տէր ։ Յակոբ Այուբեանց գրէ սոր համար. «Պատմագիրք որ Քննիկոն կոչի, յԱդամայ մինչ ի ՌՄՃ (1751) թիւն. յորս գոն զանազան ասութիւնք ի վերայ սատուածային արանց, և պատմութիւնք Հայոց իշխանաց և թագաւորաց, և վասն ամենայն անցիցն անցելոց. զոր ակնողացն է յայտնի» ։ Տես եւս Ազգասէր* 1845, *թ.* 17, *էջ* 136, *ուր կ՚ըսուի. «Տէր Յովսէփ քահանայ՝ Նոտար պաշտօնէի Նորոց Կաղաքացւոյ. և հայր Քանոնիկոն անուանեալ գրոց յերկուս հատորս բաժանեալ, և այլոց բազմաց...» ։ Տես անդ. գարձեալ* 1847, *թ.* 91, *էջ* 145, *ուր գրուած է այդ Քանոնիկոն, կամ Քննիկոն կամ Քննոնիկոն գրքին յիշատակարանը ։*

ՅՈՎՍԷՓԵԱՆ (*Գարեգին Վ.*) — *Սասմայ Ծռեր. Սասունցի Դաւիթ. ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ* (*Աբարանի և Մոկաց բարբառներով*) ։ *Գրի առաւ Գարեգին Վարդապետ ։* (*ժողովրդական նիւթեր Գիրք Ա. Հրատ. Թիֆլ. Ընկ. Հայ. Գրք. Հրատ. թ.* 50) ։ *Թիֆլիս, տպարան Մ. Շարաձէի,* 1892. 8°, 151 *էջ ։*

Յառաջաբանը (*Ա–Ժ*) *ի միջի այլոց կ՚ըսէ. «... Ակներև չենք համարում մի քանի ծանօթութիւն տալ «Սասմայ Ծռեր» ժողովրդական վէպի վարիանտների մասին ։ Մինչեւ այժմ այդ ժողովրդական վէպի* (*էպոս*) *երկու վարիանտ էր յայտնի, մէկը՝ Մշոյ վարիանտը, որ գրի է առել Հ. Սրուանձտեանը «Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ» վերնագրով* (*«գրոց–բրոց»*), *իսկ միւսը՝ Մոկաց վարիանտը, որ գրի է առել պ. Մ. Աբեղեանը «Դաւիթ և Մհեր» վերնագրով ։ Բայց երեւում է, որ կայ մի երրորդ վարիանտ եւս Սասունում ։ Սասունը մեր գիւղացիական վէպի բուն հայրենիքն է, բայց մինչեւ այժմ ոչոքի չէ յաջողուել այդ բարբառով գրի առնել ։ Մենք Սասունում երկար տարիներ ապրող մի մարդուց խմացանք Սասունի վէպի գոյութիւնը, բայց ափսոս անկախ պատճառներով չկարողացանք ամբողջութեամբ գրի առնել ։ Սասունի բերդը «Մհերի տապան» է կոչւում այդ Սասունի վարիանտի մէջ ։ Այդ վարիանտը իւր կազմութեամբ տարբեր է Մշոյ և Մոկաց վարիանտներից ։ Այդ յայտնի վարիանտներին են պատկանում նաեւ մեր գրած երկու վարիանտները, Աբարանի բարբառովը՝ Մշոյ վարիանտին* (*Սրուանձտեանի*), *իսկ Մոկաց բարբառովը Մոկաց վարիանտին* (*Աբեղեանի*) ։ *Այսպիսով տեսնում ենք, որ սոյն ժողովրդական վէպը մեր մէջ երեք գլխաւոր վարիանտ է կազմել՝ Մշոյ, Մոկաց և Սասունի, որոնցից իւրաքանչիւրը ունի իւր տարբեր վարիանտները ։*

Մեր վարիանտներից մէկը գրած ենք Աբարանի Զամբլու գիւղում. պատմել է մեզ նոյն գիւղի ժամհար Մուրադը. այդ վարիանտի հետ համեմատել ենք և երկու ուրիշ վարիանտ (*Ա–ը Ափնայ և Բ–ը Դ ապանփար գիւղումն ենք գրել*), *նշանակելով միայն այն մասերը, որ Զամբլուի վարիանտում չկան, կամ տարբեր են պատմուած ։ Այսպիսով տեսնում ենք, որ ընդունուած կարծիքի հակառակ՝ գաղթական Տուսահայոց մէջ եւս կան ժողովրդական բանահիւսութեան նշանաւոր մնացորդներ ։*

Աբարանի բարբառը Մշոյ բարբառի մի տարբաժինն է, ընդհանուր բարբառների մէջ արեւմտեան բարբառների շարքում պիտի դասել իւր հնչման և քերականական կազմութեան պատճառով ։ Ուշադրութեան արժանի է այս բարբառի մեծ նմանութիւնը գրաբարի հետ. մեր հին լեզուի ծագումը բոլորովին պարզուած չէ. եթէ Աբարանեան և Մշոյ բարբառները համեմատենք գրաբարի հետ, աւելի սերտութիւն գէպի վերջինն ենք նկատում ։

Մոկաց բարբառով մեր գրած վարիանտները, երգերը, առանդութիւնները գրի ենք առել պանդուխտ Մոկացիներից. թէեւ լեզուի մաքրութեան մասին մեր ընթերցողներին երաշխաւորել չենք կարող, բայց ճշտիւ արձանագրելու համար արել ենք այն, ինչ որ կարող էինք. Երգերի լեզուն ի հարկէ անհամեմատ աւելի մաքուր է, նախ՝ իբրեւ ոտանաւոր՝ աւելի անփոփոխ է մնացած, երկրորդ՝ որ երգեր սաղ Մոկացու լեզուն համեմատութեամբ աւելի ազատ էր մնացած ազդեցութիւնից ։

Մի քանի խօսք եւս վէպի «Սասմայ Ծռեր» կոչման մասին ։ «Սասունցի Դաւիթ կամ Մհերի Դուռ» և «Դաւիթ և Մհեր» վերնագիրն ամբողջապէս չի արտայայտում վէպի բովանդակութիւնը, որովհետեւ բացի Դաւթից և Մհերից վէպի մէջ կան և ուրիշ գործող գլխաւոր հերոսներ (*Սանասար, Ալխմելիք և ուրիշները*) ։ *Այդ ի նկատի ունենալով՝ մենք աւելի յարմար ենք գտնում այդ վէպը մի ընդհանուր վերնագրով անուանել «Սասմայ Ծռեր», որ նշանակում է «Սասունի Գժեր» ։ Այդ կոչումը գեղեցիկ ու արտայայտիչ և միանգամայն ժողովրդական է, որովհետեւ Սասմայ Ծուռ է վէպի մէջ գործող իւրաքանչիւր հերոսը, և մինչեւ այսօր էլ ժողովրդի բերանում գործածական է Սասմայ Ծուռ կոչումը վէպի ամեն մի հերոսի համար, և ժողովուրդն այդ վէպը «Սասմայ Ծռեր» է անուանում ։ Սասմայ Ծուռ կոչումը վէպի հերոսների համար կայ և Հ. Սրուանձտեանի վարիանտում» ։*

Քննադ. Արարատ (*Ֆ.*) 1893, *թ.* 1 ։ — *Նոր–Դար* 1892, *թ.* 163 ։

— *Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից ։ Ժողովեց Գ. Ս. Յովսէփեանց ։* (*Ժող. նիւթ. Գիրք Գ. նոյն հրատ. թ.* 56) ։ *Թիֆլիս, նոյն տպ.,* 1892. 139 *էջ ։*

Քննադ. Արարատ 1893, *թ.* 5 ։ — *Նոր–Դար, թ.* 7, 8, 9 ։

— *Մխիթար Սասնեցի* (*Կերմանեցի*), 1260? — 1337 ։ *Արտատպած «Արարատ» ամսագրից ։ Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի,* 1899. 8°, 32 *էջ ։*

Քննադ. Բազմավէպ 1899, *էջ* 477 ։ — *Հանդ. Ամսօրեայ, թ.* 12 ։ — *Բանասէր, էջ* 347 ։

— *Die Entstehungsgeschichte des Monotheletismus nach ihren Quellen geprüft und dargestellt. Միակամութեան ծագման պատմութիւնը իւր աղբիւրներով քննած և ներկայացրած ։ Լայպցիգ,* 1897 ?

Կ. Վ. Արարատի մէջ (1898, *թ.* 1, *էջ* 15) *կը գրէ. «... հեղինակը իւր աշխատութիւնը բաժանել*

է Գ. հատուածների, որոնցից Ա.-ի վերնագիրն է՝ «Քաղաքական-Եկեղեցական հանգամանքները Բիւզանդական կայսրութեան մէջ մինչև Միակամութեան շարժումը», և տալիս է լաւ այսմ համառօտ նկարագիրն այն վիճակի, որի մէջ գտնուում էր Բիւզանդիան Զ. դարի վերջում և Է.-ի սկիզբները՝ Հերակլ կայսեր նախորդների և նորա օրով. որով բացատրուում են միակամային շարժման պատճառները։ — Միակամութիւն տալիս է Զ. դարի վերջերը յառաջ եկած այն վարդապետութիւնը, որ ընդունելով Քրիստոսի մէջ երկու բնութիւն, բայց մի կամք՝ պէտք է Հերակլ կայսեր և նորա կողմնակիցների համար լինէր հիմք ծառայէր, միութիւն հաստատելու արևելքի մի բնութեան և արևմուտքի երկու բնութեան քարոզող եկեղեցիների մէջ։ – Բ. և Գ. հատուածներում Հայր Գարեգինը քննադատում է այն յունական աղբիւրները, որոնցից տեղեկութիւն ենք ստանում այս շարժման պատմութեան մասին, բաժանում է նոցա երեք գլխաւոր տեսակի, ցոյց է տալիս նոցա փոխադարձ յարաբերութիւնը, և թէ պատմական տեսակէտով որը որից նախապատիւ պէտք է համարել։ Պատմագէտի համար այս մասն ի հարկէ ամենից կարևորն է, որ սխալն ու ուղիղը, գլխաւորն ու երկրորդականը որոշելով՝ միջոց է տալիս նորան նոր լոյս սփռելու պատմութեան մի մութ մնացած էջի վերայ. բայց հասարակ ընթերցողի համար ամենից հետաքրքիրն է Գ. հատուածը, ուր հեղինակը իւր հետազօտութիւններից եզրակացութիւն է հանում և տալիս է մի «Պատմական նկարագիր Միակամութեան մինչև Կարնոյ ժողովը (633)»։ Այս հետազօտութիւններն ու նոցանից հանած եզրակացութիւնը առանձին նշանակութիւն ունին մեր եկեղեցւոյ պատմութեան համար, որովհետև գալիս յանգում են այնպիսի մի նշանաւոր խնդրի, որպիսին է Եզր կաթողիկոսի Հերակլ կայսեր հետ հաստատած միութիւնը Կարնոյ ժողովում։ Իւր ուսումնասիրութեան միջոցին Հայր Գարեգինը աչքի տակ է ունեցել հարկաւ նաև հայկական աղբիւրներն և օգտուել նոցա տուած տեղեկութիւններից. բայց քանի որ նա այստեղ միայն մինչև Կարնոյ ժողովը տեղի ունեցած հանգամանքներն է պարզաբանում, չէր կարող առատ նիւթ վերցնել մեր գրականութիւնից, այլ պէտք է թողնէր այդ մի ուրիշ անգամի, երբ նորան կյաջողուի ամբողջ շարժման պատմութիւնը՝ մասնաւորապէս հայկական հողի վերայ խաղացած դերը, ներկայացնել։ Ինչպէս մեզ յայտնի է, նորա ներկայ աշխատութիւնն այդ ընդարձակ ծրագրի իրագործման յառաջաբանն է միայն. իսկ ամբողջի համար պէտք է յուսալ, որ կրկին ձեռք կառնէ և յաջողութեամբ գլուխ կհանէ, երբ «առաջին տարուայ ուսուցչի» պարտականութիւններից փոքր ինչ թեթևացած կլինի և աւելի միջոց կունենայ ազատ աշխատութեան։ Ներկայ գրուածքը բոլորովին զերծ չէ հարկաւ այն թերութիւններից, որոնք յատուկ են իւրաքանչիւր նոր սկսողի՝ ոճի անվարժութիւն, մտքերի հետևականութեան մէջ անհաստատութիւն, աւելորդ կրկնութիւններ ևն. բայց պատմագրութեան համար լաւ ապագայ խոստացող և աւելի կարևոր արժանիք են՝ ուղիղ կշռադատութիւն պատմական եղելութիւնների և փութաջան ճշդութիւն նոցա ժողովելու և դասաւորելու գործի մէջ, և այդ արժանիքն այստեղ չեն պակասում։ Ինչ վերաբերում է հանած եզրակացութիւններին, նոցա իր հաւանութիւնն է տուել գոնէ, մասնաւոր նամակով, այնպիսի մի հեղինակաւոր անձն, որպիսին է ուսուցչապետ Լօօֆսը։ Եւրոպական մամուլի մէջ յայտնուած կարծիքներ դեռ մեզ չեն հասել»։

Տես և Հանդէս Ամս. 1897, էջ 348։

— *Մանրանկարչութիւն* (Miniaturmalerei) *արուեստը Հայոց մէջ* (հրատ. Լուսնայ հանդիսի)։ Թիֆլիս, տպ. Տ. Մ. Ռօտինեանցի, 1902. 7 էջ։

— *Ռոստամ-Զալ, ժողովրդական վէպ* (Մոկաց բարբառով)։ Գրի առաւ Գ. Վ. Յ.։ (Արտատպուած Ազգագրական Հանդէսից)։ Թիֆլիս, Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի, 1905. մեծ. 8°, 39 էջ։

Արարատի մէջ ունի. «Ծրդութի հին աւետարանը», 1898, էջ 519. – «Ժողովրդական բանահիւսութեան հետքեր միջնադարեան տաղարաններում», 1898, էջ 544. – 1899, էջ 44. – «Հայկական տեղեկութիւններ», էջ 151–156. – 208 (Մառի գործոց մասին). – 256 (Մ. Աբեղեանի «Հայոց ժողովրդ. Հաւատքը» ևն մասին). – 1900, էջ 76–84 (Գելցերի «Die Genesis der byzantinischen Themenverfassung» գրքի մասին), 267. – «Անչափահասների ամուսնութիւն» 1900, էջ 64. – «Քահանաների ընտրութեան եղանակը», 101. – «Մայր Աթոռի մատենադարանը», 1901, էջ 18։

Տես և ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ։

ՅՈՎՍԷՓԵԱՆ (Հ. Թէոփիլէ). — *Հատընտիր վարք սրբոց յատոնի եկեղեցւոյ. շարագրեաց Հ. Թ. Աստուածատուր Յ., Մխիթարեան միաբանութենէն*։ Վենետիկ, Ս. Ղազարու վանքը, 1840. 12°, ԺԲ + 638 էջ։

— (Կ.) — «Ժողովրդական բանահիւսութիւն։ 1. Օրօրոցի երգ. 2. Սիրականի երգեր». Բիւրակն 1897, էջ 40. – «Մանկական օրօր». 1898, էջ 134։

— (Ղազարոս քահանայ). — *Քնարիկ մանկական. երգեր, պարերգներ և աղօթքներ փոքրահասակ մանուկների համար*։ Ձայնագրեց Ղ. Ք. Յ.։ (Ներդաշնակեց Մ. Եկմալեանց)։ Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխոդովի, 1887. մեծ. 38 էջ։

«Թիֆլիսցի Արժ. Ղ. Ք. Յ... հաւաքած է ժողովրդական սիրուն մանկական երգեր և յաջողութեամբ ձայնագրած ու դաշնամուրի վերածած է զայնս... Եղանակները շատ անուշ են, մի քանին ժողովրդական զանազան երգերէ փոխադրեալ, մի քանին գերմանական երգերէ, իսկ մի քանին ևս Արժ. քահանային շարադրութիւնն են։ Նօթաները խիստ յստակ տպագրուած են։ Երգերը՝ որք 27 հատ են, կը գտնուին տետրին վերջը». Մասիս 1888, թ. 3907։

Քննադ. Արարատ 1887, թ. 4։ – Մշակ 1887, թ. 31։

— *Ակնարկներ Ուտիացի և Մահմեդական հայերի մասին*։ Թիֆլիս, տպ. «Հերմէս» Ընկ., 1904. 8°, 103 էջ։

Բովանդակութիւն. Ա. Բ. Ուտիացւոց երկրի օդն ու ջուրը. – Գ. Ուտիացւոց պարապմունքները. – Դ. Կանանց պարապմունքները և նրանց վիճակը. – Ե. Ինքնապաշտպանութեան գործը Նուխու գաւառում և Հայ ժողովրդի չաճելու բուն պատճառները Ուտիացւոց աշխարհում. – Զ. Ուտիացի հայերի անձնական յատկութիւններն ու ընտիր սովորութիւնները. – Է. Ուտիացւոց աշխարհի Հայոց բարոյական, կրթական և տնտեսական այժմեան վիճակը. – Ը. Ուտիացւոց աշխարհի արական և իգական սեռի այժմեան հագուստների ձևը. – Թ. Ուտիացւոց երկրի յայտնի վանքերն ու սրբավայրերը. – Ժ. Ուտիացւոց աւանդական հնա-

ւանդ սովորութիւնները. – Ի. (?) Ուտիացւոց հաւատալիքներն ու նախապաշարմունքները. – Լ. Կապպաշտութեան հետքերը Ուտիացւոց աշխարհի Հայերի և Թուրքերի մէջ. – Խ. Մի քանի խօսքեր ուտիերէն լեզուով. – Ծ. Մահմետական Թուրքերը Ուտիացւոց աշխարհում. – Կ. Քրիստոնէութեան հետքերը Ուտիացւոց աշխարհի Հայից դարձած Մահմետականների մէջ և նրանց յարաբերութիւնը իրենց ցեղակից Հայերի հետ. – Հ. Վերջաբան։

Քննադ. Մուրճ 1905, թ. 2–3 (Na.)։

«Դատագիրք հայկական ձայնագրութեան (վիմատիպ) և ձայնագրեալ մանկական երգարան աւանդեալ գրեանց վերայ դատաքննութիւն». Արարատ 1881, էջ 500։

ՅՈՎՍԷՓԵԱՆ (Մարուգէ Ա.) — Ուղղացոյց Ախալցխայի 1873 ամին. գրեց տպագրիչ Մ. Յ.։ Կ. Պօլիս, տպագր. Արամեան, 1873. 8°, 16 էջ։

Քննադ. Տէր Երեմեայի Ախալցխայ գրքին։

Տես և Օրացոյց։

— (Ս.) — Թրքական ձայնագրեալ երգեր. Բ շարք։ Կ. Պօլիս, 1888?

— (Հ. Սարգիս). — Ընդհանուր ցանկ նիւթոց Յիսնամեայ Բազմավիպայ Ա–Ծ. 1843–1893։ Վենետիկ, ի տպ. ի Սրբոյն Ղազարու, 1896. մեծ. 4°, 14 + 96 էջ։

Հրատ. — Տես Թանգարան հին և նոր նախնեաց Ա.։

Յովսէփին պատմութիւնը տղայոց ու պատանիներուն համար շինված։ Ի Զմիւռնիա, ի տպ. ի Կուլիէլմոս Կրիֆիթի, 1842. 4°, 322 էջ։

= Բ տիպ, 1847, էջ նոյն։

Կայ ուրիշ Բ տիպ մը եւս ի Կ. Պօլիս, ի տպ. ի Ա. Յակոբ Պօյաճեան, 1875. 6°, 154 էջ։

= Գ. տիպ, ի Կ. Պոլիս, նոյն տպագր. 1887. էջք նոյն։

ՅՈՐԴԱՆԱՆ (Յ. Տէր Կ.) — Նախակրթարանի ընթերցանութեան։ Տպագրեալ արդեամբք Մանուկ և Յարութիւն ուսումնարանի Բատաւիոյ ի պէտս հայ մանկտւոյն որ ի Ջաւա։ Վիէննա, տպ. Մխիթ., 1896։ Տետր Ա. 8°, 25 էջ. – Բ. 21 էջ. – Գ. 21 էջ. – Դ. 27 էջ. – Ե. 29 էջ։

Յորդոր առ ազգասէրս. – Տես ԳԱԶԱՆՃԵԱՆ (Ս. Արք.)։

Յորդորակ ազգային յառաջադիմութեան. — Տես Ազգային յառաջադիմութիւն։

Յորդորակ առ պաշտօնասիրութիւն սրբոյ Աստուածածնի։ Յորում բացատրին սեփական գերազանցութիւնք նորա առ ի արժանապէս ճանաչել և սիրել զնա և ծառայել նմա։ Համառօտեալ ի գրոց սրբոց հարց՝ աշխատութեամբ աշակերտաց հոգելոյս բարեկիշատակ Հօր Մխիթարայ Բարունապետի և Աբբայի մեծի։ Յաւելեալ ի վերջոյ և գովեստ ինչ ի վերայ սրբոյն Յովսեփայ Աստուածահօր։ Ի Հայրապետութեան տեառն Սիմոնի Հայոց Կաթողիկոսի։ Տպագրեալ յամի տեառն 1776. Եւ ի Թուականութեան Հայոց տոմարի՝ ՌՄԻԵ։ Ի Թրիեստէ։ Ի Տպարանի Միաբանութեան Հարց Մխիթարեանց։ Հրամանաւ և Արտօնութեամբ կայսերական Հրովարտակին։

Յառաջաբանը կ՚ըսէ. «... Կամեցաք զի առաջին պտուղ նորոգ տպարանիս լինիցի ի պատիւ սուրբ աստուածածնին իբր ցոյց երախտագիտութեան մերոյ առ նա վասն այցելութեանն, զոր հաւատամք միջնորդութեամբ նորա արարեալ մեզ աստուծոյ...»։ Եւ ի վերջ կոյս կ՚ըսէ. «Ի վերջոյ յաւելաք զգովեստ սրբոյն յովսեփայ աստուածահօր գլխաւորեալն ի բազմերախտ հայր մատթէոս վարդապետէ մերմէ եւդոկիացւոյ...»։ Հ. Մատթէոսի Վենետիկ տպուած «Հոգեկան բարեբանութեան» գրքէն, «Տասն բանք գովեստից», են, յէջսն 241–278։

Գիրքը միջակ 16°, միջակագիր, գծափակ երեսներով. հասարակ տպագրութիւն. ընդ ամէնը 282 էջ ցանկով միասին։

— Նոյնը փոքր գրիւք, 1776?

Յորդորակ ի վերայ երկրագործութեան, եւն. — Տես ՋՐՊԵՏԵԱՆ (Շ.)։

— մանկանց. — Տես ԲԱՐԴԱՄԵԱՆ (Մ.)։

— յաղագս հաստատելոյ Հայկեան Ճեմարան ի մեծի մայրաքաղաքին Անգղիոյ ի Լոնդոն։ Տըպագրեալ ի տպ. ի Մարդասիրական Ճեմարանի, ի Կալկաթա, ի 1 Հոկտեմբերի, 1825. փոքր 44 էջ։

— քարոզեալ ի ժողովի երիցանց և քարոզչաց աւետարանական Հայոց Խարբերդու։ Կ. Պօլիս, ի տպ. ի Յարութիւն Փափազեան, 1871?

Յուդայի վերջին գիշերը. — Տես ՀԵԲՀԱՐՏ (Է.)։

Յուզման ժամեր. — Տես ՍԵԹԵԱՆ (Յ.)։

Յուլիանէ, ողբերգ. — Տես ՀԷՔԻՄԵԱՆ (Ս.)։

Յուլիոս կամ Հոգեզաւակ. — Տես Մատենադարան մանկանց։

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. — Տես ԿԵՍԱՐ (Կ. Յ.)։

ՅՈՒՆԱՆԵԱՆ (Վ.) թարգմ. — Տես ՊՈՆԱ, «Ջեռբածութիւն»։

Յունաստանի անցեալից. — Տես ԹՈՓՉԵԱՆ (Ե.)։

Յունարէն լեզու. — Տես ԱԶԱՐԵԱՆ (Ա. և Ս.) — Այբբենարան. — Առաջնորդ ընտանեկան. — Զրուցատրութիւն. – Խոսակցութիւն. – Զօղադեան. – Քաղուածոյք ի թարգմանութեանց նախնեաց. — Քերականութիւն։

Յունաց ուսուցիչ Սոկրատէս. թարգմ. ռուսերէնից Տիրուհի Կոստանեանց։ Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի, 1898. 8°, 80 էջ։

Քննադ. Մուրճ 1898, թ. 12 (Ն. Ադ.)։

«Յունաց պանդխտութիւնը». Երևակ 1866, էջ 21։ – Յոյս 1866, 448, 474, 498։

Յուշատետր. — Տես ԳԱԲԱՄԱՃԵԱՆ (Ս.)։

Յուշատետր 1903 տարւոյ։ Կ. Պոլիս, տպ. Մատթէոսեան?

— Յ. Մատթէոսեան 1904 տարւոյ համար (Agenda International), թուրքերէն, հայերէն, ֆրանսերէն և յունարէն լեզուներով?

Յուշերու ծրար. - Տես ՄԵԼԻՔ (*Յարութիւն*)։

Յուշիկներ. — Տես ՊՌՕՇԵԱՆՑ (Պ.)։

Յուշիկք հայրենեաց Հայոց. - Տես ԱԼԻՇԱՆ (Հ. Ղ.)։

Յուշք կամ յիշատակք Լոնտրայի. — Տես ԱՄԻՋԻՍ (Է.)։

Յուսակ. — Ծածկանուն Նաթանեանի «Արեւելք» թերթի մէջ։

ՅՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — Տես ՏԷՐ-ՄՈՎ-ՍԷՍԵԱՆ (Յ. Ե.)։

ՅՈՒՍՏԻ (Փ.) - Պատկանեանի «Recherches sur la formation de la langue arménienne» գրուածքին վրայ մատենագրութեան արժանի քննադատութիւն մը հրատարակած է Göttingische Gelehrte Anzeigen, 1866, էջ 991-1000։

ՅՈՒՍՏԻՆՈՍ (Ս.) — *Սրբոյն Յուստինեայ Պատասխանատուութիւնք առաջին և երկրորդ և Պատմութիւն նորին վկայութեան. թարգմանեաց Հ. Սերովբէ Վ. Տէրվիշեան ի Մխիթ. ուխտէն։* Ի Վիեննա, *ի տպ. ի Մխիթ.*, 1872. ՈՅԻՍ. 8°, 97 էջ։

«Եկեղեցւոյ առաջին դարերուն հին և երևելի սրբոց Հարց մէկուն բովանդակ քրիստոնէութեան մէջ նշանաւոր եղած գրութիւնն է, որ գրաբար ընտիր լեզուաւ կ'ընծայէ թարգմանիչը մեր ազգ. մատենագրութեան։ Այն չքնաղ մատեանը կրնայ թէ իրրև առաջնոյ քրիստոնէից սքանչելի վարուց նկարագիրը թէ իրրև քրիստոնէական կրօնից ճշմարտութեան ցոյցը, և թէ միանգամայն իրրև ժամանակին մատենագրութեան գեղեցիկ ճաշակ՝ օգտակար ըլլալ ամէն տարիքանի կրօնասէր և ուսումնասէր մարդկան». Մասիս 1872, թ. 1249։

ՅՕՀԱՆՆԷՍԵԱՆ (*Արիստակէս*) *խմբագ.* - Տես *Քնար Արեւելեան*։

ՅՕՀԱՆՆԻՍԵԱՆ (Յ. Ս.) *թարգմ.* - Տես *Բանն առ հայկազնեայ քրիստոնեայս*։

Յանձնեանց (Յովհաննէս) և իւր նուէրներ. Արարատ 1874, էջ 383-5։

Ն

Ն. — «Մշոյ Ս. Յովհ. վանքը». Բիւրակն 1897, էջ 27։

Ն. Ա. — Տես ԱԿԻՆԵԱՆ (Եղբ. Ն.) և Յաւելուածին մէջ – (Հ. Ն.)։

Ն. Ա. թարգմ. — Տես Ի՞նչ է կայծակը։

Ն. (Կ. Բ.) — Տես ՆՈՒՐԻՃԱՆ (Բ. Կ.)։

Ն. Շ. Տ. — Տես ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆ (Օր. Շ.)։

Ն. (Ս.) — «Սիփան գաւառակ. Մխիթարչին». Բիւրակն 1899, էջ 362, 543. – «Նախապաշարումներ, գուշակութիւններ և սովորութիւններ Սղերդի մէջ ու շրջակայքը». էջ 455, 614։ – «Պատասխան երկու հարցումներու», 633. – «Ագամամութ», 668. – «Ճկուրը և Մեծ Պաքի երկուշաբթին Սղերդի մէջ». 1900, էջ 357։

ՆԱԲՈԼԷՈՆ (մեծն). — Տես ՆԱՓՈԼԷՈՆ։

ՆԱԴԻԺԻՆ. — «Խոստովանութիւն» (զրոյց). թարգմ. Վ. Քեմեչեճեան. Լումայ 1904, թ. 2, էջ 212-220։

ՆԱԴՍՕՆ. — «Խաւարում» (քերթ.) թրգմ. Մ. Տարախճեան. Բազմավէպ 1904, էջ 457. – «Պօէտ», թրգմ. նոյն. 458։ – Լումայ 1900, Ա. 232. – 1902, թ. 6. – 1903, թ. 2, «Լեզու», թրգմ. Խաչունի։ – Հանդէս Ամսօրեայ 1889, էջ 119, «Ընկեր իմ». – «Վիշտ», թրգմ. Ե. Մ.։ – Հանդէս գրականական եւ պատմական Ա գիրք 1888, էջ 205, «Ձեր աղօթում», թրգմ. Պ. Հ. Ադամեան։ – Հորիզոն 1894։ – Մուրճ 1889, թ. 9, «Եթէ սիրում ես...», թրգմ. Ջ. Բալուղեանց. – 1894, թ. 7–8, «Հասել է ժամը...», թրգմ. Ա. Ծատուրեան. – թ. 9, «Աշնան առաւօտ», թրգմ. նոյն. – 1897, թ. 2–3, «Քրիստոնէուհի» (պօէմա), թրգմ. Յ. Տէր-Գէորգեան։

ՆԱԶԱՐԲԷԳ. — Տես ԼԵՌԵՆՑ։

ՆԱԶԱՐԵԱՆ, ՆԱԶԱՐԵԱՆՑ (Գէորգ). — Տես ԳԵՂԱՄԵԱՆՑ (Գ. Ն.) Յաւելուած։

— (Թովմաս Քահ.) թարգմ. — Տես ԿԱՅԴԱՆՈՎ (Պր. Յ.)։

— (Թորոս). — Հաւաքածոյք յընտիր մատենագրաց ի պէտս ազգային վարժարանաց, յորում պարունակին հանդերձ ծանօթութեամբք ազգի ազգի ընտրելագոյն հատուածք ի նախնի և յարդի հեղինակաց կամ թարգմանչաց, արձակ և չափաւ։ Հատոր Ա–Բ։ Տպագրութիւն Ա. Ն. Շահնազարեան ի Խասգիւղ Կ. Պօլսոյ, 1870. 8°, 470 էջ։

Կան մէջը կտորներ Աւետարանէն, Գործք Առաքելոցէն, Աստուածաշնչէն, Թէոփրաստէն, Եզնիկէն, Ոսկեբերանի Պօղոսի թղթոց մեկնութենէն, նոյնին Մատթէի մեկնութենէն, նոյնին Ճառերէն, Մախլեոնի փոքր Քառասնորդքէն, Ոսլենի Հնախօսութենէն, Կիկերոնէն, Եղիշէէն, Խորենացիէն, Գրիգոր Նարեկացիէն, Շարականէն։ Հատոր Բ. Ոտանաւոր, Բաղրատունիէն, Հիւրմիւզէն, Վիրգիլէն, Ալիշանէն, Շարականէն, Լամարդինէն, Միլտոնէն, ևն։

«Նազարեան (Թ.) դպրոց». տես Երկրագունտ 1863, էջ 40, 45, 72, 207։

— (Յովհաննէս-Մարկ. - Էմմանուէլ քահանայ). — Անեկդոտներ. հատոր I. (Ա. գործ)։ Բագու, ի տպ. ի Ա. Ղասաբեանցի, 1876. 8°, 223 էջ։

Քննադ. Փորձ 1876, էջ 384 (Գրիշ)։

— Հատոր II. Տփխիս, տպ. Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877. 8°, 153 էջ։

— Հատոր III. Թիֆլիս, Մ. Վարդանեանի և Ընկ. տպարանում, 1883. 8°, 256 էջ։

Քննադ. Արձագանք 1883, թ. 27։

— Նախապաշարմունք. հատոր I. (Բ. գործ)։ Տփխիս, Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան, 1878. 8°, XII + 84 էջ։

— Հայոց լեզուի ուսուցիչ ազգային դպրոցների համար։

Երկրորդ տարի, Ա տիպ, Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեան և Ընկ., 1882. 8°, 102 էջ?

Քննադ. Արձագանք 1882, թ. 32։ Ասոր դէմ Մեղու 1882, թ. 129. – Վերջնոյս դէմ Արձագանք, թ. 42, – Մշակ 1882, թ. 168։

= Բ տիպ (հիմնովին փոփոխած)։ Թիֆլիս, Յովհ. Մարտիրոսեանցի տպարան, 1888. 8°, 144 էջ։

Քննադ. Մշակ 1888, թ. 101։

— Երրորդ տարուայ դասագիրք. Ա տիպ. Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեանի, 1881. 124 էջ։

= Բ տիպ, անդ, տպ. Մ. Վարդանեան և Ընկ., 1882. 154 էջ։

= Գ. տիպ, անդ, տպ. Լ. Գ. Կրամարէնկօ, 1885. 144 էջ։

= Դ. տիպ, (բարեփոխած)։ Անդ, տպ. Մ. Շարաձէ, 1892. 8°, 141 էջ։

— Չորրորդ տարուայ դասագիրք. Ա. տիպ. Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեանի, 1881. 216 էջ։

Քննադ. Մշակ 1881, թ. 151։

= Բ. տիպ, անդ. տպ. Լ. Գ. Կրամարէնկօ, 1884. 264 էջ։

= Գ. տիպ, անդ, տպ. Յ. Մարտիրոսեանի, 1888. 306 էջ։

Քննադ. Մշակ 1888, թ. 101։

= Դ. տիպ, անդ, տպ. Մ. Շարաձէ, 1892. 312 էջ։

— Ընտիր հատուածներ (Քրեստոմաթի) հայ դպրոցների համար։ Ա. մասն Արձակ։ Թիֆլիզ, տպ. Լ. Գ. Կրամարէնկօ, 1883. 8°, 470 էջ?

= Բ. տիպ, անդ, տպ. Յ. Մարտիրոսեանի, 1889. 8°, 504 էջ?

Քննադ. Արձագանք 1889, թ. 4։ – Մշակ, թ. 4։ – Մուրճ, թ. 2։

= Գ. տիպ, անդ, տպ. Մ. Շարաձէ, 1892. 608 էջ?

= Դ. տիպ, անդ, տպ. նոյն, 1899. 8°, 475 էջ։

— Բ. մասն՝ Բանաստեղծութիւններ ։ Անդ, տպ. Լ. Գ. Կրամարենկոյ, 1884. 8°, 475 էջ։

— Հայոց առաջին ընդհանուր Ուսուցչական ժողովի պատմութիւնը, արձանագրեց Յ. Ն.։ Թիֆլիս, տպ. Մովս. Վարդանեանի և Ընկ., 1883. 8°, 170 էջ.

Քննադ. Արձագանք 1883, թ. 30, 31։

— Նոր-Տարւի առթիւ երկու խօսք. գրեց մի հայ մարդ։ Թիֆլիս, տպ. Կրամարենկոյ, 1884. 8°, 24 էջ։

— Համառօտ քերականութիւն աշխարհիկ լեզուի։ Մասն առաջին, Նախադասութիւնք և Մասունք բանի. (Հրատ. Կովկաս. Գրավաճառանոցի – Զ. Գրիգորեանցի)։ Թիֆլիս, Մ. Ռոտինեանցի տպարան, 1887. 8°, 54 էջ։

Քննադ. Մշակ 1886, թ. 138։

— Յիսուս Քրիստոսի մկրտութիւնը (ժողովրդական ընթերցանութեան համար)։ Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէ, 1892. 8°, 36 էջ։

Քննադ. Արձագանք 1892, թ. 146։

— Չարչարանքի շաբաթը (ժող. ընթ. համար) վեց պատկերով։ Թիֆլիս, տպ. նոյն, 1894. 8°, 77 էջ։

Քննադ. Արձագանք 1895, թ. 26։

— Պարզ քարոզներ (ժող. ընթ. համար)։ Առաջին գրքոյկ, տպագրեալ ծախիւք Մանուկ Աղայի Կարապետեանց Տէրիմ Օղլուեանց, Արմաւիրցի։ Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, 1895. 8°, 75 էջ։

— Երկրորդ գրքոյկ. նոյն տպագր. 1896. 92 էջ։

= Բ. տիպ, նոյն տպագր., 1898. 91 էջ։

— Երրորդ գրքոյկ, նոյն տպ., 1896. 8°, 120 էջ։

— Չորրորդ գրքոյկ անդ, 1897. 110 էջ։

— Ոտանաւորներ (երեխաների համար), 15 պատկերով։ Մոսկուա, տպ. Ք. Բարխուդարեանի, 1903։ 8°, 71 էջ։

Քննադ. Արարատ 1903, թ. 1։ – Լումայ 1903, թ. 1։ – Հանդէս Ամսօրեայ 1903, թ. 6։ – Մուրճ 1902, թ. 2 (Տ. Յ.) – Տարազ 1902, թ. 50։

— Լեզուի հարցը. Ա. Մաս. – Հանուր հայեացք։ Մոսկուա, տպ. Ք. Բարխուդարեանցի, 1904. 8°, 98 էջ։

Բովանդակութիւն. Առաջաբան. – Ներածութիւն՝ ա. Լեզուի նշանակութիւնը. բ. Մեր լեզուի մասին առհասարակ. I. Գրաբարի ու աշխարհաբարի հարցը. II. Լեզուն մաքրելու ջանքեր. III. Լեզուն ընտանիքում ու դպրոցում. IV. Լեզուն պարբերական մամուլի մէջ. V. Լեզուն ոչ-պարբերական մամուլի մէջ. ա. Ինքնուրոյն գրուածքներ. բ. Թարգմանութիւններ. VI. Մեր լեզուաշէնները ու լեզու տարածողները։

Քննադ. Տարազ 1904, թ. 24։

Թարգմ. – Տես ՄԷՆՋԻՍ (Ա.) — ՎՈԽՋԷՏԻՉ (Ն.) — Պօղոս խմկերիայ։

Տես և Օրացոյց։

ՆԱԶԱՐԵԱՆՑ ՍՏԵՓԱՆՈՍ. — Бѣглый взглядъ на исторію Гайканской Литературы до ктнца 13 столѣтія. Адьюнкта С. Назаріанца. — Ученыя Записки, издаваемыя Императорскимъ Казанскимъ Университетомъ, 1844, книжка I, էջ. 46–95.

Լէօ՝ իր Ստեփանոս Նազարեանց երկին մէջ (Ա. հատ.) կը գրէ այս գործին առթիւ. «1843 թուականին Ստեփանոս Նազարեանց պրոֆէսորական մի շրջանի մէջ կարդաց մի համառօտ զեկուցում հայոց հին գրականութեան մասին։ Յաջորդ տարին այդ աշխատութիւնը հրատարակվեց համալսարանի պաշտօնական օրգանի մէջ, ուր տպագրվում էին պրոֆէսորների աշխատասիրութիւնները, առանձնապէս արեւելագիտութեան վերաբերվածները։ Սա Նազարեանցի առաջին տպագրած աշխատութիւնն է, որ գրաւում է 49 փոքր ութածալ երես։ Նրա վերնագիրն է. Համառօտ ակնարկ Հայկական գրականութեան վրա մինչեւ 13 դարի վերջը։ Գրուածքը բոլորովին համապատասխանում է վերնագրին, չունի մի գիտնական հետազօտութեան հանգամանքը։ Կասենք աւելին. դա նոյն իսկ մի ինքնուրոյն գործ չէ, այլ վերցրած է Հ. Սուքիաս Սոմալեանի գրած հայոց գրականութեան համառօտ պատմութիւնից, որ հրատարակվեց Վենետիկում, իտալերէն լեզուով, 1829 թւին»․ էջ 120–121։

— Обозрѣніе Исторіи Гайканской письменности въ новѣйшія времена. Разсужденіе, писанное для пріобрѣтенія степени магистра армяно-персидской словесности кандидатомъ философіи Степаномъ Назарянцемъ. Казань, въ типографіи Императорскаго Казанскаго Университета. 1846. էջ. 158.

Տպված է նոյն «Ученыя Записки»-ի մէջ։ Առանձին գրքոյկով հրատարակված է նոյն թւին Կազանում։

Գրքի սկզբում գրված են հետեւեալ նուէրները. 1. Առ Վեհափառ Կաթողիկոս ընդհանուր Հայ-

կակաճայ սեռից Տէր Տէր Ներսէս Խոճական Առաջնորդ Արամեան ազգի և Վեհանձն Պաշտպան գիտութեանց նուէր պատկառ ի հեղինակէն։

2. Великтдушнымъ благотворителямъ своимъ Ивану Якимовичу, Христофору Якимовичу, Лазаревымъ, какъ памятникъ любви, уваженія и признательности, посвящаеть авторъ. Մեծանուն բարերարաց Յովհաննու Յովակիմեան, Քրիստափորի Յովակիմեան, Ղազարու Յովակիմեան Լազարեանց սիրոյ, յարգանաց և երախտագիտութեան յիշատակ կը նուիրէ հեղինակը։

3. Высоко-уважаемому Академичексмоу наставнику евоему и другу, господину статскому совѣтнику и профессору Блуму (Թարգմանը ինչպէս նախընթացում)։ Իր ուսուցիչ և բարեկամ մեծարգոյ Ակադեմիական և տէրութեան խորհրդական Պրոֆէսոր Պլիւմին, եւն։

4. Незабвенному благтдѣтелю своему и другу Фридриху фонъ-Швебсу (Թարգմանը ինչպէս նախընթացում)։

«Այս վերջինը, «իր անմոռանալի բարերար և բարեկամ» Ֆրիդրիխ Ֆօն-Շվէբս, անշուշտ, այն գերմանացին է, որի օգնութեամբ և ծախսով Նազարեանցը գնաց Դօրպատ (տ. Հատ. I, եր. 63–64)։ Մենք գրել ենք Շվէբս, ինչպէս գրված էր այն ագրիրի մէջ, որից մենք օգտվել ենք. ուրեմն, պէտք է ուղղել այդ անունը և գրել ոչ թէ Շվէբս, այլ Շվէրս»։ Լէօ, անդ։

Լէօ կը գրէ. «1846 թուականին Նազարեանցը ներկայացրեց Կազանի համալսարանին իր գրած դիսերտացիան՝ հայ-պարսկական դպրութեան մագիստրոսի աստիճան ստանալու համար։ Դա հայոց գրականութեան պատմութեան երկրորդ մասն է, 14–րորդ դարի սկզբից մինչև 1840–ական թուականները։ Երկրորդ մասը չէ էլ կարելի համեմատել առաջին մասի հետ, այնքան հապճեպական է կազմված, աւելի մշակված, աւելի ընդարձակ. դա իսկ ոչ մի քննական տեսութիւն է։

Եւ այսպէս, իր երկու աշխատութիւններով Նազարեանցը տուեց մեր գրականութեան ամփոփ պատմութիւնը, առաջին փորձ ռուսերէն լեզուով։ Մեզ համար, ի հարկէ, այնքան մեծ չէ այդ նշանակութիւնը, որքան այն, որ Նազարեանցը նորագոյն պատմութեան մէջ գրել է իր հոգին, իր դաւանանքները, իր ամբողջ ծրագիրը։ Իբրև մի գիտնական աշխատութիւն, այս պատմութիւնը գուցէ այնքան արժէք միայն ունենայ, որ առաջին է ռուսերէն լեզուով հայոց գրականութեան պատկերը յաջորդաբար, դարից դար։ Բայց նա մեզ համար շատ կարևոր է այն հայեացքների պատճառով, որ յայտնում է Նազարեանցը։ Այստեղ մենք մի չոր ու ցամաք գիտնական հետազօտութիւն չենք գտնում, այլ հրապարակախօսի լայն, վառվռուն սիրտ, որ դուրս է գալիս նիւթի նեղ սահմաններից, քարոզում է իբրև նոր ժամանակի մարգարէ։ Այստեղ Նազարեանցը մեր առաջին գրական քննադատն է, որին զինավառում են հասարակական որոշ իդէալներ։ Եւ որովհետև այդ գիրը Նազարեանցի ամբողջ գործունէութեան հիմնաքարն է, մենք պարտաւոր ենք հէնց այժմից, առաջին քայլից, մանրամասն կերպով ծանօթանալ նրա հայեացքների հետ։ Չը մոռանանք և մի շատ կարևոր հանգամանք. այս գործից ճանաչեցին հայերը Նազարեանցին. այս գործն էր, որ յայտնի դարձրեց նրա անունը, կրքեր ու թշնամութիւն յարուցեց մեր հին սերունդի մէջ»։ Անդ, էջ 128-30։

— Абулъ-Касемъ Фердауси Тусскій, творецъ Книги Царей, извѣстной подъ названіемъ Шахъ-Намэ. Съ присовокупленіемъ краткаго обзора исторіи персидской поэзіи до исхода XV столѣтія по Р. Х. — Сочиненіе доктора Восточной Словесности Степана Назарянца. Книжка первая. Казань, 1849, въ типографіи Университета. էջ. 4+104.

— Նոյնը — Книжка вторя. էջ. 2+94.

Լէօ կը գրէ. «Հայկական գրականութեան նուիրված ուսումնասիրութիւնից յետոյ Նազարեանցը սկսեց պատրաստել մի նոր դիսերտացիա՝ արևելեան լեզուների դոկտորի աստիճան ստանալու համար։ Դիսերտացիայի պաշտպանութիւնը տեղի ունեցաւ 1849 թուի սկզբում և Նազարեանցը ստացաւ դոկտորի աստիճան. իսկ դիսերտացիան տպվեց Կազանում նոյն թուին։

Այս անգամ Նազարեանցը իր ուսումնասիրութեան առարկան էր դարձրել հայերի դրացի, հայերի վրա դարերի ընթացքում ահագին ազդեցութիւն արած պարսիկների գրականութիւնը։ Նա վերցրել էր միայն պարսկական բանաստեղծութիւնը. գլխաւոր նիւթն էր աշխարհահռչակ Ֆիրդուսին և նրա անմահ «Շահ-Նամէն»։ Բայց այդ առիթով նա տալիս էր և պարսկական բանաստեղծութեան համառօտ պատմութիւնը ամենահին, մազդեզական ժամանակներից մինչև XV դարի վերջը։

Մի կողմ թողնելով այդ ուսումնասիրութեան բովանդակութիւնը, որ ինքն ըստ ինքեան հետաքրքրական է իբրև մի անծանօթ գրականութեան պատմութիւն, մենք, Նազարեանցի աշխարհայեացքները պարզելու համար, երկու խօսք կասենք նրա ներածութեան մասին։ Այդտեղ հեղինակը փառաբանում է XIX դարի լայն մարդկայնական ոգին։ Նա ասում է թէ այժմ այլ ևս այն ժամանակը չէ, երբ համաշխարհային պատմութիւնը արհամարհում, անտես էր անում եւրօպական աշխարհից դուրս գտնվող ազգերը, կարծես թէ դրանք գիտութեան ուշադրութեան անարժան բաներ են, մարդկութեան կորած զաւակներ։ Գիտութիւնը ամբողջ մարդկութեան է պատկանում և մարդկային բոլոր ցեղերը պիտի տեղ ունենան նրա մէջ, գրաւեն նրա ուշադրութիւնը։ «Արևելեան քաղաքակրթութեան անսահման գոյնզգոյն» պատկերներից մէկը այդ համամարդկային ոգուն իր կարողութեան չափով ներկայացնելու համար էլ Նազարեանցը գրել է իր այդ աշխատութիւնը»։ Անդ, էջ 167–9։

«Ա. Երիցեան («Փորձ» 1879, N. XI) և Ա. Շահազիզ («Հրապար. Ձայն», եր. 23) ասում են որ սա նոյն գիրքն է մի քանի փոփոխութիւններով։ Բայց դա սխալ է. այս 4–րորդ աշխատութիւնը երրորդի շարունակութիւնն է, նրա երկրորդ մասը։

— Ստեփաննոսի Նազարեանց Վարդապետի Արևելեան Լեզուագիտութեան Յաղագս փորձական Հոգեբանութեան Ճառ. Quem te Deus esse jussit et humana qua parte locatus es in re, disce. Persius. Որպիսի հրամայեցար լինել յԱստուծոյ և յորում մարդկեղէն կարգի զետեղեալդ իցես ի բնաւս, ուսի՛ր։ Պերսիոս։ Ի Մոսկվա, ի տպարանի Վօլդէմար Կօթիէ Ֆրանսիացւոյ, 1851։

Յէջն 2՝ Հրամանագիր տպագրութեան, ստորագրութեամբ «Թեմական Առաջնորդ նոր Նախիջևանայ և Բեսարաբիոյ հայոց Արք Եպիսկոպոս Մատթէոս»ի։

Յէջն 3՝ «Բարեբանեալ յիշատակի Վլադիմիրի եղելոյ մանկանն – Յովհաննու Խաչատրեան – Լազարեանց – ի Հեղինակէս – Նուէր։

Եւ յէջն 4՝

Յաւերժացեա՛լ դու

Բայց յաջողիլ թէ ոչ շնորհեաց
Ա՛ռ կենդանեօքդ ըզՔեզ պաշտել.
Ի Քոյդ շիրիմ տուրք արտասուաց
Թողցի՛ գայս իմ երկ նուիրել։

Յետոյ Յառաջաբան 4^{0}, էջք ա–իը + 1-80։

Լէօ կը գրէ. «Դեռ 1847-ին նա պատրաստել էր մի գրուածք հոգեբանութեան մասին։ Դառնացած այն վառ, նոյն իսկ թշնամական ընդունելութիւնից, որ գտաւ նրա հայկական գրականութեան պատմութիւնը, նա ուղարկեց իր այդ աշխատութիւնը Շահխաթունեան եպիսկոպոսին իբրեւ նուէր, ափսոսալով որ այդ բանը գրել է հայերի համար։ Սակայն Մօսկվայում նա անհրաժեշտ պէտք է զգում գրել այդ իսկ հայերի համար. ուստի հարկաւոր է համարում հրատարակել ամենից առաջ այդ իսկ «Հոգեբանութիւնը», աւելացնելով մի ընդարձակ առաջաբան։ Այդ առաջաբանն աւելի խիստ էր քան Կազանում հրատարակած ռուսերէն գիրքը. նոյն ցաւեցնող հարցերն էին լեզուի, նոր գրականութեան, առաջադիմութեան մասին։

Փորձով գիտէր Նազարեանցը, թէ ինչ տրամադրութիւն է տիրում հայ գիտունների մէջ իր այդ հայեացքների վերաբերմամբ, ուստի միջոցներ է ձեռք առնում, որ այդ աշխատութիւնը կարելի լինի անփոփոխ հրատարակել. Տպագրելու թոյլտուութիւն պէտք էր առնել հայոց թեմական առաջնորդից։ Նազարեանցը ուղարկում է ձեռագիրը Պետերբուրգ, այնտեղի հոգեւոր կառավարութեան գլխաւոր Եփրեմ վարդապետին, որ իր բարեկամն էր և խնդրում է նրա հոգացողութիւնը։ «Թէեւ, ասում է նա, խնդիրքի և պատասխանքի տեղ չը կայ այնտեղ, ուր խօսում է անկաշառ արդարութեան բերանը, բայց մեր հայերի մէջ միշտ անդուրեկան են արդարախօսի խօսքերը, նախամեծար պաշտվում և վարձատրվում են կեղծաւորութիւնը, ստախօսութիւնը և չողոքորթութիւնը, մինչդեռ արդարախօս ու ճշմարիտ ազգասէրը ոչ միայն անվարձ է մնում, այլ և բամբասվելով, հալածվելով և անարգվելով դատապարտվում է»։ Ուրեմն և հարկաւոր է բարեկամների պաշտպանութիւնը, որ ճշմարտութիւնը գտնէ հրապարակ դուրս գայ, որպէս զի ընթերցողներին մնայ նրան ընդունելը կամ չընդունելը։ «Ինչ խօսել իմ առաջաբանի մէջ, մերոյիններից շատերի սուտ անձնասիրութիւնը պիտի խոցուէ – շարունակում է Նազարեանցը նոյն նամակի մէջ. – բայց մեր խիղճը անարատ է Աստուծու և մարդկանց առջեւ. ինչ ասել եմ, ազգը սիրելով և նրա բարին ցանկալով եմ ասել և ոչ թէ թշնամի լինելով նրան»։

Հէնց այդ իսկ առաջաբանը փրկելու համար էր, որ Նազարեանցը իր ձեռագիրը ուղարկեց Խաչատուր Լազարեանցին, խնդրելով նրա աջակցութիւնը։ Այդ իսկ պատճառով էր, երեւի, որ գիրքը նուիրված էր Լազարեանի փոքրիկ որդի Յովհաննէսին, Լազարեանների վերջին ժառանգին, որ վախճանվել էր մանուկ հասակում, սաստիկ վիշտ և յուսահատութիւն պատճառելով ծնողներին։ Լազարեանի անունը, վախճանված մանուկի յիշատակին նուիրված ուղերձը, որ գրել է Նազարեանցը իր գրքի սկզբում, ապահովութիւն էին որ աշխատութիւնը հոգեւոր իշխանութեան գրաքննութեան կողմից վտանգի չէր ենթարկվի։ Գլխաւորը, ի հարկէ, բուն «Հոգեբանութիւնը» չէր, այլ առաջաբանը։ Ինքը Նազարեանցն էլ խոստովանում է այդ։

Արգելքներ չեն լինում, գիրքը թոյլատրվում է ամբողջովին և 1851 թուականին Մօսկվայում լոյս է տեսնում Նազարեանցի առաջին հայերէն աշխատութիւնը, մանր տառերով տպած մի բարակ գիրք, «Յաղագս փորձական Հոգեբանութեան Ճառ» վերնագրով։

Առաջին բանը, որ զարմացնում է մեզ այդ գրքի մէջ, այն է որ նա գրված է մի ծանր, արհեստական գրաբարով։ Նազարեանցը գրաբարով էր հանդէս գալիս. առաջաբանն էլ, որ աշխարհաբարի դատն է պաշտպանում, գրաբար է։ Ինչու է այդպէս։ Նազարեանցը շտապում է պատասխանել թէ ինչու։ Նա կամեցել է ցոյց տալ հայերին թէ ինքն էլ գիտէ գրաբար։ Ահա՛ ինչու է գրաբարը ընտրել՝ հայերին հոգեբանութեան պէս մի առարկայի հետ ծանօթացնելու համար։ Սխալվել էր Նազարեանցը։ Հէնց առաջին քայլից նա սխալ էր գործում։ Նա գրաբարից քննութիւն էր տալիս հասարակութեան, և ահա գտնվեցան մարդիկ, որոնք ցոյց տուին թէ նա, ճիշտ որ, չը գիտէ գրաբար լեզուն, այսինքն այնպէս չը գիտէ, ինչպէս գիտեն նրանք, որոնց նա տգէտ էր անուանում։

Պէտք է, իհարկէ, հաւատալ Նազարեանցի անկեղծութեան։ Բայց մենք, հեռուից դիտողներս, տեսնում ենք և ուրիշ պատճառ, որ գուցէ նա չէր էլ զգում։ Բանն այն է, որ Նազարեանցը, պաշտպանելով աշխարհաբարի դատը, ինքը չէր գործ ածում աշխարհաբարը. նրա բոլոր, մեզ յայտնի, նամակները մինչեւ 1850-1852 թուականները գըրված են գրաբար լեզուով։ Եւ եթէ մենք ուզում ենք հասկանալ այս տարօրինակ երեւոյթի պատճառը, պէտք է դիմենք իրան, Նազարեանցին։ Նա մեզ ասում է թէ առաջադիմութիւնը թռիչքներով չէ կատարվում։ Ահա այդ նոյն օրէնքն էլ խօսում էր նրա մէջ։ Ժամանակի ոգուց, նախապաշարմունքներից միանգամից չեն ազատվել մեր առաջին գրական գործիչները։ Նալբանդեանը, Գամառ–Քաթիպան էլ գրաբար են գրել, լաւ զգալով որ դա չը պիտի լինի իրանց լեզուն։ Հետաքրքրական է, որ Միքայէլ Նալբանդեանն էլ գրել է մի գրաբար «Ճառ»՝ աշխարհաբար լեզուի առաւելութիւնները և իրաւունքները ցոյց տալու համար[1]։

«Փորձական Հոգեբանութիւնը» մի համառօտ կոմպիլյացիա է զանազան հեղինակներից։ Փոքրիկ, սեղմված հոգեբանութիւնը, գրաբար անմարս ոճով գրված, ապահովապէս անհասկանալի պիտի մնար բազմութեան համար։ Նազարեանցը, ժողովրդի մտաւոր շահերը պաշտպանելով, ժողովրդական գրականութիւն պահանջելով, այդ գրքով գալիս էր ցոյց տալու թէ ամենից առաջ ինքը չէ հասկանում թէ ինչ պահանջներ ունի ժողովուրդը։ Մի քանի խելօք բան, օրինակ մայրենի լեզուի նշանակութեան մասին, կարելի էր, իհարկէ, քաղել այդ գրքից։ Բայց ո՞վ էր պիտի քաղէր։ Գրաբար իմացողները, այսինքն, ինչպէս ինքը, Նազարեանցն էր ասում, մի փոքրիկ դասակարգ։

Բայց թողնենք բուն գիրքը. բաւական է և այն, որ կազմողը խոստովանում է թէ իր աշխատութեան օգուտը և կարեւորութիւնը այնքան հոգեբանութեան մէջ չէ, որքան առաջաբանի մէջ։ Դիմենք այդ առաջաբանին։

Նազարեանցը իրաւունք ունէր զգուշութիւններ ձեռք առնելու, ազդեցիկ միջնորդներին դիմելու՝ այդ առաջաբանը անվնաս պահպանելու համար։ Այդտեղ Նազարեանցը առաջին անգամ բռնում է յարձակողական դիրք. այդ առաջաբանը նրա առաջին բանակռիւն է հակառակորդների դէմ։ Դա մի

1. «Հանդէս Գրականական և Պատմական», 1895, թ. 6։

ամբողջ մեղադրական ճառ է, որ շպրտվում էր կեղծ, անգործ, ինքնագոհ ազգասէրների դէմքին։

Վէճը բորբոքվում է նույն հիմնական հարցի շուրջը – աշխարհաբարը իբրև ժամանակակից գիտութեան և կրթութեան գործիք, գիտակցական վերանորոգում կենդանի լեզուի միջոցով։ Այդ հարցին մենք այլ ևս չենք դիմի, քանի որ մանրամասն խօսել ենք նրա մասին վերևում։ Հետաքրքրականը այստեղ ինքը, վէճն է։ Կաշկաս լրագրի 1850 թվականի համարներից մէկում Սլիվիցկի անունով մէկը աշխատում էր ջրել Նազարեանցի հայեացքները գրաբարի մասին։ Սլիվիցկի, թէև օտարազգի, հայկական պահպանողականութեան գաղափարների արտայայտիչն էր և նրա բերանով խօսողները հայ գրաբարեաններն էին։ Եւ ինչ էր ասում այդ բերանը։

Իզուր են կարծում, ասում էր Սլիվիցկի, թէ գրաբարը մեռած է. այդ մշակված, հարուստ լեզուն կարող է և գործածական դառնալ։ Ապացոյց՝ Կալկաթայի հայոց դպրոցը, որի շնորհիւ Կալկաթայի հայերի բարձր դասակարգի գործածական լեզուն գրաբարն է։ Իզուր են ասում նոյնպէս թէ գրքերը ժողովրդի համար չեն, որովհետև գրված են գրաբար լեզուով։ Այստեղ Սլիվիցկի հիացած է հայ ազգի վրա։ «Ուր որ ապրում են հայերը, այնտեղ երևան է գալիս նրանց ինքնուրոյն ազգային բնաւորութիւնը, որի բնորոշ յատկութիւնն է առևտրական և մտաւոր գործունէութիւնը»։ Հիացած է նա մանաւանդ այն սիրոյ վրա, որ հայն ունի դէպի իր գրքերը։ Կիսագրագէտ մանրավաճառն անգամ, ասում է նա, գնում է հայերէն գրքեր, դարսում է իր տանը։ Հարցնում էք թէ ինչ գրքեր են սրանք. և հայը խորին ակնածութեամբ ասում է. սա Մովսէս Խորենացին է, սա Չամչեանն է, սա Եղիշէն է։ Ի՞նչ է պակասում հայերին։ – Ըստ երևոյթին, ոչինչ. նրանք երևելի վաճառականներ են, ունեն բարեկարգ դպրոցներ Կալկաթայում, Վենետիկում, ունեն տպարաններ, գրքեր։

Նազարեանցը խիստ, կծու պատասխաններ է տալիս հակառակորդին։ Այդ պատասխանների մէջ կան մտքեր, խրատութիւններ, որոնք առաջին անգամ էին մատուցվում հայերին իբրև դառն դեղահատներ։

Հնդկաստանցի հայերի վերաբերմամբ նա ասում է թէ այդ մի բուռն գաղթականութիւնը չէ կարող օրինակ դառնալ. եւրոպական գիտութեան ապացուցած ճշմարտութիւններին պէտք է հաւատալ և ոչ թէ Կալկաթայի հայերին։ Ո՞ւր է այդ հայերի լուսաւորութիւնը. ո՞ւր են այն գիտնական մարդիկը, որոնց որպէս թէ պատրաստել է Կալկաթայի դպրոցը»։ Անդ, էջ 172, ևն։

— Ստեփանոսի Նազարեան Վարդապետարան Կրօնի Հասարակաց Հայախօսութեամբ։ Մասն Առաջին, որ պարունակումէ իւր մէջ ա. Քրիստոնէական հաւատի ուսումն. բ. Քրիստոնէական բարոյականութիւն. գ. Սուրբ պատմութիւն։ Եթէ դուք հաստատուն կը մնաք իմ բանի վերայ, ճշմարիտ աշակերտք էք ինձ. և կը ճանաչէք ճշմարտութիւնը, և ճշմարտութիւնը կ'ազատէ ձեզ։ Յովհաննու 8, 31–32։ Մոսկվայի մէջ Լազարեանց Քաջափայլ պարոնների տպարանումը, 1853. 8°, 5–10 Յառաջաբան. 11–256 բնագիր. 257–264 բովանդակութիւն։

Յէջն 2 Հրամանագիր տպագրութեան Մատթէոս Արք Եպիսկոպոսի։

Յէջն 3. «Աստուծոյ Ամենակալի փառքին իւր Սրտի Ծունրը խոնարհեցուցանելով Նուիրումէ Հեղինակը»։

Քննադ. տես ԱՐԱՐԱՏԵԱՆ (Աստ.), «Սխալանք Վարդապետարանին Կրօնի»։ Եւս՝ Փորձ 1881, թ. 5–6 (Ա. Երիցեան)։ Լէօի գրքին մէջ Ա հատ. 183–200։ – Տես ևս Հանդէս գրակ. եւ պատմ. 1896, էջ 317–321, «Պատճէն խնդրագրոյ Հայոց առ Մատթէոս կաթողիկոս ի մասին «Հիւսիսափայլ» օրագրի 1860, թ. 10 Համարոյ և «Վարդապետարան» գրոցն»։

— Առաջին Հոգևոր Կերակուր հայազգի երեխաների համար. Ստեփանոս Նազարեան Վարդապետի Աշխատասիրութիւն։ Մոսկվա քաղաքի մէջ, Վօլդեմար Գօթիէ Ֆրանսիացոյ տպարանումը, 1853. 103 էջ?

«Հայոց մանուկներին՝ Գաւիթ Թամամշեան, Ագաթոն Ակիմեան և Յովհաննէս Յօնանեան բարձրապատիւ Պարոնների կողմից սիրողաբար պարգև»։

Լէօ կը գրէ. «Նոյն 1853 թվին Նազարեանցը հրատարակեց իր «Առաջին Հոգևոր Կերակուր» անունով աշխատութիւնը։ Դա առաջին աշխարհաբար դասագիրքն է մեզանում[1], սկսվում է այբբենարանով և պարունակում է իր մէջ երեխայի առաջին տարիների ընթերցանութեան նիւթերը։

Այս գրքի մասին երկար խօսելու կարիք չը կայ։ Հարց կարող է լինել միայն այն մասին թէ որքան նա համապատասխանում էր իր ժամանակի մանկավարժական հասկացողութիւններին, որքան Նազարեանցը կարողացել է հեշտացնել դասատուութեան եղանակը։ Քննել այդ հարցը այժմ դժուար է, որովհետև յիսունական թվականների մանկավարժական իդէալները շատ հեռու են մեր ժամանակի հասկացողութիւններից։ Մեզ համար բաւական կը լինի համեմատական չափը. – ինչ ունէինք մենք և ինչ տուեց Նազարեանցը։

Բուն այբբենական մասում, որ պիտի տառագիտութիւն սովորեցնէր երեխաներին, Նազարեանցը այնքան էլ չէ կարողացել հեռանալ հին մեթոդից. նոյն բա, բէ, բը վարժութիւնները, նոյն միավանկ, երկու, երեք, չորս և աւելի վանկեր ունեցող բառերի կոյտեր։ Նորութիւնն այն էր, որ երեխան այբուբէնից յետոյ չը պիտի ամիսներ մաշեցնէր սաղմոսը վանկերով կարդալու վրա, մի բթացնող, կատարելապէս մեքենայական աշխատանք, որ նուիրագործել էր հին մեթոդը, – այլ պիտի անցնէր պարզ ու հասկանալի լեզուով գրած մասին, որ պարունակում է իր մէջ աղօթքներ, բարոյական խրատներ, առակներ։ Բայց այստեղ Նազարեանցը, խոյս տալով մի ծայրայեղութիւնից, ընկել է մի ուրիշ ծայրայեղութեան մէջ։ Այսպէս, «Բանի մի ընտիր խօսքեր» վերնագրի տակ շարված են բազմաթիւ հին մարդկանց ասածները և երեխան անդադար պիտի հանդիպէր Պղատոն, Թեմիստոկլէս, Սկիպիոն, Ապոլոդորոս և այլ այսպիսի անունների, չիմանալով, իհարկէ, թէ ինչ են դրանք և թէ ինչու ինքը պիտի իմանայ այդ խորթ անունները։ Ստացվում էր դարձեալ նոյն մեքենականութիւնը։

Նազարեանցը զգում էր որ հայ ժողովրդի կրթութեան նուիրված մարդը պիտի լինի հանրագիտակ, էնցիկլօպեդիստ։ Այդ ժողովուրդը ոչինչ չը գիտէր և նրան պէտք էր սովորեցնել ամեն ինչ –

1. 1850 թվին Վենետիկում Հ. Արսէն Բագրատունին հրատարակեց «Նոր Այբբենարան», որի մէջ բացատրութիւնները և մի քանի վարժութիւններ աշխարհաբար լեզուով էին։

ընական պատմութիւն, ֆիզիկա, աստեղաբաշխութիւն, թուաբանութիւն։ Այս այդ բոլորն էլ նա մտցրել է իր այս դասագրքի մէջ։ «Ցանկալի էր մեզ, պատուելի հայ ծնողներ, որանից աւելի բաներ դնել ձեր երեխաների առջևը, — ասում է Նազարեանցը գրքի վերջաբանում, — բայց կասկածելով թէ մի գուցէ ծանրաբեռնէի նոցա միտքը, և իմ փոքր գիրքս փոխանակ օգուտ բերելոյ՝ ձանձրութեան պատճառ լինէր, բաւականացայ փոքր ի շատէ տեղեկութիւն տալով այն առարկաների մասին, որոնց վերայ հիմնած է մեր ժամանակի լուսաւորութիւնը»։ Նպատակը լաւ է, բայց կազմողը չէ կարողացել չափ ճանաչել և այն բանը, որից նա վախենում էր, այսինքն «ձանձրութեան պատճառ» լինելը, ինքն ըստ ինքեան կար գրքի մէջ, որ եթէ «փոքր գիրք» է կոչվում, պատճառն այն է, որ տպված է շատ մանր տառերով։ Զափազանցութեան մի օրինակ կարող է դառնալ հէնց այն, որ Նազարեանցը դնում է հայ երեխայի առաջ այն 33 պետութիւնների անունները, որոնցից կազմված էր Գերմանական դաշնակցութիւնը, մինչդեռ հայաբնակ քաղաքներից մի քանիսի անուններն են միայն գրված։ Երեխան այդ դասագրքից համարեա ոչինչ չը պիտի իմանար իր ազգի հայրենիքի և պատմութեան մասին։ Դա աւելի օտար լեզուից թարգմանված մի դասագրքի է նման։ Նշանակենք մի արտասովոր հանգամանք. յիշատակելով Գօրգասի անունը, Նազարեանցը գրում է. «Այս քաղաքումս էր իւր կրթութիւնը առել Խաչատուր Աբովեան՝ երևելի Հայկազունը որ ափսո՛ս՝ շուտով թառամեցաւ իւր ազգի համար»։ Դասագրքի մէջ մտցրած այս խօսքերը ցոյց են տալիս թէ Նազարեանցը ո՛րքան սրտագին պատկառանքով էր վերաբերվում իր հռչակաւոր ընկերին։ 1853 թուականին Աբովեանցը դեռ յայտնի չէր հայ ազգին. առաջին անգամը Նազարեանցն էր նրան անուանում երևելի հայ, թէև գուցէ չը գիտէր էլ թէ Աբովեանցը գրած ունի «Վէրք Հայաստանի»։

Վերջացնենք մեր խօսքը այս գրքի մասին, աչքի առաջ ունենալով նոյն համեմատական չափը։ «Առաջին Հոգևէն Կերակուրը» եթէ անյաջող էր իբրև դասագիրք, շատ օգտակար, խելօք մի բան էր առհասարակ իբրև ընթերցանութեան գիրք։ Նա ամբողջապէս մի նորութիւն էր հայ ընթերցողի համար։ Եւ այդ նորութիւնը իր ազգին տալու համար խեղճ Նազարեանցը որքան աշխատած պիտի լինի, որքան դէս ու դէն ընկած։ Երբ արևելեան լեզուների պրօֆէսորը կազմում է թուաբանութիւն, աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, մենք պէտք է իմանանք որ նրան ղեկավարում էր մի անհուն սէր դէպի իր ազգի լուսաւորութեան գործը»։ Ա., 200, ևն։

— Розовый Кустарникъ шейха Муслехеддинъ Саади Ширазскаго славный подъ названіемъ Гулистана. Переводъ съ персидскаго С. Назаріанца, Доктора Восточной словесности. Москва. 1857, въ типографіи Лазаревскаго Института Восточныхъ языковъ. էջ. XX+174.

Նուիրուած է Լազարեան Ճեմարանին ի յիշատակ իր եօթնամեայ գործունէութեան նրա յարկի տակ։

Թարգմանութիւնն է Սաադիի Կիւլիստանին, կենսագրական և մատենագրական ճոխ տեղեկութիւններով։

Լէօ կը գրէ այս գործի առթիւ. «... Այդ աշխատութեան վրա էլ Նազարեանցը, ինչպէս ինքն է խոստովանում, աշխատել է երկար, ուսումնասիրելով պարսկերէն բնագիրը և նրան վերաբերված բացատրութիւնները թիւրքերէն լեզուով։ Առաջաբանի մէջ Նազարեանցը բացատրում է «Գիւլստանի» բանաստեղծական–բարոյական նշանակութիւնը, թէ ինչպէս Շիրազի երգիչը յայտնի դարձաւ Արևմտեան Եւրոպայում։ Մինչև այդ՝ ռուսաց գրականութեան մէջ չը կար «Գիւլստանի» ամբողջ թարգմանութիւնը, և Նազարեանցը զարմանք է յայտնում որ ռուսները, «նստած լինելով Արևելքի դռների մօտ, անդադար յարաբերութիւններ ունենալով Ասիայի հետ, դեռ այնքան քիչ են կարողացել ուսումնասիրել այդ կուսական աշխարհը, նրա աւանդութիւնները, նրա գիտութիւնը, նրա շատ նշանաւոր բանաստեղծութիւնը»։ Ա. 217, ևն։

— Հանդէս նոր Հայախօսութեան. աշխատութիւն Ստեփանոս Վարդապետի Նազարեանց. Առաջին մասն։ Մոսկվայի մէջ, Լազարեանց Փառափայլ պարոնների տպարանումը, 1857. 8°, Զ + 503 էջ։

— Երկրորդ մասն, 1857. 502 էջ։

Սկիզբը գրված է Նազարեանցի «Մայրենի լեզու, մայրենի բարբառ» յայտնի երգը։

Քննադ. ՏԷՐ ԱՐԱՐԱՏԵԱՆ (Աստ.), «Դիմագրաւ ընդդէմ սուտան յարուցելոց», ևն, գիրքը։ — Եա՛ Մասիս 1857, 279, 280։ — Գարուն 1866, Թ. 7, էջ 416։ — Հիւսիսափայլ (Մ. Նալբ.) 1858, էջ 71-80։

Իսկ Լէօ կը գրէ. «... Այդ զարմանալի աշխատասիրութեան արդիւնքն էր «Հանդէս Նոր Հայախօսութեան» ստուար գործը, բաղկացած երկու հատորից, որոնք լոյս տեսան 1857 թուականին։ Գործի միայն ծաւալը բաւական է ցոյց տալու թէ որքան ջանք ու աշխատանք է թափել Նազարեանցը. երկու հատորները միասին կազմում են 1005 երես, մեծ ութածալ, տպած մանր տառերով[1]։ Աշխարհաբար լեզուն ուսանողների մէջ դեռ չը տեսնված մի յաղթանակ էր տօնում։ Նազարեանցը այժմ, իսկ որ, ապացուցանում էր որ նոր լեզուն կարող է և պիտի լինի լուսաւորութեան, կրթութեան գործիք։

Մարդիկ, որոնք չէին կամենում որ Նազարեանցը մի լաւ բան արած լինի, որոնք ամբողջ սրտից ցանկանում էին նրան ոչնչութիւն և անյայտութիւն, երկու հատոր «Հանդէս»-ի դէմ այն էին գտնում գլխաւորապէս, որ դրանք դասագրքեր են երեխաների համար, իսկ իբրև դասագիրք՝ դրանք բոլորովին անպէտք բաներ են։ Դասագիրք — այո՛, այս անունը կարելի է ընդունել «Հանդէսի» վերաբերմամբ. բայց դասագիրք ոչ թէ երեխաների համար, այլ ամբողջ ժողովրդի համար։ Բծախնդրութիւն և աններելի բծախնդրութիւն է այդ ստուար հատորները համարել փոքր երեխաների ընթերցանութեան համար նշանակված գրքեր, հիմնվելով, երևի, այն բանի վրա, որ մի քանի յօդուածներում կազմողը դիմում է ընթերցողին «մանուկներ», «երեխաներ» բառերով։ Որ «Հանդէսի» մէջ կան մանկական ընթերցանութեան յարմար կտորներ էլ, այդ չէ կարելի ուրանալ։ Բայց

1. Թէ ինչ տպաւորութիւն է թողել ծաւալը ժամանակակիցների վրա, երևում է նրանից որ Արարատեանը իր «Դիմագրաւ» գրքոյկի մէջ ասում է որ եթէ «Հանդէսի» առաջին հատորը մեծ տառերով տպված լինէր, կը դառնար Յայսմաւուրքի չափ մի բան և այն ժամանակ «վա՜յ գնողին և ընթերցողին»։

տանելով գործի ամբողջութիւնից, դա «Առաջին Հոգեղէն Կերակուր»–ի ծրագրով կազմված մի ընդարձակ ժողովածու է, որի մէջ ընթերցանութեան օգտակար նիւթեր կային թէ երեխաների, թէ երիտասարդների և թէ չափահասների համար։

«Մեր խորհուրդը այն լինելով – ասում է Նազարեանցը – որ մի յարմարաւոր ընթերցանութեան գիրք տայինք ազգին, թէ արժանաւորէս ժամանակ անցուցանելու և թէ իւրեանց միտքը ճոխացնելու այնպիսի ծանօթութիւններով որ հարկաւոր էին մեր ժամանակի փոքր ի շատէ կրթեալ հայ մարդուն, այլ և իւրեանց սիրտը և զգայողութիւնքը ազնուացնելու գեղեցիկ գաղափարներով թէ բարոյական և թէ կրօնապաշտական մասին. մեր խորհուրդը այն լինելով, որ տայինք ազգին մի բազմօրինակաբար դաստիարակիչ և առաջնորդող գիրք, որ լցուցանէր նոցա խմացական և հոգևոր պիտոյքը, ընտիր–ընտիր եւրօպական աղբիւրներից հանեցինք զանազան խմաստալից գրոյցք»։

Նպատակը յայտնի է ու պարզ–տալ հայ ընթերցողի ձեռքը գրական և գիտական մի ժողովածու, որ լինէր մի տեսակ էնցիկլօպեդիա ինքնակրթութեան համար։ Եւ իբրև այդպիսի նպատակի ծառայող մի աշխատութիւն՝ «Հանդէսը» շատ բազմակողմանի է և հարուստ։ Ի՞նչ ասէք որ նախատեսած չը լինի Նազարեանցը։ Նա տալիս է թեթև ընթերցանութեան նիւթ առակների, պատմուածքների ձևով, տալիս է բնագիտութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, բուսաբանութիւն, բանաստեղծութիւն, կենսագրութիւն, հանքաբանութիւն և այլն և այլն։ Կարելի է առարկութիւններ անել այս կամ այն յօդուածի դէմ, կարելի է համաձայնվել որ մոռացված են բաժիններ, օրինակ որ պակասում է եւրօպական գեղեցիկ դպրութիւնը, որի տեղը բռնել են արևելեան գրոյցները։ Բայց ընդհանուր առմամբ, առհասարակ, պէտք է զարմանալ, հիանալ Նազարեանցի յամառ, տոկուն աշխատասիրութեան վրա, որ այդպիսի պատկառելի գործ է տուել։ Նկատվում է Նազարեանցի դաստիարակչական բարձր ձգտումը – ծանօթացնել հայ ընթերցողին բնութեան, մարդկութեան հետ։ Սա մի ահագին ծառայութիւն է, եթէ նկատի ունենանք մի շարք սերունդներ, կրթված և սնված միջնադարեան աստուածաբանութեան, կեղծ–կլասիկական բանաստեղծութիւնների, ճարտասանութեան, Վոլֆի փիլիսոփայութեան վրա։ Սալլանթեանների դարը անցնում էր. նրա փոխարէն, մեր գրականութեան մէջ էր մտնում տասնիններորդ դարը, բնագիտութեան, հետազօտութեան, գրական ուսումնասիրութիւնների դարը։

Չենք ասում թէ Նազարեանցն էր բերում հայերին այդ դարը։ Պարտաւոր ենք արձանագրել, որ գերմանական ուղղութիւնն էր այդպէս կերպարանափոխում մեր մտաւոր աշխարհին։

Նազարեանցը առաջինն էր ոչ թէ հայոց գրականութեան մէջ, այլ ռուսահայերի մէջ, որ այդ նոր ուղղութեան առաջնորդը հանդիսացաւ։ Մի հատ մարդ, առանց օգնականների, առանց յարմարութիւնների, չունենալով ձեռքում մշակված հարուստ լեզու, նա չը սարսափեց դժուարութիւններից և 1000 տպագրած մեծադիր երեսների վրա տուեց իր ազգին այն, ինչ կարողացել էր քաղել եւրօպական շքեղ գրականութիւնից։ Ո՞ւր են այդպիսի տոկուն աշխատաւորներ, ազնիւ, եռանդոտ մշակներ։ «Հանդէսը» ունի յօդուածներ, որոնք այժմ էլ հետաքրքրութեամբ կը կարդացվեն. Քրիստափոր Կոլումբոսի և Մարտին Լութերի կենսագրութիւնները այժմ էլ կարող են այդպիսի ժողովածուների զարդ կազմել։ Նազարեանցի օրերից շատ ժամանակ է անցել, պատմական գիտութիւնը ահագին առաջադիմութիւն է գործել. բայց կարող ենք ցոյց տալ մեր գրականութեան մէջ րէֆօրմացիայի մի այնպիսի մանրամասն, առաջաւոր գաղափարներով տոգորված պատմութիւն, որպիսին տուել է Նազարեանցը «Հանդէսի» երկրորդ հատորում...

Իրաւունք ունէր Միքայէլ Նալբանդեանցը, գրելով «Հանդէսի» առաջին հատորի թողած տպաւորութեան տակ, հետևեալ տողերը. «Այս բոպէիս մեր սիրտը լցուած է մի հոգեպայծառ ուրախութեամբ։... Ահա մեր նոր մատենագրութիւնը խլելով մի հնացած ու վատառակած ծերունու ձեռքից՝ դորա կարգից դուրս երկարատև քաղաքական իրաւունքը, որպէս ժամանակի հարազատ որդի, յառաջ է խաղում մեծ մեծ քայլերով և տանում է իւր հետ միասին և մեր ընթերցող ազգը» [1]։ Դեռ շատ քչերն էին այսպէս մտածողները։ Բայց այս քչերի համար ո՛րպիսի մեծ մխիթարութիւն էր գործելը, քրտինք թափելը։ Նրանց սուրբ ջանքերով ոչ միայն գոյութեան իրաւունք էր ստանում նոր լեզուն, այլ և ստեղծվում էր նոր գրականութիւն։ Գեղեցի՜կ ժամանակներ։ Եւ այդպիսի ժամանակներում «Հանդէսի» պէս մի հսկայ գործ կատարողը չէր կարող չոգևորել իր դեռ սակաւաթիւ կողմնակիցներին։ Այդ ոգևորութեան արտայայտութիւն կարող ենք համարել Նալբանդեանցի այս խօսքերը. «Հեղինակը (Նազարեանցը) կարող է մխիթարվել, որ իր աշխատութիւնը, իր տարիներով չարչարանքի վաստակը դարձած է այս բոպէիս մի յաւիտենական գեղեցիկ արձան, որով պիտոյ է անմահանալ նորա միշտ գեղեցիկ անունը»։ Երախտագիտական ոգևորութեան մէջ ներելի են և չափազանցութիւնները. «Հանդէսը» մենակ չէր կարող անմահացնել Նազարեանցի անունը։ Եւ այդ բաները մեզ համար միայն այն նշանակութիւնն ունին, որ ցոյց են տալիս թէ որքան հիացած էին այն երիտասարդները, որոնք համակրում էին Նազարեանցին»։ Ա. 205, եւն։

— Տեսական և գործնական առաջնորդ ռուս լեզուի ի պէտս հայկազեան մանկտիկների. գործ Ստեփանոսի Նազարեանց, տպագրեալ ծախուք Ներսիսեան Ազգային–Հոգեւոր դպրոցի (Համդերձ համառօտ ճառագրութեամբ ընդհանուր քերականութեան կանոնների, որ ծաղկաքաղ են առած Սիլվեստր դը Սասիու գործից մակագրութեամբս Հիմնական կանոնք ընդհանուր քերականութեան մանուկների հասկացողութեանը պատշաճեցուցած և կարող սպասաւորել իբրև ներքսածութիւն բոլոր լեզուների ուսումնասիրութեան մէջ, 4 տպագրութիւն, Փարիզ, 1823)։ Թիֆլիս, 1871, տպարան Հ. Էնֆիաճեանց և ընկ. Եր. 12 + 317։

— Հայոց ժողովուրդը, նորա այժմեան լեզուն և մատենագրութեան վիճակը Ռուսաստանում, համառօտ տեսութեամբ («Հանդէս Գրականական և Պատմական»։ Մոսկվա, 1888, գիրք առաջին, եր. 234–251)։

— Ազգային նկատողութիւնք, մի նամակի առիթով որ ստացած է Շամախուց։ — Բ. Նոր Հայկազեան օրագիր «Լապտեր Հայաստանի» Մեծապատիւ Հասարակութեան Հայոց Ազգաբարութին. Անդ, 1889, էջ 276–287։

1. «Հիւսիսափայլ», 1858, Թ. 1։

— Ստ. Նազարեանցի Նոր-Նախիջեւանում հայկական Գիմնազիան բանալու առիթով արտասանած ճառը (անտիպ), Տարազ 1900, թ. 47, էջ 711–713։

— Յայտարարութիւն մասնաւոր գիտնական և գործական դպրոցի Պետական խորհրդականի Ստեփանոսի Նազարեանց, Մոսկվայի մէջ. Կռունկ Հայոց աշխարհին 1861, էջ 398–407։

— Պանչայ մանուկը կամ կապկացած երեխայ։ Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի, 1896. 8°, 32 էջ?

Թարգմ. - Տես ՊԵՌՆԱՐՏԷՆ ՏԸ ՍԷՆ-ԲԻԷՌ։

Հիւսիսափայլի մէջ իր յօդուածները. Առաջին տարեգնացք, 1858. «Հայկական լեզուի խորհուրդը». Ա. ամսատետր. էջ 1–37. – «Շէյլոր և նորա դուստրը» (թրգմ.) 38–59. – «Թէ ինչպէս է մարդը». (թրգմ.), 59–70. – «Թէ ինչ է բնագիտութեան խորհուրդը», Բ. 133–143. – «Գամբանական ճառ», 154–156. – «Օտարոտի հարանախօսութիւն» Գ. 161–179. – «Ազգային բանաստեղծութիւն», 179–180. – «Մի քանի ասիական առասպելք», 180–186. – «Հայաստան (Երկրագրական և բնագիտական նկարագրութիւն)», 217–230. – «Թէ ինչ է վաճառականութեան խորհուրդը ընդհանրապէս, և թէ ինչպէս է կերպարանափոխել Անգլիայի վաճառական զօրութիւնը», 230–240. – «Հալ-Մեհի կանոնիկը» (թրգմ.) Դ, 241–252. – «Ֆրանսիական Բեվօլիւցիայի պատճառքը», 265–290. Է, 13–39. – «Ներկայ ժամանակի տարեգրութիւն», 298–333. – «Շատ թանկ գնով առայած» (Ընտանեկան անցք թրգմ. Դանիականից), Ե, 345–373. – «Համառօտ նկարագրութիւն տիեզերական կարգի», 387–398. – «Ծերունի Բաբբունին» (Դանիական լեզուից թրգմն.) Զ, 425-455. – «Լուսնի մակերեւոյթը», 485–492. – «Տարեկան շարժողութիւնը երկրի», Է, 40–55. – «Ֆենանտօ Կորտեզ», Ը, 118–156, Թ. 188–205. – «Թէ ով է ճշմարտապէս բարի և երջանիկ մարդը։ Բարեկամութիւն։ Զափաւորութեան օգուտը», Թ. 216–225. – «Թէ ինչպէս է երկրագունտի ներքին կազմակերպութիւնը», 225–241. – «Երկու խօսք, բուն Հայկական եկեղեցու մէջ երգեհոն գործածելու մասին», Ժ. 311–315. – «Կրիտիկա. Պ. Նալբանդեանցի Թափառական Հրէայի թարգմանութեան վերայ», 315–334. – «Կոմս Մօնգոմերի» (թրգմն. ֆրանս. բնագրից Լօտէն դը Լավալի), ԺԱ. 355–412. – «Ջեմս Կուկ», ԺԲ. 505–527. – Երկրորդ տարեգնացք, 1859. «Հայերի կոչումը մարդկութեան մէջ», Ա. 1–14. – «Նկատողութիւնք ազգային թէատրոնաբեմի վերայ», 42–59. – «Ներսէս Լամբրոնացի», Բ. 82–134. – «Սոփիայի եկեղեցին Կոստանդնուպօլսի մէջ», 134–148. – «Թուրանդօթ», Չինաստանի իշխանադուստրն, (Գործ Շիլլերի), Գ. 169–232, Զ. 419–459. – «Մի քանի խօսք Խորագիտութեան վերայ», 251–253. – «Տ. Կիկերոնի Լելիոսը» (իր ծանօթ և անծանօթ բարեկամներին սիրողապէս նուիրում է թարգմանիչը), Գ. 257–313. – «Լուսինը և նորա ազդեցութիւնը երկրի վերայ», Ե. 361–377. – «Խօսուն անասունքը (իտալականից), Է. 497–515. – «Փիլիպպոս Երկրորդ, թագաւոր Սպանիայի» (Ալֆիերի), 516–542. – «Մտածող Հայերի յոյսը ներկայումս», 561–567. – «Ներսէս Լամբրոնացու թուղթը» (թրգմ.), Ը. 630–646. – «Գեօթէ և Շիլլէր բանաստեղծների զուգակից արձանքը Վէյմարի մէջ», Ժ. 821–828. – Լուկրեցիա, ողբերգութիւն, գործ Պօնսար Ֆրանսիացու» (թրգմն.), ԺԱ. 837–871. – «Մի նամակի պատասխան», 892–893. – «Մարկոս Տուլլիոս Կիկերոնի Անտոնեան ճառերը ընդդէմ Կատիլինայի, լատին. բնագրից. Առաջին և Երկրորդ ճառ». ԺԲ, 917–956. – «Բարեկամական յիշատակարանք», 978–985. – Երրորդ տարեգնացք, 1860. «Նոր տարու մտածութիւնք», Ա. 1–16. – «Պատմութիւն Հայոց ազգի», 17–35. «Ծանուցումն», 79–83. – «Քալդերոն Սպանիական բանաստեղծի Հաստատամիտ արքայազը. (թրգմ.) Բ, 85–127. – «Հայոց ազգի լուսաւորութեան կամ Սուրբ Թարգմանիչների դարը», 128–164, Թ. 236–256. – «Հայկական թատրոնը Մոսկվայի մէջ», Գ. 222–236. – «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», Դ. 245–262. – «Ամենապատուականը օրերի մէջ». 271–306. – «Մ. Տ. Կիկերոնի ճառերը ընդդէմ Կատիլինայի. Երրորդ ճառ դէպ ի կվիրիտացիք», Ե. 321–338. – «Զանազան ազգերի կանանց բնաւորութիւնը», Զ. 442–461. – «Պանկրատ Թոբլէր, կամ վասն կեանքի, առողջութեան, հիւանդութեան, ծերութեան և մահու», Է. 47–74. – «Ատենաբանութիւն Կիկերոնի վասն Ամերիայի Սեքստոս Ռոսկիոսի», Ը. 83–149. – «Մահարձան հանգուցեալ օրիորդի Փանեանց», Թ. 257. – «Մենդելսզոն, Լեսսինգ և Լաւատեր վիճաբանելով կրօնի վերայ», Ժ. 298–313. – «Հարստութեան արժանաւորութիւնը», 314–327. – «Սուրատի Պանվէտոնը», ԺԱ. 341–349. – «Գալիլէօ Գալիլէի և Բէլլարմինոս, կամ գիտութեան իշխանը եկեղեցական իշխանի հանդէպ» (թրգմն.), 349–361. – «Թէ մանկութեան խաղերը ինչ խորհուրդ ունին», 373–383. – «Բնութեան ձեռքով պատրաստած ուրախութիւնքը մարդուս համար», ԺԲ. 425–429։ – «Գալիլէօ Գալիլէի», 470–483։

1861 և 1862 տարիները կը պակսին մեր դրատան մէջ...։

1864. (Դեկտեմբեր 1863 թուականի). «Ազգային մտածութիւնք. Շնորհաւոր տարեվերջ մեր սիրելի հայրենակիցներին», 1–16. – «Ընտանեկան կեանք. (գործ Պաւլոս Ժանէտի, Սորբոնուրգեան պրօֆեսորի, պսակուած ֆրանսիական Ակադեմիայի կողմից), 17–33. 94–113. – «Շնորհաւոր նոր տարի մեր սիրելի հայրենակիցներին», 65–88. – «Կրօնի դաստիարակութիւնը ազգային մայր դպրոցի մէջ», 129–144. – «Մարդուս սիրտը» (Հանած Դօքտոր Լուի Բիւխների գրուածից մակագրութեամբ Physiologische Bilder). 145–157. – «Ազգային թշուառութիւն», 158–173. – «Պատմութեան կրթութեան նորագոյն ժամանակի մինչեւ սկիզբը 19–երորդ դարու», 174–182. – «Ինչ որ կը սերմանես, այն ես կը հնձես». (գործ Ֆրանց Հօֆման գերման. մատենագրի), 193–223. 257–292. – «Ազգային մտածութիւնք», 224–235. – «Բնական օրէնքների ազդեցութիւնը մարդկային ընկերութեան կազմուածի վերայ և անհատների բնաւորութեան», հանուած Թովմաս Հենրիկոս Բէօքլի գրքից, մակագրութեամբ «History of the civilisation in England», 236–254. – 306–319. – «Մահացուցակ հանգուցեալ Մանուչակ տիկնոջ Նազարեանց», 320–326. – «Երկու եղբայր» (Գործ Ֆ. Հօֆման գերմ. մատենագրի), 327–398։

Նազարեանցի նամակները

Բանասէր 1904, Թ. 5–6։ – Բանբեր Գր. եւ Ար. 1903, Գիրք Ա. էջ 231–246։ – Լումայ 1896 Ա. գիրք, էջ 329–333. – Բ գիրք էջ 336–339. – 1897, Ա. գիրք, 321. – Բ գիրք, էջ 337–339. – 1898, Ա. գիրք, էջ 268–271. – Բ. 252–258. – 1899 Ա. գիրք, 222–228. – Բ. 264–273. – 1900, Բ գիրք, էջ 347–355. – 1901 Ա. գիրք, էջ 285–

288. – 317–324. – Ը գիրք, էջ 449–460. (յէջմն 480–483) (կարդա՛ Ալամեանի «Մի բացատրութիւն» այդ նամակների մասին). – 1902, թ. 4, էջ 216–220. – թ. 5, էջ 209–211. – թ. 6, էջ 253–254. – 1906, թ. 6, էջ 167–169։ – Հայկական աշխարհ 1866, թ. 8–9, էջ 285։ – Հանդէս գրական եւ պատմական, «Նիւթեր մատենագրութեան պատմութեան համար, Ստեփանոս Նազարեանցի թղթերից», 1888, էջ 266–279. – 1895, էջ 112–148. – 1896, էջ 322–325։ – Մուրճ 1902, թ. 5, էջ 127–145, «Ստ. Ն.ի նամակները Աբէլ Աբրեհ. Մխիթարեանին». – թ. 7, էջ 193–200 (Գէորգ Քանանեանին). – 1904, թ. 1, էջ 103–107 (Ստ. Ն.ի նամակները Աբովեանին, գրաբար)։ – Տարազ 1900, թ. 9, էջ 115 (ծանօթութեան մէջ)։ – Շահազիզ (Եր.) «Միքայէլ Ղազարեան Նալբանդեանց», էջ 54–57։ – Սեդրակեան (Ար. եպ.), «Յովհ. Եպիսկ. Շահխաթ. կենսագր.ը», էջ 193։ – Նազարեանց (Յ.), «Ընտիր հատուածներ», էջ 206–207։

Այլեւայլ գրուածներ Նազարեանցի մասին

Արարատ 1879, թ. 6, էջ 277։ – Արեւմուտք 1859, թ. 10, էջ 79 (Ոսկանի նկատողութիւնը), թ. 11, էջ 82։ – Արձագանք 1886, թ. 35, 36 (բանակռիւ – Մշակի դէմ Լայսթի առիթով). – 1890, թ. 10, (Նազարեանցի յայտարարութիւնը Ներսիսեան Դպ. հոգաբարձութեան՝ դասագրքերի մասին)։ – Արշալոյս Արարատեան 1860, թ. 626, 627, 628. – 1862, թ. 667, 668։ – Բազմավէպ 1902, թ. 1, էջ 29–33. – թ. 2, էջ 73–77 (կենսագր.)։ – Գարուն 1866, թ. 7, էջ 416 (Մանդինեանցի քննութիւն)։ – Գեղունի Ը տարի 1903, թ. 1–10։ – Դպրոց 1875, թ. 11–12, էջ 386–388։ – Երեւակ 1860, թ. 94. էջ 308–313 (բանակռիւ Նալբանդեանցի դէմ). – 96, էջ 365. – 1861, թ. 97, էջ 22։ – Լումայ 1903, թ. 5, էջ 15–24 (թղ. Լ. Տիգրանեան, «Գորգաս Համաս. և Հայ ուսանողութիւն» յօդուածին մէջ)։ – Կռունկ Հայոց աշխարհին 1860, թ. 10, էջ 832–848 (պատասխան Գ. Մուրատեանցի). – 1862, թ. 11, էջ 841–863, («Հիւսիսափայլ»ի առաջարկութիւնը)։ – Հայկական աշխարհ 1866, թ. 8–9, էջ 283. – 1867, թ. 2–3, էջ 123. – թ. 9, էջ 283. – 1868, թ. 2–3, էջ 108, 119. – թ. 11, էջ 395. – 1869, թ. 9, էջ 323–4. – թ. 11–12, էջ 354, 372. – 1870, թ. 3–4, էջ 111. – թ. 7–8, էջ 224. – թ. 12, էջ 296–297։ – Հայկական աշխարհի Կռունկ, 1864–1865, թ. 1–4, էջ 122. – թ. 7, էջ 181, 316. – թ. 10–12, էջ 484։ – Ճռաքաղ 1859, էջ 174–182 և 374–388. Արտատպ. և յԱրշալոյս Արարատեան 1862, թ. 668, 671, 689 (Մասիսի քննադատութիւն «Զննութիւնք հրատարակեալ գրուածոց Ստեփանոսի Նազարեանց, Տոքթորի Արեւելեան լեզուագիտութեան»), էջ 141–145, 221–224, առանձին յաւելուած՝ «Մ. Խանհակեանցի պատասխան», էջ 1–12. – 1860–1861, թ. 9, էջ 144 (Չերքեզեանի «Հերքումն կարծեաց», հրատարակուած է առանձին եւս), թ. 10, էջ 172, թ. 13, էջ 217, թ. 14, էջ 233, թ. 18, էջ 293–300, թ. 19, էջ 310–316, թ. 22, էջ 358–364, թ. 23, էջ 367–379 և թ. 24, էջ 384–398 (Չերքեզեանի «Մեկնութիւն մեկնութեան»)։ – Մասեաց Աղաւնի 1856, թ. 2, էջ 26 (Աշխարհաբարի մասին). – 1860, թ. 12, էջ 190. – 1861, թ. 4, 5, 9, 10 (էջ 42, 53, 100, 115, Չերքեզեանի գրուածքը)։ – Մեղու (Կ. Պոլսոյ) 1860, թ. 119. – 1861, թ. 129 էջ 84 (Զամուռճեանի դէմ), թ. 132, էջ 107, թ. 145, էջ 214, թ. 147, էջ 228, թ. 148, էջ 236. – 1862, թ. 233, էջ 50, թ. 236, էջ 75, թ. 251, էջ 196։ – Մեղու Հայաստանի 1858, թ. 14, 16 (Մանդինեանցի) 24, 25, 35 (Վահան Արամեանի նամակներ), 29, 30 (քննութիւն Մ. Ղ.-ի), 37. – 1859, թ. 10 (Ս. Պալասանեանի). – 1860, թ. 5 (Չերքեզեան), թ. 13 (նոյն), թ. 31 (նոյն), թ. 17, 43 (Սկայորդի). – 1861, թ. 145, «Արշալոյս Հայոց-Ստեփանոս վարդապետ Նազարեանց, Նուէր (տոմսակ) Աբրահամ Գալուստեան Նազարեանց 4ին Յուլիսի 1861 թ. Հաշտարխան». – 1863, թ. 1. – 1866, թ. 28 (նամակ Նազարեանցի), թ. 26, 30 (Նազարեանցի ճառ). – 1869, թ. 22, 35 (Նազարեանցի ընդունելութիւնը Ներսիս դպր.), 40, 41, 46. – 1870, թ. 6 (Նազարեանցի ճառ), թ. 13 (ճառ, գրաբար). – 1872, թ. 10–ի յաւելուածը (Սենեքերիմ Արծրունիի). – 1879, թ. 32 (մահացուցակ), թ. 40 (թղթակցութիւն Պօլսէն Նազարեանցի մահուան առթիւ), թ. 41 (Խորէն քհ. Միրզայ.)։ – Մշակ 1872, թ. 18. – 1873, թ. 2. – 1879, թ. 62 (մահացուցակ), թ. 70 (թղթակց. Մոսկուայէ), թ. 83 («Հոգեհանգիստ», Փ. Վարդանեանի). – 1881, թ. 89 («Հրապարակախօս Ձայն» գրախօսութիւն), թ. 161 («Մի պատասխան» Ս. Շահազիզեանի). – 1886, թ. 21, 106. – 109 («Մեր պատասխանը» Գ. Արծրունիի՝ Լայսթի դէմ), թ. 120. – 1888, թ. 48, 141. – 1889, թ. 5 (Արծրունիի պատասխան Մուրճին), թ. 9 (Րաֆֆիի յօդուած). – 1890, թ. 45, 46, 49. – 1892, թ. 12 և 13 («Չափաւորութեան ասպետը» Տ. Յովհաննիսեանի), թ. 45, 99. – 1899, թ. 161, 162, 163, 164, 165 («Գրական դէմքեր–Ստեփանոս Նազարեանց» Լէօի). – 1901, թ. 45, «Ստ. Նազարեանցի մասը». – 1904, թ. 100, (25–ամեակի առիթով)։ – Մուրճ 1889, թ. 1. – 1891, թ. 5. – 1898, թ. 5, էջ 684–697 («Հիւսիսափայլ և Ս. Շահազիզեան» – Կուսիկեանի). – 1902, թ. 1, էջ 57–77 («Ռուսահայ հրապարակախօսութեան նահապետը» – Կուսիկեանի)։ – Վաճառական 1866, թ. 7, 11, 18, 23։ – Փարոս Հայաստանի 1879, ա. տետր. էջ 33. – 1880, բ. տետր, 83, 95. – 1881, ե. տետր, էջ 13–14։ – Փորձ 1879, թ. 6, էջ 142 (քերթուած Շահազիզեանի), թ. 9, էջ 172–180 (Նամակ Նազարեանցի մասին՝ նոյնին), թ. 11, էջ 31–83 (Ա. Երիցեանի յօդուածը). – 1880, թ. 1, էջ 83–87 (նոյնը). – 1881, թ. 5–6, էջ 211–264 (Երիցեանի պատասխանը Շահազիզեանին)։

Տես եւս հետեւեալ գիրքերը. Լէօ, «Ստեփանոս Նազարեանց»։ – Նալբանդեանց (Մ.), «Երկու տող», էջ 48։ – Պալասանեան (Ստ.), «Պատմ. Հայոց Գրական.» Ա. հատ. էջ 11–13։ – Զարբ. «Նոր Դպր.» էջ 501, (նոր տպագր. էջ 405–16)։ – Յարոյ, «Հայոց Մամուլը Ռուսաստանում», եւն, էջ 31–55։ – Շահազիզեան (Ս.), «Հրապարակախօս Ձայն», էջ 1–304։ – Պալասանեան (Ս.), «Պատմ. Հայոց», էջ 445։ – Աղայեանց (Ղ.), «Մի երեք մեր նորագոյն պատմութիւնից», էջ 7, 26։ – Գալէմքեար (Հ. Գ.), «Պատմութիւն հայ լրագր.», էջ 161–178։ – Աղայեանց (Ղ.), «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը», էջ 39, 51, 56–58. – «Արօրի Օրացոյց» 1895, էջ 156–170. – 1897, էջ 144–147։ – Շահազիզ (Ե.) «Մ. Ղ. Նալբանդ.» էջ Ե–Զ։ – Տէր-Կարապետեան (Ն.), «Խաչատուր Աբովեան», էջ 19, 31, 65. – «Խաչատուր Աբովեանի երկերը». – «Խաչատուր Աբովեան» Ս. Տէր-Սարգսեանցի։ – Նալբանդեանց (Մ.), «Ղազար Փարպեցու թուղթը», էջ XI–XIV. – Սեդրակեան (Ա. եպ.), «Յ. Շահխաթ.ի կենսագրութիւնը», էջ 190–207։ – Երզնկեանց (Գ.), «Պատմ. Մանկավարժ.», էջ 299–300։ – Շահազիզ (Ս.), «Յոբելեանի տարեդարձ» էջ 12, 16. – «Ս. Շահազիզեանի երեսնամեայ յոբելեանը» Ա. Ծատու-

բեանի, էջ 7։ – Շահազիզ (Ս.), «Ամառնային նամակներ». – «Երեսուն և հինգ տարի», էջ 6։ – Շահազիզ (Եր.), «Մ. Յովսէփեան Լամին», էջ 26, 35։ – Այվազեան (Գ. Արքեպ.), «Պատմ. Խալիպեան ուսումնարանին», էջ 28–29։ – Երիցեան (Ա.), «Գ. Արծրունու և նրա 25 տարւայ գրական գործունէութեան առիթով», էջ 51, 55։ – Մալխասեանց (Ստ.), «Համառօտ Պատմ. Ներս. Հոգ. Դպրոցի», էջ 129–139։ — Մալումեան (Խ.), «Մօքի մշակը», էջ 37–39, ևն։ Այս ցանկը պատրաստելու օգտուած եմ Լէօի քանիցս յիշուած երկէն։

Լէօի «Ստեփանոս Նազարեանց» երկհատոր երկին վերջաբանը. «Վիթխարի տաղանդը չէր, որ Նազարեանցին այնքան բարձր պատուանդանի վրա դրեց մեր մտաւոր աշխարհում։ Քրքրենք նորից նրա բոլոր գրուածքները, և դրանց մէջ մեծ ստեղծագործութիւն չենք գտնի, չենք տեսնի թէ մի տաղանդաւոր շնորհք էր դա, որ երկնքից շնորհվում է միայն հազուադէպ ընտրեալներին։ Համեստ է մեր Նազարեանցը. և եթէ մենք հեռացնենք նրան մեր հողից, դնենք ուրիշ ազգերի մէջ հռչակված գործիչների կողքին, այդտեղ նա հազիւ թէ նկատելի լինի։

Ի՞նչ է սա ցոյց տալիս։

— Այն, որ մեր ազգին կարելի է մեծ բարերարութիւններ անել, չունենալով և խոշոր տաղանդ։ Փոքր ենք մենք, խեղճ, կարօտ ենք սրտակից, բարեկամ ուսուցիչների։ Այդպիսի ուսուցիչ էր մեզ համար Նազարեանցը։ Ունենալով զգայուն, սիրող սիրտ, լցված մի ազնիւ, բիւրեղեայ հայրենասիրութեամբ, նա իբրև լուսաւորված մարդ, լայն, աշխարհաշէն գաղափարների ջերմ հաւատացող երկրպագու, հասկացաւ ժամանակի խորհուրդը, դարձաւ նրա մարգարէն։ Նա աշխատեց, լաւ աշխատեց։

Եւ այդ սուրբ աշխատանքի արդիւնքը այսօր մեր առջև է։ Նազարեանց-դա մեր հերոսն է։ Նա մարմնացրեց մի նոր, մեզանում դեռ չը տեսնված տիպ, հասարակութեան առաջնորդող գրողի տիպը։ Նրանով գրական գործիչը հաստատուն, պատուաւոր տեղ գրաւեց մեր հասարակութեան մէջ։ Տանջվեց նա, երկար մաքառեց, բայց կարողացաւ հոյակապ շէնքի հիմքերը դնել քարի վրա. այդ շէնքը նոր գրականութիւնն էր, հասարակական գրականութիւնը, նա, որ կրթում է, սովորեցնում է, խրատում է, որ գաղափարներ է ցոյց տալիս, որ ղեկավարում է ձգտումները, բաց անելով նրանց առջև լայն հորիզոններ։

Մինչև Նազարեանցը կային գրողներ, բայց չը կային գրական նահատակներ։ Առաջ գրում էին սոսկ զուարճացնելու համար, իսկ Նազարեանցը պատերազմում էր գրելով։ Նահատակվել այդ պատերազմի մէջ, դափնիներ վաստակել, գրաւել հասարակութեան համակրանքը, դառնալ հասարակութեան պաշտամունքի առարկան, նրա սուրբը–ահա ինչ էր այդ հերոսը։

Դժբախտ չէր հայ ազգը։ Նրա մէջ յայտնվում էին մտաւոր հերոսներ։ Եւ Նազարեանցը դրանցից առաջինն էր։ Նա այսօր էլ ոգևորում է հեռու անցեալից, յաւիտենականութեան գրկից։

Միայն թէ լինէին ոգևորվողներ...», Բ. էջ 383–386։

ՆԱԶԱՐԵԱՆՑ (Տիգրան) խմբագ. — Տես Աղբիւր–Տարազ։

ՆԱԶԱՐԵԹԵԱՆ (Հ. Դ.) թարգմ. – Տես ԳԱՆԴՈՒ (Կ.) — ԼԱԲՐԱՏ. — ՌԱԲԷ. — ՍԷՆԴԻՆ. — ՏԱՆԴԷ։

Տես Բազմավէպ 1876, էջ 25, 101. – 1877, էջ 55, ուր քերթուածներ ունի։

ՆԱԶԱՐԵԹԵԱՆ (Սահակ Վ.) — Վարդապետութիւն ԺԲ առաքելոց կամ Վարդապետութիւն Տեառն երկոտասան առաքելովք յազգս, ըստ յոյն ձեռագրին գտելոյ ի Կ. Պոլիս։ Կոստանդնուպոլիս, տպագր. Տիգրան Ճիվէլէկեան, 1898. 4°, 263 էջ։

Հեղինակը կ'ըսէ ուղերձին մէջ. «... կը նուիրեմ... մատենիկս, որոյ կէսն թարգմանած եմ յիտալականէ, կէսն ի յունէն և կէսն ալ սրտէս... թէպէտև մատենիկս նուրբ, այլ աշխատութիւնն ծանր եղած է։ Նորածին եկեղեցւոյ մանրանկարն է, առաջին դարէն մեզ հասած... տես թէ ինչպէս սքանչելի կը պարզուի հնութիւնն...»։

Բովանդակութիւն. Ուղերձ առ Պ. Իմ Հ. Գ. – Կանխաբան. – Գլ. Ա. Կոստանդնուպոլսեան հաւաքածոյին գիւտն. Վարդապետարանին օրինակն. – Բ. Հելլէնագէտ Եւրոպիոյ կրօնական լեզուն. – Գ. Վարդապետարանիս հին յարատութիւնք և յիշատակութիւնք. – Դ. Վարդապետարանին հնութիւնն, հեղինակն և գրուած տեղն. – Ե. Վարդապետարանին Հայ. թարգմանութիւնն, ծանօթութիւնք և լուծմունք. – Զ. Հաւատացեալ հրէական ժողովրդանոցք. – Վարդապետութիւն ԺԲ Առաքելոց. Հայ ընագիրն և բացատրութիւնք. – Ա. Լուծմունք. Փրկչին առ Առաքեալս Օրէնքն տալուն հին պատկեր մը, և Ս. Մատթէի Աւետարանէն հատուած մը. – Բ. ԺԲ. Առաքելոց Վարդապետարանին մէջ Մատթէի հատուածն. Վարդապետարանին համառօտութիւնն. – Գ. Վարդապետարանիս հնութիւնն, Յունարէն յաջողութիւն բառին ոյժն. – Դ. Պահոց երկու օրերն, կամ կրկին աւուրք հսկմանց. այսինքն Քրիստոնէից եօթնեկին չորրորդ և վեցերորդ օրերն. – Ե. Գոհութեան աղօթք հրամայեալք նախ քան զհաղորդութիւնն՝ ի կրկին աւուրս պահոց, կարևոր ծանօթութեամբք. – Զ. Աղօթից փառաբանական վերջաւորութիւնք. – Է. Հաւատացելոց հաղորդութեանէն առաջ Վարդապետարանին տուած հրամանն. – Ը. Հակման օրերուն զկնի հաղորդութեան հաւատացելոց կատարած Գոհութեան աղօթքն. – Թ. Յիշեալք հաւատացելոց առ տէր Յիսուս. – Ժ. Մկրտեալք կը հաղորդին Սեղանոյն. ոչ մկրտեալք կը վանին. – ԺԱ. Գաղտնեաց օրէնք կամ խորհրդական լռութիւն. – ԺԲ. Ժողովարանին մէջ Ս. Գոհութեան պահուին. Լուկիանեան գամբարանաց նշանաւոր պատկերն. – ԺԳ. Քրիստոնէից ընծութեան օրն, Օր տեառն կամ Կիւրակէ։ Բեկանել զհացն. – ԺԴ. Ժողովք Քրիստոնէից. – ԺԵ. Մաղաքիոյ վարդապետութեան յիշատակութիւնն Վարդապետարանիս մէջ. Տեառն մարմինն. (կարևոր ծանօթութեամբ). – ԺԶ. Կալլիստեան Գամբարանէն պատկեր մը. – ԺԷ. Արդ ձեռնադրեցէք ձեզ տեսուչս և սարկաւագունս արժանիս Տեառն խօսքին իմաստն. Վարդապետարանիս գրութեան ժամանակին նշանն. – ԺԸ. Հաւատացելոց և Երախայի խոստովանութիւնք. – ԺԹ. Երախայն ի տէրունի պատուիրանն ընկալեալ, Վարդապետարանին հաւաքածոյ մեղաց ցուցակն. – Ի. Նախ քան զՀացն բեկանել՝ հաշտութիւն ընդ Եղբօր. Քրիստոնէական լեզուի մէջ խաղաղութիւն բառին իմաստն (ծանօթութեամբ). – ԻԱ. Մկրտութեան օրն և կիւրակէից ժողովը ըստ Ս. Յուստինեայ վկայի. ըստ պատուիրելոյ Տեառն զկնի Յարութեանն. – ԻԲ. Ս. Խորհրդոյ մատուցման ժամուն հաւատացելոց կատարած աղօթից ձևն, նախ քան զվերակացուին գոհութեան աղօթքն. – ԻԳ. Տեառն Պաշտօնեայք նորածին եկեղեցւոյ մէջ. Առաքեալն. – ԻԴ. Մարգարէն և Վարդապետն. – Կարևոր ծանօթութիւն. – ԻԵ.

Քրիստոնէութիւնք՝ յորս Երիցանց ուխտն տակաւին չէր հաստատուած. – ԻԶ. Ընթրութիւն Տեառնողայ և հաւատացեալ ժողովարանն. – ԻԷ. Նորածին Եկեղեցւոյ Մարգարէից երգք, և անոնց նախնի հնագոյն ձևն. – ԻԸ. Վարդապետարանն և Աւետարան։

Քրիստոնէական հին երգ, Երգ Աբերկիոսի կոչուած. Ա. փոխզիկոյ մէջ գտնուած քրիստոնէական կճեպք. – Բ. Աբերկիոսի Գամբանագրին վրայ ծանօթութիւնք և քննութիւնք. – Գ. Բնագանդական գրչաց Աբերկիոսի կենսագրութիւնք իր տապանագրէն քաղուած են. – Դ. Ո՞ր դարուն գրուած է Տապանագիրն. Զուկն ինչու իբր խորհրդական նշան կ՚ընդունուի ի Քրիստոնէից։

Քննադ. Բիւրակն 1898, էջ 573։

Ունի հետևեալ յօդուածները. Բազմավէպ 1893, 182, 287, ևն, և 1894 տարւոյն մէջ, «Հայք և գիտութիւն Հայոց». – «Ակնարկ մը հայ աթութայից վրայ». Պանդէր Գ տարի, էջ 17, 36, 219, 241. – «Ա. Բարսղի «Վեցօրէից» վրայ». Գ տարի, թ. 19, 21, 22, 23. – «Քչոցն և մեկնութիւնն». Գ տարի, էջ 49, 75. – «Զրհեղեղի աւանդն ըստ հին ազգաց (եւ Հայոց)». Գ տարի, թ. 23. – «Ժամն ըստ հայերէն տումարի», Գ տարի, թ. 7. – «Պատարագամատոյց» (եկեղեցական–կրօնական), Է տարի, էջ 10. – «Պատարագն և ժամեր նախկին դարուն մէջ», Թ տարի, էջ 248, ևն. – «Գանձարանք հայ լեզուի», Թ տարի, էջ 265, 307, ևն, ևն։

ՆԱԶԱՐԷԹԵԱՆՑ (Ա.) *թարգմ.* — Տես ՍՏՕԿՏՕՆ։

ՆԱԶԻԿԵԱՆ (Մ. Կ.) *թարգմ.* — Տես ԱԼՊՐԷԽՏ (Պր. Ֆ.) — *Առողջաբանութիւն երիտասարդութեան.* — ԳԼԷՆՔԷ (Հ.) — *Մանչտղայոց և երիտասարդաց զգաստութեան վրայ.* – *Ուղեցոյց կանանց և օրիորդաց, ևն*։ – ՊԷՈԿԶՕՆ. – ՌՈՒՀԷՄԱՆ (Բր. Ժ.) – ՎԷՑ (Ա.)։

Նարան խմատուն. — Տես ԼԷՍՍԻՆԳ։

ՆԱԹԱՆԵԱՆ (Միքայէլ = Յուսակ). – «Հայ ազգեցութիւնը բողոքական միսիոնարութեան վրայ». Շիրակ 1905, հտ. Բ, էջ 111. «Միրտիչ փորթուգալեան» (կեանքը). անդ, էջ 132, 172, 260. – «Անէծքը», անդ, 280։

— (Պօղոս Վ.) — *Առաջին տեղեկագրութիւն վիճակին Նիկոմիդիոյ*։ Այցելութեամբ Նաթանեան Պօղոս վարդապետի։ Կ. Պօլիս, տպագր. Պ. Ճէզվէճեան, 1871. 4°, 42 էջ։

Բովանդակութիւն. Նիկոմիդիա. – Տող գիւղ. – Արմաշ. – Խասկալ. – Արմալը. – Ֆրնտըխլը. – Ֆէրիզլի. – Թամլըխ. – Նոր գիւղ. – Ատաբազար. – Կէյվէյի Միջագիւղ. – Գուրտպէլէն. – Գնճըլար. – Սապանճայ կամ Հեղինուպօլիս. – Ալլան Պէյ. – Օվաճըխ. – Տէօնկէլ. – Պարտիզակ. – Նիկոմիդիոյ վիճակին երկրորդ մասի Եալովայ բռնած նահանգին մէջ գտնուող Հայոց գիւղերը. Շախշախ. – Խըլըճ գիւղ. – Զուխուր գիւղ. – Քարցի գիւղ. – Զէնկիլէր. – Մեծ Նոր գիւղ Բաղարու. – Միջագիւղ Բաղարու. – Փազարու Քէրէմէթ. – Եալովի Տէրէ. – Մէրտիկէօզ. – Եալովայի նահանգին հայաբնակ գիւղօրէից հարստանեաց նկարագրութիւնը. Նշանաւոր խնամութեան և հարտնիք։

— *Տեղեկագրութիւն Սիվրիհիսարու. աշխատասիրութեամբ Ն. Պ. Վ.ի*։ Արդեամբ Սիվրիհիսարցի Մեծապատիւ Ներսէսեան Կարապետ Աղայի. (Բ. աշխատութիւն հեղինակին)։ Կ. Պօլիս, ի տպ. ի Անդրանիկ Վարդանեանի, 1872. 22 էջ ?

Հմմտ. Փող 1872, թ. 78։

— *Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Գաղատիոյ*։ (Գ. աշխատ. հեղինակին)։ Կ. Պօլիս, ի տպ. ի Յարութիւն Մարգարեան, 1873. 8°, 78 էջ և վիճակացոյց տախտակ մը.

Յառաջաբանը կ՚ըսէ. «... Գաղատիոյ ընդհանուր վիճակաց վրայ չի պիտի կրնամ լիովին տեղեկութիւն տալ, այլ միայն չորս վիճակաց. այսինքն՝ Գաղատիոյ, Սատաղու, Նալլըխանի և Աֆիօն–Գարահիսարի վրայօք. և ահա ի գիր առնելով քաղաքաց դիրքը, ժողովրդոց թիւը, բնաւորութիւնը, սովորութիւնը, ընկերական ընթացքը, նիւթական և բարոյական կացութիւնը և ուրիշ ազգաց հետ ունեցած յարաբերութիւնն ևն, ևն. սոյն փոքրիկ տետրակս պարզ և ընտանի ոճով տպագրութեամբ ի լոյս կ՚ընծայեմ։ Հարկ կը համարիմ նաև յիշեցնել որ գործոյս մէջ վիճակացոյց մ՚ալ դրած եմ, որ բովանդակ Գաղատիոյ վիճակը կը ներկայացնէ, և Գաղատիայէն ունեցած ժամական հեռաւորութիւնը կը ցուցնէ...»։

— *Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ և անոր կուսակալութեան ներքեւ գտնուող մէկ քանի գլխաւոր քաղաքաց*։ (Դ. գործ հեղ.)։ Կ. Պօլիս, տպագր. Հայաստանեայց, 1877. 8°, 192 էջ ?

— *Արտօսր Հայաստանի, կամ Տեղեկագիր Բաղուայ, Քարբերդու, Զարսանճագի, Ճապաղջուրի և Երզնկայու*։ Յաւելուած ըստ խնդրանաց ազգասիրաց Խիզան գաւառ։ (Գործ հինգերորդ)։ Կ. Պոլիս, (տպ. չէ նշանակուած), 1878. 8°, 202 էջ։

ՆԱԺԻՎԻՆ (Իվ.) — *Լեզենդա.* *թարգմ.* Վահան Ազարեան։ Թիֆլիս, տպ. Եղբ. Թաւարթքիլաձէի, 1903. 8°, 29 էջ։

Նալայ ու Դամայանտի, Հնդկաստանի հէքեաթ։ Թարգմանեց գերմաներէնից հայ երեխանց համար Գէորգ Աբիմեանց։ Տփխիս, 1877 ?

Քննադ. Փորձ 1878, թ. 3 (Գրիչ)։

ՆԱԼԲԱՆԴԵԱՆ (Գ.) – Աղբիւրի մէջ (1903) տոմանուորներ ունի։

ՆԱԼԲԱՆԴԵԱՆ (Ե. Քահ.) *թարգմ.* — Տես Բեյօրուս (Ֆ. Վ.) — ՄԱՆՏԵԳԱՑՑԱ (Պ.) — ՕՍԻՊՈՎ (Ա.)։

ՆԱԼԲԱՆԴԵԱՆ (Կրօնիդէս Քահանայ Թ.) — *Բացատրութիւն Ս. Պատարագի արարողութեան*։ Երկասիրեց Կ. Ք. Թ. Ն. Սեբաստացի։ – Նամակ մը Մ. Թ. Նալբանդեանէ վարդապետ ի գիտութիւնս։ (43րդ Հրատ. Գաւթեան Գործակ.)։ Կ. Պոլիս, տպագր. Մ. Սարըեան և Ընկ., 1903. 8°, 71 էջ։

Քննադ. Ծաղիկ 1903, թ. 15։

ՆԱԼԲԱՆԴԵԱՆ (Մարտիրոս) *խմբագ.* — Տես Գիտութիւն։

Իր գլխաւոր յօդուածները տես Մուրճ 1903, թ. 8, 9. – 1904, թ. 6. – 1905, թ. 9։ – Բանասէր 1903, էջ 360, ևն։ Կենսագր.ը տես Թէոդիկ, «Ամէնուն տարեցոյցը» 1910, էջ 312, ուր ունի և յօդուած մը «օգնաւորդութիւնը» խորագրով, 312–317։ – Բիւզանդիոնի մէջ ունի յօդուածներ Մ. Ն., Մնալ. և մանաւանդ Մ. Ն. Բնագէտ ծածկանուններով։

ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ (*Միքայէլ Ղազարեան = Դօն Էմմանուէլ = կամ Էմմանուէլ = Սիմէօն Մանիկեան*). — *Մինին խօսք, միւսին հարս, վէպ. Մոսկուա*, 1857 ?

Եր. Շահազիզ իր՝ Նալբանդեանցի կենսագրութեան մէջ (էջ 65–66) այս վէպի մասին կը գրէ. «Մինին խօսք միւսին հարս» վէպը առնուած է Նախիջեւանի կեանքից. նորա մէջ Նալբանդեանցը նկարագրում է մի երեւոյթ, որ շատ հասարակ բան է մինչեւ ցայսօր եւս մեր կեանքում։ Մի պարոն համաձայնում է իր աղջկան կնութեան տալ մի երիտասարդի. խօսքը կապում է, եւ երիտասարդը, Նախիջեւանում ընդունուած սովորութեամբ, ուխտ է գնում ս. Կարապետ, որ վերադարձին հարսանեաց հանդէսը կատարէ. բայց նորա բացակայութեան ժամանակ աղջկայ հայրը դրժում է իր խօսքը եւ ամուսնացնում է աղջկան մի ուրիշի հետ, ուրեմն լինում է «մինին խօսք, միւսին հարս»։ Գրական տեսակէտից այդ վէպը մի ուշադրութեան արժանի բան չէ, որովհետեւ նա, իբրեւ վէպ, ամենաթեթեւ քննութեան անգամ չէ կարող դիմանալ, բայց նա կարեւոր է եւ ունի նշանակութիւն իր բովանդակութեամբ եւ պատմութեան ձեւով։ Նա արժանի է ուշադրութեան հայ ժողովրդի ամուսնական խնդրի վերայ ունեցած հայեացքի արտայայտութեամբ ընդհանրապէս եւ Նախիջեւանի կեանքի նկարագրութեամբ մասնաւորապէս։ Այդ կողմից այդ վէպը ոչ այլ ինչ է, եթէ ոչ շարունակութիւն հայկական այն ժողովըրդական գրականութեան ձեւին, որ իր «Վէրք Հայաստանի» գրուածքով ստեղծեց անմահ Խաչատուր Աբովեանը։ Նալբանդեանցը իր այդ վէպով հանդիսանում է իբրեւ Աբովեանի սկսածի շարունակող, նորա գաղրոցի մարդ, նորան հետեւող եւ աշակերտող։ Նամանաւանդ հետաքրքիր է վէպի այն մասը, որ նկարագրում է նախիջեւանցւոց ս. Խաչ վանքի պարտիզի ծառերի վերայ հնոտի կապելու սովորութիւնը, վախ չափելը, թեթեւ թափելը եւ այլն. հետաքրքիր է եւ վէպի յառաջաբանը, որի մէջ հեղինակը ընդունակ կերպով իր հայեացքն է յայտնում հայկական հին եւ նոր լեզուի մասին»։

— *Միքայէլի Նալբանդեանց Երկու Տող: Ճըշմարտութիւնը կրօն է, նորան միայն խնդրեցէք, իսկ նորանից ոչինչ:* Robert Owen. *Փարիզ, տպագրութիւն Արամեան*, 1861. 6°, 48 *էջ:*

Եր. Շահազիզ՝ Նալբանդեանցի կենսագրութեան մէջ (էջ 103–4) այս գործի մասին կը գրէ. «... Պարիզում անց կացրած երկու ամիս ժամանակը նա գործ դրեց իր «Երկու տող» վերնագրով գրքոյկի վերայ, որի նիւթը կազմում էր Այվազեան Գաբրիէլ վարդապետի այն նամակները, որ նա գրել էր Սարգիս Թէոդորեանի դէմ Եդուարդ Հիւրմիւզեանին։ Յայտնի բան է, թէ հանգուցեալ Սարգիս Թէոդորեանը ի՛նչպիսի աշխատանքով էր կարողացել ստանալ Սամուէլ Մուրատի յօդուտ «Որբ եւ աղքատ մանկանց» կտակած գումարը եւ ի՛նչ դիրք էր բռնել նա այդ գումարով առաջ Պադուայում բացուած, յետոյ Պարիզ տեղափոխուած Մուրատեան վարժարանում, յայտնի է նոյնպէս, թէ ի՛նչպէս էր սիրում ու պաշտպանում նա Այվազեանին նորա դէմ Գէորգ Հիւրմիւզի հանած հալածանքի ժամանակ. յայտնի է, վերջապէս, թէ ի՛նչպիսի ապերախտութեամբ վարուեցաւ այդ բոլորի փոխարէն Այվազեանը, կեղծելով ու ծածուկ նամակագրութեամբ նորա թշնամիների կողմն անցնելով։ Ահա Այվազեանի այդ ծածուկ նամակագրութիւնն էր, որ Նալբանդեանցը ձեռք բերելով Փօլսում, հրատարակեց «Երկու տող» վերնագրով, որով նա ցոյց տալով Գաբրիէլ վարդապետի մեղմեխ բնաւորութիւնը, պարզեց նորա երկդիմի վարմունքը, բաց արեց Ծերունի Թէոդորեանի աչքերը եւ ազգին ցոյց տուեց նորա անցեալ կեանքի եւ գործունէութեան խակական պատկերը[1]։ Մենք հասկանում ենք, որ շատ էլ օգտաւէտ չէ հրապարակ հանել մի որ եւ է գործչի անցեալ կեանքում պատահած այնպիսի դէպքեր, որոնք թէեւ անպատուաբեր են, բայց չեն վնասում գործչի ներկայ գործունէութեան, նամանաւանդ որ այդ դէպքերից շատերն էլ մասնաւոր, ընտանեկան բնաւորութիւն են կրում, բայց չենք կարող այդ բանում մեղադրել Նալբանդեանցին։ Արդէն շատ էր լարուած նոցա յարաբերութիւնը, արդէն շատ նեղութիւն, շատ հալածանք էր կրել նա վարդապետից, որ կարողանար նա նորան խնայել, գրականութեան մէջ ընդունուած համեստութիւնը, քաղաքավարութիւնը եւ չափաւորութիւնը պահպանել։ Նալբանդեանցի Պարիզում հրատարակած այդ գըրուածքը, որի մէջ, բացի վերոյիշեալ նամակագրութիւնից, մտել էր եւ նորա պատասխանը Զամուռճեանին, որ նորա «Հաւատամքի» դէմ՝ «Խայտառակութեան քննութիւն» խորագրով մի յօդուած էր գրել Մեղուում[2], մեծ աղմուկ հանեց այն ժամանակուայ ընթերցող հասարակութեան մէջ եւ մեծ հարուած տուեց Այվազեանին, որ առանց այն էլ հանգստութիւն չունէր իր թեժի ամենահայաշատ կենտրոնի՝ Նախիջեւանի հակառակորդներից եւ նամանաւանդ երջանկայիշատակ Մատթէոս կաթողիկոսի նորա հետ ունեցած յարաբերութեան սուր բնաւորութիւն ստանալուց։ Գրքի մէջ ամեն մի բան նախատեսուած էր թշնամիների սիրտը խոցելու համար, մինչեւ անգամ գրքի վերջում դրած բուի պատկերը եւս ունէր իր առանձին նշանակութիւնը, դա իր հակառակորդների այլաբանական պատկերն էր եւ նշանակում էր խաւարասէր, խաւարամիտ, գիշերատես եւ այլն։ Բուն Նալբանդեանցի էմբլէմն, նշանն էր. բուի պատկեր էր փորագրուած նորա այն կնիքի վերայ, որ, ինչպէս արդէն մենք յիշել ենք, նա այնքան արուեստագիտօրէն եւ նրբութեամբ շինել էր տուել Նախիջեւանում»։

Քննադ. Արեւելեան դար. – Ասոր դէմ Արշալոյս Արարատեան 1861, *թ.* 652։ – *Տես եւս Երեւակ* 1862, *հատ. ԺԱ, էջ* 85. – *«Հատուածք Մ. Նալբանդեանցի Երկու տողէն», Մեղու* 1861, *թ.* 135–6. – *Տես եւս թ.* 146, *Պոլիս հանելուն առթիւ, եւ թ.* 147։

— *Դօն – Էմմանուէլի բանաստեղծութիւններից մի քանի ոտանաւորներ: Մոսկուա*, 1880 ?

— *Հայրենասէրի տաղերը. ընտիր ոտանաւորներ Միքայէլ Նալբանդեանի (Հեղինակի պատկերով): Հրատարակութիւն Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան: Ժընեւ*, 1903. 8°, 24 *էջ:*

Բովանդակութեան. 1. *Մանկութեան օրեր.* 2. *Հայկական հիմը, «Մեր հայրենիք».* 3. *Վահան Մամիկոնեանի երգը, «Հիմի է՛լ խօսենք».* 4. *Յիշենք.* 5. *Երազ.* 6. *Ազատ աշխարհ.* 7. *Հայ մարդու հայրենիքը.* 8. *Ազատն Աստուած։*

Յառաջաբանը տես առաջին։

Թարգմ. — *Տես Ղազար Փարպեցու գրած թուղթը.* — ՌՈԲԵՐՏ (*Կլ.*) — ՍԻԻ (*Է.*)։

---

1. *Տես՝ Սարգիս Թէոդորեանի «Պատմութիւն Հայկազեան վարժարանի»*. *էջ* 390–398։
2. *Տես՝ «Մեղու» Պօլսոյ*, 1861. *թիւ* 123, *էջ* 21–22։

Նալբանդեանցի յօդուածները Հիւսիսափայլի մէջ. «Յիշատակարան կամ Էմմանուէլի օրագրութեան թերթերից», 1858, թ. ամսատետրակ 4, էջ 338–344. – թ. 5, 376–386. – թ. 6, 496–507. – թ. 7, 76–86. – թ. 8, 137–167. – թ. 9, 242–248. – թ. 10, 335–353, «Պ. Շահրէզի մի քանի նկատողութիւնքը, Իսահակեանցի պատասխանու վերայ» (Տես Մեղու Հայաստանի, թ. 37, էջ 291). – 1859, թ. 1. «Նոր տարի – Բեգզադէի նամակը – Տրովատորի բովանդակութիւնը – Բեգզադէի ազդարարութիւնը – Հայկական թէատրոն Մոսկվայի մէջ – Սուրբ Մեսրոպի գերեզմանի այցելուի նամակը – Գամառ – Քաթիպայի պահանջողութեան պատասխանը», 66–79. – թ. 2, «Հիւսիս – Շահրէզի գերութիւնը – Շամիլի խոստովանութիւնքը – Շահրէզի երազը – Արեւմուտք օրագիրը», 148–166. – թ. 8, «18/30 Յունիսի 1859, Համբուրգ, Հեսսէն – Համբուրգեան կոմսութեան նոր մայրաքաղաքը։ Յիշատակարանի խոստովանութիւնքը – Շահրէզի նամակը – Թիֆլիզու առաջնորդի ճանապարհորդութեան երկրորդ հատորը – Փարիզեան ազգային դպրոցը – Հրեշտակն Հայաստանի նոր օրագիրը – Մուրադեան վարժարանի աղօթքը». 647–659. – թ. 9, «Վերսայլ – Փարիզի Մուրադեան և ազգային վարժարանքը – Ամբրոսիոս և Խորէն վարդապետք – Լամարթինի ներդաշնակութիւնքը հայերէն – ուրիշ գրքերի ձեռնարկութիւնք, – Հ. Ղեւոնդ Ալիշանեանց, (Նահապետ) – Նորա նուագները (Հայրունի) – Գրիգոր Վարդապետ Կապարաճի կարապետեան – Ընծայ – Ընծայի ընդունելութիւնը – Ընդունելութեան ընդդէմ մի թերթ, – Կարապետ Վարդապետ Շահնազարեանց – Հին հայ հեղինակների տպագրութիւնը։ «Շար հայ մատենագրաց» անունով – Արամեան տպարան – Փելիքս և Պալյնէ – Ազգային երիտասարդք Փարիզի մէջ – Արեւմուտք կիսամսագիրը – Թիւրքիայում, հայ օրագրերի օրէ օր շատանալու յայտարարութիւնքը, Ցենզօր Թիւրքիայում տպելի գրքերի և օրագրերի վերայ. 725. – թ. 11, «Ներածութիւն – Բեգզադէի եօթն հրաշալիքը – Խառն լուրեր – Մի աբեղայի ֆանատիկոսութիւն», 907–918. – 1860, թ. 5, «Հատուածական խօսուածք ազգին վերաբերեալ – Պ. Շահրէզի և Պ. Տիրատուրեանի նամակները – Վեհափառ Կաթողիկոսի պատկերը», 378–396. – թ. 6, «Պ. Չէրքէզեանցի հայհոյութիւնքը – Պ. Խուդաբաշեանի գիրքը – Պ. Բարխէնեանցի նամակը – Սկայորդու տարածած լուրերը – Հիւսիսափայլը և Յիշատակարանս – Կ. Պոլսի Հայոց և Յունաց Պատրիարքների փոփոխութիւնքը», 462–486. – «Թալիսմաններ» (Ֆաբր Դ'Օլիվէի ֆրանսիացու գործը), 1858, թ. 12, 439–505. – «Մխիթար և Մխիթարեանք» 1858, թ. 5, 6, 11, էջ 399–416, 456–485, 416–427. – «Մեռելահարցուկ», 1859, թ. 8, 9, 10, էջ 581–699, 665–708, 753–771. – Բանաստեղծութիւններ, 1858, թ. 2, «Վայր ընկնող աստղեր», 130–133. – թ. 3, «Աղքատ կին», «Հայ մարդու հայրենիքը», 186–190. – թ. 4. «Լուսին», էջ 264. – թ. 5, «Առօրեայ աշխարհ», 374–375. – թ. 11, «Երազ», 412–415. – 1860, թ. 7, «Մանկութեան օրեր», էջ 22–23. – «Կրիտիկա (Ս. Նազարեանցի) Հանդէս նոր Հայախօսութեան Ա. հատորի վերայ», 1858, թ. 1, էջ 71–80. – «Կրիտիկա Գամառ-Քաթիպայի ժողովրդական լեզուով գրած, թարգմանված և տպված Ռօբինզոնի պատմութեան վերայ», թ. 5, 417–420. – Մանր յօդուածներ. «Նամակ առ հրատարակողը» 1858, թ. 4, 11, էջ 334–337, 428–438. – «Պրոպերցիա Ռոսսի», թ. 4, էջ 252–263. – «Աշխարհի կազմուածը և նորա հրաշքները», թ. 3, 190–216. – «Դամբանական ճառ», թ. 2, 156–158. – «Նկատողութիւնք», թ. 10, 298–311. – «Ազգային ժառանգութիւնք» 1859, թ. 5, 379–404։

Նալբանդեանցի այլեւայլ գրութիւններն ու իր մասին գրուածները. Արարատ 1851, թ. 33, էջ 519–20. «Հերքումն յիմարական կարծեաց, զոր անմիտք ոմն ի վերայ ուսման Միքայէլ Ղ. Նալբանդեանցի յաշակերտութենէ Տեառն Գաբրիէլի Պատկանեան ի Նոր Նախիջեւան». – Նոյնը տես Շահազիզի յիշուած երկին մէջ, էջ 42, և դիմացը յէջն 43՝ այդ յիմարական կարծեաց հերքումը. – «Փշրանք Մ. Նալբանդեանի չարագրութիւններից» (Ն. Քարամ.), Արարատ 1896, թ. 1, էջ 17։ – Բազմավէպ 1902, էջ 73, (կենսագր. Հ. Բ. Զրար.) – 1903, թ. 7, (Լեօ)։ – Բանասէր «Միք. Նալբանդեանցի արձանի բացումը» (Գր. Զալխուշ.) 1902, էջ 348. – «Գերեզմաններ. Գամառ-Քաթիպա և Մ. Նալբանդեան» 1902, էջ 26։ – Բանբեր Բ. գիրք, էջ 205–217, «Կայծակ»։ – Այս թերթուածի առթիւ կը գրէ Բանբերի խմբագիրը. «Ստորեւ զետեղում ենք Մ. Նալբանդեանցի անտիպ գրուածքներից մինը որ հեղինակած է բանտի մէջ։ Չորս խուլ պատի միջեւ տաղտկութեան դէմ միակ մխիթարանքն ընթերցանութիւնն ու գրիչն էր։ Բարեկամները բանտարկեալին կարդալու գրքեր էին ղրկում, որ յետ էր դարձնում երբեմն ինչինչ գրութեան հետ միասին։ Պ. Կ. Եզեանցն էլ միանգամ ղրկած է եղել Սերովբէ Վարժապետ Տէր Պետրոսեանի «Տաղեր»ը։ Ահա այս գրքոյկում, որ սիրով ընձեռեց մեզ պ. Եզեանը, Նալբանդեանը գրել է երեք կտոր բան։ Թղթի պակասութեան թէ ուրիշ պատճառով գրած է «Տաղեր»ի լուսանցքում և տողերի միջեւ։ Առաջին գրուածը բռնում է 3–18 էջը. միւսը՝ 90–92 և վերջինը 88–80, գրուած հակառակ ուղղութեամբ։ Ձեռագիրը խիստ եղծուած է, որովհետեւ մատիտով է գրուած և մեծ դժուարութեամբ է կարդացւում։ Աւելի դիւրընթեռնելին վերջինն է, որ և հրատարակում ենք։ Սա չափական գրութիւն է, բաղկացած 136 քառեակներից, և թւագրած հեղինակի ձեռքով, 1–137, ուր ընդհատւում է գրուածքը և մնում թերի։

Ձեռագրում վերնագիրը չէ նշանակուած։ Առաջին արձակ կտորի վերնագիրն է «Յուսակ». հետեւութեամբ՝ մեր հրատարակածը խորագրեցինք «Կայծակ», գլխաւոր հերոսի անունով։

Հռչակաւոր հայ գործիչի այս երկը, որ մի պոյեմ է, գեղարուեստական առանձին արժէք չունի. բայց նշանաւոր է նրանով, որ ցոյց է տալիս թէ որպիսի հեշտութեամբ էր գրում Նալբանդեանցը։ Արագ և դիւրին գրելն անշուշտ նշան է խոշոր գրական ձիրքի. ոչ միշտ անհրաժեշտ՝ բայց անպայման արժանաւոր յատկանիշ տաղանդի։ Ամբողջ գործը գրուած է միանգամից, առանց սրբագրութեան և գրեթէ առանց ջնջելու։

Մ. Նալբանդեանցը գրական էր բառի այն ուղիղ իմաստով, որ գրիչը նրա համար անբաժան ընկեր էր, և գրելը բնական պէտք, որն անկարող էին զսպել հալածանք ու արգելքն։ Բնաւորութեամբ խիստ կրքոտ – կիրք՝ որին հլու էին լեզուն և գրիչը, Նալբանդեանց ընդունակ էր անելու այնպիսի տղայական խաղեր, որպիսին է «Ազգմիք», որ այնքան արտասովոր համարձակութեամբ տպեց «Լումայ» հանդէսը։ «Լումայ»ի ղեկավարներին թւում է, թէ ինչոր գրում է մահկանացուի ձեռքով, կարելի է տպել անխտիր և մանաւանդ «Լումայ»ում։ Չէինք կարծում, որ անխտրութիւնն այդքան հեռու կարող է գնալ։ Գրական հետաքրքրութիւնը ամենից առաջ պահելու է գրական մաքրութիւն և անցնելու չէ վայելչութեան սահմանները։ Բայց արժանապատիւ հօր՝ տէր Գիւտի հե-

տպագրութիւնն արշաւասոյր հասել է մինչեւ Հայոց Կովկասը… ի վնաս Նալբանդեանցի դալար յիշատակին եւ հայ գրի անարատութեան…»: – Բիւզանդիոն 1898, թ. 366: – Բիւրակն 1899, էջ 682, «Նալբանդեան Միքայէլ. Նոր հատորը»: – Գաղափար 1894, թ. 2, էջ 136–156: – Գեղունի Բ տարի 1903, թ. 1-10 (Լէօ): – Երեւակ 1860, հատ. ը. էջ 83–102 «Նալբանդեանցի մէկ նամակին վրայ». – Նոյն՝ «Մեղուին հրատարակչին քանի մը խրատներ», անդ., էջ 306–315, 331–337, 364–372. – մահուան առթիւ 1866, թ. 124, էջ 216: – Ջեփիւռ հայրենեաց 1867, թ. 2: – Լումայ «Մ. Նալբանդեանի մի նամակ», 1897, էջ 335. – «Երկու հատուած Մ. Նալբանդեանցի Աշխարհաբառ Քերականութեան Ներածութիւնից», 1900, Ա, էջ 37–59. – «Մատենագրական նորութիւններ», էջ 353. – «Նոր նիւթեր Միք. Նալբանդեանցի կենսագրութեան համար. – Երգիծաբանական ոտանաւոր. – Նամակ Կալկաթայից. – Քարոզէզ հրատարակելու հարցը. – Ինչպէս են տարածւում հայերէն գրքերը. – Մ. Նալբանդեանցի հիւանդութիւնը եւ Բժ. Սուլթան շահի տուած վկայականը» (Մինաս Բերբերեան). 1902, թ. 2, էջ 163–174. – «Հեգելը եւ նորա ժամանակը», 1902, թ. 5, էջ 53–64. – թ. 6, էջ 128–137. – 1903, թ. 1, էջ 147–156: – «Ասւում է Լովէյու համար», 1903, թ. 6, էջ 24–34. – «Ազգ-մէք», 1904, թ. 1, Յաւելուած, էջ 177, եւն. – «Խորէն Արքեպիսկ. Գալֆայեան եւ Նալբանդեանցի «Ազգմէքը». – Տէր Շահազիզ (Եր.) կամ Լումայ 1903, թ. 2, 3, 4, 5, 6. – «Լուդովիկոս Նապոլէօն Բօնապարտէ», 1904, թ. 3, էջ 122–127. – «Միքայէլ Նալբանդեանցը Հնդկաստանում». Տէր Շահազիզ (Եր.) կամ Լումայ 1904, թ. 2, 3, 4, 5. – «Նալբանդեանցի նորագիւտ հնագոյն նամակների առթիւ», 1905, թ. 1: – Հանդէս գրականական եւ պատմական. «***-ի բանաստեղծութիւններից. Վաղող ջրին. – Մտածութիւններ. – Բանաստեղծ. – Յոյս. – Օտարի գերեզմանի վերայ. – Վեցերորդը. – Մի՛ չար. – 1889, Գիրք Բ. էջ 11–19. – «Ճշմարտութիւն. – Ուսանող եւ մեծատուն. – Մտածութիւն (Նուէր Կ. եւ Բ.) – Ջերքէզի երգ (Պուշկինից). – Մուսայից մուսային. – Գարնան մուտ. – Կեանք», 1890, էջ 8–26. – «Ժ. Ժ. Ռուսոյի յիշատակին. – Հենրիկոս Թոմաս Բօքլի յիշատակին. – Սուրբ Մեսրովբի տօնին. – Կնդուկ պոչատի եւ նորա Սանչոյի մկրտութիւնը», 1895, Գիրք Զ, էջ 242–250. – «Երկու խօսք (Հիւսիսափայլի լեզուի մասին) թէ ինչպէս է մեր հայեացքը մի օրագրի պաշտօնակատարութեան մասին», 1889, Գիրք Բ, էջ 260–271. – «Յառաջաբան (նամակ առ Տէր Յարութիւն Քահանայ Գեօքչէեան զոր հեղինակը կցեր է իր բանաստեղծութիւններուն), էջ 272–275. – «Մատենախօսութիւն «Սօս եւ Վարդիթեր» վէպ պերճ Պռօշեանցի», 1890, էջ 322–352. – «Յաղագս հայկական դպրութեան ճառ». Յաւելուած «Գրականական եւ Պատմական հանդէսի» 1895, Գիրք վեցերորդ, էջ 1–64: – Մեղու 1861, թ. 146: – Մշակ, «Հրապարակախօսի գերեզմանի առաջ», 1896, թ. 76. – «Մ. Նալբանդեանցի արձանի բացումը», 1902, թ. 214. – Ազգմէքի առթիւ, 1904, թ. 106: – Նոր-Դար, «Մ. Նալբանդեանցի հոգեհանգիստը», 1893, թ. 106. – 1900, թ. 32. – 1902, թ. 15: – Տարազ, «Դարձեալ Աչքակապութիւն», 1897, թ. 9, էջ 153. – «Մի էջ Մ. Նալբանդեանցի կենսագրութիւնից» (Ե. Շ.), 1900, թ. 3, 4, 7, 9, 10, 11, եւ ապա, «մեր քննադատների կարծիքները Մ. Նալբանդեանցի կենսագրութեան մասին», թ. 16, 17, 18, 19, 21, 23, 25, 27, 28, 30, 32. – «Միք. Նալբանդեանցի մի անտիպ բանաստեղծութիւնը», 1900, թ. 10. – «Նալբանդեանցի տունը, շիրիմը», 1900, թ. 47. – «Մ. Նալբանդեանցի նամակը (անտիպ) Ն. Նախիջեւանի բարբառով, որ նա գրել է իր մահից համարեա մի ամիս առաջ եւ պարունակում է իր մէջ տոյց տեղեկութիւններ նրա առողջութեան մասին՝ նրա կեանքին վերջին տագնապալից օրերում», 1902, թ. 35: – Փորձ 1881, թ. 5, էջ 156–198, «Սատանայի պաշտօնական մեծ հանդէսը»:

«Ազատն Աստուած» երգին ֆրանս. թարգմ.ը տես *L'Arménie* 1894, թ. 65:

Կենսագրութիւնը տես ՇԱՀԱԶԻԶ (Եր.), «Միքայէլ Լազարեան Նալբանդեանց»:

— *Միքայէլ Նալբանդեանց, համառօտ կենսագրութիւն: Բաքու, հրատ. տպագր. «Արօր» տպ.ի*, 1897 ?

«Հայրենասէրի տաղերը»-ին հրատարակիչը հետեւեալ կենսագրականը գրած է գրքին սկիզբը.

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(1830–1866)

«Այդ քաղցր անուան հետ կապուած է հայոց նորագոյն պատմութեան այն նշանաւոր շրջանը, երբ համատարած խաւարի եւ ստրկութեան մէջ՝ երկչոտ քայլերով սկզբնաւորւում էր հնի եւ նորի անհաւասար մաքառումը: Տգիտութիւնը եւ ստրկական համակերպումը – դարերի այդ երկու սեւոր ժառանգները – տէր էին դրութեան, եւ խիստ փոքրաթիւ էին այն հայ զաւակները, որոնց սիրտը արթնանում էր ի տես այդ թշուառ իրականութեան:

Հիւսիսում, հազարաւոր մղոններ հայրենիքից հեռու, վառուել էր մի հրաղ – «Հիւսիսափայլ» էր նրա անունը – որի շուրջը համախմբուել էին հայկական առաջադիմութեան ռահվիրաները, հաստատուն որոշումով՝ փոթորկել ասիական անշարժութեան ծովը, մերկացնել հայի անհատական ու հասարակական ախտերը եւ գիտութեան վերջին խօսքով զինուած՝ առաջնորդել նրան դէպի եւրոպական քաղաքակրթութիւն:

Նալբանդեան մէկն էր այդ ռահվիրաներից: Դեռ բոլորովին երիտասարդ՝ նա գրաւել էր արդէն իր հայրենի քաղաքում, Նոր-Նախիջեւանում, ընդհանուր ուշադրութիւն՝ իր խոշոր ընդունակութիւններով, իր ճարտար լեզուով ու մարտական տեմպերամենտով:

Նրա հասարակական գործունէութեան առաջին շրջանը, 1847-ից մինչեւ 1853 թ. աղմկալից էր, լի անախորժ ընդհարումներով, գլխաւորապէս հայոց եկեղեցական վարչութեան հետ, որ խիստ թշնամական աչքով էր նայում «ըմբոստ տիրացուի» վրայ: Եւ ուրախ պէտք է լինել, որ Նալբանդեան կարողացաւ ազատել այդ ճահճացած մթնոլորտից եւ գնաց դէպի հիւսիս, իր ուսման ծարաւը յագեցնելու համար:

1853-ին մենք նրան տեսնում ենք Մոսկուա, յետոյ Պետերբուրգ, որ համալսարանում քննութիւն տալով՝ ստացաւ ուսուցչական վկայական եւ հայոց լեզուի ուսուցիչ կարգուեց Մոսկուայի Լազարեան ճեմարանում: Բայց շուտով թողեց ճեմարանը եւ սկսեց պարապել ինքնազարգացմամբ: Նա կարդում էր անդուլ եռանդով եւ ուսումնասիրում ամենալայն, բազմակողմանի նիւթեր: Ռուս ժամանակակից գրականութեան սիւները՝ Բելինսկի, Դոբրոլիւբով, Չերնիշեւսկի՝ չկթայում էին նրա միտքը: Նա միաժամանակ տարւում էր եւ բնագիտական ուսմունքներով: Բնա-փիլիսոփայական խնդիրների մէջ նրա հայեացքները հակւում էին դէպի մատերիալիզմ. նա խորշում էր վերացական փի-

ճոխափայլությունից և մանավանդ՝ սին ու ամուլ աստուածաբանությունից...

Մինչև 1858 թիվը՝ Նալբանդյան անխոնջ ուսումնասիրում էր։ 1858-ին Ստեփ. Նազարյան հիմնեց «Հյուսիսափայլը» և նա դարձավ այդ համակրելի ամսաթերթի տաղանդավոր աշխատակիցներից մեկը։ Կոմս Էմմանուելը – այդպես էր մեծ մասամբ ստորագրում Նալբանդյան – իր հրապարակախոսական յոդւածների մեջ անհաշտ էր, իբրև մարտիկ և իբրև քննադատ։ Հայ ժողովրդի և մանավանդ նրա հոգևորական ու կեղեքիչ դասերի – կղերի և վաճառականության – մոլությունները նա մտրակում էր ժայռե հանդգնությամբ և անսանձ մոլեգնությամբ։

Մի ուրիշ հանգամանք, որ անշուշտ ժամանակի նշանակն էր և կազմում էր հայ նորաբողբոջ հրապարակախոսության բնորոշ գիծը – դա այն էր, որ Նալբանդյան գրում էր աշխարհաբար լեզվով, որի կազմակերպողներից մեկը եղավ նա։ «Գործ ունենալ կենդանի ժողովրդի հետ, կենդանի բարբառի միջոցով, կենդանի գաղափարներ տարածելու համար» – այս էր նրա նշանաբանը։

Հրապարակախոսական յոդւածներով չէր միայն, որ Նալբանդյան սիրելի դարձավ հայ ժողովրդին, այլ և իր հրաշունչ ոտանավորներով, որ հայրենասեր բանաստեղծը այնքան խանդավառությամբ երգեց չղթայակապ հայի ազատությունը։ Սերունդներ երգեցին և դեռ կը շարունակեն երգել «Ազատն Աստուած»ը և «Մեր հայրենիք»ը, որ դարձավ հայ ժողովրդի հիմնը, նրա վշտերի և յույսերի արձագանքը...

1861-ին Նալբանդյան ուղևորվեց արտասահման, ուր մնաց մի ամբողջ տարի։ Այնտեղ նա ծանոթացավ մի շարք գաղափարների և հոսանքների հետ, որոնք անմատչելի էին նրան Ռուսաստանի մեջ։ Հռչակավոր Ինտերնացիոնալի հիմքն էր դրվում Լոնդոնում և Կարլ Մարքս պատրաստում էր հրապարակական ամբիոնից քարոզել իր գաղափարները «համայն աշխարհի պրոլետարիատին»։ Միւս կողմից՝ նիհիլիզմը և սոցիալական մի շարք թեօրիաներ – Օվենիզմ, Սեն-Սիմոնիզմ, Ֆուրիերիզմ և այլն – անդայլին կերպով գրավում էին բոլոր առաջավոր տարրերին... Նալբանդյանի անխոնջ ու դիտող միտքը չէր կարող անտարբեր մնալ դեպի այդ ուսմունքներն ու հոսանքները և նրանց հետ ծանոթանալու արդյունքն էր նրա «Երկրագործություն» գրվածքը։

Եվրոպայում Նալբանդյան մտավ յարաբերության մեջ ռուս նշանավոր էմիգրանտների, մանավանդ Հերցենի հետ, և այդ գլխավոր պատճառներից մեկն էր, որ վերադարձին նա ձերբակալվեց ու փակվեց «Պետրոպավլովսկի» կոչված բերդում, որը յատկացրված է ամենավտանգավոր քաղաքական յանցավորների համար։ Նալբանդյան մնաց այդտեղ ամբողջ երեք տարի, 1862-ից մինչև 1865 թ., դժոխային պայմաններում։ Նա կորցրեց աչքերի լույսը, կորցրեց առողջությունը։ Թոքախտի սարսուռ առաջադիմությունը դրդեց կառավարության՝ արձակել Նալբանդյանին։ 1866-ի սկզբներում նա ազատ էր, բայց արդէն հիվանդ ու անճանաչելի։ Նախկին աշխույժ ու կրակոտ երիտասարդը այժմ մի ուրվական էր... Բարեկամին ուղղած մի նամակում նա գրում էր։

«Ամսոյս 7-ին մտայ Կամիշին, աւելի մեռած, քան թէ կենդանի։ Ինձանից շատ նամակ մի սպասէք, ոչ ոյժ կայ, ոչ զօրութիւն։ Այս տողերը գրում եմ, բայց կուրծքս ու թիկունքս ցաւից խեղդում են։ Այստեղ ամենայն բժիշկը ինձ պարզապէս ասաց, որ օրէ օր մօտենում եմ գերեզմանին. ջերմը ամենայն օր հոգիս է հանում, քրտինքը, հազը և թուքը թիւ չունին. աւելցուր սրա վերայ իմ անօգնական միայնութիւնը։ Բժիշկը ինձ պատուիրում է սաստիկ խաղաղութիւն. բայց թողնում են խաղաղ ամեն քայլափոխիդ բարոյական անախորժութիւնք այստեղի ոստիկանի կողմից»...

Այդպէս չարաչար տանջանքների մէջ մեռաւ Նալբանդյան, 1866 թ. մարտի 13-ին։ Շատ շուտ մարեց այդ թանկագին կեանքը, հիւծւած կռիւներից և տանջանքներից. նա չկարողացաւ տալ, ինչ որ կարող էր. նա չունեցաւ ժամանակ՝ ծաւալելու իր բովանդակ շնորհքն ու կորովը, այնու ամենայնիւ մեծ զարկ աւեց հայկական ինքնաճանաչութեան։ Սերունդները միշտ երախտագէտ սրտով կը յիշեն բանաստեղծ-հրապարակախօսի տանջւած ու հրապուրիչ պատկերը, և՝ ներշնչւած նրա ազատասիրական իդէալներով՝ բարձր կը բռնեն հայ ազգայնութեան դրօշը, որ խորհրդանշան է դարաւոր արիւնոտ պայքարների և դրաւական՝ հայի անսայթաք առաջադիմութեան»։

«Հանգուցեալի անտիպ աշխատութիւններից յայտնի են, կ'ըսէ Շահազիզ՝ իր յիշուած երկին մէջ (էջ 125-6)։

1. Փորձ արդի աշխարհաբառ լեզուի քերականութեան [1]։
2. Երկրագործութիւն [2]։
3. Ազգմէք (դրաբար բանաստեղծութիւններ) [3]։
4. Աստուածաշնչի համեմատութեան նիւթեր։
5. Ֆիզիկա-փիլոլոգիական-պատմաբանական-աշխարհագրական ներածութեան նիւթեր [4]։
6. Քիմիայի համառօտութիւն (կիսատ)։

---

1. Այս աշխատութիւնը, որ նա հասցրել էր մինչև բայերը, «Քիմիայի Համառօտութիւն» վերնագրով գրուածքի հետ միասին այժմ գտնվում է հանգուցեալի քրոջ որդի պ. Յովհաննէս Խաչատրեանի մօտ։ Դժբախտաբար քերականութեան թերթերի մի մասը կորած է, իսկ եղածներից հազիւ թէ կարելի լինի մի ամբողջութիւն կազմել։

2. Այս գրուածքը, որ բոլորովին պատրաստ է եղել տպագրութեան համար, այժմ չկայ։ Գուցէ հնարաւոր լինի գտնել նորան հանգուցեալ Միքայէլ Տէր-Գրիգորեանցի թղթերի մէջ, որ, ինչպէս մենք լսել ենք, նորա մահից յետոյ անցել են նորա ազգական Մարկոս Խուկիգարեանցի ձեռքը։

3. Ազգմէք կոչուած բանաստեղծութիւնները մենք տեսած չենք. դոքա եւս մնացել են Միքայէլ Տէր-Գրիգորեանցի ձեռքին։ Այդ բանաստեղծութիւններից նշանաւոր է եղել մի պօէմայ «Արկածք Ադամայ» վերնագրով, որի մասին Ադայեանցը ասում է՝ «գրուածներից (Նալբանդեանցի) նշանաւոր էր «Արկածք Ադամայ» պօէման, գրւած ընտիր գրաբարով։ Այդ բանաստեղծութիւնը գլխէ ի գլուխ բերան էր արել Մ. Բուդաղեանցը և ասում էր շատ տեղ։ Դա մի շատ հրաշալի բանաստեղծութիւն էր, նկարագրում է բնականի կռիւը անբնականի դէմ, Ադամը վիճում է հրեշտակի հետ որ թոյլ չի տալիս նորան սիրելու Եւային։ Հրաշալի էր մանաւանդ սիրահարուած Ադամի և Եւայի գեղեցկութեան նկարագիրը»։ Տես Ադայեանցի «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը». Մուրճ 1893 թ. 9։

4. Աստուածաշնչի համեմատութեան և ֆիզիկա-փիլոլոգիական պատմաբանական-աշխարհագրական ներածութեան նիւթերը հանգուցեալի կորած համարած ճանապարհորդական Յիշատակարանի հետ միասին գուցէ գտնվում լինին նոցա եղբօրորդիների Ղազարոսի և Յարութիւնի մօտ։ Մենք լսել ենք, որ նոցա մօտ գտնվում են հանգուցեալի գրուածները, բայց չենք կարողացել տեսնել։

Նալբանդեանցի երկերի այս ցուցակից կարելի է տեսնել, որ հանգուցեալը ձեռնարկել է ամեն տեսակ գրական աշխատանքի, գրականութեան համարեա բոլոր ճիւղերի մէջ էլ փորձել է իւր ոյժը։ Նա թարգմանութիւններ է արել, վէպ, բանաստեղծական և քննադատական յօդուածներ է գրել, քերականութիւն է յօրինել, բանաստեղծութիւններ է չափագրել և գիտնական վաստակների է ձեռնարկել։ Սակայն նա ոչ թարգմանիչ է, ոչ կրիտիկոս, ոչ վիպագիր, ոչ բնագէտ, ոչ գիտնական և ոչ, վերջապէս, բանաստեղծ, այլ հրապարակախօս, որովհետև թէև նա մասնաւոր կերպով յաջողութիւն է գտել բոլոր իւր գրաւոր ձեռնարկութիւնների մէջ, բայց նորա տաղանդը լայն ասպարէզ է գտել, իւր բոլոր ոյժով արտայայտուել է միայն նորա հրապարակախօսական գրուածներում։ Ով որ միայն ուշի ուշով կարդացել, ուսումնասիրել է նորա Յիշատակարանները, Մեռելահարցուկը, Մխիթարեանք, Երկու տող և Պօլսի Մեղուում տպուած յօդուածները և առհասարակ ով որ քննական աչքով է նայել նորա գրական գործունէութեան վերայ, անկասկած անհերքելի կերպով համոզուել է, որ Նալբանդեանցի գրուածների մէջ կան բոլոր այն տարրերը, որ յատուկ են հրապարակախօսներին։ Աշխարհահայեացքի լայնութիւն, առաջադիմութիւնների նպատակայարմարութիւն, հրապարակի վերայ եղած կամ դրուած խնդիրների բազմակողմանի քննութիւն, ժամանակակից հանգամանքներին մօտ ծանօթութիւն, ամենախճճուած խնդիրների մասին պարզաբանութիւն, բազմակողմանի գիտութիւն, դժուար հասկանալի վերացական մտքերի դիւրըմբռնելի կերպով բացատրելու և ժողովրդականացնելու ընդունակութիւն, սուր գրիչ, անդիմադրելի փաստաբանութիւն և այլն, անկաշառ համարձակութիւն — ահա նորա գրուածների գլխաւոր յատկութիւնները։ Յայտնի է, որ մի ազգի հրապարակախօսը այդ ազգի իր ժամանակի մտաւոր կեանքի ճիշտ պատկերը, հայելին է. նորա մէջ արտացոլում, պատկերանում են ազգի ժամանակակից կեանքի երևոյթները իրենց բոլոր լաւ և վատ կողմերով։ Ահա այդ տեսակէտից նայելով և Նալբանդեանցի վերայ, կարելի է ասել, որ նորա հրապարակախօսական գործունէութեան մէջ պատկերանում է յիսնական և վաթսնական թուականների Հայոց կեանքը։ Հայերը անցեալ դարի վերջերից և ներկայ դարի սկզբից մտնելով Եւրոպային, սկսում են ընդունել այնտեղից քաղաքակրթուած ազգերի լուսաւորութիւնը»։

Հետևեալները աւելցուր վերոյիշեալներուն վրայ. «Կոմս Էմմանուէլ՝ Ապօլօնին» (քերթուած) Էմ. 1859, մայիս 31 և Տեսիլ. Մեղու 1861, թ. 148։ – «Կոմս Էմմանուէլի օրագրութեան յիշատակներէն» (Հիւսիսափայլէն) Մեղու 1860, թ. 86. – Դարձեալ Փարոս 1881 Ե, 14։ – Փորձ 1878, թ. 3։ – Արարատ 1851, էջ 307, 419, 420։

ՆԱԼԲԱՆԴԵԱՆ (Վահան). — *Leopold von Rankes Bildungsjahre und Geschichtsauffassung.* Von Dr. Wahan Nalbandian. Leipzig, B. G. Teubner, 1902. էջ VIII + 103?

Քննադ. Լումայ 1902, թ. 2, էջ 223-4։

Անահիտի մէջ (1898, էջ 288, 336), ունի. «Գեղարուեստի էութիւնը և նպատակը»։ – Մուրճի մէջ ունի. «Հէնրիկ Իբսէն», 1902, թ. 2, էջ 110-136. – թ. 3, 76-103. – թ. 4, 144-171. – թ. 5, 106-126. – թ. 6, 118-154. – թ. 7, 204-216. – թ. 8, 162-177. – թ. 12, 98-124։ – Պ. Դուրեանի մասին եւս ուսումնասիրութիւն մ'ունի, տես Յաւելուածին մէջ։

Մահուան առթիւ. Անահիտ 1903, թ. 1։ – Արարատ 1902, էջ 2023 (պիտի ըլլայ 1123)։ – Բիւզանդիոն 1903, թ. 2028։ – Մշակ 1903, թ. 15, 17։ – Մուրճ 1902. թ. 12։ – Տարազ 1902, թ. 48։

ՆԱԼԵԱՆ. — Տես ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ։

ՆԱԼԵԱՆՑ (Աւետ.) — Օսին և Մօսին, վէպիկ։ Աղեքսանդրապօլ, տպ. Գ. Մ. Սանոյեանցի, 1899. 8°, 93 էջ։

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ (Առաքել Անտօնեան). – «Առասպել և ճշմարտութիւն». Արարատ 1877, էջ 342. – «Գայլ և աղուէս», 1878, էջ 272։ – Բազմավէպ 1892, էջ 258, եւն, եւն։

Իր Առակներուն հատորը տես Յաւելուածին մէջ։

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ (Յովհ. Վ.) — Բնական սանդուխ, պատկերազարդ։ Հայերէն Այբուբենը և Ընթերցանութիւնը, Ջրուցատրութիւնը և Ուղղագրութիւնը արագ, հիմնապէս և գործնականապէս ուսանելու համար։ Գիւտ և աշխատասիրութիւն Յովհ. Վարդապետի Ն. եպիսկ. փոխ. Կ. Հայոց Պիթլիս (51-րդ հրատարակ. Գաւթեան գործակալ.)։ Կ. Պոլիս, տպագրութիւն Սագաեան, 1905. 8°, 39 էջ։

Նախագիտելիք գիտակցաբար կարդացնելու մասին. — Տես ԱՂԱՅԵԱՆՑ (Ղ.)։

Նախագիտելիք մանկանց, թարգմանեալ ի գաղղիականէ. տպագրեալ արդեամբ Հայկազեան ընկերութեան։ Կ. Պոլիս, տպ. Յովհ. Միւհէնտիսեան, 1860?

Տես Մեղու 1860, թ. 105։

= Բ տիպ, անդ, ի տպ.ի «Արևելեան», 1862. 8°, 172 էջ։

Քննադ. Երևակ 1862, Հատ. ԺԱ. էջ 111, 143, 176։

Նախագիտելիք օսմ. լեզուի. — Տես ԳԱՅՍԷՐԵԱՆ (Յ. Գ.)։

Նախադուռն կրօնի. — Տես ԱՂԱՋԱՆԵԱՆ (Մ.)։

Նախադուռն վարժութեան. — Տես ՊՈՊՈՎ (Կ.)։

Նախադրունք հայ. գրաբ. քերականութեան. — Տես ԹՈՎՄԱՃԵԱՆ (Հ. Թ.)։

Նախակիլիկեան, եւն. — Տես Հարեան։

Նախակրթանք հայերէն լեզուի. — Տես ԱՅՎԱԶԵԱՆ (Գ. Եպ.)։

Նախակրթարան ֆրանսերէն լեզուի. — Տես ՆԱՐ-ՊԷՅ (Խ.)։

Նախակրթութեան Հայկազեան լեզուի (Գիրք). — Տես ԽՈՒԴԱԲԱՇԵԱՆՑ (Ա.)։

Նախակրթութիւն իտալերէն լեզուի, գրաբար։ Վենետիկ, տպ. Մխիթ. 1834, էջ 114։

Նախաձաշիկ ուսմանց. — Տես ՏԷՐ-ՊԱՐՍԱՄԵԱՆ (Մ. Քահ.)։

Նախանձաւորութիւն, եւն. — Տես ՆԱՀԱՊԵՏԵԱՆ (Հ. Ե. Վ.)։

Նախաշաւիղ գիտութեանց և արուեստից. — Տես ՄԿՐԵԱՆ (Յակոբիկ)։

Նախաշաւիղ կրթութեան. — Տես ԱԲՈՎԵԱՆ (Խ.)։

Նախաշաւիղ քրիստոնէական հայ պատմութեան. — Տես ՄԱՆԴԻՆԵԱՆՑ (Յով. Քահ.)։

— *օրերեւոյթաբանութեան.* — Տես ԳԱՅՖԱՃԵԱՆ (Մ. Ա.)։

Նոյն, տես Նախաշաւիղէն վերջ եկող բառին տակ։

ՆԱԽԱՇԵԱՆՑ (Յ. Քահ.) – Տես *Զայնագրեալ տաղարան*։

Նախաշող Արամ. — Տես ՊԱԼԵԱՆ (Տ. Վ.)։

Նախապաշարմունք. – Տես ՆԱԶԱՐԵԱՆ (Յ.)։

Եւս՝ Սիոն 1868, էջ 276։ – Բիւրակն, Նոր շրջան։

Նախապատրաստութիւն Սրբոյ Պատարագի. Եւ Աղօթք գոհութեան զկնի նորա։ Առ ի պէտս ամենայն Քահանայից որք պատարագեն։ Յաւելեալ և վասն աշխարհականաց աղօթք յառաջ և զկնի, խոստովանութեան և հաղորդութեան։ Տպագրեալ ի Թրեստ։ Յամի տեառն. 1784. *ի տպարանի Հարց Մխիթարեանց. Հրամանաւ Մեծաւորաց. փոքր* 8°, 112 *էջ։ Հասարակ տպագրութիւն։*

= Բ *տիպ, անդ,* 1797. 8°, 98 *էջ։*

Աստ մէջ այլայլութիւններ կան աղօթքներու։ Ա տիպը ընտրելագոյն է։

Տես եւս Աղօթամատոյց Քահանայից։

Նախասահմանութեան (վասն). — Տես ԹՈՎՄԱՍ (Ս. Աքուինացի)։

Նախընթաց օրը. – Տես ՏՈՒՐԳԵՆԵՒ (Ի. Ս.)։

Նախիջեւանի գաւառ. – Տես ԼԱԼԱՅԵԱՆ (Ե.)։

Նախիջեւան (Հին). – Տես Արարատ 1872, էջ 37։

Նախճուան. – Տես Լումայ 1900, Ա, էջ 293. – Մուրճ 1905, թ. 7, էջ 144։

«Նախնեաց թարգմանութեանց վրայ դատաստան ընելու (ընդհանուր տեսութիւն մը)». Բազմավէպ 1875, էջ 352։

Նախնական գիտելիք. – *Նախնական դասագիրք, եւն, եւն.* — Տես յաջորդ բառերը։

Նախնեաց ռամկօրէնին վրայ հետազօտութիւնք. — Տես ՅՈՎՆԱՆԵԱՆ (Հ. Գ.)։

ՆԱԽՋՈՒԱՆՑԻ (*Պետրոս Արքեպ.*) – Տես ԲԵՐԴՈՒՄԵԱՆՑ (Պ. Ա.)։

ՆԱՀԱՊԵՏ. — *Նահապետի երգերը.* — Տես ԱԼԻՇԱՆ։

Նահապետ Որդի Գուշնազարի. — «Հին տաղաչափ Բանաստեղծ պանդուխտ վաճառական մի». Բազմավէպ 1874, էջ 15-25։ Հոս տպուած տաղերը, պատկերը, եւն, կան Յովհաննէս Հոլովի «Պարզաբանութիւն հոգենուագ Սաղմոսացն Դաւթի» գործին մէջ. տես գործիս 82 էջը (Բ հատ.)։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ. — *Ն. Ք.ի Դիւանը. Սիրոյ երգեր, Խրատական և Այլաբանական երգեր, Պանդուխտի երգեր։ Քննական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Արշակ Չօպանեան։ (Հրատարակութիւնք «Անահիտ»ի. – Թիւ* 1.)։ *Փարիզ, տպարան «Անահիտ»,* 1902. 8°, 9-39 (*Քնն. ուսումն.*) 41-111 (*բնագիր*), 113-133 (*ծանօթ. և բառարան*)։

Ուսումնասիրութենէն. «Տաղիկներու փոքրիկ հաւաքածոն որ մեզի մնացած է Նահապետ Քուչակէն, ամենէն մաքուր ադամանդն է զոր մեր հին գրականութիւնն՝ արտադրած ըլլայ. և ապշեցուցիչ բան մըն է որ այդ գործը, ինչպէս և անոր հեղինակին անունը, մինչեւ ցարդ անծանօթ մնացած ըլլայ ոչ միայն մեր հասարակութեան, այլ և նոյն իսկ մեր գրագէտներուն։

Այդ հաւաքածուն ճանչցայ Վենետիկի վանքը կատարած ուսումնասիրութեանցս միջոցին՝ ասկէ չորս տարի առաջ։ Ս. Ղազարու հին ձեռագրերուն մէջ անտիպ մնացած միջնադարեան ոտանաւորներն օրինակած ատեն, ուշադրութիւնս գրաւեցին թիւ 1371 տաղարանին մէջ՝ քառեակներու և վեցեակներու մէկ քանի շարքեր, որոնք զիս զմայլեցուցին իրենց ներշնչման մեծ թարմութեամբն ու ինքնատպութեամբը, ձեւի հեշտաւէտ գունագեղութեամբն ու արտակարգ սեղմութեամբը, շեշտի պաշտելի անկեղծութեամբն ու զօրութեամբը. ատոնց մէջ տաղիկներ կային որոնց նման ոչինչ տեսած էի ամբողջ հայ գրականութեան մէջ։ Այդ տաղափունջերն իրարմէ զատուած էին ուրիշ քերթուածներով, օրինակիչներուն կողմէ դրուած տարտամ տիտղոսներ կը կրէին («Տաղ սիրոյ գեղեցիկ», «Տաղ սիրոյ», «Տաղ հայերէն վասն ուրախութեան», «Վասն ուրախութեան»), և հեղինակի անուն ճշդող ո և է յիշատակութիւն չունէին իրենց կցուած. բայց ամէնքն ալ, նոյն շեշտով ոգեւորուած, ոճով, լեզուով, ներշնչումով՝ համանման, միեւնոյն հեղինակի մը գործը թուեցան ինծի։ Փարիզ դարձիս, ձեռքս անցաւ Արիստակէս վարդապետ Տեվկանցի «Հայերգ»ը. ուրախութիւնս անհուն եղաւ՝ անոր մէջ գտնելով նոյն տաղաշարքը «Յաղագս հոգւոյ և սիրոյ ոտանաւոր է բանս» տիտղոսով, ու հեղինակի անունով մը լուսաւորուած.

«Այս երգն, կը գրէր Տեվկանց վարդապետը՝ նախաբանին մէջ, Նահապետ վարպետ Քուչակինն է»։

Գործը սակայն անտիպ չէր բոլորովին, բայց շատ քիչ ծանօթ հաւաքածուի մը մէկ անկիւնը կորսուած, առանց որ քննադատի ձեռք մը անոր արժէքն ի վեր հանած, զայն իր բուն լոյսին մէջ դրած և անոր տուած ըլլար հայ գրականութեան մէջ այն տեղը – ամենաբարձրը – որուն իրաւունք ունէր։ Եւ արդէն Տեվկանց վարդապետին տուած օրինակը ամբողջ չէր. Վենետիկի վանքին ձեռագրին պարունակած օրինակին մէջ կան բազմաթիւ քառեակներ, – և ամենասիրուններէն, – որոնք «Հայերգ»ի օրինակին մէջ կը պակսին, (ինչպէս և «Հայերգ»ի օրինակն ունի շատ մը կտորներ, որոնք չկան Վենետիկի օրինակին մէջ)։ Քիչ յետոյ, Փարիզի Ազգային Մատենադարանին թիւ 101 հայերէն ձեռագրին մէջ տեսայ տաղաշարք մը, որուն մէջ կը գտնուէին Վենետիկի ձեռագրին պարունակած Քուչակի երգերէն մէկ քանին և որ, թէ այս հանգամանքով, և թէ իր բոլոր տաղերուն ոճովն ու ոգւովը, իրաւունք ունի Քուչակի վերագրուած տաղերու հաւաքածուին մէջ մտնելու։ Վերջապէս, պ. Կոստանեանցի «Միջնադարեան տաղեր» երրորդ պրակին մէջ, նշմարեցի քառեակներու շարք մը, հրատարակուած՝ իբր հին անանուն ժողովրդական երգերու փունջ մը, և որ Քուչակի տաղերէն կը պարունակէ բաւական թուով։

Ներկայ հատորը պիտի պարունակէ սակայն առաջին ամբողջական ամփոփումը այն բոլոր տաղերուն որ կը գտնուին չորս ձեռագրերուն մէջ։ Այս հրատարակութեան մէջ պիտի չհետեւինք այն կարգին որով այդ տաղերն իրարու կը յաջորդեն այդ չորս օրինակներուն մէջ, ուր անոնք իրարու կը հետեւին խառնիխուռն, առանց ո և է դասաւորութեան. քանի որ այդ քառեակներէն ու վեցեակներէն իւրաքանչիւրը անջատ ամբողջութիւն մը կը կազմէ, ո և է առնչութիւն չկայ անոնց կարգը

փոխելու մէջ. ընդհակառակն անհրաժեշտ կը նկատենք, անոնցմէ իւրաքանչիւրին իր բուն շրջանակին մէջ դնելու համար, զանոնք զատորոշել ուրիշ արտամարմնական ու ներդաշնակ սխալէ մը հանելու։ Երեք խումբի բաժնած ենք այդ տաղերը՝ ըստ նիւթի տեսակին. Ա. Սիրոյ երգեր, Բ. Խրատական և այլաբանական երգեր, Գ. Պանդուխտի երգեր։

Կարելի չէ անշուշտ հաստատել թէ այս բոլոր երգերը զոր կը հրատարակենք այստեղ իբր Քուչակի գործը, այդ միակ անձին արտադրութիւններն են իրօք, քանի որ մեր ունեցած օրինակներէն երեքը ո և է հեղինակի անուն չեն կրեր, և մէկը միայն, ըստ Ցեվլանց վարդապետի յայտարարութեան, Քուչակի ստորագրութիւնը կը կրէ։ Ներելի է ենթադրել թէ անոնք այլ և այլ ժամանակ ապրած բազմաթիւ հայ աշուղներու երգերն ըլլան թերևս, զոր Քուչակ հաւաքած էր, իր նախորդներուն թողած գանձին վրայ իր անձնական ստեղծագործութեան բաժինն ալ աւելցնելով. և կամ թերևս օրինակիչները, որոնց ձեռագիրը մեզի հասած են, միևնոյն շարքին մէջ համախմբած են Քուչակի, ինչպէս և ուրիշ աշուղներու, տաղեր, խառնիխուռն. և այսպէս, Քուչակի մը անհատական գործը կարծածնիս՝ թերևս հայ ժողովրդական քնարերգութեան ծաղկաքաղ մըն է որուն հեղինակը ոչ թէ անձ մը, այլ հաւաքական քնարն է հայ ժողովրդին։ Կան տեսակ մը պարագաներ որ պահ մը կը թուին ուժ տալ այս ենթադրութեան. այդ տաղաշարքին մէջ տուներ կան որոնք այդպէս Քուչակին չեն պատկանիր, որոնք նոյն իսկ ո և է «աշուղ»ի գործ չեն, այլ իրենց լեզուին ու ոճովը յստակօրէն կը յայտնեն եկեղեցական դասական բանաստեղծներու երկեր ըլլալնին...

Լեզուն որով գրուած են այդ տաղերը, հեռու է ակադեմական մաքրութիւնն ունենալէ. տաճկերէն ու պարսկերէն բառերով ողողուած, պարզուկ ու նոյն իսկ գռեհիկ ռամկերէն մըն է, քերականական բազմաթիւ խորթութիւններով, յաճախ տղայական ու բարբարոս համաձայնութեամբ մը։ Բայց անոնց համար որ մարգարիտին արժէքը գիտեն ճանչնալ տձեւ ու մութ խեցիին մէջէն, այս անտաշ լեզուն, ուր սակայն մեր արդի արևմտեան հայերէնին բոլոր տարրերը, և բոլոր գեղեցկութիւնները կը գտնուին արդէն, չի պակսեցներ հիացումը զոր այդ տաղերը կը ներշնչեն Գեղեցկութեան ըմբռնող ո և է մարդու։ Մեր հին գրականութեան մէջ ուր երկարաբանութիւնը, ճոռոմութիւնը, հռետորականութիւնը կը տիրապետեն յաճախ՝ նոյն իսկ լաւագոյն հեղինակներուն քով, Քուչակի երգերը զմայլելի ու մեկհատիկ բացառութիւն մըն են տարօրինակապէս հակիրճ ու պարզ, ամէն հռետորութենէ զերծ բանաստեղծութեան։ Սիրտն է որ կ'երգէ հոս, սիրտը՝ մերկ ամէն արուեստակութենէ, բայց սիրտ մը որ արտակարգօրէն ճոխ ու խորունկ ու քաղցր հնչիւն մը ունի իր երգին մէջ։ Այդ քառեակներուն մէջ կան տողեր որ, արդէն ձեւով ալ ինչպէս իմաստով՝ վճիտ ու ազնիւ, ամենագեղեցիկ տողերն են զոր հայ բանաստեղծութիւնն արտադրած ըլլայ և որոնք այդ տաղերուն անհաւասար խառնակոյտին մէջէն անզուգական ծաղիկներու պէս կ'անջատուին...

Դառնալով Քուչակին, թող ոչ ոք չափազանցութիւն նկատէ եթէ յայտարարեմ որ այդ զմայլելի երգիչն արտադրած ըլլալը միայն բաւական է որպէս զի Հայ ցեղը յարգանքի արժանի ըլլայ և որպէս զի մենք մեզ հպարտ զգանք Հայ ըլլալնուս։ Քուչակը անշուշտ չունի պարսիկ մեծ բանաստեղծներուն, Հաֆըզի, Սաադիի, ու մանաւանդ Խայամի, իմաստասիրական խորութիւնը և գեղեցկագիտական հմտութիւնը. Խայեամ ամենէն խիզախ և ամենէն զարգացած մաքերէն մէկն է զոր մարդկութիւնն արտադրած ըլլայ. իր «Քառեակներու Գիրք»ը անզուգական բաժակն է ուր երկնքին ու երկրին խորհուրդներուն վրայ երկարօրէն խոկացած և ամէն բանի ունայնութիւնն իր ձեռքովը շօշափած և ասկից խորապէս վիրաւորուած մեծ հոգի մը իր թանկագին ու սեղմուած ցաւը՝ արիւնով, արցունքով ու ծաղկի հիւթերով ալ չինուած գաւն ու անհամեմատօրէն անուշահոտ և մահաբերօրէն արբեցուցիչ գինիի մը պէս կը լեցնէ դանդաղօրէն։ Քուչակ «գեղջուկ» երգիչ մըն է, իմաստասիրական ու գիտական կրթութենէ զուրկ, ծանօթ՝ միայն աստուածաշնչական գրականութեան ու աշուղական արուեստին և թերևս քիչ մըն ալ պարսկական բանաստեղծութեան. ուրիշ բան չէ ըրած այլ միայն իր սիրտը, իր ամբողջ սիրտը դնել քանի մը պարզուկ, աղբիւրի պէս բղխող, լերան ծաղկի պէս մէկ ցայտքով ժայթքող, ամառ գիշերուան աստղի պէս խաղաղ ու պարզ ցոլացող երգերու մէջ. բայց այդ «սիրտ»ը ունի այնպիսի բնածին քաղցրութիւն մը որ «չի մոռցուիր», այլ բնութեան անհաս քուրային մէջ ինքնին արդէն չինուած կը տրուի տեսակ մը եզական խառնուածքներու։ Ոչինչ կայ իր մէջ արուեստակեալ, բռնազբօսիկ, ինչպէս Սաադիի երգերուն մէջ. ամէն ինչ ուղղակի սրտէն կը հոսի, և ընթերցողին սրտին կ'երթայ շիտակ, առանց ո և է դարձուածքի, առանց ո և է աւելորդ ձեւախաղութեան։ Ճշմարիտ է որ տեղ տեղ ռամիկ, գռեհիկ տաղ մը կու գայ պղտորել ներշնչումին մաքրութիւնը. թոյլ, լալկան, «ճիտը ծուռ» կեցուածք մը կայ երգերուն մէկ մասին մէջ. կը զգացուի վերջապէս երբեմն որ երգիչը կը պատկանի ազգի մը որ լուծ կը կրէ, որ խեղճ է, թափառական է, գերեվար է, ճզմուած է...

Ինչ որ մեզի համար կրկնապէս, — անհունապէս, — թանկագին է Քուչակի գործին այս կոթողական գեղեցկութեանը մէջ, այն է որ այդ գեղեցկութիւնը «հայկական» է, իր արմատն ունի մեր ցեղին որոշ խառնուածքին մէջ։ Պաշտում ամէն բանի որ պարզ է և անսեթեւեթ. անսահման ջերմութիւն, անկեղծութիւն, քնքշութիւն՝ զգալու մէջ, — ըլլայ զգալ մայրական, եղբայրական կամ տարփական, — բուռն սէր՝ հակառակ քրիստոնէութեան բերած մեծ տխրութեանը՝ բնութեան գունագեղ ու տաք ճոխութիւններուն, կեանքի առողջ արբեցութիւններուն. զոհաբերութեան հակում ամէն բանի մէջ. զուրգուրալից խանդաղատանք՝ ո և է ցաւով չարչարուածին համար. Նախասիրութիւն՝ խաղաղ, բարի, արգաւանդ, աշխատութենով ու սիրով տողորուն կեանքի մը. ահա տարրեր որոնք գոյութիւն ունին հայ հոգիին մէջ, որոնք նոյն իսկ տիրականներն են հոն, բայց որոնք, շատ մը խոշոր ու ծանր թերութիւններու մացառուտին մէջ թաղուած, յաճախ անտեսանելի են դարձած, երբեմն ալ իրօք տժգունած են ու թառամած, բայց երբեք չնջուած։ Ատոնք են որ կը կազմեն հողը ուր բուսած է Քուչակի երգերուն հոյակապ ծաղիկը...

Գալով Քուչակի «պանդուխտի երգեր»ուն, աւելորդ կը համարիմ անոնց վրայ ծանրանալ. Դաւիթի համբաւաւոր սաղմոսէն ի վեր («Առ գետս Բաբելոնի՝ անդ նստէաք և լայաք, որպէս յիշեցաք մեք անդ զՍիոն») ոչինչ գրուած է ո և է լեզուով որ պանդխտութեան ցաւն այդքան ուժով և այդքան բնական կերպով արտայայտէ։ Հայութեան աղիքերէն փրթած ճիչեր են ատոնք։ Եւ այդ «պանդուխտի երգեր»ը կ'ապացուցանեն որ Քուչակ, եթէ իր քնարը նուիրած է գլխաւորապէս սիրոյ և հեշտութեան տարփողումին, իր ազգա-

կիցներուն տառապանքին անտարբեր մնացող ու մարմնական հաճոյքները երգելով շառացող հաւանող մը չէր. այն ամբողջ յուզումը զոր դրած է սէրը երգելու, բնութեան գողտր գեղեցկութիւնները փառաբանելու, գինիին բարի զօրութիւնը օրհնելու, նոյն այդ յուզումը, — թերեւս աւելի բարձր աստիճանով մը, — նուիրած է՝ իր զաւակները սնուցանելու, պահպանելու, երջանկացնելու այլ եւս անկարող դարձած դժբաղդ հայրենիքէ մը լալով ու ակամայ հեռացող ու օտար երկինքներու տակ միշտ իրենց հողն ու ջուրը յիշելով հիւծուող պանդուխտներուն հսկայ տխրութիւնն արտայայտելու: Այդ երգերէն մին, որ կը թարգմանէ ոչ թէ պարզ անհատներու, այլ ամբողջ զարիզ հայ ազգին ցաւը, սա կաթողին ու արտասուախառն մխիթարութեան ու յուսատուութեան աղաղակը կը պարունակէ, որ կը բուէ որպէս զի պաշտենք մեր Քուչակը, — յաւիտենական սոխակը հայ սրտին…

Քուչակի գործին յայտնութիւնը ամենէն բերկրալից ու կազդուրիչ դէպքերէն մին կը համարիմ ես, որ պատահած ըլլան Հայոց հանրային կեանքին մէջ՝ շատ տարիներէ ի վեր: Եւ ասի՝ ոչ միայն, որովհետեւ, ինչպէս Անաթոլ Ֆրանս կ'ըսէ, «մէկ հատիկ տաղաչափ մը աւելի բարիք ըրած է աշխարհիս քան թէ մետաղագործութեան բոլոր հրաշալիքները», այլ նաեւ որովհետեւ այսպիսի գեղեցկագիտական գանձի մը երեւումը ազգի մը մէջ, ամենէն թանկագին ազդակը կը դառնայ անոր անդամներուն՝ ազգին հանդէպ սէրն ու հաւատքը, և իրարու միջեւ համերաշխութիւնը ամրապնդող: Ազգ մը կը դադրի գոյութիւն ունենալէ, երբ չունի իր ծոցէն բղխած մէկ քանի մեծ գեղեցկութիւններ որոնց հանդէպ բոլոր կուսակցական, անհատական վէճերը հարկաւորաբար դադրին միեւնոյն երախտագէտ հիացմանը մէջ եղբայրացած, այդ գեղեցկութիւնն ստեղծելու կարող եղած ցեղին հաւատարապէս պատկանելուն հաճոյքին մէջ վայրկեան մը ամէն անջրպետ մոռցած և իրարու սերտօրէն միացած: Մեզի համար մանաւանդ որ մեր պատմութեան ամենէն խաւարչտին շրջաններէն մէկուն մէջ կը գտնուինք այսօր, վհատութեան ու դառնութեան լքումներուն դէմ ծառանալու համար երկու բան կայ որ ամենէն աւելի մեզ կարող են սրտապնդել, — վսեմ օրինակը այն քաջերուն որոնք ցեղին փրկութեանը համար մեռնիլ գիտցան և ցեղին արութիւնը ապացուցին, և անշիջական լոյսը այն անկորուստ դէմքերուն որոնք մեծ ու «հայ» գեղեցկութիւն մը արձակեցին իրենցմէն ու ապացուցին Հայուն մտաւոր կորովը:

Զգնումնանք երեւակայական մեծութիւններ երազելով մեր մէջ, բայց գիտնանք ճանչնալ մեր իրական արժանիքները»:

Քննադ. Անահիտ 1902, թ. 12. – 1903, թ. 1, 2–3 (Գ. փառնակ): – Արարատ 1902, թ. 11–12: – Արտեմիս 1902, թ. 7–8: – Բազմավէպ 1903, թ. 1: – Լուման 1903, թ. 2: – Հանդէս Ամսօրեայ 1903, թ. 3: – Մուրճ 1903, թ. 3: – Նոր-Դար 1903, թ. 135, 137, 139, 142:

Տես եւս Հանդ. Ամս. 1897, էջ 344, «Անյիշատակ հայ Աշուղ մը» Տ. Վ. Պալեանէ. և հոն հրատարակուած «Տաղ Սուրբ Աստուածածնին»: – Տեվկանցի «Հայ երգը»: – Դարձեալ ԹԱԴԵՒՈՍԵԱՆ (Յովհ.), «Քուչակ Նահապետի երգերը»: Շիրակ (1905, թ. 3, էջ 238) կը ծանուցանէ թէ Ա. Չօպանեան «Les Arts de la vie» Յունուարի թիւին մէջ ընդարձակ ուսումնասիրութիւն մը հրատարակած է Քուչակի մասին:

— Սիրու երգիչ Նահապետ Քուչակի երգերը: Մշակեց Գէորգ Ասատուր: Թիֆլիզ, տպ. «Հերմէս», 1905. 16°, 143 էջ:

Քննադ. Մուրճ 1905, թ. 4 (Տ. Զաւէն):

Նահապետական և հայրենի աշխարհ. – Տես ՄԱՆԴԻՆԵԱՆ (Ա.):

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ (Ա.) *թարգմ.* — Տես ԲԷՕՄԻ (Է.):

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ (Հ. Գաբրիէլ). — *Gli Armeni Cattolici in Georgia*, e le questioni fra Cattolici Armeni e Giorgiani. Venezia, Tipografia Società di M. S. fra compositori tipografi, 1903. 8°, 37 էջ:

Տ. Փիրումեան Մուրճի մէջ (1903, թ. 11, էջ 194–5) կը գրէ այս գրքին մասին. «Մենք առաջ հաղորդել էինք, որ Թիֆլիսում մի քանի տարի պաշտօն վարած, ս. Ղազարի վանքի միաբան հայր Գաբրիէլ վ. Նահապետեանը մտադրութիւն ունի մի գիրք տպելու Կովկասի հայ և վրացի կաթոլիկների հարցի մասին: Այժմ այդ գիրքը լոյս է տեսել, և «Իվերիան» նուիրում է նրա քննադատութեանը այնպիսի մի մեծ յօդուած, որ տեղ է բռնում այդ լրագրի վեց համարներում: Հայր Նահապետեանի աշխատութիւնը կրում է հետեւեալ վերնագիրը՝ այսինքն «Հայ կաթոլիկները Վրաստանում և հայ ու վրացի կաթոլիկների միջեւ ծագած հարցը»: Այդ խառնակէն գրքոյկի գլխաւոր միտքն այն է, որ Վրաստանում երբեք վրացի կաթոլիկներ չեն եղել, հայերի մէջ կաթոլիկութիւնը տարածուել է այդտեղ միջին դարերում՝ Հայաստանից եկած հայ ունիթոների ձեռքով, վրացի կաթոլիկների հարցը բարձրացել է սրանից ընդամենը 20 տարի առաջ, երբ Կ. Պոլսի Փերի-Քեոյի կաթոլիկ վանքից մի քանի վրացի վարդապետներ Կովկաս եկան և սկսեցին հայ կաթոլիկներին համոզել, որ իրանց վրացի հռչակեն, որպէսզի աւելի արտօնութիւններ վայելեն: Գրքոյկի վերջին մասում հայր Նահապետեանը խօսում է իր գործունէութեան մասին Ալեքսանդրօպոլի և Թիֆլիսի հայ-կաթոլիկների համայնքում և մանրամասն նկարագրում այն հալածանքները, որոնց նա ենթարկուել է Թիֆլիսում վրացի-կաթոլիկ վարդապետների կողմից:

Հայր Միքայէլ Թամարաշվիլին (վրացի-կաթոլիկ, հեղինակ «Կաթոլիկութիւնը Վրաստանում» ռուսարածալ գրքի) աշխատում է մտամի հերքել իր երկար պատասխանի մէջ հայր Նահապետեանի ասածները, բերելով վկայութիւններ եւրոպական լեզուներով գրուած գրքերից և բարդելով հայ-կաթոլիկների և հայ-լուսաւորչականների գլխին այն տխրական մեղադրանքները, որոնց նմուշները մենք շատ անգամ ենք բերել այս էջերում և որոնց նորից կրկնելը շատ անհաճոյ է մեզ համար: Անախորժ և չափից դուրս տարօրինակ տպաւորութիւն է թողնում մանաւանդ մեղադրանքի այն մասը, որ վերաբերում է հ. Նահապետեանի հայրենասիրութեանը: Բանից դուրս է գալիս, որ՝ «Իվերիայի» այդ ջերմեռանդ կաթոլիկ աշխատակցի կարծիքով՝ հայասիրութիւնը մի յանցանք է և նա չէ համապատասխանում Հռոմի հարազատ որդու պարտականութիւններին… Մխիթարեան վարդապետի ազգասիրական գործողութիւնների պատմութիւնը հ. Թամարաշվիլին կնքում է այսպէս. «Հասկանալի է, որ նրա այդօրինակ արարքները դուր կը գային միմիայն կաթոլիկների թշնամիներին՝ լուսաւորչական հայերին, որոնց հետ հ. Նահապետեանը մեծ բարեկամութիւն ունէր և որոնց շատ հարցերում մտնում էր» («Իվերիա», թ. 236):

Մեզ թւում է, թէ դեռ շատ երկար կը քաշքշուի մեր տեղական մամուլում հայ և վրացի կաթոլիկների կնճռոտ հարցը Կովկասում։ Ցաւալի է, որ չ'ունենք մարդիկ, որոնք կարողանային զուտ-գիտական ճանապարհով մօտենալու հարցին, քննելու նրան անաչառ, անկողմնակալ կերպով, առանց ուշադրութիւն դարձնելու այս կամ այն ցեղի անհիմ առարկութիւններին…»։

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ (Գր.) — *Մուրճի մէջ ունի.* «*Երաժշտական նկատողութիւններ*», 1892, թ. 1, էջ 163–170. – թ. 2, 323–325. – թ. 5, 841–43. – թ. 6, 982. – թ. 11, 1708. – թ. 12, 1875. – 1893, թ. 5, 845. – թ. 7–8, 1276։

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ (Հ. Ե. Վ.) — *Նախանձաւորութիւն, յորդոր յառաջադիմութեան. (Ի Հ. Եղիա վարդապետէ Նահապետեան յԱնտոնեան ուխտէ։ Ի Հռոմ, ի վանս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին*, 1851։ – *Առաջին երախայրիք տպարանի Անտոնեան ուխտին ի Հռոմ*). 12 էջ։

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ (*Ղազարոս Պ.*) — *Հայրենիքի զոհեր, պատկեր մը Տաճկաստանի իրական կեանքէն։ Վառնա, արտատպուած Խրատուէր լրագրէ*, 1901. 8°, 201 էջ.

«*Բնութեան ստուերներ*». *Բանբեր Բ գիրք*, 1904, էջ 189։

— (*Յար.*) *թարգմ.* — Տես ՇԷՔՍՓԻՐ, «*Ձմեռային հէքիաթ*»։

— (Պ.) — «*Գիւտերի պատմութիւնը*». *Հիւսիսափայլ* 1858, Ա. էջ 290–298. – «*Գրելի թղթի գիւտը*», Բ. էջ 56–72. – «*Գիւտք և յայտնագործութիւնք. Ջէմս Ուաթ*». 1859, Ա, էջ 233–247։

Նահատակք. – Տես ԱՒԵՏԻՔԵԱՆՑ (*Սա.* – Բ.)։

ՆԱՂԱՇ ՄԿՐՏԻՉ. — *Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը։ Յաւելուած միջնադարեան տաղեր Ղարիպութեան վերայ։ (Հրատ.) Կ. Կոստանեանց։ Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի*, 1898. 8°, Ծ + 57 էջ։

Բովանդակութիւն Ա. Մկրտիչ Նաղաշ. նորա կեանքն և գործունէութիւնը. – Բ. Նաղաշի տաղերը. 1. *Ունայնութիւն աշխարհիս «Երազ է սուտ, եղբա՛յրք».* – 2. *Վասն մահուան «Անցանէ մեծութիւն».* – 3. *Ողբ վասն մեղքի «Արարիչն արարածոց».* – 4. *Վասն ագահութեան «Սողոմոն մայրն իմաստութեան».* – 5. *Խրատ խօսք չկենալու «Ա՜յ անձն իմ վա՜յ».* – 6. *Խրատք և կշտամբանք անձին «Ա՜յ յանձն իմ աղօթէ».* – 7. *Գաբրիէլ և Մարիամ «Բլբուլն ի վարդն ասաց».* – 8. *Տաղ ի դէմս մարգարէիցն և Քրիստոսի և Լուսաւորչի «Զինչ որ գեղեցիկ ծաղկունք».* – 9. *Տաղ հարսանեաց և ուրախութեան «Նախ օրհնեմք».* – 10. *Տաղ ուրախութեան «Նստէք ի մէջլիս».* – 11. *Վասն ղարիպի «Հոգի՛ մի՛ ասեր ղարիպ».* – 12. *Վասն ղարիպի «Ղարիպին կեանքն է լալի». – Գ. Յաւելուած. – ա. Վասն ղարիպի «Ի քէն Տէր հայցեմք» Զաքար. – բ. Տաղ վասն ղարիպութեան «Վայրի հաւուկ մի եմ». – գ. Ի վերայ կռունկին «Կռունկ ուստի՞ կուգաս» Քուչակ Նահապետ. – դ. Գովասանք ղարիպի «Գերիս ընդ ո՞ր երթամ». – ե. Տաղ վասն ղարիպի «Ի յերկիր օտար հեռացայ». – զ. Տաղ վասն ղարիպի համար «Սրտիկս խոցեալ է» Սիմէօն։*

Քննադ. Բազմավէպ 1899, էջ 286։ – *Հանդ. Ամս.*, թ. 10։

«*Նաղաշի երկու կիսատիպ տաղեր*». *Արարատ* 1900, էջ 45. – «*Տաղ հոգւոյ՝ Նաղաշ վարդապետէ ասացեալ*». *Անահիտ* 1900, էջ 164. – *Նոյնը Երկրագունտ* 1886, էջ 555–57 (*հրատ. Յովհ. Քհ. Մկրեան*), «*Տաղ հոգւոյ՝ Նաղաշի ասացեալ*», «*Անցանէ մեծութիւն*», *նոյն.* – «*Տաղ ուրախութեան ասացեալ ի Նաղաշէ*», «*Նստէք ի մէջլիս*». *Ճռաքաղ* 1860, էջ 216, *տես և կարդա՛ Մ. Մ(ակրի) ծանօթութիւնը.* – *Կայ Լումայի մէջ եւս* (1899 Ա.) էջ 280, «*Գովասանք Գուրջստանայ*», *որու վերջին տան մէջ կ'ըսէ.* «*Ես Նաղաշ եմ մեղաց ծով եմ*», *եւն, անշուշտ Յովնաթանն է, ինչպէս դրած է նախընթաց* «*Վասն Վարդան ժամանակին*» *ոտանաւորին վերջին տողին մէջ։* – *Տես եւս Հանդէս Ամսօրեայ* 1896, էջ 54, «*Տաղ մեռելի. Անցանէ մեծութիւն*», *եւն.* – *Արարատ* 1895, էջ 128–29։ – *Կանոնեանց* (*Սա.*), «*Ցուցակ*», *եւն*, էջ 62–63։ – *Դարձեալ Հանդ. Ամս.* 1896, էջ 54–55, «*Տաղ ի վերայ մեղաց. Երազ է և սուտ*»։ – *Տաշեան*, «*Մայր ցուցակ*», *եւն*, էջ 1118։ – *Մասիս* 1885, թ. 3796, «*Արարիչն*», *եւն*։

ՆԱՂԱՇ ՅԱԿՈԲ, ՅՈՎՆԱԹԱՆ. — Տես *Յաւելուած*։

ՆԱՄԱԼԵԱՆ (*Աղեքսանդր*) *ծածկանուն* Ա. ՔԱԼԱՆԹԱՐի։ Տես *վերջինս*։

Նամականի, նամակք, նամակներ։

Նամակք Ռուսաց և Օսմանեան արտաքին գործոց Նախարարաց, և մեկնութեան պատճառաց պատերազմին. (Գերամբարձ յայտարարութիւն կայսեր Նիկողայոսի Յաղագս պատերազմին ընդ Օսմանեան տէրութեան)։ Տփխիս, 1828?

Նամակ կամ նուէր ուսանողաց, եւն. — Տես ՆԱԲԱՇԵԱՆ (Տ. Ե.)։

Նամակագրութեան առաջնորդ. – Տես ԸՍՏԿԱՐԵԱՆ (Հ. Վ.)։

Նամակագրութեան (արուեստ) համառօտ. կամ ընտանեկան նամակներ նորավարժ պատանեկաց դիւրութեանը համար։ Կ. Պօլիս, 1863?

= *Բ տիպ, անդ, ի տպ. ի Վ. Յ. Մարգարեան*, 1881. *փոքր* 8°, 208 էջ։

Նամականի Անգղիական. — Տես ՄԱՄՈՒՐԵԱՆ (Մ.)։

— *առ երիտասարդս. Թերթօն Արեւելքի*, 1902, թ. 4884, *եւն*։

— *առ օրիորդս. Թերթօն նոյնին. Թրգմ. Օր. Նազենիկ Պալլաեան*. 1901, թ. 4657–4737։

— *առ ընթերցասէր հայուհիս.* — Տես ԿԵՍԱՐԱՑԵԱՆ (Ե.)։

— (*առձեռն*). — Տես ԳԱԲԱՄԱՃԵԱՆ (Ս.)։

— (*բարոյական*). — *Բարեպաշտութիւն. Թերթօն Արեւելքի*, 1901–2։

— (*ընդարձակ թուրքերէն*). — Տես ԱԲԻԿԵԱՆ (Մ.)։

— (*ընդհանուր*). — Տես ՏԻԽՆՈՒՍ (Ա.)։

— *ընկերային.* — Տես ԴԻՏՔՈՄ։

— *ընտանեկան, ուսումնասէր մանկանց վարժութեան համար. ի Պատրիարգութեան Կոստանդնուպօլսոյ Տեառն Աստուածատրոյ վեհափառ Արք Եպիսկոպոսի։ Կառավարութիւն Ու-*

սումնական Ընկերութեան Հայոց ի Պօլիս։ Ի Կոստանդնուպօլիս, ի տպ. ի Արապեան 1841 = ՌՄՂ. 8°, 135 էջ։

Իտալերէնէ թարգմանուած է Ն. Մ. Զօրայեանէ։

Նամականի Ներսէսի. – Արեւելեան մամուլ 1873, էջ 97, 379։

— Հայկական. — Տես ՄԱՄՈՒՐԵԱՆ (Մ.) – ՋԱԼԱԼԵԱՆ (Ս. Վ.) — ԱՃԷՄԵԱՆ (Յ. Կ.)։

— Նշանածի մը առ իր մեծ հայրը. Թերթօն Արեւելքի 1902, թ. 4993, եւն։

— (նոր). — Տես ՖԷԼԷԿԵԱՆ (Ս.)։

— պարսկական. — Տես ՄՈՒՐԱՏԵԱՆ (Ե.)։

— տեղագրական. – Տես ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆՑ (Ն.)։

— Նամակաց (դպրութիւն). — Տես ԹՈՎ-ՄԱՃԵԱՆ (Հ. Ե.) — Վարժութիւն նամակաց։

— (պատճէնք). — Տես ՓԱՓԱԶԵԱՆ (Հ. Իգ.).

Նամակներ առ ընտանիս. Հեղինակութիւն Խրատատուի։ Ամերիկայի Պօրտ ընկերութեան կողմէն ի լոյս ընծայեալ։ Կ. Պօլիս, տպագր. Արամեան, 1872. 6°, 248 էջ։

— և յայտարարութիւններ. — Տես ՏԷՕԼ-ԼԻՆԿԷՐ։

— (խառն). — Տես ԴԱԶԱՆՃԵԱՆ (Կ. Ս.)։

— Հայաստանի և Հայոց վրայ հայու մը կողմէ գրուած։ Լոնտրա, 1878?

— (մանկավարժական). — Տես ԲԷՕՄԷ։

Տես դարձեալ գործիս մէջ Թուղթ բառին տակ. – Եւս՝ Գարագաշ (Ա. Մ.) – Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Տղայ, Ներսէս Լամբրոնացի, Ներսէս Շնորհալի, եւն, եւն։ – Օրինակք թղթագրաց։

«Նամակարար գիրք». Արձագանք 1885, 41։

Նամուշ. — Տես ՇԻՐՎԱՆԶԱԴԷ։

ՆԱՅՄԱՆ (Կարլ = Karl. Joh. Neumann). - *Strabons Landeskunde* v. Kaukasien. Eine Quellenuntersuchung: Jahrb. f. class. Philol. Suppl. Dd. 13. H. 2, 1883, p. 319-54. (Auch sep. 36 p. 8°.

ՆԱՅՄԱՆ (Ֆր. = Karl Friedrich Neumann).

«Հայ լեզուի ուսումն» գրքին մէջ Շրուէմփ-Զարդ. այսպէս կը խօսին Նայմանի մասին. «Գաղղիացի հայագէտք եղան որ յառաջ քան զամենեսին մեր դարուն գերմանացի գիտնոց մասադրութիւնը հրաւիրեցին ի վերայ հայկական մատենագրութեան։ Ասոնց մէջ առաջինն՝ ժամանակի կարգաւ, եղաւ Կարլ-Ֆրիդրիխ Նայման. ծնեալ ի 1790 ի Հռայքմաննսորֆ, մօտ ի Պամպէրկ, որ հայրն հրէայ աղքատ վաճառական մ'էր։ Երիտասարդութիւնն անցուց պարապելով ի վաճառականութիւն, ու 1817ին գնաց ի Հայտէլպէրկ՝ ուսման ընթացք կատարելու դիտմամբ։ Հոն աշակերտելով Հէկէլի՝ բողոքականութիւնն ընդունեցաւ, և յետոյ Մինխէնի բանասիրական հոգեւոր դպրոց մը մըտաւ։ 1819ին ուսուցչութեան յարմարութեան վըկայականը ձեռք ձգելով, գնաց զլխաւորել իր ուսումը ի Կէթթինկէն։ 1821էն մինչև ի 1825 Վիւրցպուրկի և Սփիրայի վարժարանաց մէջ ուսուցչութեան պաշտօն վարեց. բայց բանաւորականաց վարդապետութեանց հետեւող երեւնալով, պաշտօնէն զրկուեցաւ։ Այն ատեն մատենագրական ուսմամբք զբաղելով, արեւելեան լեզուներու ետեւէ ինկաւ։ Բաւական ժամանակ կեցաւ ի Վենետիկ, յաճախելով ի սուրբն Ղազար յուսումն հայերէն լեզուի, ուստի ուղեւորեցաւ յաշխարհն Ճենաց՝ անտից գրոց հաւաքումնք մը ընելու նպատակաւ։ Ի դարձին՝ հաւաքած գրքերէն երկու հազարը Պերլինի մատենադարանին յանձնեց, ու մնացած տասն հազարն պարգեւեց պաւարական կառավարութեան. և ի փոխարէն՝ Մինխէնի համալսարանին մէջ հայերէն ու չինէացի լեզուաց և ազգագրութեան ուսուցիչ անուանեցաւ (1833)։ 1852ին պատմական ուսմանց դասախօսութեանցը մէջ յայտնած ազատական գաղափարաց համար պաշտօնէն զրկուեցաւ. մնաց ի Մինխէն մինչև ի 1863, յետոյ անցաւ ի Պերլին՝ ուր իր ընթերցութիւնն հաստատելով մեռաւ ի 1870 մարտ 17։

Այլ և այլ գրուածներ հրատարակած է Նայման չինէական, ազգագրական, և պատմական ուսմանց և հնագրութեանց վրայ. բայց մեր նպատակն է միայն հայկականաց վրայ խօսիլ։ 1829ին Ասիական նոր օրագրին մէջ հրատարակեց (Հատ. Գ. 46-86, 97-153) Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի գրուածոց վերայ երկասիրութիւն մը, և ի մասնաւորի անոր Արիստոտելի քանի մի գրուածոց թարգմանութեանց վրայ. (Mémoire sur la vie et les ouvrages de David; philosophe arménien de V siècle de notre ère, et principalement sur ses traductions de quelques écrits d'Aristôte)։ – 1830ին յանգլիական լեզու ի լոյս ընծայեց Եղիշէի Վարդանանց պատմութիւնը. (The history of Vartan, of the battle of the Armenians; containing the Persians and Armenians, by Elisæus bishop of the Amadunians, translated from the Armenian by C. F. Neumann; London, Oriental Translation fund ; 1830): Տարի մը ետքը հրատարակեց նաեւ զհամառօտ պատմական գրուած Վահրամ րաբունւոյ, ի նոյն անգղիական լեզու. (Vahram's Cronicle of the Armenian kingdom of Cilicia during the time of the Crusades, translated from the original armenian, with notes and illustrations by C. F. Neumann, London 1831): Գաղղիական թարգմանութիւն մը այս գըրուածին հրատարակեցաւ ի Հանդէսն արեւելից թարգմանութեամբ Ս. Պետրոսեան. (Chronique du royaume arménien de la Cilicie à l'époque des Croisades; traduite par Sahag Bedrosian (de Constantinople). Paris, Benjamin Duprat, 1864. յ'էջս 245-254, 315-325)։ Եղիշէի թարգմանութեան վրայ հետեւեալ քննադատութիւնն կ'ընէ Նև. «Մխիթարի խմբագրած ակադեմականին թարգմանութիւնը, կ'ըսէ, ազատ թարգմանութիւն մ'է, որ կարծես թէ ոչ այնչափ բանասիրական տեսակէտով՝ որչափ պատմականին համար եղած կ'երեւնայ. ուստի և ի բնագրէն այլ և այլ կտորներ մէկդի ձգեր է, երկրորդումն կամ յերկարաբանութիւն համարելով, մանաւանդ որոնք իրեն համար ճառաբանական կամ ճամարտակական կարծուեր են։ Անճշդութիւններն որոց մէջ ինկած է, կընան իրենց մեկնութիւնն գտնել յայնմ գրութեան՝ զոր կարծեր է գործածել, և նաեւ ի դըժուարութեան ճշդելու միշտ զիմաստ բնագրին, որ ոչ միշտ դիւրիմաց է, և ուրիշ հայ մատենագրաց նման՝ ունի իր յատուկ քերականական դարձուածներն»։

Գերմանական ուսումնական հանդիսից մէջ առաջին յառաջ աշխատակցից եղաւ Նայման՝ Լայպցիկ հրատարակուած Հերմէս կամ Քննադատական-մատենագրական տարեգիրք, (Hermes, oder Kriti-

sches Jahrbuch der Literatur) թերթին մէջ. և ի հատորն Լ.Գ. (էջ 177–204) հատուած մը հրատարակեց. «Հայկական լեզու և նորա մատենագրութեանն առաջին ժամանակ» խորագրով (La langue arménienne et sa littérature, I.re époque)։ Մեծապէս հետաքննական պատմական տեսութիւն մ'է հայկական ուսմանց ի Գերմանիա։ Բայց ի Աւգերեան – Պրանտ հայ-անգղ և անգղ – հայ բառգրոց, կը խօսի հեղինակն ի Մխիթարեանց Վենետկոյ հրատարակուած Մովսէսի Խորենացւոյ (1827) և Եզնկայ գրոց վրայ (1826). յորմէ կը թարգմանէ Որմզդի և Արհմենի ծննդեան նշանաւոր հատուածը։ 1833ին Վիէննայի Մատենագրական տարեգիրք հանդէսին ԿԲ հատորին մէջ (58-69) յօդուած մը հրատարակեց նոյնպէս ի Ս. Ղազար տպագրուած Փաւստոսի Բիւզանդայ պատմական գրոց վրայ (1832)։ Հայ լեզուին համար կ'ենթադրէ թէ մերձաւոր ազգակից ըլլայ պահլաւին, և ի հաստատութիւն իր գրութեան Գուլիէլմ Հումպոլտ (Abh. der histor. philol. Klasse der Kön. Ak. der Wiss. zu Berlin), 1829 տարւոյն և ի 1832 հրատարակուած մէկ յօդուածը մէջ կը բերէ, յորում կը պնդէ թէ հայկականն՝ հնդկագերմանն ճիւղին ամենէն աւելի հարուստ լեզուաց մէկն է. և թէ բանասիրական ու պատմական տեսակէտով՝ այս լեզուին ուսումն ուրիշ ո՛ր և իցէ լեզուաբանական տարրերուն մէջ ամենէն աւելի կարևորներէն և հետաքննելին է։ Այս յօդուածէն վերջը կը խօսի Նայման Մխիթարայ Հերացւոյ Ջերմանց գրքին վրայ, որ ի 1832 տպագրութեամբ հրատարակուած էր ի Ս. Ղազար։ D. F. Illgen's Zeitschrift fur die historische Theologia Լայպցիկի ուսումնաթերթին չորրորդ հատորին մէջ (1834, Մասն Ա. 71-78), Նայման թարգմանութեամբ հրատարակեց Եզնկայ Ընդդէմ աղանդոց գրոց չորրորդ մասը, «ընդդէմ Մարկիոնի» (Marcions Glaubenssystem) տեղեկութեամբ մը այն յարաբերութեանց որ ի վարդապետութեան Մարկիոնի և փարսիկանին։ Նոյն հատորին մէջ (Մասն Բ. 126-198) տպագրեց զթարգմանութիւն հուշակաւոր Աստուածաբանութեան Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ արքեպիսկոպոսին Տարսոնի որ ի Կիլիկիա յ'ԺԲ դարու, ներածութեամբ և ծանօթութեամբ. որ արդէն Աւգերեան Հ. Յարութեան խօսականն թարգմանութեամբ և տպագրութեամբ (1812) ծանօթ էր արևմտեայ բանասիրաց։ Նոյն 1834 թուականին հրատարակեց Նայման գերման թարգմանութեամբ Սէրգէյ Կլինքա ռուս բանասիրին մէկ գրուածքը, «Պատմութիւն գաղթականութեան ի Ռուսաստան քառասուն հազար հայազգեաց Ատրպատականն գաւառի ի 1828». (Geschichte des Uebersiedlung von 40,000 Armenien, welche im Jahre 1828, aus dem Persischen Provinz Aderbaidschan nach Russland auswanderten, Lepzig, 1834)։ Վերջապէս ի 1836 հրատարակեց անուանի արևելագէտն իր ամենէն աւելի հետաքննական երկասիրութիւնն. «Ճաշակ գրականական պատմութեան Հայաստանի, ազատ խմբագրութեամբ, հետևողութեամբ գրուածոց Մխիթարեանց». (Essai d'une histoire de la littérature arménienne, rédigée librement d'après les ouvrages des Mékhitaristes = Versuch zu einer Geschichte den armenischen Literature nach den Werken der Mechitaristen frei bearbiet etc): Տասնութ գլուխներու բաժնուած և ըստ դարուց դասաւորուած է այս գիրքը. որոյ վրայ 1849ին յաւելուած մ'ալ ըրած է հեղինակն, յորում ընդ խորագրով Beyträge zur armenischen Literatur; Munchen, 1849, կը խօսի Մովսէսի Կաղանկատուացւոյ ու Արիստակէսի Լաստիվերտացւոյ գրուածոց վրայ։ Զենք կարծեր՝ թէ մեր այս յիշատակածներէն զատ ուրիշ գրուածք մը հրատարակած ըլլայ Նայման՝ նկատմամբ հայ լեզուի, մատենագրութեան և ուսմանց»։

Avéd Jákó. - Az örmény nemzet irodalomtörténetének kisérlete. Jrta Neumann K. Frigyes. Ford. - Gyulafehérvári kath. gymn. Progr. $188^3/_4$ Neumann's armen. Literaturgeschichte übers).

Եփրատի մէջ (1864, էջ 350) կը գրէ Տէրոյենց. «Սուրբ Սահակեաննոս Սինեցին՝ որ փրկչի թուականութեան եօթներորդ դարուն վերջերը և ութերորդին սկիզբները կը ծաղկէր՝ քերականութեան մեկնութիւն մը շինած ունի, որուն ամբողջը երևան եկած չէ։ Նայման Գերմանացի հայերէնագէտ մատենագիրը սոր մէկ հատուածը փարիզ գանելով՝ գերմաներէնի թարգմանած և իր Ճաշակ պատմութեան Հայ դպրութեան գրքին մէջ դրած է (եր 110)։ Մենք ալ նոյնը լոկ հետաքրքրական բան մը ըլլալուն համար կը թարգմանենք։

«Յունաց լեզուն սիրուն է՝ կըսէ. Լատիներէնը ուժեղ. Հոնացը վայրենի. Ասորիներունը ճկուն և ազերական. Պարսիկը խրոխտ. Ալաններունը ախորժալուր. Գոթացիներունը զուարճալի. Եգիպտացիներունը անախորժ. Հնդիկներունը սուլող. իսկ Հայոց լեզուն տիրական է. վասն զի ամէնուն յատկութիւնները իր մէջը կը պարունակէ»։

Նանըղուշդեղցի Աբրուշի Կորդոն. — Տես ՉԱԳՐՃԵԱՆ (Հ. Ե.)։

«Նանոսի հայ վարժուհիները». Հանդէս Ամսօրեայ 1896, էջ 252, 282 (ծաղկաքաղ)։

ՆԱՈՒՄԱՆ (Դր. Էդ.) — Էրզրում. գերմաներէնից թարգմ. Խաչակ Յարութիւնեանց։ Թիֆլիս, տպարան Մ. Շարաձէ, 1896. 8°, 31 էջ։

Թարգմանիչը կ'ըսէ. «Vom goldnen Horn zu den Quellen des Euphrat. Von Dr. Edmond Naumann. München und Leipzig, 1895. Այս վերնագիրը կրող ընդարձակ գրուածքի մի հատուածն է կազմում «Էրզրումը», որ մեր թարգմանութեամբ ընծայել տարի լոյս տեսաւ նաև «Արձագանքի» էջերում։

Բովանդակութիւն. Էրզրումի դիրքը. քաղաքի ընդհանուր յատկութիւնները. ամրոցը. վերջին պաշարումը. փողոցներում եռացող կեանքը. պաշարման դրութիւն. քրիստոնեաների և մահմեդականների մէջ տեղի ունեցած նորագոյն արիւնահեղ կռիւները. վալիի երկու փրանսիացի բանտարկեալները. օտար հիւրերի հսկողութիւնը ոստիկանութեան ձեռքով. վատթար ակնկալութիւններ վալիի մօտ. գաֆթէներ տալու զլացումն. զօրքն ու ոստիկանութիւնը. Էրզրումի հայոց դպրոցը. Սանասարեան. պատմութիւն. վաճառականութիւն։

ՆԱՈՒՄԲԵՐԳ. — «Բաղդը», պատմուածք Ն.ի թրգմ. Օր. Ա. Տ. Յովհան. Լուսայ 1903, Թ. 2, էջ 68-71։

Նապաստակ. — Տես ՍԼԻՎԻՑԿԻ (Ա. Մ.)։

Նապաստակ խեչանի վրեժխնդրութիւնը. — Տես ՄԱՍՍՕՆ (Ժ.)։

Նապաստակի և ոզնու գրազը. (պատկերազարդ)։ Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի, 1897. մեծ. 16 էջ?

Նասրէտտին խօճայի Երևումն և երեք ծաղրաբանութիւնք։ Թարգմանեաց ի գաղղիարենէ Հ. Յ. Տ(էտէեան)։ Զմիւռնիա, ի տպ. ի Եղբարց Տէտէեան, 1854. 8°, 24 էջ։

= Բ տիպ, անդ, 1858. 16 էջ։

Տես և ԼԱԼԱՅԵԱՆ (Ե.) - ՀԻՒՐՄԻՒԶ (Ե.)։

Տես և Արձագանք 1901, էջ 148. «Մոլլա Նասրէդդինի արկածը (Անեկդոտ) Սիմ. Ա. Պապիկեանց. – «Մոլլա Նասրէդդինի էշը», Պետր. Մռճոնեանց, էջ 221–224. – «Մոլլա Նասրէդդինի կովը», նոյն, անդ, էջ 356–8։

ՆԱՎԻԼ (Երնեստ). – Յաւիտենական կեանք. հրապարակական ընթերցուածք Երնեստայ Նավիլայ վարդապետի (Պրօֆեսօրի) փիլիսոփայութեան Համալսարանին Ժընեվայի։ Թարգմանութիւն Արիստակէս Վ. Սեդրակեան Արշարունւոյ, միաբանի սրբոյ Էջմիածնի։ Ի Թէոդոսիա, ի տպ. ի Խալիբեան Ուսումնարանի ազգիս Հայոց, 1871 = ՌՅԻ. 8°, 254 էջ։

Նատըր-Շահ. — Տես Պատմութիւն Նատըր-Շահի, եւն։

«Նարդխլան գիւղ». — Արձագանք 1885, 40։

ՆԱՐ-ԴՈՍ (= Բուն անունը՝ Միքայէլ Յովհաննիսեան). — Աննա Սարոյեան. էտիւդ. (Հրատ. Բարսեղ Քամալեանի)։ Թիֆլիս, տպարան «Արօր» Տ. Նազարեանի, 1890. 8°, 76 էջ։

Քննադ. Մուրճ (Ա. Քչ.) 1890, թ. 6։

— Սպանուած աղաւնին, վիպակ. հրատարակութիւն Գողթնի։ Բագու, տպ. «Արօր», 1901. 8°, 124 էջ։

— Տանտիրոջս աղջիկը, վիպակ։ Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի, 1902. 8°, 90 էջ։

Քննադ. Լումայ 1903, թ. 1։ – Մուրճ (Տ. Յ.) 1902, թ. 12։

— Նրա օրերից մէկը։ Թիֆլիս, տպ. «Հերմէս», 1904. 12°, 30 էջ?

Արձագանք-Տարազի հրատարակութիւն, թ. 66։

— Նորածին մանուկը։ Վաղարշապատ, 1904. 8°, 16 էջ?

Քննադ. Լումայ 1905, թ. 1։ – Մուրճ (Սուրէն) 1905, թ. 4։

Գրուածներ Նար–Դոսի մասին. Լեօ, «Ռուսահայ գրականութիւնը» էջ 370, եւն. – «Գրական ակնարկ». Թատրոն 1901, թ.

Նարեկ գիրք. — Տես ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ։

ՆԱՐԵԿԱՑԻ (Անանիա). — Տես ԱՆԱՆԻԱ —։

ՆԱՐԵԿԱՑԻ (Գրիգոր). — Տես ԳՐԻԳՈՐ —։

«Նարեկի վանք». (Ս. Գրիգոր Նարեկացի). Արարատ 1898 Ա, էջ 81։

Նարեկլուզ. — Տես ԱԻԵՏԻՔԵԱՆ (Հ. Գ.) — ՆԱԼԵԱՆ (Յ.)։

Նարիման խան. — Իր մասին գրուածներ, տես Արձագանք 1889, թ. 5–6 Բ. բաժին, էջ 117. – Լումայ 1903, թ. 2։

ՆԱՐԻՄԱՆՈՎ (Նարիման). — Բոհնայքը եւ Սոնա (Թուրքական պատմուածք). Թարգմ. Վ. Փափազեանի. Մուրճ 1896, թ. 6, էջ 758–775։ Տես եւս յէջն 754–757՝ Վ. Փափազեանի «Կովկասեան Թուրքերի գրականութեան մասին մի երկու խօսք»ը։ (Նարիման Նարիմանովի վէպի հայերէն թարգմանութեան առիթով)։

ՆԱՐԼԵԱՆ (Հմ.) - Յարակից. ուսանդութիւն Հայոց հնէաբանական շրջանէն։ Ծաղիկ 1895, էջ 553։

ՆԱՐՈՅԵԱՆ (Մեսրոպ Վ. = Հայրենի). — Լոյսի մէջ ունի. «Ներկայի պահանջքը», 1905, էջ 181. – «Ընդհանրական եկեղեցին և եկեղեցական պատմութիւնը», էջ 553. – «Հայ եկեղեցի. ընդհանուր ակնարկ մը», էջ 692. – «Հայ Առաքելականութիւնը», էջ 737. – «Հին կտակարանի ծագումը», էջ 1124, 1221։

Գրուածներ իր մասին. Մանզումէի Էֆքեար 1904, թ. 815։

ՆԱՐ-ՊԷՅ (Հ. Ամբրոսիոս Գալֆայեան–Լուսինեան). – Համառօտ պատմութիւն հին և նոր ազգաց. շարագրեալ Հ. Ամբրոսիոս Գալֆայեան ի Մխիթ. ուխտէն։ Վենետիկ, ի տպ. ի սրբոյն Ղազարու, 1849-1851։ Ա. Պատմութիւն Հին ազգաց, յորում բովանդակին պատմութիւնք Հրէից, Ասորեստանեայց, Բաբելացւոց, Եգիպտացւոց, Մարաց, Պարսից, Պարթեւաց, Կարքեդոնացւոց, Յունաց և Ասորւոց. 12°, 512 էջ։ - Բ. Պատմութիւն Հռովմայեցւոց, 452 էջ։ – Գ. Պատմութիւն Միջին դարու, 524 էջ։ – Դ. Պատմութիւն Նոր ազգաց, 495 էջ։ - Ե. Պատմութիւն ժամանակակից, 237 էջ։

— Թուաբանութիւն, աշխատասիրեալ ի Հ. Ամբրոսեայ Գալֆայեան, ի Մխիթ. ուխտէն, ի պէտս սանից Մուրատեան վարժարանին, և այլոց ազգային դպրոցաց։ Ս. Ղազար, եւն, 1853?

= Բ տիպ. Թուաբանութիւն ընդարձակ վասն զարգացելոց, սրբագրեալ ի հեղինակէն։ Թէոդոսիա, ի տպ. ի Խալիպեան ուսումնարանի ազգիս Հայոց, 1860?

— Թուաբանութիւն համառ Ա. (Դասագիրք ժողովրդական դպրոցաց)։ Յօրինեաց Ամբ. Վ. Գալֆ.։ Թէոդոսիա, ի տպ. ի Խալիպեան ուսումնարանի Հայոց, 1860. 8°, 56 էջ։

— Առաջնորդ գաղղիարէն և հայերէն զրուցատրութեան. յօրինեաց Հ. Ա. Գ. ի Մխիթ. Ուխտէն. Guide de la conversation Français-Arménien. Ի Բարիզ, ի տպ. ի Շնըլէրայ, 1855. 8°, 280 էջ։

«Գաղղիարէն լեզուին վարժութիւնը միրադնեայ պատանեաց դիւրացնելու համար շինուած է այս օգտակար զրուցատրութեան գիրքը. և երկու հատոր է. կամ թէ ըսենք՝ երկու տպագրութիւն ունի. մէկուն մէջ գաղղիարէնին ընթերցմանը կողմանէ առջի բերան դժուարութիւն կրողաց համար՝ հնչմունքները Հայու գրով ալ գրուած են, մէկալին մէջ գաղղիարէնն ու հայերէնը միայն կայ՝ առանց հնչման։ Այս գործը՝ մեծապատիւ Արթին Պէյին երկու գեռահասակ որդւոց կողմանէ իրենց հասակակից ազգային պատանեաց նուիրուած է». Մասեաց աղաւնի. 1855, թ. 5։

= Բ տիպ, Կ. Պոլիս, 1895. տպ. Սէրվիչէն. 248 էջ?

— Առաջնորդ անգղիարէն և հայերէն զրուցատրութեան, հնչմամբ անգղիարէնին. յօրինեալ յԱմբրոսիոս վարդապետէ Գալֆայեան։ Փարիզ, ի տպարանի Շնըլէրայ?

«Երկհատոր պատուական գործեր մըն է՝ անգղիարէն լեզուն գիրքու սորվեցնելու։ Որչափ որ այս լեզուին կարեւորութիւնը և օգուտն մեծ ճանչցուած է միրադնեայց համար, միանգամայն հնչմունքն ալ դժուար՝ օտարազգաց համար, նոյնչափ ալ ամէն ջանք եղած է որ ճիշդ բացատրուին այն հնչմունքները մեր հայերէն այբուբենով։ Այս գիրքս

ազգային պատմնեաց նուիրովն է Արմին-Պէյեան պայազատաց գեռահասակ մօրաքեռորդին Յարութիւն Քարամվալեան»։ Մասեաց աղաւնի, 1855, թ. 5։

Համմտ. եւ Արշալոյս Արարատեան 1855, թ. 498։

Կայ տանց հնչման տպագրութիւն մըն ալ՝ նման վերնոյն։

— *Հայկական գեղագրութիւն յօրինեալ ի Հ. Ա. Գ. տպեալ ի Փարիզ*, 1853?

Համմտ. Արշալոյս Արարատեան 1853, թ. 466։

— *Հայկական գեղագրութիւն, յօրինեաց Ա. Վ. Գ., և նուիրեալ Վ. Հ. Սարգսի Վ.ի Թէոդորեան, վերատեսչի Մուրատեան վարժարանին։ Փարիզ*, 1855?

«Քասնուերկու թերթ փոքրագիր գիրատար օրինակ՝ գրեթէ ամէն տեսակ հայերէն գրոյ, պարզ, գեղեցիկ, կանոնաւոր ձեւերով գծագրուած, և Փարիզու ճարտար պղնձագիր արուեստագիտաց մէկուն ձեռքովը փորագրուած»։ Մասեաց Աղաւնի 1855, թ. 5։

= Բ *տիպ*, 1859. 31 *թերթ*. 23ը *հայ. մնացածը ֆրանսերէն*։

— *Պատկերազարդ այբբենարան վասն մանկանց*։ *Փարիզ*, Imprimerie de P. - A. Bourdier et C.ie, 1860. 12°, 72 *էջ*։

— *Աշխարհագրութիւն* (*Դասագիրք ժողովրդական դպրոցաց հատ. Բ.*)։ *Թէոդոսիա, ի տպ.ի Խալիպեան Ուսումնարանին Հայոց*, 1860. 8°, 208 *էջ*։

— *Պատմութիւն սուրբ գրոց Հին կտակարանի. յօրինեաց Ա. Վ. Գ.։ Ի Թէոդոսիա, նոյն տպ.*, 1860. 8°, 154 *էջ*։

— *Պատմութիւն աստուածաշունչ սուրբ գրոց Հին կտակարանի* (*ընդարձակ և պատկերազարդ*)։ *Գրեաց Ա. Վ. Գ.։ Թէոդոսիա, նոյն տպ.* 1862=ՌՅԺԱ. 8°, 442 *էջ*։

= Բ *տիպ, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի*, 1897. 8°, 476 *էջ*։

Բարեկ ալ տպագր. մը եղած է իբր Բ, 1901?

— *Պատմութիւն Նոր կտակարանի, ընդարձակ և պատկերազարդ*։ *Թէոդոսիա, եւն.* 1863?

Քննադ. Լանգլուա, *Journ. Asiatique* V.me Série, T. XIX, էջ 98։

= Բ *տիպ, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի*, 1897. 8°, 235 *էջ*։

— *Նոր ընթերցարան*. Lecture pour tous. *Յօրինեաց Ա. Վ. Գ., անդամ Ասիական ընկերութեանն Փարիզու Պատմական Ճեմարանին Գաղղիոյ, և Արեւելեան ընկերութեանն Փարիզու, եւն, եւն*։ *Փարիզ, ի տպ.ի Ա. Պուրտիէի*, 1861. 8°, 420 *էջ*։

— *Բառգիրք Հայ-Գաղղիարէն*. Dictionnaire Arménien-Français.

Այս իբր նախադրութ. բուն ճակատին մէջ՝ որ է հետեւեալը՝ աւելցուած է նաեւ «և Գաղղիարէն-Հայերէն», մինչ միայն հայ-գաղղ. է բառգիրքը.

Բառգիրք Հայ-Գաղղիարէն և Գաղղիարէն-Հայերէն։ Յօրինեաց Ա. Նար Պէյ (Ա. Գալֆայեան) Ա. տիպ?

= Բ *տիպ, Փարիզ*, 1872. Dictionnaire Arménien-Français et Français-Arménien, par A. de Nar Bey (A. Calfa). Deuxième édition. Paris, L. Hachette et C.ie, 1872. 6°, XIX + 1-1033 *էջ*։

Յառաջաբանէն. «Յընդհանուր ծաւալել յազգիս Հայոց ուսման գաղղիականին կենցաղօգուտ բարբառոյ, և յաճել հայասիրացն թուոյ յԵւրոպա, եւս քան զեւս յերեւան գայր կարեւորութիւն Հայ-Գաղղիարէն Բառգրոց, գործի անհրաժեշտ որոց ի մարգս և ի վաստակ երկուցուն լեզուացն պարապեցին. Նմին իրի և ի խոյզ և ի խնդիր են ամենեքին մատենից, որոյ փոքր ինչ ցարդ եղեն անճշտք և ոչ յոյժ օգտամատոյցք։ Վասնորոյ սիրով փութաց և մատենագրութեան մերոյս հայրենի աշխարհին, ձեռնամուխ լերկն եղաք, և բուռն եռանդեամբ զամս յոլովս ի նոյն վաստակեցաք անձանձիր։ Զեռն արկեալս այս երկասիրութիւն ի վեր քան զկարծիս մեր և զայլոց տարժանական եղեւ և դժուարաքինան։ Քանզի բնաւ չէր նման աշխատութիւն մեր այնոցիկ ի յօրինողացն բառագրոց, որ բաղում այն է զի ոչ այլ ամենն, բայց դոյզն ինչ յաւելուլ, զեղչել կամ ուղղել ի գիրս անդ նախորդացն իւրեանց։ Եւ պակասէին մեզ նախորդք։

Մաեսանն Փրանկիսկեայ Ռիվոլայ, մակագրեալ Բառգիրք Հայ-Լատին, հրատարակեալ ի Միլան յամի 1621 և ընծայեալ Փրեդերիկոսի Պոռոմէոյ ծիրանաւորի՝ արքեպիսկոպոսին Միլանու, բառարան է համառօտ՝ յօրինեալ վեր ի վերոյ իմն գիտութեամբ հայկականս լեզուի, յորում և ընկլ բառք հայեցիք խառն են ընդ աշխարհիկ բառից և դարձուածոց անխտիր. ուղղագրութիւնն իսկ բազում աւրեք վրիպակ և այլանդակեալ։

Ի գրչագիրս կայսերական Մատենադարանի Փարիզու կայ և ձեռագիր մատեան՝ Բառգիրք Հայոց անուանեալ, աշխատասիրութիւն Փրթի Տըլաքրուա գաղղիացւոյ։ Նոյն է սա ընդ Բառարանի Ռիվոլայ Միլանեցւոյ, միայն յաւելեալ են ի նա բառք ոմանց ի նախնեաց մերոց և քերականութեանն Շրոտէրի գերմանացւոյ։ Ի նմանողութեանս յայսմիկ զոգցես առաւել քան ի բնագրին թերի է կարգարանութիւն. բառք խառն ի խուռն և առանց խոհական ընտրութեան սփռեալք ի մատենին՝ բա ձեւոյ և տարազու դնելոց ի գիրս, նշանակութիւնք նոցին թերակատարք կամ անհաւաստիք՝ յայտ իմն ամենն զհարեւանցի հայագիտութիւն մատենագրին։

Բառարանն Հ. Աւգերեանի թէպէտև առաւել կատարեալ և կարգաւոր քան զվերոյիշեալսն, սակայն բառիցն և դարձուածոց չքաւորութեամբ և զազդիական մեծամեծ վրիպակօքն՝ ի բազում տեղիս հեռէ անբաւական համարեալ է յիմաստնոց. Նորին ապագայ և կրկին տպագրութեանն պատուոյ չեղեւ արժանաւոր, թէպէտ և ոչ սակաւ ժամանակք են յորմէ հետէ սպառեցաւ տպագիրն, և հրատարակումն նման օրինակ մեծաթախանձ խնդրի յազգայնոց և յօտարաց։

Այսպէս թափուր ի վաստակակցացն օգնականութենէ, հարկ եղեւ մեզ անձնատուր լինել յառաջին և ի մշտաջան վարժս, յանդուլ և ի մանրաքնին խուզարկութիւնս և ի ճիգն երկայնամիտս ի հարթել տապալել գլորնաթիւ խոյս խափանարարս որք ընդ առաջ մեզ եղանէին յամենայն ոտնփոխս։ Համեմատութիւն միոյ եւեթ յէջից Բառգրոցս ընդ նախայիշատակեալսն բովանդակութիւն՝ չատ լիցի առ ակներեւ ցուցանել զխարին մեծ որ ի մէջի կայցէ, և բանիցս մերոց լիալի առնել իրաւունս։

Զամս յոլովս ծախեալ յընթերցումն և ի քննութիւն մատենագրացն մերոց նախնեաց, կամ եղեւ

մեզ պատաշխան յօրինել Բառարան ճոխագոյն քան զամենայն հայերէն Բառարանս ի լոյս ընծայեալս ցարդ՝ բովանդակելով ի նմին և զամենայն բառս որ արտաքոյ մեծի Հայկազեան Բառգրոցն գտանիցին։ Այնդրն բուն արարաք տպագրութեանն. բայց առ անհի չհասանելոյ յառաջագիրս նպատակ՝ հարկ ի վերայ մեր եդաք ի ծաղկաքաղ հրատարակումն նորին թեւակոխել. քան զի ստուարակարկատ մեծութեամբն ծանրանային ծախք և ծանրադանդաղ յառաջէր գործն դժուարաւին, որ և զնոյն բարձրութեամբ դժուարահաս իսկ արդեօք հանդերձեալ էր լինել յաղումն և դժուարակիր։

Լաւագոյն համարեցաք ապա նուիրել հասարակաց մատեան դիւրատար դիրագին, և միանգամայն օգտաւէտ, դիւրահաս և կարեւորօքն ճոխացեալ. և առ այս զամենայն փոյթ և ջան ի մէջ առաք։ Գուն գործեցաք բառիցն սատարութեան կցորդել զնշանակութեանցն զճշդութիւն և զյստակութիւն։ Ցաչս եդեալ զանձնասիրութիւն մատենագրի՝ փոյթ յանձին կալաք զնիւթ մեծագիր ութածալ մատենի իբրու 1600 էջից՝ կարճել ամփոփել ի փոքրագիր և ի նուազագոյն էջս, առանց ամենեւին ի բաց հատանելոյ այնու ոչ զպիտանի բառս, ոչ զբազմադիմի և զփոխաբերական առմունս նոցին, և ոչ զազգի ազգի ոճս և զդարձուածս հայկաբանութեան և զգաղղիաբանութեան»։

Սոյն յառաջաբանէն վերջ՝ որուն ֆրանսերէն թարգմանութիւնն ալ կայ յետոյ՝ կայ նաև Եդ. Տիւրրիէի նամակը բնագրով ու թարգմանութեամբ։

= Գ. տիպ, ի Բարիզ, 1885?

Քննադ. Արեւելք 1885, թ. 490։

= Դ. տիպ, փարիզ, 1893. էջք՝ նոյն։

— Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ. Գուիտոն Լուսինեան. Հատոր Առաջին A–H. փարիզ, տպագրութիւն Մորիսի հայր և որդի, 1900. - Guy de Lusignan. Nouveau Dictionnaire illustré Français-Arménien. Tome premier A–H. Paris, typographie Morris Père et Fils, 64, Rue Amelot, 1900. մեծ 8°, եռսիւնեան, ժԴ + 1061 էջ։

Քննադ. Արարատ 1901, թ. 2։ - Արաքս 1898, Գիրք Ա., էջ 171 (նմուշին առթիւ)։ - Արեւելեան մամուլ 1902, էջ 234, 272։ - Բազմավէպ 1901, էջ 137։ - Բիւզանդիոն 1901, թ. 1496։ - Եկեղեցի Հայաստանեայց 1901, թ. 15։ - Համալսարան 1900, թ. 9–10։ - Հանդէս Ամսօրեայ 1897, էջ 60 (13.) - 1901, թ. 1։ - Մուրճ 1901, թ. 1 (Ստ. Մ.)։ - Նոր-Դար 1900, թ. 237։

— Հատոր երկրորդ I–Z. փարիզ, եւն. 1903. ժԴ + 816 էջ։

Նախաշաւիղը կ՚ըսէ. «Սոյն երկասիրութիւնն պատրաստած ժամանակս, իմ փափաքն և միակ մտածութիւնն եղած են՝ օգտակար լինել Ազգիս և Հայրենակցացս։ Եթէ յաջողեցայ սոյն դժուարին ձեռնարկին մէջ, ա՛յս պիտի լինի իմ վարձատրութիւնն և փառքն»։ Կայ ֆրանսերէնն ալ։ Այս է բոլոր յառաջաբանը։

Քննադ. Արմենիա 1903, թ. 25։ - Արեւմուտք 1903, թ. 4–5։ - Ժողովուրդ (Գահիրէի) 1903, էջ 151։ - Հանդէս Ամսօրեայ 1903, թ. 8–9։ - Տես և Ծաղիկ 1903, թ. 30՝ «Գիտական բառերու հայացման խնդիրը և նոր ֆրանսահայ բառարանը»։

Թարգմ. - Տես ՊԷՌՆԱՐՏԷՆ ՏԸ ՍԷՆ-ԲԻԷՌ, «Պօղ և Վիրգինէ». - ՖԵՆԵԼՈՆ, «Տելեմաք»։

Տես եւ Մասեաց Աղաւնի։

Եմիլ Ալլօմի գրած (ֆրանս.) կենսագրութեան առթիւ տես Արեւմուտ 1902, թ. 5–6։ - Տես եւ Լուսինեանի գործիս մէջ։

Իր մասին գրուածներ. Հայք 1891, էջ 115։

ՆԱՐՊԷՅ (Խորէն Վ. Գալֆայեան – եպիսկոպոս). — Արշակ երկրորդ. ողբերգութիւն. գրեաց Խորէն Վ. Գալֆայեան, անդամ քերթողական ժողովոյն Գաղղիոյ, եւն, եւն։ Թէոդոսիա, ի Խալիպեան տպարանի, ՌՅԺ–1861. 8°, 112 էջ։

Շրումփ կ՚ըսէ թէ «Արեւելից ճանդիսին մէջ (չար չորրորդ, Հատ. Ա.) կը գտնենք նաեւ թարգմանութիւն մը Գալֆայեան Խորէն վարդապետի Արշակ Բ ողբերգութեան». «Հայ լեզուի ուսումն.» էջ 236։

— Այափրանկա, կատակերգութիւն ի հինգ արարուածս։ Գրեաց Խ. Վ. Գ.։ Ի Թէոդոսիա, եւն. 1862 = ՌՅԺԱ. 8°, 180 էջ։

Քննադ. Մեղու 1862, թ. 160, 166։

— Պօլսոյ «Մեղու»ին 160 թուոյն մէկ հատուածին պատասխան։ Ի Թէոդոսիա, եւն. (հատուած յԺԴ թուոյ Մասեաց Աղաւնւոյ). 15 էջ։

Սոյն պատասխանը կայ և յԱրշ. Արարատեան 1862, թ. 679։ - Մասիսի մէջ եւս (1862, թ. 551) յիշուած է հետեւեալը. - «Քննադատութիւն Մեղուի 160–166 թուոց մէկ քանի քննադատութեանց, տպեալ ի Կ. Պօլիս, ի տպ. ի Յ. Միւհէնտիսեան, 1862»։ Արդեօք նո՞յն է վերնոյն հետ, ու Պօլի՞ս ալ տպուած։

— Վարդենիք. տաղերգեաց Խ. Վ. Գ.։ Ի Թէոդոսիա, ի Խալիպեան ազգային տպարանի, 1863 = ՌՅԺԲ. 8°, 357 էջ։

Քննադ. Մասիս 1863, թ. 591։

— Քնար պանդխտին, տաղերգեաց Խորէն եպիսկոպոս Նարպէյեան։ Կ. Պօլիս, տպագր. Արամեան, 1868 = ՌՅԺԷ. 8°, 448 էջ։

Քննադ. Մասիս 1868, թ. 881։ - Ցոյս 1869, թ. 25։

— Հայոց եկեղեցին և անգղիականականք։ Յօրինեաց Խորէն եպիսկոպոս Նարպէյ։ Կ. Պօլիս, Արամեան տպարան, 1870. 8°, 78 էջ։

«Անցեալ տարի Լը Մոնտ եւ Զիվիլթա–Քաթօլիքա լրագրաց դէմ Գեր. Խորէն եպիսկոպոսի գրած և փարիզի Միւզիէ քրիստոնէականի անունով հանդէսին մէջ հրատարակած հերքման թարգմանութիւնն է, որ Մանզումէի մէջ անցեալ տարի հրատարակուելէ եաեւ՝ հիմա զատ տետրակաւ ալ տպուած է». Մասիս 1870, թ. 1000։

— Ստուերք հայկականք. քերթուածք ի Խ. արքեպիսկոպոսէ Նար Պէյ։ Կոստանդնուպօլիս, տպագրութիւն Գավաֆեան, 1874. փոքր 4°, 165 էջ։

Նախաբանէն. «... Երկու մաս կամ գիրք բաժնուած է Հեղինակին այս երգերը. Վէպք և Եղերգք։ Առաջինը Անցելոյն, երկրորդը՝ Ներկայիս նուիրեալ։ Երկուքն եւս անկատար, որովհետեւ ոչ մեր բոլոր անցեալ փառքերը կը բովանդակեն, և ոչ՝ ներկայ թշուառութիւնքը։ Ասոր պատճառը ոչ միայն իւր ակարութիւնն է՝ նիւթոց անբաւ առատութեանն առջեւ, այլ և դժբաղդ ու ահաւոր հրդեհ մը՝ որ Բերայի մէջ Հեղինակին տանամեայ երկասիրութիւնները բոլոր յաճախ փոխարկելով, Վէպերուն մեծ մասը, որ մեր Դիւցազանց կենսագրու-

թիւնն էր, յախշտակեց տարաւ, ուրիշ քանի մը հատոր քերթողական և բանասիրական աշխատութեանցն հետ։ Իսկ այս հատորին մէջ ամփոփուածները՝ բաղդ. ունեցան ապրելու, ոմանք ազգային օրագրաց մէջ հրատարակուած լինելով, ոմանք ալ բարեկամաց քով գտնուելու բարեբախտութեամբ»։

Բովանդակութիւն. Վէպք. Ա. Հրեշտակն Հայոց. – Բ. Հայկ. – Գ. Արամ. – Դ. Արա գեղեցիկ և Նուվարդ. – Ե. Զարմայր և Շուշան. – Զ. Տիգրանուհի. – Է. Հսկայն Հայոց Տորք. – Ը. Վերջին Հայկազն, Վահէ. – Թ. Արտաշէս Մեծն, Տիգրերակալ. – Ժ. Արտաւազդ Ա. բանտարկեալ թագաւոր. – ԺԱ. Արտաւազդ Բ. Հայոց Վրիժահան. – ԺԲ. Նախավկայուհին Սանդուխտ. – ԺԳ. Կոյսն Հռիփսիմէ։

Եղերգք. Ա. Հայուն կեանքը. – Բ. Պանդուխտ առ ամպն. – Գ. Հայ մայր մը. – Դ. Նորածիլ տերեւք. – Ե. Առ տաճարն Հայոց, առէն պանդխտին. – Զ. Հովիկ հայրենի. – Է. Թէ տայրն ինծի. – Ը. Ազգուրաց Հայեր. – Թ. Ի Սահմանադրական տօն. – Ժ. Արշալոյս. – ԺԱ. Թշուառ Հայեր. – ԺԲ. Հայոց մայրեր. – ԺԳ. Պանդուխտն առ ծիծառնիկ. – ԺԴ. Հառաչք Հայ պանդխտին. – ԺԵ. Հայ աղբիւր. – ԺԶ. Հայ մեռնինք. – ԺԷ. Ի Գերեզմանս պանդուխտ Հայոց։

Քննադ. Մասիս 1874, թ. 1606–1609։ – Տես և Հայրենիք, թ. 210՝ Խ. Յ. Սարաճի քերթուածը։ Եւս՝ Յոյս 1874, էջ 576։ – Մամուլ 1874, թ. 406։

Բազմավէպի մէջ ունեցած (1853–57) գրաբար քերթուածները ամփոփած է Քնար Պանդխտին հատորին մէջ։

— Նախնական Քրիստոնէական ըստ վարդապետութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ. ի պէտս նախակրթական դասուց ազգային վարժարանաց։ Յօրինեալ առաջարկութեամբ և վաւերացմամբ ազգային կրօնական ժողովոյն. տպագրեալ հրամանաւ Տ. Ներսիսի Ս. Պատրիարքի կոստանդնուպոլսոյ։ Ի Կ. Պոլիս, տպագր. Արամեան, 1877. 12°, 109 էջ։

Հմմտ. Մասիս 1877, թ. 2018։

= Բ տիպ, անդ, նոյն տպ., 1890. էջք՝ նոյն։

— Կրթական Քրիստոնէական ըստ վարդապետութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, ի պէտս զարգացեալ դասուց ազգային վարժարանաց։ Յօրինեաց Տ. Խ. Արքեպ. Նար Պէյ, առաջարկութեամբ և վաւերացմամբ ազգային կրօն–ժողովոյն։ Կ. Պօլիս, տպագր. Արամեան, 1877. 8°, ԺԹ + 319 էջ։

Այս երկու «Նախնական և Կրթական Քրիստոնէականներու» քննադատութիւնը տես Արեւելեան Մամուլ 1877, թ. 386. և տար գէմ՝ Մասիս 1877, թ. 2068. – 1878, թ. 2069, 2070։ Եւ այս երկուքին ալ դէմ՝ Մասիս 1878, թ. 2078, 2081, 82։ Տես և Արշալոյս Արարատեան 1878, թ. 1084։

= Բ տիպ, անդ, Գ. Պաղտատլեան, 1887. 8°, 376 էջ։

— Նախակրթարանի փրանսերէն լեզուի, ի պէտս ազգային մանկտւոյն։ Երկասիրեաց Խորէն եպիսկ. Նար–Պէյ։ Կ. Պոլիս, տպագր. Արամեան, 1873. 8°, 165 էջ։

Հմմտ. Մասիս 1873, թ. 1380։

— Նախնական սրբազան պատմութիւն պատկերազարդ, ի պէտս նախակրթական դասուց ազգային գպրոցաց։ Հին և Նոր կտակարան։ Ըստ յանձնարարութեան կրօնական ժողովոյ Ազգային կեդր. վարչութեան (1884–1886)։ Յօրինեաց Խորէն արքեպիսկոպոս Նար Պէյ Լուսինեան։ Փարիզ, տպագրութիւն Մոուխ, 1896. 12°, 168 էջ։

Տես և Վերադարձ, ևն։

Թարգմ. – Տես ԼԱՄԱՐԹԻՆ, «Դաշնակք». – ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՐԴԵԼ. — ԱԼՖԻԷՐԻ։

Այլեւայլ գրուածներ Նարպէյի մասին. մահուան առթիւ. Արաքս 1892, Գիրք Բ, էջ 12. – 1893, Գիրք Ա, 156. – Բ. 57–103. – *L'Arménie* 1892, թ. 50։ – Արմենիա 1892, թ. 29, 31, 32, 34. – 1893, թ. 49։ – Արձագանք 1892, թ. 139, 140. – 1893, թ. 6։ – Այլեւայլք. Անահիտ 1900, թ. 4–5։ – Արեւ. մամուլ 1879–80, էջ 309, ուր կայ և Պարոնեանի «Ազգային ջոջեր» գրքին «Խորէն Գալֆայեան» գլուխը՝ Լոյսէն արտատպած։ – Գեղունի 1903, թ. 1-10։ – Մշակ 1878, թ. 92, 93 (կենսագրական նօթեր)։ – Շարժում 1898, թ. 41։ – *L'Arménie* 1893, թ. 52. «A ma sœur Rosa–Annitza» թրգմ. ֆրանս., եւս՝ 1894, թ. 66, 69. – «Խորէն Արքեպիսկոպոս Գալֆայեանը և Նալբանդեանցի «Ազգմկբը». – Տես Շահազիզ (Ե.)։ – Անտիպ քերթուածներ, Անահիտ 1905, էջ 243։ – Մասեաց Աղաւնի 1858, ուր քերթուածներ ունի։ – Արարատ 1869, էջ 144։ – Հայկական աշխարհ 1869, թ. 2։ – Յոյս 1869, էջ 388։

ՆԱՈ (Ֆ. = F. Nau). — «Sur un abrégé arménien des plérophories». *Rev. de l'Or. Chrét.* IV, էջ 134, ևն։

«Նաւակատիքի վրայ». Արարատ (Տփխիս) 1850, էջ 37։

«Նաւասարդ»ի (տօն 16 Օգոստ.) — Տես Ազգասէր 1846, թ. 53, էջ 1։

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ (Մ.) *թարգմ.* — Տես ԴՈԴԷ (Ա.)։

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆՑ (Բժ. Բագարատ). — Դիֆտերիդ. Բողազացաւի կամ բգացաւի դիֆտերիտ կոչված տեսակը։ Տպված է Միխելյանի տպարանում, 1879 ?

— Բժշկական և առողջապահական մի քանի անհրաժեշտ և տարրական գիտելիք (քաղուածք և յաւելուած)։ Տփխիս, տպ. Մովսէսի Վարդանեան, 1886. 8°, 63 էջ։

Քննադ. Մշակ 1886, թ. 31։

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ (Օր. Վարդուհի). – «Զատկայ դասը». Աղբիւր 1894, էջ 225, 253։

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆՑ (Տիգրան). — Հայ-ժողովրդական աւանդութիւններ. Ժողոված Տիգրանայ Ն.։ Առաջին գիրք. Հանելուկներ։ Երեւան, տպ. Էմին Տէր Գրիգորեանցի, 1883. 8°, 22 էջ։

— Անէծքներ, Օրհնութիւններ, Երդումներ, Շուտասելուկներ, փաղաքշական խօսքեր, Առածներ։ Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանց և Ընկ., 1883. 8°, 48 էջ։

Կան մէջը դարձեալ «Հարսանեաց երգ» (Նորաբիեայքին, երգուած Նոր–Բայազէտի նահանգի գիւղերում). – «Ծաղարդարի երգ». – «Ճանապարհորդը և Բոստանչին». – «Հանելուկներու բացատրութիւնները»։

— *Հայ-ժողովրդական հէքիաթներ. ժողովածու* Տ. Ն.: Ա. *գիրք*: *Վաղարշապատ, տպագր. Մայր Աթոռոյ* Ս. *Էջմիածնի*, 1882?

— *Երկրորդ գիրք*: *Երեւան, Էմին Տէր Գրիգորեանցի տպարանում*, 1882. 8°, 44 *էջ*:

— *Երրորդ գիրք*: *Թիֆլիս, տպար. Մովսիսի Վարդանեանց*, 1884. 8°, 50 *էջ*:

Քննադ. Արձագանք 1884, թ. 21 (Մ. Բարխուդարեան):

— *Չորրորդ գիրք* ?

Քննադ. Մուրճ 1889, թ. 3:

— *Հինգերորդ գիրք*: *Տփխիս, տպարան* Մ. *Վարդանեանի*, 1889. 8°, 80 *էջ*. — 81–143 *Բառարան*:

Քննադ. Մուրճ 1889, թ. 3: – Նոր-Դար 1889, թ. 25:

— *Վեցերորդ գիրք*: *Թիֆլիս, տպ.* Մ. Դ. *Ռօտինեանցի*, 1890. 8°, 150 *էջ*:

— *Եօթներորդ գիրք*: *Թիֆլիս, տպ.* Մ. *Վարդանեանի*, 1891. 8°, 134 *էջ*:

Քննադ. Նոր-Դար 1891, թ. 137:

— *Ութերորդ գիրք*: *Թիֆլիս, նոյն տպագր.*, 1894. 8°, 119 *էջ*:

Քննադ. Արձագանք 1893, թ. 146: – Տարազ 1894, թ. 10:

— *Իններորդ գիրք*: *Թիֆլիս, տպարան* Կ. *Մարտիրոսեանցի*, 1902. 8°, 95 *էջ*:

— *Տասներորդ գիրք*: *Թիֆլիս, տպ. Մովս. Վարդանեանի*, 1903. 8°, 92 *էջ*:

Այս տասը գրքերում բովանդակութիւնը. 1. Արջի Քօթոթը (Արարատեան բարբառով). – 2. Գառնիկ-Աղպէր (Արար. բար.) – 3. Ոսկէ-Ձուկը (Արար. բար.) – 4. Ջ'ուտողի մայր ուտողին հալալ ա (Արար. բար.) – 5. Անջիգեար մէր (Արար. բար.) – 6. Իրեք ապրանք (Արար. բար.) – 7. Մօթալի հէքիաթը (Արար. բար.) – 8. Անմահական խնձոր (Արար. բար.) – 9. Մարդ իրա եօրգանին ու գեօրայ պտի ոտը մեկնի (Արար. բար.) – 10. Թուրքի էրեխէն (Արար. բար.) – 11. Աղուէսը, գէլը, արջը ու զմռուտ ղուշը (Արար. բար.) – 12. Մարդիս ճակատի գրածը չի ջնջուի (Արար. բար.) – 13. Ջան-Պօլատ (Արար. բար.) – 14. Սուտ-Աստն (Արար. բար.) – 15. Օխայ-Բաբի (Արար. բար.) – 16. Սրս չը պահող կնիկը (Արար. բար.) – 17. Զօփչի (Արար. բար.) – 18. Անօթով հարսը (Արար. բար.) – 19. Փահլեւան հէր ու տղայ (Արար. բար.) – 20. Մեռլի հրեշտակը Արար. բար.) – 21. Ընճնց էլ չի մնայ (Արար. բար.) – 22. Աղօթք անող ֆորթարածը (Արար. բար.) – 23. Աստու պահած գառը գէլը չի ուտի (Արար. բար.) – 24. Անմահական վարդ (Արար. բար.) – 25. Խելքպակաս քուրերուն հէքիաթը (Խրիմու բար.) – 26. Աստօծ ողորմած ա (Լօռու բար.) – 27. Անջիգեար մէր (Լօռու բար.) – 28. Թօռչու աղէն (Լօռու բար.) – 29. Ըշխարի դօլվաթը ըշխարումը կը մնայ (Լօռու բար.) – 30. Մօզին (Լօռու բար.) – 31. Աստծուն պանդատ գնացող մարդը (Լօռու բար.) – 32. Փէշակը ոսկի ա (Լօռու բար.) – 33. Հօր տուած իրեք խրատը (Արար. բար.) – 34. Մանկական հէքիաթ (Ղարաբաղի բար.) – 35. Մուխաննաթ ախպէրակնանէք (Վանի բար.) – 36. Մարդիս մուխաննաթութիւն (Վանի բար.) – 37. Զախչախ թագաւոր (Վանի բար.) – 38. Վախկոտ սարաքեար (Վանի բար.) – 39. Օխիկը (Աստապատցոց բար.) – 40. Սատապատցին ու Շամբցին (Աստապ. բար.) – 41. Շամբցիք ու արեւը (Աստապ. բար.) – 42. Իրեք Շամբցի (Աստապ. բար.) – 43. Ոչխարը քցում ան (Աստապ. բար.) – 44. Էշի ձուերանի (Աստապատ. բար.) – 45. Ղահրաման-Բլութ (Արար. բար.) – 46. Ոզնիեր (Աստապատ. բար.) – 47. Ինչ որ ցանես, էն էլ կը հնձես (Արար. բար.) – 48. Աղքատին պաչ տուող կնիկը (Արար. բար.) – 49. Գող հարսը (Արար. բար.) – 50. Երուսաղէմ գնւ գնացիր (Արար. բար.) – 51. Արաբի-Ջանգի (Խրիմու բար.) – 52. Բախտաւոր Արար (Խրիմու բար.) – 53. Անզգամ կնիկը (Արար. բար.) – 54. Էրազ տեսնող աշկերտը (Արար. բար.) – 55. Աստօծ որ ուզենայ մարդի հարստութիւն տայ, կը բերի երդկով էլ մէ կ'ածի (Արար. բար.) – 56. Վէսկէ քաքիւլ աղէն հաքեաթը (Ղարաբ. բար.) – 57. Թագաւէրէն աղորցը հաքեաթը (Ղարաբ. բար.) – 58. Խալ անիմ, խալիչա անիմ. (Ղարաբ. բար.) – 59. Ասլան-Բալասուն հաքեաթը (Ղարաբ. բար.) – 60. Պատու կնկանը հաքեաթը (Ղարաբ. բար.) – 61. Մանկական հէքիաթ (Խրիմու բար.) – 62. Կորսուած աղջիկ (Խրիմու բար.) – 63. Իրեք քուր ու թագաւորին տղան (Խրիմու բար.) – 64. Զութչի (Արար. բար.) – 65. Աղգիլակ (Արար. բար.) – 66. Քասասուն հարամի (Արար. բար,) – 67. Սուտ հէքեաթ (Արար. բար.) – 68. Հալալը չը հարամող կնիկը (Արար. բար.) – 69. Բէգօղլաթ աղէն (Արար. բար.) – 70. Սուտլիկ ավչու հէքաթը (Արար. բար.) – 71. Քօսակէն հու քաչալէն հաքեաթը (Ղար. բար.) – 72. Խօրթ ախճկանը հաքեաթը (Ղարաբ. բար.) – 73. Քեասիբ մարթին հաքեաթը (Ղարաբ բար.) – 74. Խմոր ուտող էրեխէն (Արար. բար.) – 75. Ուրչի համար փոր փորողը ինքը կ'ընկնի մէջը (Արար. բար.) – 76. Ածի պալայի հէքիաթը (Խրիմու բար.) – 77. Թուվարչի (Խրիմու բար.) – 78. Կիւլ տէսած աղջկանը հաքեաթը (Ղարաբ. բար.) – 79. Աչքը վահրակալածին, կաղլիկին հու քօսակին հաքեաթը (Ղարաբ. բար.) – 80. Ղասաբ-օղլի (Լօռու բար.):

— *Բառգիրք Արարատեան բարբառի*: *Կազմեց* Տ. Ն.: *Տփխիս, տպ. Մովսէս Վարդանեանցի*, 1903. 8°, 132 *էջ*:

Յառաջաբանը կ'ըսէ. «Ներկայ բառգիրքը բովանդակում է իր մէջ բացի բուն ժողովրդական բառերից, ոճերից եւ դարձուածներից՝ նաեւ այն գաւառականաց բառերի բացատրութիւնները, որոնք հանդիպում են մեր մինչեւ այսօր հրատարակած (Արարատեան բարբառով) աւանդութիւնների մէջ:

Այդ բառերը, ոճերը, դարձուածները եւ այլն, ժողոված ենք բացառապէս Վաղարշապատ գիւղում»:

Քննադ. Բազմավէպ 1903, թ. 11: – Լումայ, թ. 5: – Հանդէս Ամսօրեայ, թ. 12: – Նոր-Դար, թ. 199: – Տարազ, թ. 30:

ՆԱԽԱՐԵԱՆ (Ա.) – «Յունական էջեր, Լեռբարտի». Արեւելեան մամուլ 1900, էջ 21, 67, 107, 142, 230, 430, 466. – «Գրական ուսումնասիրութիւն. Հանրիք Իբսէն». 1904, թ. 30, եւն:

ՆԱԽԱՐԵԱՆ (Ս.) — Թէոդորա, ողբամ 5 արարուած եւ 7 պատկեր. գործ՝ Վիկտորիէն Սարտուի. Բանասէր 1902, էջ 17–21:

Նախի փոքրաւորը. – Տես ՌՕԶԷՆՀԱՅՆ (Մ.):

Նաւուղղութիւն. — Տես ՕՂՈՒԼՈՒԽԵԱՆ (Հ. Գ.):

ՆԱՓՈԼԷՈՆ (Մեծն). — Նարոլեոնի մեծի Մտածութիւնք քրիստոնէութեան վրայ։ Պօղէրն ասպետին հաւաքած վկայութիւններուն համեմատ։ Թարգմանեց ի գաղղիականէ Յովհ. Տ. Կարապետեան Տէրոյենց։ Տպագր. Յ. Տէրոյենց, Կ. Պօլսոյ վէզիր խան, 1865. 8°, 231 էջ։

Տես Երեւակ 1865, էջ 13. – 1866, էջ 8, և թիւ 97։

— Ճառ մեծին Նաբօլէոնի հզօր աշխարհակալին Գաղղիոյ, խօսեցեալ ընդդէմ նիւթապաշտ զօրապետին Պերթրանայ. թարգմ. Գ. Գրասէրեան։ Կ. Պօլիս, տպագր. Գ. Պաղտատլեան (Արամեան), 1886. 8°, 55 էջ։

Գրուածներ Նաբոլէոնի մասին, տես Հիւսիսեան (Մ. Յ.) կենսագրութիւն։ – Հիւսիսափայլ 1858 Բ, էջ 89. – 1860, Բ, էջ 24։ – Բազմավէպ 1866, 122, «Ողջոյն մը Պոնաբարդի գերեզմանին ի Ս. Հեղինէ»։ – Սիոն 1877, էջ 278։ – Արշալոյս Արարատեան 1855, թ. 486, ևն, ևն։

ՆԱՓՈԼԷՈՆ (Գ կայսր Գաղղիոյ). — Պատմութիւն Յուլիոսի Կեսարու. թարգմանեաց Հ. Աբրահամ Ճարեան ի Մխիթարեանց։ Napoleoni III Caes. Aug. Gallorum invicto Christianorum in Oriente protectori, Armenia grata. Հատոր Ա. ի Վենետիկ, ի տպ. ի Մխիթարեանց, 1867. 4°, 451 էջ։

«Նափոլի և Գր. Լուսաւորիչ». Մասեաց Աղաւնի 1860, էջ 160։

ՆԱՔԱՇԵԱՆ (Տ. Եպրուհի). — Նամակ կամ Նուէր ուսանողաց և ուսանողուհեաց։ Կ. Պօլիս, գործատուն Ջարդարեան, 1877?

Նափրի փանտան. — Տես ԱԲԷԼԵԱՆՑ (Ա.)։

«Ներրովթ և աշտարակն լեզուաց». Բազմավէպ 1890, էջ 433։

ՆԵԳՐԻ (Ադա = Ada Negri իտալուհի). — Բանաստեղծութիւններ. թարգմանեց Յ. Յակոբեան. ա. պրակ, (երկու աւտօտիպ պատկերով և կենսագրականով)։ Թիֆլիս, Արազ. տպ. Մն. Մարտիրոսեանցի, 1903. 8°, 60 էջ։

Քննադ. Տարազ 1903, թ. 32։ – Նոր–Դար 1903, թ. 201, տար դէմ անդ՝ թ. 204։

— բ. Պրակ. թարգմ. նոյն. բանաստեղծուհու պատկերով։ Թիֆլիս, 1904?

Քննադ. Լումայ 1904, թ. 5։

Հ. Ա. Քաջքանտիլեան Ա. Նեգրիէն հետեւեալ թարգմանութիւնները ունի Բազմավէպի մէջ. «Հանքին հրդեհը», 1897, էջ 128. – «Բանի կռուիլ». – «Ջքեղ տեսայ երազիս մէջ», 1901, էջ 226. – «Մեծազոյն անկելանոցին մէջ», 1902, էջ 91. – «Հեղեղը», 392. – «Քեզի, մայր», 428. – «Զին. Գթութիւն», 541. – «Փողոցի տառհակ», 1903, էջ 67. – «Կարճ պատմութիւն» 196. – «Նոր աստուածաշունչը», 343։

Գրուածներ Ա. Նեգրիի մասին. Լումայ 1903, թ. 6։ – Նոր–Դար 1900, թ. 132. – «Maternità» գրքին առթիւ՝ Բազմավէպ 1904, թ. 5։

Նեդա. տասնիս պատմածը. թարգմանութիւն։ Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկօրօխօդօվի, 1887?

Քննադ. Աղբիւր 1887, թ. 10, Բ բաժին (Գ. Ադայ.)։

Տես և ԳԱՐԱՎԷԼՕՖ (Լ.), Յաւելուածին մէջ։

«Նեգդա», պատկեր. թարգմ. Տիկին Մարգարիտ. Հանդես գրակ. եւ պատմ. 1894, Ե գիրք, էջ 87–114։

ՆԵԶՎԱՆՕՎ (Պ.) – Մուկուչի ճաշիկը, մանկական վէպիկ. փոխադրութիւն։ Մանկական գրադարան (Թիֆ. հայ հրատ. Ընկ., թ. 75)։ Թիֆլիս, տպար. Վրաց Հրատ. Ընկ., 1894. 8°, 54 էջ։

Քննադ. Արձագանք 1894, թ. 66։ – Տարազ 1894, էջ 347։

— Նեյլօն և Պատրաշը. — Տես ՈՅԴ։

ՆԵԼՍԸՆ (ամերիկացի տոք.) — Խորհրդածութիւն. թարգմանեց Գրիգոր քահանայ Մանդակունի։ Թիֆլիս, տպ. Ա. Մէլիք–Շահնազարեանցի, 1881?

«Զարմանալի է որ մի լուսաւորչական քահանայ թարգմանել է մի բողոքականի կրօնական գրվածք և նուիրել է նրան Ամենայն Հայոց Կաթողիկոսին...». Մշակ 1881, թ. 70։

— Անճառատուրեան պատճառն ու դարմանը։ Կ. Պօլիս, ի տպ. ի Ա. Պ. Զըրչըլի, 1855. 8°, 272 էջ։

Նեկտարինէ կոյս նահատակ. — Տես ԱԼԱՃԱՃԵԱՆ (Հ. Ս.)։

ՆԵԿՐԱՍՈՎ. — «Զրնձած արտը». թարգմ. Ջ. Բալուղեան. Աղբիւր 1889, էջ 403. – «Մօր արտասուքը», թարգմ. Թ. Պալեան. Արարատ 1884, էջ 266. – «Նոր տարի», թարգմ. Յ. Յովհաննիսեան. անդ, 1896, էջ 18. – «Ի լուր աղէտից զոր պատերազմին», թրգմ. Յ. Պալեան. Բազմավէպ 1905, էջ 357. – «Գող». թրգմ. Ա. Ծատուրեան. Մուրճ 1901, թ. 2. – «Օ, երգէր, երգէր». թրգմ. Կ. Կրասիլնիկեան, թ. 4. – «Խորհրդածութիւններ հանդիսամուտքի առաջ». թրգմ. նոյն, թ. 6. – «Օրօրոցի երգ», նմանութիւն Նեկրասովի. Կ. Կրասիլ. անդ, նոյն թիւ. – «Ժամանակակից ներբող», թրգմ. Ա. Ծատուր. թ. 12. – «Աստղեր չողուն», թրգմ. նոյն, 1902, թ. 7. – «Երանի՜ անչար այն բանաստեղծին». – «Օրհներգ». – «Էլեգիա» (հատուած). – «Ակամբ գրած», թրգմ. նոյն. 1903, թ. 1. – «Գիշեր է». թրգմ. նոյն, թ. 10։ Տես և Թատրոն 1899, թ. 2. – 1901, թ. 2, ևն։

ՆԵԿՐԱՍՈՎ (Ն.) — Ռուսաց առաջին գիտնականը Արխանգելսկ գիւղացի Միքայէլ Վասիլիչ Լոմոնսով։ Թարգմանեցին Բ. Իշխանեան և Ա. Տ. Իսրայէլեան։ Շուշի, 1899. 44 էջ?

Նեղ և խոնաւ բնակարանների մասին. — Տես ԱՌԱՔԵԼԵԱՆ (Հ.)։

ՆԵՂՈՍ (Ս.) — Սրբոյ և պատուականն հօրն Նեղոսի Խրատք. (տես Վարք Հարանց, հատ. Բ. յէջսն 637–725)։

Հրատարակիչը կ'ըսէ յառաջաբանին մէջ. «... Ի ճոխ մատենագրութեանց սրբոյ հօրս որ կայ յունարէն, զոր և անշուշտ համարիմք զամենայն թարգմանեալ ի մեզ ի նախնեաց, հատակոտորքն եւեթ հասին առ մեզ. թէպէտ են և որ ի մերոց առորի առ Յոյնս պակասին, և են այլք որ ի բնագանգացուց տողադրին։ Եւ այսոքիկ ամենայն ոչ միախուռն ի միում մատենի գտան, այլ ցրիւ. զոր եօթն և տասն հատուածովք կամ գլխովք տամք ի լոյս, ամփոփեալ յօրինակացն գրչաց ի ՉՉԵ. ՊՂԸ. Ռ. ՌՀ. ՌՀԴ. և յայլ ևս հնագունից ան-

յայտ թուականաւ։ Այդ առնեմք հնաւորայն զի ըստ օրինակի մատենին Հարանց վարուց կրկին թարգմանութիւնք եղեալ են և Նեղոսի ճառիցս. զի կամ այլ և այլ ընագիրք կային ի ժամանակին ըստ կամս օրինակողացն հաւաքեալ, և կամ թարգմանիչն երկրորդեան անգէտ իւրերաց ի մի և ի նոյն երկասիրութիւն ձեռնարկեալ՝ յորմէ հարկաւ ի վեր երեւեալ և այլայլութեանց։ Իսկ առաջիկայ ճառիցս ոչ ամենեցուն կրկնակի օրինակք թարգմանութեանն առ մեզ հասեալ, և ոչ որոց հասինն՝ անթերի էին հնագոյնին օրինակք։ Որ հնագոյնն էր առ մեզ եթէ գրութեամբ և եթէ թարգմանութեանն ոճով, որ և առաւել քան զայլսն համաձայն յունական ընագրին, զայն ընտրեալ կալաք մեզ ընագիր, և զերկրորդ թուեցեալն մեզ թարգմանութիւն ամփոփեցաք մանրագիր ի ստորեւ...»։

Տես և Եղնիկի «Եղծ աղանդոց»ի վերջը տըպուած և Եղնիկի ընծայուած խրատները, որոնք Նեղոսին են։

ՆԵՂՈՍԻ ԴՈՔՍԱՊԱՏՐԻ Կարգադրութիւն պատրիարքական աթոռոց. հայերէն և յունարէն. հրատարակեց Ֆրանց Նիկոլաուս Ֆինկ։ Des Nilos Doxapatres ΤΑΞΙΣ ΤΟΝ ΠΑΤΡΙΑΡΧΙΚΩΝ ΘΡΟΝΩΝ Armenisch und Griechisch herausgegeben von Franz Nikolaus Finck. Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1902. մեծ. 4°, 46 էջ։

Հ. Յ. Թորոսեան կը գրէ Բազմավէպի մէջ. «Նեղոս, Դոքսապատրի (Δοξαπάτριος) կոչուած, յոյն կրօնաւոր կամ արքիմանդրիտ մ'էր, որ կ'ապրէր ԺԲ դարուն, մեր Շնորհալւոյն ժամանակակից։ Սա, նախ պատրիարքական նոտար Կ. Պոլսոյ եկեղեցւոյն, անցնելով Սիկիլիոյ Բալերմոյ քաղաքը, անդւոյն Ռուճէր Բ թագաւորին յանձնարարութեամբ համառօտ գրուած մ'ըրաւ, «Վասն հինգ պատրիարքական աթոռոյն», զոր աւարտելով 1143ին՝ թագաւորին ընծայեց։ Գրութեան նիւթն է, ինչպէս անունէն յայտնի է, քննել և ծանօթացնել հինգ պատրիարքական աթոռներուն ծագումը, անոնց իրաւասութեան սահմանները, և անոնցմէ կախումն ունեցող եպիսկոպոսական աթոռները, և այլն։ Բայց հեղինակին նպատակներէն մին եղած է ապացուցանել՝ թէ հին Հռովմը, որ նախապատիւ աթոռն էր երեք մեծ պատրիարքութեանց մէջ, արտաքին իշխանութեան հետ՝ կորսնցուց նաև իր եկեղեցական մեծ իրաւասութիւնը և նախապատուութիւնը, զոր քրիստոնէութեան սկիզբէն ի վեր ունեցեր էր, և այն՝ անցաւ Նոր Հռովմայ (Կ. Պոլսոյ)՝ երբ կայսերանիստ մայրաքաղաք եղաւ։ Յետոյ յատկապէս կը խօսի ընդարձակօրէն Սիկիլիոյ եպիսկոպոսական աթոռներուն վրայ, թէ ինչպէս նախ հին Հռովմայ գերիշխանութեան ներքեւ էին, և յետոյ Կ. Պոլսոյ աթոռին իրաւասութեան տակ մտան։ Պատմական շատ քիչ տեղեկութիւնք կան գրքուկիս մէջ. ընդհանրապէս եկեղեցական իրաւասութեան պատկանող և կանոնագիտական խնդիրներ են, որոնք կրնան օգտակար ըլլալ եկեղեցական պատմիչի մը, ինչպէս որ իրօք ալ իբր աղբիւր ծառայած են Լեւոն Ալլատիոսի՝ իր Համաձայնութեան Եկեղեցեաց գրքին և ուրիշներուն ալ։ Հեղինակին ամէն կարծիքները և տեղեկութիւնները չեն կրնար հաւատարապէս ընդունելի ըլլալ բանասէրներուն, որովհետեւ մերթ նպատակաւոր են և կողմնակցական գոյն ունին։ Գրութեան շրջանակը շատ նեղ է, ոճը՝ ցամաք — ինչպէս կը պահանջէր անշուշտ նիւթը — և գրեթէ անուանց ցուցակ մ'է։ Եւ սակայն ո՛րչափ մեծ ազդեցութիւն ունեցած է իր ժամանակին վրայ, որ երագ դուրս ելաւ Սիկիլիոյ ափերէն, գնաց Յունաստան, փոքր Ասիա, անկէ ալ անցաւ Կիլիկիա, և թերեւս մինչեւ հայ աշխարհին խորերը, և հաւանօրէն ԺԳ դարուն սկիզբը հայերէն թարգմանուեցաւ հայ վանականէ մը։ Սակայն յաջող թարգմանչի մը ձեռքը իյնալու բախտը չէ ունեցած այդ գիրքը։ Հետեւակ թարգմանիչ մ'է, անհմուտ յունարէնի և աշխարհագրութեան։ Այնչափ հարկերաւոր անուանց մէջ շատ քիչերը պահած են իրենց ուղիղ ձեւը. միւսները այնչափ ծամծռուած են, որ գրեթէ անճանաչելի են։ Բայց այդ անհուն վրիպակներուն բոլորը պէտք չէ միայն գրչագիրներուն ուսին վրայ ծանրացնել. ըստ իս, մեծագոյն մասը թարգմանչին վերագրելու է, ինչպէս յայտնի է յունարէնի հետ բաղդատութենէն։ Թարգմանչին վրայ գաղափար մը տալու համար բաւական կը համարիմ մէջ բերել երկու օրինակ. ἡ κοίλη Συρία, որ կը թարգմանուի ի Ս. Գիրս «Սորին Ասորիք», մեր թարգմանիչը կը դնէ երբեմն «Կիլիկիայ կամ Կիլիկէ Ասորւոց» (էջ 3) և մերթ «Փորն Ասորւոց» (էջ 7), շփոթելով κοῖλος (խոր, սորին) ածականը κοιλία (որովայն, փոր) գոյականին հետ, – ἡ Τέρεντος (Տարենտոն քաղաքը) եղած է հայերէնի մէջ «տէր Նեղոս» (էջ 28), – καὶ πάπας ὀλιγοστά τίνα, որ կը նշանակէ «և պապն՝ սակաւս ինչ», թարգմանչին գրչին տակ եղած է «մինչեւ ի պապն Լեղոստատինա»։ Ասոնց նման գոհարներ ամէն էջի վրայ կը գտնուին առատապէս թուով։

Հրատարակութիւնը սքանչելի է, յղկած և փայլուն թղթի վրայ, մեծադիր, հայերէն և յունարէն դիմացէ դիմաց, իւրաքանչիւր էջին ստորին լուսանցքին վրայ նշանակուած ձեռագրի բոլոր տարբերութիւնները, և վերջն ալ «ցանկ յատուկ անուանց» անոնց էջերը և կրած այլեւայլ փոփոխութիւնները գրուած, հանդերձ յունարէնով։

Հայերէնին հրատարակութեան իբրեւ հիմնական ընագիր ծառայեր է Էջմիածնի Թ. 1696 ձեռագիրը, որ հաւանօրէն ԺԴ. դարու սկիզբը գրուած կը կարծուի։

Լաւագոյն պիտի ըլլար, ըստ իս, եթէ այն բոլոր խանգարուած անուններուն ուղիղ ձեւերը և վրիպակ թարգմանութեանց ճիշդ իմաստը գրուէին էջերուն ստորին լուսանցքին վրայ»։

ՆԵՄԵՍԻՈՍ ԵՄԵՍԱՑԻ. — Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ։ Վենետիկ, ի տպ. ի Մխիթարեանց, 1889–91. 8°, 1–7 (նախադրութիւնք և նախաբան), 9–161 (ընագիր), 162 (Յիշատակարան թարգմանչին), 163–166 (Ցուցակ յատուկ անուանց և ցանկ նիւթոց)։

Հրատարակիչն (Հ. Ա. Վ. Տիրոյեան) կը գրէ ի Նախաբանին. «... Առաջիկայս հրատարակութիւն եղեւ բաղդատութեամբ ընտրելագոյն օրինակաց մատենադարանի Վանիցս, ուրեք ուրեք մեկնեալ ի ստորեւ զխրթնագոյնս ի դարձուածոցն՝ համեմատութեամբ յոյն բնագրին, և կամ պարզելով ի Լուծմանէ գրոցս, զոր արարեալ ասենի Սկեւռացւոյն Գէորգայ, զորոյ զանունն բերեն գրչագրոք ուրեք ուրեք ի լուսանցս անդ Լուծմանցն՝ Գէ կամ Գէորգ գրոշմելով»։

Քննադ. Հանդէս Ամսօրեայ 1892, Թ. 3։

Հ. Արսէն Սուքրի ընդարձակ ուսումնասիրութիւն մ'ունի Բազմավէպի մէջ (1880, յէջն 326–340), որմէ կ'արտադրեմ հետեւեալ պատառիկը. «Մարդակազմութեան գրոց անունն լսելով՝ թերեւս ամենայն ոք զՍ. Նիւսացւոյն մարդկային կազմածին վրայ գրած ճառերն հասկընան, որ իբրեւ շարայարութիւն մ'էր Ս. Բարսղի վեցօրէից մեկնութեանն։ Սակայն կ'ուզեմք ծանուցանել ըն-

թերցողաց այս հետաքրքրական մատենին՝ որ թարգմանուած ըլլալով՝ ի մեր նախնեաց՝ շատ լոյս կրնայ ընծայել այն ուսման մասին որ մարդուս բնութեան վրայ կը խօսի։ Որչափ որ գիրքն հետաքրքրական է, նոյնչափ նաեւ մատենագրին վարքն և կեանքն անստոյգ. և ինչպէս մեր մէջ՝ նա և առ օտարս երկար ժամանակ շփոթուած է Ս. Նիւսացւոյն հետ, որով և այս գիրքն ընդ գործս Գրիգորի Նիւսացւոյն համարուած է։ Ինքն Նեմեսիոս եպիսկոպոս կը կարծուի Եմեսու քաղաքին և գրեթէ ժամանակակից Նիւսացւոյն. որով և Նեմեսիոս Եմեսու կոչուելն և Նիւսացի յորջորջումն բնական պատճառ մ'էր շփոթելու այս երկու անձինքն իրարու հետ։ Սա իւր գիրքն կը մակագրէ «Յաղագս բնութեան մարդոյ», իսկ Նիւսացին կոչած է գիրն «Մարդոյն կազմութիւն»։ Երկուքն ալ հմուտ են իրենց ժամանակին գրեթէ ամենայն գիտութեանց, մանաւանդ բժշկութեան արուեստին. բայց Նեմեսիոս, որուն վրայ է խօսքերնիս, աւելի ընդարձակ ասպարէզ կը բանայ մեր առջին բարձրագոյն գաղափարաց, և իրեն գրոց մէջ կը տեսնենք արդէն հմուտ Արեան շրջանին հեռաւոր տեսութիւն մը, թող ուրիշ ամբարութիւն մը տեսութեանց և կարծեաց հին փիլիսոփայից և բժշկաց՝ հանդերձ կրօնական ուղիղ դաւանութեան՝ որով առէպ կ'ուզէ զմոլար կարծիս հերձուածողաց։

Գալով հայկական թարգմանութեան, նոյն թարգմանիչն կ'երեւի ինչ որ և ի գործս Նիւսացւոյն, որ է Ստեփանոս Սիւնեցի. մանաւանդ թէ բուն յիշատակարան Սիւնեցւոյն այս մասին կը վերաբերի և ոչ Նիւսացւոյն ճառին։ Ոճն յունաբան է և շատ տեղ անիմանալի. բայց որովհետեւ շատ հետաքննական մատեան մ'է, կը ցանկամք մանրամասն ծանօթութիւն մը տալ բանասիրաց՝ որոնք կը փափաքին ազգային լեզուին հարստութեան նոր մաս մ'ալ գիտնալ...»։

Տես և Բազմավէպ 1892, էջ 442, 477, հայազգէտ Տէր Խաչատրեան ուսումնասիրութիւնը։ — Պատկեր 1898–99, «Գանձարանք Հայ լեզուի», էջ 265, 307, 325, 354, 375, 519, 561. — 1899, էջ 91, 152։ — Զարբ. «Թարգմ. Նախնեաց» էջ 629-632։

— *Zu Nemesius.* Karl Burkhard. Selbstverlag. Druck von Karl Gerolds Shon, 1905. p. 10?

Նեմեսիոսի բնագրին վրայ սրբագրութիւններ՝ համեմատութեամբ հայերէն թարգմանութեան։

ՆԵՄԷԱԵՐ (Պ.) — Կիրակնուայ հանգստութիւնը և նորա նշանակութիւնը առողջութեան համար։ Գօկտոր Պ. Նեմէաերի երկը։ Թարգմանեց Բժ. Մ. Զարգարեանց։ Վաղարշապատ, ի տպ. ի կաթուղ. Ս. Էջմիածնի, 1888 = ՌՅԼԷ. 4°, 63 էջ։

Քննադ. Նոր-Դար 1889, թ. 81։

ՆԵՄՑԷ (Գաստար Պ.) — «Լեզուաբանական խնդրոյ մը առթիւ». Բանասէր 1902, էջ 330։

ՆԵՄՑԷ (Զ.) Թարգմ. — Տես ՎԷՈՆԸ (Ժ.)։

«Արանին կրթութեան թանգարան». Բիւրակն 1899, էջ 560։

Նենգ և սէր. — Տես ՇԻԼԼԷՐ։

ՆԵՊԼԻԻԵՒ (Ն.) — Ի՞նչ է ճշմարտութիւնը. Թարգմ. Սամբրէ վարդապետ։ Վաղարշապատ, 1903. 64 էջ?

Քննադ. Լուման 1903, թ. 6։

ՆԵՊՈՍ (Կոռնելիոս). — Կուռ. Նեպոտայ վարք զօրաւարաց անուանեաց. զոր թարգմանեալ է Հ. Ղեւոնդեայ Յովհաննեանց, յաշակերտաց մեծի հօրն Մխիթարայ։ Ի Վիէննա, ի վանս Պաշտպան Ս. Աստուածածնի, 1842 ՌՄՂԱ. փոքր 12°, 367 էջ։

Նեռն կամ կատարած աշխարհի. — Տես ՀԻՍԱՐԵԱՆ (Մ. Յ.)։

Նետահար աղաւնի. — Տես ՄԽԻԹԱՐԵԱՆ (Խ. եպ.)։

Ներածութիւն աստուածաբանական գիտելեաց. — Տես ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ։

— Պորփիւրի. — Տես ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ։

— սուրբ գրոց ուսմանը. — Տես ԱՆԿԸՍ (Տորք.)։

Ներածումն առ քրիստոնէական կատարելութիւն. — Տես ԱՌԱՔԵԼԵԱՆ (Խաչ.)։

Ներբող ի պատիւ անուան... կուսին Մարիամու. — Տես ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ (Գ. Վ.)։

— ի սուրբ խաչն. — Տես ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ։

— ի սուրբ կոյսն. — Տես Նոյն։

— հրեշտակապետաց. — Տես ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ։

— Որդւոցն Որոտման. — Տես ՅԱՐՈՒԹԻՒՆ Վ. ԵԳԵՍԱՑԻ։

Ներբողական ճառ ի հանդէս... Հռիփսիմեանց. — Տես ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ։

Ներբողեան ի վերայ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. — Տես ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ։

— ի համբարձումն Տեառն. — Ի Գալուստ Հոգւոյն սրբոյ. — Տես ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ։

— յորդիս և ի թոռունս սրբոյ Լուսաւորչին. — Տես Սոփերք հայկականք, հատ. Ժ. — Տես և ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ. — ՍԻՍԻԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ։

— յօրհնեալ յիշատակ... Գալուցեան Յարութիւնին. — Տես ԱՎԴԱԼԵԱՆՑ (Յ.)։

— սրբոյ աթոռոյն Էջմիածնի. — Տես ԱՆԱՆԻԱ ՓԻԼԻՍՈՓԱՅ. — ԱՍՏԱՊԱՏՑԻ (Աբր. Վ.)։

ՆԵՐԻՄԲԵՐԳԵԱՆՑ (Յ. Ե.) — Գիրք Անուանեալ Կշիռ ժամանակի։ Յորում ցուցանի զանազանութիւնն ի մէջ ժամանակաւորին, և յաւիտենականին։ Արարեալ ի Յովհաննու Եւսեբիոսէ Ներիմբերգեանց ի միաբանութենէ յիսուսեանց։ Թարգմանեալ յիտալացւոց լեզուէ ի հայ բարբառ ի հայր Զաքարիայ վարդապետէ ակնեցւոյ յաշակերտէ Մխիթարայ մեծի Աբբայի։ Ի հայրապետութեան տեառն Ղազարու հայոց կաթուղիկոսի։ Յամի տեառն 1750։ Իսկ ի թուին հայոց. ՌՃՂԹ։ Ի Վէնէտիկ, ի տպարանի Որլանտեան Ստեփաննոսի։ Հրամանաւ մեծաւորաց։

Բուն բնագիրն սպաներէն է, ասկէ թարգմանուած է իտալերէն. և վերջինէս՝ հայերէն։

Գիրքը մեծ 12°, անհարթ մանրագիր. 552 էջ, ցանկով միասին. հասարակ տպագրութիւն։

Ներկայ հայերէնին ապագայ վիճակը. – Տես ԵԱԶԸՃԵԱՆ (Ս.)։

ՆԵՐԿԱՐԱՐԵԱՆ (*Եղիա* Յ.) *թարգմ.* — Տես ՃԷՅՄՍ (Ճ. Է.)։

Ներկարարք. — Տես ՓԱՓԱԶԵԱՆ (Տ. Գ.)։

ՆԵՐՄԱՆՑԻ ԴՊԻՐ. — «*Դպիր Ներմանցին երգերը*» (*հաւաքածոյ*). *Բիւրակն* 1899, *էջ* 524։

ՆԵՐՇԱՊՈՒՀ (*Գաբրիէլ*). — *Հին չափերը և կշիռները նորերու, և նորերն ալ հիներու վերածող ցուցակ*։ Կ. *Պօլիս*, 1871?

«Ամենադիւրին եղանակաւ մը, այսինքն մի միայն բազմապատկութիւն մ'ընելով, հին չափերը և կշիռները նորերու և նորերն ալ հիներու վերածելու յատկացեալ այս ցուցակը այս անգամ հայերէն գրերով և տաճկ. լեզուաւ... ի լոյս ընծայուած է». Մասիս 1871, *թ.* 1109։

— *Բերկրանք ու վիշտք*։ Կ. *Պոլիս*, *տպագր. Արամայ* Մ. *Աչճեան*, 1871. 8°, 40 *էջ*։

«Բանաստեղծութեան գրքոյկ մ'է, որ կը պարունակէ բերկրանաց ու վշտերու վրայ գրուածներ». Մասիս 1881, *թ.* 2892։

— *Գարնան շողեր, աշնան ցողեր*։ Կ. *Պոլիս տպագր.* Յ. *Ասատուրեան* (*հայ Գրաչարաց Ընկ.*), 1893. 8°, 96 *էջ*?

Քննադ. Հայրենիք 1894, *թ.* 689։

Թարգմ. — Տես ՏԸՊԷՅ (Ա.)։

Գրուածներ Ներշապուհի մասին. Արևելք 1902, *թ.* 4872։ – *Ծաղիկ* 1902, *թ.* 246։ – *Հայրենիք* 1892, *թ.* 231։ – *Մշակ* 1903, *թ.* 134։ – *Մահուան առթիւ Արևելք* 1905, *թ.* 5776, 5923, 5929։ – *Մանզումէի էֆքեար* 1905, *թ.* 1244 (*Լ. Շանթեան*)։

ՆԵՐՇԱՊՈՒՀ (*Դաւիթ Վ.*) — *Քնար Յովսեփեայ Գեղեցկի*։ *Երկասիրեաց* Դ. Վ. Ն. *Հատոր* Ա.։ Կ. *Պօլիս*, *տպագր. Արամեան* (*յԱրեւելեան տպարան*), 1865. 12°, 96 *էջ*։

Ներշնչմունք. — Տես ՍԵԹԵԱՆ (Տ. Յ.)։

Ներշնչութիւնք արդեան ժամանակի. — Տես ԱՃԷՄԵԱՆ (Յ. Կ.)։

Ներշնչումներ. — Տես ՊԵՐՃ։

Ներողութիւն յորեղեան. — Տես *Աղօթագիրք Ներողութեանց.* — ԻՆՃԻՃԵԱՆ (Հ. Ղ.) – *Կանոնք և Ներողութիւնք.* — *Համառօտութիւն Ներողութեանց.* — ՅՈՎՆԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

ՆԵՐՍԵՍՈՎԻՉ (*Աստուածատուր*). — *Բառգիրք Լատին–Հայ.* Dictionarivm. Super Sacram Scripturam, et libros Divini Officii Ecclesiæ Armenæ, compositum per D. N. E. T. *Բառգիրք Լատինացւոց և Հայոց ի վերայ Աստուածաշունչ և Ժամակարգութեան գրոց Հայոց Եկեղեցւոյն. շարադրեալ ի* Ա. Ն. Է. Դ. (*Աստուածատուր Ներսեսովիչ, եպիսկոպոս Գրայխանուպօլսոյ*)։ Romae, Typis Sacrae Congr. de Prop. Fide, MDCXCV (1695). Superiorum Permissu.

Դիրքը փոքր 8°, *երկիջեան, միջակադիր.* 596 *էջ, և* 7 *թուղթ վրիպակք տպագրութեան. անգիտան տպագրութիւն*։

ՆԵՐՍԷՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ. — *Յայտարարութիւն քրիստոնէական պարտաւորութեան*, *եւն.* — Տես *Յայտարարութիւն*, *եւն*։

— *Հռչակ ողորմութեան*, *եւն.* — Տես *Հռչակ*, *եւն.*

Կայսեր հրովարտակը Ներսէս արքեպիսկոպոսին, և վերջինիս շրջաբերականը Թիֆլիսի քահանայից և քարոզը՝ նոյն հրովարտակին ընթերցման առթին։

— *Արձանագրութիւնք*, *որք վերաբերին*, *եւն.* — Տես *Արձանագրութիւնք*, *եւն*։

— *Համառօտութիւն անցից քրիստոսակիրս Մայր Աթոռոյ Հայոց սրբոյ Էջմիածնի, տպագրեալ յաղագս համազգային ծանօթութեանց*։ Ա. *տիպ*?

= Բ *տիպ*, *ի Տփխիս*։ Ի *Տպարանի Ներսիսեան Դպրոցի Հայոց ընծայեցելոյ յազնուական Աղայ Գէորգայ Արծրունւոյ*. 1853. ՌՅԲ. 4°, 79 *էջ*։

Նախազդեցուցանեն. «Ըստ յաջորդելոյ ժամանակին առն պհամառօտութիւն ծանօթութեանց երեւելի երեւելի հանդամանաց անցելոց և ներկայից՝ որպէս զի հաւաստարմագոյն եւս յանդիման արարից իմաստուն վերծանութեանց ամենից ժառանգաւորաց Աստուածեղէն շնորհաց զահոյն սրբութեան Մօր մեր լուսոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, զառաջինն յայս նուագ ի դէպ վարկայ առ ալել նոյնութեամբ զպատճէն բաղդաց խոց և խնդրանաց մատուցելոց ընդ թարգմանութեամբ ի լեզու Պարսից առ Արքայական բարձրութիւն ժառանգի տէրութեան Պարսից իշխան Ատրպատականի և Արարատեան աշխարհի յամի 1823. *նոյեմբերի* 1. *և զթարգմանութիւն պատասխանական հրովարտակի նորին առ մեզ ի* 20. *ճեմատիլ էվվէլ լուսնոյ* 1239. *ամի խիջեանց. որ է ննհերորդ օր յունվարի* 1824. *ամի Տեառն մերոյ։ Ընդ սոյն և զօրինակս չորից պատասխանագրութեանց իւրոյ Աստուածարեալ Օծութեան ամենապատիւ մեծ Քահանայապետի ամենայն Հայոց և ծաղկեալ ծերութեամբ հողեւոր Տեառն մերում առ բարձրագահ զերապատիւն սպասալար բդեաշխին Երեւանու ի* 15. *ապրիլի և ի* 6. *օգոստոսի. և առ հասարակութիւն միաբանութեան կամ գերապատիւ խորհրդական անդամոյն կառավարիչ սուրբ ժողովոյն Աթոռոյ ի* 12. *մայիսի և ի* 6. *օգոստոսի* 1824. *ամի։ Նոյնպէս և չորից պատասխանագրութեանց իմոց ի* 21. *սեպտեմբերի* 1823 *և ի* 15. *ապրիլի* 1824. *ամի առ յիշեալ բդեաշխն. և ի* 6. *օգոստոսի առ խորհրդականսն և կառավարիչսն Աթոռոյն, և ի* 13. *սեպտեմբերի առ շնորհազարդ Յոհաննէս սրբազան Արք Եպիսկոպոսն Կարբեցի՝ հանդերձ այլով օրինակաւ միով գրեցելով առ նա ի մէնջ յամի* 1818. *մարտի* 24. *յորս իւրաքանչիւրսն կարօղ է նշմարել մտադիր ընթերցօղն զհարկադրող պատճառս եղանելոյ կաթուղիկոսին յԱթոռոյն և զխելոյ նորա ի սահմանս Արցախու. եւս և՝ զգիտաւորութիւնս զրութեանցն իւրաքանչիւրոց նոցին առ որս եղեալ են պատասխանագրութիւնքն։ Եւ առաւել եւս քան զնոյնս՝ որպէս վասն մեկուսանալոյ վշտամբեր մեծանձնութեան Սրբազնագոյն Վեհափառութեան Տեառն մերում, նոյնպէս և վասն զկայ անելոյ նորին առաւել ի սուրբ նշանի վանին Հաղբատայ՝ յետ այսորիկ ի դէպ ժամանակի յայտնեսցին հաւաստիքն ապացուցութեամբ, որոց ոչ կարիցեն կալ հակառակ ամենայն հակառակորդք ճշմարտութեանց մերոց՝ վասն ամենայն սուտակապաս բանից իւրեանց և գրոց՝ անարժան ար-*

ժամանաւորութեան խրատից հաչակեցելոց և հաչակելեաց զմէնջ կամ զայլոց... »։

Կենսագր.ը տես ԱՐԱՐԱՏԵԱՆՑ (Արէլ Վ.) – ԵՐԻՑԵԱՆՑ (Ա.) – ՊԱՏԿԱՆԵԱՆ (Գ. Քահ.) – ՊՈՏՏՕ (Վ.) — ՍԱՄՈՒԷԼԵԱՆՑ (Ս.) — ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ (Յ.) — ՏԷՐ-ՄԵԼՔԻՍԵԴԵԿԵԱՆՑ (Գ.)։

Տես եւ հետեւեալ թերթերը. «Ներսէս հինգերորդ կաթողիկոսի կոնդակները». Արարատ 1904, թ. 4, էջ 310-326. – թ. 5, 405-411. – *«Ի գրուածոց Ներսէսի Ե. կաթողիկոսի ամենայն Հայոց. Ա. ոչ զատանի հաւատարակցութիւն ինէք կաթողիկոսայն անուանելոց յԱղթամար և ի Սիս ընդ կաթողիկոսաց Էջմիածնի». Փարոս* 1875, *տետր Գ.* – Բ. *«Հայք Տաճկաստանի չեն բաժանեալ երբէք յԱթոռոյ Էջմիածնի»,* 1876, *տետր Ե.։* – *«Մանաւոր տեղեկութիւնք ի վերայ հանգուցեալ Ներսէսի 5–րդի կաթողիկոսի ամենայն Հայոց, պատմեալք յականատես անձնէ ումեմնէ, որ մինչ նորա մօտ գտնուած է Պարսից պատերազմին ժամանակ». Մասիս* 1875, թ. 1694-96, 1698, 1705, 1708, 9, 1711, 12. - 1876, 1834, 35, 1842։ – *Արեւելք* 1886, թ. 785. – *«Քահանայական հարցը և Ներսէս Աշտարակեցի». Մշակ* 1894, թ. 60. – *«Ներսէս Ե. Աշտարակեցու յիշատակին». Տարազ* 1891, թ. 7. – *«Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոս և Ներսիսեան դպրոց։ Այս երկուսը միասին կազմում են անբաժան ձուլուած մի ամբողջութիւն», անդ,* 1900, թ. 19 *(խա.)* – *«Յիշատակութիւն ինչ ինչ պիտօղուտ գործոց Տ. Ներսէսի Ե. երջանկայիշատակ կաթողիկոսի, զորս գործեաց նա յընթացս միջատանամեայ առաջնորդութեան իւրոյ ի վիճակին Պետրպուրգոյ և Նոր–Նախիջեւանայ, եւ և համառօտ նկարագիր ընտանեկան կենաց նորա». Ճռաքաղ* 1860, էջ 123-126, 138-141. – *«Տեղեկութիւն ի վերայ որքանութեան ժամանակի կենաց Ներսէսի կաթողիկոսի»,* 141-143. – *«Նուէր բանի առ Տ. Ներսէս Ե. կաթողիկոս ամենայն Հայոց» (քերթ.), անդ,* 1858, էջ 26-27. – *«Համառօտութիւն պզգամիրական սխրագործութեանց Տ. Ներսէս Հայրապետի». Հայրենասէր Զմիւռնիոյ* 1843, թ. 17, 18. – 1845, թ. 82. – 1846, թ. 103. – *Դարձեալ հետեւեալ թերթերը. Ազգասէր* 1845, թ. 20. – 1846, էջ 169. – 1846, Գ. էջ 13, 114. – 1847, էջ 119, 127, 144, 341. – 1847, *հատ.* Գ., թ. 87. – 1849, էջ 171 *«Հայաստան» յօդուածը.* – 226, 231։ – *Աղբիւր* 1902, էջ 85։ – *Արարատ* 1892, էջ 974, *«Ներսէս կաթողիկոսի կենսագրութեան համար նիւթեր. – Ներսէս Ե.ի մի նամակը գրուած իշխան Դմիտրիյ Իվանովիչ Դոլգորուկիին»,* 1896, էջ 555. – 1901, էջ 158. – *«Ներսէս Ե. կթ.ի կենսագրութեան վրայ լուսաբանութիւններ». Արեւ. Մամուլ* 1883, էջ 366, 409։ – *Արշալոյս Արարատեան* 1844, թ. 201. – *«Համառօտ նկարագիր վարուց Աստուածայոլ. Հայրապետին Ներսէսի»,* 211. – *«Հրովարտակք ինչ Ռուսաց կայսեր առ Ներսէս կաթ.».* 1844, թ. 207. – 1846, թ. 254, 261, 272, 273, 274. – 1857, թ. 542։ – *Արփի Արարատեան* 1853, էջ 74։ – *Լումայ* 1898, էջ 267. – 1899 Բ, էջ 259. – 1904, թ. 4. – թ. 5, էջ 176։ – *Ծիլն Աշտարայրի* 1866, էջ 37, 95։ – *Հայկական աշխարհի կռունկ* 1864, էջ 20. – *«Ներսէս Ե. Աշտարակեցւոյ մասնաւոր հայ ամսագիրը». Հանդէս Ամսօրեայ* 1896, էջ 122։ – *Մանզումէ* 1901, թ. 7, *«Ներսէս Աշտարակեցին ժամանակին ու նկարագիրը»։* – *Մասեաց Աղաւնի* 1887, էջ 25 *(մահուան առթիւ)։* – *Որբունի, «Մի քանի պզգ. նշանաւոր բարեբարք »։*

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ. — *(Էր ընդ Եղբարսն) Տեառըրեան աղօթից։ Պատմութեան բանից ննջման Աստուածաբան Աւետարանչին Յոհաննու։ Արարեալ Ներսէսի Լամբրոնացւոյ, արք Եպիսկոպոսին։*

Ճակատին չալակը պատկեր մը կայ «Ննջումն սրբոյն Յոհաննու Աստուածաբան Աւետարանչին». Յէջն 3՝ կը սկսի Տեսութիւնը, ճակատին կրկնութեամբը. «Տեսութիւն... արք Եպիսկոպոսին Տարսոնի Կիլիկեցւոյ։ Ի խնդրոյ Սանփաննոսի Յակովկայցւոյ՝ իւրոյ Վարդապետի»։ Կ'աւարտի յէջն 157. *ուր ի վերջոյ՝ նոր խորագրով «Վասն կենաց և կեցութեան և ննջման սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյն, Հեղինակի այսր գրքի, Համառօտ Ասութիւն», որ է հետեւեալը.*

«Այս երանելի և բազմիմաստ վարդապետս մեր սուրբն Ներսէս լամբրոնացին ծնանի ի թվականիս հայոց, ՈԲ։ Եւ ի վեշտասան ամի հասակի իւրոյ՝ ձեռնադրի կրօնաւոր քահանայ ի Ներսիսէ կաթողիկոսէ և կոչի Ներսէս։ զի առաջին անուն սորին էր Սմբատ։ Եւ ԻԴ, ամաց լեալ, կարգի ի գրիգորիս կաթողիկոսէ արք եպիսկոպոս տարսոնի կիլիկեցւոյն և շրջակայ գաւառացն։ Եւ թարգմանեաց ի յունաց զպատմութիւն սրբոյն գրիգորի պապոյն որ տխակօսս կոչի։ Եւ զկանոնական գիրս սրբոյ հօրն բենեդիքտոսի. որում վարին ամենայն ազգն հռոմայեցւոց ի 26 *ամի կենաց իւրոց։ Եւ ի* 627 *թվին սկսի մեկնել զառակսն զաւթի մարգարէին։ Եւ ի* 628 *թվին թարգմանեաց զմեկնութիւն տեսլեան սրբոյն յօհաննու աստուածաբան աւետարանչին ի յունականէն ի հայս։ Եւ զէրընդեղբարսն որ է այս գիրք, ինքն մեկնեաց ըստ խնդրոյ սանիկաննոսի իւրոյ վարդապետին։ Եւ ի* 24 *ամի կենաց իւրոց՝ մեկնէ զարմանալի տեսութեամբ զխորհուրդ սրբոյ պատարագին։ Այլ և ի սոյն ամի հրամանաւ տեառն գրիգորիսի՝ և քրիստոսապսակ արքային հայոց Լեւոնի՝ խօսի զատենական խօսն ախեղերական ժողովոյն տարսոնի։ Մեկնեաց սա և զգիրս սողոմոնի. զառակացն, զժողովօղն, և զիմաստութիւնն։ Այլ և զերկոտասան մարգարէիցն, և զաւետարանական ասակն, և զյուծմունս զրոց զմատթէոսի բանից։ զկաթողիկէիցն, զՍտեփաննոսի հոգւոյն սրբոյ, և զպարտական գատին վերափոխման Աստուածածնին։ Այլ և գրեաց զմարգակապման թեան գիրքն։ Ասաց և ճառս ներբողական ի տօնս տէրունականս։ Արար և երգս պաշտամանց։ Եւ ի* 646, *յուլիսի* 17, *ի* 32 *ամի կենաց իւրոց վախճանեալ զամբարանի ի հրեշտակարնակ սուրբ ուխտն սկեւռայ։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և աղօթիւք նորին մեղ. ողորմեսցի քրիստոս աստուած մեր։ Որում փառք յաւիտեանս Ամէն»։*

Եւ ապա Յիշատակարան Տպողի Սուրբ Գրքոյս։ «Ողորմութեամբն աստուծոյ և բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին տպեցաւ սուրբ գիրքս ի թվին հայոց ՌՃՁԵ (1736)։ *ի Հայրապետութեան սրբոյն Էջմիածնի, Տեառն Աբրահամու Սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց։ Եւ ի Պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի, և Կոստանդնուպոլսոյ՝ Տեառն Գրիգորի. և Տեառն Յօհաննու Սրբազան եպիսկոպոսացն և Աստուածաբան Վարդապետացն։ Ի նորակազմ Տպարանի սեպհականի Տիրացու Բարսեղիս, և եղբօրն իմոյ Տիրացու Յակոբին։ ի կոստանդնուպօլիս քաղաքի։ Արդեամբ և ջանիւք տէր պետանի որդի համեստաբարոյ և հոգեւոր տիրացու պօղոսին։ Արդ՝ որք հանդիպիք սմա, զվերոգրեցեալ պատճառս սորին յիշեսջիք ի մաքուր աղօթս ձեր։ Եւ դուք յիշեալ լիջիք ի քրիստոսէ տեառնէ մերմէ Ամէն»։*

Գիրքը միջակ 8°, *զարդափակ երեսներով. ընդամէնը* 160 *էջ։ Հասարակ տպագրութիւն։*

— Ատենաբանութիւն, Գիրք Սիրոյ և խաղաղութեան: Շարադրեցեալ ի Սրբոյն Ներսիսէ Լամբրօնացւոյ Ճոխիմաստ և Աստուածաբան մեծի Շնորհածաւալ վարդապետին մերոյ: Ի խնդրոյ Հրեշտակակրօն կաթուղիկոսին մերոյ՝ Տեառն Գրիգորիսի՝ Եղբօր Որդւոյ Սրբոյն Ներսէսի: Հրամանաւ Տեառն Յարութեան Արքի Եպիսկոպոսի, և փոխանորդի: (Ի թուին Հայոց ՌՃՂԸ = 1749):

« Յէջն 2–3, « Յառաջաբանութիւն և ի Տիեզերական ժողովն Տարսոնի, որ եղեւ ի շրջանի ընթացից ժամանակի. ՈԻԶ. թուականի Հայոց, Հրամանաւ Համահրեշտակ կաթուղիկոսին Հայոց Գրիգորիսի՝ Եղբօր Որդւոյ Սրբոյն Ներսիսի՝ յաջորդի Առաքելական Աթոռոյ Սրբոյն Գրիգորի: Եւ Քրիստոսապսակ Արքային Հայոց Լեւոնի. Սակս Սիրոյ և խաղաղութեան: Ատենական խօսք Սրբոյն Ներսիսի՝ այնմ քաղաքի Աթոռակալի, և Աստուածաբան վարդապետի »: Յէջն 4 փայտափոր պատկեր մը երկտող տողանուսով. « Սուրբն Ներսէս Լամբրօնացի, – խօսի ըղբանս ի յատենի »: 5 էջէն կը սկսի, և կ'աւարտի յէջն 120, ուր կայ հետեւեալ յիշատակարանը. « Շնորհիւն Աստուծոյ՝ ավեցաւ տետրակս, որ է առիթ սիրոյ և խաղաղութեան. և ընծայեցաւ խաղաղանէր անձանց, որք աւետարանին քրիստոսի են ունկնդիրք. ուր ամենափրկիչն մեր առէ թէ՝ կալարո՛ւք յանձինս ձեր աղն, և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս: իսկ որք բանակռուութեան են հետեւօղք, ի բա՛ց կացցեն ի խաղաղական գրոյս. և աստուածն խաղաղութեան՝ եղիցի ընդ ձեզ, ամէն,

Ի յայս չորս տողս է թուական,
որ յայտնէ զթիւ սորին տպման.
եթէ քննի քանի՞ է այն,
ընդ գայ գրոյն՝ է յղանան » (= ՌՃՂԸ):

Գիրքը միջակ 8°, միջակագիր, ծաղկափակ երեսներով: Քաղաք չի յիշատակուիր, բայց պոլսոյ տպագրութիւն կը թուի:

Հասարակ տպագրութիւն:

= Բ տիպ. Սրբոյ հօրն մերոյ Ներսեսի Լամբրոնացւոյ Արքեպիսկոպոսի տարսոնի կիլիկեցւոց. Ատենաբանութիւն. Եւ ճառք ընտիրք ի համբարձումն քրիստոսի, և ի գալուստ հոգւոյն սրբոյ: Տպագրեալ բաղդատութեամբ ուղղագոյն օրինակաց: Ի հայրապետութեան Տեառն Ղուկասու Հայոց կաթուղիկոսի: Յամի տեառն. 1787. ի Հոկտեմբերի. 1. Եւ ի թուականութեանս հայոց. ՌՄԼԶ: Ի Վենէտիկ ի տպարանի յովհաննու փիացեան. Հրամանաւ մեծաւորաց:

3–60 Ատենաբանութիւն. 61–81, «Նորին երանելոյն Ներսեսի տարսոնի եպիսկոպոսի ասացեալ. բարեբանութիւն ներբողական գովութեամբ ի համբարձումն տեառն յիսուսի քրիստոսի յերկինս». 82–100 «Նորին երանելոյն ներսէսի՝ ներբողեան ասացեալ ի հրաշափառ գալուստ հոգւոյն սրբոյ»:

= Գ տիպ. Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ Թարգմանեալ ըստ ընտիր օրինակաց յիտալական բարբառ ի Հ. Յարութիւն Վարդապետէ Աւգերեան Անկիւրացւոյ՝ ի Մխիթարեան միաբանութենէ. և տպագրեալ ի կրկին բարբառ՝ հանդերձ իտալական ծանօթութեամբք: Ի վանս Սրբոյն Ղազարու ի Վենէտիկ. ՌՄԿԱ. — *Orazione Sinodale di S. Nierses Lampronense* Arcivescovo di Tarso in Cilicia recata in lingua italiana dall'Armena, ed illustrata con annotazioni dal P. Pasquale Aucher dottore del Collegio di S. Lazzaro. Venezia nella Stamperia del Collegio suddetto, 1812.

Ակիզբը իտալերէն ընծայական մը կայ, յետոյ թարգմանչէն յառաջաբան մը, որուն մէջ կ'ընէ Լամբրոնացւոյն կենսագրականը, ետն. բնագիր և թարգմ. դէմ դէմի. 8°, 5 թուղթ (առանց թուահամարի) + 190 էջ՝ ծանօթութիւններով միասին:

= Դ տիպ. Տեառն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն և ճառք. (Ընտիր մատենագիրք. Գրիգոր կաթ. Տղայ. Ներսէս Լամբրոնացի): Ի Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1865. փոքր 8°, 91–326:

Ատենաբանութիւնն զատ կայ մէջը. «Նորին Թուղթ առ քրիստոսազօր թագաւոր Հայոց Լեւոն». և երկու ներբողեանները Համբարձման և Հոգեգալստեան:

— Գովեստ Ներբողական՝ պատմագրական բանիւ յաղագս վարուց՝ Մեծի Հայրապետին՝ Տեառն Ներսէսի կլայեցւոյ՝ Հայոց կաթողիկոսի, ասացեալ Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ՝ Արք Եպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոց:

Տպուած է Ներսէս Շնորհալւոյ «Ողբ Եդեսիայ քաղաքի» գրքին վերջը: Տպագրութեան, ետն, հանգամանքները տես Ողբին 1810ի տպագրութիւնը:

= Բ տիպ. Գրուած Պատմագրաբար ի յաստուածահրաւէր փոխումն սրբազնասուրբ Հայրապետին մերոյ Տեառն Ներսէսի կլայեցւոյ, ոգեալ ի Ներսիսէ լամբրօնացւոյ յԱրք եպիսկոպոսէ տարսոնի կիլիկեցւոց: Ըստ ընտիր օրինակաց վերստին տպագրութեամբ ի լոյս ընծայեալ՝ ի պէտս որդւոց Նորոյս սիոնի Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ: Վեհափառ Հրամանաւ Տեառն Կարապետի երանաշնորհ Արք եպիսկոպոսի և սրբազան Պատրիարգի մեծի Արքայանիստ մայրաքաղաքիս կոստանդինուպօլսի: Արդեամբք և ծախիւք մահտեսի Յօհաննեան բարեհամբաւ մահտեսի Աբրահամ Աստուածասէր Ամիրայի Ակնեցւոյ. յիւրումն իսկ սեփհական Տպարանի: Յամի Տեառն. 1825: իսկ և ի մերոյս թուականի՝ ՌՄՀԴ: Մայիսի Ա. Աշխատասիրութեամբ Տ. անդրէաս Վարդապետի Նարինեան ակնեցւոյ: ի Հասանփաշայ խանն:

Տպուած է Ներս. Շնորհալւոյ «Թուղթ ընդհանրական»ին վերջը, 1825, տես Թուղթ, ետն:

— Մեկնութիւն սրբոց Երկոտասան Մարգարէից Արարեալ Երանելոյն Ներսիսի լամբրօնացւոյ Արք Եպիսկոպոսի տարսօնի կիլիկեցւոց, ուղղափառ վարդապետութեամբ և լուսաւո՛ր բանիւք՝ յօգուտ մանկանց կաթուղիկէ սրբոյ Եկեղեցւոյ: Յաւելեալ նաեւ ի վերջոյ՝ Մեկնութիւնն Դանիէլի Մարգարէի, արարեալն ի Վարդանայ վանականն վարդապետէ՝ համառօտ և լուսաւոր մտօք: Տպագրեալ՝ ըստ ընտիր օրինակաց: Հրամանաւ Ամենապատիւ և Վեհափառ Տեառն Կարապետի Աստուածաշնորհ Արք եպիսկոպոսի և սրբազան Պատրիարգի մեծի արքայանիստ մայրաքաղաքիս կոստանդնուպօլսի: Արդեամբք և ծախիւք Աստուածասէր մահտեսի Աբրահամ բարեհամբաւ Ամիրայի ակնեցւոյ՝ յիւրումն իսկ սեփհական գործարանի: Ի կոստանդնուպօլիս:

ի Հասանփաշայ խանն։ Յամի Տեառն 1825. ի Հոկտեմբերի 12 սկսեալ։ Եւ ի 1826. ի Յունիսի 20 աւարտեալ։ Աշխատասիրութեամբ. Տ. Անդրէաս վարդապետի Նարինեան ակնեցւոյ։

Յառաջաբանէն. «... Քանզի այս մատեան մեկնութեան կարեւոր ամենայն հաւատացելոց՝ գոլով հազուագիւտ և թանկագին և դժուար ի ձեռս բերել, փոյթ կալաւ յանձին յիշեալ մահտեսի Աբրահամ մեծայարգ Ամիրայն ի տիպ արձանացուցանել՝ յօգուտ ազգին իւրոյ. վասն որոյ գերիս հնագոյն գաղափարս ի ձեռս բերեալ, ի գրեանց մայր գրատան, յօրթագիւղի գրատան, և ի Յօհաննէս սրբազան Պատրիարգի կոստանդնուպօլսեցւոյ գրեանցն՝ ընկալեալ ի ձեռաց հոգեծին որդւոյ նորին Մատթէոս ծիրահափայլ վարդապետի կոստանդնուպօլսեցւոյ. յանձնեաց ածել՝ և որպէս զվասեալ ջանացայ ճրագ դնել ի վերայ աշտանակի սրբոյ Եկեղեցւոյ՝ ի դիւրագին ստացումն աշակերտելոց բանին ճշմարտութեան։

Ուստի այսց պատուական օրինակաց բաղում խնամով և զգուշութեամբ ի սրբագրութեան մատենիս զնացեալ զհետ, միայն զումանս պակասութիւնս բառից մարգարէութեանցն և զկէտս և զանտոկոր տառս յծորդութեան լաւ արգենիս սովորութեանն հարկեցաք դնել...

Իսկ ի միում ի գաղափարաց ի վերջոյ գոյր և մեկնութիւնն Գանիէլի մարգարէի՝ արարեալ ի Վարդանայ վանական վարդապետէ, որոյ թէպէտ գաղափարն մի՝ և ի ձեռն համբակ գրչի օրինակեալ, այլ արժան դատեցաք և զայն եւս իբր յաւելուած ածել ի վերջ մատենիս... »։

Գիրքս մեծ 4°, երկսիւնեան, 5-280 (մեկնութիւն), 281-303 (Ցանկ), 304, որ է վերջին, Յիշատակարան.

«Հաստչին համայնից միակամ իշխանութեան և եռագիմի անձնաւորութեան սուրբ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ փառք պատիւ և երկրպագութիւն անբաւ գոհաբանութեամբ. քանզի ամենաբուն բարի կամօքն է գործ յառաջ՝ նմանեցուցանել զմարդն ինքեան, ի զանազան բարեգործութիւնս յեղաշրջելով զբարեյօժարութիւն կամաց նորին։ Որպէս այժմ զնոյնն իսկ արկեալ ի գործ՝ յայտնի արար և պատկերացոյց առ ի վերայ բարեպաշտի Ակնեցի թէրզեանց մահտեսի Յօհաննեան գերայարգ և վեհափառ մահտեսի Աբրահամ Աստուածասէր Ամիրայի, որ եղեւ իւրով իսկ արդեամբ և ծախիւք պատճառ տպագրութեան անաղօտ և լուսաւոր մեկնութեանս սրբոյ երկնատեսն Մարգարէից, զոր արարեալ է սրբազան հօրն մերոյ Ներսիսի Լամբրոնացւոյ՝ արք եպիսկոպոսին Տարսոնի. և մեկնութեանս մարգարէութեանն Գանիէլի, զոր յօրինեալ է Վարդան վանական անուանեալ վարդապետն։ Որոյ յոգնաշխատ և բազմաքիրան վաստակաւորութեամբ ջանացեալ ճրագն ճառագայթեալ՝ ոչ արկեալ և կամ ղօղեալ ընդ նախագուցիչ գրուանաւ, յորմէ անընդհատ պատճառին խաւարն առիցն ընթացողաց. այլ տպագրութեամբ ի լոյս ընծայելով՝ եդեալ ի վերայ աշտանակի սրբոյ կաթուղիկէ Եկեղեցւոյ՝ զամբարափայլ լուսազարդեալ պայծառացուցանէ զամենայն հաւատացեալս ի Քրիստոս։ Ապաքէն՝ սիրովն Աստուծոյ աղաչեմք զաստուածասէր վայելողդ յայսմ լուսաւոր նորատիպ մատենի՝ սեղանաւորեալ խմանալի բարութեանց, յիշել ի մաքրափայլ աղօթս ձեր զյիշեալ Աստուածասէր մահտեսի Աբրահամ գերապատիւ Ամիրայն, և զամենայն կենդանիս նորին, զյարգի եղբայրն մահտեսի Երամ աղայն, և զեղբօրորդիսն՝ Գասպար և Սահակ քրիստոսասէր աղայսն, և զքեռորդիսն՝ զմահտեսի Ներսէս և զԳէորգ յարգի աղայսն, և զայլոց համայն։ Նաեւ զառ ի տէր հանգուցեալ զազգայինսն ամենայն. զբարեպաշտ հայրն՝ սուրբ մահտեսի Յօհան յարգի աղայն, և զբարեպաշտուհի մայրն՝ նորոգ հանգուցեալ մահտեսի Աննա տիկինն աստուածասէր, և զեղբայրն յարգապատիւ Պօղոս աղայն, և զհամօրէն ննջեցեալսն։ Եւս և զսրբագրող սորին ի գործ տպագրութեան՝ զանարժան ծառայս ծառայից աստուծոյ և զօրհնեալ ազգիս Հայոց անձնընծայ պաշտօնեայս անպիտան վարդապետս ակնեցի՝ որ եմ Սրբազան Պատրիարգի յաւէտ սպասաւոր, և զընկերակիցն իմ յայս գործ՝ և զհամածին եղբայրն իմ ըստ հոգւոյ՝ զԱբրահամ վարդապետն կոստանդնուպօլսեցի, հոգեւոր և մարմնաւոր ծնողօք մերովք կենդանեօք և ննջեցելովք. նաեւ զաշխատաւորսն գործարանիս՝ զգրաշար տիրացու մանուէլն և զմրահար յակոբն. զի և դուք յիշեալք լինիջիք յամենափառաւորեալ երկրպագելի սուրբ Երրորդութենէն՝ ի Հօրէ և յՈրդւոյ և ի սրբոյ Հոգւոյն՝ յանվախճան յաւիտեանս. Ամէն»։

— *Խորհրդածութիւն սրբազան պատարագի.* Բացատրութեամբ Տեառն Ներսեսի Լամբրոնացւոյ Արք Եպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ. Տպագրեալ յամի տեառն 1842. և Հայոց ՌՄՂԱ. ի Պատրիարգութեան Սրբոյ Երուսաղէմի՝ Տեառն Զաքարիայի Արք Եպիսկոպոսի։ Եւ ի Պատրիարգութեան Թագաւորեալ Քաղաքին Կոստանդինուպօլսոյ, Աստուածարեալ Տեառն Աստուածատրոյ Արք Եպիսկոպոսի։ Արդեամբ Սրբոյ Աթոռոյս հաւատարիմ Միաբան, Անթափցի Սարկաւագ Յովսեփայ աշճեան. ի յիշատակ պանծալի անուան Վարդապետին իւրոյ, ի Քրիստոս հանգուցեալ, Աւագ Լուսարար Մկրտիչ Արք Եպիսկոպոսին։ Ի Սուրբ Երուսաղէմ ի Տպարանի Սրբոց Յակոբեանց երջանիկ Առաքելոց։

Միայն պատարագի մեկնութիւնն է՝ առանց «խորհրդութեանց ի կարգս եկեղեցւոյ»։ Միայն ի վերջոյ նոր թուահամարով (1-27) երեք խրատական ճառեր կան. «Հարցաքննութիւն առ օրէնս Քրիստոսի, և հաստատութիւն թէ ո՛չ է պարտ զվիճակ եկեղեցական աստիճանի ձգել ընդ մարմնական տոհմութեամբ»։ — «Վերստին հաստատութիւն ո՛չ ժառանգեցուցանելոյ ազգատոհմի զառաջնորդական պատիւ՝ ի պատմութենէ հարցն մերոց»։ — «Ի նոյն խորհուրդ դարձեալ, յորում թէ և զմեր ազգս ունիմք իշխանութիւն դատել՝ և ո՛չ զայլս»։ — «Թուղթ ի Ներսիսէ արք եպիսկոպոսէ կիլիկեցւոյ տարսոնի. Պատասխանի ուղան արգելական ճգնաւորի ի մեծն անտիոք։ Յորում լուծանէ զհարցումն կղերիկոսացն անտիոքու՝ վասն որ ի հայք՝ աստուածային չնորհի ճշմարտութեան ի վերայ քահանայական կարգի և ժողովրդականաց ուղիղ հաւատոյն որ ի Քրիստոս»։

Գրչագիր օրինակաց մասին կը կարդանք. «Առաջին գրչագիրն է բոլորագիր, և ունի յիշատակարան օրինակ զայս. ի յեօթն հարիւր քառասուն և երկու թուի հայկական տումարի, ի դիտապետութեան տեառն Ստեփաննոսի զերեկոյն յեղխիտացւոց. և ի թագաւորութեան Հեթմոյ որդւոյ Լեւոնի առն բարեպաշտի և աստուածասիրի։ Երկրորդն է դարձեալ բոլորագիր՝ և ունի յիշատակարան այսպէս, գրեցաւ գիրքս այս, ձեռամբ անիմաստ մեղուցելոյ յոհաննիսի սպասաւորի աստուածային բանի. ի թուականիս հայկազեան սեռի ՉԿԶ ի կիպրոս կղզի ի դուռն աստուծոյ մօր տաճարին աստուածածնի՝ որ է վանք՝ և կոչի կանչուոր ի քաղաքիս մաղուսա։ Երրորդ գրչագիր օրինակն՝ ունի միայն զյիշատակարան սրբոյն Ներ-

սեսի Լամբրոնացւոյն այսպէս։ Գրեցաւ ի թուականիս ՈԻԶ յանապատս սուրբ գետոյ, ի մէջ լերինս տորոսի ի գահ կիլիկիոյ, ի կաթուղիկոսութեան տեառն Գրիգորի, և յիշխանութեան Հեթմոյ սեբաստոսի։ Թէպէտ են և այլ բազում օրինակք հին և նոր գրչագիր, զորս ի բաց թողաք չարադասել աստանօր. միայն զերեսինս յիշատակեցաք ի ծանօթութիւն խնդրողաց»։

Գիրքը մեծ 4^0, 1–179 (բնագիր մեկնութեան), 180 (Յիշատակարան), 181–190 (Ցանկ) + 1–27 (ճառք և թուղթ առ Ոսկան)։

= Բ տիպ (ամբողջական). Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի Եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի Կարգս Եկեղեցւոյ և Մեկնութիւն Խորհրդոյ Պատարագին։ Ի Վենետիկ, ի Տպարանի Սրբոյն Ղազարու ՌՄՂԶ–1847։

Յառաջաբանը ձեռագրաց մասին կը գրէ. «Համեմատութեամբ երից ձեռագիր օրինակաց զառաջիկայս յերիւրեցաք զտպագիր. առաջինն բոլորագիր գրեալ յամին ՉԾԵ (1306) ի Ձորոյ վանս Արճիշոյ. երկրորդն ևս բոլորագիր գրեալ յամին ՉՁԱ (1332) ի վանս Կուքոյ. երրորդն նոտրագիր գրեալ ձեռամբ երանելւոյ տեառն Կոմիտասայ քահանայի։ Համդերձ այսու ամենայնիւ խոստովանիմք, զի առ վրիպակագիր թերութեանց երեցունցս ևս օրինակաց՝ կարօտի մասնանս ուղղագրութեան ուրեք ուրեք ըստ հարազատագոյն օրինակաց, որ զտանելն աներկբայապէս յաղագս մերում, և որոց ստացօղք մարթեն շնորհապարտ իւրեանց զազգն կացուցանել՝ եթէ ոչ զայնոսիկ անդատուգս ունիցին ի պահեստի։

Զխորհրդատետր սրբոյ պատարագին որպէս և էրն ի գրչագրին անփոփոխ կալաք ի կարգին. ոչ օրէնս իմն և կանոն աւանդել զայն կամելով, այլ զայն այնպէս կալեալ իւր բնաբան մեկնիչն և ըստ այնմ առնոյր բացատրել»։

Բովանդակութիւն խորհրդածութեանց. Խորհրդածութիւն վասն ուղղափառ հաւատոյ եկեղեցւոյ, որ ի սուրբ Երրորդութիւն և ի տնօրէնութիւնն Քրիստոսի. — Ի խնդրոյ հայցման երիցակից եղբարց քննութիւն կարգաց եկեղեցւոյ, և բացատրապէս որոշումն արտաքուստ մտեալ ի սա նորաձևութեանց. — Դարձեալ վերստին խոյութիւն նորաձևութեանց որ մտին յեկեղեցի, և քննութիւն պատուոյ և աշխատանաց. զօրութիւն ի սմա վիճակելոյն պարզաբար, ընդ որս և ընդդիմադրութիւն. — Քննութիւն օրինակաց, հաստատութիւն հարցն աւանդութեանց որք սահմանեցին յամենայն տեղիս քրիստոնէից նստել եպիսկոպոսի ի քաղաքս, և ոչ եթէ ի վանս. ընդ որս և պատարագի ընդդիմադրութեանց պատասխանի. — Որոշումն իմն զատուց աստիճանաց եկեղեցւոյ և յատկութիւն գործառնութեանց նոցա և զգեստուցն. ընդ որս և ընդդիմադրութիւն այսոցիկ խորհրդոց ունայնացուցանողաց. — Ընդէ՞ր յասրոյ և ոչ ի կտաւոյ զգեստ քահանայական. — Իմաստասիրութեամբ բացայայտութիւն աստուածային խորհրդոյ պատարագին, և առ ունայնացուցիչսն զնոյն՝ ընդդիմադրութիւն. — Բնախօսութեամբ քննութիւն յաղագս զօրութեան աղօթից, և հաստատութիւն թէ պարտ է ներգործութեամբ մնայ ի նոյն կանխել. — Զի՞նչ նշանակէ անուանելն զտուն Աստուծոյ Եկեղեցի. — Զի՞նչ նշանակէ իգական անուամբ զեկեղեցին կոչել և հարսն անուանել, իսկ զՔրիստոս փեսայ. քանզի առաքեալ ասէ. — Ո՞րպէս և ո՞յր աղագաւ մերս եկեղեցի անուանի դուռն վերին Սիոնի և Երուսաղեմի. — Թէ պարտ է հաւատալ զեկեղեցի Աստուծոյ երկին յերկրի. — Զի յորժամ մտանեմք ի տաճարս սուրբս, պարտ է հաւատալ անընդմիջաբար զմեզ առաջի Աստուծոյ, որպէս և հրեշտակք. — Զի՞նչ նշանակէ ձևն կերպարանաց սրբոյ տաճարի եկեղեցւոյ, զի անջրպետեալ է խորանն ի հասարակաց խմբարանէ տաճարին. — Զի՞նչ նշանակէ և սեղանն սուրբ. — Զի՞նչ նշանակէ զգեստ կերպասուցն զոր ի վերայ սրբոյ սեղանոյս սփռեմք. — Զի՞նչ նշանակեն աստիճանք աթոռոյն շուրջ զսրբով սեղանովն ի միմեանց որոշեալ, ի վերայ որոյ քահանայականն աթոռ հաստատեալ. — Զի՞նչ յայտ առնեն լուսմունք ջահիցն և լապտերացն և բուրումն խնկոցն ի սուրբ եկեղեցիս. — Դասակարգութիւնք եկեղեցւոյ համատիպ երկնաւորացն կարգաց. — Զի՞նչ բացայայտէ անունն երէց կոչել զվերակացուս ժողովրդոց եպիսկոպոս և քահանայս. — Ընդէ՞ր քահանայս անուանին երիցունք. — Զի՞նչ զօրութիւն եպիսկոպոսն անուն ցուցանէ. — Զի՞նչ է տիրապէս քահանայագործութիւն սոցա. — Յորպիսեա՞ց հաւատոց իրաւացի է առնուլ զանազան աստիճանս. — Ո՞րով որոշեալ ճանաչին յեկեղեցի այսոքիկ դասք. — Զի՞նչ նշանակէ բացու գլխով կալ սոցա ի տան Աստուծոյ ի ժամ աղօթից ի խորհրդական տեղւոջ, քննելի է զառոյգն. — Զի՞նչ են և ո՞րպէս այլ մարմնոյ զգեստք որով պաճուճեալ բացագլուխ զխորհրդական պաշտօնն կատարեն ժառանգաւորք եկեղեցւոյ. — Զի՞նչ նշանակէ անուանել զսուրբ զպատարագն խորհուրդ. — Զի՞նչ յայտ առնէ անուանելն զայս խորհուրդ պատարագ. — Զի՞նչ ցուցանէ զպատարագս անուանել զոհութիւն. — Զգոհութիւնս հաղորդութիւն առ ի՞նչ հայի անուանելն. — Ո՞րպէս պարտիմք հաւատալ թէ ճշմարտապէս Քրիստոս է սա առ որ հաղորդեցաքս, և մարմին Քրիստոսի և ոչ օրինակ մարմնոյն Քրիստոսի. — Ո՞րպէս կարասցուք հաւատալ թէ յամենայն տեղիս եկեղեցիս զանազան ազգաց մի Քրիստոս է և մի մարմին Քրիստոսի պատարագի. — Եթէ պարտ է հաւատալ ի ձեռն անարժան քահանայի զպատարագն կատարել, որպէս զարժանն. — Ո՞րքան շնորհ է ի պատարագէն ի բացուստ տեսութեամբն առանց ճաշակման. — Ուստի՞ եմուտ այս սովորութիւն զյիշատակ մեռելոցն ի պատարագն խնդրել և է՞ր վասն. — Խորհրդածութիւն ի նոյն և վասն նորին. — Բաղդատութիւն առ միմեանս սահմանադրութեանց եկեղեցւոյ քրիստոնէից, Հոռոմոց Փռանկաց և Հայոց, և առ մի գիտաւորութիւն ցուցակ նոցին աւարտման. — Օրէնք արկանելոյ սղաս եկեղեցւոյ. — Խրատ և սահման վերոյ գրեալ գործոյս բարեձև սղասու. — Սրբոյն Դիոնեսիոսի յաղագս եկեղեցական աւանդութեան և գիտումն նոցին...

Յիշատակարան Ներսեսի Լամբրոնացւոյ. «Այսքանք և աստուածային օրինադրութիւնք՝ սպասաւորութեան մտաց և ձեռին իմոյ թշուառ Ներսեսի տացաւ ի Հոգւոյն Աստուծոյ ի նախագրեալ թուականդ՝ վեցհարիւր քան և վեցին, և ի ժամանակի կենաց մերոյ մինչ էր քան և չորս ամաց, և կայի ի լռութեան և միայնութեան ի մէջ լերանցն Տօրոսի. իսկ յետ ամաց ինչ դարձեալ ածայ յեկեղեցական պաշտօն, և ի մարմնական գործով զբաղանք. և զհուր առաջարման սրտի իմոյ որ ի բանքս ցուցաւ՝ հնարէի և յայլս բորբոքել, և ըստ բանիս գործ գլխաւորել, և անկարանայր այս. քանզի մի անգամ և երկիցս հանի զայն յատեան և ի ժողովս եպիսկոպոսաց և իշխանաց, և ոչ եղև պարապումն զանէ ընթերցման կամ ունկնդրութեան։ Եւ ի սոյն ժամանակս ի թուականութեանս վեցհարիւր և յերեսուն և վեցին յափշտակեցաւ սուրբ քաղաքն Երուսաղէմ ի Թուրքաց ազգէ, և եկեղեցականքն և իշխանքն որք սպասաւորէին սուրբ տեղեացն՝ գերեցան. և համբաւս այս հասեալ յարևմուտս՝ զբնաւ ազգն թագաւորօք և իշխանօք՝

բաս հրամանի Հռովմայ հայրապետին չարժեաց զալ յայս աշխարհ. և մինչ նորա հեղուին անթիւ բազմութիւնք նաւօք ի ծովէ անտի ի Պտղոմիդեայ, ի թուականութեան ի վեցհարիւր յիսնաւն և ութն, յղեաց իշխողս մեր մեծ Լեւոն զմեզ առ կաթուղիկոսն սուրբ տէր Գրիգոր յաթոռն հայրապետական որ կոչի Հռոմ կլայ ի վերայ Եփրատայ. և ի գնալ մեր յաւուրս պենտեկոստէից յայնկոյս Մարաշայ, յարձակեցան ի վերայ մեր Թուրքք Մարք, և որով հարակեցին զորս ընդ մեզ կրօնաւորք և աշխարհականք ոգիք իբրև քառն. յափշտակեցին ընդ այլ ինչսն և գրեանքս, ի վերայ որոյ ազայի անմխիթար չունելով զհաւատարն: իսկ այս ի տեսչութենէ զթութեանն Աստուծոյ ի թուին վեցհարիւր քառասուն և մէկ, քննեալ ուր վաճառեալ էին՝ դարձուցաք զսոյն ի գերութենէն. քանզի զատ ի զաւառն Ջահնայ, և սատարութեամբ եղբօրորդւոյ զաւաքին Ներսէսի և Վարդանայ կրօնաւորի՝ ածաւ սոյն առ իս վերստին, և եղեւ վշտագնեալ ոգւոյ իմոյ մեծ սփոփանք և մխիթարութիւնք, և առ Աստուած երկրպագութեան զոհութիւն: փառք ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

— *Խոստովանութիւն* Ս. Ներսէսի Լամբրոնացւոյ ընդ պատրիարքին յունաց: Ի Տպարանի Տէրոյենց Կոստանդնուպօլիս, 1861. փոքր 8°, 122 էջ:

Յառաջաբանութիւն. «Տեառն Ներսէսի Արքեպիսկոպոսի Տարսոնի Կիւլիկեցւոյ. յորժամ չոգաւ դեսպանութեամբ ի թագաւորէն Հայոց Լեւոնէ ի Կոստանդնուպօլիս: Հարցումն պատրիարքին և պատասխանի սրբոյն Ներսէսի», 1–24. Այս Նոր ճակատ. «Մեկնութիւն Տեառնասաց աղօթիցն. Արարեալ տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ, և Եպիսկոպոսի տարսոնի կիւլիկեցւոյ: Արարեալ ի բանն որ ասէ. Հայր մեր որ յերկինս», 25–70. – Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ Պատասխանիք խնդրոյն Յունաց. «Գլխաւորութիւնք Հռոմոց, զորս պահանջեն առ ի մէնջ ի պէտս խաղաղութեան: Ընդ որս և լուծմունք առ ընթեր եդեալ», 70–102. – «Պատմութիւն և յիշատակ սուրբ և լուսափայլ վարդապետին և երջանիկ արքեպիսկոպոսին Ներսէսի Լամբրոնացւոյ», 103–110:

«Այս պատմութիւն վարուց սրբոյն հանեալ է ի ձեռագիր Ոսկեփորիկ մատենէ միոջէ գրելոյ ի թուին Հայոց ՉԾԱ. (1302)»: Իսկ յառաջաբանութեան մասին կը կարդանք. «Երանելոյն Ներսէսի զրուցր երկք յոլովք լեալ՝ կարեւորագոյնքն ի նոցանէ կանխաւ ի լոյս ընծայեալ յածին ի ձեռս մատենագրաց և սիրողաց նախնեացն մերոց երանելեաց. բայց են և յանապաղեալս ոչ նուազ կարեւորք. յորոց թողեալ զմեծահատորսն. զմեկնութիւն սաղմոսացն Դաւթի և զգրոյն Սողոմոնի, և զայլ ինչ եւս, մեք ի մանր գործոյս բուռն հարաք ի տպագրութիւն. յորոց՝ երեւելս յայսմ նուագի մատենիկս՝ պարունակէ յինքեան զերիս և եթ: Ի բանից առաջնոյն. որ է խոստովանութիւն երանելոյս ընդ պատրիարքին Յունաց յաղագս միաբանութեան. յայտնի երեւի ոչ սորա լինել գործ, այլ այլոյ ումեմն ուղեկցելոյ ընդ նմին ի կայսերականն քաղաքն. և հարազատութեանն վկայք են նման օրինակ բանք սրբոյս յատենաբանութեան ի ժողովն Հռոմկլայու: Օրինակ սորա զատանի և ի կարգի հաւաքման կանոնաց: Երկրորդն է մեկնութիւն տեառնասաց աղօթիցն: Երանելիս և այլ երբէք սակս կոչեալ է մեկնել զայս աղօթս ի կարգի մեկնութեան պատարագին. սակայն այս՝ թէպէտ յոճոյ չարագրութեանն վկայեալ նորուն զոլ ամենեւիմբ տարբեր է ի նմանէ. և սատանձին ընթերցման և մտախոհութեան հոգեւորաց և աղօթարարաց արժանաւոր: Երրորդն է պահանջք յունաց ի մէնջ ի սակս միաբանութեան. և պատշաճաւոր պատասխանիք սոցա. և սորուն տխուք բանիցն յայտնի ցուցանեն թէ նորուն սրբոյ է, զորոյ օրինակն առեալ ի գրանոցէ վանից բարձրիհայեաց սուրբ Աստուածածնի որ առ Արգնի գիւղաքաղաքաւ. հաճեցաւ տալ մեզ Տ. Խաչիկ վարդապետ Ամասիացի: Ի վերջէ ամենայնի եդաք զվարս սրբոյս. զոր գտաք ի հին ձեռագիր հաւաքածոյս ինչ Ոսկեփորիկ անուանեալ. որպէս ի վերջէ վարուցն ծանուցաք: Են և այլ մանր գործք սրբոյս. որպիսիք են մեկնութիւն հաւատամքի, և թարգմանութիւն նամակի Նեղոսի միակեցի աշակերտին՝ կոչեցելոյ. և այլք եւս. յորոց զորս ի ձեռս մեր հասանեն ոչ դլասցուք տալ ի հրատարակութիւն»:

— *Վիճաբանութիւն ընդ Յոյնս.* Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ՝ արք Եպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ: Յորժամ չոգաւ դեսպանութեամբ ի Կոստանդնուպօլիս՝ յետ ժողովոյն Տարսոնի: Տպագրեալ ի վայելումն և ի բարի յիշատակ խօճայ Ղազէրի որդի, դեռափթթիթ և գեղեցկատեսիլ տիրացու Յակովբիկ աղային: Եւ ծրի բաշխեալ ամենայն ճշմարտասէնչ բանասիրաց: Ով որ կարդայ, օրհնեսցէ զվերոյ գրեալ չէլէպի մանուկն. ի թուին Հայոց 1206 (= 1757) (ի տպարանի Աստուածատուրի), 1–16 էջ:

Տպուած է Եւագրի «Գիրք Ութն խորհրդոց Մեղաց» գրքին վերջը:

— *Alcuni squarci* del commentario di S. Nersete Lambronese sulla liturgia Armena accusati e difesi. Venezia, dalla Tipografia Armena di San Lazzaro, 1851. 4°, 134 էջ:

Proemion կ'ըսէ. «Al cumulo delle denigrazioni, delle accuse, dei sospetti e di quant'altro mai, per lo spazio di oltre cencinquant'anni seppero inventare malevoli accusatori, per scemare senza meno il concetto di una corporazione monastica, si è ultimamente aggiunta la taccia dell'errore in materia di Domma, fatta al beato Nersete Lambronese, cui la Chiesa Armena venera sugli altari. Perciocchè gli inutili tentativi, aventi lo stesso scopo e posti in opera le mille volte contro i monaci armeni Mechitaristi di Venezia, rimasti infruttuosi dopo le accurate e sapienti decisioni della sacra Congregazione di Propaganda fide, non valgono ad essere riprodotti in un campo completamente battuto nelle adunanze generali degl'anni 1718 e 1818, si è cercata una via indiretta a conseguire il medesimo fine, denunciandosi come affetta di eretica labe un'opera, che i monaci sopradetti davano in luce nell'anno 1847, portante in fronte il nome del santo Autore summentovato, e corredata da chiose per la maggiore e più esatta intelligenza degli Armeni, a cui esclusivo vantaggio veniva pubblicata.

Tostochè vennero fatti palesi questi calunniosi parlari, piacque alla Sacra Congregazione suddetta chiederne conto all'abate generale dei monaci armeni Mechitaristi di san Lazzaro di Venezia, invitandolo a dare una fedele traduzione degli squarci accusati. In conseguenza di così autorevole comando, l'abate generale sudetto, in nome

altresì della Congregazione religiosa, a cui ha l'onore di presiedere, ha unito in queste pagine gli squarci accusati, ed ha soggiunto a ciascheduno la relativa difesa ed illustrazione. Prima per altro ha riputato non solo opportuno, ma altresì sommamente necessario il premettere un sunto istorico della vita del B. Nersete, che dedotto da monumenti di pubblica autorità, riferentisi ad età remotissime, sarà capace di spargere una più chiara luce sopra le fila tenebrose, che formarono il tessuto della più nera calunnia».

— Մեկնութիւն Յայտնութեանն Ս. Աւետարանչին Յովհաննու. Ա. տիպ, ի Կ. Պոլիս, 1736?

— Բ տիպ. Մեկնութիւն... Յովհաննու. Արարեալ Տ. Անդրէի և Արեթասայ եպիսկոպոսացն Կեսարու թարգմանեալ ի յոյն բնագրէ և սրբագրեալ Տ. Ներսէսի Արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոց տպեալ ի Հայրապետութեան Տ. Տ. Ներսեսի Վեհափառ Սրբազնագոյն Կաթուղիկոսի և ի Պատրիարգութեան Սրբոյ Աթոռոյս Երուսաղէմի Տ. Յովհաննու Սրբազան Արքեպիսկոպոսի և ի Պատրիարգութեան Պօլսոյ Տ. Յակոբայ Սրբազան Արքեպիսկոպոսի: Յերուսաղէմ, ի Տպարանի Սրբոց Յակովբեանց, 1855. 6°, 324 էջ:

« Արար Զայն Մատեան Յիշատակ Անուան Իւրոյ Եւ Հոգւոյ Ծնողացն Մահտեսի Յարութեան Եւ Մահտեսի Էփեսի Յատուկ Օժանդակութեամբ Իւրով Մահտեսի Բարէն Ագայ Աշըգեան Սեբաստացի Յուխտաւորութեան իւրում ի 27 Մարտի, 1855»։

Յառաջաբանէն. «... Գրչագիր օրինակք որ ի սոյն մեզ նպաստեցին, թէպէտ և չէին հնագիր, այլ յընտրելագոյն օրինակաց գաղափարեալ՝ ոչ սակաւ տային հաւաստարմութիւն հարազատութեան գրչացն։ Երեք եւեթ օրինակք էին առ ձեռն պատրաստք՝ նօտրագիր՝ առ մերով աւուրբք գաղափարեալ։ Առաջինն՝ զոր և կալաք մեզ առաջնորդ, էր գրեալ ի Կարին քաղաքի յամենէ Նուիրակէ սրբոյ Աթոռոյս, որ և համարի ընդօրինակեալ ի հնագոյն ձեռագրէն Յովհաննու Երզնկացւոյ, զորոյ և զյիշատակարանն ի մէջ բերէ զկնի յիշատակարանաց սրբոյ Թարգմանչին՝ մանաւանդ եթէ յօրինողին։ Եւ է այս՝ բառ ըստ բառ հետևի։ «Գործեալ յիշեսջիք ի Քրիստոս և զիս զանարժանեալ մեղաներկ ոգիս զնուաստ Յոհան Երզնկայեցի սպասաւոր բանի, որ հարեալ ցանկութեամբ սիրոյ ի փափագ սորին՝ գրեցի խմով խակ տխեղծ մատամբս, ի մխիթարութիւն վշտացեալ հոգւոյ իմոյ՝ և ի վարձ կրթութեան երկասէր անձին բանասիրի. և ի յիշատակ արձանի հոգւոյ իմոյ և ամենայն նախնեաց փոխեցելոց ի Քրիստոս, արեան մերձաւորաց և համօրէն ամենայն երախտաւորաց՝ հոգևորաց և մարմնաւորաց, զի և դուք յիշեսջիք ի Քրիստոսէ Աստուծոյ յաւուր մերոյ օրհնելոյն յայտնութեան. ամէն։ Գրեցաւ ի թիւ ՉԾԵ, ի քսան և ինն մարտի ամսոյ»։

Իսկ միւս երկու օրինակք՝ գրեալ ի Պրուսայ քաղաքի յառաջնորդարանն, և որպէս երևի՝ ի մի և ի նոյն գաղափարէ, յորս ցուցանէին ուրեք ուրեք և հետք հնութեան. ի վերայ այսր ամենայնի՝ գտանի ի նոսա զանազանութիւնս ինչ ներմուծեալ ի գրչաց։ Զայն զայս ոսկեզինիկ մատեան աստուածային Վարդապետի ի սուրբ Հօրն մերոյ Լամբրոնացւոյ՝ ամենայն հաւատարմութեամբ մատուցանեմք բանասիրաց ազգիս. խոստովանեալ առ նմին զքանի մի իմաստս կեղակարծս և դժուարիմացս, որք թուին վրիպակք նախորդ օրինակաց, զորս յակամայս արգելք թողաք, այլոց հնագոյն եւս գաղափարաց սպասել՝ ի յաջողել ժամանակին»։

Գրքին վերջը Լամբրոնացիէն երկու Յիշատակարաններ կան. որոնցմէ առաջինին մէջ կ՚ըսէ. «Այս յայտնութիւն... ստուգաբան արարու վերստին երևեալ ի հելլենացւոցն խմով նուաստ Ներսիսի թարգմանութեամբ, ընդ որ և զքննութեամբ մեկնութիւն սորին ածի յեկեղեցիս Հայոց։ Քանզի՝ անկեալ աչաց մերոց՝ սուրբ և աստուածակոխ քաղաքն Երուսաղէմ յափշտակեցաւ ի սպասաւորութենէ քրիստոնէից՝ սրով Իսմայէլացւոցն ի ՈԼԶ թուին Հայոց. ի վերայ որոյ բազում արեանց հեղմունք եղեւ Լատինացւոց բազմացեղ ազգաց, որք դառն դառն տառապեալ նաւօք և քաջազինդ հաւատով և սրտաջան արութեամբ հասին ի Պաղեստին, և անդ դիմեցեալք շուրջ զքաղաքաւն բառ երկոյն՝ և ոչ ոք էր որ թափէր. և մեք տեսաք նախատինս դրացեաց մերոց մինչեւ ի լրումն թուին, ՈԽԵ. յորում ամի վերապատուեալ թագաւոր Հայոց Լեւոն՝ որ յՌուբինեանց, բարեպաշտ և յաղթող Աստուծով. որոյ հռչակ արութեանն շարժեաց զմեծ ինքնակալն հին Հռովմայ՝ զՀենրի (Ենրիկոս) և նոր Հռովմայ՝ զԱլէքս. որք պատկերին զատ քարամբք պատուական յեկեղեցին Տարսոնի՝ որ իմ անարժանութեամբս հովուի»։

Յիշատակարան Բ. «Յիշատակ տառս զարդի Տեառն Ներսիսի զերահռչակ վարդապետի. զոր գտեալ ի մեծն Անտիոք՝ գրեաց զատ ի լուսաւորութիւն հոգւոյ։ Ես Ներսէս նուաստս ի Քրիստոս և տարատեսն յուսումնասիրաց, վերջին և նուաղեալ ժամանակի ծնունդ, յիթեանուն զՅայտնութիւն Յովհաննու՝ տարնալէ յանձն իմ առ ի յոչ գիտել զլուծումն բանից սքանչելեաց. և այսր և անդր խուզելով զմեկնութիւն նորին ի մերս բարբառ՝ ոչ գտի։ Յետ որոյ եհաս ինձ ընթանալ ի մեծն Անտիոք, և շրջելով յորս անդ վանորայք Հռոմոց և փռանգաց, այս անունն բարբառէր ի միտս իմ. ստոյգ և քննեալ գտի ի գրեանս հռչակաւոր սրբոյն Պօղոսի ի քաղաքի անդ զմեկնութիւն Յայտնութեանս ի լատին բարբառ, ի նոյն գիր՝ որով վարին փռանգք, երկուց մեկնչաց արարեալ (Անդրէի և Արեթասայ). և փափագելով թարգմանել՝ ոչ գտի զոք որ յայսմ բարբառոյ ի հայս կարէր յեղաշրջել։ Ապա եկեալ արտաքոյ քաղաքին ի սուրբ լեառնն՝ որ ի հիւսիսոյ կողմն անդր, ի մի վանորէիցն Հռոմոց՝ որում անուն էր Բէթիաս, առ ոմն արգելական միայնակեաց՝ որոյ անուն Բասիլ. խնդրեալ գտի զցանկալին ի հելլենացի բարբառ և ի գիր, ուղղաբան և վայելուչ, որ լեալ էր Աթանասի պատրիարգի նորին քաղաքի։ Եւ խնդրեալ աղաչանօք ի բարեմիտ առնէն՝ առեալ փութացայ զգիրքն ի հայրապետական աթոռն, առ տէրն իմ Կաթողիկոս՝ սուրբ Գրիգորիս, զոր ծանուցեալ՝ ուրախ եղեւ յոյժ, և հրամայեաց թարգմանել ի ձեռն մեծարգոյին Յեբաղօլի՝ Կոստանդեայ, որ անդ ի ներքոյ սրբոյ Հայրապետին հովանւոյ հանգչէր. և սկսեալ օգնականութեամբն Աստուծոյ և սրբոյ տանն՝ նա ի թարգմանել և ես ի գրել, վերընծայեցաք եկեղեցւոյ Հայաստանեայց ուսումնասէր մանկանց զայս սքանչելի և աստուածային Յայտնութեան մեկնութիւն։

Աղաչեմ զընթերցողդ և իմաստութեան զսիրողդ, յիմանալ զխորս իմաստիցն Աստուծոյ քննութեամբս՝ զսուրբ Հայրապետն Հայոց զտէրն իմ զԳրիգոր, զբարեմիտն և զբարեսէրն և զառիթն թարգմանութեանս և զհրամայող, մաղթեցէք ի

Քրիստոսէ յաստիս խաղաղութեամբ պահել, և ի հանդերձեալն սրբոց իւրոց յերկնից արքայութիւնն ժառանգակից ընդունել. այլ և զկտտանդին մետրապօլիտն՝ որ թարգմանեաց, և զՅոսիփ կրօնաւոր՝ որ զօրինակս եառ, Քրիստոս ողորմութեան իւրոյ արժանացուսցէ աղօթիւք ձեր։

Թարգմանեցաւ տառուածային Յայտնութեանս մեկնութիւն ի թուին Հայոց ՈԻԸ, ի սուրբ և ի հայրապետական Աթոռն՝ որ կոչի Հռոմկլայ, շրջապատեալ յադենական ափերէն Եփրատայ, որ մատակարարէ ընակչացն զամենայն մարմնական պիտոյս խնամօքն Աստուծոյ՝ ընդ հովանեաւ աստուածընկալ նշանին Վանկոյ, և այլ սքանչելի սրբոցն՝ որ հանգուցեալ են անդր ի փառս Աստուծոյ։ Իսկ սրբաբանեցաւ ի նշանագրութենէն քերթողական արհեստիւ ի յաղաչով անապատս ի սուրբ Գէորգ, ի մէջ լերինս Տորոսի՝ որ է ի Գահ Կիլիկիոյ և ի սկիզբն Պամփիւլեայ, ձեռամբ նուաստ եպիսկոպոսի նորին մայրաքաղաքի Տարսոնի՝ տառապելոյս Ներսէսի, շնորհօք և ողորմութեամբ Քրիստոսի. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն »։

Թարգմ. – *Տես Բենեդիկտեան վանաց* (Սահման)։

Ներբողեան ի Ս. *Ներսէս Լամբրոնացի.* — *Տես* ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ։

Տես դարձեալ Ալիշան, «*Հայապատում*», էջ 236–237. – «*Շնորհալի և պարագայ իւր*». – «*Սիսուան*» 80, 81, 86–95 «*Գրուագ ի սուրբն և ի սիրելի Ներսէս Լամբրոնացի*». – 113, 266, 271, 431, 447, 460, 462, 465, 472, 505, 516, 519, 552։ – *Զարբ.*, «*Հին Դպր.*» 648–661։ – *Չամչեան*, «*Պատմ. Հայոց*» Գ. 88–95, 123, 139, 145, 155, 157, 158, 160, 162, 163, 165, 166, 167։ – *Ծան.* 407–411. – «*Եօթն հարիւրեակ Ս. Ներսէսի Լամբրոնեցւոյն մահուան*» (Հ. Յ. Թոռոս.)։ – *Բազմավէպ* 1886, էջ 87–101. *Սիոնեանէն աշխարհ. թարգմանութեամբ.* – 1898, էջ 461. – «*Երբեակ Ներսէսեանք*» (Հ. Ալիշան), *Որբուշեր* 1900։ – *Բազմավէպ* 1846, էջ 21 (Հ. Ա. Ճարեան). – 1874, 241. – «*Պատմ. Վարուց Ներսէսի Եպիսկ.ին Լամբրոնացւոյ*». *Արարատ* 1878, էջ 89. – *Լամբրոնացւոյն անունը տօնացոյցէն հանելու կամ չհանելու խնդրին առթիւ. Արեւելք* 1895, թ. 3512, 20, 27, 28, 34, 35, 42, 43, 47, 49, 52, 53. – 1896, թ. 3575. – *Լամբրոնացի և Տաթևացիք*, թ. 3582, 83, 84, 3602։ – *Սուրհանդակ* (Մ. Ազար.) 1903, թ. 1379, 80. – *Աստ դէմ անդ* (Վ. Վ. Տէր-Մինաս.), թ. 1386։ – *Բիւրակն* 1904, թ. 5, 6, 7, 10. – *Աստ դէմ* (Մ. Ազար.), *անդ*, թ. 7, 8։ – *Լուման* 1903, թ. 4, էջ 246. – «*Լամբրոնացին և Ազարեզեան*», *Բիւզանդիոն* 1903, թ. 2147. – «*Ներսէսի Լամբրոնացւոյ տեղեկութիւն ի վերայ մահուան կայսեր Փրեդերիկոսի Ա.* (Ֆեթթեր). *Հանդէս Ամսօրեայ* 1894, թ. 1։ – *Ճռաքաղ* 1859, էջ 3, 37։ – *Հիւսիսափայլ* 1859, էջ 81, 630. – «*Զինուորական օրէնք Ներսէսի Լամբրոնացւոյ*» (*ցարդ անտիպ մնացած*), *Բանասէր* 1902, էջ 321։

ՆԵՐՍԷՍ ԿԼԱՅԵՑԻ, *որ և* ՇՆՈՐՀԱԼԻ. — *Յիսուս Որդի* Ա. *տիպ, ի Վենետիկ*, 1643։

Նորաձեւ ճակատ մ'ունի. նստած է վարդապետ մը, և ձեռքն ունի քառակուսի քար մը, վրան այսպէս գրուած.

Տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի. Նուէր մաղթանաց. ներչափական տաղիւ. Ողբումն հեծութեան ի խորոց սրտէ խօսք ընդ Աստուծոյ։

Եւ ապա Յիսուսի պատկեր մը՝ երկրպագուներ ձեռքին մէջ, և դիմացէն էջ 1՝ *կը սկսի գիրքը, և կ'աւարտի յէջն* ՇԻ (520)։

Բովանդակութիւն. Յիսուս Որդի. – Յիշատակարան քանի երգողին մաղթանաց Տեառն Ներսէսի կլաեցւոյ. – յէջն 239–240՝ *տաղ մը Շնորհալւոյ վրայ, որուն սկզբնատառերը կը կազմեն. «Սահփաննոսի երգս». – Նորին Ներսէսի ասացեալ առ սուրբ երրորդութիւն. – Յիշատակարան տեառն Ներսէսի. – Տեառն Ներսէսի՝ սրբոյ եպիսկոպոսի Բան խրատ ուսումնասիրաց մանկանց. Ի դիմաց այբուբենից տառի՛ջ*(ց) *տաղաչափ չափով. – Նորին տեառն Ներսէսի. Բան հաւատոյ. Վասն եղելոյ հայկական տառից չափերմամբ. Ոգեալ ի ներսէսէ. – Նորին բան. Ներբողական. Տեառն Ներսեսի սրբոյ։ Բան խրատ ուսումնասիրաց մանկանց. Ի դիմաց այբուբենից տառից. տաղաչափ չափով. – Տեառն Ներսէսի Յիշատակարան յառակացն Սողոմոնի զոր խրովք ձեռօքն գրեաց. – Անդրադարձութիւն տառից յիշատակի. – Նորին ժողովող անուն ասացեալ է. – Թուխթ մխիթարական տեառն ներսեսի հայոց կաթողիկոսի. Առ ոմն իշխան արեւելեան. Վասն որդւոյ իւրոյ տարաժամ մեռանելոյ. – Նորին ներսեսի կլայեցւոյ. Յաղագս երկնից և զարդուց նորա Բարանաբար ի դիմաց նորա Ի չափ երկոտասանիցն պարեալ տոից. Ի խնդրոյ առն բժշկապետի և աստղաբաշխի մխիթար անուն. – Շարագրութիւն համերական վիպասանութեամբ. Սակս հայկազանցն սեռի. և արշակունեացն զարմի. Ի սկզբանցն մինչեւ ի վաղճան. Ասացեալ ներսէսի եղբօր կաթողիկոսի հայոց. տէր գրիգորիսի. յիրականուցն նախնիս. Ի համբակութեան եղեալ տիս։*

Յէջն չխա–չխե (521–525). «*Ծանուցում պայծառ ընթերձողաց։ Փառք եսակի անբաժանելի և մի տէրութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն Որ եա կարողութիւն նուաստ և տառապեալ անձին իմոյ Յոհաննէս անկիւրեցոյ թարքմանչի որ մականուն բառ հռոմայեցոց ճիանի մօլինօ ասի. հասանել ի յաւարտ տպագրութեան արհեստիս զոր բազում ջանիւք և չար նեղութեամբ ուսնեալ և աշխատեալ այս զ. ամէ զոր կախեալ կամ վասն տպագրութեան արհեստիս ապաւինելով ի յոյսն ամենեցուն ի քրիստոս աստուած և ի շնորհաբաշխ հոգին սուրբ. բարեխաւսութեամբ սրբոհոյ առաւածածնին և աղօթիւք սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին. և բարեխօսութեամբ ընտրեալ անօթոյն և առաքելոյն պօղոսի. Եդի ի մտի զառաջագրութեան արհեստն առ ի պայծառութիւն ազգիս հայոց. Այլ և պատճառ աշխատանաց մերոց այս էր. զի Յուրհայեցի Սրապիոն կաթուղիկոսն բազում փափաք ունէր վասն տպագրութեան արհեստիս և ոչ եղեւ հասու և եռ պատուէր աշակերտին իւրոյ տէր զրիգոր քաջ բաբունապետին կեսարիոյ լինի եթէ դու կարողանաս տպագրութեան արհեստի և նայ եւս ո՛չ կարողացաւ. Իսկ նա ինձ մեղաւորիս և անարժանիս իբր հարկս ի վերայ եդեալ պատուիրէր ինձ համապաղ եթէ լինի դու կարողանաս. վասն զի իմ ծանօթութիւն կայր ընդ ազգիս ֆռանկաց եթէ կարդալով և եթէ լեզ*(ու)*աւ. այսպէս յանձին կալեալ ջան եդի աղօթիւք նոցա. Զոր և պարգեւատուն ամենեցուն քրիստոս պարգեւեաց ի ձեռին իմոյ զայսչափն առ ի պայծառութիւն մանկանց սրբոյ եկեղեցոյ ի տանս հայոց. Զոր և հասի յաւարտ բառ ձերում աղօթիւք. Իսկ եթէ նուազութիւն գտանէք ներեցէք իմում պակասութեանս զի կար մեր այս էր։*

Արդ եղեւ կատարումն և աւարտումն երգոյս Տեառն ներսեսի հայոց կաթողիկոսին. զոր անուանեալ կոչի յիսուս որդի. Ի լաւ և յընտիր յօրինակէ բազում քննութեամբ և ըստուգաբանելով՝

ի թվականիս հայոց հազար և ՂԲ. ի հայրապետութեանն հայոց Տեառն փիլիպպոսի սրբազան կաթողիկոսի ի վայելուչ և գեղեցկաշէն կղզիս վանատկոյ. և յիշխանութեանն նոյն քաղաքի փռանկէսկոս երիցու դուճի. և մեծամեծաց հրամանաւ. և բռվիլէճով.

Դարձեալ աղաչեմ զձեզ որք հանդիպիք սմայ կարդալով և կամ օրինակելով Յիշեցէք ի քրիստոս զնուաստ յոգի յոհաննէս անկիւրեցի. և զծնօղսն իմ զմուրատ սարկաւագն և զփաշամելիքն. և զգեւորգս զաւակքն իմ զմելքայէլն և զղազարէն և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ. և դուք յիշեալ լիջիք ի տեառնէ աստուծոյ մերոյ ամէն. Դարձեալ յիշեցէք ի քրիստոս զմխիթարեան զյովսէփս արոմաթարիօն. և զանգեղոս բէլխէլսն որք ձեռնտու եղեն ինձ ծախիւք և ընչիւք.

Դարձեալ յիշեցէք ի քրիստոս զտարանտացի մահտեսի աստուածատուրն որ օգնութիւն արար ինձ ի սրբագրելն. այլ և զօրինակն շնորհեաց ինձ զոր տէր աստուածն մեր տացէ զփոխարէնն աստ և ի հանդերձեալն ամէն. Կատարեցաւ գիրքս. Բ. նախ սաղմոս. և ապայ յիսուս որդի. ի տպագրատունն Սալիգաթաու»:

Գիրքը փոքր 8^0, սեւաթուղթ, միջակադիր, բայց անհարթ. գծափակ երեսներով. հասարակ տպագրութիւն, բայց սակաւագիտ. (մենք երկու օրինակ ունինք):

= Բ տիպ, ի Վենետիկ, 1660:

Ամէն բանով յար և նման վերնոյն, բաց ի յիշատակարանէն, որ է հետեւեալը. «Ծանուցումն պայծառ ընթերձողաց: փառք եռանձնեա տէրութեան. և միազոյ բնութեան. անհասանելի զօրութեան. և անքու բարերարութեան. երրեակ և մի աստուածութեան. և անբաժանելի սուրբ Երրորդութեան. հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն Որ ետ կարողութիւն նուաստ և տառապեալ անձին իմոյ Ճուան պագիդա որ մականուամբ ասի Պօլիս որ եմ ազգաւ լադինացի ի գեղեցկաշէն մայրաքաղաքէն վանատիկոյ Զոր բազում ջանիւք և աշխատանօք հազիւ կարացի ի յանկ հանել ըղտպագրութեան արուեստ և ոչ ուստէք եղեւ ինձ օգնութիւն այսմ տպագրութեան արուեստիս այսորիկ. Ապաւինելով ի յոյսն ամենեցուն քրիստոս. և ի շնորհաբաշխ հոգին սուրբ աստուած. բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին. և աղօթիւք սրբոյն գրիգորի լուսաւորչին. և բարեխօսութեամբ ընտրեալ անօթոյն և առաքելոյն պետրոսի և պօղոսի եդի ի մտի զտպագրութեան արհեստն առ ի պայծառութիւն ազգին հայոց. Այլ և պատճառ աշխատանաց մերոց այս էր. որ բազում ժամանակաւ յառաջ ունէի սէր և բարեկամութիւն հետ ազգին հայոց. և յորժամ ցանկայի տեսանել ըղշքեղաշուք իշխանն հայոց խոճայ սաֆրազըն. Զոր ոչ կարացի հասանել ցանկութեանս իմոյ. զոր փոխեալ է առ աստուած. և զնորհաս որդին իւր զխօճայ վաղանն տէր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ. Զոր և պարգեւատուն ամենեցուն քրիստոս պարգեւեաց ի ձեռն իմոյ զայս չափն առ ի պայծառութիւն տանն հայոց Այլ և խնդրեմ անմեղադիր լինել սակս անյարմարութեան. քանզի ամենեւին. ոչ գիտէի լեզու հայոց. և կամ գիր. և ոչ տեսեալ ի վարպետաց զայս տպագրութեան արհեստն բաց պարգեւելոյն սմայ ի հոգւոյն սրբոյ. այլքան յայտ ածեալ երեւեցայ վասն օգտութեան ազգին հայոց. զոր և հասի յաւարտ բան ձեռամբ աղօթիւք. Եւ եթէ նուազութիւն գտանէք ներեցէք խմամ պակասութեանս զի կար մեր այս էր. Արդ եղեւ կատարումն և աւարտումն երգոյս Տեառն ներսեսի հայոց կաթուղիկոսի զոր անուանեալ կոչի Յիսուս որդի ի լոյս և յընտիր յօրինակէ բազում քննութեամբ և բաղդատարանելով. ի թվականութեանըն հայոց. ՌՃ. և Թ. ի յամսեանն մայիսի... ի հայրապետութեանն հայոց հանուրց սեաւ Տեառն յակոբայ երիցս երանեալ երջանիկ հայրապետի ի վայելուչ և գեղեցկաշէն կղզիս վանատիկոյ և յիշխանութեան նոյն քաղաքի. Տօմէնիկօ Գօնդարինի Դուճի և մեծամեծաց հրամանաւ և բռիվիլէճով Դարձեալ աղաչեմ զձեզ որք հանդիպիք սմայ կարդալով և կամ տեսանելով յիշեցէք ի քրիստոս և մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ ճուան պագիդայ պօլիսիս և ծնօղացն իմոց. և գեւորգոյ զաւակացն իմոց և այլ ամենայն մերձաւորացն իմոց. և դուք յիշեալ լիջիք ի քրիստոսէ աստուծոյ մերոյ ամէն. Դարձեալ յիշեցէք ի քրիստոս ջուղայեցի տէր բանեփանոսի որդի եաղուպ աղան որ նա եւս աշխատեցաւ ի սրբագրելն սորա. Դարձեալ յիշեցէք ի քրիստոս զնորահաս մանուկն բանեփանոս որ է ազգաւ հայ որ չատ աշխատեցաւ. և օգնութիւն արար այս արհեստիս ի սրբագրելն և ի չարելն և այլ ամենայն որպիսութեանն սորայ միթէ տէր աստուած զինքն անփորձ պահեսցէ ամենայն չարէ ամէն. Կատարեցաւ գիրքս. Բ. նախ յիսուս որդի և ապայ սաղմոս. ի տպագրատունն Պօվկսին»:

= Գ տիպ, յԱմստերդամ, 1660:

Յիսուս որդիանուն Տեառն Ներսեսի Հայոց կաթուղիկոսի ասացեալ բան մխիթարութեան տանըս հայոց վասն մանկանցն որ օրհնեն ըզյիսուս միշտ անուն նորա ցնցութեան:

Ճակատին չալակը Յիսուսի փայտափոր պատկերը՝ կխարձան. և տակը այսպէս. «Յիսուս որդի կատարեցաւ հոգիս շնորհօք սուրբ լուսու. ողորմութիւնն տեառն յիս հասաւ որ այժմ յիշատակիս արժան արար»: Այսչափն ալ զուշակելով կըրնայ կարդացուիլ. լի է վրիպակներով: Այս պատկերին դիմացէն կը սկսի գիրքը, որուն ինը թերթը առանց թուահամարի է, և տասներորդին սկիզբէն՝ տակը գրուած է 145, և այսպէս կը հասնի մինչև 599, որ է վերջ վիպասանութեան: Որմէ վերջ յէջն 600, հետևեալ յիշատակարանը, զոր քիչ մը կը սրբագրեմ, հասկցուելու համար, զի լի է սխալներով:

«Ծանուցումն պայծառ ընթերձողաց. Շնորհօք և ամենազօրին աստուծոյ և նախախնամութեամբ տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի ի թուին հայոց ՌՃԵ ի մայիսի ամսեան. Ես նուաստ ծառայ քրիստոսի մաթէոս դպիր ծարեցի նոտար և սպասաւոր տեառն փիլիպպոսի սրբազան կաթուղիկոսի ամենայն հայոց կամակցութեամբ սուրբ հոգւոյն և հրամանաւն տեառն հայոց յակոբ կաթուղիկոսի յիղմիրու ելեալ գնացի յարեւմուտս յերկիրն խալայցուց սակս գործոյ տպագրութեանս զոր և աւուրս խ. հասեալ ի պայծառ և ի գեղազարդ քաղաքն և նաւահանգիստն ի վէնէտիկ Որ ընթացեալ ի տպարանս զրոց բազում ջանիւք հոգ տարեալ. Վերահասու եղէ գործառութեանս. Այլ զ'ի վէնէտիկ ոչ գոյին արհեստաւորք պատշաճք այսմ գործոյ. Եւ էր մահ սաստիկ ի մեծն հռոմ և ճանապարհք փակեալ յամեցայ առանց գործոյ ի վէնէտիկ ամիսս չորեքտասան և յորժամ վերցաւ մահն և բացեալ եղեն ճանապարհք ելեալ գնացի ի մեծն հռոմ անդ եւս եղէ վերահասու որ ոչ կային վարդապետք կատարեալք այսմ գործոյ և մանաւանդ ոմանք և հակառակաւէրք և բարեատեացք կոկոեցին զմեծամեծս. Եւ զմտաւ ածի առ ի խափանել զայս գործ որ և եղեւ խոկ հրաման ել ի ժողովոյն այսպէս որք ընդ յարկաւ մերով իցեն արհեստաւորք այսմ գործոյ մի ոք իշխեսցի հանել

զայս արհեստ և տալ ի ձեռս հայոց և որք յան-դըգնեալ արտաքին զայս գործ ծածկեալ և կամ յայտնի՝ պատիժ սաստիկ կրելոց են ի մէնջ եւս կամէին անհայացանել. Բայց ոչինչ էր փոյթ մեզ սոցին որոտմունք Մնացի ի հռոմ ամիսս. Ը. առանց գործոյ և քանիցս անգամ ազդ արարի կարդինալաց ժողովին և փափին խօսել. Բայց ոչ եղեւ հնար։ Վասն որոյ յուսահատեալ զաւրբ հողին որ տաման է ի սուրբ բարեաց. Ելեալ գնեցի ի յերկիրն յօլանդրա ի գեղեցկաշէն վայելուչ քաղաքն Ամսթրդամ և անդ եւս վերահասու եղեալ զափ պատուական վարդապետաց այս արհեստի և առաջնորդութեամբ սուրբ հոգւոյն որ գնեա եղեալ բազում ջանիւք և հոգացողութեամբ զսա գործել ասարտեցաք մասն ինչ առաջարկեալ գործառնութեանս մերոյ ի ցոյց և ի ցերեկ մահու չափ աշխատելով միայն և առանց սրբոց օգնականի յերկարելով յաջողասութեամբ Դ. ամ և Ը ամիս յանձին ասնելով զվիշտս և զաստապանս զոր յայլքան ժամանակս կրեցաք ի հակառակասիրացն և յոչ կամեցողացն զբարեզոյն գործս ի ձեռաց այլ ազգաց Եւ մանաւանդ մերային չազանց ի սուտաձև կարդաւորաց և յաշխարհականաց թէ ի և վենէտիկ և թէ սատ ի Ամսթրդամ որք փոխանակ օժանդակութեանն զոր պարտն էին զիմարանեալ հակառակէին մշտաբար. Բանիւք գործովք և արգեամբք և զառաջարկեալ գործ մեր խափանել ջանային և թէ ամենք բարեպաշտք կամէին օտարք օգնութիւն մեզ տանել զայն եւս յուսահատուցանէին և ազաչաւել տայլին բարեգործութեանն. Այսպէս աստուածն ամենահայեաց ոչ հաճեցաւ ի չար խորհուրդս նոցա և ոչ արար ըստ կամաց նոցա այլ օգնեաց ինձ աջողմամբ միշտ և ամենայն ուրեք տալով զշնորհս առաջի ամենեցուն և մեք եւս ոչ դադարեցաք ոչ թուլանայաք ի գործառնութեանցս և ոչ ինչ էր փոյթ մեզ հակառակութիւնք և չարութիւնք նոցին վասն յուսոյն իմոյ որ առ աստուած ապաւինեալ ի զօրութիւնս տեառն ի կատարումն գործոյս հասանել փութայի յիշելով ըզբանն առաքելոյն պօղոսի զոր ասէ եթէ աստուած՝ ի մեր կոյս իցէ ով իցէ մեզ հակառակ որպէս և եղեւն իսկ Եւ շնորհօք ամենազօրին աստուծոյ աւարտեալ կատարեցաք Գ. ազգ գիր բոլոր յայժ կատարեալ քանակութեամբ և որակութեամբ զանազանեալ յորոց մինն և իբրեւ միջին կերպ է այս զոր տեսանէք առաջիկայդ. Զոր յաղագս տեսութեան և փարձանութեան գրեցաք զյիսուս որդի. Յամին որ ի ծնընդենէն քրիստոսի ՌՈԿ. ի հայրապետութեան հայոց տէր յակոբայ սրբազան կաթուղիկոսի և ի թագաւորութեանն պարսից փոքր շահապասին Եւ իշխանութեան քաղաքիս նորնձայ փոխչփային վիհայլմ օրանիոյ և ի թուին որ ըստ հայոց ՌՃԺ ի դեկտեմբեր ամսոյ ի վայելուչ նաւահանգիստ և աստուածաշէն քաղաքն ամսթրդամ ի յիշատակ մշանջենաւոր և ի փառս քրիստոսի։ Արդ եթէ հաճոյ թուեսցի բարեպաշտութեան ձերում շնորհք զտեսանել զոհացարուք և եթէ ոչ ներեցէք խմամ տկարութեանս և երկայնամիտ լերուք ընդ գործառնութիւնս զի իբրեւ զփորձ ասեցաք անհոգաբար և յայժ ըշտամբմամբ սակս բազում նեղութեանց և անմխիթարութեանց և պանդխտութեան զոր կրէի միշտ։ Վասն որոյ խնդրեմ ներել պակասութեան գրոցս զի օրինակն մի էր և չարոյք ֆռանկք որ ոչ են տեղեակ գրոց մերոց և լեզուաց և ես միայն և տկար գոլով կու արբաղրէի հազիւ այլքան կարի ասէլ. Վասն որոյ աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմա ստանալով և վայելելով յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զիս զնուաստ ծառայ մաթէոս դըպիրս ծարեցի և զծնօղսն իմ զհայրն իմ հանգուցեալ զաւագն և զմայրն իմ զգեկկի խանն և հարազատ եղբարս իմ զդայիրխանն զվարդանն զպալտասանն զմանկատարն և զհախնազարն և զամենայն արեան մերձաւորս իմ զկենդանիս և զմեռեալս զայս յիշատակարանս մատթէոսն գըրեաց իւր ձեռամբն յառաջ քան զմեռանիլն։ Ի սըտացրելն յիսուս որդւոյն որ էր գիրքն ԼԸ տետր յորժամ ասեցաւ ԻԴ. տետրն ի ցասմանէ և ի սաստիկ մեղաց իմոց նօթար մաթէոսն թվին հայոց ՌՃԺ յունվար ամսին ԻԲ լուսի Գ. շաբաթ գիշերն ԺԱ. ժամին մեռաւ։ Ես էրեւանեցի զըլէջենց ոսկան վարդապետի եղբայր աւետիս որ յընկերէի նորայ գրմամբ և այլ աղնութեամբ աստուած ինչ որ՝ վաստակ տայ մեր մէջն վաստակն կիսոյ լինի որ ժամ որ մեռաւ ես իբրեւ որբ մնացի ամէստրդամ վասն այն որ սըբագրող ոչ գոյր բայց միայն ես էի կարդացող որ չէի խիստ հմուտ ժամանակ մի տարակուսեալ և պարապ մընացի ես և սահմանք և գործն և մըշակն Բ ամիս ժամանակ անցաւ սկսան նաւերն գնալ ի դէմ արեւելս ի քաղաքն զմնայ աթոռն սրբոյն պոլիկարպոսի որ է յօթնանանիցն անճարութեանն սկսա մնացեալ ԺԳ. տետրն տպագրեցի վախելով այսպէս սրբագրեցի օրինակն եդի մի կողմ տըպագրածն մի կողմ մին կունայի օրինակն մի ի տպագրածն յորժամ որ ազալ լինէր կու մեկնի այսպէս սրբագրեցի մընացեալ ԺԳ. տետրն ապայ ուսայ ըզսրբագրելն որ զուրին էր թվին ՌՃԺ մարտ ամսին ԻԵ սուրբ աստուածածնին միջնորդ անելով և բարեխօս ունիլ և յուս աստուած գընել սուրբն զգրիգոր լուսաւորիչն բարեխօս ունիլ ամենայն սուրբքն տպագրեցի ձերին սուրբ և մաքուր աղօթիւքն մայիս ԻԵ աւարտ եղեւ. Պարձեալ վասն աստուծոյ աղաչեմ զձեզ ով եղբարք որ իմ վասահութեան ներէք որ ոչ եմ ես արժանի անունն իմ գրել անջինջ յիշատակարան բայց ասէրն իմ այսպէս գիտեցուց զիս այս գործոյս որ միշտ սովորութիւնն տեառն իմ այդ են որ գործ բարի նա կու աւանդէ ի ձեռս մեղաւորաց որպէս յամենս եմ ի ձեռս իմ անարժանիս այս գործս փառք նմա որ արժանի արար զիս այսմ բարոյս. Վասն որոյ աշխատանք ունիմ ի վերայ այս գործիս թէ գերամամբ թէ այլ օգնութեանն որչափ որ կարուամ կէր օգնեցի յանձնել եմ և ուխտադիր եղեր որ մինչեւ ի մահու կարէս ինչ որ եկանէ ցայք և ցերեկ պիտի որ աշխատիմ վասն սուրբ էջմիածնուն և առեհաս սուրբն զօրավարս սարգիսին և որդւոյն նորա մարտիրոսին որ ես պատճառ եղայ որ տպագրութեանն արհեստն որ մաթէոսն սուրբ էջմիածնուն վախմ արար թէ որ ես չի նա այնպէս կու մեռնէր չէ գիտէի թէ ով պիտէր տիրել ի վերայ քարխանին Ա մաչիլ չոր պարաք կէր քարխանին գեւ ԵՃ մաչիլ ամուռ չէր ես յուսալով առ աստուած և ամենայն սուրբք յանձն առի որ ժամ մեռաւ այլ պարտք յանտեցաւ վասն էն զիս և ընտանիքն իմ ի յիշայտակարան գրեցի դարձեալ սորայ յետ աստուածաշնչի գիր պիտի դուս գալ տիրացուն մեռաւ դեռ 90 կամ 60 գիր չէր փորվել դեռ 220 գիր եւ պիտի փորվել ես եմ վարձ տալոս մինչեւ ի սուրբ խաչն դուս գուքայ թէ վարպետն չի մեռնիլ։ Դարձեալ աղաչեմ ըզձեզ ով եղբարք որով հանդիպիք սմայ ստանալով և վայելով կամ կարդալով կամ օրինակելով յիշեցէք զիս արժանաւոր աղօթս ձեր էրեւանեցի զըլէջենց ոսկան վարդապետի եղբայր աւետիս ի կողէ ծընեալ ազամայ պրոտոկտիցն իմ մարիամ տատն որ է փոխեալ առ հանդերձեալն։.

Դարձեալ յիշեցէք ըզհանգուցեալ ծնողսն իմ թորոսն մայրն իմ զուհար ազիզն ըզաւագ եղբարն իմ ոսկան վարդապետն միւս վաճառական եղբարն իմ յովանէսն ըզքուրն իմ յուսուփնէն կըր-

սէր եղբարն իմ միրգայինան և պտուղն իմ զաքարէն և հանիկն իմ մէլիքխաթուն և ամենայն արեան մերցայրն իմ ըղկենդանիս և ըղմեռեալս սուրբ սրտիւ և սիրտ հաւատով. Աստուած ողորմի ասցէք որ անհղ առենին ի քրիստոսէ ողորմութիւնն գտանէք ի նմանէ ամէն սէզոլիս թողութիւնն առնէք որ իմ կարըս այս էր ոչ կարեմ չարայդերել բան զրոյ:

Պարձեալ յիշեցէք հօկեսր եղբայրն իմ նորոբոյս վաճառականն գէրէվանցի Սահմանէնց Պօղոսի որդի գրիգորն իմ յանձնառած պարտքն գործոյ էր տալ ու վասն էն ի յիշատակարանն գրեցաք զորս անուանս Հայր մեր... Ի թագաւորութեանն օսմանցուն ապվեցու գիրքըս սուլթան խըմահիմի որդի նորաքուս որ էր ի ամեայն սուլթան մահամաան սիրտ նորա քաղցրացցի վերայ քէրխոտանից զօրութեանն աստուծոյ և պաւթիւք ամենայն սուրբ ամէն»:

Գիրքը փոքր 8°, խոշորագիր, գծափակ երեսներով, 614 էջ: Այս տպագրութիւնը ընդօրինակուած է նախընթացէն, այսինքն Յովհաննէս Անկիւրացւոյ տպագրութենէն. գիրը լաւագոյն է քան անորը, և զարդարուած է ծաղկանկարներ փայտափոր պատկերներով. իսկ տպագրութիւնը, մանաւանդ ԻԳ. թերթէն վերջ լի է վրիպակներով և խառնաշփոթով, պատճառը կ'ըսէ արդէն յիշատակարանին մէջ: 1200 օրինակ տպուած է, ինչպէս կ'ըսուի 1661-ի տպագրին յետին յիշատակարանին մէջ, տես անդ:

= Գ. տիպ, ի Վենետիկ, յամի 1686:

Մեր օրինակին ճակատը կը պակսի, նոյնպէս վերջին թուղթը, էջ 415-416. որ բոլորովին պատառած չըլլալով Moretti. 1686, ինչպէս և Յիշատակարանէն քանի մը բառ կարելի է կարդալ:

Գիրքը միջակ 8°, գծափակ երեսներով. 416 էջ: Միջակ տպագրութիւն:

= Ե. տիպ, յամի 1702, (թուի ի Մարսիլիա):

Յիսուս որդիանունն Տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի: Ասացեալ Բան Մխիթարութեան. տանս հայոց վասն մանկանցն որ օրհնեն զյիսուս. մինչ յանուն նորա ցնծութեամբ: Յամի Տեառն 1702: Յունվար. 8: Ի փառս մեծազօրն Աստուծոյ:

Ճակատին չըլալը Ս. Անթոնիոսի փայտափոր պատկերը, ներքեւ գրուած. «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն հայոց»: Եւ դիմացէն էջ 3' կը սկսի գիրքը և կը հասնի յէջն 342:

Գիրքը միջակ 8°, միջակագիր, զարդափակ երեսներով: Ունի քանի մը պատկերներ Ոսկանեան չարականէն: Յիշատակարան չունի, գրին ձեւէն և տպագրութեան կերպէն և զարդերէն Ոսկանի գրով Մարսիլիա տպուած ըլլալ կը թուի: Անհարթ տպագրութիւն:

= Զ. տիպ, ի Կ. Պոլիս, յամի 1724:

Տեառն Ներսեսի Հայոց Կաթուղիկոսի ասացեալ բան մխիթարութեան, տանս Հայոց վասն մանկանցն որ օրհնեն զյիսուս. մինչ յանուն նորա ցնծութեամբ: Ի թուաջս մերում ՌՃՀԳ: Նոյեմբ. Ժ:

Ճակատին չըլալը Յիսուս մանկան պատկերը հրեշտակներէ շրջապատուած, և դիմացէն էջ 3 կը կը սկսի գիրքը և կ'աւարտի յէջն 404, ուր ի վերջոյ գրուած է նօտարագիր. «Ողորմութեամբըն Աստուծոյ, և բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ աւարտեցաւ սուրբ տառս ի թվակս 1174: յունվ 8: տպարանի սրբոյ աստուածածնոյ»:

Գիրքը միջակ 8°, միջակագիր, զարդափակ երեսներով. մաքուր տպագրութիւն:

= Է. տիպ, ի Կ. Պոլիս, յամի 1746:

Ա. ճակատ. Յիսուս որդի. Արարեալ և շարադրեցեալ ի Ներսիսէ Կլայեցւոյ՝ Յոգներախտ Հայրապետէ Յեղբօրէ Գրիգորիսի Վկայասէրի Հայոց Կաթողիկոսի:

Բ ճակատ. Տպագրեցեալ ի վեհափառ Հայրապետութեան Սրբոյն Էջմիածնի Տեառն Ղազարու Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ ի Պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի՝ տեառն Գրիգորի Սրբազան Վարդապետի: Ի կոստանդնուպօլիս քաղաքի: Հրամանաւ նորին Սրբազան Պատրիարգի՝ Տեառն Յակօբայ Աստուածաբան Վարդապետի ի թուին փրկչին Յիսուսի 1746 Օգոստոսի 21: և ի Հայոց 1195 Ի Տպարանի Աստուածատուրի:

Այս ճակատներէն վերջ յէջմն 4-5 «Ազգարարութիւն ինչ առ փափաքօղսդ» գրութիւն մը. յէջն 6 Յիսուս մանկան վերեւ յիշուած պատկերը, և դիմացէն էջ 7՝ կը սկսի գիրքը և կ'աւարտի յէջն 408. յէջն 409-411, «Նորին Տեառն Ներսէսի Ասացեալ Երգք. Գտեցեալ ի գրչայ Յիսուս որդւոյ մինջէ. զոր առա ի վերջոյ եդաք՝ զի մի կորիցէ Յիշատակ սրբոյն»: Յէջն 412 «ծանուցումն Պատճառի Արարեցման Աստջիկոյ Ցանկիս», և յէջմն ՆԺԳ (413) - ՆԼ (430) (յանկարծ հայագիր կը փոխէ հօս թուահամարները) «Ցանկ Նշանաւորաց բանից Յիսուս որդի կոչեցելոյ գրքոյս». և յէջն ՆԼԱ (431-432)

«Յիշատակարան Տպողի և Տպել տուողի: Շնորհիւ և ողորմութեամբ ամենակարողին աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և բարեխօսութեան արագահաս և երջանիկ վկային իւրոյ սրբոյն Մինասայ, ի յանգ եկեալ աւարտեցաւ տպումն Գըրքոյս այսորիկ. Որ կոչի՝ Յիսուս Որդի: Ի վայելումն ուսումնասէր և քաղցրանուագ մաքուր մանկանցդ եկեղեցւոյ: ի Տպարանի մահտեսի Աստուածատուրի: Ի թուականիս մերում, հազար հարիւր իննսուն և վեցին: Փետրվարի Ա:

Արդ՝ որք տանայքդ զսա և ընթեռնուք ջերմեռանդն սիրով, նաեւ մինչ երգելով հրճուիք ի հոգի և ի մարմին՝ բերկրեալ ցնծալի յիշեսջիք ի Քրիստոս ի մաքրափայլ աղօթս ձեր զարդեն տուօղ սորին՝ զպալատցի հանգուցեալ եղբայր Մովսէսի որդի զախրացու յակօբն. որ իւրով իսկ արդեամբ եա տպել զսա. առ ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց: Ընդ նմին յիշեսջիք և զաղօթ սորին զվերոգրեցեալ աստուածատուրի որդի՝ զանխմատ և զյեռանեալ ծառայ ձեր զյօհաննէս գըղիրս. որ ամենեցունց եմ ծառայ պատրաստական: Եւ մաղթեմ՝ ներումն շնորհել զանցեալ սխալանացն ի սմին. զի անսխալ ի գործս իւր՝ է Աստուած միայն: Յիշեսջիք և զաշխատաւորն գործարանիս՝ զվաննեցի զրագիր Աւէտի որդի՝ զախրացու մխիթարն ծերունի. և զհանգուցեալ եղբայրն իւր զկանոնն. հանդերձ այլ երախտաւորօք մերովք: Յորմէ և դուք լինիջիք յիշեցեալ յաւուր յայտնութեան նորին. Ամէն»:

Գիրքը 8°, միջակագիր, զարդափակ երեսներով, նմանատիպ նախընթացին, բայց ան աւելի մաքուր է:

= Ը. տիպ, ի Կ. Պոլիս, յամի 1746:

Տեառն Ներսեսի... ցնծութեամբ:

Ճակատին չըլալը Կողգաւոր վարդապետի փայտափոր պատկեր մը կայ, և դիմացէն էջ 3 կը սկսի գիրքը և կ'աւարտի յէջն 376. որմէ վերջ յէջն 377-380 Շնորհալւոյ առ Ապիրատ եղբօրորդին գրած տառնուաը: Այս տպագրութեան աւել-

ցուած է նաև Գրիգոր Մագիստրոսի «Տաղասացութիւն»ը, զոր տես իր անուան տակ։ Գիրքը նման է Յիսուս Որդիին, բայց էջերուն դարձերը տարբեր են, և նոր թուահամարով կը սկսի։ Յիսուս Որդիին ճակատին մէջ տպագրութեան թուականն դրուած չէ, այլ Մագիստրոսի Տաղասացութեան ճակատին մէջ. բայց որովհետև Յիշատակարանին մէջ երկուքին միանգամայն յիշատակութիւն կ'ըլլայ՝ 1746 դրինք Յիսուս Որդիին տպագրութիւնն ալ։

«Յիշատակարան տողի. Ողորմութեամբն աստուծոյ, և բարեխօսութեամբ ամէնօրհնեալ միշտ կուսին Մարիամու աստուածածնին, և մաղթանօք և միջնորդութեամբ սրբոյն Յովհաննու կարապետին, և ամենայն Սրբոց, յանկ եկեալ աւարտեցաւ տաղաչափական գիրքս՝ որ կոչի Յիսուս որդի յարմարեալն ի ներսէսէ շնորհալւոյն մերմէ, ի փչմանէ շնորհաց հոգւոյն աստուծոյ. ի Հայրապետութեան սրբոյն Էջմիածնի բարձրագահ աթոռոյն Տեառն Ղազարու սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց. Եւ ի Պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի Աստուածակոխ քաղաքին, և սրբոյն Յակոբայ գերահռչակ աթոռոյն, Տեառն Գրիգորի Արհի Բաբունապետի։ Եւ ի Պատրիարգութեան կոստանդնուպօլսի մեծի մայրաքաղաքիս Տեառն Յակոբայ Արք Եպիսկոպոսի և Աստուածաբան Կոչեցելոյ։

Արդ՝ որք ընթեռնուք զսա՝ և վայելէք ի քաղցրութենէ սորին, յիշեսջիք ի մաքուր յաղօթս ձեր, զվերոյ յիշեցեալ Սրբազան Հայրն մեր զՅակոբ դերերջանիկ Բաբունապետն, որ բաց ի հրաման տալոյն մեզ ի տպումն երգարանիս, յաւել ևս օրինակ մի ի գրեանցն իւրոց, զբանն Սրբոյն Գրիգորի մագիստրոսի որոյ հայրական գթութիւնն եղիցի անպակաս ի մէնջ. և Աստուածն ամենայնի հաստատուն պահեսցէ ի յաթոռն իւր. Ամէն։

Այլ և յիշեսջիք արեւելցի զերկու հարազատ եղբարսն զպարոն յօհաննէսն և զմահտեսի մկրտիչն և զծնօղսն իւրեանց որք ձեռնտու եղեն մեզ ի հալալ արդեանցն իւրեանց, ի տպումն սորին։ Յիշեսջիք ևս զանպիտան ծառայս ձեր զտպագրօղ սորին զյովհաննէսս և զծնօղսն իմ զմահտեսի զազարն, և զմայրն իմ, և զորդեակն իմ զասեփանն, և զամենայն արեանառուս մեր համօրէն ննջեցելովք։ Եւ եթէ սխալանս ինչ գտանիցի ներել մաղթեմ խնամս խակութեան, զի և Քրիստոս ներեսցէ ձեզ զթութեամբն իւրով ամէն։ Այլ և յիշեսջիք զշարաբարդօղն սորին զախրացու անտօնն և զծնօղսն իւր։ Այլ և յիշեսջիք զաշխատաւոր գործարանիս զըսմցի լաւեփաննոսի որդի տիրացու յօհաննէսն և զծնօղսն իւր։ Այլ և յիշեսջիք միւս աշխատաւոր գործարանիս զքրմնաջան և բազմահնար զվառեալ սեւանցի խղնատրոսն և զծնօղսն իւր համդուցեալ զկարապետն և զմայրն իւր և զուք յիշօղքդ յիշեալ լիջիք ի քրիստոսէ աստուծոյ մերմէ ամէն»։

— Թ. տիպ, ի Ս. Պետերբուրգ, յամի 1785։

Ա. ճակատ.

Յիսուս Որդի տուօղ շնորհաց
լուսաւորիչ խաւար մըտաց։
Բա՛ց և ըզմիտս իմ թանձրամած.
արժանացո՛ լուսոյդ փառաց։
Ջքեզ աղաչեմ ով տէր Յիսուս.
լեր ձեռնտու ինձ լըքելոյս։

Բ ճակատ. Գիրք որ կոչի Յիսուս Որդի։ Արարեալ և շարադրեցեալ ի Ներսիսէ Կլայեցւոյ՝ Յոգներախտ Հայրապետէ Յեղբօրէ Գրիգորիսի Վկայասիրի Հայոց Կաթուղիկոսի։ Եւ տպագրեալ հրամանաւ իշխանազնեայ տեառն Յովսեփայ առաքելաշաւիղ արհի Եպիսկոպոսի Սանահնեցւոյ Արղութեանց, և առաջնորդի ազգին Հայոց որք են ընդ Տէրութեամբ Ռուսաց։ Ի Հինգերորդում ամի Հայրապետութեան լուսանկար մօրն մերոյ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ Տեառն Ղուկասու սրբազնասուրբ կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Յամի Տեառն. 1785։ Իսկ ի թուին հայոց. ՌՄԼԴ։ Արդեամբք և ծախիւք բարեպաշտ և ազնուատոհմ Ազգազարեանց Եղիազարեան ազնիւ պարոն Յօհաննէսին։ Ի Սանկտպետրբուրգ։ Ի տպարանի խալդարեանց պարոն Գրիգորի։ Հրամանաւ կառավարչացն բարեկարգութեանց։

Ամէն բանով յար և նման Պոլսոյ 1746-ի տպագրութեան։ 7 էջէն կը սկսի գիրքը և կ'աւարտի յէջն 433, ցանկով միասին. 434–438՝

«Յիշատակարան Յիսուս որդի գրքոյս՝ համդերձ պատմաբանական գովեստիւ, յաղագս տպեցուցանողի սորին՝ Երջանկայարգ ազնիւ պարոն Յօհաննէսին եղիազարեան. ի բնիկ հայաստան աշխարհէն Հայոց՝ ի Նախիջևանու գաւառէն տարագրեցելոյն ի նոր Ջուղայ. և այժմ վերաբնակեցելոյն ի Կայսերապերճ մայրաքաղաքն ի Սանկտպետրբուրգ. ոգեալ ի Յովսեփայ արք եպիսկոպոսէ.

Քաջ յօհաննէս՝ վերաձայնեալ.
ի յադնուաց՝ հայոց սերեալ։
Նախնիք սորին՝ տարադրեցեալ.
ի նոր ջուղայ՝ բնակեցուցեալ։
Բազմք պարսից՝ կարի նուաճեալ.
օր ըստ օրէ՝ անչքեցայեալ։
Ամըս բազումս՝ ընդ մէջ անցեալ.
ազնուութիւնն՝ անհետացեալ։
Բայց բարեգութ՝ տէրն ողորմեալ.
նախանձաւոր՝ զաւակ տուեալ։
Որոյ շնորհիւ՝ ըն զարդացեալ.
ի մանկական՝ տիս ժամանեալ։
Այս անուի՝ չու արարեալ.
ի ռուսատան՝ վերաբնակեալ։
Տուր և առից՝ ձեռնամըխեալ.
որ և տերամբ՝ յաջողեցեալ։
Առ նախարարս՝ հաճոյացեալ.
և ի նոցունց՝ գթասիրեալ։
Արդատուր՝ բարեօք լըցեալ.
տոհմին իւրոյ՝ լոյս ծագեցեալ։
Կայսերուհւոյն՝ ազերս արկեալ.
որպիսի տոհմ՝ լինելն յայտնեալ։
Իւր վեհութիւնն՝ ի գութ շարժեալ.
ողորմութեան՝ շնորհս ցուցեալ։
Ջազնուութիւն՝ ըն հաստատեալ.
ուստաց ազնիւ՝ ևս արարեալ։
Մինչ այսպիսւոյ՝ պատուոյ հասեալ.
զհոգևորաց՝ բուռն հարեալ։
Ջեկեղեցիս՝ երկուս կանգնեալ.
զըստղ բարեաց՝ վերընծայեալ։
Եւ մըշտավառ՝ կանթեղ կախեալ.
եղիազարու՝ տանըն օրհնեալ։
Սա յիշատակ՝ բարի գըտեալ.
անչարժ արձան՝ տոհմին կանգնեալ։
Մեծ գովութեան՝ արժանացեալ.
որ և ի մէնջ՝ գովաբանեալ։
Բազում են գործք՝ սորա բարի.
որք են առ մեզ՝ զարմանալի։
Ջի քաջաջան՝ սոյն պանծալի.
արար անուն՝ իւր յաւանխի։
Սիրեմ ըզսա՝ սիրով սըրտի.
զի է ինձ յոյժ՝ հնազանդ որդի։
Կարգամ ես վաչ՝ իմ իշխանին.
և պօթեմ՝ կենաց նորին։

Մանուկ մի սէգ՝ խիր երեւեալ.
որ յարութիւն՝ գնա անուանեալ։
Ի գինուորիլ՝ որոյ հաճեալ.
Կայսերուհւոյն՝ գնա նուիրեալ։
Գունդն անձնապահ՝ գնա ընկալեալ.
տարփանօք՝ մեծարեցեալ։
Ներ հրմայեալ՝ յարհեստ գինուց.
որպէս օրէն՝ է վարժելոց։
Հրրաւանդեալ՝ ի յիմաստնոց.
լեզուօք բազմօք՝ 'ւս կերպի գիտնոց։
Ի սէր մանկանն՝ այս նազելոյ.
տեառն յիսուսի՝ զօրացելոյ։
ԶՅիսուս որդի՝ գիրքս ցանկալի.
սա ուղագրեաց՝ տարփմամբ սրտի։
Արդ որք ընդէք՝ յայսմ գեղոյ.
մի՛ դադարէք՝ աղօթելոյ։
Ըզկեանս երկար՝ սմա խնդրելոյ.
վասն աղնուին՝ մեր հայկազնոյ։
Եւ կենակցին՝ բարեբարոյ.
կատարինեայ՝ համեստ տիկնոյ։
Յարութիւն որդւոյն՝ սիրեցելոյ.
շնորհօք փրկչին՝ ծաղկեցելոյ։
Նաեւ եղբարցն՝ ընտրեցելոց.
միով հոգւով՝ միացելոց։
Ազնիւ մնաս՝ զօրականին.
քաղցրաբարբառ՝ բարեսրտին։
Յովակիմայ՝ պերճաբանին.
ազնիւ խոհեմ՝ բանասիրին։
Եւ քեռ նոցին՝ բարեպաշտի.
խաթուն աննայ՝ հոգեսիրին։
Այլ եւ ծնողաց՝ նոցա բարի.
որք արդէն են՝ ի հանգըստի։
Եղիազարու՝ օրհնեալ ծերի.
եւ կենակցին՝ իւր աննայի։
Խաչիկ որդւոյն՝ նոցա լալի.
որ չժամանեալ՝ ի տիս այլի։
Վաղաժամամ՝ մահուամբ փոխի.
զիւրայն թողու՝ մօրմոքալի։
Մասըն բարեաց՝ նոցա տացի.
ի սուրբ արդեանցն՝ իմ յիսուսի։
Տրդեալ հայոց՝ թուականի.
քան եւ քառ՝ յոբելինի։
Երեան եւ չորք՝ թիւ ամելի.
յանգեալ եղեւ՝ բանս ի տըղի»։

Գիրքը 6°, միջակագիր, կազմաթուղթ, զարդափակ երեսներով. անհարթ տպագրութիւն։

= Ժ տիպ, ի Մադրաս, յամի 1792։

Գիրք Որ կոչի Յիսուս Որդի։ Արարեալ և շարադրեցեալ ի Ներսիսէ Կլայեցւոյ Յոգներախտ Հայրապետէ Յեղբօրէ Գրիգորիսի Վկայասիրի Հայոց Կաթուղիկոսի։ Ի Հայրապետութեան Հայոց Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի որ ի Վաղարշապատ. Եւ ի Թագաւորութեան Օգոստափառ Տեառն երկրորդի Հերակլայ Բագրատունւոյ որ ի Թիֆլիս։ Արդեամբ և ծախիւք բարեպաշտ ազնուատոհմ պարոն Աւետ Սեթեան Յամի Տեառն 1792։ Ի թուին Հայոց, 1241։ Ի Մայրա Քաղաքն Մադրաս ի Տպարանի Տէր Յարութիւնի Շմաւոնեան Շիրազցւոյ։

Նախընթաց՝ Պետրբուրգի տպագրութեան ընդօրինակութիւն մըն է, մինչ ի վերջոյ յիշատակարան՝ ոտանաւոր նման նոյնին, որուն մէջ կը յիշատակուին տպագրութեան ձեռնտուները։

Գիրքը 8°, թանձր սպիտակաթուղթ, անհարթ միջակագիր, զարդափակ երեսներով. 444 էջ։ Անհարթ տպագրութիւն։

Յիշատակարանէն.

«Արդ բացատրեանք վասըն հարկին
Սակս որոյ գիրքս ընծայլին.
Զի ի նահանգըս հընդկային
Յայժ ցանկալեաք գըրոց սոցին.
Քանզի հազիւ գրտանէին
Եւ քահանայք փափաքէին.
Ներկայացեալք ոչ գտանէին,
Զինձս յինքեանըս պարփակէին։
Զորոյ կարաք ըզփոյթ անձին
Յաճախ տանել զտարփալին.
Գործակցութեամբ բարեպաշտին
Աստուածասէր և երջանկին.
Պարոն Աւետ Սեթեան սիգին,
Բուռն հարեալ արդեամբ սորին
Տըպեցուցաք զըղձմամբ սրտին,
զՅիսուս որդի գիրքս հոգելին։
Որեմն արժան է զսա օրհնել
Ողղեալ սիրտ իւր զՏէր խնդրել,
Եւ զանձն իւր կեցուցանել,
Յօրէնս տեառըն զկամս ձըգել...
Եւ Գրիգորի բանասիրին
Փիլիպպոսի բարեշնորհին,
Եղիազարու քաջասրտին
Նորաբողբոջ Յօհաննիսին.
Այլ և քերցն բարեանընդիցն
Շահպազային, Ովաննային,
Գեղեցկատես Մարիամին,
Ծիծաղախիտ նորահարսին.
Պատշաճ վարկաք եւս յիշման
Որոց անուանքն են իսկ արժան.
Որք կանխաւ են մեր օգնական,
Բարեպաշտօնք և մրաջան.
Զպարոն Մանուկ Յակոբջանեան
Եւ պարոն Յարութիւն Կարապետեան.
Նաեւ նախնեօք նոքումբք համայն
Արժան լիցին երանութեան,
Յաւիտենից արքայութեան»։

= ԺԱ տիպ, ի Կ. Պոլիս, յամի 1824։

Գիրք Որ կոչի Յիսուս Որդի. Շարադրեալ ներչափական բանիւք ի մերս շնորհալի հայրապետէ ի ներսիսէ կլայեցւոյ։ Որ այժմ անդրէն նորոգ ի լոյս ընծայեալ ի հնագոյն և ի յընտիր գրչագիր զաղափարէ յիմէքէ համեմատութեամբ քանի ինչ այլ և այլ օրինակաց։ Որ ի Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի Տեառն Եփրեմի Սրբազան Կաթուղիկոսի ամենայն հայոց։ Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի Տեառն Գաբրէլի գերերջանիկ Արք Եպիսկոպոսի։ Նաեւ ի Պատրիարգութեան մեծի մայրաքաղաքիս կոստանդնուպօլսոյ Տեառն Կարապետի Երանաշնորհ Արհի Եպիսկոպոսի։ Որոյ վեհափառ հրամանաւ՝ ի տիպ արձանացեալ Արդեամբք և ծախիւք ան ազգասիրի և բարեպաշտի ակնեցի մահտեսի Յօհաննեան մահտեսի Աբրահամ ամիրայի։ Ցիւրում իսկ սեփական գործարանի։ Յամի Տեառն 1824. հոկտեմ 10։ ի Հասան փաշայ խանն։ ի կոստանդնուպօլիս։

Այն տպագրութեան մէջ ու Ագիրոս եղբօրորդին գրած ոտանաւորէն վերջ կայ «Նորին եւս ի վերջն աւատ լուսոյին զանեալ ի յայլ գրչայ յիսուս որդւոյ միոջէ». 20 տող, որոնց երկրորդ սկզբնատառերը «Ներսէսի երգ» կը կազմեն։ Եւ ապա «Այս ճառ ներբողական ի խաչն աստուածընկալ. ասացեալ նախ ի սրբոյն Դաւթայ անյաղթ փիլիսոփայէ. և յետոյ փոխարկեալ ի ձեւ ոտանաւորական ի սրբոյ Հօրէն մերմէ Ներսիսէ Կլայեցւոյ»։ Անկէ վերջ Ստեփաննոսի ու Սուրբն Ներսէսի ոտանաւորը, և ապա «Ցուցակ նշանաւոր բանից», են։ Յետոյ նոր թուահամարով Գր. Մա-

զխատրատի «Տաղարանութեան»ը. և ամենէն վերջ հեանուեալ Յիշատակարանը.

«Ըստ սկսուածոյ բանի գրքոյս այսորիկ, կոչեցեալ պաշտելի անուամբս Յիսուս որդի՝ թէպէտ յառաջ քան զայս քանիցս անգամ ասեալ է, բայց ի ժամանակի յայս մերում յաղագս աղաչելոյ լինելոյ և հայցելու ուրեք գտանելոյ նոյին, նոյն ինքն փրկիչ և կենարարն մեր միածին Յիսուս որդին յարմարեաց զկամս և զսիրտ մերս բարեսէր իշխանին մահտեսի աբրահամ ամիրայի բարերարել ազգին իւրոյ վերստին տպագրութեամբ ևս յայսմ նուագ։ Որ և նա ըստ ազգասէր բարուց իւրոց աշխատեալ ի նպաստ գերամաքուր աղօթից սրբոյ Հօրն մերոյ Ներսէսի Շնորհալւոյն՝ եկաց արդեամբ և որ ի պէտս են՝ ամենայն հոգաբարձութեամբ, եւ տպագրել զսոյն, և ի սմին յաւելել ևս զտաղաչափութիւն երանելի տեառն Գրիգորի մագիստրոսի և մեծանուն հռետորի, ի վայելումն մանկանց եկեղեցւոյ և ի յիշատակ իւր։

Որեմն խնդիր է ի ձէնջ սիրելիք մեր յիշել ի մաքուր մաղթանս ձեր զ՚ի վեր անդ յիշեալ զայրն բարեպաշտ ընդ որում և որպէս ինքն զբարեպաշտ ծնօղ նորին՝ թերզեանց սարրաֆ հանգուցեալ մահտեսի Յօհաննէն՝ և զպարգև եղբայր նորին հանգուցեալ զաղարն՝ նաև զսոյնոսիկ՝ որք արդ այժմ են կենդանի, մայր նորին մահտեսի աննա ախկինն՝ և զեղբայր նորին մահտեսի երամն, և զեղբօր որդիքն նորին զաղարն, սահակն, մահտեսի նորուկն, և զէորգն, համդերձ այլ ամենայն կենդանեօք և ննջեցելովք։ Հուսկ յետոյ ընդ սոցին և զիս յետին զործակցող սորին Թադէոս աբրահեան անուամբ և եթ գրիչս. և դուք որ յիշէքդ յիշեալ լինիք ի քրիստոսէ աստուծոյ մերմէ. Ամէն»։

Դիրքը 8°, ցանկով միասին 471 էջ. իսկ Տաղաչափութիւնը 106 էջ։ Մաքուր տպագրութիւն։

= ԺԲ տիպ, ի Վենետիկ յամի 1830։

Վիմատիպ ճակատ. Տեառն Ներսեսի Շնորհալւոյ Չափաբերականք. ի Վենետիկ, 1830։

Բ ճակատ. Տն. Ներսեսի Շնորհալւոյ Հայոց կաթուղիկոսի Բանք չափաւ։ Ի Վենետիկ, ի Սուրբն Ղազար ՌՄՀԹ. 16°, 584 էջ. 585–620. Գլխակարգութիւնք և չափք տաղիցն, ևն, և ցանկ անուանց։

Ձեռուցումը կ՚ըսէ. «Ի մի յայս մատեան բովանդակեմք զամենայն տաղաչափութիւնս Շնորհալւոյն, բաց յնտրելագունէն ի քերթածս նորա յՈղբոցն Եդեսիոյ, և ի Շարականացն։

Բայց զխառացեն ընթերցօղք, զի ոչ եթէ վարկպարագի ընտրանս այսոքիկ ի տիպ ածան՝ ըստ յետնոց ինչ պատուաստ զրչագրաց, որոց յաւելուածք անդստին յանհամութենէ տաղիցն և ի կողոպիցն չափոյ նշուակին՝ առ անհմուտ եւեթ պատրուակեալ, այլ ամենայն զգուշաւ բաղդատեցան ընդ տառն և ընդ տառել ևս ձեռագիրս, յորոց մանաւանդ չորք վաղեմիք են և հարազատք. ի ձեռին ունելով և զամենայն տպագիրս։ Իսկ զերկբայեկի ընթերցուածս յետ կոյս մատենիս դրոշմեցաք։ Բայց զվիպասանականն միահետ պերճղութիւն, ըստ ոմանց ի զրչագրաց, յերիս զիրս բաժանեցաք»։

Բովանդակութիւն. Տեառն Ներսեսի նուէր մաղթանաց ներշափական տաղիւ տուողին բանից ըղձումն ազօթից ներանձնական հոգւոյ զարթուցելոյ մօք ի թմբրութենէ կրից յիշատակաւ անցելումն իրի նորկայի և ապագայի ոգւումն հեծութեան սրտի խօսք ընդ Աստուծոյ. — Ներբողեան կենդանատու սուրբ խաչին առ ի սրբոյ հօրէն մերմէ Գանթէ Անյաղթ փիլիսոփայէ ասացեալ ստանաւոր չափով առանձին եղաւ. — Տեառն Ներսեսի չափաբերական բանք մաղթանք առ սուրբ հրեշտակն և հրեշտակապետսն Միքայէլ և Գաբրիէլ և առ ամենայն հրաշքն և երկնային սուրբ զօրութիւնն. — Ասացեալ և գրեցեալ ի Ներսիսէ եղխակոպոսէ յեղբօրէ կաթողիկոսի հայոց Տեառն Գրիգորիսի ի կլայս հռոմկլայական ի թուին ՈԺԱ. — Տեառն Ներսեսի բան ներբողական ի խորան ողւոյ համայնից ի գիմաց մերոյին տառից տանց յիշրաքանչիւրն քառից. — Նորին այլաչափ տաղք ի խնդրոյ անուան նախադիծ տառից տանց. — Տեառն Ներսեսի գրեալ առ եղբօրորդին իւր Ապիրատն ի կոստանդնուպօլիս. — Նորին թուղթ մխիթարութեան առ ոմն իշխան արեւելեան վասն որդւոյ իւրոյ տարաժամ մեռելոյ. — Բան հաւատոյ վասն անեղին և եղելոց բարանաբար ի դիմաց հայկական տառից չափաբերմամբ ողեալ ի Ներսիսէ. — Տեառն Ներսեսի ասացեալ բան մաղթանաց. — Տեառն Ներսեսի ի Սողոմոն արքայն. — Նորին ի ժողովող անունն. — Նորին Յիշատակարան Աւետաց Սողոմոնի. — Յիշատակարան Որդի իմաստուն գլխոյն, «Նորոգ ծընունդ». — Յիշատակարան փառք Աստուծոյ գլխոյն. «Բանիդ ընդ հօր». — Յիշատակարան Երգ երգոց գլխոյն. «Նորոգեցոյս ի քէն». — Տեառն Ներսեսի Տաղք. — Աւետեաց. «Բարբառ աւետեաց». — Ի նոյն, «Նոր երկինք». — Ի նոյն. «Մայր Աստուծոյ». — Ծրագալոյցի ծննդեան. «Այսօր աւետեաց». — Յարգորակ. «Նոր ծաղիկ բղխէ». — Ի ծնունդ Տեառն. «Նոր Եդեմ». — Ի նոյն. «Տէր փառաց». — Ի նոյն. «Երգ նոր աւետեաց». — Ի նոյն. «Նորահրաշ ծննդեան». — Ի նոյն. «Նոր թագաւորին». — Ի մկրտութիւնն Տեառն. «Նոյն ինքն անդրանիկն». — Ի Յարութիւնն Ղազարու. «Նոր աւետեաց». — Ծաղկազարդին. «Տիրական տօնիս». — Մեծի Ուրբաթին. «Անեղ Որդին». — Յարգորակ. «Շնորհօք սրբոյ Հոգւոյն». — Ի խաչելութիւն Տեառն. «Ծարաւեցաւ տէրն ի խաչին». — Ի Յարութիւնն Տեառն. «Նոր իմն աւետեաց բարբառ». — Յարգորակ. «Հօր կամաւ». — Ի նոյն. «Նոր ձայն աւետեաց». — Յարգորակ. «Կանայքն արտասուօք». — Ի նոյն. «Նըստեալ կանայքն». — Յարգորակ. «Կեանքն ընդ Հօր». — Ի նոյն. «Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ». — Ի նոյն. «Նոյնագոյ ընդ Հօր». — Յարգորակ. «Յարեաւ փառաց թագաւորն». — Ի սուրբ Երրորդութիւնն. «Ներպարունակեալ էնեակ դասուց». — Վարդավառին. «Տէր փառաց այսօր». — Յարգորակ. «Աստանօր տեսիլ ահեղ». — Ի նոյն. «Ներպարունակեալ խորհուրդ լուսոյն». — Ի փոխումն Կուսին. «Այսօր Գաբրիէլ». — Յարգորակ. «Անարատ տաճար». — Խաչի. «Նոր դրախտին». — Յարգորակ. «Կենաց փայտ անկեալ». — Ի նոյն. «Բարունակ բերող ուրախարար անկոյն». — Սուրբ Հրեշտակապետացն և ամենայն երկնային զօրաց. «Առաջին լոյս». — Յարգորակ. «Նոր տօնիս». — Ի սուրբ Առաքելոցն. «Առաքեալք Աստուածորդւոյն». — Յարգորակ. «Եկայք զուարճացեալ». — Ի սուրբ Մարգարէս. «Աստուածային խորոցն». — Ի նոյն. «Նորահրաշ տօնիս». — Սրբոց Հայրապետացն. «Այսօր մայր Սիոն ցնծայ». — Յարգորակ. «Նոր դրախտի քո». — Ի նոյն. «Նորոյ գինւոյն». — Ի սուրբ վկայսն. «Արեգակն արդար». — Յարգորակ. «Բանիւ աւետաւոր». — Յովհաննու Կարապետին. «Անմարմնոյն հրեղինաց». — Որդւոյն Որոտման. «Որդիքն որոտման». — Յարգորակ. «Նոր լոյս». — Ի Նախավկայն. «Ի խաչին ընկեալ որթոյն». — Յարգորակ. «Ի զուարթնէն Յեսսեայ». — Ի սուրբ Լուսաւորիչն. «Սրովբէից ձայնիւ». — Ներսեսի Հայրապետին. «Նոր և առաջին լոյս». — Ի սուրբ Թադէոսն. «Նոր իմն է հնչիւն». — Ի սուրբ Հռիփսիմեանսն. «Աստուա

լուսոյ»։ — Ի նոյն. «Երջանիկ հովուապետ»։ — Ի սուրբ Կոյսն Հռիփսիմէ. «Հանճարեղ ճարտարք»։ Տրդատայ Թագաւորին. «Նորահրաշ տեսիլ»։ — Աշխարհ ամենայնին յորդորակ. «Նորոգող նորոգ մարդկան»։ — Գանձ սրբոյ Վարդավառին. «Ներգործական զօրութիւն»։ — Գանձ փոխման Աստուածածնին. «Նորահրաշ տօնիս»։ — Շարադրութիւն համեմատական վիպասանութեամբ ասկս հայկազանցն սեռի և արշակունեացն զարմի ի սկզբանց մինչև ի փոխման աստուացեալ Ներսեսի եղբօր կաթողիկոսի հայոց յիրական նախնիս ի համբաւութեան երով տիս։ — Տեառն Ներսեսի առացեալ է զԱռակքս վասն ուրախութեան մարդկան։

Բանասէրի մէջ (1903, *էջ* 207) *կարծես կը համարի որ Յիսուս Որդւոյ Ա. տպագր.ը եղած ըլլայ ի Կ. Պոլիս Աբգարու ձեռքով* 1569-*ին։ Չգիտեմ ուրկէ կ'իմանայ։*

Ներսեսի Շնորհալւոյ «Յիսուս Որդի» (ուսում. Ֆեթթերի). — *Տեօ Ֆերբեր, «Հայկական աշխատասիրութիւնք», հտ. և գործեալ Հանդ. Ամսօրեայ* 1898, *էջ* 140-144 *Տաշեանի գրութիւնն այս գործին առթիւ.* — 1899, *թ.* 1, *էջ* 27 (7.), *ուր Տաշեան Ֆեթթերի Շնորհալիէն գերմաներէն արձակ թարգմանած* 13 *տաղերու մասին կը գրէ, որմէ կ'արտատպեմ հետեւեալը.*

«... Այս ներածութենէն ետքը կու գան Շնորհալւոյ 13 *տաղերուն գերմ. թարգմանութիւնք։ Ոմանց սկիզբը հայագէտ համառօտ տեղեկութիւններ ալ գրած է, մեծաւ մասամբ այն տաղից չափերուն մասին։ Թարգմանուած տաղերն են՝ Տաղ Ծննդեան «Տէր փառաց» հն (տպ. էջ* 372-74), *«Ի նոյն։ Երգ նոր աւետեաց», (տպ.* 374-75), *«Ծաղկազարդին. Տիրական տօնիս» (տպ.* 380), *«Ի խաչելութիւն Տեառն՝ Ծարաւեալ» հն* (386-88)։ *Յարութեան տաղը «Նստեալ կանայքն» և իր «Յորդորակն»* (395-97), *«Ի նոյն Նոյնապէս ընդ Հօր» և իր Յորդորակը* (398-400), *Աւետեաց տաղը՝ «Բարբառ աւետեաց»* (365-66), *«Ի նոյն. Մայր Աստուծոյ Մարիամ»* (367-68), *Փոխման յորդորակը «Անարատ տաճար և առաքաստ լուսոյ»* (409-412), *«Ի սուրբ Առաքեալսն»* (423-26), *«Ի սուրբ Մարգարէս»* 428-30), *Մարտիրոսաց երկար յորդորակը՝ «Բանին աւետաւոր» հս* (443-46), *Յովհ. Կարապետին՝ «Անմարմնոցըն հրեղինաց» հն* (446-49), *որով կը լմնայ թարգմանութեանց շարքին հետ նաև յօդուածը։ — Թարգմանութիւնն առ հասարակ յաջող ու ճշգրիտ է, այնպէս որ Շնորհալւոյ տաղից իմաստից վսեմութիւնն, հնութիւնք և ուժգնութիւնք պահուած է, մանաւանդ թէ տեղ տեղ կարծես աւելի բացայայտ ցոլացած»։*

Յիշուած տպագր.ը Վենետկոյ 1830-*ի տպագրութիւնն է։*

— *Գիրք Որ ի Մնացորդացն Յիսուս Որդւոյ Գրոցն Տեառն, Ներսիսի, Կլայեցւոյ, Տնօրինեալ, Աստանօր, իմն, ի տպագրութիւն, Շնորհօք Տեառն Որ ի ծննդենէն Քրիստոսի ՌՇՀ և Է, և ի հայոց ՌՃԻ և Զ Թուականք գոլ, ի սեպտեմբերի Ժ և Գ դիպելոյ սակի և Գիւտ խաչին Յիսուսի Երեխայրեցաւ ի փառս բարեբարութեանն։ Եւ զցանկն Գրոցս, ի վերջքն Գտցես, Եւ կամեցելումն քո Սիրեցելովդ զբօսնուցուս ով ուսումնասէր հոգիս փեսէրի ազիզ. Առէլֆէմ նազիս, Քէրզէնտի ֆարիս, Ներբոեանք, Կենսատու սուրբ խաչին, Զոր մեծ քահանայապետն աստուծոյ, և Հովին քաջ Տէր Ներսէս Տարսոնեան* (!), *Շարայարեալ Ոտանաւոր Զափ։ Առ ի սուրբ հօրէն մերմէ Գաւթի անյաղթ փիլիսոփայի Որ ասէ։*

Ճակատին չափակը փայտափոր պատկեր մը չորս փոքր բոլորաձև պատկերներով, ունենալով մէջտեղը «խորհրդ ՄԾՀՐՇ», և դիմացէն կը սկսի ոտանաւոր «Բարձրացուցէք» ճառը. և յետոյ ուրիշ երկու ոտանաւոր խաչափայտին վրայ որ ի Թէքիրտաղ, և ի սուրբն Հեղինէ, (հաւանական է նոյն իսկ հրատարակչէն՝ Երեմիա Չէլէպիէն), և ապա Շնորհալւոյն Ներբողն առ երկնային զօրս, որմէ վերջ այլևայլ համառօտ ոտանաւորներ, «Ըստ տօնից տէրունականաց Երգեցեալ Յետ գիշերապաշտմանն Զոր և մեք երեխայքի Եկեղեցականաց Ընծայեցաք։ Լաթիֆ Շէրին Մունասիպ, Երգեա Քաղցրիկ Եա՛ Հավիզ»։ Առանցմէ վերջ ցանկ գրոց նախընթացներուն և վերջիններուն, վասն զի ցանկէն վերջն ալ կան խաղեր և ոտանաւորներ չորեքկարգեան ըստ այբուբենից հայերէն տառկախաւ, և վերջընթեր էջին մէջ հեղինակին անունը սապէս կը գրուի։ «Պաղի անան Թէվէքքիւլէմ, լաթֆըն կեօրսւլ չօ՛ք իշխաալ, պէհճէթընէ Պաղի իրէմ Եա՛ լաթիֆ սուհ իրէ՛ մի եա՛ (Երեմիա)»։

Այս տպագրութիւնը մէկն է այն երկու գրքերէն, զորս կը յիշատակէ Գրիգոր դպիր Մարզուանցի Յայսմաւուրքի յիշատակարանին մէջ։

Գիրքը փոքր 8°, *մանրագիր, խառնիխուռն՝ անհարթ և անյարիր, վեց թերթ, առանց միակարգ թուահամարի, այլ իւրաքանչիւր թերթ առաջ հայերէն գրերով նոր նոր թուահամար ունի՝ ա—մզ, յետոյ դարձեալ ա—մզ, հն. որոնց գումարը* 96 *էջ կ'ըլլայ։*

— *Թուղթ ընդհանրական. Ա. տիպ ի Ս. Պետերբուրգ, յամի* 1788։

Գիրք Որ կոչի Ընդհանրական. Արարեալ Սրբազնասուրբ Հայրապետին մերոյ՝ Տեառն Ներսէսի Շնորհալւոյ։ Որ պարունակէ յինքեան զուղղափառ դաւանութիւնս՝ և զանստերիւր աւանդութիւնս կարգաց՝ Հայաստանեայցս՝ Սուրբ Եկեղեցւոյ. եւս՝ զհոգեշահ խրատս, և զփրկաւէտ պատուէրս՝ առ ամենայն ցեղ կացութիւնս՝ Եկեղեցականաց՝ և Աշխարհականաց։ Տպագրեցեալ ի Վեհափառ Հայրապետութեան՝ Լուսացնցող և Քրիստոսակերպ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ Տեառն Ղուկասու Երիցս երանեալ Սրբազնասուրբ կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Հրամանաւ՝ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ Ծայրագոյն Նուիրակի, Ռուսաց երկրի՝ և յամենայն հիւսիսային կողմանս եղեալ ազգիս հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնորդի՝ Սանահնեցի Երկայնաբազուկ Արղութեանց՝ Իշխանազնեայ Տեառն Յովսեփայ Սրբազնագունեղ Արք եպիսկոպոսի։ Որոյ արդեամբն իսկ տպեցաւ՝ ի յօգուտ մանկանց Եկեղեցւոյ՝ Սիրելի Ազգին իւրոյ։ Յամի Տեառն 1788. *ի մայիսի* 1։ *Իսկ ի թուին Հայոց՝ ՌՄԼԷ։ Ի կայսերապերճ Մայրաքաղաքս Սանկտպետերբուրգ։ Ի տպարանի խալդարեանց խօջամալի որդի՝ ի քրիստոս հանգուցեալ Պարոն Գրիգորին։ Հրամանաւ կառավարչացն բարեկարգութեան։*

Յէջն գ-մզ յառաջարան՝ «Յովսէփ անարգին Արք Եպիսկոպոս»էն, ինչպէս կ'ըսէ. յետոյ Ներս. Շնորհալւոյ պղնձափոր պատկերը, և դիմացէն էջ 1 *կը սկսի «Ընդհանրական թուղթ»ը և կ'աւարտի յէջն* 76։ *Յէջն* 77-78 *ցանկ Ս. Գրքին, և «Նշանք Թագաւորացն Հայոց» (կնիքին վերև այսպէս տպուած), և տակը՝ «Վասն դատարկութեան տեղւոյն՝ եդաւ աստանօր՝ հայցուածական մեկնաբանութիւն՝ Նշանաց Թագաւորացն Հայոց»։ — Եւ ապա Ս. Մեսրոպի պատկերը, և դիմացէն՝ էջ*

79՝ կը սկսի Գիրք Երկրորդը, (թէեւ սկիզբը Գիրք առաջին գրուած չէր), յէջն 178. 179–180 յանկ. – Յէջն 181 Գիրք երրորդ, յէջն 276. 277–298 յանկեր։

Բովանդակութիւն Յառաջ գլխոյ Թղթոյս Ընդհանրականի. Առ համօրէն Հայաստան աշխարհ. – Առ կրօնաւորս որ ի Վանօրայս. – Առ Առաջնորդս Սրբոց ուխտից Վանականաց. – Առ Առաջնորդս Եկեղեցւոյ՝ որ են յաշխարհի, որ կոչին Եպիսկոպոսունք. – Առ Դասս Քահանայից. – Առ Իշխանս՝ որ ըստ աշխարհի. – Առ Զինուորաց դասս. – Առ Քաղաքականսն. – Առ Երկրագործս՝ և համօրէն ժողովրդականսն. – Առ կանանց դասս. – Սուրբ Թուղթք Տեառն Ներսիսի՝ առ Թագաւորն Հոռոմոց կիր Մանուէլ, Յաղագս միաբանութեան հաւատոյ՝ և կարգաց Եկեղեցւոյ. Պատճառ խնդրոյ միաբանութեան՝ Թագաւորին հոռոմոց Մանուէլի։ Եւ Սրբոց Կաթողիկոսացն Հայոց՝ Ներսիսի և Գրիգորիսի Թուղթքն՝ զոր գրեցին առ միմեանս. – Գիր հաւատոյ խոստովանութեան՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ գրեալ ի Ներսիսէ Արք Եպիսկոպոսէ՝ յեղբօրէ Տեառն Գրիգորիսի Կաթողիկոսի Հայոց, ի խնդրոյ գերապատիւ փեսայի՝ ինքնակալ Թագաւորին Հոռոմոց՝ Մանուէլի՝ Ալէքսի մեծի Պրոտոստրատորի, յորժամ եկ յարեւելս, և էր ի Մամեստիա մայրաքաղաքին Կիլիկեցւոց. – Թուղթ առաջին՝ Թագաւորին Հոռոմոց Մանուէլի՝ առ Սրբազան Կաթողիկոսն Հայոց՝ Տէր Գրիգորիս. – Պատասխանի առաջին Թղթոյն՝ Թագաւորին Հոռոմոց Մանուէլի, գրեալ Ներսիսի Կաթողիկոսին Հայոց. – Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ՝ գրեալ Ներսիսի Կաթողիկոսի հայոց, ի խնդրոյ Աստուածասէր Թագաւորին հոռոմոց Մանուէլի. – Նորին՝ յաղագս աւանդութեանց Եկեղեցւոյ. – Թուղթ առաջին՝ Թագաւորին հոռոմոց Մանուէլի՝ առ Տէր Ներսէս Կաթողիկոս հայոց, յաղագս խնդրելոյ զմիաբանութիւն՝ երկաբնչփոյս ազանց. – Պատասխանի թղթոյն՝ մեծի Թագաւորին հոռոմոց՝ Մանուէլի, գրեալ Ներսիսի Կաթողիկոսի՝ վասն ճշմարիտ դաւանութեան հաւատոյ՝ հայաստանեայց Եկեղեցւոյ. – Պատասխանի թագաւորական գրոյն՝ Տեառն Ներսիսի՝ երրորդ անգամ. – Պատասխանի Տեառն Ներսիսի Կաթողիկոսի՝ առ Տէր Միքայէլ Պատրիարքն. – Մահ Սրբոյն Ներսիսի. – Թուղթ Գրիգորի Կաթողիկոսի հայոց՝ որ զկնի Տեառն Ներսիսի յաջորդեաց զաթոռն, առ բարեպաշտ Թագաւորն հոռոմոց Մանուէլ. – Թուղթ Գրիգորիսի Կաթողիկոսի հայոց՝ ձայնակցութեամբ ընդհանուր ժողովոյ հայոց։ Պատասխանի Թագաւորին հոռոմոց Մանուէլի՝ յորում և ուղղափառ դաւանութիւն՝ ըստ խնդրոյ Արքային, ձայնակցութեամբ՝ և ձեռնագրով՝ ամենայն հայաստանեայց Եպիսկոպոսաց. – Թուղթ Գրիգորիսի Կաթողիկոսի հայոց՝ և ընդհանուր Հայաստանեայց ժողովոյ՝ գրեալ ի Կաթողիկէ Եկեղեցին Հոռոմոց, և յոր ի նմա՝ Սուրբ ժողովն։ Պատասխանի թղթոյն Միքայէլի Պատրիարքին, որ նախ քան զայս փոխեցաւ յաշխարհէ. – Մահ Սուրբ Թագաւորին Մանուէլի. – Սուրբ Թուղթք Տեառն Ներսէսի՝ Տիեզերահռչակ Հայրապետի, զորս ի ժամանակս ժամանակս՝ վասն կարեաց խնդրողացն՝ ի տեղիս տեղիս գրեաց. Տեառն Ներսիսի գրեալ պատասխանի թղթոյն՝ Պատրիարքին Ասորւոց Տեառն Միխայէլի. – Նորին Տեառն Ներսիսի թուղթ ի Կոստանդնուպօլիս, առ ոմն Պօղոս Քահանայ հայկազնի՝ ի Տարսոնէ Կիլիկեցւոց, որ գնացեալ էր անդ հոռոմացեալ, և բամբասէր զազգս մեր, ի ժամանակս Մանուէլ Թագաւորին, յորժամ հանդերձեալ էին միաբանել հայք և յոյնք, և նա գրեաց առ Տէր Ներսէս, և ի չքմեղս եղեւ իւրոյ մտացն. – Նորին Տեառն Ներսիսի առ Եպիսկոպոս և Վարդապետս հայաստանեայց, վասն սիրոյ և միաբանութեան ընդ յոյնս. – Նորին Տեառն Ներսիսի Կաթողիկոսի՝ պատասխանի գրոյ ուրումն, որ գրեալ էր առ նա բանս զկծանաց՝ յանդուգն լրբութեամբ. – Նորին Տեառն Ներսիսի՝ առ նոյն ժպիրհ. – Նորին Տեառն Ներսիսի՝ առ նոյն յիմարութեամբ և հպարտութեամբ լրբեալն. – Նորին Տեառն Ներսիսի Կաթողիկոսի՝ առ Վարդապետն Գէորգ. – Նորին Տեառն Ներսիսի Կաթողիկոսի՝ առ նոյն Գէորգ Վարդապետ. – Նորին Տեառն Ներսիսի Կաթողիկոսի՝ առ նոյն Գէորգ Վարդապետ. – Նորին Տեառն Ներսիսի Սուրբ Կաթողիկոսի և Տիեզերալոյս Վարդապետի՝ Գիր շրջաբերական՝ Առաքեալ ի կողմանս արեւելից ի կարս, զկնի նորակերտ Եպիսկոպոսի ուրումն, զորոյ զիրս ցուցանէ զանունն։ Յորս բանք զխտանիք խրատականք առաջնորդին, և քարոզ ողջաց առաջնորդելոյն ի նմանէ. – Նորին Տեառն Ներսիսի Կաթողիկոսի՝ թուղթ ի Սամոստիա քաղաք, յաղագս արեւորդեացն դարձի. – Ներսիսի Եպիսկոպոսի՝ եղբօր Կաթողիկոսի Հայոց Գրիգորիսի՝ պատասխանի թղթոյն Յակոբայ ուրումն Վարդապետի Ասորւոյ՝ ի Մայրաքաղաքին Մելիտինոյ Հայոց. – Նորին Տեառն Ներսիսի Կաթողիկոսի Հայոց՝ գրեալ բան մխիթարութեան առ վտանգեալսն մարմնով, որք յանբարեաց ոմանց նախատեալք եղեն, զոր ծանուցին նմա գրով. – Նորին Տեառն Ներսիսի առ Եպիսկոպոսունս՝ և Վարդապետս, և համօրէն դասս Եկեղեցւոյ։ Որք յաւուր տօնի արմաւենեաց ժողովեալք ի կոչմանէ Տեառն Գրիգորիսի Կաթողիկոսի՝ եղբօր նորին, ի ձեռնադրութիւն զնա Կաթողիկոսութեան Հայոց. – Թուղթ Տեառն Գրիգորիսի Կաթողիկոսի Հայոց, գրեալ եղբօր նորին Ներսիսի Արք Եպիսկոպոսի, հրամանաւ նորին ի միջագետս Ասորւոց՝ յամայք կոչեցեալ Նահանգին։ Յաղագս որ անդ մերոյ ազգի Քահանայից՝ հակառակութեանց ընդ միմեանս. ոմանց առել Աստուածութեանն բնութիւն չարչարեալ և մեռեալ ի խաչին ընդ մարմնոյն. Եւ ոմանց զմարմինն միայն. – Եւ ոմանց դարձեալ՝ ընդունելի լինել մատաղ, և ոմանց՝ արհամարհելի. – Եւ այլք եթէ դրախտն իմանալի է, և միայն օրինակաւ տնկեալ, այլ՝ ոչ ճշմարիտ էութիւն. – Եւ թէ եկեղեցի՝ ոչ շինեալն է ի մարդկանէ, այլ՝ մեք միայն. և մաշտոցն գիրք, և որ ի նմա կարգեալքն են, խաչ օրհնել՝ և եկեղեցի և այլքն՝ ոչ են ընդունելիք. – Եւ եթէ ի հակառակաց ոք ընդդիմաբանէ, յաղագս օծման Միւռոնին, որպէս թէ՝ աւելորդ է և անդէպ, և այլք սոյնպիսեաց։

Յետոյ կայ Ներսէս Լամբրոնացւոյ «Գրուած պատմագրաբար», են, ինչպէս և Թուղթիս յառաջորդ տպագրութեանը մէջ, զոր նշանակած եմ Ներսէս Լամբրոնացւոյ անուան տակ. Ս. Պետերբուրգի այս տպագրը վրիպմամբ չեմ նշանակած, և հոս կը դնեմ։

— Դրուագ Պատմագրաբար. Ի յաստուածահրաւէր փոխումն՝ Սրբազնասուրբ Հայրապետին մերոյ՝ Տեառն Ներսէսի Կլայեցւոյ, ոգեալ ի Ներսէսէ Լամբրոնացւոյ՝ յԱրք Եպիսկոպոսէ՝ Տարսոնու Կիլիկեցւոց։ Տպագրեցեալ ի Վեհափառ Հայրապետութեան՝ Լուսացնցուղ և Քրիստոսակերտ Սրբոյ՝ Աթոռոյն Էջմիածնի՝ Տեառն Ղուկասու Երիցս Երանեալ Սրբազնասուրբ Կաթողիկոսի՝ ամենայն Հայոց։ Հրամանաւ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ Ծայրագոյն Նուիրակի, ռուսաց երկրի՝ և յամենայն հիւսիսային կողմանս եղեալ ազգիս հայոց՝ Առաքելաշաւիղ Ա-

ռաջնորդի՝ Սանահնեցի Երկայնաբազուկ Արղութեանց՝ Իշխանազնեայ Տեառն Յովսեփայ Սրբազնազունեղ Արք Եպիսկոպոսի։ Յամի տեառն 1788. ի Մայիսի 1. իսկ ի թուին հայոց՝ ՌՄԼԷ։ Ի Սանկտպետերբուրգ։

Այս ճակատին չալակը ստանաւոր մը՝ գրուած՝ «Սակս դատարկութեան տեղւոյն». 301–էն կը սկսի և կ'աւարտի յէջն 316։ 317-336 վերջաբան, որմէ ինչ ինչ քաղուածօրէն կ'արտատպեմ.

«Վերջաբանութիւն՝ Լուսաչափիս Մատենիս, ճշգրիտ պատմագրաբար. փառք... որ զօրացոյցն զիս. և առ նմա՝ ոչ տկարանայ ամենայն բան. ամենազօր և ամենաբաւական կարողութեամբն իւրով՝ զօրացոյց զմեզ և կարողացոյց հասանել ի յաւարտ՝ տպագրութեամբ ի լոյս ածեցման՝ Ուղղադաւան և Ճշմարտասոյց՝ Սրբոյ Մատենիս, որ կոչի Ընդհանրական՝ Սրբազնասուրբ Հայրապետին մերոյ՝ Ներսէսի Շնորհալւոյ։ Ի յիններորդում ամի Հայրապետութեան՝ Լուսանկար և Քրիստոսահիմն Տաճարի Մօրս Լուսոյ Սրբոյ Գահոյն Էջմիածնի՝ Տեառն Ղուկասու Սրբազնասուրբ և Երիցս երանեալ Կաթուղիկոսի, և ընդհանուր ամենայն Հայոց՝ Քրիստոսափիլիան Պատրիարգի, և նորաքանչ յարկին՝ բանեաւ արփւոյն՝ և ընտաշէն տապանին՝ Յարաթուն Վեհապար, և ի Հոգւոյն վերաընտրեալ՝ Գերապայծառ փեսայի։ Եւ ի Վերադիտողութեան՝ Մեծի Մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ, Լուսակառոյց Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ Կաթնառուն Զաւակին, և Բնիկ Հարազատ Միաբանին, Տեառն Զաքարիայ Աստուածաբան Վարդապետին, Սրբազան Արհի Եպիսկոպոսին, և Ազգասէր Պատրիարգին։ Եւ ի յԱռաջնորդութեան՝ Տիրախնամ կողմանցս Հիւսիսայնոց՝ Յաբեթական տոհմիս՝ Աքանազեան սերընդոց՝ Հայկեան ցեղիս՝ ի յԱրամայ յառաջաեկելոց՝ ի Նախկին Լուսաւորչացն մերոց՝ Սրբազանից Առաքելոյն՝ ի Թադդէոսէ և ի Բարթողիմէոսէ՝ ի յազգիս Հաւատոս Քրիստոնէական՝ վերակոչեցելոյս, և ի Սրբոյն Գրիգորէ՝ մեր հօրոյ Լուսաւորչէ ի նոյն վերահաստատեցելոյս՝ Ազգիս Հայոց, Տեառն Յովսէփայ՝ Առաքելաշաւիղ և Աստուածարեալ՝ Սրբազան Արհի Եպիսկոպոսին՝ և Անձնադիր Հովուին. որ ի յետին այս ժամանակի՝ ըստ Սրբոյն Բարսղի Եօթնալոյս Հայրապետին Կեսարու, ոչ միայն՝ նախ վարուք փայլի որպէս զկայծակն, և ապա՝ բանիւք որոտայ՝ Նորահրաշ և Աքանչազան Վարդապետութեամբ... Իսկ Աստուած... հանդիպեցուցանէ ի Սանկտ Պետերբուրգ Կայսերանիստ Մայրաքաղաքի՝ ի յաստուածային առատաշնորհ յազարակի՝ ներածածկեալ անդին գանձուն, և երկնայնոց ցանկալի մարգարտին, իւրն ըղձից յատուկ նպատակ՝ նորակազմ և զարմանաշէն Տպարանի, ի ձեռն՝ բազմաց զօրութեանց՝ և յանկեղ դրուատից արժանաւոր՝ փիլիպպոսանման հոգէսէր՝ Պարոն Գրիգոր Խօջամալեան՝ ի յԱգնուական տոհմէ յառաջանաեալ խալդարեանին։ Որ յետ բարձման նստրչահին՝ ի քայքայեալ ցրուեցմանէն յաշխարհ ամենայն երկրին պարսից՝ մանաւանդ նորոյն ջուղայու, մեծի մասին ի հնդիկս պանդխտութեամբ ժամանելոյն ի միջի՝ և սոյն անձնս վրանելի՝ գտանիւր։ Որոյ ի մանկութենէ անտի՝ ըստ Պայազատական սերընդոյն իւրոյ՝ ազնուական մտախոհութեանն՝ ոչ այլ ինչ էր այնքան յարգի վարկեցման պատկանաւոր, քան թէ՝ աքանազեան սերնդոյս՝ զմեծահռչակ իմն՝ նոր տպարան հաստատել, Սմին իրի՝ չուեալ ի յերկրէն հնդկաց՝ յերկիր անգլիացւոց՝ ի հոյակապ քաղաքն Լոնդոն՝ անպատմելի տենչանօք՝ ի հանդիպումն սրտին բաղձանաց՝ իբրև դքաջ արծուի ի յորս խոյացեալ՝ արագ հասանէր։ Որպա-նօր՝ սակս սոյնոյ պիտաօգուտ առթի՝ տանելի ամաց միջոցաւ՝ ի կատար տափելոյն վերաժամանման՝ որոնմամբ ջանացողութեան՝ անդադար պարապեալ, յետ բազմաց ճարտարարուեստ քանդակագործաց՝ պղնձապատեայ տառս, զհայր և զմայր գրիցն՝ ինքեան առ՝ յանձնառու ոչ լինելոյն, ցուցիչն ամենայն կարօտութեանց՝ որ պատրաստ է ընաւից՝ ի բաւական դժուարութիւնս ըմբռնելոց՝ առատապէս նպաստ մատուցանել, ի յանակնկալ ժամու՝ որպէս ինքնանուէր որս՝ զարհեստաւոր ոմն անգլիացի՝ սմա ընդառաջ պատահեցուցանէ, որ համայն ներտրամադրեալ խորհրդոյն՝ կատարումն տալոյ յանձնառութեամբ՝ ըստ յառաջադրութեան իւրոյ՝ գերիս տեսակ գիրս պղնձատեայս զարմանալիս նորանոր յօրինեալ՝ ի ձեռս բերէր՝ անխոնջօրէն գրամալաթութեամբ։ Յետ որոյ՝ իբրու աստուածային անծախելի ինչ գանձ՝ զնոյն փորագրեալ գրեանն՝ ընդ իւր ունելով՝ յերկիրն Ռուսաց՝ ի Կայսերանիստ և Տիրախնամ Մայրաքաղաքն Սանկտ Պետերբուրգ՝ անճառելի հրճուանօք և անպատում ուրախութեամբ՝ յեռադարձեալ ի Լոնդոնէ՝ վերաժամանէր։ Յորում ժամանակի՝ և պանծալին ի յարհիս՝ ընտրեալն ի բիւրոց՝ Իշխանազնեայ Իշխան՝ Հոգէընտիր Գէոն կողմանցս հիւսիսայնոց՝ Յովսէփ Առաքելաշաւիղ Արհի Եպիսկոպոսն ի յօծումն յանուն Սրբոյ Կուսին Կատարինէի՝ զարմանազան չքնաղակերտութեամբ կառուցեալ Եկեղեցւոյն ի Սանկտ Պետերբուրգ Կայսերանիստ և Հանրահռչակ Մայրաքաղաքն՝ մեծաւ հանդիսաւորութեամբ գիմէր. և պատահեալ սոյն հազուագիւտ՝ չքնաղընտիր՝ ի մեծագին մարգարտանման Տպարանիս՝ (որ ի ձեռն բերեալ՝ անդուլ ջանացողութեամբ՝ և անխնայ դրամոց մսխեցմամբ՝ Երջանիկ անձին Պարոն Գրիգոր Աղնուի՝ Խօջամալեան սերնդոյ՝ և գերազով խալդարեան տոհմի). որոյ հնարեցմանն և ինքն փափաքէր՝ ոգւով չափ ըղձացեալ, որպէս նոր նորոգեալ ի յոգի՝ զուարճախառն բերկրանօք երգէր ընդ Եսայեայ թէ՝ ուրախ լեր անձն իմ՝ անապատ ծարաւի, զի անմահութեան ջուր տպագրութեան՝ ի յանապատի բղխեաց, որով՝ զեստոց Սրբոյ Հոգւոյն շնորհաց՝ ի ծարաւուտ ազգս հայոց՝ առատապէս ոռոգել կայ առաջի. ծաղկեսցի առաւելապէս այսուհետև և ցնծասցէ Եկեղեցիս հայաստանեայց, և ժողովուրդ իմ՝ տեսցէ զփառս Տեառն, և զքաղցրութիւն Աստուծոյ մերոյ։ Յետ որոյ՝ և զապաւէն ինչ ինչ առձեռն բանից՝ յառաջադրեալ՝ ամաժամայն լրութեամբ անպակաս տեսանէր։ Իսկ՝ ի մեծագոյն գործոյ անթերութիւն՝ կարօտէր բաւարում տպարանն՝ ինչ ինչ փորուածոց գրեանց՝ և քանդակմանց պատկերաց չքնաղագեղից, սակս որոյ՝ վերստին առ նոյն արհեստաւոր՝ ի քաղաքն Լոնդոն՝ զխնդրանաց գրեալ գիր՝ որով առ ինքն ածել, և զթերութիւնն ի ընաւին կատարելութիւն՝ ի ձեռն նորին վերահաստուցեալ, ի պատրաստական ծառայութիւն՝ Լուսաւորչական ազգիս Հայկազնեայ՝ պատսօղ ակնարկութեան՝ ի բարին առաջադրեցմամբ՝ Երիցս երանեալ Սրբազան Արք Եպիսկոպոսիս՝ զինքն հանդերձէր։ Եւ օրէ ի յօր՝ զմշտնջենաւոր հաստատութենէն նորաշէն տպարանին՝ զըղձալին հոգացողութեամբ՝ զկեանս իւր եդեալ՝ և զամենայն գրեանս ծախիւք իւր տպեալ՝ զգործն բարի՝ յառաջացուցանէր։ Բայց՝ ի մէջ այսքան անտանելի դժուարակիր ծանրութեան գործոյս՝ յամենատեսէ անօգնական թողեալ Աղնուական Անձն այսմիկ, զինչ օն իւր՝ յոր յառաջադոյն ձեռն արկ, ի փախճան հասուցեալ, ըստ ամենայնի զոյացուցեալ ի ներքոյ ծանրագունի պարտուց տպարանին՝ կաշկանդեալ թողայր։ Որսոյ՝ տեսեալ անձնադիր Հովուին՝ և Սրբազան Գլխոյն՝ զթողուն անօժանդակ Բանաւոր Գառին, նորակառոյց տպարանին՝ ի յաշ-

տարխան և կամ ի նորն Նախիջևան անդրափոխման' զգիր գրեալ' սիրով հրաւիրէր: Եւ մինչ ի լոյս ածօղն այնոյ Տպարանիս' խոհեմն ի խորհուրդս' համեստ ի բանս, և կատարեալն ի բնաւին յառաքինութիւնս' վերոյգրեալ Այնուածին Պարոն Գրիգոր խալգարեան' ի ճանապարհորդել ի մերս կոյս նախապատրաստիր հնազանդեալ ախորժական հրաւիրանաց Սրբազանին, հատու մաղնիան Աստուածային զօրութեան' կապօղն և արձակօղն' իմանալի և զգալի բնութեանս, զառաջադրութիւնն կիսակատար' զմեզ որբանման թողեալ ի յողբ և ի յարտասուս' առաքարչեաց ի վերկոյս: Իսկ ծանրութիւն' փարձառոդայն յայտնի գործոյն' բոլորի ապարանին' հանդերձ անտանելի պարտիւքն դըմաւարաճարելեաւ, դիզացեալ մեալ ի վերայ' այսմ գործոյս սիրով սիրահարեալ Երջանկափառ վերոյգրեալ Սրբազան Արք Եպիսկոպոսին. որ աննեխմբ անդադար ջանայզդութեամբ' ի մեծագործ նորատեղծ իրողութիւնս' յամենայն զօրութեան յառաջամղելն զինքն' ըստ Այնուակն Պայրդատաղնեայ նախնեացն իւր բարոյ' կեանք ինքեան ունի համարել' ի պարծանս և ի փառս Հայկազունեացս ազգի: Բանզի' որ այսքան մեծագործութիւնս արար' և անեղն է մշտնջենաւորն' Այրս Աքանչելի' ունի բնաւորեալ ի յԱզնիւ արեան իւրում' ի զերահռչակ հաւուց իւրոց յառաջանկրեալ, եւս ճշմարտապէս' ըստ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Հրեշտակական Վարդապետի' ի զեղեցկատեսդն ատոց ընծայեղեալ, ի նախնեացն բուսեալ, ի հարցն վեհից երեւեալ, և ի տոհմէ հզօրէ յայտնեալ. զի ի յեօթներորդ դարուէն Հայոց' ի նահանգէն Վրաց' ի Մեծահռչակ Իշխանանիստ Գիւղէն Սանահնու, ի յազգէ Նախարարայն Հայոց' Զաքարեայ Ամիր Սպասալարին Հայոց և Վրաց, որդւոյ Իշխանին Սարգսի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարեայի' ունի Երջանիկ Այրս Աստուծոյ' զշառաւիղումն. որք ի հնումն անուանէին Երկայնաբազուկք, որպէս և նորդեանս վերաձայնին ի Վրաց, իսկ' ի Հայոցս կոչին Արղութեանք:

Արդ' 'ազգք արամեան և սերունդք Թորգամեան' որք վայելեցէք զայսքան բազմազան բարութիւնս' և վայելելոց էք տեսամբ' ի ձեռն այնոյ Աքանչելագործ Սրբազան Արք Եպիսկոպոսին, տալ' ի յիշատակումն մաքուր աղօթից ձերոց' յիշման արժանի համարեսջիք զըստ մարմնոյ Պապն սորին' զԻշխան Գօրման, և զհանին Լէյլին, և զծնօղն սորին (որպէս թէ' վասն քաղցրութեան պաղոյն ճաշակման' զծառոյն չնորհակալիլով), զԻշխան Շիօշ Բէկն ի տարապարտուց զըսպանեալն ի յանօրինաց, և զՊարկեշտագնաց Մայրն' զԲէթէվան Տիկինն, և զվաղաթառամ զեղբարսն' ընդ քուէրն, զԻշխան Մովսէսն, զՅարութիւնն, և զՄարիամ, և զայլ ի Քրիստոս հանգուցեալ զազգայինսն: Յիշեսջիք և զվերոյգրեալ Սրբազանի' զկենդանի եղբարսն' զԻշխան Պարոն Բէժան Բէկն, և զբարեջաւելից զորդիս նորին' զԻշխան Սօլօմօնն, զՏիրայր Յարութիւն, զԳաւիթն և զՆիկողայոսն, և զորդիս Մովսէս մեծ եղբօրն իւր' զհանգուցեալ Շիօշն, և զԶաքարիայն, և զպարկեշտասուն քոյրն զՍաւադանն, և զհօր եղբարսն իւր' զհանգուցեալսն ի Քրիստոս' զԱսլամազն, զԱւթանդիլն, և զՓիրալին, և զորդիս նոցին' զպայծառ Իշխանսն' ըզՊարոն Եսային, զՊարոն Սոլոմոնն, և զՊարոն Թադայն. որք ամենեքեան տարագիր լեալք ի բնիկ հայրենեացն իւրեանց' ի բարեկի երկրէն Սոմխէթու, այսինքն հայաստանու, ի մեծահռչակն Սանահնու (ուր' չքնաղ և մեծափառ Վանքն նորին' յանուն Սուրբ Աստուածածնայ' ի Լուսաւորչէն հիմնեալ, ի յԱշոտայ արքայէն բաղբատունեայ' և ի մեծ Թագուհւոյ նորին Անուշն կոչեցելոյ' հաստատեալ, և հուսկ յետոյ ի բարեպաշտն նախնեաց' այնոյ Սրբազանի' Զաքարեայ Ամիր Սպասալարէն հայոց և վրաց' և ի յորդւոց նորին' բազմապատիկ զեղազարդարեալ, որ կայ այժմ վասն մեղաց մերոց ամայի, կարօտ վերին օղնականութեանն), նորդեանս բնակին ի Թիֆլիզ, ընդ հովանեաւ խնամոց' Բարեգոր Արքային Հիւսիսոյ, ըստ ամենայնի յառաջադէմ և յարգի լեալք յաչս նորին Արքայական մեծութեանն, և հայրական սիրով գգուեալք ի նմանէ:

Եւ զի' մի զուցէ աղնուախոհ միտք բանասէր անձանցդ հայկազունեաց' յընթեռնուլն զպատմագրաբար վերջաբանութիւնն' Աստուածայնոյ Մատենիս' ատն և ընդ հակամիտեցի, և խուզաքննչիր անձն' ըստ իւրոյ ախորժակին' զբանս մատուցինս յառաջ բերցէ, ոմն' աւելի իմն չափաբաբբութեամբ' զերազանցին արժանաւոր անձն Աստուծոյ' Սրբազան Առաջնորդիս' զմեծագործութեանցն զըրուած կարծելով, և ոմն' զանձին (որ խոնարհութեամբ ըստ քրիստոսի է զարդարեալ) պարծանք վարկելով. ոմն' անտարոյզ յօղուած' զիրն համարելով, և ոմն' մարդահաճոյ երեսպաշտութեամբ զրուատեալ' քարոզելով. վասն որոյ' թողեալ մեր' զերկարաբան պատմութիւնս' հաւաստի տեղեկիր արանց' Սամուէլ Անեցւոյն, Գօշ Մխիթարին, Վանական Վարդապետին, Կիրակոս Վարդապետին' և այլոց պատմագրաց, մանաւանդ' ազգին վրաց' արժանահաւատ պատմչաց, որք խուզաքննչիւքն յատուկ յատուկ' ի գիրս իւրեանց' զբարեպաշտ յառաջադէմութենէ ի յարանց քաջաց և երեւելեաց' Սրբազան Գիտոյս' անուանս վիպմամբ' ի յարժանաւոր ներբողս բարեբանեն. միայն հարկեցաք ի ճշմարտութիւն զրուցոյս չափաւորել ի վախճանի' Աստուածային Տաղիս' և ի յըստոյգ վկայութիւն մերս բանից' զճշմարտաբան հաւատոյ Վրկայական Նորին Արքայական Բարձրութեանն' Քրիստոսապսակ Հերակլ Բարեպաշտ Թագաւորին' ամենայն Վրաց. որ ինքնին' ամենահաւատարիմ ուղղախօսութեամբն վկայէ ի գրուածս իւր' զՎեհանձնութենէ' և զԲաջատոհմութենէ այնոյ Սրբազան Արհի Եպիսկոպոսի և հայրական կողմանցս' ի Հօղւոյն վերակոչեալ Քրիստոսափառան Առաջնորդիս, և ստորագրեալ ձեռամբն' իւրով յաւելեալ Ամենաբարձր Թագաւորական Կնքաւ նշանակիքէ ի վախճանին. զոր օրինակի այսպէս:

Ողորմութեամբն Աստուծոյ' մեք երկրորդ Հերակլ' Արքայ Վրաց, և Արքայ կախէթու, և Գըլխաւոր փառանդ մըցխէթու, ախթալէկու, Իշխեցօղ խազախու, Իշխօղ բօրչալուու, Իշխօղ շամըթիլու, Իշխօղ կակու, Իշխօղ շաքու, Իշխօղ շըրւանու, Տիրօղ և Հրամայօղ գանձակու, երեւանու և այլոց: Որովհետեւ ամենայն երեւելի ազգարանութիւն' ի հնութենէ ազգաց հաստատի, և երեւելի նախնեօք, վասն որոյ' չէ անպատճառ և անտեղի' որ ի մէնջ վկայութիւն տացի Արղութեանցն, որք են Երկայնաբազուկք. զի են ի միջոյ սոմխէթու, այսինքն հայաստանու, և ի վերխայու, այսինքն վրաստանու, ազգ մեծ և երեւելիք, որպէս վկայեն Պատմագիրքն մեր, և մանաւանդ' Թագուհեաց Թամարայ և Ռուսուդանայ պատմութիւնքն, վասն Զաքարեայ Իշխանին և մեծ Սպասալարին, և Յօհաննէս Աթա Բէկին, որոց հաւատարմութիւնն' որ առ Բագրատունի Թագաւորսն վրաց, քաջայայտ իսկ է յամենայն արձանագիրս. եւս առաւել' ի վերայ Իշխանական Նշանաց նոցա. որ դրոշմեցեալ է այսպէս. Վահան' տեղն արծաթով, ի վերայ նորա Գրօշակ' որպէս նշան սպարապետութեան, յորոյ վերայ նկարեալ կայ Պատկերն Ամենասուրբ Աստուածամօրն, որ ընդ ձախմէ ընդգրկեալ ունի զՈրդին իւր' զՅանն Հօր յաւիտենականի, և ի ներքոյ պատկերին' յաջ կողմն կայ

կարկառեալ Բազուկ հանդերձ Սրով, իբր բացայայտիչ քաջութեան ազգաց իւրեանց, և յահեակ կողմ Վահան՝ երեսն ի վայր եդեալ, և ի վերայ նորա Նիզակ՝ ուղղակի եդեալ. և այսու ամենայնիւ են պսակաւորեալ՝ վերոյ Իշխանական Պսակաւ։ Զայս ամենահռչակ ազգաբանութիւնն բացայայտեմք ամենեցունց, թէ այսպիսի պատուելի անձինք են եղեալք, որպէս բացայայտեցաք իսկ ի սմա ըստ պատշաճին, բոլորովին արդարութեամբ և նշանաւ։ Եւ խնդրեմք յԱմենամեծ Կայսերական դրանէն՝ ամենայն Ռուսաց, զի ի կարգս Ռուսաց Պայծառածին Իշխանաց՝ համարեսցեալք իցեն Երկայնաբազուկ անուամբ։

Հերակլ Արքայ Վրաց։

Այս է Բարձր Արքայական
Կնիքն Մեծ՝ Թագաւո-
րացն Բագրատունեաց։

Շնորհեցաւ յԱրքունական Քաղաքս մեր ի Թիֆլիզ, յամի Տեառն 1783. յօգոստոսի 28. յերեսուն իններորդի ամի Թագաւորութեան մերում։

Արդ՝ ահա ըստ վերոյգրեալ յատկական նշանացն Քաջազնութեան Սրբազան Պետրոսի, քանդակեալ զարմանալի յօրինուածով զԿնիքն՝ ի բացայայտութիւն բոլորից ազանցդ Հայկազեան Լուսաւորչականից՝ եդաք աստանօր։ Որպէս զի՝ ծանիցէ աշխարհ ամենայն, թէ՝ ո՛չ բնաւին անձամբ ձգտեալ ի յայս նշանակութիւնս՝ առնի՝ զԿնիքն և զանունն, այլ՝ ունի ի բնուստ՝ ի յերեւելի իշխանացն իշխան նախնեացն իւրոց՝ ի բարեպաշտութեամբ զարդարելոցն, և ի յաստուծոյ՝ ի բարձր իշխանութիւն՝ արժանապէս վերակոչեցելոցն։ Ուստի՝ արժան դատեցաք և ի վախճանի բանիս՝ շարակարգել և զմի միայնութիւնն՝ զարդարութեանէն և զկատարեալ առաքինութեանէն Վեհանձն Հաւոյն սոյն Սրբազանիս, հնազոյն պատմագրքին վրաց, որ գրէ այսպէս։ Ի ժամանակս Թամար Թագուհւոյն վրաց՝ եհաս տրամութիւն մեծ։ Քանզի՝ փախեաւ Զաքարիայ Ամիր Սպասալարն՝ որդի Սարգսի Ամիր Սպասալարի։ Որ էր այր՝ յոյժ մեծացեալ և ամենայն առաքինութեամբ լցեալ. զոր ազգային Թագուհին Թամար՝ և ամենայն մարդիկք տանն վրաց։ Քանզի՝ ի վաղուց հետէ՝ ո՛չ ոք էր երևեալ նման նմին՝ ի մէջ իշխանաց սոցա։ Եւ զի՝ յազգէ ևս էին Երկայնաբազուկ Արտաքսիսին։ Եւ էր ինքն հաւատովն Քրիստոնեայ, և ազգաւ Հայ. և մանաւանդ՝ ամենայն աստուածային և մարդկային առաքինութիւնս լիւ ունէր յանձին։

Այսքան առ այս բաւականասցի։

Արդ՝ ի վախճանի բանիս՝ յիշեսջիք ի լուսափայլ յաղօթս ձեր՝ զնախկին սահմանօղն, և զառաջնահայր բազմաշխատ ազնուութեամբ առաձեռն բերօղն սոյնոյ Տպարանիս՝ զանձն երանելի և զճշմարտարժանն բազմաց գրուատից՝ զլուսաւորեալ հոգի Պարոն Գրիգորն, և զհայրն նորին զՋուղայեցի խալդարեանց՝ Ագնիւ Խօջամալն, զմայրն զմէրխաթունն, զպապն խօջայ յօհաննէսն, և զհայր պապուն՝ զխօջայ գրիգորն, ընդ նոսին և զեղբարսն՝ զաղայ ծատուրն, զյօհաննէսն, և զզաքարիայն. և զքուերսն նորին՝ զմամախաթունն, զաղաւոն, և զմարիամ խանումն, և զեղբօր որդին՝ զխաչիկն, որք արդէն բարի հաւատովք հանգուցեալք են ի քրիստոս։ Յիշեսջիք և զկենդանի եղբայրն՝ սոյն լուսաւորեալ հոգւոյ ազնուայս՝ զպարոն սահրադն, զփէրիջան քոյրն, զեղբօր որդին՝ զպարոն սափայէլն, և զհեզաբարոյ կողակիցն զԿատարինէ Զաքարիայ Ագնուհին, և զամենայն արեանառու զաւակունս իւր։ Նաեւ՝ յիշեսջիք ի Տէր և զձեռնատուն աշակերտն՝ և զհարազատ որդին՝ սոյնոյ Սրբազան Արհի Եպիսկոպոսի՝ զԿարապետ ժիրաջան Վարդապետն Բայազիտցի որ ի Նախիջևան գոլով Յաջորդ Սրբազանին՝ աշխատի ի վերայ շինութեան՝ Սուրբ Խաչ Վանիցն, և զԱւետիս Քահանայն Վարդապետն Եդեսարդեցի, և զԱւագ Սարկաւագն իւր զԳրիգորն Նախիջևանցի, և զՅօհաննէս Սարկաւագն Չէքէզ։ Յիշեսջիք ևս և զարժանաւորն յիշման՝ զվերակացուն տպարանիս՝ զյարդարիչն սորին, և զուղղագրօղն գրքոյս՝ զԿոստանդնուպօլսեցի Թադդէոս Աստուածիմաստ Վարդապետն՝ Մահտեսի Մարուքեան. որ վասն գործոյ ինչ եկեալ ի յուսումէլի և անտի ի Մօկիով Լեհաց, փափագօղ եղեալ տեսութեան՝ Սրբազան Արհի Եպիսկոպոսիս, որոյ ի լսելն՝ խակոյն հրամայեաց սիրով՝ գալ առ ինքն ի Նախիջևան, և ի տեսանելն՝ հայրական գթով ընկալեալ՝ ըստ մարդասէր բարուցն իւրոց, և մեծագոյն սիրոյ արժանացուցեալ՝ հաճեցաւ առ ինքն ունել. որոյ և զճարտարամտութիւնն տեսեալ՝ և զգիտանի գոլն յառաջադրութեանն իւրոյ՝ ինքնայօժար կամօք յանձնեաց նմա՝ զամենայն զկառավարութիւնն՝ և զուղղագրութիւնն տպարանիս այսմիկ, և առաքեաց ի Սանկտ Պետերբուրգ, նախ՝ զի տեսցէ անդ զԼուսաւորիչս զայս Մատեան, և երկրորդ՝ զի վերահասու լինիցի բոլորից զործեացն տպարանին և պարագայն նորին։ Քանզի՝ որպէս յիշեցաւ ի վեր անդր՝ յետ վախճանի առն աստուծոյ՝ Պարոն Գրիգորին՝ մնաց տպարանն ի նեղքոյ պարտուց հազար երկու հարիւր թումանի, (որ է քսանուտն քսակ). իսկ՝ Արի Հովիւս այս և Ազգասէր Սրբազան Արք Եպիսկոպոսս՝ յանձն էառ հատուցանել զպարտսն հանգուցելոյն՝ օժանդակութեամբ բարեսէր ազգիս մերոյ հայկազնոյ, և տիրեալ տպարանին՝ տանիլ և հաստատել ի նորին Նախիջևան. որպէս և տէր իսկ կամեցաւ և յաջողեաց։ Այն զի՝ չուեալ ի Սանկտ Պետերբուրգ Թադդէոս Աստուածիմաստ Վարդապետին՝ վերահասու լեալ ամենայն հանգամանաց տպարանին՝ գրեաց մի ըստ միոջէ առ Սրբազան առաքօղն իւր, որով և զմիտս իւր հաստատեալ Սրբազանն չու արարեալ գնաց ի հաշտարխան՝ առ բարեպաշտօն ժողովուրդս վիճակի իւրոյ, զի զօգնութիւն ինչ թեթևացուցման՝ մեծագոյն պարտուցս ծանրութեան՝ կարողանայցէ գտանել, որ և յաջողեաց տէր։ Զի անձինք բազումք՝ բարեպաշտութեամբ զարդարեալք, և ի յազգաշահ իրողութիւնս՝ ուրախութեամբ սրտի և նպաստիւք արդեան՝ ձեռնամուխք (որոց զանուանսն գրեմք աստորեւ) կարեկցեալ օգնեցին՝ ի փառս միոյն աստուծոյ, և ի պարծանս Լուսաւորչական Հայկազունեաց տոհմի, ինքնայօժար կամեցողութեամբ և առատ տուօք, նախ՝ Ազնուածին Իշխանքն, և ապա՝ Օրհնեալ ժողովրդականքն, որոց առաջինթաք եղեն՝ Բարձր Բարեծնունդ Ազնիւ Աղայ Յօհաննէսն Եղիազարեան, և Բարձրապատիւ Մանուչարեանքն՝ Ազնիւ Աղայ Մարգարն, և եղբայրն նորին՝ Ազնիւ Պարոն Փիլիպպոսն, որոց զկնի կաթողին ըղձանօք հետևեցան՝ Նադվօռնի Սովետնիկ Ազնիւ Պարոն Յօհաննէսն Խօջամալեան, և կենակիցն նորին Ազնուուհի Մարիամն՝ դուստր սարգիս աղայի. Պարոն Մկրտումն գալաբեան. հանգուցեալ տէֆտուտամ Մարտիրոսի դստերքն՝ Եղիսաբէթն և Կատարինէն, և փեսայքն՝ Պարոն Կեօրկին և Պարոն Սողոմոնն. Պարոն Միրզայն, և իւր եղբայր Պարոն Աւետիքն. Պարոն Գրիգորն բօրազանցի գալաբեան. ղզլարցի մահտեսի գրիգորեան՝ Պարոն Յօհանջանն. զօրզանենց ազնիւ Պարոն Գաւիթն. Պարոն Գասպարն մուրադեան. չամախեցի Պարոն Գաւիթն գրիգորեան. Պարոն Յօհաննէսն ջուղայեցի հայրապետեան. Պարոն Յօհաննէսն ջուղայեցի ստեփանեան. Պարոն Սահակջանն աբրահամեան. Պարոն Գէորգն տարզանցի. ազուլեցի Պարոն Եսային նազարեան. Պարոն Ու-

կանն քանաքեայն, և իւր եղբայր Պետրոս. Պարոն Ստեփանն էտիլխանեան. Պարոն Յովսէփն Ջուղայեցի. Պարոն Խաչիկն Ջուղայեցի. Պարոն Հայրապետն Քիմեցի. Պարոն Պօղոսն Մելքիսեթեան. ի բարբայ բնակեալ Սարգիս Քալանդարի որդի՝ Ազնիւ Պարոն Վարդանն, ձեռամբ Տէր Ստեփան Մաքրասուն Քահանային՝ ի հրնգիկս վասն օգնութեան՝ վերադրեալ Արքայանին չուեւլոյն. Պարոն Պետրոսն՝ Լուսահոգի Տէր Յօհաննիսեան չարխատանեաց. ի Քրիստոս հանգուցեալ Զաքիզ խան Ստեփանովնայն. Պարոն Մակար խուտապաշեանն. Ազնիւ Պարոն Յովակէմն լալայով. Կատարինէ Զաքարովնայն Սօֆեայ պղամարովնայն. հանգուցեալ սարաֆեան Մովսէսի կողակից Եղիսաբէթ Միքայէլովնայն. Եղիսաբէթ Անտօնովնայն Ջուղայեցի Տիրացու Մանուկն տէր աստուածատրեան. Պարոն Պաղտասարն տէր ղազարեան. Թիֆլիզեցի և ի գլլար բնակեալ տէրնուէրեանց պարոն եսայու որդի՝ Պարոն Մովսէսն. Պարոն Տրդատն գրիգորեան. Պարոն Զուրաբն յօհաննիսեան. Պարոն Յօհաննէսն պապազուլով. Պարոն Աւէտիքն կարապետեան. Պարոն Յովակէմն աստուածատրեան. Պարոն Յակոբջանն խընասարեան. Պարոն Սարգիսն մարտիրոսեան. Պարոն Մկրտումն սարգսեան. Պարոն Վլասն. Պարոն Գէորգն անդրիասեան. ֆապրիկանդ Պարոն Յակոբն յովսէփեան. Պարոն Աւթանդիլն հայրապետեան. ընդ որս մասնակից գտան և Արքակոն Կարգաւորքն վեհակիս՝ ծերունի Յօհաննէս Վարդապետն Ջուղայեցի. ծերունի Տէր Զաքարն. Տէր Ստեփանն, և Տէր Սուքիասն. որք և ամենեքին առատօրէն ձեռնտուութեամբ՝ հաղորդ գտան առ այս աստուածահաճոյ և ազգաօգուտ գործ, և օգնեցին ըստ կարի իւրեանց. որ և լցուցիչն ամենայն կարօտութեանց աստուած՝ զուրս համայնիցն ի փառս իւր վերնկալցի, զփոխարէնն յազգէ յազգ՝ հազարապատիկ և բիւրապատիկ ինքեանց պարգևեսցէ, և զանուանս նոցառեցն՝ ի գիրս կենդանեացն՝ անջնջելի ի յիշատակ յաւիտենական արձանացուսցէ: Զի օգնականութեամբ սոյն բարեպաշտից՝ կարողացաւ Բարեացապարտ Արքազանն՝ զապարանի պարոն թեթեւացուցանել, և բերեալ ի Նորն Նախիջեւան հաստատել ի մէջ քաղաքութեան՝ անխառն ի յայլոց՝ Ազգիս Հայոց. և յառաջ թէ՝ այսուհետեւ եւս զօգնութիւն գտանելոց է Թիացեալ պարտուցն ի Սիրելի Ազգէդ իւրմէ և ի յօրհնեալ ժողովրդոցդ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ յամենայն տեղիս՝ և յամենայն երկրում բնակելոցդ և ի սիրավառելոցդ՝ այսպիսի ազգաօգուտ գործոյ. որոցդ զանուանս ի մասնակցիլն՝ ունի յայլ մատեանս արձանացուցանել ի մշանջենաւոր յիշատակ: Յիշեսջի՛ք և զվերադրեալ Թադդէոս Աստուածիմաստ Վարդապետին հարազատ ազատուր և հոգեւոր որդի զՏիրացու Յարութիւնն համբարձումեան չէղին խառոյ հիւարցի, որ ամենայնիւ հաւատարմութեամբ ազատաբար՝ ամենայն հարկաւորութեանցն՝ կատարիչն ապարանիս: Նաեւ յետոյ յիշեսջի՛ք և զարժանին յիշատակելոյ՝ զնախկին սահմանողին ապարանիս՝ Լուսահոգի Խալդարեան Պարոն Գրիգորի՝ զհոգեծին զաւակն և զձեռնտուն հարազատ՝ զՊարոն Մկրտումն Աստուածատրեան, որ ի պատանեկութենէ իւրմէ՝ ո՛չ դադար աշխատանս կրեալ է և կրէ մինչ ներ գործարանիս, ի պայծառութիւն Հայկական տոհմիցս՝ սիրով ծառայեալ, թէ ի ձուլելն թէ ի հարթելն, թէ ի չարելն և թէ ի ցրուելն զկապարեայ տառսն: Եւ որք յիշէքդ՝ յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ամէն»:

= Բ տիպ. Թուղթ ընդհանրական. Արարեալ երից երանեալ սուրբ Հայրապետին մերոյ ան. Ներսէսի Շնորհալւոյ: Բաժանեալ յերիս գիրս: Յառաջնումն են թուղթք ընդհանրական գրեալ առ համօրէն ազգս առ եկեղեցականս և առ քաղաքականս՝ վասն ուղիղ հաւատոյ և բարի վարուց: Յերկրորդումն՝ թուղթք միաբանութեան գրեալ առ յոյնս՝ վասն միութեան եկեղեցւոյ: Յերրորդումն՝ թուղթք առանձնականք գրեալ առ մասնաւոր անձինս՝ ի զանազան պէտս: Տպագրեալ յար և նման հնագոյն և ընտիր օրինակին, որ գրեալ էր ի թուին հայոց՝ ՉԾԱ: Վեհափառ հրամանաւ Տեառն Կարապետի աստուածիմաստ Արք եպիսկոպոսի և սրբազան Պատրիարգի արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ: Արդեամբք և ծախիւք Աստուածասէր և բարեհամբաւ մահտեսի Աբրահամ ամիրայի Թերզեանց ակնեցւոյ: Ի գործարանի իւրում: Ի Հասան փաշայ խանն: 1825. ի Կոստանդնուպօլիս. ՌՄՀԴ Աշխատասիրութեամբ. Տ. անդրէաս վարդապետի Նարինեան ակնեցւոյ:

Յառաջաբանէն. «... Այս ընդհանրական մատեան՝ կարեւոր ամենայն հաւատացելոց՝ տպագրեալ ի պետերբուրգ յամի տեառն՝ 1788. մի էր ի ծանրագին գրոց. վասն որոյ մեծահաւատ և բարեհամբաւ մահտեսի Աբրահամ ամիրայն Թերզեանց՝ շարժեալ ի սիրոյ զոր ունէր առ համահրեշտակ Հայրապետն մեր սուրբն Ներսէս Շնորհալի, փոյթ կալաւ նորոգ սրբագրութեամբ լի և անթերի ի տիպ արձանացուցանել յօգուտ ազգին իւրոյ: Սմին վասն և զհնագոյն ընտիր զաղափարն՝ զոր իբրեւ զանձ անգին պահեալ ունէր ի հայրենի տանդիցն՝ Արքունի վաճառականն վսեմափառ Սիմօն ամիրայն Ջամջեան, բարեմիտ կամօք խնդիր արարեալ առ ի նմանէ ընկալաւ. գործ ձեռատր գրչի Թովմաս աբեղայի, բոլորագիր ի թուղթ բամբակեայ. որ զկնի ՃԻԹ ամաց երանելի հանգստեան սուրբ Հայրապետին՝ ընդօրինակեալ էր յանապատն որ կոչէր Խորին. զորոյ զյիշատակարանն եդաք ի վախճան մատենիս. յորմէ պակասեալ էին թուղթք ինչ, որպէս նշանակեցաք անդանօր: Ահա այսմ պատուական օրինակի բաղում խնամով և զգուշութեամբ զհետ գնացաք ի սրբագրութեան մատենիս. միայն զկէտս և զանաւոր լծորդառաս ինչ ըստ այժմեան սովորութեան հարկեցաք դնել... Եւ ուրեք ուրեք բառք ինչ՝ որք յօրինակի մերում պակասէին, բայց ի տպագրին գտանէին, յարմար համարեցաքն ի նոցանէ՝ յաւելուլ և ի մերումս, փակեալ ի մէջ ընդգաձևի»:

«Վերջարանութիւն զծողի զաղափարիս, յորոյ վերայ եղեւ տպեցումն գրքոյս. փառք սուրբ Երրորդութեանն՝ Հաւր և Որդւոյ և Հոգւո՛յն սրբոյ. ա՛յժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն: Յանկութիւն մտաց և փափագ սրտի բաղմագիմի օրինակաւք տեառնին բաժանեալ ի վերայ բնութեանս. ամենն փառաց և մեծութեան, և այլ ամենն յաղթութեան և տիրապէս հասանելոյ ի կամս սրտի: Իսկ ես Թովմաս և յետին ի ծառայս ծառայիցն Քրիստոսի թամաս մեղապարտ և անարժան և սուտանուն աբեղայ՝ զամենայն ցանկութիւն սրտի և զխորհուրդ մտաց և զյաւժարութիւն կամաց երկրորդ համարեցայ առ այս Աստուածային զանձիս ստացումն, և զսա ստացայ ինձ յիշատակ անջնջելի և մեծութիւն անկողոպտելի: Եւ զի յամենայն գործոց բարեաց թափո՛ւր և ունայն եմ, և ո՛չ զոք ունիմ ի մարմնաւոր ազգէ ինձ յիշատակ զկնի մահուան իմոյ, ըստ մարգարէին թէ՝ երանի որ ունիցի զաւակ ի սիոն և ընդանիս յերուսաղէմ: Եւ իմ վասն այսր յուսոյ՝ ըստ ըղձից փափագման ոգւոյ իմոյ աշխատասիրեալ բաղում

տառապանաց այսր և անդր յածմամբ յուղէի զբաղձալիս իմ։ Վասն զի ոչ համագումար զոհ՝ որպէս տեսանէք ի միասին ժողովեալ, այլ որպէս միոյ մարմնոյ մասունս ի բազումս յաւշեալ՝ առ ումն ձեռք և առ ումն ոտք անջատեալք ի միմեանց, երկարեալ և եառրեալ և եւս առելի ճանապարհաւք։ Իսկ իմ ի բաց եդեալ զտկարութիւն մարմնոյս՝ զբոլորն լրմամբ առացայ, և ձեռն ի գործ արկեալ մեղանելով մատամբ իմով ձարտեալ գրեցի զսրբոյ և զտիեզերալոյս վարդապետին հայոց և զերկրորդ լուսաւորչին տէր Ներսեսի զգեղեցկաբան վարդապետութիւնն որ առ ընդհանուր հայկազունսն, և զթուղթն որ առ թագաւորն յունաց Մանուէլ վասն միաբանութեան, զխնդիրն և զընդդէմ պատասխանիսն, և զայլն բազումն՝ որ յաղագս պէսպէս և զանազան իրաց ասացեալ է բաղձալի ուսումնասիրաց անձանց. ժողովեալ զբազումն ի մի հաւաքմամբ դնել միմեանց առ ընթեր՝ իբր զծաղիկս ի պսակ բոլորեալ, զի լիցի պատճառ հոգեւոր զբաւսանաց ամենախակ և անկատար մանկութեան իմոյ, և ի սփոփանս սգաւորս սրտիս՝ որքան Աստուածային կամաւք ի մարմնի ապաւորիմ. և զկնի հրաժարման յաշխարհէս առ երկնաւորն՝ յիշատակ բարեաց մնալոյ ինձ և ծնաւղաց իմոց և ամենայն զարմից կենդանեաց և մեռելոց, զորս աղաչեմ յիշել ի Տէր Քրիստոս թողութեան մեղաց։ Արդ գրեցաւ սա ի հռչակաւոր անապատիս որ կոչի խորին՝ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Գրիգորի և սրբոյ Նշանիս և այլ սրբոցս՝ որ է մերձ ի սահմանս բարձրբերդոյ և լեռնկլային անառիկ դղեկացն, ի թուականիս հայոց եօթն հարիւր յիսուն և մէկ։ Ի թագաւորութեանն հայոց Հեթմոյ, զոր եդիր զեղբաւրորդին իւր զպարոն Թորոսի որ կոչի լեւոն՝ մանուկ տիաւք յաթոռն իւր, և ինքն ի կարգ կրաւնաւորութեան մտեալ, և խորագէտ իմաստութեամբ և նախախնամ մեծահանճարութեամբ յանձն առեալ հոգալ զաշխարհս մինչև յարբունս հասցէ թագաւորն։ Եւ ի հայրապետութեանն տեառն Գրիգորի, զորոյ զկեանս սոցա տացէ տէր բազմամեայ կենդանութեամբ եկեղեցւոյ իւրում սրբոյ ի հաճոյս կամաց իւրոց։ Եւ արդ՝ աւարտեցաւ սա ի դառն և յանբարի ժամանակի՝ յորում ազգն իսմայէլեան առին զաշխարհս յաւար և ի գերութիւն տարապակաւ, և անխնայաբար ի սուր սուսերի մաշէին զամենայն քրիստոնեայս։ Նաև նախ քան զսոսն ամ զրութեան սորիս՝ գերեալ եղև ի տաճկաց հայրապետական աթոռն հռոմկլայ, յորմէ և եմ ես նուաստս, և տարաշխարհիկ եղեալ ի հայրենի տեղւոյ իմոյ յերբեմն ի վաղնջուց ամաց ճոխութեամբ փառաւորեցելոյ՝ ի նշանաւորն սահմ դղեկէ, յորմէ ամաւ և կիսով նախ քան զառումն պատահեաց ինձ ելանել և գալ յաշխարհս կիլիկիոյ՝ յաւուրս տեսութեան սուրբ Գերեզմանին Քրիստոսի։ Զոր վարկանիմ թէ և ոչ ըստ իմոյ արժանեաց, այլ վասն անչափ խնամոցն տեառն դիպեցաւ այս՝ ոչ տեսանել ի ժամանակի պաշարման դղեկին զանհանդուրժելի նեղութիւնն, որոյ և լուրն պակուցանէ զլսաւղս։ Որ և բազումք, մանաւանդ ընաւքն՝ ննդակիցք իմ և ազգայինք ի պէսպէս մահս և ի գերութիւն վարեցան՝ մեծ թշուառութեամբ արտաքս քարշեալք ի մայրենի գրկաց պանծալի դղեկին։ Յաղագս որոյ յոտս սրբոցդ և իմաստնոցդ անկեալ, պատահելոցդ սահմ սուրբ մատենիս, և աւգտեցելոց ինչ ի խոշոր աշխատութենէ սորի, որոց մասք արժանի առնել յիշման ի մաքուր աղաւթս ձեր զծնաւղսն իմ. զբարեբարոյ հայրն իմ զՅոհաննէս, և զհաւրեղբարսն իմ, զԳրիգորէսն, և զԳրիգորն, և զպարավարն, և զեղբարսն, զմանուկն, և զկոստանդին, որ սրախողխող եղեն յանաւրինաց։ Նաև զհաւրքաւրաղուստրն իմ և զհոգևոր մայրն մարեմթադ՝ սնուցիչ մանկութեան իմոյ, և զամենայն ազգատոհմն իմ և զերախտաւորսն. և զիմ անարժանութիւնս ի տեղափոխ յածմամբ այսր և անդր վառքեալ վասն ըստ մեղաց իմոց բազմաթշուառ բերմանց ժամանակիս. զի աղաւթից ձերոց միջնորդութեամբ՝ վճարեսցուքն մահ՚՚ (Յայսմ տեղւոջ յիշատակարանիս գերիս թուղթս պակասեալ գտաք, որք երեքն ի միասին կարեն հաւասարիլ միոյ թըղթոյ այսմ տպեցելոյս. իսկ որ վերստին սկսանի՝ դարձեալ ի զաղափարէն է)։ և անհնարին տրտմութիւն պատեաց զիս, և ես այլում տեղւոյ թողի և ժամանակի։ Քանզի թուականիս հայոց՝ ՉԽԹ. եղև սով սաստիկ յերկրիս կիլիկեցւոց և յերկարեաց մինչև ցայս ամ. որ է թիւ՝ ՉԾԱ. և այս ի տեառնէ է վրէժխնդրութիւն յաղագս պէսպէս չար գնացից մերոց. քանզի մեղաք տեառն աստուծոյ մերոյ յամենայն գործս մեր, և անաւրինեցաք ըստ ամենայն գնացից մերոց, և առ հասարակ ամենեքեան խոտորեցաք և ի միասին անպիտանացաք՝ ըստ մարգարէին. մանաւանդ որք զառաջնորդականն ունին աշտիճան՝ աւտարացան միանգամայն ի ճշմարտութենէ, և ծառայք եղեալք չար տերանց՝ մամոնայի սահմ և այլոցն որ նմին հետեւին, և լռեցին լեզուք նոցա ի խրատուէ և ի յանդիմանութենէ. և զրեթէ ամենայն բարեաց հետեւմունք լռեցին յամենեցունց։ Արդ ի սոյն յայսմ բազմավրդով ժամանակիս աւարտեցաւ սա ի փառս աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեան»։

Ապա «Նշանք թագաւորացն Հայոց» կնիքը, և «Աղերսախառն մեկնաբանութիւն նշանաց թագաւորացն Հայոց» նման Ա. տպագրութեան. և ապա Յիշատակարան.


Հայկական երգաբանութիւն. Շարական. *Hymnologie arménienne; Le Charaghan.* I. Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի հայկական ժամակարգութեան. La Transfiguration de notre Seigneur J. Ch. dans l'Office des Arméniens. – II. Տօն պայծառակերպութեան. La fête de Transfiguration. – III. Կանոն առաջնոյ աւուր պայծառակերպութեան. Canon de première journée de la Transfiguration. – IV. Կանոն երկրորդ աւուր. Du deuxième jour. – V. Կանոն երրորդ աւուր. Du troisième jour. – Յաղագս կոչման Հոգւոյն սրբոյ. L'invocation du Saint-Esprit.

Երգք բարգմանեալք եւ մեկնաբանեալք որ ծառայեն պատմութեան վարդապետականաց յարեւել-

Hymnes traduites et commentées pour servir à l'histoire du dogme en Orient. I. Դաւանութիւնք յերգս Պենտեկոստէին. De la doctrine professée dans les hymnes de la Pentecôte. – II. Յաղագս յօրինուածութեան երգոց շարականաց, ոճոյ նոցա և աղբերաց. De la composition des hymnes, de leur style et de leur sources. – III. Թէ ովք են հեղինակք շարականաց Պենտեկոստէին. Des auteurs des hymnes de la Pentecôte. – IV. Շարական առաջնոյ աւուր Հոգեգալստեան. Hymne du premier jour de la descente du Saint-Esprit. – V. Շարականք չորից աւուրց որ զկնի կիւրակէի Պենտեկոստէին, շարադրեալք ի Ներսիսէ հայրապետէ. Hymnes des quatre jours qui suivent le dimanche de Pentecôte, composées par le patriache Nerses. – VI. Շարականք վեցերորդ և եօթներորդ աւուրց, շարադրեալք ի Ներսիսէ Լամբրոնեցւոյ. Hymnes de sixième et septième jours, composées par Nérses de Lambron.

Կանոն տօնից սրբոյն Յովհաննու Մկրտչի. Canon des fêtes de Saint Jean-Baptiste. I. Կանոն ծննդեան Ս. Յովհաննու Մկրտչի. – Ա. Շարական որ պարունակէ զգովութիւն և զվարս սրբոյն Յովհաննու Մկրտչի. Canon de la nativité de S. Jean-Baptiste. Cantique contenant l'éloge et la vie de Saint Jean-Baptiste. – II. Աղօթամնման երգ ուղղեալ առ Աստուած. Cantique adressé à Dieu en forme de prière. – III. Երգ գովաբանական. Cantique de louange. – IV. Երգ հայցելով զողորմութիւն աստուածային. Cantique pour implorer la miséricorde de Dieu. – V. Երգ ի պատիւ եռանձնեայ աստուածութեան. Cantique où l'on glorifie chaque personne de la Trinité. – VI. Երգ պաղատանաց. Cantique de l'invocation. – VII. Երգ ի պատիւ եկեղեցւոյ. Cantique en l'honneur de l'Eglise. – Երկրորդ կանոն սրբոյն Յովհաննու Մկրտչի. Second canon de St. J. Baptiste.

Կանոն սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի. Canon des saintes Apôtres Pierre et Paul.

Կոստանդիանոս եւ Թէոդոս յարեւելեան եկեղեցւոջ. *Constantin et Theodose* devant les églises orientales. Ուսումնասիրութիւն քաղեալ ի յոյն և ի հայկական աղբերաց. Etude livrée des sources grecques et arméniennes. – I. Յիշատակ մեծին Կոստանդիանոսի յեկեղեցիս Յունաց և Հայոց. Mémoire de Constantin le Grand dans l'Eglise grecque et arménienne. – II. Յիշատակ Թէոդոսի մեծի ի հայ եկեղեցւոջ. Mémoire de Theodose le Grand dans l'Eglise Arménienne.

Զրոյց սրբուհւոյն Հռիփսիմեայ եւ ընկերացն վկայուհեաց. *La Legende de Sainte Rhipsima et de ses compagnes martyrs.* Շարական սրբոց Հռիփսիմեանց. Hymne à Ste. Rhipsima et à ses compagnes. – Շարական ի պատիւ Վարդանանց մարտիրոսաց. Cantique en l'honneur de Vartan et de ses compagnons, guerriers arméniens, martyrs de la foi. – Առաջին և երկրորդ շարական սրբոց Վարդանանց. Ier et IIme Charaghan aux saints Vartaniens.

Հանգստեան շարականք. Աղօթք յեկեղեցական պաշտամունս Հայոց վասն ննջեցելոց. *Les Hymnes funèbres;* Prières liturgiques de l'Eglise arménienne pour les morts. I. Հանգստեան երգք շարականաց, անոնց ժամանակն, հեղինակը. Թարգմանութիւն երգոցն. Chants funèbres du Charagan: de leur âge et de leur auteur; traduction. – II. Երգ Ս. Ներսիսի Շնորհալւոյ վասն ննջեցելոց, և լրացուցիչ երգք շարականաց. Hymne de St. Nerses le Gracieux pour les morts, et cantique complémentaire du Charagan. – III. Կարեւորութիւն հանգստեան շարականաց յեկեղեցական պաշտամունս Հայոց. Importance des chants funèbres dans le culte et la liturgie des Arméniens. – IV. Աղօթք վասն հանգուցելոց և անոնց հետեւանք ի դաւանութեան հայ եկեղեցւոյ. La prière pour les morts, et ses conséquences dans la confession de l'Eglise arménienne.

Հայրախօսութիւն. *Patrologie.* I. Ս. Գրիգոր Լուսաւորիչ, հիմնադիր Հայաստան եկեղեցւոյ, և մի յառաջին մատենագրաց. St. Grégoire l'Illuminateur, fondateur de l'Eglise d'Arménie, et un de ses plus anciens écrivains. – II. Ս. Գրիգոր Նարեկացի։ Մատենագրական և կենսագրական տեղեկութիւնք. St. Grégoire de Naregh. Notice littéraire et biographique. – III. Ներսէս Դ. կաթողիկոս Շնորհալի՝ նկատեալ որպէս մատենագիր. Le Patriarche Nerses IV, dit Schnorhali ou le Gracieux, envisagé comme écrivain.

Պատմութիւն. *Histoire.* Գլխաւոր յիշատակարանք պատմական մատենագրութեան Հայաստանի. Des principaux monuments de la littérature historique de l'Arménie. – I. Եղիշէ, պատմագիր Ե դարու. Elisée, historien du Vme. siècle. – Ա. Կենսագրութիւն Եղիշէի. Biographie d'Elisée. – Բ. Պատմութիւն պատերազմի Հայոց ընդդէմ Պարսից. Histoire de la guerre des Arméniens contre les Perses, sous Vartan. – Գ. Տեսութիւնք Եղիշէի. Ընտրութիւն ոճոյ. Vues d'Elisée; mérite de son style. – Դ. Կարեւորութիւն պատմութեան Եղիշէի. L'intérêt des faits dans l'histoire d'Elisée. – II. Յովհաննէս Զ կաթողիկոս, և իր Հայոց պատմութիւն. Jean VI Catholicos, et son histoire d'Arménie. – Ա. Ժամանակ Յովհաննու Զ. ոճ գրութեան. Epoque de Jean VI; style de son ouvrage. – Բ. Աղբերք Յովհաննու Զ ի վերայ հին պատմութեան Հայաստանի։ Մանրամասն պատմութիւն ամբարձման Բագրատունեաց, և իւրն ժամանակակից իշխանաց. Sources de Jean VI sur l'histoire ancienne de l'Arménie. Histoire détaillée de l'élévation des Pagratides et du règne des princes dont il fut contemporain. – Գ. Յովհաննէս Զ. պատմիչ քրիստոնէութեան Հայաստանի. Jean VI, historien du Christianisme en Arménie. – Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ. Բելգիացի առաջնորդք յառաջին խաչակրութեան. Chronique de Mathieu d'Edesse. Les Chefs Belges de la première Croisade. – I. Մատթէոս Ուռհայեցի, և պատմութիւն առաջին խաչակրութեան շարադրեալ ի նմանէ. Mathieu d'Edesse, et sa relation de la première Croisade. – II. Գործք և արութիւնք Կոտփրետոսի Պուլոնի և այլոց բելգիացի իշխանաց. Faits et gestes de Godefroi de Bouillon et d'autres princes Belges. – III. Պօղդուին Ա. և յաջորդք նորա ի վերայ աթոռոյն Երուսաղեմի. Bauduin Ier et ses successeurs sur le trône de Jerusalem. – IV. Դատաստանք Մատթէի Ուռհայեցւոյ ի վերայ փռանկաց. Des jugements de Mathieu d'Edesse sur les Francs. – V. Աղբերք հայկականք վասն պատմութեան Մողոլաց յԱսիա, մինչեւ ի ժամանակագրութիւն Թովմայի Մեծոփեցւոյ. Les sources arméniennes pour l'histoire des Mongols en Asie, jusqu'à la Chronique de Thomas de Medzoph; XIII–XV siècles.

Յաւելուած. Պատմագրութիւն առ Ասորիս և Հայս։ Ասորական մեծ ժամանակագրութիւն Գրիգորի Բար-Եբրէոս. La composition historique chez les Syriens et chez les Arméniens. La Grand Chronique Syriaque de Grégoire Bar Hebreus.

Պարթէլըմի որ Սէնդ–Իլէր՝ Իմաստնոց օրագրին մէջ (1886. յ'էջ 730), կ'ըսէ. «... Երբոր մեծ համակրութիւն պարտական է այս փոքրիկ քրիստոնեայ ժողովրդեան, որ գրեթէ մոլորած՝ Ասիոյ քիչ ծանօթ մասի մը մէջ, գիտցեր է հնդեւտասն դարերէ ի վեր պահել իր հաւատքը, ի մէջ այնչափ վտանգաց և այնպիսի հարստահարութեանց..., իրենց կրած այսչափ աղխից և ցուցած հաստատամտութեան համար՝ արժանաւորք են ամենայն մտադրութեան։ Ուրիշ պատճառաւ մ'ալ՝ մեր մտադրութեանն կ'արժանանան։ Կրօնական ու պատմական տեսակէտով մեծ արժէք ունեցող մատենագրութիւն մը ունին, որով կարող են մեզ ուսուցանել շատ բան այն յեղափոխութեանց վրայ որոց ականատես եղաւ Ասիոյ այս մասն և շրջակայ գաւառք. չենք ուզեր խօսիլ հայկական պատարագամատոյցին վրայ՝ որ քիչ հետաքննական չէ»։ Ասոնց վրայ աւելցնենք Նեւի հետեւեալ համակրութեամբ լի խօսքերն՝ իր այս գրուածին յառաջաբան ծանօթութեանց մէջ. «Պատմութեանց մէջ դժուարագիւտ կրկնակի երեւոյթ, հայկական ժողովուրդը, զօրաւոր՝ զարմանալի հաւատարմութեամբն թէ՛ իր բարուցը և թէ հաւատոյ, յերկարակեաց եղաւ քան զպատերազմողս և զյեղափոխութիւնս՝ որ կերպով մը զինք տասնորդեցին. և մատենագրական ու եկեղեցական լեզուին մէջ ունի նշանակ մը իր կենդանութեան և առհաւատչեայ մը մշտնջենաւորութեան։ Կարծես թէ սահմանուած է մանանկից ըլլալ օր մը Ասիոյ վերածնութեան»։

Հայկական ուսմանց նկատմամբ իր այլ և այլ յօդուածներն հրատարակուեցան Մուզեոն ուսումնաթերթին մէջ, որ համազգային հանդէս մ'է, և գիտութեանց ու դպրութեանց հետամուտ ընկերութենէ մը 1882էն ի վեր կը հրատարակուի ի Լուվէն։ Գլխաւոր աշխատակիցներէն մէկն էր Պ. Նեւ, որ թէ՛ իրեն և թէ այլոց հետեւեալ յօդուածոց կը հանդիպինք. «Քանի մը տեղեկութիւնք Վանայ և ուրիշ արձանագրութեանց վրայ ի Ա. Հ. Սէյսէ և ի Քերովբէ Պատկանեան». (Quelques notices sur les inscriptions vanniques et autres, par M. A. H. Sayce et feu M. Kéropé Patkanian de St. Pétersbourg). – «Ծանօթութիւն յԷմիլէ որ Տիյոն՝ Հայաստանի մատենագրական–պատմական մատենախօսութեան վրայ ի Քերովբէ Պատկանեան». (Comptes rendu par M. Emile de Dillon de l'esquisse bibliographique de la littérature historique de l'Arménie, par M. K. Patkanian; St. Pétersb. 1880) յառաջին հատոր Մուզէոնի 144–145։ – «Ռէստէյնկ (Ռէստէն Պատկանեան) Քննադատութիւն Աշխարհագրութեան Մովսէսի Խորենացւոյ հրատարակելոյ ի Հ. Արսէնէ Սուքրի, ի Վենետիկ 1881». (Critique par M. de Restaing de la Géographie de Moïse de Khorène, editée par le R. P. Arsène Soukry; Venise 1881)։ – Երրորդ հատորին մէջ (1886) Կ. որ Հարլէս կը քննադատէ Տէյոնի ռուս լեզուով հրատարակուած հայկական ուսումնասիրութիւնքը (Etudes), ցուցնելով հայերէնին յարաբերութիւնքը երանեան լեզուաց հետ. (Rapports de l'Arménien avec les langues éraniennes; Karkoff, 1884). – Փ. Նեւ ալ նոյն հատորին մէջ կը հրատարակէ «Տեսութիւն» մը Տիւլորիէի ձեռքով գաղղիարէնի թարգմանուած Ասողկայ պատմութեան վրայ, որոյ առաջին մասը տպագրեր էր Գարրիէր. (Compte-rendu de l'histoire d'Açoghig, traduite par Dulaurier et publiée par M. Carrière). – 1887 տարւոյն մէջ գեղեցիկ քննադատութեան մը կը հանդիպինք. Պատկանեանի հրատարակած Թովմայի Արծրունւոյ պատմութեան. (Critique de l'édition de Patkanian de l'Histoire de la maison des Ardzrounis, par le Vartabed Thomas Ardzrouni. St. Pétersbourg. 1887)։ – Ի հատորն եօթներորդ (յ'էջ 358–364) Նեւի մէկ հատուածը՝ հայերէն լեզուով եղած քանի մը նորագոյն հրատարակութեանց վրայ. (Quelque récentes publications de littérature arménienne)։ Իսկ ի 1889 տեղեկութիւն մը՝ Վիէննայի Մխիթարեանց Հանդէս ամսօրեայ ուսումնաթերթին վրայ. (Notice sur la Revue mensuelle = Hantess Amsoria = des Mékitaristes de Vienne). Այն ատեն կը ծանուցանէր Նեւ թէ 1888 հոկտեմբեր ամսէն ի վեր Նեղոս անուանով շաբաթական հայ օրագիր մը կը հրատարակուէր յԱղեքսանդրիա Եգիպտոսի՝ Օշականի Անտոնի խմբագրութեամբ։ Բայց այս օրագրին հրատարակութիւնն քիչ ատենէ խափանուեցաւ, որովհետեւ տպարանին հայ տէրը տէր քահանայն ընդդատուեցաւ երթալ ի Կալաց՝ հոն նոր թերթ մը հաստատելու գիտաւորութեամբ։

Յուղարկաւորութեան օրը՝ վերջին ողջոյն հրաժեշտի տուաւ բազմավաստակ գիտնականին Կ. Լումաս (Ch. Loomas) Բելգիոյ ակադեմիոյ դրականական բաժնին տեսչի փոխանորդը՝ հետեւեալ խօսքերով. «Փելիքս Նեւ՝ արդէն ծանօթ էր իր մեծակշիռ երկասիրութեամբք ի վերայ սանսքրիտ մատենագրութեան. և որոց մէջ ժամանակաւ երիցագոյն է Ուշաստնասիրոշրիշն ի վերայ Ռիկ-Վետայի որ 1842է ի վեր հրատարակուած էր։ Իր գիտնական հրատարակութեամբք՝ դեռ յերիտասարդութեան, մանաւոր տեղի մը գրաւած էր հնդկաբիրայ մէջ, որով ակադեմիոյ դրականական բաժնին մտադրութիւնը իւր վրայ դարձուց, ընտրելով զնա նախ ի 1860 իւր թղթակից և ապա ութ տարիէն անդամ։

«Անենը չէ գնահատելու իր գրեթէ կէս դարու բազմաթիւ երկերը՝ որ յաջորդաբար հրատարակուեցան ակադեմիոյ գործոցը մէջ և այլուր։ Այս գաղափարին առջեւ՝ ցաւագին համակրութեան զգացմունք մը կը յիշեցնէ ձեզ հանդուցելոյն անձը մանաւանդ՝ քան իր գրուածներն։ Կարելի՞ է ինձ չմոռնալ այս զգացման, որ իրեն աշակերտակիցն եմ ի համալսարանի, ընկեր ակադեմիոյ և բարեկամ։ 1837ի թուականն էր։ Քսանամեայ էինք այն ատեն։ Մի և նոյն գրասեղանին դիմաց նըստած, մի և նոյն եռանդեամբ, թէպէտև ոչ հաւասար յաջողութեամբ, կը հետեւէինք արեւելեան մատենագրութեանց ներածութեան դասընթացքին։ Ուսումն մ'էր այն որ նոր հորիզոններ բացաւ Փելիքս Նեւի, և անոր գիտնական կոչումը յայտնեց։ Այնպիսի հասակի մը մէջ՝ յորում շատք դեռ եւս իրենց հետեւելու ճանապարհը կը փնտռեն, գիտցաւ ընտրել զիւրն, և այն ատենէն տուաւ ինքզինք արեւելեան ուսումնասիրութեանց, որ իր հաստատուն պարապմունքն եղան և կենացը պատիւը... Չեմ կրնար չյիշել թէ որպիսի՛ մասն ունեցաւ արեւելեան բանասիրութեան դպրոցի մը հիմնարկութեան, որ իր գիտնական հեղինակութեանց երկերով այնպիսի պայծառ լոյս մը ձգեց Լուվէնի համալսարանի և Բելգիոյ վրայ։ Լոկ իմաստուն արեւելագէտ մը չէր Նեւ։ Ընդարձակ ու խորին հմտութեան մը հետ միացուց զպաշտօն բարւոյն և գեղեցկի։ Երկու զգացմունք կը խրախուսեն զինք իր կենաց երկար ընթացքին մէջ, և կը փայլին իր բազմաթիւ գրուածոց մէջ. հայրենեաց սէրը և իր

հաւատոյ ջերմ եռանդը։ Որպիսի՛ բարեպաշտիկ փութով կը ջանար վրէժխնդիր ըլլալ անիրաւ մոռացութեան յիշատակի իր հայրենակցացը, որ նախընթաց էին նոյն ասպարիզին մէջ և նշանաւորք իրենց գրաւորական վաստակօք դասական և արեւելեան մատենագրութեան։ Ի նշանակ մեծարանացն առ նախնիս, Երից լեզուաց դպրոցին Յիշատակագիրը, պսակեալ յակադեմիոյ, իրմէ գրուած բազմաթիւ ծանօթութիւնք որ Ազգային կենսագրութեան (Biographie nationale) մէջ երեւցան, և իր դեռ նոր հրատարակած գիրք Ի վերայ վերածնութեան դպրութեանց, եւ բուիչք հին ճեմարանին ի Բելգիա։ Հաւատոյ եռանդեամբ գրած է իր հմուտ հետազօտութիւններն Ի վերայ եօրանօր աղբերաց կարեւորաց յուսուցմնասիրել զհնութիւն քրիստոնէութեան յարեւելս, — Հանգստեան չարակնաց ճայկական եկեղեցւոյ, — Կոչման Հոգւոյն սրբոյ ի ճայ պատարագամատոյցի, — Ի վերայ արեւելեան եկեղեցւոյ եւ պատմութեան նորա ըստ ասորական աղբերաց։ Այսպիսի մեծ գործոյ մը եռանդեան աշխատակից էին համալսարանական երիտասարդութեան ընտրելագոյն մասը՝ որոց հետ համաձայն էր Նեւ։ Իրականացնել, որչափ մարթ է, զմիաբանութիւն գիտութեան ընդ հաւատոյ, ազատութեան ընդ իշխանութեան, անհատական հոգւոյ ընդ հոգւոյ յառաջադիմութեան. ասոնք էին լուսամիտ երիտասարդութեան փափաքներն և իր սիրոյն առ գաղափարականն»։

Վերածնութեան հին մատենագրութեան (Renaissance des lettres anciennes) երբ հրատարակուեցաւ ապագրութեամբ, եօթանասունըհինգ տարուան էր Նեւ։ Արդէն կ'իմանար թէ ծերութեան հասակն սկսած էր ծանրանալ վրան և ոյժը օրէ օր կը պակսէր։ Քիչ առնէն աչքի ցաւ և տկարութիւն մը՝ բնագատ անզօրութեան դատապարտեց անխոնջ աշխատաւորը, և գեղեւեալ քայլք ոտից վերահաս վախճան մը կը գուժէին։ Այս զգայումը զինք չահաբեկեց։ Քրիստոնէի հաւատքով, ինչպէս խելքով, չէր նկատեր նա զմահ՝ ոչնչութիւն մը, որ կը խառնէ զմարդ ընդ անասուն անբանից, ի մի հող և ի փոշի. այլ բաժանում մը անմահ հոգւոյն ի կորստական պատենէն։ Երբէք համամիտ եղած չէր այն յուսահատական վարդապետութեան, որ գերեզմանէն անդին կեանք չընդունիր. այլ կը հաւատար հանդերձեալ կենաց՝ ուր մարդ կ'ընդունի՝ յաճախ այս երկրիս վրայ մերժուած վարձքը։ Թոքատապ մը՝ որ ի սկզբան թեթեւ կ'երեւնար, մայիսի մէջ (1893) վրան հասաւ, ու քանի մի օրուան մէջ ծանրանալով, մահուան մօտեցուց։ Երբ վտանգն իմացուցին, մեծ բարեպաշտութեամբ ընդունեցաւ ամէն հոգեւոր օժանդակութիւնք՝ զոր այն գերագոյն վայրկենին եկեղեցին կ'ընծայէ հաւատացելոց ի սփոփանս և ի քաջալեր, և հանդերձ ի քաղցր խաղաղութեան որ իրեն կենաց որոշիչ յատկանիշն էր։

Մեր ինչուան հոս ըսածներէն ալ յայտնի կ'ըլլայ թէ Բելգիոյ ալ՝ ուր այնչափ յառաջադէմ եղան հայկական ուսմունք, մանաւոր երախտագիտութեան պարտք մը ունին Հայք։ Փափաքելի է որ ուելի բազմանան Փեկքս Նեւի հետոց եռեւէն գնացող բանասէրք և գիտունք, չմոռնալով երբէք այն գեղեցիկ խօսքերն զոր համակրելի հայագէտն 1845էն ի վեր կը գրէր յՄեղղափառ ճամաշարանի. «Հայաստան, կ'ըսէր, մէկ ծայրէն կը մօտենայ յունական հնութեան, յորմէ իր մատենագրութիւն բազմաթիւ փոխառութիւնք ըրաւ թարգմանութեամբք. և միւս ծայրովն ալ՝ արեւելեան խկատիկ կենաց։ Եթէ դարուց ընթացքին մէջ իր քաղաքական կեանք և վիճակ շատ տարբեր եղաւ, բայց կրօնական պատմութիւնը՝ քրիստոնեայ ազգի մը պատմութիւն է. և այս տեսակէտով՝ ոչ ոք կրնայ անտարբեր մնալ այնպիսի ժամանակի մը մէջ, որպիսի է մերս, որ ժողովրդոց տարբերութեանց մէջ իրենց ընկերական գաղափարաց ոյժն ու յաջողութիւնը կը փնտռէ. հոս ալ բնադատուած է ճանչնալ և ընդունիլ քրիստոնէական սկզբանց պահպանողական ոյժը»։

Նել գիտ. Լուսմայ 1900 Ա, 230։

Նեմրութ–տաղի դամբարանն. – Տես ՀԱՄՏԻ ՊԷՑ։

ՆԷՄՕ. — «Առ Բիէռ Լոթի». Արեւ. Մամուլ 1903, էջ 975. – «Երկինքին մէջ. Երկրի վրայ». (քերթ.), անդ. էջ 1162–3։

ՆԷՅՄԱՆ (Մագդա). — Հայերը, համառօտ ակնարկ անոնց պատմութեան վրայ, և անոնց ժամանակակից դրութիւնը (Ռուսերէն)։ Ս. Պետերբուրգ, տպ. Էոլլէ, 1899?

Մուրճի մէջ կը կարդանք. «Մագդա Նէյման–ի գիրքը Հայերի մասին, ներկայանում է որպէս ծպտեալ աշխատասիրութիւն պ. Գր. Նիկողոսեանի, որ դեռ չի նշանակում թէ նաւզ հետաքրքրական է։ Գրքի սկզբից մինչեւ վերջը պ. Նիկողոսեանն է որ խօսում է, երբեմն առանց անունը յիշելու, բայց մեծ մասամբ յիշելով... Այլ խօսքերով՝ սա, այսպէս ասած, պ. Նիկողոսեանի գործքն է, հրատարակած մի տիկնոջ անունով, որպէս զի պ. Նիկողոսեանը կարողանայ յիշել գովասանական ածականների մի ամբողջ բաղրքով, որ անյարմար կը լինէր անել, եթէ գրքի իսկական հեղինակի անունը գրքի ճակատին գրուած լինէր։

Գիրքը բաղկացած է չորս գլխից. 1. «Լուսաւորութիւնը և գրականութիւնը հայերի մէջ. նոյնպէս ծառայութիւնները Ռուսիայում, Թիւրքիայում, Պարսկաստանում և այլ պետութիւնների մէջ». 2. «Հայոց ազգի պատմական կեանքի քննական գնահատութիւնը». (մի ընդարձակ քննութիւն է Ք. Պատկանեանի հայեացքների). 3. «Հայոց ազգի մասին», (Հայերի գլխաւոր յատկութիւնները, պաշտպանողները. մանաւանդ ուշք է դարձրած դաբաղդոց վրայ). 4. «Հայոց ինտելիգէնցիան Ռուսիայում» (ամբողջապէս նուիրուած է Գ. Արծրունու և նորա առաջացրած կուսակցութեան քննութեան պ. Նիկողոսեանի հայեցակէտից, և Նիկողոսեանի գործունէութեան՝ իբր հակապատկերի)։

Գրուած է գիրքը ջերմ ոճով, որը կարդացնել է տալիս գիրքը առանց դադար տալու։ Ունի բազմաթիւ շատ հետաքրքրական էջեր՝ հայոց ազգի անցեալի ու ներկայի գնահատութեան վերաբերեալ. բայց շատ ու շատ բան էլ սխալմամբ խեղաթիւրուած է Արծրունուն կատարելապէս ցեխի հետ հաւասարցնելու և կառավարութեան աչքում էլ «անբարեյոյս» ցոյց տալու համար, որպէս զի Նիկողոսեանը ինքը գործով կարողանայ իւր համար մի բարձր պատուանդան ստեղծել։ Թերեւս մեզ յաջողի այս վերին աստիճանի իւրատեսակ գըրքին վերադառնալ գալ անգամ»։

Նեյտլինգերի հրատ. – Ընկերութիւն «Զինգերի» Նիւ–Եորքում ձեռնարկ կարի մեքենաների։ Տփխիս, տպ. Մ. Վարդանեան, 1890?

ՆԷՎՐՈՒԶ (Պարոյր). — Երկրագունտի մէջ (1884–85) գիտական յօդուածներ ունի։

ՆԷՕԼԴԷՔԷ (Թ.) – Պատմութիւն Սասանեան տէրութեան թարգմ. Ն. Քարամեան. (Արաբերէն հանուած)։ Վաղարշապատ. 1896?

ՆԷՕՅՄԱՆ. — Տես ՆԱՅՄԱՆ։

ՆԺԴԵՀ. — Քերթուածները տես Հանդէս գրական եւ պատմական 1889, 165: — Մուրճ 1889, թ. 2. — «Մակու», Ճանապ. Նկարագր. անդ, 1903, թ. 4, էջ 132–149:

ՆԺԴԵՀԵԱՆ (Գրիգոր Քահ.) — Տես Մամօ և Զինէ:

— «Ալաշկերտի բանաւոր գրականութիւն». հաւաքեց Գ. Ք. Ն. Ազգագրական հանդէս 1899, Ե գիրք էջ 185-199. — 1901, Է–Ը գիրք, 437-505. «Ժողովրդական երգեր. Առածներ». — «Պառաւաշունչ. Երկինքն ու երկիրը. Հրեշտակներ. Սատանաներ», Թ գիրք 1902, էջ 263-271: «Բագրեւանդի Ս. Յովհաննու վանքին արձանագրութիւնը». Բանասէր 1903, էջ 373:

Նժդեհի բանաստեղծութիւններ. — Տես ԽԱՐԱՋԵԱՆՑ (Գ. Ս.):

ՆԻԿԱՆՈՐ Ռուսաց մետրապոլիտ. — Ճառ Հոգեգալստեան. թրգմ. Կարապետ Տէր–Յակովբեանց. Արարատ 1887, էջ 251. — Ճառ յաւուր տօնի վերափոխման սուրբ Աստուածածնի. անդ, 343. — Ճառ Վերացման սրբոյ խաչին. թրգմ. նոյն. անդ, էջ 391. — Ճառ ի տօնի Աւետման, էջ 438:

«Նիկիա». — Տես Յոյս 1875, էջ 503, 561:

ՆԻԿԻՏԻՆ. — Քերթուածներ Ա. Ծատուրի թարգմանութեամբ. «Դանդաղ սահում են». Մուրճ 1901, թ. 5, — «Փորուած է բահով», թ. 6. — «Երգ վերջալուսի», թ. 7. — «Խեղճութիւն. — Բամբասանք» 1902, թ. 3, 9. — «Գեթսեմանի պարտիզում», 1903, թ. 7. — «Ա՜խ հանգիստ տուէք», թ. 9: «Բամբասանք», թարգմ. Յ. Պալեան. Բազմավէպ 1905, էջ 357. — «Փլատակք», թրգմ. նոյն, 407:

Նիկող կամ Հայոց կրած տարաբաղդութիւնը Լեհաստանի մէջ: Սանկտպետերբուրգ, 1864?

Տես եւ ԱՅՎԱԶԵԱՆ (Գ. Եպ.) - ԵԶԵԱՆՑ (Կ.) — Բռնի միութիւն:

ՆԻԿՈԼՍԿԻ. — Տես ՆԻԿՕԼՍԿԻ:

Նիկողայոս Ա., Ինքնակալ Ռուսաց, եւն. — Տես Հռչակ ողորմութեան:

Նիկողայոս եպիսկ. Սսեցի. — Տես Յոյս 1869, էջ 184:

ՆԻԿՈՂՈՍԵԱՆ (Արամ). — «Ծն. Լանկա, 7 Սեպտ. 1871: Նխն. կրթութիւնը առացած Մեզպուրեան: 87ի շրջանաւարտ Պէրպէրեանի: Ուսուցութեան կոչուած Քիրմասթը, Ատաբազար, Պէրպէրեան և զանազան վարժարաններ՝ իբր այցելու: 1896–1900, Յիսուս տեսուչ Մաքրիքէօյի Տատեան վարժարանի, ուրկէ վերջ հոն մասնաւոր դըպրոց մը բանալու ծրագիրը կը մեծի. և Նիկողոսեան կ՚աքսորուի Արշիպեղագոսի կղզիները. հոգւէ սրտայոյզ էջեր գրած ունի գաղրօյականերուն: Խոսեկալին հետապնդումներով կ՚աջողի ապա դառնալ աքսորավայրէն և ամուսնանալ: 1902–3. Սամսոն. վերադարձին՝ Բերայի Բագրատունի վարժարանի տեսչութիւնը կ՚ստանձնէ (1903–7): 1907–8 Ադրնէիր: Ազատութեան հռչակումին՝ Ատանայի առաջնորդը զինքը կը կոչէ նոյն տեղի դպրոցին տնօրէնութեան՝ զոր կատարեալ ձեռնհասութեամբ կը վարէ մինչեւ Մեծ Աղէտին օրը, 1200 աշակերտ թիւր բարձրացնելով 2000ի, դպրոցին տալով մեծ զարկ և պատշաճեցում այգ. Վարչութեան կազմ. կանոնագրին և կրթական ծրագրին: — Մանկավարժական յօդուածներ հրատարակած է պոլսահայ թերթերու մէջ և նմանօրինակ լուրջ ուսումնասիրութիւններ ձեռագիր. հեղինակած՝ Բնական Գիտութիւնք պատկ. դասագիրքերու ընթացքը: Ատանայի երկու կոտորածներուն ականատես և տառապեալ, վերջնապէս կը վերադառնայ Պոլիս 2 յունիս 1909ին և կը կոչուի Պէրպէրեան վարժարանի գեր-տնօրէնութեան պաշտօնին: Տարեցոյցս թղթատողները յուզմամբ անշուշտ պիտի կարդան իր հետազայ գրուածքն՝ ուր որդեկորոյս հօր մը սարսռագին յուշքերը նօթուած կան»: Թէոդիկ «Ամէնուն տարեցոյցը» 1910, էջ 174:

ՆԻԿՈՂՈՍԵԱՆ (Գրիգոր). — Տեսութիւններ և նամակներ. Մասն առաջին. գրքոյկ Ա. (կայ նաեւ ռուս. ճակատ): Ս. Պետերբուրգ, Պուշկինեան տպարան, 1904. 8°, 136 էջ:

Յառաջաբանէն. «Այս աշխատութեան մէջ ռուսահայերիս բարոյական, մասամբ էլ մտաւորական վիճակն է թէեւ քննադատութեան առարկայ դառնում, բայց սա աւելի մի սրտաբաց խօսակցութիւն է մեր յարգելի ազգայինների հետ, զգացումների և մտածումների վերայ, վշտերի և իղձերի արտայայտութիւն, քան թէ քննադատութիւն՝ բառի բուն իմաստով: Իսկ աշխատութեան կցուած նամակները ներկայացնում են մի տեսակ վկայական հաշիւ մեր քառասնհինգամեայ հասարակական գործունէութեան[1]:

«Տեսութիւնների» մէջ աւելի շահագրգիռ մասը, կարծում ենք, թէ պատկանում է հայ ժողովրդին, որի հոգեկան–բարոյական պատկերը ներկայացնում է ժողովրդի մայրերից մէկը իւր խըրատներով, առածներով և հայեացքներով՝ գրքի առաջին գլխում:

Հաւատարիմ մնալով այդ ժողովրդի զաւակի ունեցած պարտաւորութիւններին, խոչընդոտներով և զրկանքներով լի մեր գործունէութեան ընթացքում՝ մեր ջանքերի ու ճիգերի մէջ կէտ նպատակի է եղել հայ ժողովրդի շահերի պաշտպանութիւնը և նորա արժանեաց ջատագովութիւնը, ձգտելով այդու նորա մէջ գիտակցութիւն արթնացնել և առաջնորդող դասակարգը՝ ինտելլիգենցիան զգաստացնել, թէ ինչ եղանակով նա պիտի վարէ ժողովրդի առաջադիմութեան գործը: Մինչեւ գրականութեան ամբողջովին անձնատուր լինելը, պաշտօնական ասպարէզի մէջ եւս, Տաճկահայաստանում և Ռուսաստանում, ոչ մի առիթ բաց չենք թողել առ ժողովուրդն ունեցած մեր պարտաւորութիւնները կատարելու, ինչպէս կը տեսնէ ընթերցողը «Տեսութիւնների և Նամակների» մէջ:

Գործունէութեան ընդարձակ ասպարէզ ներկայացել է մեզ Կ. Պոլսում, 1881 թուից սկսած: Երախտապարտութիւնն է եղել պատճառը, թէ՝ մեր տեմպերամենտը, բայց խոստովանում ենք, որ ժողովրդասիրական զգացումների ազդեցութեան տակ՝ այնտեղի հայ ինտելլիգենցիան, ազգային մարմիններն ու այլեւայլ ընկերութիւնները լրագրաց մէջ հարուածելիս՝ ծայրայեղութիւններից զերծ չենք եղել: Բայց տաճկահայ ինտելլիգենցիան գնահատելով մեր զգացումների անկեղծութիւնը, ներեց մեզ այդ ծայրայեղութիւնները, լիուլի գոհացում տալով մեզ էական խնդիրների մէջ, որոնց մասին 1881–1883 թուականներին շատ է խօսել Կ.

---

1. Հաշուելով 1878 թուի մարտի 7-ից, երբ մեր առաջին թղթակցութիւնը, Ուտէացի ստորագրութեամբ, երեւաց «Մշակի» թ. 34ի մէջ: Փետրվարի 17ին գըրուած այդ գրութիւնը ուղարկուած էր Օլթուց, ուր զին. Շօլկօվնիկովը նշանակած էր մեզ Օլթու զինուորական շրջանապետի օգնական:

Պօլսի հայ թերթերի, նոյնպէս և «Մշակի» էջերում։

1891 թուին վերադառնալով Ռուսաստան, բնական էր, որ մեր ձգտումը և նպատակը միևնոյնը պիտի մնային—տարածելով այս անգամ հայ ժողովրդի շահերի պաշտպանութիւնը մայրաքաղաքի ռուս մամուլի մէջ, որին աշխատակցած էինք արդէն 1880 թուականին Ս. Պետերբուրգում, իսկ յետոյ Կ. Պօլսից։ Դժնդակ պարագաները սակայն բաւական ժամանակ արգելք եղան Ս. Պետերբուրգի մամուլի մէջ ինչպէս հարկն է աշխատելու։ Բայց մի կերպ ազատուելով ծանր ճգնաժամերից, յաջողուեց անձնատուր լինել գրական զբաղումներին[1]։ Ի միջի այլոց 1899 թուին լոյս տեսաւ գերմանացի գրագիտուհու՝ օր. Մագդա Նէյմանի «Армяне» աշխատութիւնը, որին բաւական նիւթեր մատակարարելու առիթն ունեցանք[2]։ Ռուս հասարակութեան աչքում բարոյապէս ընկած, չարաչար զրպարտուած և նախատուած չարաբախտ հայ ժողովրդի պաշտպանութիւնն եղաւ այդ աշխատութեան ձեռնարկելու նպատակը։ Այս առիթով հարկ է ուշադրութիւն դարձնել հետևեալ հանգամանքի վրայ։

Բազմիցս անիծեալ Բիւզանդիոնի անկումից յետոյ չարանենգ յոյն կրօնաւորները խումբ խումբ ցրուեցին Ռուսաստանի չորս կողմերը և՝ բոյն դնելով ռուսաց վանքերի և եկեղեցիների մէջ, դէպի հայերը տածած իրանց պատմական ատելութիւնը սկսեցին արծարծել կրօնապաշտ ռուս ժողովրդի բոլոր խաւերում, ներկայացնելով հայերին իբր Արիոսին հետևող հերետիկոսներ, Քաղկեդոնի ժողովը չճանաչող հերձուածողներ, չարագործ, նենգ, խաբեբայ և ապականուած մի ժողովուրդ։ Ցերեկեցին ամեն տեսակ առասպելներ այն առասպելների նման, որ յերիւրում են չինացիները եւրոպացիների մասին։ Ասում էին, օրինակ, թէ հայերը՝ ինչպէս Աստուծոյ անիծուած և ուղղադաւան ուրիշներից նզովուած արարածներ, մօր արգանդից այնպէս հոտած և կեղտոտ են ծնւում, որ նորածինների գարշահոտութիւնը կորցնելու համար մի մատ աղով ծածկում են նորանց ամբողջ մարմինը. թէ հայերը հրէից նման սոխով և սխտորով ապրող մարդիկ են, ուստի նորանց բերանից միշտ գէշ հոտ է գալիս, և այլն և այլն։ Եւ այսպէս, ատելութիւն ու զզուանք ներշնչելով ռուս ժողովրդին դէպի հայերը, այդ ատելութիւնն արծարծուելով արծարծուեց և խոր արմատ ձգեց պարզամիտ ռուսների սրտի մէջ։ Հայերին սկսեցին ամենուրեք անուանել «արիկլեատիյ և սալեօնի արմեաշկայ» — երկիցս անիծուած և աղած գարշելի հայ, կամ սովորաբար «պրօկլեատիյ (անիծուած) արմեաշկայ[3]»։

Բովանդակութիւն. Ա. Աւետիս Հախումեանցի նամակը օր. Մագդա Նէյմանին (ռուսերէն). — Յառաջաբան. — I. Նահապետական հայ կնկայ խրատները, ատածները և հայեացքները. — II. Միջանկեալ նկատողութիւններ. — III. Հարևանցի հայեացք մեր ազգի քաղաքական կեանքի վրայ. — IV. Հայ ազգը մահմետական տիրապետութեան տակ։ Նորա մէջ առաջ եկած յատկութիւնները. — V. Հայութիւնը քրիստոնեայ տիրապետութեան տակ. — VI. Այլասերուած (չըր) ռուսահայերի մի տիպարը։

Մշակի մէջ կը կարդանք. «Ձեռք բերած լինելով Գրիգ. Նիկողոսեանի այն հայերէն գրքոյկը որ պարոնը հրատարակեց Կ. Պօլսում... շտապում ենք յայտնել որ այդ գրքոյկը հաւաքածու է այն չորս յօդուածների, որ Նիկողոսեան հեղինակը հրատարակած էր Կ. Պօլսի «Մեճմուայը Հաւադիս» լրագրում։ Գրքոյկը պարունակում է իր մէջ մի առաջաբան, և Ռուսաստանի հայազգի հետևեալ զօրավարների կենսագրութիւնները. 1. Իշխան Ռուստամ Մադաթեան. 2. Իշխան Արղութեան-Երկայնաբազուկ. 3. Իշխան Բարսեղ Բեհբութեան և 4. Գեներալ Յովսէփ Լօրդանեան». 1886, թ. 62։ — Տես և Բանբեր Ա, 1903, էջ 196 ծան.ը։ — Մուրճ 1895, էջ 375. — 1899, 354։ — Փարոս Հայաստանի 1881, գ. 19, Ձ. 24։

Տես Ծաղիկ 1902, թ. 2, «Հայի Եսը և Պ. Գրիգոր Նիկողոսեանց» (Լ. Մկրտիչեան)։

Տես ՄԱԳԴԱ (Ն.)։

ՆԻԿՈՂՈՍԵԱՆ (Մարտիրոս քահանայ) խմբագ. — Տես Վարդ Կեսարիոյ։

ՆԻԿՈՂՈՍԵԱՆ (Ներս. քահ.) — Ալեքսանդրոպոլից Ղանճիճա. ուղեւորի յիշողութիւններ։ Ալէքսանդրոպոլ, 1905. 62 էջ?

— «Շիրակի կեանքից». Արարատ 1904, էջ 689, 785։

Թարգմ. — Տես Օլաֆ Տարղաքեան. — ՆԻԿՕԼՍԿԻ։

Նիկոմիդիոյ վիճակին տեղագրութիւն. — Տես ՆԱԹԱՆԵԱՆ (Պ. վ.)։

Տես և ս Յոյս 1865, էջ 192, 238, 380. – 1866, 434, 493. – 1869, 96, 115. – 1870, 184. – 1874, 631. – 1876, 634։ – Երևակ 1858, էջ 146, 277։

«Նիկոպոլսի թեմերին շուրջը. մանուկներու հիւանդութեանց վերաբերող նախապաշարումներ». Բիւրակն 1900, էջ 231, 621, ևն։

ՆԻԿՕԼՍԿԻ (Մ. վ.) — Բևեռագիր արձանագրութիւններ Ռուսաց Հայաստանում։ Քաղուածոյ թարգմանութիւն «Նիկոլսկու Անդրկովկասի բևեռագիր արձանագրութիւններ» գրքից Պրոֆ. Խաչատուր Յովհաննիսեանցի։ (Բազմ.էն հանուած)։ Վենետիկ, Ս. Ղազար, 1897։ Բազմ.ի ծալքով 63 էջ։

«Մոսկվայի Կայսերական Հնագիտական Ընկերութիւնը չորս տարի սորանից առաջ, այն է 1893 թ. բարձրագոյն շնորհաց տառտ դրամական օժանդակութեամբ, իւր անդամակիցներից երկուսին՝ պ. պ. Ա. Իվանովսկուն և Մ. Նիկոլսկուն՝ ուղարկեց Ռուսաց Հայաստան, յանձնելով նոցա հնագիտական խուզարկութիւններ ու պեղումներ կատարել այնտեղ. իսկ ձեռնարկութեան արդանեաց մասին՝

---

1. 1892 թուից մինչև ցայսօր հայ ազգութեան վերաբերեալ մեր գրածները՝ «Русская жизнь» «Новости» «Мирвые Оутолоски» և «С.-Петербургскія Вѣдомости» լրագիրների մէջ մի մեծ հատոր կը կազմեն, որը մտադիր ենք առանձին հրատարակութեամբ լոյս ընծայել, եթէ միջոց գտնուի։

2. Այդ գրքի երկու առաջին մասերը նախ գերմաներէն գրուեցին և հրատարակուեցին Ս. Պետերբուրգում «Neue Revue» շաբաթաթերթի մէջ։

3. Հայերին անուանարկելու և դէպի մեզ անվստահութիւն, զզուանք ու ատելութիւն ներշնչելու մէջ փոքր մաս չեն ունեցել – ցաւալի է ասել – և վրացիք, որոնք կատարել են սիստեմատիքաբար այդ դերը 1880 թուականից ի վեր, երբ Վրաստանը կցուեց Ռուսաստանին յիշեալ թուականի դեկտ. 22ին ստորագրուած կայսերական հրովարտակով։

իր ժամանակին մանրամասն զեկուցում տալ ընկերութեան նիստերում։ Յիշեալ գիտնականները մեծ յաջողութեամբ կատարեցին իրենց վրայ առանձնած ծանր գործը, և ընկերութեանս հրապարակական նիստերում, ի ներկայութեան Մոսկվայի կուսակալ՝ Նորին Կայսերական Բարձրութեան Սերգէյ Ալէքսանդրովիչի, կարդացին իրենց նշանաւոր զեկուցումները՝ Ռուսաց Հայաստանի մասին։ Այնուհետեւ նոյն երկու պարոնները զբաղեցան Հայաստանից բերած նիւթերի մշակութեամբ, որպէս զի մի օր ընկերութիւնը կարողանայ լոյս ընծայելու նոցա երկերը։ Ահա, վերջապէս, անցեալ 1896 թ. լոյս տեսաւ այստեղ Պ. Մ. Նիկոլսկու ուսումնական գործը, որի խորագիրն այս է. Клинообразныя Надписи Замавказья. Изслѣдованіе М. В. Никольскаго. Носква 1896. «Անդրկովկասի բեւեռագիր արձանագրութիւններ. — Հետազօտութիւն Մ. Վ. Նիկոլսկու. Մոսկվա, 1896 թ.»։

Դա մի չքեղ հրատարակութիւն է, բաղկացած 133 էջերից. գիրքը զարդարուած է Հայաստանի զանազան տեղերի ու վայրերի տեսարաններով, որոնց մէկն «Նուանց Երասխայ» արտատպած է հ. Ղ. Ալիշանի Սիսականից (տես. Սիսական էջ 415). բաց ի դորանից, այստեղ կան նաեւ բեւեռագրեր, նոցա լուսատիպը, վերծանութիւնը ու ռուսերէն թարգմանութիւնը։ Իր երկասիրութեան սկզբում հեղինակը զետեղել է մի ընդարձակ ներածութիւն, որ բաւականին լոյս է սփռում Հայաստան աշխարհի հնագոյն պատմութեան վրայ, և արժանի է հայ բանասիրաց խորին ուշադրութեան։ Այս պատճառաւ մենք պարտք համարեցինք քանի մի քաղուածքներ անել յիշեալ գրքից ու հաղորդել մեր ընթերցողներին»։

Քննադ. Հանդէս Ամսօրեայ 1898, թ. 10–11. – Տես եւս Ազգագր. Հանդէս 1897 Բ տարի, Բ գիրք։ – Տարազ 1898, թ. 30, 31, «Տեղեկագիր Իզմիրեանց կտակի», եւն։

— Հին Ուրարտուն (Արարատեան աշխարհը) և տորա–բաբելական քաղաքակրթութեան հետքերը Կովկասում։ Թարգմ. Ն. Քահ. Նիկողոսեանց։ Տարազ 1899, էջ 558, 574, 598։

— Վանի թագաւորների Ռուսաստանի սահմաններում գտնուած սեպաձեւ արձանագրութիւնները. I. Վանի արձանագրութեանց բովանդակութեան վերծանութիւնը։ Սեպագիր արձանագրութեանց գիւտը Ռուսաստանում. – Տեսութիւն Ուրարտուի (Արարատեան աշխարհի) պատմութեան ըստ Ասորեստանի և Վանի աղբիւրների. (թրգմ. Եղիշէ Վ. Մուրադեան). Արարատ 1893, էջ 745, 852, 935, 987. (Միաբան ծանօթութիւններ ունի տեղ տեղ)։

Կը գրէ նոյն Միաբանը. «Մ. Վ. Նիկոլսկու այս յօդուածը հրատարակուած է Մոսկուայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան պարբերական հրատարակութեան մէջ (ДРЕВНОСТИ ВОСТОЧНЫЯ. Հտ. Ա. մ. 3. Մոսկուա 1893)։ Խմբագրութիւնս անհրաժեշտ համարեց այս գիտնական յօդուածի ամբողջական թարգմանութիւնը, աչքի առաջ ունենալով որ «Արարատը» մշտապէս հետաքրքրուել է Հայկական բեւեռագրերի խնդրովը և արել է իր կարողացածը, տալով գիտնականներին հում նիւթ։ Ռուսահայաստանում գտնուած բեւեռագրերը մեծաւ մասամբ գտնուել, ընդօրինակուել, հրատարակուել կամ մասնագէտներին են ուղարկուել Միաբանութեանս անդամների, մանաւորապէս Սրբ. Մեսրոպ Արքեպիսկոպոսի ձեռքով։ Այս աշխատութիւնը մի յաջող ամփոփումն է մինչեւ այժմս հայկական (այն է՝ Հայաստանում գտնուած) բեւեռագրերի մասին եղած հրատարակութեանց»։

Իր յօդուածին սկիզբը հետեւեալ կը կարդանք. «Վանի կոչուած սեպաձեւ արձանագրութիւնները գլխաւորապէս Վան քաղաքում և նրա շրջականերում են գտնւում։ 1827-ին առաջին անգամ նրանց ընդօրինակեց գիտնական Շուլցը, որ Ֆրանսիական կառավարութեան կողմից ուղարկուած էր Վանի հնագիտական հետազօտութեան համար և նրա սեպագիր արձանագրութիւններն ընդօրինակելու։ Նորա ճանապարհորդութեան հաշիւը հրատարակուեցաւ միայն 12 տարուց յետոյ՝ այն է 1840 թուին Journal Asiatique – ամսագրում հետեւեալ վերնագրով. – Sur le lac de Van et les environs (Վանայ լճի վրայ և շրջակայքում), որին կցած էին 32 արձանագրութեանց նկարները։ Նրանից յետոյ Լէյարդի 1850 թ., Ներսէս Սարգսեանի – 1864 թ. և Ռասսամի 1877 թ. կատարած ճանապարհորդութիւնները զգալի կերպով ուղղեցին և լրացրին Շուլցի հաւաքած նիւթը[1], բայց Շուլցի նկարներն ու տեղեկութիւնները ցայսօր Վանի արձանագրութեանց գիտնական ուսումնասիրութեան ամենագլխաւոր աղբիւրն են կազմում։

Գլխաւորապէս սեպագիր արձանագրութեանց բովանդակութեան իմաստը պարզող նշանաւոր առաջադէմները ինչպիսիք էին Գինկսը[2], Հէնրի Ռաուլինսոն[3] և Լընօրմանը[4] փորձում էին վերծանել այդ արձանագրութիւնները, բայց նրանց փորձերը յաջողութիւն չունեցան։

Այդ արձանագրութեանց սեպագրերը փոխ են առնուած ասորեստանականից և թէ ձեւակերպութեամբ, թէ ոճով նոյնն են, ինչ որ Ասուր Նասիր Ապալ և Սալմանասար II Ասորեստանի թագաւորներինը, որոնք իշխում էին IX և VIII դարերում Քրիստոսից առաջ. նշանագրերը թէ գաղափարագրութեամբ, թէ ֆոնէտիկաբար (հնչագրութեամբ) գործ են ածւում այն նշանակութիւններով՝ ինչպէս որ ցոյց է տրուած Ասորեստանական հեգարանի մէջ. բայց այդ տեսակ ընթերցանութեամբ կազմուած բառերն ու դարձուածները բոլորովին նման չէին ասորեստանականին և ցարդ անյայտ մի լեզու էին ներկայացնում։ Այդ գիտնականները քիչ թէ շատ որոշմութեամբ կարողացան որոշել մի քանի բառերի և դարձուածների նշանակութիւնը և թէեւ թոյլ՝ բայց կարծիք յայտնեցին թէ լեզուների որ ընտանիքին կարելի է վերագրել այդ լեզուն։ Մորդտմանն էր առաջինը, որը իր վրայ առաւ այդ անյայտ բնագրերի արմատական լուծման պակասի լրացումը, որը 1882 թուին Zeitschrift der Deutchen Morgenländischen Geselschaft – ում զետեղուած Entzife-

1. Լէյարդի Վանի սեպագիր արձանագրութիւններից մեծ մասի նկարները գտնւում են Բրիտանական թանգարանում և դեռ ոչ միանգամ չեն հրատարակուել։ Պրոֆ. Սէյսը իր հետազօտութիւնները հրատարակելիս նրանցով օգտուել է։ Ներսէս Սարգսեանի նկարները հրատարակուած են Վենետիկում հայերէն։ Նա հրատարակեց նաեւ չորս նոր արձանագրութիւններ։ – Ռասսամի նկարները դարձեալ Սէյսի աշխատութիւնիցն են յայտնի, որը նրանցով օգտուել է։

2. Journal of the Royal Asiatic Society vol. IX. երես 387–447 (1848 թ.)։

3. Ibid. vol. XII երես 475 (1850 թ.) —

4. Lettres assyriologiques, tome I. երես 113–164 (1871 թ.)։

rung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und der gegend – վերնագրով ընդարձակ աշխատութեան մէջ նկարագրեց և կարդաց մինչև այդ ժամանակ յայտնի բոլոր արձանագրութիւնները, սակայն այդ փորձը չափազանց անյաջող եղաւ։ Ենթադրելով որ այդ արձանագրութեանց լեզուն ներկայ հայկականին նոյնանիշ է, Մորդտմանը բոլոր բառերն ու դարձուածները բացատրեց ներկայ՝ նորագոյն լեզուի բառգիրքով և քերականութեամբ։ Այդ տեսակ հայեացքը հետևանք էր Մորդտմանի սեպագրերի (սիստեմի) եղանակի և ասորեստանի լեզուի մասին ունեցած թոյլ ծանօթութեան [1]։

Ասորեստանի լեզուից բոլորովին անգիտութիւն չունենալով, Մորդտմանը փառահեղ Վանում բուն ասորեստանական արձանագրութիւնը կարդալ և մեկնել հայկական քերականութեամբ և բառերով։ Մի ուրիշ ծայրայեղութեան մէջ ընկաւ ֆրանսիացի գիտնական դօկտոր Ռոբէրտը, որը 1876 թուին հրատարակած – Etude philologique sur les inscription cuneiformes de l'Arménie – աշխատութեան մէջ ապացուցանում էր, որ այդ արձանագրութիւնները գրուած են ասորեստանական՝ սեմական լեզուով։ Լեզուաբանական այդ բոլոր կուրեօզներին վերջ դրեց ֆրանսիացի արաբագէտ և ասորագէտ Ս. Գիյարը (Stanislas Guyard) Journal Asiatique-ի 1880 թուի մայիսի և յունիսի համարներում հրատարակած Վանի բևեռագրերի համառօտ տեսութեան մէջ իւր հանճարեղ գիւտովը (երես 540–543)։ Նա շատ յաջող դիտողութիւններ անելով գտաւ, որ Վանի արձանագրութեանց մեծ մասը վերջանում է միևնոյն ասացուածներով և ենթադրեց, որ այդ դարձուածները դիմումն են աստուածներին՝ պատժելու նոցա, որոնք կը փորձեն աւրել արձանագրութիւնները. մի բանաձև, որով սովորաբար վերջանում են ասորեստանի թագաւորների պատմական արձանագրութիւնները։ Այդ եզրակացութեան շնորհիւ Գիյարը բաւականին հիմնաւոր կերպով բացատրեց բառերի և դարձուածների նշանակութիւնը, որով և անսպառելի լոյս սփռեց Վանի լեզուի քերականական ձևերի վերայ։ Այսպիսով անհա արձանագրութեանց բանալին արդէն գտնուած էր։

Գիյարի մեթոդից և գիւտից օգտուելով՝ Օքսֆորդի համալսարանի համեմատական լեզուագիտութեան պրօֆեսոր և յայտնի ասորագէտ Սէյսը (A. H. Sayce) կարդաց բոլոր արձանագրութիւնները և իւր հետախուզութեանց հետևանքը հրատարակեց Journal of the Royal Asiatic Society of Great Britain ant Ireland. vol. XIV Part 3 և 4 Վանի բևեռագիրների մասին ընդարձակ յիշատակարանում։ Սակայն Սէյսի դիտողութիւններն և եզրակացութիւնները պահանջեցին մեծ ուղղագրութիւններ, ստուգումներ, որոնք կատարուեցան Գիյարի [2] և Վիեննայի պրօֆեսոր Միւլլերի (D. H. Muller [3]) վերոյիշեալ աշխատութեան նոյն հրատարակութեան յաւելուածի մէջ vol. XX Part. I. Բայց յամենայն դէպս այդ (նիւթերի) բևեռագիրների լուծման խնդիրը՝ շնորհիւ նորա աշխատութեանց բաւական հիմնաւոր է, թէև դեռ վերջնականապէս չի լուծուած։ Ինչ կը վերաբերի արձանագրութիւնների ժամանակագրութեան, արդէն վճռականապէս որոշուած է։ Վանի արձանագրութիւնները անկասկած փաստերի վերայ հիմնուած՝ վերաբերում են IX–դ դարու վերջերին և VIII դարու առաջին կիսին Քրիստոսից առաջ և գլխաւորապէս Վանի հինգ թագաւորներին են պատկանում, որոնք յաջորդաբար իշխել են Վանում՝ – Սարդուրի I՝ – նին Լուտիպրի որդուն, Իշպուինին՝ Սարդուրի I–ի որդուն, Մէնուային՝ Իշպուինի որդուն, Արգիշտիին՝ Մէնուայի որդուն և Սարդուրի II-ին՝ – Արգիշտի որդուն։ Այս թագաւորութեան ժամանակագրութիւնը որոշուած է շնորհիւ արձանագրութեանց պալէօգրաֆիքական [4] առանձնայատկութեանց, որոնք իրանց ձևակերպութեամբ շատ նման են Ասորեստանի թագաւոր Ասուր–Նասիր–Աբալի (885–860 Քրիստոսից առաջ) և Սալմանասար II–ի (860–825) արձանագրութեան և նոյնպէս շնորհիւ Ասորեստանի թագաւորների տարեգրութեանց ցուցմունքների...»։

Տես եւս Հանդ. Ամսօրեայ 1894, թ. 3, 5. հմմտ. տես WZKM. 1893, էջ 285։

ՆԻՄԷՅԻՐ (Դօկտ. Պ.) – Տես ՆԵՄԷԱԵՐ (Պ.)։

Նիմֆա. – Տես ՏԷՐ–ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ (Հ.)։

Նինիի ճամփր. թարգմ. Յար. Եսայեանի։ Թիֆլիս, տպ. «Հերմէս», 1904. 16 էջ?

«Նինուէ»· Արարատ 1869 (70), էջ 310։

ՆԻՆՕՇՎԻԼԻ (Է.) – Գօգիա Ուիշվիլի. պատմուածք. թարգմանեց Ղ. Կ. ?

— Հրաւմանն. պատմուածք. վրացերէնից թարգմանեց Ղ. Կ. 1903?

Քննադ. Մշակ 1903, թ. 247։

Նիսիա. — Տես ՓԱՌՆԱԿԷՍ։

ՆԻՐԱՆԻ (Յովհաննէս Շահրամանեանց). — Տես Նոր Քնար Հայաստանի. — Միանսապեանց, «Քնար հայկական»։

Նիրգէ գիւղի (Կեսարիոյ) նշանաւորքը, հարստնեաց, Ս. Ջատկի, Ս. Համբարձման տօնութիւններ (Նիրսէս Զ. Տ. Ստեփանեան). Արեւ. Մամուլ 1896, էջ 653, 686, 716, 751։

ՆԻՐԻՏՑ. — Գուշտաւ Վազա, պատմական վէպ պատանիների համար. թարգմանութիւն ռուսերէնից Ստեփաննոսի Վեհապետեան։ Աղէքսանդրապօլ, Գէորգ Սանոյեանցի տպարանում, 1887. 4°, 100 էջ։

Քննադ. Մշակ 1887, թ. 39։

= Այլ թարգմ. Ալեք. Ալմարեցի։ Մոսկուա, տպ. Բարխուդարեանց, 1892?

Նիւ-Եօրքի ընկերութիւն կենաց ապահովագրութեան ընդհանուր նկարագիր, հիմնեալ յամին 1845։ Կ. Պոլիս, ի տպ.ի Արամեան, 1844. 8°, 32 էջ։

Նիւր բժշկական. – Տես ՕՂՈՒԼՈՒԽԵԱՆ (Յ.)։

---

1. Մորդտմանի վերծանութեանց մասին տես «Արարատ» ամսագիր։

2. Mélanges d'Assyriologie, Paris. 1883 թ. Journal Asiatique t. I. երես 261, 517, t. II. երես 306: t. III. p. 499. 8 série.

3. Oesterreichische Monatschrift für den Orient. (յունվ. 1885 և օգոստոս 1886) Die Kellinschrift von Achrut-Darga 36-դ հատոր Abhand. Kaiserl. Wien. Akademie.

4. Palaios հին և grapho գրում եմ. հնութիւն հին գրութեանց ընթերցանութեան։

Նիւթեր ազգային պատմութեան համար. — Տես ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ (Գ.)։

ՆԻՔԱՐ (Փոլ). Շրումփ կը գրէ («Հայ լեզուի ուսումն.» էջ 243). «… Հանգուցեալս մեզ Փոլ Նիքարի հետաքննական այլեւայլ յօդուածներ գտնել Տիփենոս եւ Սկիւլլիս կրետացի արձանագործք (Dipœnus et Scyllis, sculpteurs crétois) խորագրով, հրատարակուած ի Ցիշատակագիրս Գաղղիոյ ազգային հնագիտաց ընկերութեան (Շար չորրորդ, հատոր Ը. Փարիզ 1877, յէջս 131–275), ուր խմատուոն հետազօտութիւնք են Խորենացւոյ Պատմութեան երկրորդ գրքին երկոտասաներորդ գլխոյն, յորում կը պատմուի թէ Արտաշէս փոխադրել հրամայած ըլլայ ի Հայս զոսկեզօծ պղնձի արձանս Անահտայ, Հերակլեսի և Ապոլոնի, ու ազգային աստուածոց նուիրուած կատաան մը մէջ դնել տուած»։

Նիքարի վիճակը (Մկրտիչեան Ներսէս Վ.) Լոյս 1906, էջ 692, 839։

Նկատողական ուսում. — Տես ՇԱՀՎԵՐՏԵԱՆ (Վ.)։

Նկարագիր ազգային դաստիարակութեան. – Տես ՋՕՐԱՅԵԱՆ (Ն. Մ.)։

— *աղետից Երուսաղէմի.* — Տես ՄԻՀՐԴԱՏԵԱՆՑ (Թ. Մ.)։

— *առաքելական եկեղեցւոյ, իտալերենէն թարգմանուած։ Կոստանդնուպօլիս, ի տպ. ի Ա. Պ. Զըրչըլի*, 1854. 6°, Զ + 42 էջ։

— *առաքինի և զգօն անձին.* — Տես Կենդանագիր, եւն. — Գրկոց քարոզ։

— *գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան.* 1832. *ի Մոսկով.* ՌՄԼԱ. ի տպագրատան հայկական ճեմարանի Տեարց Լազարեանց. 4°, 104 էջ (Աբբաս-Միրզայի երկու ինքնագիր՝ վիմատիպ նամակներով)։

— *գոյափոխութեան պապականաց և զանազան քողոքական եկեղեցեաց. թարգմանեաց յանգլիերէնէ ի հայ Յ. Մ. Գաբրիէլեան։ Կ. Պոլիս, ի տպ. ի Յ. Տ. Ստեփանեան*, 1860?

Քննադ. Երեւակ 1860, 16 մարտ։ – Ասոր դէմ՝ Ջեփիւռ 1863, Թ. 20–21։

— *երգոց հայաստանեայցս եկեղեցւոյ.* – Տես ՏՆՏԵՍԵԱՆ (Ե. Մ.)։

— *(համառօտ) երեւելի արանց.* – Տես ԲԺՇԿԵԱՆ (Հ. Մ.)։

— *(—) հռոմէական ուղղափառ և կաթողիկէ սուրբ եկեղեցւոյ։ Ս. Վ. Հէքիմեան։ Կ. Պոլիս, ի տպ. ի Յովհ. Միւհէնտիսեան*, 1864. 8°, 35 էջ։

— *(համառօտ) պապական դրութեան.* — Տես ԱՍԼԱՆԵԱՆ (Գ.)։

— *Մեծմուշայի և իր ոգւոյն։ Կ. Պօլիս, տպագր. Արամեան*, 1867. 8°, 28 էջ։

— *Շամախւոյ բեմի.* — Տես ՍՄԲԱՏԵԱՆՑ (Մ. Արք.)։

— *ուսմանց.* — Տես ԳԱՐԱԳԱՇ (Ա. Մ.)։

— *սուրբ Ստեփաննոսի վանաց.* – Տես ՍԸՄԲԱՏԵԱՆՑ (Մ. Արք.)։

Նկարագիր սքանչելեաց բնութեան. — Տես ԳԱԹՐՃԵԱՆ (Հ. Ս.), «Տարւոյն չորս եղանակները»։

— *վարուց Ստեփաննոսի Ազնից.* — Տես ԱԳՈՆՑ։

Նկարագիրք. — Տես ԹԷՈՓՐԱՍՏՈՍ։

Նկարագրական ուղեւորութիւն, եւն. — Տես ՄԻՐԱԽՈՐԵԱՆ (Մ.)։

Նկարագրութիւն դարձին Շլումպախ անուն անհաւատ գերմանացւոյն։ Կ. Պոլիս, ի տպ. ի Ա. Յակոբ Պօյաճեան, 1844. 8°, 29 էջ։

— *մայր եկեղեցւոյ Հայոց Էջմիածնի։ Վաղարշապատ*, 1877?

— *Պարսկաստանի երեւելի շինուածոց.* — Տես ԵԻԻՋԻԻՔՃԵԱՆ (Հ. Վ.)։

Նկարիչ Թաշճեան. — Տես ՄԱՆՈՒԷԼԵԱՆ (Լ.).

Նկարներ. — Տես ՅԱՐՈՅ (Ն.)։

Նմանաբանութիւն. — Տես ԿՈՍՏԱՆԴԵԱՆ (Գ.)։

Նմանութիւն ամենասուրբ կուսին Մարիամայ. Թարգմանեց Հ. Սամուէլ Գաթըրճեան ի Մխիթ. ուխտէ. (հանդերձ զանազան աղօթից յաւելուածներով)։ Ի Վիէննա, ի վանս Պաշտպան Ս. Աստուածածնի. ՌՅԳ 1854. 6°, 416 էջ.

Նմանութիւն Յիսուսի. — Տես ԹՈՎՄԱՍ ԳԵՄՊԱՑԻ։

— *սրբոյն Ալոզիոսի.* – Տես ԱԼԻՇԱՆ (Հ. Ղ.)։

Նմոյշ օսմաներէն գրագիտութեան. — Տես ԳԱԲՐԻԷԼԵԱՆ (Մ.)։

Նշան (Ս.) — «Պատմութիւն Աստուածընկալ Ս. Նշանին Ս. Ագռեկու». (Հրատ. Յ. ա. ք. Մկրեան). Արարատ 1905, էջ 551։

ՆՇԱՆԵԱՆ (Յ. Տ.) — «Վիշապը». Բիւրակն 1899, էջ 684. – «Նախարար բառին ծագումը». 1900, էջ 172. – «Հայ տառերը Էֆքէրէ, Էվէրէկ, Թումարծայ և Պօղուզի (Եօզղատ) գիւղերէն». 219։

Նշանք քաղաքացն Հայոց։ Մխանարեանց իր Bibliographiaյին մէջ կը գրէ. «Շարակարգի տառանոր հայցուածախառն մեկնաբանութիւն նշանաց թագաւորացն հայոց, որք են պատկազարդեալ պանծալի որդւք սոյնոյ անարատ մօր (այսինքն Էջմիածնի)։ Տես. «Ողբ և հառաչանք ի դիմաց մօր մերոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի, արարեալ Ստեփաննոսի մետրապօլիտին Սիւնեաց» գրքի մէջ, և. 47–49 (Նոր–Նախիջեւան 1790 թ.)։

Նկարած է, իբրեւ թէ, հայոց արքունի կնիքը (Гербъ; les armes, armoiries; das Wappen; նշան տան կամ ազգատոհմի), և նորա վերայ. 1. եօթնագլխեան վիշապ. 2. միագլխանի արծիւ. 3. Արգար թագաւորին առաքած թաշկինակի վերայ փրկչական պատկերը. 4. Գառն Աստուծոյ. 5. երկու առիւծներ, որոնք բռնած ունին կնիքը. 6. Մասիս լեառը, որին կոչում է «եօթնաչեայն, որ հայի ընդ ամենայն երկիր», և նոյն նշանաց մեկնութիւնը։

Վերոյիշեալ կնիքը հայոց թագաւորութեանը չէ, այլ Արղութեանց Յովսէփ արքեպիսկոպոս Սա-

նահնեցւոյ մասնակցութեամբ, այն ժամանակն է հնարած, կայսերուհի Եկատերինէ II-ի ժամանակը, երբ որ հայոց թագաւորութեան վերականգնելու յոյսերը ունէին և ինքը Յովսէփ արքեպիսկոպոսը երազում էր իր եղբօր զաւակներից մինին ընտրել տալ հայոց դահակալ: Սոյնպիսի նպատակաւ էր, որ նոյն արքեպիսկոպոսը հնարեց և հաւատացրեց Ռուսաց կառավարութեանը, իբրև թէ Արղութեանց ցեղը պարսից արքայ Արտաքսէրքսես (Արտաշիր) Լոնգիմանոսի կամ Երկայնաբազուկի սերունդ է և, իշխանական տիտղոս ստանալով, մուծել տուեց մէջը և «Երկայնաբազուկ» անունը»:

Նշխարք մատենագրութեանց Հայոց. — Տես ՊԱՏԿԱՆԵԱՆ (Ք.):

Նշմարք հայկականք. – Տես ԱԼԻՇԱՆ (Հ. Ղ.):

ՆՇԻԿ ԵՐԷՑ. — *Ժուռկոճապամբեռք, բանաստեղծական վէպ.* 1897. 60 էջ?

— *Գող Մժղօ, Վասպուրականի իրական կեանքից:* Աղեքսանդրիա, տպ. «Արաքս», 1902. 8°, 197 էջ:

«Նշիկ երէցի այս գեղեցիկ հատորիկը բանաստեղծական խանդով մեր աշխարհին տխուր անցքերը կը պատկերէ». Արեւմուտ 1902, էջ 61:

Տես և Ժողովուրդ (Գահիրէի) 1903, թ. 4:

ՆՈԼԴԷ (Եդուարդ = Baron Eduard Nolde). – *Reise* nach Innerarabien, Kurdistan und Arm. Braunschweig, 6. Friedrich Vieweg, 1895. 8°, pp. XV + 272:

Հանդ. Ամ.ի մէջ (1896, թ. 9) Հ. Բ. Պ. ընդարձակ գրախօսական մ'ունի, ուրկէ հայկական մասը կ'արտատպեմ. «... Արաբական և քրդական մասերուն կը յաջորդէ հայկականը, որ ուղեգրութեանս երրորդ և ամէնէն կարճ մասը կրնայ համարուիլ՝ գրքին վերջին 50 (221-272) էջերը գրաւելով: Նոլդէ 20-25 օրուան մէջ՝ Բաղիշու, Կարնոյ և Բաբերդի վրայէն՝ Սղերդէն Տրապիզոն կը հասնի մեծ փութկոտութեամբ ճամբորդելով և կարծես դիտմամբ սովորական ճամբաները թողլով և բարձրաբերձ լեռներու վրայէն տանող դժուարին ու անսովոր արահետներն ընտրելով:

Սղերդի վրայ տրուած տեղեկութիւնք գոհացուցիչ ըլլալէ շատ հեռու են. միայն բնակչաց թիւը (15,000) կը նշանակուի, և մէկ խօսքով կ'ըսուի թէ լաւ շինուած քաղաք է. անշուշտ այնչափ լաւ՝ որչափ լաւ որ կրնայ ըլլալ այնպիսի տեղ մ'ինկած ասիական քաղաք մը: Բարեբախտաբար Մոլտկէ[1] մարաջախտէն սկսեալ՝ մինչև Պրոֆ. Վինչ՝[2] ամէն այս կողմերը հանդիպող եւրոպացի ուղեւորք մանրամասն տեղեկութիւն տուած են քաղաքիս վրայ, և Նոլդէ անոնց բաւածներուն վրայ բան մ'աւելցնել կրցած չէ: Սղերդը Մշոյ հետ կապող ճամբուն արեւմտեան կողմը գտնուող 250-300 քրդաբնակ և հայաբնակ գիւղերուն, ինչպէս նաև Սասնոյ վրայ՝ համառօտ տեղեկութիւն մը կու տայ, այն ալ Սղերդ բնակող Դոմինիկեան կրօնաւորի մը պատմածներէն առնլով: Ասկէ ետքը կ'անցնի Համիդիյէ անուանեալ հեծելազնդերուն՝ Ռուսաց Կոզակներուն նմանութեամբ կազմուելուն ընդարձակ պատմութեանը և այս գնդերուն բատուարութեան և իրական նշանակութեան:

Նոլդէ ճամբան շարունակելով կը հասնի Բաղէշ, և քանի մը տողի մէջ կ'ամփոփէ այս քաղաքին վրայ ըսելիքը՝ շատ մեծ տեղ տալով անհատական ընդունելութեանց և այս առթիւ տրուած սեղաններու, որ որչափ ալ փառաւոր եղած ըլլան, ընթերցողին համար զուրկ են նշանակութենէ: – Բաղէշէն ետքը՝ լեռներու վրայէն յառաջացած ժամանակ՝ գիւղերու մէջ այնպիսի շէնքերու ալ կը հանդիպի, որոնք իրենց նախնական ու յատուկ կազմութեամբն Քսենոփոնի ժամանակէն սկսեալ միշտ մատգրութիւն գրուած են: Շէնքերու նման՝ յընթացս դարերու՝ շատ տեղ անփոփոխ մնացած է բնակչաց զբաղումն ալ՝ երկրագործութիւնն ու անասնաբուծութիւնը:

Ուղեգիրը Կարնոյ ու շրջակայից դիրք, կարեւորութեան և պատերազմական տեսակէտով ունեցած նշանակութեան և նորագոյն ժամանակներ այս կողմերն ամրացնելու տարուած հոգն ու խնամքին վրայ շատ երկայն կը խօսի, իսկ քաղաքին վրայ՝ գրեթէ ամէն Conversations-Lexikonներու մէջ գտնուածէն աւելի զրուցելիք չունենալով՝ ընթերցողն անոնց կը խաւրէ, և ինքը շուրջօրեայ դադարէ ետքը՝ Տրապիզոնի ճամբան կը բռնէ. այս գիծն, բայց ի մասնաւորի վերջին օրուան ճամբան՝ այս գրօսաշրջիկին ութամեայ ուղեւորութեան ամէնէն անտանելին ու դժուարինը կ'ըլլայ: – Տրապիզոնի շրջակայքն, արտածութիւնն ու ներածութիւնը մասնաւոր ուշադրութեան առարկայ ընելէն ետքը՝ հեղինակը կը մտնէ նաւ՝ Կ. Պոլիս երթալու, ուրկէ և կը փակուի ուղեւորութիւնը:

Թէեւ գիրքն ընթերցողին վրայ հաճոյական տպաւորութիւն մը յառաջ կը բերէ, բայց այս տպաւորութիւնը լոկ Նոլդէի ոճոյն գեղեցկութեան և կենդանութեան արդիւնքն է. ըստ որում հեղինակը ամէնէն չնչին բանն ալ այնպէս ստորագրել գիտէ, որ կը գրաւէ՝ որչափ ալ ընթերցողը գիտնայ թէ խմնայքն սովորական երեւոյթ է և ծանօթ իրողութենէ մ'աւելի չէ: – Գալով ի մասնաւորի Գ մասին բովանդակութեան՝ կը տեսնենք որ Նոլդէ ո՛չ Հայոց հին կամ նոր տեղագրութիւնն ուզած է ուսումնասիրել, և ո՛չ տնտեսական եւն դրութիւնը պարզել, այլ իբրև պարզ գրօսաշրջիկ՝ ինչ որ իր գծին վրայ տեսած է, զայն թեթեւ և վերիվերոյ կերպով աւանդած է: Պէտք ենք ըսել թէ իր տեսածներն ու նշանակածները՝ փոքր փոփոխութեամբ՝ երկրին ամէն կողմերուն ոչ այնչափ աղօտ պատկերը կ'ընծայեն, և ըստ հետեւորդի ուղիղ են իր տեսութիւններն ու խորհրդածութիւնները: Որչափ ալ Հայոցս համար նշանակութիւն չունեցող աշխատութիւն մըն է իր բովանդակութեան շատոնց ծանօթ ըլլալուն պատճառաւ, սակայն Եւրոպացւոց լաւ ծառայութիւն մատուցած է Պր. Նոլդէ իր երկովն՝ անոնց առջեւ կարեւոր երկրի մը ներկային պատկերը պարզելով»:

ՆՈՅԵՄԻ. *Թարգմ.* — Տես ՊՕՏՈՒ:

Նոյի հիւսները: Կ. Պոլիս, տպագր. Ա. Յ. Պօյաճեան, 1893. 8 էջ?

ՆՈՆՆՈՍ (Nonnos). -- *Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz.* Herausgegeben von Agop Manandian. (Marburg Hessen. N. G. Elwert'sche Verlagsbuchhandlung). Druck von Max Schmersow vorm. 1903. 8°, 81 էջ:

Քննադ. H. Goussen, Th. Rev. 1903, p. 230 f. – E. Preuschen, DL. 1904, p. 777 f.

— «Նոննոսի մեկնութիւնք Գրիգոր Աստուա-

---

1. Briefe über die Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835-1839 von Helmuth v. Moltke, Hauptmann im Generalstabe. 3. Aufl. Berlin 1877.

2. Հանդէս Ամս. Գ. տարի, 1890, էջ 204:

ծարանի հինգ ճառից», Ն. Ա. (Հ. Ն. Ակինեան). Հանդ. Ամսօրեայ 1904, թ. 5, էջ 139-146. – թ. 6. 165-173։ Համմ. նաեւ Մանանդեանի «Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ», եւն երկը։ – Յոյն՝ Nonni abbatis Commentarii in Orationes II contra Julianum Imp. հրտ. Montacuti, մեկնութիւն ի ճառն Աստուածաբանի ի Բարսեղ հրտ. A. Mai, երկուքն ալ առ Migne, ԼԶ, 985–1072. համմ. 933–84. քննութիւն՝ E. Patzig, De Nonnianis in IV orationes Gregorii Naz. Commentariis, Լայփցիկ 1890։ – Վարք Նոննոսի. – Տես Վարք Հարանց, Բ. 669–79. – Տես և Զարբ. «Մատենագրութիւն» էջ 634–646։

Նոր աշխարհին առաքեալները. – Տես ԿԻՒՐԵՆԵԱՆ (Յ. Ա.)։

— գիտ կամ գործ համարողական արհեստին. — Տես ԳԱՍՊԱՐԵԱՆՑ (Հ. Մ.)։

— դասագիրք ֆրանսերէնէ ի հայ բարբառ. – Տես ՀԻՆԴԼԵԱՆ (Յ. Թ.)։

